

ԱՍՏՈՒԱԾՆԵՂՆԶԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՐԱԳԱՐԱՆ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԷՈՐԳ ՄԿԵԻՌԱՅԻ
(ԺԳ ԴԱՐ)


ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԳՈՐԾՈՑ
ԱՌԱՔԵԼՈՑ



Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2014

ԼՍՏՎԼԾՆԸՒԻ ԳՐԻՆԻ ԶԵՅ ՄՆԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԳԱՐԱՆ





ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՋԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԿՆԻ ՄՆԿՆՈՒԹԻՎՆԵՆՔ

ԳԼՈՐԳ ՍԿԵՒՈՒՆՅԻ
(XIII ԳԼՐ)

ՄՆԿՆՈՒԹԻՎՆ
ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵՆՈՑ

*Աշխատասիրությունը Յասմին Բարսեղյանի
Խմբագրությունը Գեորգ Տեր-Վարդանյանի*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
2013

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Գ 454

*Տպագրում է երաշխաւորութեամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի*

ԳԵՈՐԳ ՍԿԵԻՈՎՏԻ

Գ-454 ՄԵԿՆՈՒԹԻՒՄ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ/ ԳԵՈՐԳ ՍԿԵԻՈՎՏԻ; Աշխ.՝
Յ. Բաղալեանի; Խմբ.՝ Գ. Տեր-Վարդանեան. - Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, 2013. - 496 էջ:

Գեորգ Սկեւռացու մեկնողական այս երկը կարելու տեղ է գրաւում
աստուածաբանական գրականութեան մէջ, եւ այս աշխատանքի
հրատարակութիւնն ու ուսումնասիրութիւնն էլ աւելի կհարստացնի
մեր հոգեւոր մշակոյթի գանձարանը:

Գիրքը նախատեսուած է Հոգևոր ճեմարանների, Աստուածաբա-
նութեան ֆակուլտետի ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի
համար:

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

**ՏՊԱԳՐՈՒՄ Է ԱՆԿԵՆԱՍՈՒԹԵԱՔ
ՄԱՐԳԻՍ ԳԱՔՐԻԷԼԵԱՆԻ**

ԱՌԱՋԱԲԱՆ

Գէորգ Սկեւռացին (1245/6^o-1301) եղել է իր դարաշրջանի Կիլիկիայի եւ բուն Հայաստանի գիտական շրջաններում մեծ հեղինակութիւն վաստակած մտաւորականներից, եկեղեցական եւ քաղաքական կարեւոր դէմքերից մէկը: Ժամանակակիցները եւ հետագայ սերունդները բարձր են գնահատել նրա թէ՛ մատենագրական եւ թէ՛ հոգեւոր գործունէութիւնը: Գէորգ վարդապետը ներկայացուել է որպէս գիտնական, ուսուցիչ, գրիչ, անզուգական մեկնաբան, եւ յատկապէս իր կենցաղավարութեան սրբութեամբ աչքի ընկած հոգեւորական:

Հայ եկեղեցական մատենագրութեան պատմութեան մէջ իրենց արժանի տեղն ունեն հեղինակները Գէորգ Սկեւռացու մեկնողական երկերը: Նրա գրչին են պատկանում մեկնողական երկու աշխատութիւն՝ «Եսայի մարգարէ»¹ եւ «Գործք առաքելոց»ի բարձրարժէք մեկնութիւնները²: Ղ. Ալիշանը «Գործք առաքելոց»ի խմբագիր մեկնութիւնը համարել է՝ «Երկրորդ ի կարգի կարեւոր գործ գրաւորական Գէորգայ»³ Սկեւռացույ: Բանասեր Հ. Կ. Քիպարեանը բարձր է գնահատել Գէորգ վարդապետի Սուրբ Գրքի խմացութիւնն ու մեկնիչի հմտութիւնը⁴:

¹ Տես Գէորգ Սկեւռացի, Մեկնութիւն մարգարեութեանն Եսայեայ, աշխ. Յ. Բաղալեանի, Ս. Էջմիածին, 2010:

² «Գործք»ի մեկնութեան պահպանուած հնագոյն Մաշտոցեան Մատենադարանի (ՄՄ (Հ^o 4119 ձեռագրի յիշատակարանը Գէորգ Սկեւռացու մասին վկայում է. «... Եւ սորա յօժարական մտօք աշխատութիւն զանձամբ առեալ՝ ըստ առատատուր Դոգույն պարգեւեացն վերստին արծարծեալ զխորթացեալ բանս հռետորին, յեղանակելով ի դիւրալուրս եւ յարմարականս մերոյինս ազին» (152բ): Գէորգ վարդապետի հեղինակութեան մասին է հաստատում նաեւ 1292ին Խորին անապատում օրինակուած ձեռագրի յիշատակարանը. «Յամի եօթն հարիւրերորդի քառասուներորդի եւ միոյ թուականին հայկազեան տունարիս գրեալ աւարտեցաւ մեկնութիւնս Գործոց առաքելոցն, զոր համառօտեալ հաւաքեալ էր աշխատասէր եւ արդիւնական վարդապետն Գէորգ». տես Տ. Պալեան, Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, Վիեննա, 1963, Հ^o 35, էջ 56-7:

³ Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 103-104:

⁴ Տես Քիպարեան Հ. Կ., Գէորգ վարդապետ Սկեւռացի.- Բազմավէպ, Վենետիկ, 1972,

Գէորգ Ակեւռացու այս երկու գործերն էլ արքունական պատուէրներ են: «Գործք առաքելոց»ի համառօտ մեկնութեան պատուիրատուն Յովհաննես Արքայեղբայրն է. այս մասին է ծանուցում խորագիրը. «Մեկնութիւն Գործոց առաքելոց, առ խնդրաւղն համառատիս տէր Յովհաննէս Արքայեղբայր եւ եպիսկոպոս նահանգաց աստուածապահ զըզեկին Մուկեղնի եւ մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն՝ տեսուչ հռչակելի սուրբ ուխտին Գոնեբոյ»¹: Պատուիրատուի եւ հեղինակի մասին է վկայում նաեւ «Գործք»ի մեկնութեան օրինակներից մէկում պահպանուած՝ Ստեփանոս Գոյներիցանցի հաղորդումը. «Ի թվականիս մերոյ ազգի ԶԾԹ. (1310) մեղաւոր հողս Ստեփաննոս Գոյներիցանց էի յամօք առաջ եկեալ ի Կիպրոս կղզի... եւ յառաջ ամօք ի հրամայական խնդրոյ տեսառն Յովհաննիսի՝ յեղբօրէ թագաւորին Հայոց Հեթմոյ, ի մեծ եւ ի սուրբ վարդապետէն Գէորգեայ Լամբրունացոյ աշխատասիրեալ կայր օրինակ համառօտիս մերձ առ մեզ՝ իւր ձեռացն գրով որպէս թէ յիւսաւն. եւ թէ կամենայք՝ տեսանէք ի գրոցս նախերգանի, զոր առ երիս խնդրօղն առ տէր Յովհաննէս է գրեալ նոյն վարդապետն Գէորգ... Արդ, աղաչեմ զընթհանուր բնաւ հանդիպօղսդ յիշել զարժանիքն յիշատակի՝

էջ 175-6: Որպէս մեկնիչ Գէորգ Ակեւռացին բարձր գնահատանքի է արժանացել նաեւ իր ժամանակակիցների կողմից. 1292 թուականին օրինակուած ձեռագրի գրիչ Յովասափը գրել է. «Գործքս այս առաքելոց, զոր մեկնեալ եւ յարմարեալ առաջին սրբոցն, իսկ ետին ժողովողն եւ առ միմեանս դրողն ո՛չ գոլով քաջ հռետոր, վասն այսորիկ հատակտոր եւ այլ ընդ այլոյ, եւ խաւար է միտք լուսաւոր բանիցս, եւ հարկաւոր բանիցն մեկնութիւն ոչ է արարած, եւ կարօտ է հմտագոյն վարժապետի, որ զբանն բանալ կարէ եւ զխորհմանն եւ զխրթնածածուկսն լուծանել: Այլ թէ Գէորգեայ մեկնիչին հանդիպիս եւ նորին լուսաւոր կարգադրութեանն, յայնժամ պայծառաւայ յիմաստութեամբ հոգիդ, եւ լուսաւորի շարժումն զգայութեանդ, զի յոյժ է գեղեցկաբան, եւ ունի կարգ ու սահման»: ՄՍ ձեռ. Զ^օ 1363, 160ա: Գրիչ Անդրեասն օրինակելով «եսայի մարգարէ»ի մեկնութիւնը, բազում մեկնիչների շարքում անմրցելի է համարում Գէորգ մեկնիչին. «Բազում են նահապետք, այլ ո՛չ որպէս զԱբրահամ. բազում են մարգարէք, բայց ո՛չ որպէս զՅովհաննէս. բազում են առաքեալք, այլ ո՛չ որպէս զՈրդին Որոտման. բազում են մարտիրոսք, այլ ո՛չ որպէս զՍտեփաննոս. բազում են հայրապետք, այլ ո՛չ որպէս զսուրբ Գրիգորիոս. բազում են մեկնիչք եւ վարդապետք եկեղեցոյ, բայց ո՛չ են որպէս զմեկնիչս զայս, զոր արարեալ է սրբազան եւ հոգելից հռետորին Գէորգեայ ռաբունապետին»: ՄՍ ձեռ. Զ^օ 1209, 218բ. հմմտ. Ա. Մաթեւոսեան, Զայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար, Երեւան, 1984, էջ 874-5 (այսուհետ՝ ԺԳ. դ. յիշ-ք):

¹ Ստորեւ տես «Ի գործոց առաքելոցն բուն եւ ընդարձակ մեկնութեանց սրբոյն՝ տեսառն Եփրեմի եւ Յովհաննու Ոսկեբերանի, այս համառօտ շարահիւուսեցաւ՝ որպէս եւ տեսցես առընթեր բանիցն, յանցնիւր տեղուց դրոշմեալ զանուանս սրբոցն, իրամանաւ տեսառն Յովհաննիսի՝ աստուածապահ ուխտին Գոնեբոյ առաջնորդի»: ՄՍ ձեռ. Զ^օ 4119, 3ա:

առ հասարակ զվերոյ գրեալքն ի սմա...»¹: Մեկնութեան գրութեան թուականը յիշատակարաններում չի պահպանուել: 1292 թուականին Հովհաննես Երզնկայեցի գրիչը Խորին անապատում արդէն օրինակել է այս մեկնութիւնը²: 1292ին Եսայի Նչեցի պաբունապետի պատուէրով Յովասափ գրիչը նոյնպէս օրինակել է այս գործը³: Գէորգ Սկեւռացու այս երկի մեզ հասած առաջին օրինակը ՄՄ Հ^մ 4119 ձեռագիրն է՝ գրուած 1289 թուականին, Կիլիկիայում⁴: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ Գէորգ Սկեւռացին գործն աւարտել է 1289 թուականից առաջ:

«Գործք առաքելոց»ի խմբագիր մեկնութիւնը կազմելիս Գէորգ Սկեւռացին օգտուել է աւելի շատ Յովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, աւելի քիչ՝ Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Կիւրեղ Երուսաղեմացու, Կիրակոսի (Հավանաբար Արեւելցու) համաբնոյթ թարգմանական եւ հայագիր բնագրերից: Հեղինակը նպատակ է ունեցել միահիւսելով վերոյիշեալ աշխատանքները՝ կազմել աւելի ըմբռնելի համառօտ մեկնութիւն:

«Գործք առաքելոց»ի մեկնութեան բնագրի համեմատական բնագիրը կազմելու համար օգտագործել ենք ՄՄ ձեռ. Հ^մ 4119 (հիմք՝ Գ)⁵, Հ^մ 1365 եւ Հ^մ 1367 ընդօրինակութիւնները:

Համեմատուած ձեռագրերը.

Ա - ՄՄ ձեռ. Հ^մ 1367, ԺԴ. դար. 302 թերթ, թուղթ, 20x14,8, միասիւն, բոլորգիր, 23 տող, բնագիրը՝ 1ա-300բ:

Բ - ՄՄ ձեռ. Հ^մ 1365, 1641 թ., Կ. Պոլիս, գրիչ՝ Խաչատուր երէց, ստացող՝ Արիստակէս վրդ. Խարբերդացի: 281 թերթ, թուղթ, 21,8x16, երկսիւն, նոտրգիր. 27 տող, բնագիրը՝ 1գ-27ճա:

Գ - ՄՄ ձեռ. Հ^մ 4119, 1289 թ., Կիլիկիա, ստացող՝ Յովհաննէս վրդ.: 331 թերթ, թուղթ, 25x17, միասիւն, բոլորգիր, 36 տող, ժողովածու. բնագիրը՝ 2ա-152բ. չունի սկզբի՝ Ա-ԾԵ. համարակալումով գլխացանկը⁶:

¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց (այսուհետ՝ ՑԶԵ), հատոր երրորդ, Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1968, ձեռ. Գ^մ 700, էջ 145:

² Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ա. Կարապետի եւ Ա. Դանիէլի ի Կեսարիա, Կազմեց Տրդատ եպ. Պալեան, Կիեմնա Մխիթարեան տպարան, 1963, էջ 56-7:

³ ՄՄ ձեռ. Գ^մ 1363, 2ա-218ա:

⁴ ՏԵՆ ԺԳ. դ. յիշ-ք, հ. 527, էջ 648-649:

⁵ Բնագիրը կազմուած է 55 (ԾԵ.) գլխից, որոնք աւարտուում են «Յորդորակ» կամ «Բարոյական» խորագրուած անփոփոյթով:

⁶ Ժամանակին պատկանել է Խաչիկ վ. Դադեանի. տես Յակոբ Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, Մասն Ա.,

Այս երեքն էլ վստահելի ձեռագրեր են. համեմատութիւնը ցոյց է տալիս, որ հեղինակի բնագիրն էական փոփոխութիւններ չի կրել. իմաստային տարբերութիւններն աննշան են: Այլ կերպ ասած՝ երեք ձեռագրի համեմատութեամբ կազմուած այս բնագիրն ունի գրեթէ սկզբնական-հեղինակային տեսքը:

Բնագիրը կազմուած է մատենաշարի համար ընդունուած սկզբունքներով:

Չեն նշուել հետեւեալ կարգի ընթերցումները. «աւ-օ». «օ» ունի հիմնականում Բ՝ օրհնել, աղօթ, օրինակ, ԱԲ՝ աստանօր եւ այլն. «եւ-և». կրկին՝ կցագիրն ունեն ԱԲ ձեռագրերը: Այս երկու յատկանիշներին վերաբերող ընթերցումները միայն այլ տարբերութիւններ ցուցադրելու համար են: Տողադարձի հետեւանք եւ համառօտման ձեւ ենք համարել «ու»ի փոխարէն գրուած՝ «ըւ» կամ «լ» ձեւերը. ասենք՝ «անըւամբ» եւ «անլան» վերարտադրել ենք՝ «անուամբ» եւ «անուան» եւ այսպիսի դէպքերում ընթերցումներ չենք տուել¹:

Գործածուած նշանները եւ նրանց իմաստները.

> բառի չգոյութիւն.

] բառի փոխարէն այլ բառ կայ.

+ ծաւալուն յաւելում.

~ շարահիւսական դրափոխութիւն: Միշտ գրուած են ձեռագրերի պայմանանիշ(եր)ը, այս նշաններից որեւէ մէկը, ընթերցումը, վերջում հիմնաբառը (բնագրում առկայ ձեւը):

Բնագրի մեջ նշանակուած են հիմք օրինակի էջահամարները՝ /2ա/ - /152բ/:

* * *

Գէորգ Սկեւոացնու «Գործք առաքելոց»ի մեկնութիւնը պահպանուել է նաեւ մեզ հայտնի հետեւեալ ձեռագրերում.

1292 թ. - ՄՄ ձեռ. Հ^{մր} 1363, 1292 թ., ժողովածու, գրիչ՝ Յովասաբ, ստացող՝ Եսայի րաբունապետ Նչեցի: 222 թերթ, թուղթ, 25x17. երկսիւն, բոլորգիր, 39 տող. բնագիրը՝ 2ա-218ա:

1292 թ. - Պալեան Տ., Յուլցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ ս. Դանիէլի ի Կեսարիա, Վիեննա, 1963, ձեռ. Հ^{մր}

Վաղարշապատ, 1898, էջ 59-61:

¹ Կան նաեւ «լ-ղ» (առաւելապէս Ա՝ այղ, իսրայէղ, կոռնէղիսս), «ե - է» (ԱԲ՝ հրէաստան, հրէայ, իսրայէղ, գէն), «բ-գ» (ԱԲ՝ թագուցանել), «գ-կ» (ԱԲ՝ տնանկը) եւ այսօրինակ այլ տարբերութիւններ:

35, էջ 56-57: 1292 թ., Խորին անպ., գրիչ՝ Յովհաննէս, ստացող՝ Մկրտիչ: Կաշեկազմ, 249 թերթ, թուղթ, 25,5x17,5. երկսիւն, բոլորգիր, 31 տող, բնագիրը՝ 2ա-246բ:

ԺԴ. դար - ՄՄ ձեռ. Հ^մ 1364, ԺԴ. դար, ստացող՝ Յովհաննէս Աւրբելի: Կաշեկազմ, 214 թերթ, թուղթ, 23,5x16. երկսիւն, բոլորգիր, 31 տող, բնագիրը՝ 2ա-213բ:

1418 թ. - ՄՄ ձեռ. Հ^մ 2690, Ժողովածու, 1418 թ., Եղիազարու վանք, գրիչ՝ Բարսեղ, Ղազար, Կարապետ եպս., ծաղկող եւ կազմող՝ Յովհաննէս (1419), ստացող՝ Բարսեղ վրդ., 335 թերթ, թուղթ, 26,6x18. երկսիւն, բոլորգիր, 29 տող, բնագիրը՝ 114ա-325բ:

1600 թ. - ՅԶԵ, Բ, ձեռ. Հ^մ 338, 1600 թ., Բաղէշ, գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Ազարիա կթղ. Սսայ, 420 թերթ, թուղթ, 26x20. երկսիւն, բոլորգիր, 30 տող, բնագիրը՝ 2ա-427ա:

1600 թ. - ՄՄ ձեռ. Հ^մ 1399, 1600 թ., Սեբաստիա, գրիչք՝ Ալէքսիանոս Անթապցի, Յակոբ դպիր, ստացող՝ Յովհաննէս րաբունապետ: Կաշեկազմ, 287 թերթ, թուղթ, 19x13,5. միասիւն, բոլորգիր, 25 տող, բնագիրը՝ 1ա-288բ:

1637 թ. - ՄՄ ձեռ. Հ^մ 1366, 1637 թ., գրիչ՝ Եղեկիէլ, ստացող՝ Թորոս երաժիշտ: Կաշեկազմ, 236 թերթ, թուղթ, 21,2x15,5. միասիւն նոտրգիր, 30 տող, բնագիրը՝ 2ա-233բ:

ԺԷ. դար - ՄՄ ձեռ. Հ^մ 7617, ԺԷ. դար, 320 թերթ, թուղթ, 18,5x12,5, միասիւն, նոտրգիր, 28 տող. բնագիրը՝ 1ա-318բ (վերջը թափուած):

1731 թ. - ՅԶԵ, Ա, ձեռ. Հ^մ 84, [1731], [Կեսարիա], գրիչ՝ Արուսիւն Ատանացի, ստացող՝ Եսայի վրդ. Կեսարացի, թերթ 268, թուղթ, 23x22, երկսիւն, բոլորգիր, 49 տող, բնագիրը՝ 23ա-268բ:

1750 թ. առաջ - Պալեան Տ., Յուցակ Հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, ձեռ. Հ^մ 36, 1750-ից առաջ: Կաշեկազմ, թերթ 120, թուղթ, 18,5x13,5, երկսիւն, նոտրգիր, 35 տող, բնագիրը՝ 1ա-120ա:

1788 թ. - ՅԶԵ, Ա, ձեռ. Հ^մ 179, 1788 թ., գրիչ՝ Մանուկ, ստացող՝ Անդրիաս վրդ., Յովհաննէս վրդ., 206 թերթ, թուղթ, 31x20, միասիւն (2ա-8բ), մնացածը՝ երկսիւն, նոտրգիր, 51 տող, բնագիրը՝ 1ա-206ա:

ԺԸ. դար - ՄՄ ձեռ. Հ^մ 1362, ԺԸ. դար, կաշեկազմ, 89 թերթ, թուղթ, 30,4x19, երկսիւն, նոտրգիր, 51 տող, բնագիրը՝ 3ա-80ա:

ԺԸ. դար - ՅԶԵ, Գ, ձեռ. Հ^մ 700, ԺԸ. դար, 654 թերթ, թուղթ, 21x15, երկսիւն, նոտրգիր, 24-25 տող, բնագիրը՝ 5ա-649բ:

Զթուագրուած - 13. ՅԶԵ, Բ, ձեռ. Հ^մ 351, գրիչ՝ Գրիգոր արեղայ, ստացող՝ Վարդան վրդ., 442 թերթ, թուղթ, 25x17, երկսիւն, բոլորգիր, 35-36 տող, բնագիրը՝ 3ա-375ա:

Գէորգ Սկեռացու մեկնողական այս երկը կարեւոր տեղ է գրաւում աստուածաբանական գրականութեան մէջ, եւ այս աշխատանքի հրատարակութիւնն ու ուսումնասիրութիւնն էլ ավելի կհարստացնի մեր հոգեւոր մշակոյթի գանձարանը:

Յ. Բաղալեան

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

**Դրութիւնք բարոյականաց համառօտօք մեկնութեանս
Գործոց առաքելոցն¹**

- Ա. Թէ ոչ է պարտ յապաղել ի մկրտութիւն.
- Բ. Ընդդէմ ելլենացւոց.
- Գ. Յաղագս ընտրութեան եպիսկոպոսաց եւ առաքինութեան.
- Դ. Ընդդէմ ելլենացւոցն².
- Ե. Ընդդէմ հերձուածոց եւ վասն ուղիղ կենցաղավարութեան.
- Զ. Ընդդէմ բարկացողաց.
- Է. Թէ բազում բարութեանց պատճառ անստացուածութիւն.
- Ը. Թէ պարտ է ի փոքրունցն մասանց սկսանել զառաքինութիւն եւ վասն
ո՛չ երդնլոյ.
- Թ. Զի ո՛չ է պարտ երդնուլ եւ ո՛չ երդումն պահանջել.
- Ժ. Վասն ո՛չ երդնլոյ.
- ԺԱ. Թէ բարի է անստացուածութիւն եւ վասն ոչ երդնլոյ.
- ԺԲ. Վասն ո՛չ երդնլոյ եւ ո՛չ գողանալոյ.
- ԺԳ. Թէ բարի եւ հանգիստ է աղքատութիւն եւ վասն ո՛չ երդնլոյ.
- ԺԴ. Թէ պարտ է երկայնամտել եւ անյիշաչար լինել.
- ԺԵ. Զի պարտ է քրիստոնէին ակն ունել նեղութեան այսմ աշխարհի.
եւ ընդդէմ բարկացելոց.
- ԺԶ. Թէ վրիպեալ լինիմք յԱստուծոյ յաշխարհիս իրս փափկանալով.
- ԺԷ. Ընդդէմ բարկացողաց.
- ԺԸ. Թէ պարտ է փարթամաց յագարակս եկեղեցի շինել, եւ առ անգամ
մի զգոյնս անտանաւր ծախել, եւ քահանայս կարգել.
- ԺԹ. Թէ պարտ է հանապազ փութով ընթեռնուլ զՍուրբ Գիրս.
- Ի. Թէ քրիստոնէին պարտ է ո՛չ միայն իւրոյ անձինն, այլ եւ բազմաց
գոլ պիտանի.
- ԻԱ. Զի մեծապէս աւգտին վախճանեալքն, յորմէ վասն նոցունց աղաւ-
թից, ողորմութեանց եւ պատարագաց.
- ԻԲ. Թէ մեծ է զաւրութիւն ողորմութեան.
- ԻԳ. Զի ո՛չ է պարտ յապաղել ի մկրտութենէ, եւ զի ոմանց նէրէ
Աստուած առ այժմ՝ որպէս ինքն գիտէ, իսկ ոմանց ոչ.
- ԻԴ. Վասն ապաշխարութեան, եւ զի յեկեղեցիս զգուշութեամբ եւ մի
ցոփանաւք եւ զըուցատուութեամբ լիցուք.
- ԻԵ. Վասն ողորմութեան.
- ԻԶ. Թէ պարտ է գիշերի յառնել յաղաւթս եւ ի հսկութիւնս.
- ԻԷ. Ընդդէմ արբեցողաց եւ ի խրախացողաց.

¹ Պ > դրութիւնք... (.ա.-ծե.)

² Բ ելլենացւոց

ԻԸ. Ընդդէմ սնափառաց.

ԻԹ. Զի ժողովելն յեկեղեցին յաւգուտ եւ ի շինութիւն լիցի եւ մի՛ ընդ վայր ինչ.

Լ. Վասն խոնարհութեան, եւ վասն ո՛չ բաբախելոյ եկեղեցւոջ¹.

ԼԱ. Վասն աստուածային նախանձու եւ յաւժարութեան եւ երկայ- նամտութեան եւ հեզութեան եւ ոչ բարկանալոյ.

ԼԲ. Վասն հեզամտութեան եւ անհպարտութեան եւ թէ հայեաց ի քեզ.

ԼԳ. Զի ողջախոհ մտաց ո՛չ ինչ վնասեն ընդդիմաբանութիւնք հեր- ձուածողաց.

ԼԴ. Վասն փութոյ եւ խնամարկութեան հոգւոյ.

ԼԵ. Զի վնաս է հանգիստ մարմնոյ եւ դատարկութիւն.

ԼԶ. Վասն փութոյ աղաւթից գիշերայնոց.

ԼԷ. Վասն սիրոյ եւ հոգեւոր խաղաղութեան, որ առ միմեանս.

ԼԸ. Վասն զղջման եւ սիրելոյ զԱստուած.

ԼԹ. Վասն հեզամտութեան եւ առ անարգաւզս անյիշաչարութեան.

Խ. Յաղագս սիրոյ.

ԽԱ. Թէ չար է խստանալ սրտիւ եւ յամառել յախտս, այլ սթափիլ յախ- տից.

ԽԲ. Զի չափաւոր փորձութիւն պիտանացու է ամենեցուն.

ԽԳ. Զի պարտ է նմանել սրբոցն եւ ո՛չ խնայել զանձինս ի վիշտս վասն եղբարց.

ԽԴ. Առ լսաւդան զգուշանալ ասացելոցն եւ յառաջել յառ աստուածա- սերն², եւ յանձն իւր, թէ որպէս ունի առ աշակերտսն.

ԽԵ. Վասն աւտարսիրութեան, եւ թէ մեծագոյն վարձք են յընկալուլն զփոքունս.

ԽԶ. Ոչ ցաւագնել վասն հերձուածս գոլոյ.

ԽԷ. Թէ պարտ է մեզ վկայս Քրիստոսի լինել ուղիղ վարուք.

ԽԸ. Վասն հեզութեան եւ համարձակութեան եւ հակակայց նոցին.

ԽԹ. Զի ի ձեռն թուեցելոցն, թէ վնասիմք, շահիմք՝ թէ արթուն իցեմք. աւրինակն ի Յոբայ եւ ի Յովսեփայ.

Ս. Վասն ոչ փոխարինելոյ անարգողաց, այլ սիրով յառաջելոյ զնոսա.

ՍԱ. Զի ոչ ոք կարէ վնասել զմեզ, եթէ մեք ոչ վնասիմք.

ՍԲ. Զի ըմբռնեալն³ աստուածային սիրովն առ ոչ մի ինչ աշխարհիս հայի.

ՍԳ. Զի պարտ է ունել ի տան այր սուրբ եւ հաւանել նմա, եւ զի պարտ է այժմ որպէս ի մաւտոյ կալով լսել Պաւղոսի նախ քան զփորձիլն չա- րեաւք.

ՍԴ. Թէ ոչ միշտ դեւն պատճառ չարի կարէ լինել.

ՍԵ. Վասն Պաւղոսի առաքելոյ:

¹ Բ յեկեղեցւոց
² Բ յաստուածասէրն
³ Բ ըմբռնելն

**/2ա/ ԱՌԻՆԴՐՕՂՆ ՆԱՄԱՌՕՏԻՍ ՏԵՐ ՅՈՆԱՆՆԷՍ ԱՐՔԱ-
ՅԵՂԵԱՅՐ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎՆԳԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԿԱՆ
ԴՂԵԿԻՆ ՄՈՒԵՒՈՆԻ¹ ԵՒ ՄԱՍԻՆ ԻՆՉ ԲԱՐՁՐԲԵՐԴՈՅ, ԵՒ
ՆՈՅՆ՝ ՏԵՍՈՒՉ ՆՈՉԱԿԵԼԻ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԳՈՆԵՐՈՅ²,
ԵՒ ԱՌ ՆԱՆԴԻՊԵԱԼՄՆ³ ՄԱՏԵՆԻՍ**

Ահա, ո՛վ աստուածասէր հա՛յր իմ եւ տէր, հարկեցուցիչ խնդիրս քո եւ պատկառելի շուք երեսացդ դարձեալ զբաւեաց զիս ահիւ, մինչ զի մոռանալ զիմ⁴ խամուլթիւն տխմարութեանս եւ ընկենուլ զիս ի գործս⁵, որ առաւել ծանր է քան զիս: Քանզի հրամայեցեր ինձ դէմ յանդիման տալով հանգամանս աւրինակի՝ ի լայն եւ ի հարուստ մեկնութենէ Գործոց առաքելոցն հաւասար իմացուածով զսպել զերկարութիւն բանիցն համառաւտ կարգաւ: Զոր ի ձեռն այլոյ զաւրեղի կամ յոյժ մանաւանդ քոյին իսկ հանճարայեղձ⁶ եւ շատիմայ անձամբ գեղեցկադիր⁷ բանիւ բաւական էիր լնուլ քեզէն⁸ զիմաստասէր փափաքդ քո ի նպաստ գիտնոց վարժողաց, ի կարճեալ ժամանակիս զկարճն ախորժողաց՝ ըստ ասելոյ ումեմն: Բայց արդ, ո՛չ անգիտանամ զգիջանելդ քո ներգործութիւն սիրոյ գոլ առ իս եւ յայսմ մասին. որում թէպէտ հպատակել բռնադատեցայ, սակայն ի թերութիւնս իմ հայելով՝ զամաւլթի հարեալ կամ յանդգնելովս իմ առ այս: Եւ արդ, քանզի թէպէտ եւ բազմամանուած, սակայն հարթ⁹ եւ հորդ եւ միանգամայն կուռ եւ կոկ էր ճանապարհս, ընդ որ ի քէն ընթանալ հրամայեցայ: Մանաւանդ զի զպայծառ ջահսն եւ զանմուտ արեգակունսն առաջնորդ ինձ ունելով՝ զաստուածուսոյց հանճարեղն զտէր Եփրեմ եւ քրիստոսա-

¹ ԱԲ մօլէւոնի

² ԱԲ > եւ մասին ինչ բարձրբերոյ եւ նոյն տեսուչ իռչակելի սուրբ ուխտին գոներոյ

³ ԱԲ պատահեալսն] հանդիպեալսն

⁴ Բ > զիմ

⁵ ԱԲ գործ

⁶ ԱԲ հանճարայեղց

⁷ ԱԲ գեղեցկագիր

⁸ ԱԲ քեզեն

⁹ ԱԲ հարդ

ծաւալ աղբիւրն¹ իմաստից զամենահռչակն զՈսկէքերան: Զորոց սրբոց երկնընթաց ոտիցն² բուռն հարեալ ահիւ՝ նախ անտեսութիւն յանդգնութեանս իմոյ աղերսիւ³ հայցեմ, եւ ապա աւգնականութիւն տկար զաւրութեանս առ ի բաւական լինել ինձ զխորիմաց եւ զպայծառափայլ նոցին բանս մեկնութեան Գործոց սուրբ առաքելոցն զառանձնացեալսն երբեք եւ զհամաձայնեալսն ուրեք ընդելուզել հիւսմամբ իբրեւ զականս պատուականս, կամ իբրեւ զանթառամելի զանուշահոտ ծաղիկս բոլորելով՝ կազմել պսակ յուսոյ աստուածասէր գլխոյ խնդրողիդ ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ սրբոցս նորին եւ ի հրճուանս աստուածասէր ընթերցողաց: Յորոց աննախանձ սիրով⁴ հայցեմ աղերսիւ զոչ⁵ ինքնայորդոր համարձակիլս իմ յայս չարկանել ընդ մեղադրութեամբ, այլ մանաւանդ զսխալանս իմ աստ եղբայրաբար ուղղել |2բ| զիջողացն ըստ իս⁶: Իսկ զառաւել պասուք ծարաւոյ տարողութեան ընդարձակ մտաց հզաւրքն ի ծովածաւալ աղբիւրսն⁷ իմաստից դիմեսցեն լնուլ, ի բունսն եւ ի լայնսն ասեմ մեկնութիւնսն, յորոց եւ այս այսչափ ծայրաքաղ համառաւտեցաւ: Եւ զդոյզն իմ զաշխատութիւնս թողութիւն մեղաց յԱստուծոյ հայցմամբ վարձատրել, եւ զփոխարէնն կրկնապատիկ յառատապարգեւ Տեառնէն ընդունել. ամէն:

ՎԱՍՆ ՎԵՐՆԱԳՐՈՒԹԵԱՆ⁸ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Արդ, ներելովն Աստուծոյ տեսցուք զվերնագիրս, թէ ընդէ՛ր ասէ Գործք առաքելոց: Զի ահա, զոր ինչ պատմել ունի յառաջիկայսդ, ո՛չ է բովանդակն գործ՝ լոկ մարդկեղէն փութով վճարեալ, այլ մանաւանդ յոլովն մասն՝ նոր եւ հիացուցիչ սքանչելիք, աստուածեղէն զաւրութեամբն արուեստաւորեալ: Է՞ր վասն ապա աստուածաբան պատմաւորն Ղուկաս ո՛չ ի վեհագոյն կոչմանէն զառաքեալսն հռչակելով նշանս եւ սքանչելիս առաքելոցն մակագրէ զառաջիկայս, այլ գործս: Յաղագս այսոսիկ⁹ նախ զայս ունիմք իմանալ. զի անփառա-

¹ ԱԲ աղբեւրն

² ԱԲ ոտից

³ Ա աղաղերսիվ

⁴ ԱԲ սիրոյ

⁵ ԱԲ գի ոչ] զոչ

⁶ ԱԲ ստիս] ըստ իս

⁷ ԱԲ աղբեւրսն

⁸ ԱԲ վերնագրութիւն

⁹ Բ այսորիկ

սէր եւ առանց շփացութեան բարս ունելով՝ խոյս տայ ի մեծամեծս բարբառելոյ, որպէս եւ է իսկ սրբոցն սովորութիւն, ըստ որում ի յորովագոյնս զայսոսիկ ի յառաջիկայում քննութեան գրոցս ունիմք ուսանել, այսինքն՝ խոնարհագոյն բանիւ վարեցեալ յաւէտ՝ նախ զՔրիստոս ինքն, եւ ընդ նմին ապա եւ զաշակերտսն: Վասն որոյ եւ Ղուկաս այսու ձեւով վարի ի սկզբանէ գրոցս մինչեւ ցկատարումն:

Եւ ապա զի առաքեալքն սուրբքն, յաղագս որոց առաջիկայ մատեանս է պատմութիւն, ոչ այնչափ ի սքանչելի նշանաց եւ ի գաւրաւոր արուեստից զպատուէրն Քրիստոսի լցին եւ զառաքելութիւնն կատարեցին, եւ Աստուծոյ հաճոյք եւ ընդիրք¹ եղեն, որչափ իւրական ջանիւ եւ ինքնագործ աշխատութեամբ, որպէս եւ յառաջիկայսդ² տեսցես՝ բազում ուրեք զնոսա ոչ շնորհաւք եւ սքանչելեաւք յատուկ, այլ յոյժ մանաւանդ մարդկեղէն փութով մեծամեծ գործս վճարեալ: Եւ այս յոյժ վայելջապէս³, զի սքանչելեացն հրաշք՝ ո՛չ մարդկեղէն⁴ հնարից, այլ աստուածային զաւրութեան է գործ, որ մեկին բանիւ կատարէ զարմանալիս առանց արբանեկին ինչ աշխատութեան, որպէս յորժամ բանիւ սքանչելագործէին առաքեալքն եւ մարգարէքն ի հնումն ի հաւանութիւն խստասրտացն: Յոր թէպէտ եւ զաւրացան ի նշանս առաքեալքն, այլ ոչ այնու ի ծուլութիւն հատան յանհոգս նստելով, գիտելով, թէ առանց գործնական առաքինութեան ոչ կարեն Աստուծոյ հաճոյ լինել, զի ահա բազումք նշանս եւ զաւրութիւնս բազումս անուամբն Քրիստոսի արարեալք՝ լսելոց են ի նմանէ, թէ «Ոչ գիտնմ զձեզ» (Մաթթ. ԻԵ. 12):

Սմին վասն պատկեր աշակերտութեան իւրոյ ոչ նշանս սքանչելեաց եղ Քրիստոս, այլ զսէրն սերտ⁵, որ բազում փութոյ պնդութեան եւ աշխատութեան գործոյ⁶ է պտուղ: Ըստ որում եւ ինքն Քրիստոս, ոչ յատուկ աստուածեղէն զաւրութեամբ⁷ եւեթ, այլ յաւէտ մարդավայելուչ աստուածայրա/Յա/կան⁸ փրկագործ կրիւքն սիրով եղ զանձն իւր ի մահ վասն մեր, եւ զհաճոյսն Հաւր ինքնագործ փութով լցեալ կատարեաց՝ առ ի յուսումն եւ յաւրինակ մեզ վարդա-

¹ Բ ընտիրք

² Ա առաջիկայսդ

³ ԱԲ վայելչապէս

⁴ Ա մարդկեղէն

⁵ Ա սէրտ

⁶ ԱԲ գործոց

⁷ Ա զօրութեամբն

⁸ Բ աստուածակամ

պետութեան, զի մեք մի՛ ծուլութեամբ մեղկեալք՝ զամենայն ինչ զոր մեզ պարտն իցէ առնել, յԱստուած ընկեսցուք, եւ մի՛ պատճառս հեղգութեան կարկատեսցուք, թէ առաքեալքն ի շնորհսն Աստուծոյ յաճախ վայելեալ, նշանս մեծամեծս կարողացան առնել, եւ այնու զամենայն հաճոյսն Աստուծոյ ուղղել զաւրացան, յորմէ վրիպեալ մեք փոքունքս եւ տկարք զի՞նչ կարասցուք առնել: Եւ այսպէս ի տարտամութեան գրաւեալք՝ զսակաւ կենցաղս անգործ ի բարեաց վճարեսցուք: Այլ¹ զի մանաւանդ հայեսցուք, զի այսու տկար մարմնովս իբրու մարդիկ գոլով առաքեալքն ի ձեռն ժրութեան փութոյ զտիեզերաց եւ զիւրեանց անձանց փրկութիւնն² գործով լիցին³: Առ որս ի նախանձ բարեաց զարթուցանելով զմեզ բանս՝ գործք առաքելոց մակագրէ, զի աւգնականութեամբն Աստուծոյ ի պատշաճաւորսն⁴ մեզ ի փոյթ պնդութեան գործոյ յարիցուք:

¹ Ա այդ

² ԱԲ փրկութիւն

³ Բ լցին

⁴ Բ պատշաճաւորսն

**Ի ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԲՈՒՆ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՄԵԿՆՈՒ-
ԹԵԱՆՅ ՍՐԲՈՅՆ՝ ՏԵԱՌՆ ԵՓՐԵՄԻ ԵՒ ԵՐԱՆԵԼՈՅՆ՝ ՅՈ-
ՆԱՆՆՈՒՒ¹ ՈՍԿԷԲԵՐԱՆԻ. ԱՅՍ ՆԱՄԱՌՕՏ ՇԱՐԱՆԻՄԵ-
ՅԱԲ ՈՐՊԷՍ ԵՒ ՏԵՍՅԵՍ ԱՌԸՆԹԵՐ ԲԱՆԻՅՆ ՅԱՆՅՆԻՐ
ՏԵՂԲՈՋ ԴՐՈՇՄԵԱԼ ԶԱՆՈՒԱՆՍ ՍՐԲՈՅՆ, ՆՐԱՄԱՆԱԲ
ՏԵԱՌՆ ՅՈՆԱՆԻՄԻ՝² ԱՍՏՈՒԿԾԱՊԱՏ ՈՒԽՏԻՆ ԳՈՆԵՐՈՅ
ԱՌԱՋՆՈՐԴԻ**

[ԳԼՈՒԽ Ա.]

Եփր⁴. Գործոցս առաքելոց մատենագիր է Ղուկաս աւետարանիչ, այն որ թէպէտ ի սկսմանէ անտի քարոզելոյ Քրիստոսի Տեառն մերոյ չէր ընդ նմա, սակայն ընդ առաքելական Տեառն Քրիստոսի յարէր նա⁵ ի սկսմանէ անտի իջման Հոգւոյն եւ յառաջ: Եւ թէպէտ զԱւետարանն, զոր գրեաց նա, որպէս լուաւ յաշակերտաց անտի Քրիստոսի գրեաց, այլ Գործոց առաքելոցն զոր գրեաց՝ իւրովք իսկ աչաւք տեսող⁶ եղեւ հաւաստի: Արդ, սա յետ Աւետարանին⁷ իւրոյ զոր գրեաց, քանզի ետես, զի խարդախողք ոմանք գրեցին ի մտաց իւրեանց աւետարան⁸ յանուն տղայութեան Քրիստոսի Տեառն մերոյ, եւ այլք՝ գիրս հարցուածոց յանուն Մարիամու եւ աշակերտացն Քրիստոսի, յորում ասեն, թէ զկնի յարութեանն յետ ութուտասն ամսոյ վերացաւ անդրանիկն այն, զորմէ առաքելաքն իւր գրեն, թէ յետ քառասուն աւուր իսկ եւ իսկ վերացաւ նա յերկինս: Արդ, զի խափանեսցէ Ղուկաս զսուտ գիրս այլափառացն յԱւետարանէն Քրիստոսի Տեառն մերոյ, որք երիցութիւն եւ կրսերութիւն⁹ գործոց ստեղծաբանեն¹⁰ զՏեառնէ Յիսուսէ, ինչ ինչ նախ քան զմկրտիլն եւ

¹ Բ Երանելոյն

² Բ յովհաննու

³ Բ յովհանիս

⁴ Բ > Եփր.

⁵ Ա նայ

⁶ Ա տեսող

⁷ ԱԲ յաւետարանին] յետ աւետարանին

⁸ ԱԲ աւետարանն

⁹ Ա կցերութիւն

¹⁰ Բ ստեղծաբանէն

ինչ ինչ յետ քառասնաւրեայ վերացման նորա, դնէ ի մատեանս Գործոց առաքելոցն սկիզբն եւ կատարումն գործոցն¹ Տեառն մերոյ՝ ըստ նմանութեան այլոց աւետարանչացն, սկսեալ ի մկրտութենէն Տեառն ի Յովաննէ² մինչեւ ի քառասուն աւր վերացման նորա, զի ցուցցէ, թէ ամենայն գործ, ուր եւ գտցի գրեալ յանուն Տեառն Քրիստոսի, նախ քան զմկրտութիւն նորա եւ յետ քառասուն աւուր Համբառնալոյ նորա, աւտար է գործն այն ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ: Եւ յայտ անտի է, զի ինքն իսկ Քրիստոս ասաց աշակերտացն իւրոց. «Եթէ ես ո՛չ երթայց, մխիթարիչն ո՛չ գայցէ» (Յովհ. ԺԶ. 7), եւ մխիթարիչն ի կատարումն Պենտակոստէին եկն յետ յիսուն աւուր յարութեան նորա: Յայտ եղեւ ա/Յբ/Հա, զի ի լրումն քառասնեկին, որպէս ասացին առաքեալքն, վերացաւ Յիսուս, եւ սուտ են խարդախողքն, որք յետ ութուտասն ամսոյ ասեն զվերանալ նորա: Արդ, գրեաց Ղուկաս վասն յարութեան Տեառն մերոյ, վասն վերանելոյ նորա եւ վասն գալստեան³ Հոգւոյն եւ աճման աշակերտացն, եւ որ ինչ յետ այսոցիկ:

Յոռ. Այլ քանզի անգիտանան բազումք ոչ միայն զչարագրաւդ սորին, թէ ո՛րք իցէ, այլ եւ բնաւին իսկ զգիրս գայս գլխովին, սմին վասն հարկաւորապէս բուռն հարի առ ի քննել զսա, զի զոչ գիտաւղսն սորին զարթուցից, եւ ոչ թողից ի թագուստ մնալ այսչափ պատուական գանձուցս մեծաց, որ ոչ ինչ նուազ քան զԱւետարանն շահեցուցանէ զմեզ բարձրագոյն իմաստիւրք եւ ուղղութեամբք աւանդութեանց, մանաւանդ յաղագս Սրբոյ Հոգւոյն՝ աստուածաբանութեամբ զեղելոցն եւ զասացելոցն ի Հոգւոյն պատմելովն:

Արդ, ի կարծոյ առ ի դիտումն բովանդակ գրոցս՝ նախ այս լիցի գիտելի, զի կանխասացութիւնքն Քրիստոսի վասն ի լաւագոյնսն փոփոխման աշակերտացն՝ գալով ի նոսա Հոգւոյն Սրբոյ, աստ ի գլուխ ելեալ երեւի: Այսինքն թէ՛ «Որ հաւաքայ յիս, գնշանսն, գոր ես առնեմ, եւ նա առնեմ» (հմմտ. Յովհ. Բ. 23), զոր եւ արարին իսկ աստ աշակերտքն: Եւ թէ՛ առ դատաւորս ածեալ՝ տանջողացն յաղթիցեն, եւ յաղթեցին՝ որպէս աստ լսեմք, եւ այն, թէ՛ «Աւերարանս քարոզեսցի» (Մտթ. ԻԴ. 14, Մրկ. ԺԴ. 9), եւ այլն ամենայն: Աստանաւր տեսցես զաշակերտսն քարոզելով զՔրիստոս իբրեւ զթռչունս սլացեալս ընդ ծով

¹ ԱԲ գործոց

² Ա ի յովհաննէ

³ Ա գալլստեան

եւ ընդ ցամաք՝ յանկարծակի իմն այլք յայլոց զնոսա փոփոխեալս, որք երբեմն երկչոտքն եւ անիմաստք՝ վեհագոյնք այժմ եղեալք փառաց, ընչից, ցասման եւ ցանգուլթեանց¹ եւ սոցայոցն կրից, տինա մանավանդ քաջութեամբ, ցածութեամբ, միաբանութեամբ եւ սիրով փայլեալք: Է գտանել ի սմա եւ վասն աստուածահաճոյ գործական վարուց, այլ եւ աւանդութիւնս յոյժ պիտանիս, զոր թէ ոչ աստի, ոչ այլ ուստեք մեզ լինէր գիտելի, տինա մանաւանդ եւ գլուխն իսկ փրկութեանս մերոյ² թաքուն³ մնայր եւ անյայտ, այսինքն՝ քրիստոնեայ անուանս այս կոչումնս:

Իսկ վասն զի յոլով մասն գրոցս գործքն Պաւղոսի է, վասն զի աշակերտ էր նորին շարագրաւղն սորա երանելին Ղուկաս, զորոյ առաքինութիւնն ոչ միայն ի Պաւղոսէ լսեմք, թէ «Գովութիւն նորա յԱնապարանի անդ⁴ է» (Բ. Կրնթ. Ը. 18), այլ եւ յանքակ շրջելոյն սորա ընդ Պաւղոսի: Զի յորժամ այլքն ի նմանէ մեկնեալ հեռացան՝ ոմն ի Գալլիա, միւսն ի Դադմատիայ⁵, սա միայն առ նա դեգերէր⁶: Ապա ընդէ՞ր արդեւք մինչ ի վախճան զգործս նորա ոչ գրեաց՝ թերեւս ասիցէ որ: Ասեմք. թէ բաւական էր այս՝ որոց կամին ի միտ առնուլ, թէ եւ չգրեցեալքն⁷ սոյնպիսիք իցեն: Եւ դարձեալ զի առ հարկաւորսն եւեթ եւ ոչ ի ճառագրել ինչ աստուածաբանքն փութային, այլ եւ⁸ բազում ինչ անգիր իսկ աւանդեցին: Սմին վասն եւ առաքեալքն ի քարոզելն զՔրիստոս սակաւ ինչ ասացին վասն աստուածութեան նորա, եւ յոլովս վասն մարդեղութեանն, չարչարանացն, մահուն, յարութեանն⁹ եւ վերանալոյ նորա: Որ¹⁰ յայնժամ այս էր յոյժ հարկաւոր հաւատալ մարդկան, թէ «Յարևաւ Քրիստոս եւ ել /4ա/ յերկինս»: Զի որպէս Քրիստոս զայն փութայր ցուցանել, թէ ի Հաւրէ եկն, այսպէս եւ աւետարանիչս ըստ կամելոյ Հոգւոյն զայն փութայր ցուցանել, թէ «Յարևաւ ի մեռելոց եւ առ Տայր գնաց» (հմմտ. ԺԵ.

¹ Աբ ցանկութեանց

² Աբ մերոյն

³ Աբ թագուն

⁴ Աբ անդ

⁵ Գ դադմատիա

⁶ Ա դեգերել

⁷ Ա չգրիցեալքն

⁸ Բ > եւ

⁹ Աբ յարութեան

¹⁰ Աբ զի] որ

18), ուստի եւ եկեալն իսկ էր: Զի թէ ոչ նախ սոքա էին¹ ընկալեալք, անհաւատալի լինէր հրէիցն եւ այլ ամենայն աւանդութիւնքն:

Սմին վասն զտկար միտս լսողացն մեղմով ի բարձրագոյնսն վերածել առաքեալքն կամելով՝ այր եւ պարզաբար մարդ զՔրիստոս քարոզէին: Եւ յիրաւի. զի թէ զՔրիստոս վասն հաւասար Հաւր զինքն զնելոյն՝ հրեայքն² քարկոծել ձեռնարկէին իբրեւ զհայհոյիչ³, յոյժ մանաւանդ ի ձկնորսաց զառ ի յինքեանց խաչեալն Աստուած գոլ լսելով՝ ընդարձակս ծիծաղէին: Եւ չեն զարմանք, զի թէ առաքեալքն յար ընդ նմա շրջեալք, եւ զհրաշսն ի նմանէ եղեալս աչաւք իսկ տեսեալ, սակայն ընդ լսելն ի նմանէ զբարձրագոյնսն խռովէին, մինչ զի զբազումսն եւ լսել իսկ ոչ կարէին, զի ապա ձեռագործացն երկրպագութեան միտ հեթանոսքն վաղվաղակի զբարձրագոյն վարդապետութիւնն⁴ տանել կարէին, կամ ո՞րպէս հրեայքն միշտ լսելով, թէ մի է Աստուած, եւ չիք այլ ոք, զառ ի յինքեանց խաչեալն Քրիստոս մեռեալ եւ թաղեալ եւ ոչ տեսեալ յարուցեալ, ի լսելն Աստուած զնա գոլ ոչ ի բաց վազէին, ըստ որս զիջանելով առաքեալքն խոնարհագոյնս⁵ զՔրիստոսէ դեռ եւս ճառէին: Սմին վասն եւ ի շնորհս Հոգւոյն յաճախ վայելէին, եւ անուամբն Յիսուսի մեծագոյնս քան զորս ինքն արար նշանս՝ առնէին: Զի այսպէս զգետնաքարչ միտս մարդկան ի վեր յարուցեն հաւատալ նախ, թէ «Յարեալ ի մեռելոց Քրիստոս» (Տոմ. Զ. 4), զորմէ եւ յաճախ հրաշիւք ապացոյցս ունի զիրքս այս Գործոց⁶ առաքելոցն, զի յարութեանն⁷ Քրիստոսի հաւատալով մարդիկ, ըստ կարգի ապա եւ զայլսն յանձին կալցին: Արդ, գլխաւորելով իմն յայտոսիկ ժողովի գաւրութիւն գրոցս, լուիցուք այսուհետեւ զառաջաբան սորին, որ ասէ.

Զբանն առաջին⁸, գոր արարի (Ա. 1):

«Առաջին բան»՝ զԱւետարանն ասէ, զոր գրեաց: Եւ թէ է՞ր վասն ի սկիզբն գործոցս զԱւետարանէն յիշեցուցանէ վայելչապէս, զի այնու զայս հաւատալի ցուցցէ: Զի անդ ի սկիզբն Աւետարանին կա-

¹ Բ լիցեից] էից

² Ա հրեայք, Բ հրեայք

³ ԱԲ գիայիոյիչն

⁴ Բ վարդապետութիւնն

⁵ Ա խոնարհագոյս

⁶ Բ գործոցս

⁷ ԱԲ յարութեանն

⁸ Բ առաջինն

մեկով հաւատարիմ առնել զբանն՝ ասէ. «Կամ եղև եւ¹ ինձ, որ ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայնի ճշմարտութեամբ, կարգաւ գրել քեզ, Թէոփիլ» (Ա. 3): Եւ ոչ իւրով վկայութեամբն շատացաւ, այլ եւ զառաքեալսն էած վկայս, թէ «Աւանդեցին մեզ, որք ի սկզբանէ ականապետքն» (Ա. 2): Եւ այսպէս զբանն հաւատարիմ արարեալ անդ, աստ այժմիկ ոչ կարաւտանայ այլ ինչ պիտոյից դարձեալ Թէոփիլեայ հաւատարիմ լինել, այլ զառաջինն զայն հերիք համարի յայսր գրութեան ճշմարտութիւն: Իբրով թէ ասել առ նա, թէ «Ո՞ւ Թէոփիլ» (Ա. 1), զի թէ զառ ի յայլոց լուեալն³ գրելով իմ հաւատացեր, ապա առաւել զայսոսիկ հաւատասջիր՝ որս⁴ աչաւք իսկ տեսի: Եւս, թէ անդ զՔրիստոսէ զբանն ընկալար, յոյժ մանաւանդ եւ աստ զառաքելոցն:

«Ջրանն առաջին» ասէ: Եւ ընդէ՞ր բան լոկ ասէ զԱւետարանն աստ, եւ⁵ կամ ընդէ՞ր եւ անդ, թէ «Աւանդեցին մեզ ինքնապետքն» (հմմտ. Ա. 2), եւ ոչ ասաց՝ թէ Աւանդեցին Հոգւոյն Սրբոյ արժանացեալքն: Մի-թէ լո՞կ պատմութիւն իցէ Աւետարանն առանց Հոգւոյն: Ոչ: Այլ զի միշտ ցածութեան սիրող⁶ են սուրբքն, եւ կրաւդքն⁷ Հոգւոյն հեզութեան, որով ի բաց մղեալ եւ սորա զկարծիս փառաց՝ «Ջրանն, ասէ, զոր արարի», եւ ոչ զԱւետարանն: Մեծագոյն քան զինքն հաշուելով զանուն Աւետարանին, թէպէտ առաքեալ այնու զսա ներբողէ: Արդ, որպէս աստ՝ ոչ պատուասիրեաց վասն իւր, այլ բան ասաց զԱւետարանն, նոյնպէս եւ անդ՝ ոչ ասաց շփացութեամբ, թէ աւանդեցին մեզ հոգիւնկալքն, այլ թէ «ինքնապետքն եւ սպասաւորք»: Եւ այլազգ՝ զի յականատեսից ուսեալն արժանի հաւատալոյ թուի, եւ թէպէտ քան զտեսութիւն աչաց⁸ ստուգագոյն է Հոգւոյն ազդումն, այլ ոչ անծանալից Հոգւոյն: Սմին վասն եւ Մկրտիչն ասէր, թէ «Ես քնսի եւ վկայեցի» (Յովհ. Ա. 34), եւ Քրիստոս⁹ «Ջոր քնսարն, վկայեմք» (Յովհ. Գ. 11), եւ Պետրոս, թէ. «Ընդ նմա կերար եւ արբար» (Ժ. 41): Զայս առնէին վասն ոչ կարողացն յայնժամ ընդունել արժանապէս զԲանն վասն Հոգւոյն Սրբոյ:

¹ Բ > Եւ

² Բ > թէ ո

³ ԱԲ լուեալ

⁴ ԱԲ զորս

⁵ ԱԲ > Եւ

⁶ ԱԲ սիրող, Գ սերող

⁷ ԱԲ կրողք

⁸ Ա աչացս

⁹ Ա քրիստոս, թէ

«Զոր արարի, ասէ, վասն ամենայնի» (Ա. 1): Եւ սակայն Յովհաննէս ասէ, թէ «Զլր հնար զամենայն գրել» (հմմտ. Գ. Թղթ. Յովհ. 13), եւ սա զիա՞րդ ասէ՝ «վասն ամենայնի»: Ի միտ ա՛ռ. ոչ ասէ զամենայն, այլ «զամենայնի»¹. Իբրեւ թէ ասել, թէ խոշորապէս եւ թանձրամասնաբար² սակաւուք զբազմացն³ նշանակել: «Ո՛ր Թւոփիլ» (Ա. 1), այս է՝ աստուածասէր: Բայց թէ զիարդ անդ քաջ ասաց զսա, եւ աստ հիացական⁴ առ սա դնէ «ո՛ւ»՝ ասելով աստուածասէր: Վայելչապէս. զի անդ զչքնաղ եւ զանձանաւթ սքանչից ունէր պատմել, քաջալերեաց զնա որպէս նաւապետ կամ զաւրավար մի՛ կասկածել ի խորագոյնսն, կամ երկմտել ի հաւատալն: Իսկ աստ՝ ի փորձոյ եղելոց արդեանցն հիանայ ընդ մեծամեծսն ասելով՝ «Ո՛ր Թւոփիլ»:

Այլ տե՛ս զհեզուլթիւն նորա, մանաւանդ զհոգւոյն որ ի նմա, եւ զմարդասէրն փոյթ, զի վասն միոյ առն զգուշութեան ողջ իսկ Աւետարան գրեաց, եւ արդ դարձեալ երկրորդ առնէ առ նա շարագրութիւն առ ի շահել զնա փրկեալ, զի մի՛ կորիցէ ոք ի փոքրկանց⁵՝ ի Տեառնէ լուեալ: Եւ զի յերկուս գիրս բաժանեաց, նախ վասն հաստատութեան, եւ զի հանգուսցէ զլսաւդսն, եւ դարձեալ քանզի եւ իրաւք իսկ յերկուս են⁶ բաժանեալ դիտողութիւնքն, զորս եւ ցուցցուք յետ սակաւուց: Այլ այժմ դեռ զառաջնոյ բանէն ասէ, զոր «Արար վասն ամենայնի» (Ա. 1): Եւ թէ վասն որո՞ց արդեւք:

Զորս սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել (Ա. 1):

Զսքանչելիսն եւ վարդապետութիւնն Քրիստոսի ասէ, զոր սկսաւ առնել յետ մկրտութեանն: Եւ ոչ միայն զայս ցուցանէ, այլ եւ թէ առնելով իսկ ուսուցանէր Յիսուս, եւ զբանն իւր ընոյր գործով: Եւ թէ զիա՞րդ⁷ լո՛ւր, եւ ասացից: Ուսուցանէր անստացուած⁸ լինել, սիրել զթշնամիս, թողուլ յունաւդս զվերարկուս⁹: Ելից ինքն գործով զիւրաքանչիւրսս. ոչ ունելով տեղի գլխոյն, աղաւթելով վասն սպանչացն, թողլովն ոչ հանդերձս եւեթ, այլ եւ զարիւնն

¹ Ա վասն զամենայնի] զամենայնի

² Աբ թանձր մասնաբար] թանձրամասնաբար

³ Ա բազմաց

⁴ Բ հիացականս

⁵ Աբ փոքրականց

⁶ Բ > են

⁷ Ա արդ] զիարդ

⁸ Աբ անըստացուած

⁹ Աբ զվերարկուս

եւս տուեալ: Ուրեմն¹ եւ գչար/Տա/չարանսն Քրիստոսի գործ ասէ, որով զմահ քակեաց, եւ զմեզ փրկեաց, եւ ուսոյց մեզ զնոյն առնել: Ուստի ուսաւ Պաւղոս խրատել, թէ «Նմանողք մեզ եղիօք, ունելով զմեզ ձեզ արինակ» (Փլա. Գ. 17), որ մանաւանդ գործ է վարդապետի գործելով ուսուցանել, եւ ո՛չ բանիւ լոկով ճարտարել:

Մինչև յարն պապուիրելոյ առաքելոցն ի ձեռն Նոգւոյն Սրբոյ (Ա. 2):

Եփր. Որպէս կանխագոյն ասացաք՝ ի սկզբանէ² գործոցն Տեառն եւ կատարած զնէ ասելով, թէ «Մինչև յարն պապուիրելոյ», որ է աւրն վերացման նորա, զի կարկեսցէ զստախաւսսն³:

Յոհ. Բայց տե՛ս, թէ զիա՞րդ խոնարհագոյնս բարբառի զՔրիստոսէ: «Պապուիրեաց, ասէ, առաքելոցն ի ձեռն Նոգւոյն Սրբոյ»: Այսինքն՝ հոգեւորս առ նոսա խաւսեցաւ բանս եւ ո՛չ մարդկայինս: «Ձի ի ձեռն Նոգւոյն», այսինքն՝ գործակցութեամբ նորին նոցա պատուիրէր, որպէս գայն, թէ «Նոգով Աստուծոյ հանեմ⁴ զդեւս» (Մարթ. ԺԲ. 28): Եւ զի՞նչ արդեւք պատուիրեալքն իցեն: «Բանն զոր խաւսեցայ ընդ ձեզ՝ հոգի է, ասէ, եւ կեանք» (Յովհ. Զ. 64): «Գնացէ՛ք ապա, ուսուցէ՛ք մկրտելոցն ի ձեռն յաւնուն Նար եւ Որդոյ եւ Նոգւոյն Սրբոյ պահել, զոր ինչ ես⁵ պապուիրեցի» (հմմտ. Մարթ. ԻԸ. 19, 20): Բայց տե՛ս աստ, զի ոչ միայն առ փափագ⁶ պատուիրելոցն շարժէր⁷ զլսաւղն, թէ Հոգւոյն բանք են, այլ եւ մեծ զնէ զգովեստ առաքելոցն: «Ձորս ընտրեաց» (Ա. 2) ասէ: Յայտ է, թէ սպասաւորս փրկութեան հեթանոսաց: Ապաքէն զիտէր զնոսա լաւս եւ ապա ընտրէր. «Ես ընտրեցի զձեզ, ասէր, եւ եղի զձեզ, զի դուք պրողարք լինիօք» (Յովհ. ԺԵ. 16)՝ զբազմաց ընտրիլն նոքաւք յայտ առնելով:

Արդ, պապուիրեալ, ասէ, համբարձաւ (հմմտ. Ա. 2):

Տակաւին եւս իբրեւ զմարդոյ խաւսելով զՔրիստոսէ աւետարանիչս, ոչ ասէ վերացաւ, այլ «համբարձաւ»⁸, որ եւ զմարդոյ ասի: Որպէս այն որ կայ ի գիրս, թէ «Նամբարձաւ Յովնաթան փոխանակ Յուդայի

¹ Ա ումեմն

² Ա սկզբան] ի սկզբանէ

³ Ա զստախոսանն

⁴ Ա հանեմ ես] հանեմ

⁵ Բ ես ձեզ] ես

⁶ ԱԲ փափաք

⁷ ԱԲ շարժէ

⁸ ԱԲ > այլ համբարձաւ

եղբար իրոյ» (Ա. Մկր. Թ. 31), եւ զՊաւղոսէ գրէ Ղուկաս¹ «Նամբարձաւ յԵփեսեայ» (ԺԸ. 21): «Ամբարձաւ» ասելն² է ուրեք զի զսաստիկ արագութիւնն նշանակէ, եւ³ է զի զբարձրութիւնն պատուոյ⁴, եւ է ուր հանդերձ արագութեամբն եւ զինդամտութիւնն եւս յայտնէ: Որպէս զոստ ամբարձեալ Յակոբ⁵ գնայր յերկիրն արեւելից, զուարճացեալ ընդ տեսիլ սանդղոցն՝ ճեպով առնէր զընթացսն ի թեթեւս ամբառնալոյ ոտիցն: Զայս ձեւ ակրինակի բանից եւ ի վերայ Յիսուսի պահէ, թէ պատուէր տալով ընտրելոց աշակերտացն համբարձաւ:

Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանաց իւրոց (Ա. 3):

Մեծ իմն աւանդէ ի ծածուկ: Եւ զի⁶ նչ. ասացեալ նախ վասն համբարձմանն Յիսուսի, ասէ եւ վասն յարութեանն: Քանզի լուար⁶ եթէ համբարձաւ, զի մի՛ կարծիցես յայլոց համբարձեալ գնա, ասէ՝ կացոյց զանձն կենդանի, զի թէ մեծագոյնն՝ որ է յարութիւնն⁷ կացոյց զանձն, յոյժ մանաւանդ ի նուազն:

Եփր. Արդ, եցոյց, զի եկաց յետ խաչին ոչ առանց նշանաց, այլ ի բազում նշանս եւ ի բազում արուեստս, զոր արար ի քառասուն աւուրս, իբրու երեւէր նոցա յամենայն նմանութիւնս, երբեմն ի ծանալթս, երբեմն յանծանալթս, ըստ որում այլուր ասէ. «Աչք նոցա կալեալ էին, զի մի՛ ծանիցեն գնա» (Ղուկ. ԻԴ. 16), եւ ապա, թէ «Եր ծանալթս նոցա» (Յովհ. ԻԴ. 35):

Յոհ.⁸ Եւ այլազգ. զի ոչ որպէս /5բ/ նախ քան զյարութիւնն միշտ ընդ նոսա էր, յայսպէս եւ յետոյ: Զի ոչ ասէ զաւուրս քառասուն երեւեալ նոցա, այլ «յաւուրս քառասուն», զի յանկարծ իմն երեւեալ՝ դարձեալ ի բաց թռուցեալ լինէր: Զի երեւելովն հաստատեսցէ զնոսա առ յարութիւնն իւր, եւ ի բաց ծածկելովն ի նոցանէ մեծագոյնս քան զմարդոյ տացէ իմանալ զինքենէ, եւ յայոքիկ ի ներհակաց կազմեալ լինէր: Զի առ հաւատ յարութեանն բազում ինչ մարդկային պարտ էր լինել, իսկ վասն համբառնալոյն՝ աստուածային: Զորս

¹ Ա ղուկաս, թէ] ղուկաս

² Ա ասելովն] ասելն

³ ԱԲ > եւ

⁴ Ա պատուոյ

⁵ ԱԲ Յակովբ

⁶ Ա լուաւ, Բ լուաւ

⁷ ԱԲ յարութիւնն

⁸ Գ > յոհ.

ըստ պատշաճի զերկաքանչիւրսն ուղղեալ¹ ի բազում նշանս, «Երևելով, ասէ, նոցա»: Եւ ընդէ՞ր միայն նոցա երեւէր եւ ոչ ամենեցուն, զի մի՛ երեւոյթ ինչ կարծիցեն զնա անգէտքն մեծի խորհրդոյն: Զի թէ նոքին իսկ աշակերտքն զայս կրելով՝ շաշափմամբ² ձեռաց եւ սեղանոյ կարաւտացան, զիս՞րդ ոչ եւ այլք նոյնպէս խուճապէին: Սմին վասն եւ նշանաւք հաստատէր զերեւումնն, թէպէտ եւ ոչ գրեցաւ ամենայն:

Այլ զի մի՛ միայն որք տեսին զնա յայնժամ՝ հաւատասցեն ստոյգ գոլ զյարուլթիւնն, այլ եւ յետոյ ամենեքեան, վասն այսորիկ ոչ միայն ինքն արար նշանս, այլ եւ զաշակերտսն զաւրացոյց նշանաւք: Զի ահա, թէ ոչ յարեաւ Քրիստոս, այլ տակաւին կայ նոյն մեռեալ, զիս՞րդ սոքա անուամբ նորա մեռեալս յարուցին: Տինա, զի առանց մեծամեծ նշանաց ոչ իսկ բաղկանայր քրիստոնէութիւնս: Իսկ այժմ ոչ ոք կարէ ուրանալ զյայտնի եղեալ նշանսն Քրիստոսիւ. նա զի թէ եւ ժխտիցէ, ընդ անձին իւրում մարտնչի: Զի այս իսկ իցէ մեծ նշան, առանց նշանաց տիեզերաց ամենայնի ի հաւատս Քրիստոսի գալ ի ձեռն տասն³ աղքատ եւ անգիր արանց, որք ոչ ի ձեռն ընչից կամ իմաստիւք կամ զաւրուլթեամբ ձկնորսքն իմաստնոցն⁴ եւ հզաւրաց⁵ յաղթեցին: Տեսանե՞ս, զի որով ժխտելն կամիցի ոք, նովիմբ յաւէտ խոստովանի զաստուածային յաղթող զաւրուլթիւնն:

Արդ, աւուրս քառասուն եկաց յերկրի Քրիստոս երեւելով նոցա, զի յերկար ժամանակին տեսութեամբ մի՛ առ աչս տեսիլ գոլ կարծիցեն զնա: Եւ զի՞նչ արդեւք առնէր ի քառասուն աւուրսն երեւելով նոցա: «Ճառէր, ասէ, նոցա վասն արքայութեանն⁶ Ասորոյն» (Ա. 3): Զայնմանէ ճառէր, զորմէ ասէր եւ նախ քան զմեռանելն իւր ոչ միայն բազում բանիւք, թէ «Գալոց Է փառաւր Նաւր իւրոյ» (Մարթ. ԺԶ. 27) եւ «նսպցի⁷ յարոն փառաց իւրոց» (Մարթ. ԺԹ. 28), այլ եւ աչաց նոցա տայր տեսանել զայն ի Թաբաւր: Եւ յոյժ վայելչաբար. քանզի աշխատեալք եւ խոռովեալք էին աշակերտքն առ ժամայն եղելովքն, այսինքն՝ չարչարանաւքն եւ մահուամբ նորա: Եւս եւ զի հանդերձեալք էին առ մեծամեծ վաստակս ելանել քարոզութեամբն, արքայութեանն յու-

¹ Բ ուղղել

² ԱԲ շաշափման

³ Գ .ժ.] տասն

⁴ ԱԲ իմաստնացն

⁵ ԱԲ հզորացն

⁶ ԱԲ արքայութեան

⁷ ԱԲ Աստի

սով, զոր խոստանայր նոցա կազդուրեալ սրտապնդէր զգարհուրեալ անձինս նոցա: Բայց եւ ոչ միայն երեւմամբն ի քառասուն աւուրս եւ ծանաւթ ճառիւք արքայութեանն¹ շատացաւ մխիթարել զնոսա, այլ եւ սեղանով եւս, «Եւ հաղորդելով ընդ նոսա հացի» (Ա. 4):

Եփր.² Ոչ զի³ բնութեան⁴ ինչ/ճա/ պէտս⁵ ունելով այնուհետեւ կերակրոյ, այլ զիջանելով առ ի ստոյգ ցուցումն յարութեանն⁶:

Յոհ. Վասն որոյ եւ զայս միշտ առաքեալքն հաւաստի նշանակ տային յարութեանն, թէ «Կերաք եւ արրաք ընդ նմա⁷ յեր յարութեան նորա» (Ժ. 41): Արդ, ուտելովն հաստատեալ զաշակերտան ի հաւատ յարութեանն⁸ եւ զուարճացուցեալ զնոսա արքայութեանն խոստմամբ: Եւ զի այն ինչ մեկնելոց էր ի նոցանէ, «Պարուր փայր նոցա յերուսաղէմ մի՛ մնկնել» (Ա. 4):

Եփր. եւ քանզի զարհուրեալք էին, նախ ի Գալիլեա եհան զնոսա, զի անկասկած եղեալք⁹ լուիցեն զասացեալսն: Եւ իբրեւ լուան, քառասուն ահա ընդ նոսա դեգերելով աւուրս՝ պատուիրէր նոցա «յերուսաղէմ մի՛ մնկնել» եւ մի՛ ելանել ի քարոզութիւն նախ քան զընդունել Հոգւոյն: Որպէս զգինուորս ոչ ոք թողու խառնիլ ի ճակատ՝ նախ քան զսպառազինիլ, եւ ոչ զերիվար առանց կառավարի¹⁰, այսպէս զսոսա առանց գալոյ Հոգւոյն ոչ թողու մտանել ի հանդէս մարտի եւ յաղթահարիլ: Եւ դարձեալ վասն բազմաց, որք հաւատալոց էին յերուսաղէմէ, հարկ արար նոցա մնալ անդէն: Եւ դարձեալ զի մի՛ ասիցեն հրեայք, թէ զծանաւթս¹¹ թողեալք, առ անծանաւթսն ելին առ ատելութեան կամ վասն փառաց, եւ սրտառուչ եղեալ ի բաց վազիցեն ի նոցանէ: Սմին վասն նոցունց իսկ խաչողացն նախ տան զարուեստս յարութեանն յայնմ քաղաքի՝ ուր անիրաւ սպանանելն զՔրիստոս ի նոցանէ եղեւ. զի եւ արտաքոյքն եւս հեթանոսք դիւրաւ հաւանեսցին՝ տեսանելով զսպանաւղան Քրիստոսի հաւատացեալս ի նա, եւ զխաչաւղան քարոզս յարութեան նորա:

¹ Աբ արքայութեան

² Գ > Եփր.

³ Աբ իբրու] զի

⁴ Աբ բնութեանն

⁵ Ա պէտս

⁶ Աբ յարութեան

⁷ Աբ > նմա

⁸ Աբ ի հաստատութեանն] ի հաւատ յարութեանն

⁹ Բ ելեալք

¹⁰ Բ կառսս վարի] կառավարի

¹¹ Աբ զծանութս

Այլ զի մի՛ ասիցենն աշակերտքն, թէ զիա՞րդ կացցուք ի մէջ դաժան սպանողացն¹, եւ զի մի՛ փախիցեն յետ համբառնալոյ նորա, լուծանէ զկասկածն խոստմամբ Հոգւոյն անդանաւը նախ շնորհիլ նոցա, զի այսու յուսով իբր կապանաւք իւրք պահեսցէ² զնոսայ Երուսաղէմ:

Եփր. Նստել անդ եւ «սպասել աւերեացն Տար» (Ա. 4): Այն որ ի ձեռն մարգարէին ասէ³, թէ «Նեղից յՈգոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ» (Բ. 17):

Զոր լուարուք յինէն (Ա. 4):

Յոհ. Զի ոչ այժմ եւեթ ասեմ նորոգ, ասէ, այլ զի աւասիկ յառաջ իսկ խոստացեալ եմ եւ առնեմ⁴ անսըտապէս⁵: Եւ ե՞րբ արդեւք լուան: Յորժամ ասէր. «Լաւ է ձեզ, զի ես երթայց, զի եկեացէ միսիթարիսն» (հմմտ. Յովհ. ԺԶ. 7): «Եւ հարցից զՏայր եւ այլ միսիթարիս փացէ ձեզ» (Յովհ. ԺԶ. 16): Ապա՛ ուր զի դեռ եւս էր գալոց Հոգին, զիա՞րդ վաղագոյն երբեմն⁶ ասէր զնոսա, թէ «Առէք Տոգի Սուրբ» (Յովհ. Ի 22): Վայելչապէս. զի նախ մասամբ ինչ ընդելս զնոսա Հոգւոյն կազմեսցէ եւ բաւականս առ ի յընդունել: Զի թէ հրեշտակ երեւեալ Դանիէլի՛ յերկիւղէն հանդերձեալ էր լուծանիլ իսկոյն, յոյժ մանաւանդ սոքա յանտանելոյն Աստուծոյ կրելն: Արդ, կամ զայս պարտ է ասել, կամ թէ նախ զլինելոցն իբրեւ զեղեալ ասաց, որպէս զայն, թէ «Եփու ձեզ իշխանութիւն կոխել գաւձս եւ զկարիճս» (Ղուկ. Ժ. 19):

Այլ ընդէ՞ր ոչ մերձ գոլովն առ նոսա դեռ եւս Քրիստոսի՛ եկեալ լինէր Հոգին նախ քան զերթալն նորա: Վայելչապէս. զի նախ պարտ էր յերկինս ելանել մերոյ բնութեանս եւ հաշտութեանցն աւարտել, եւ ապա գալ Հոգւ/ճը/ոյն եւ հաստատել հաշտութիւնն: Եւ այլազգ եւս. զի մի՛ ցուրտ կամ աւելորդ թուիցի նոցա գալուստ Հոգւոյն, այլ աստուածային եւ շահաւետ: Զի թէ Յիսուսի մերձ գոլով եկեալ լինէր Հոգին, եւ ապա սա ի բաց գնացեալ եւ նա մնացեալ, ոչ արդեւք թուեցեալ լինէր գալն նորա իրք միսիթարութեան աշակերտացն: Նախ՛ զի ոչ ժուժէին մեկնել⁷ ի Քրիստոսէ: Երկրորդ՛ զի տակաւին ընդինքեանս ունելով զնա՛ չէին տխրեալք: Եւ ընդէ՞ր ոչ յետ

¹ ԱԲ սպանողացս

² ԱԲ կապեսցէ] պահեսցէ

³ ԱԲ > ասէ

⁴ ԱԲ > եւ առնեմ

⁵ ԱԲ անստապէս

⁶ Ա էրբեմն

⁷ Ա մեկնիլ, Բ մեկնիլ] մեկնել

գնալոյ նորա վաղվաղակի եկեալ լինէր Հոգին, այլ յետ ութ կամ ինն աւուր: Վայելչապէս. զի սիրով պարտ էր ակն ունել գալոյն նորա: Նմին իրի եւ Քրիստոս սպասել ասէր խոստմանն, զի տքնեալք լիցին նոքա յաղաւթս՝ եւ հայցեսցեն¹ զգալն: Սմին վասն՝ ոչ ընդ երթալն նորա իսկոյն գայր սա, այլ աւուրս ընդմիջէր, զի տխրեսցին եւ անձկասցին նորա գալոյն: Զի սովորեմք² մանաւանդ ի կարեաց աւուր յառնել առ Աստուած աղաւթիւք, ըստ որում եւ Մկրտիչն Յովհաննէս ի պիտոյից ժամու առաքէր զաշակերտան իւր առ Յիսուս՝ իւր ի բանդի³ գոլով, զի նոքա յաւժար սրտիւ առ Յիսուս դիմեսցեն: Այսպէս եւ սոքա, զի փոքր ինչ միջոցաւն տրտմեալք՝ մեծապէս շահեսցին զուրախարար Հոգին:

Արդ, եթէ նուազ ոք էր Հոգին, չէր իսկ բաւական մխիթարել զտրտմեալսն աստուածապէս, ապա ընդէ՞ր⁴ Քրիստոս, թէ «Լաւ է ձեզ երթեալսն իմ, զի եկեսցէ մխիթարիչն» (Յովհ. ԺԶ. 7): Սմին վասն եւ մեծագոյն իրք վարդապետութեանն Հոգւոյն պահեալ լինէին, զի մի՛ նուազ ինչ գոլ քան զՔրիստոս լիցի⁵ կարծեսցեալ:

Եւ յորժամ ասաց սպասել⁶ խոստմանն Հաւր զոր լուայք յինէն, ածէ գնովիմբ, թէ «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք հոգւովն Սրբով» (Ա. 3): Վայելչապէս աստանաւր ի մէջ բերէ զՅովհաննէս. նախ զի հաւատարմացուցէ զակնկալութիւն նոցա առ գալուստ Հոգւոյն, իբրեւ թէ ասել նոցա, թէ պարտ է ընուլ մարգարէութիւնն Յովհաննու վասն իմ, թէ «Նա մկրտեսցէ զձեզ հոգւովն Սրբով» (Մարթ. Գ. 11, Մրկ. Ա. 8): Թէպէտ եւ ոչ առնու ի մէջ զվկայութիւնս զասացեալ նորա, այլ լոկ գնա բերէ ի մէջ առ ի յիշելութիւն բանի նորա⁷ զՅիսուսէ: Այլ եւ զայն եւս ցուցանէ յայտնի, թէ ո՞րչափ միջոց է ինքեան եւ Յովհաննու, ոչ տակաւին պատրուակաւ⁸ այժմ, որպէս զայն, թէ «Փոքրիկն յարքայութեանն⁹ Աստուծոյ մեծ է քան գնա» (Դուկ. Է. 28), այլ յայտնապէս: Զի Յովհաննէս, որ մեծն է ի ծնունդս¹⁰ կանանց, մկրտեաց ի ջուր, բայց

¹ Բ հայեսցեն

² ԱԲ սովորիմք

³ ԱԲ ի բանտի

⁴ Ա ընդէ՞ր ասէր] ընդէ՞ր

⁵ ԱԲ լիցի

⁶ Ա ըսպասել

⁷ ԱԲ նորուն

⁸ ԱԲ պատուականաւ] պատրուակաւ

⁹ Բ յարքայութեան

¹⁰ Ա ծնունդ

դուք մկրտեսՆիք Հոգևովն Սրբով ցուցեալ, թէ այնչափ այնչափ միջոց է ընդ իս եւ ընդ Յովհաննէս, որչափ ընդ Չուրն եւ ընդ Հոգին:

Եփր. Յոհ.¹ Եւ ոչ միայն գինքն անբաղդատապէս մեծ գոլ ասէ, այլ եւ զաշակերտան եւս ցուցանէ մեծագոյնս լեալ² քան զՅովհաննէս ասելովն, թէ «դուք մկրտեսՆիք», զի ի Հոգին Սուրբ եւ նոքա հանդերձեալ էին մկրտել եւ զայլս: Եւ զի չասաց, թէ ես մկրտեմ զձեզ Հոգևով Սրբով, այլ թէ «մկրտիցիք»՝ ուսուցանելով զմեզ խոնարհել: Այլ զի ինքն էր, որ մկրտէր զնոսա Հոգևովն, ի վկայութենէն Յովհաննու յայտ է, զի ասաց. «Նա մկրտեսցէ զձեզ Նոգուով Սրբով եւ հրով» (Ղուկ. Գ. 16):

Եւ զի ի վերնատանն ընկալան զՀոգին, յայտ է: Արդ, ո՞րպէս ասէ «մկրտիցիք»՝ ջրոյ³ ոչ գոլով ի վերնատանն: Ասեմ, թէ զի վեհագոյն Հոգին է, որով եւ Չուրն ներգործէ, ըստ որում եւ ինքն աւծեալ ասի, որ ոչ զգալի իւղով աւծաւ, այլ Հոգևովն ուրախութեան: Եւ այլազգ. զի ջրով վաղ ուրեմն էին մկրտեալք ի Յովհաննէ. զի թէ մաքսաւորք մկրտէին, յոյժ առաւել սոքա՝ որոց առաջի կայր մկրտիլ եւ մկրտել Հոգևովն Սրբով: Զի թէպէտ առ մեզ համանգամայն ջրով եւ Հոգևով լինի մկրտիլ, այլ յայնժամ աշակերտքն յանջատեալ⁴ ժամանակի:

Յուցցուք⁵ եւ զայն եւս որպէս խոստացաքն⁶, թէ ընդէր Ղուկաս յերկուս գիրս բաժանեաց զպատմութիւնն իւր: Եւ է այս: Զի յաւետարանի անդ իւրում Ղուկաս պատմէ զայն ինչ, զոր Քրիստոս արար եւ ասաց, իսկ առաքելոցն գործս աստ պատմէ, զոր ինչ միւս մխիթարիչն Հոգին Սուրբ արար եւ ասաց: Այլ յայնժամ բազում ինչ եւ սա ինքն մխիթարիչս առնէր ընդ Քրիստոսի, որպէս եւ այժմ ընդ սմա եւ Քրիստոս ներգործէ, որպէս եւ յայնժամ՝ մինչ շրջէրն ընդ մեզ, այլ յայնժամ Քրիստոս մարմնովն, իսկ այժմ ի ձեռն առաքելոցն: Նմանապէս եւ յայնժամ Հոգին ի կուսականն եկն յարգանդ եւ զաստուածեղէնն⁷ ստեղծ զմարմին, իսկ այժմիկ⁸ յանձինս եկն առաքելոցն. եւ յայնժամ տեսեամք աղաւնոյ ի վերայ Քրիստոսի, եւ այժմ տեսեամք հրոյ յառաքեալսն: Զորոց զպատճառսն յառաջիկայսդ հատուցուք:

¹ Բ > յոհ.

² ԱԲ լիեալ

³ ԱԲ ջրով

⁴ ԱԲ տանցեալ] յանջատեալ

⁵ ԱԲ ցուցուք ապա

⁶ ԱԲ խոստացաք

⁷ Բ զաստուածեղէնն

⁸ ԱԲ այժմ ի] այժմիկ

Այլ զի նախ քան զչարչարանսն խոստացաւ զՀոգին, եւ այժմ դարձեալ կրկնէ դեռ եւս առանց առացն արդեանց, զի մի՛ կարծիցեն աշակերտքն լոկ խոստումն գոլ զՀոգին կամ առանց էութեան ներգործութիւն, ասէ. «Ոչ հնար բազում ինչ աւուրցս¹ այսոցիկ» (Ա. 5): Ոչ յայտնեաց, թէ երբ, զի մի՛ յանհոգս կալով իցեն դանդաղկոտք²: Այլ թէ հուպ է՝ ասաց, եւ թէ երբ՝ ոչ յայտնեաց, զի մի՛ լքցին, այլ վստահութեամբ տքնեսցին վասն մաւտաւոր ժամանակին: Եւ զիա՞րդ ապա սքնչասցուք, թէ զաւրն կատարածի ոչ յայտնեաց, որ եւ զայսպիսի մերձաւորս աւր՝ ոչ կամեցաւ յայտնել: Եւ յոյժ իրաւապէս, զի միշտ տքնեալ սպասիցեն³, զի ոչ ոք շնորհաց հասանէ առանց հսկման: Եւ զի մի՛ իսկոյն զպարզեւան աղաւաղեսցէ: Ո՞չ լսես զասելն Եղիայի ցաշակերտն⁴. «Թէ փեսանիցես զիս վերացեալ, լիցի քեզ» (Գ. Թագ. Բ. 9): Եւ Քրիստոս հաւատս պահանջէր յերկելոցն եւ ապա բժշկէր: Եւ Իսրայէլ⁵ ի հնումն ահիւ մեծաւ ճգնէր, եւ ապա ծովն բաժանէր: Նա զի եւ որք զծիրանիսն ներկանեն⁶, նախ ընդ արզն տտիպ անցուցանեն զընդունիչ կտաւն, զի մի՛ իսկոյն ի բաց թքցէ զծաղիկ գունոյն: Սմին վասն եւ Քրիստոս նախ հոգաւք ելից զաշակերտսն, եւ ապա ի պէնտէկոստէն⁷ եկն Հոգին Սուրբ եւ ելից զխոստումնն Քրիստոսի, թէ «Դուք մկրտիցիք ի Նոգին Սուրբ» (ԺԱ. 16):

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ թերեւս ասիցէ ոք, թէ ընդէ՞ր ոչ եւ մեք յայնմ աւուր իջման Հոգւոյն Սրբոյ մկրտիմք: Ասեմք, թէ նոյն Հոգւոյն⁸ շնորհք բաշխին հանապազ, որ յայնժամ⁹ յայտնի եւ այժմ ի ծածուկ. միայն պահաւք նախ զանձինս պատրա/7բ/ստեսցուք: Զի թէ ոք յիշխանութիւն ինչ հանդերձեալ է¹⁰ հասանել, նախ պատրաստէ զանձն իւր¹¹ յամենայն կեանս իւր, միայն զի հասանիցէ շնորհին: Որո՞յ իրաց արժանաւորք

¹ Ա աւուրցս

² ԱԲ դանդաղկոտ

³ Ա ըսպասիցեն, Բ սպասեսցեն

⁴ Բ ցաշակերտսն

⁵ ԱԲ իսրայէլ

⁶ Բ ներկանէն

⁷ Բ պենտակոստէն

⁸ ԱԲ հոգւոյ

⁹ ԱԲ յայնժամ] որ յայնժամ

¹⁰ ԱԲ հանդերձեալ] հանդերձեալ է

¹¹ Բ > իւր

իցեմք մեք այսչափ պղերգուլթեամբ յարքայուլթիւնն¹ զիմեալք: Եւ նախ քան զառնուլն փութամք, եւ յետ առնլոյն պղերգանամք, ուրեմն վասն այնր յետոյ ծուլանամք, զի նախ քան զառնուլն ոչ հակեցաք: Վասն այսորիկ բազումք յետ առնլոյն վաղվաղակի յառաջին փսխածն դառնան, եւ դժուարին² տանջանս զանձամբ³ կուտեն, զի յառաջին մեղացն ազատեալք մեծապէս զդատաստանն ընդդէմ ինքեանց սրեցին, ոչ զգաստացեալք առաջնոց ցաւոցն բժշկուլթեամբք: Վասն որոյ ասէր Քրիստոս անդամալուծին, թէ «Առողջացար⁴, այլ սի⁵ մեղանչեր⁶» (Յովհ. Ե. 13):

[ԳԼՈՒԽ Բ.]

Իսկ նորա մաքուցեալ հարցանէին զնա եւ ասէին. Տէր, եթէ ի ժամանակի՞ աստ յայսմիկ հասուցանես⁷ զթագաւորութիւնն⁸ Իսրայէլի (Ա. 6):

Յոհ. Թուրի, թէ մի եւ նոյն իցեն հարցումնս այս եւ որ ի լերինն անդ զաւուրն կատարածի: Այլ ստուգուլթեամբ քննեալ ոչ են մի. բայց ոչ ինչ արգելու ասել, թէ յուսանելն զայս՝ կարծէին մարդ⁹ գոլ եւ զայն եւս նոցա գիտել: «Նորա մաքուցեալ հարցանէին զնա» (Ա. 6): Յորժամ կամին աշակերտքն հարցանել ինչ զՔրիստոս, միաբան մատչին, զի բազմուլթեամբն թախանձիցեն զնա: Եւ այս մտածուլթիւն պիտանացու է մեզ՝ վասն¹⁰ միաբանուլթեամբ յաղաւթս կալոյ զաւուրուր գոլ համարել, որպէս եւ յայնժամ նոքա: Քանզի գիտէին քաջ, զի զոր կանխաւն ասաց, թէ «Ոչ որ գիպէ գաւրն եւ ոչ ժամն¹¹» (Խմնք. Մարթ. ԻԳ. 36), վասն զնոսս յայնմ խնդրոյ ի բաց մերժելոյ էր: Եւ զի թէ հաւանեալք էին յայնժամ, ոչ դարձեալ հարցանէին: Այլ զի լուան, թէ «Հոգի հանդերձեալ են առնուլ», ահա իբրեւ արժանաւորք գորով այնուհետեւ քաջանան ուսանել եւ պատրաստ լինել: Քանզի

¹ Բ յարքայութիւն

² Ա դժուարին

³ Բ զանձամբք

⁴ ԱԲ ահա ողջացար] առողջացար

⁵ Ա սի եւս] մի

⁶ Ա մեղանչեր

⁷ ԱԲ հասուցանեն

⁸ ԱԲ զթագաւորութիւն

⁹ ԱԲ մարթ

¹⁰ Բ վասն զի

¹¹ Բ զժամն

ոչ ախորժէին մխել ի տանջանս զանձինս իւրեանց, թէպէտ եւ առ ժամայն յանհոգս էին զՔրիստոս մաւտ ունելով, այլ վասն յետոյ ակն կալլեաց փորձութեանցն տագնապէին: Սմին վասն եւ ոչ յաղագս Հոգւոյն ինչ ասէին, եւ ոչ վասն կատարածի աւուրն հարցանէին, այլ թէ ի ժամանակի¹ աստ այժմիկ հասուցանելոց իցես զթագաւորութիւնն Իսրայէլի: Առ որ¹ վասն յոյժ սաստիկ բաղձանացն, ոչ ասացին, թէ ե² ըբ կամ յո³ ըժամ այս լինիցի, այլ յոյժ պատուով փութային զլինելն ասելով, թէ «Ա⁴ յժմիկ հաստատես զթագաւորութիւնն² Իսրայէլի»:

Ինձ թուի, թէ չգիտէին զինչ արդեւք իցէ թագաւորութիւնն³, զի չեւ էր Հոգին ուսուցեալ զնոսա, այլ դեռեւս առ զգալիսս էին յաւժարեալք: Զի թէպէտ Քրիստոս վասն արքայութեանն⁴ Աստուծոյ ճառէր նոցա յաւուրսն քառասուն, այլ նոքա զարքայութենէն Իսրայէլի հարցանէին, կարծելով թագաւորել նմա Իսրայէլի ըստ աւրինակին Դաւթի: Տինա՝ զի գիտէին զյոյժ հեզութիւն եւ զանոխակալութիւն նորա այնչափ, մինչ զի եւ յետ սպանանելոյն զնա ի նոցունց՝ վստահանան նմա այց առնելով թագաւորել Իսրայէլի: Զոր եւ փութան իսկ վասն եւ ինքեանց եւս ընդ նմա ի փառս եւ ի հանգիստ վայելելոյ, ըստ երբեմն հայցելոյ ի նմանէ որդւոցն⁵ Զերթեթեայ⁶:

Ասէ ցնոսա. Աչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր հայր եղ⁷ յի/Տա/ւրում իշխանութեան (Ա. 7):

Երեւին⁸ լաւագոյն⁹ գոլ այժմ աշակերտքն քան զառաջինն, վասն զի ահա մեծագոյն այժմ ունին կարծիս զնմանէ: Սմին վասն եւ ըստ վերաբերեալ մտաց նոցա յայտնապէս ընդ նոսա խաւսի. զի ոչ ասէ եւ այժմ, թէ եւ ոչ Որդի գիտէ զաւրն, այլ թէ «չէ ձեզ գիտել զժամս եւ զժամանակս»: Եւ դու տես, զի թէպէտ եւ նոքա ոչ քաջ¹⁰ գիտէին զոր

¹ Բ որս

² ԱԲ գթագաւորութիւն

³ Բ թագաւորութիւն

⁴ ԱԲ արքայութեան

⁵ ԱԲ որդւոյն

⁶ Ա Զեփեղայ, Բ Զերթեթայ] Զերթեթայ

⁷ Ա եղ

⁸ ԱԲ երեւին

⁹ ԱԲ լաւագոյնք

¹⁰ Ա քաջ] ոչ քաջ

հարցանէին¹ զթագաւորութիւնն Իսրայէլի, այլ նա ոչ միայն զայն, զոր ըստ կարծեաց մտաց իւրեանց հարցին, այլ եւ զբնաւ ժամանակաց խնդիրս ի բաց բառնայ յամենայն դարուց, բացարձակ դնելով, թէ «չէ ձեզ գիտել զժամս եւ² զժամանակս»:

Եփր. Եւ զայս այնքան³ պնդութեամբ, զի եւ զաւրս զայս վերանալոյ իւրոյ, զոր եւ աչաւք իւրեանց տեսին, ոչ կամեցաւ յայտնել նոցա:

Յոռ. Այլ հիացիր, զի վասն աւուր⁴ գալստեան Հոգւոյն, զոր ոչ հարցին, թէպէտ եւ ոչ ստուգիւ, սակայն թէ⁵ մերձ է՝ յայտ արար ի մխիթարութիւն եւ քաջալերութիւն նոցա. եւ վասն աւուրն, զոր հարցին⁶, ի բաց մերժեալ հեռացոյց: Ընդէ՞ր, միթէ մեծագո՞յն ինչ էր ուսումն աւուրն քան զոր ուսեալն էին: Ոչ: Այլ յոյժ տրուպք⁷ էին եւ վնասիչք, եւ մանաւանդ ուսեալքն եւ գիտացեալքն մեծագոյնք եւ առ հաւատալ դժուարինք: Զի ասա ինձ, հելլենացին վասն որո՞յ թերահաւատէ՝ թէ կատարած գոյ լինելոց, թէ Աստուած մարդ եղեալ եւ⁸ ի կուսէ ծնեալ, եւ թէ Աստուած որդի ունի աթոռակից անժամանակ: Զի՞նչ մեծ քան զմարմնոյ նստիլ եւ ի զուարթնոց երկրպագիլ: Եւ ապաքէն ուսան սոքա զայս ամենայն, եւ թէ գալոց է դատել զաշխարհս արդարութեամբ: Ուսան զոր ինչ նախ է քան զաշխարհս՝ որպէս յայտ առնէ Մովսէս եւ Պաւղոս, զոր ոչ է մարթ մարդոյ խաւսել: Միթէ չիցէ՞ մեծագոյն զսկիզբն գիտել զէիցս, զոր սոքա գիտացին՝ քան զկատարածն. այո եւ կարի իսկ քաջ. եւ եւս բիւրապատիկս քան զայս, զի ի բազում արուեստս երեւելով Յիսուս ուսոյց զնոսա, արդ զի՞նչ մեծ է զայսոսիկ ուսանելն, թէ զայն⁹ ոք թագաւորեսցէ կամ երբ:

Եւ զբարուրս ծածկելոյն զուզածայն դնէ եւ այժմ, որպէս յայնժամ առ առաջին հարցումն¹⁰ դիւրագոյն պատասխանի, թէ «Հայր եղ իր իշխանութիւն» (Ա. 7): Եւ ահա մի իշխանութիւն է քո եւ Հաւր, զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս, եւ Որդի, որ մեծ է քան զգիտելն

¹ ԱԲ գոր ինչ հարցիցն] գոր հարցանէից

² ԱԲ > զժամս եւ

³ Ա քան, Բ զայսքան] այնքան

⁴ Ա աւուրս

⁵ Բ > թէ

⁶ Ա հարցի, Բ հարց] հարցիցն

⁷ ԱԲ տրուպ

⁸ ԱԲ > եւ

⁹ Ա թէ ո] թէ զայն

¹⁰ ԱԲ հարցումն

զաւրն, արդ ընդէ՞ր ծածկես ի մէնջ: Այլ զի մի՛ այսպիսի ինչ ասիցեն, տե՛ս զինչ առնէ: Որպէս յայնժամ ի հարցանելն զկատարածէն հեռացոյց զնոսա ի կարծելոյն զերծանել ի վշտաց, եւ արկ զնոսա յահ եւ ի տագնապ, թէ «Եւ զձեզ իսկ մաքնեսցեն փանջել յաբնանս» (Մրկ. ԺԳ. 9), նմանապէս եւ այժմ, այլ յոյժ մեղմով եւ հանդարտագոյն, զի փոքր ինչ հետոյ մեկնելոց էր ի նոցանէ:

Եւ զի մի՛ կարծիցեն անարգիլ ի չլուծանելն զխնդիրն, կամ զարհուրեսցին ընդ գուշակել¹ վշտացն, չասաց զտրտմականսն յայտնի, թէ չարչարելոց են վասն նորա, այլ իմաստութեամբ իմն ծածկեաց: Եւ ոչ ըստ հարցմանն ետ զպատասխանին, որ է գործ վարդապետի, այլ զաւգտակարն առ ի գիտել, եւ զլինելոցն ի նոսա վշտաց՝ կանխեաց ասաց, զի մի՛ լ/ծբ/քանիցին ի պատահելն: Եւ զի դեռ տկարագոյնք էին, չասաց, թէ գնամ ես, զի մի՛ ցաւագնեսցին, այլ առ վայր մի քրքրեաց զմիտս նոցա խոստմամբ Հոգւոյն ասելով.

«Այլ առաջիք զարութիւն ի հասանել հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր» (Ա. 8):

Եւ ապա զսարսուելի զվտանգսն խաղաղէ, զոր կրելոց² էին, ախորժականս իմն ճառելով, թէ «Եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ եւ ամենայն³ հրէաստանի եւ ի Սամարիա⁴ եւ մինչև ի ծագս երկրի» (Ա. 8): Գրեթէ այսպէս ասիցէ⁵, թէ զմէ՞ր երկնչիք⁶ կամ ընդէ՞ր զժամանակս խնդրէք գիտել, որ ոչ չեն ինչ ձեզ յաւգուտ: Խնդացէք եւ⁷ ուրախ լերուք ընդ մեծամեծ պարգեւսն եւ փառսն, որ գալոց են ձեզ:

Եփր. «Զի առաջիք զարութիւն եւ քաջալերութիւն ի գալ հոգւոյն ի ձեզ», եւ ելջիք ի վերնատանէն, եւ լինիջիք յայտնիք տիեզերաց՝ վկայք յարութեան իմոյ, եւ որոց լուսայքն եւ տեսէք յինէն ոչ միայն յերուսաղէմ քաղաք խաչողացն, ուր զարհուրեալ իսկ էք, այլ եւ առ շամրտացիս⁸ եւ յամենայն ազգս:

Յոհ. Եւ վասն զի նախկին փակեաց ընդդէմ նոցա չմտանել նոցա առ շամրտացիս կամ առ հեթանոսս, համարձակէ նոցա այժմ, թէ

¹ Աբ գուշակելն

² Աբ կրելոցն

³ Աբ յամենայն

⁴ Աբ Սամարիայ

⁵ Աբ իցէ] ասիցէ

⁶ Ա երկնչիք

⁷ Բ > եւ

⁸ Ա շամարտացիս

«Մինչև ի ծագս երկրի» (Ա. 8): *Լուեալ¹ զայն, թէ չարաչարս տանջեսցեն եւ սպանցեն զձեզ, եւ զի մի՛ դարձեալ այլ ինչ հարցանիցեն. «Ձայս իրրևս ասաց՝ մինչդեռ հայլին նոքա, վերացաւ» (Ա. 9): Եւ յոյժ վայելչաբար. զի որպէս մեք տեսանելով զմանուկ լացեալ, որ ստէպ խնդրիցէ ինչ, որ ոչ է իւր յաւգուտ՝ թաքուցանեմք՝ ցուցանելով զձեռս դատարկ, ասեմք թէ ոչ ունիմք, այսպէս եւ նա զառաքեալսն արար: Խնդրէին ուսանել, զոր ոչ էր ի ճահ, թաքոյց² ասելով, թէ «Նայր եղ յիրում իշխանութեանս³» (Ա. 7): Այլ որպէս մանուկն տակաւին կականի լալով՝ գիտելով զի խաբեցաւ, եւ մեք այլ ինչ ընդ այնր, զոր խնդրէ՝ տամք, եւ հեռացուցանելով զնա յիւրն յաւժարութենէ գովեմք զայս ինչ-քան զայն, զոր ինքն խնդրէ, եւ տուեալ նմա զայն ի բաց փախչիմք ասելով՝ «Կոչէ զիս այս անուն», այսպէս արար եւ Քրիստոս, խոստացաւ նոցա ընդ անաւգուտ խնդրոյն բիւր⁴ ըղձալի պարգեւ զՀոգին Սուրբ:*

Եւ մինչդեռ հայլին նոքա՝ վերացաւ (Ա. 9):

Իսկ ընդէ՞ր ոչ տեսանելով նոցա յարեալ, այլ տեսանելով նոցա համբարձաւ: Վասն զի ոչ զաւրէ տեսութիւնս ամենայնի⁵: Սմին վասն զյարութեանն զկատարածն տեսին, իսկ զսկիզբն ոչ եւս, եւ համբառնալոյն զսկիզբնն, այլ ոչ զկատարածն: Այլ սկիզբն յարութեանն թէպէտ եւ ոչ տեսին, յայտնի լինէր յերեւմանէն Տեսուն կենդանի եւ ի բարբառոյն եւ ի թաբուր⁶ մնալոյ գերեզմանին, իսկ զկատարած վերանալոյն յետ այնորիկ ի բանից հրեշտակացն էր ուսանել, զի ոչ կարէին աչքս այս ձկտել⁷ ի բարձրութիւնսն՝ ուր ելն: Տեսանե՞ս, զի մասն ինչ հոգւով եւ մասն ինչ տեսութեամբ աչաց տնաւրիսնի: Սմին վասն եւ տեսանելով նոցա վերացաւ մինչ կարի յոյժ արթունք էին, միտ դնելով հարկաւոր ասացելոցն, զի մի՛ ասիցեն, թէ բնաւ իսկ չյարեաւ:

¹ Աբ լուեալ

² Աբ թագոյց

³ Աբ իշխանութիւն

⁴ Բ բելր

⁵ Բ այս ամենայնի] ամենայնի

⁶ Աբ թափուր

⁷ Աբ ձգտել

Եփր.¹ Այլ որպէս Եղիա տեսանելովն Եղիշէի վերացաւ², զի մի՛ ասիցեն, թէ Յեզաբէլ³ սպան զնա, զի եւ նշանքն, որ ի ձեռն Եղ/Թա/իշայի հաւատարիմ առնէ զվերանալ նորա, նոյնպէս⁴ նշանքն, որ ի ձեռն առաքելոցն՝ հաւատարիմ առնէ զվերանալն Տեառն, զի մի՛ ասիցեն, թէ գողացան զնա: «Եւ ամպն ծածկեաց զնա յաչաց նոցա» (Ա. 9): Յայտ է ներքոյ անցանելով, զի մի՛ կարի աշխատիցին⁵ առաքեալքն ի հայերն զհետ նորա:

Յոռ. Արդ, ոչ կառք հրեղէնք յափշտակեցին զնա որպէս զԵղիա, զի մի՛ թուրիցի⁶ յայլոց համբարձեալ որպէս զնա, այլ «ամպ», որ նշանակէ աստուածային զաւրութեանն⁷: Եւ զի այլ ինչ զաւրութիւն ի վերայ ամպոյ ոչ երեւի, լուր մարգարէիցն. «Եղ յամպս զգնացս իւր» (Սաղմ. 82. 4): Եւ Աստուած նստեալ յամպ թեթեւ, եւ Մովսէս յամպն⁸ եմուտ, որ չէր վասն նորա, այլ զԱստուած ցուցանէր: Սմին վասն ամպով վերանալն Յիսուսի ցուցանէ զնա Տէր եւ իշխան գոլ երկնից, զի նշանակ էր ամպն երկնից. զի որպէս զթագաւորն ձեռն եւ թագն⁹ յայտնէ, եւ զՅիսուս կառքն աստուածային:

Եւ զի մի՛ առ ճմլել սրտից իւրեանց ախտասցին աշակերտքն Յիսուսի զԵղիսէին՝ որ եհերձ¹⁰ զվերարկուն իւր: Մինչդեռ հայէին ընդ երկինս երթալոյ նորա հիացեալք, թէ որպիսի հրաշից արժանացան տեսեան, «Ահա արք երկու երեսեան նոցա» (Ա. 10), զի յերկուց վկայիցն հաստատուն լիցի ասացեալն ի նոցանէ: «Ի հանդերձս սպիտակս» (Ա. 10) որպէս առ ի գերեզմանին, եւ պայծառ ձեռն¹¹ ցուցանէր զնոսա, թէ հրեշտակք են. եւ մարդակերպ յանկարծակի երեւեցան, զի մի՛ զնոսա խռովեցուցեն: «Որք եւ ասացին. Արք գալիլեացիք¹², զի՞ կայր հայեցեալ ընդ երկինս» (Ա. 11): Ծանալթականս առնեն զբանն հայրենի գաւառին կոչմամբ, զի եւ¹³ յայլսն եւս հաւատարիմք երեւեսցին: Եւ ապա ախորժելիս եւ ողորականս առ նոսա բարբառին. «Ձի՞ կայր պշուցեալ

¹ Գ > Եփր.

² Ա վերաւ] վերացաւ

³ Բ յեզաբել

⁴ ԱԲ նոյնպէս եւ

⁵ ԱԲ աշխատեսցին

⁶ Ա թուես ի, Բ թուես ի] թուիցի

⁷ ԱԲ զօրութեան

⁸ Ա յամբն] յամպն

⁹ ԱԲ թագն

¹⁰ Ա էհերձ

¹¹ Բ ձեռն

¹² Ա գալիլեացիք] գալիլեացիք

¹³ Բ > զի եւ

ընդ յերկինս» (Ա. 11): *Ոչ թողացուցին զնոսա այնպէս ի վեր հայելով մնալ, այլ աւետեաց բանին զնոսա յինքեանս դարձուցին, եւ ցուցական ձեւով դնեն զասելն.* «Այս Յիսուս այնչափ¹ սքանչիցն հրաշագործաւոյ, որ վերացաւ ի ձեռք յերկինս, այնպէս եկեցեւ դարձեալ» (հմմտ. Ա. 11): *Ի միտ առ զասելն՝ «որ վերացաւ ի ձեռք յերկինս»: Միթէ չունէի՞ն աչս առաքեալքն, կամ չտեսանէի՞ն զվերանալն Յիսուսի, եւ զիա՞րդ ապա ասաց աւետարանիչս նախ՝ թէ տեսանելով նոցա վերացաւ Յիսուս: Այո, այդպէս է: Այլ վասն զի յոյժ մեծ էր բացատն քան ձգտումն² աչաց նոցա, զի մի՛ վասն ոչ եւս կարելոյն տեսանել զնա յանչափ բարձունսն՝ կարծիցեն, թէ մինչեւ յերկինս ել որպէս զԵղիա³, ոչ⁴ ծառայ էր, կամ թէ բնաւ իսկ ոչ վերացաւ յերկինս, որք եւ ի լսելն զերթալն՝ տարակուսեալ ասէին՝ «Տէր յո՞վ⁵ երթաս» (Յովհ. ԺԳ. 36), այլ զի գիտասցեն, թէ ի վերոյ⁶ ել քան զերկինս՝ զի Որդի էր, ասացին, թէ «վերացաւ ի ձեռք յերկինս»:*

Եւ ընդէ՞ր ինքն ոչ ուսոյց նոցա զայս, այլ հրեշտակքն: Ծառեաց զայս եւ ինքն նախ՝ թէ «Տեսանիցէք գորդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն» (Յովհ. Զ. 63): Այլ կամ ի միտ⁷ ոչ պահէին, կամ որպէս ի ծննդեանն⁸ հրեշտակք եղեն աւետաւորք առ Մարիամ, Յովսէփ, եւ առ հովիւսն, եւ ի յարութեանն⁹ առ խնկաբերան, լիցին եւ աստ, զի թէպէտ ի մարգարէիցն բազմադէմ մասամբք կանխաձայնեալ էին բնաւին իրքն Յիսուսի, այլ վասն յոյժ հաստատութեանն¹⁰ եւ հրեշտակք վկայէին: Սմին վասն եւ հանդերձ մարգարէիւքն եւ հրեշտո՛րք/ակաւք յարութեանն¹¹ եւ ինքն Քրիստոս եղեւ վկայ: Զի քան զամենայն ինչ եւ քան զծնունդն իսկ մեծ էր՝ զանձն իւր ի մեռելոց յարուցանելն, զի այն յերից վկայից հաստատեսցի:

Եւ ոչ ասացին, թէ այս Յիսուս, որ համբարձաւս ի ձեռք, զի համբարձաւն ըստ մարմնոյ իրաց է, որպէս Եգեկիէլ ասէ, թէ «Երթալի համբարձեալ ի դիմել Նոգոյն Տեառն, որ վերացոյց զիս» (Եգլ. Գ. 14): Սմին

¹ ԱԲ անչափ

² ԱԲ զծկտումն

³ ԱԲ զԵղիայ

⁴ Բ որ] ոչ

⁵ ԱԲ ո՞վ

⁶ ԱԲ վերոյ իսկ] ի վերոյ

⁷ ԱԲ ի մտի] ի միտ

⁸ Ա ծննդեանն

⁹ Բ յարութեան

¹⁰ Բ հաստատութեան

¹¹ Բ յարութեան

վասն ոչ ասացին համբարձաւ, այլ «վերացաւ»: Եւ թէ ասիցես, իսկ ընդէ՞ր ապա ասաց աւետարանիչս, թէ «ամպն յափշտակեաց զնա» (հմմտ. Ա. 9)՝ ասեմ, զի ինքն ել յամպն: Այլ թէպէտ սփոփեաց զնոսա ասելն, թէ «երկինս ել», այլ զի ինքեանք ոչ կարէին երթալ զհետ նորա, զի մի՛ անձկով սիրոյն ի սպառ տոչորեսցին, փոքր ինչ ոգի փչեցին այսու բանիւ, զոր յոյժ փափաքէին լսել, թէ «Սոյնպէս եկեսցէ դարձեալ» (Ա. 11): Իբրու ասել, թէ «յերկն¹», այսուհետեւ ակն կալէք զալոյ նորա: Եւ զտիրական պատիւն եւս նշանակեն, ոչ առաքեսցի ասելով, այլ «եկեսցէ»: «Չոր արինակ տեսք զնա երթեալ յերկինս» (Ա. 11): Այսինքն՝ թէ հանդերձ մարմնովն եկեսցէ եւ ամպով, թէպէտ եւ փառաւք իւրովք եւ Հաւր, զի այսու եւ զդատաստանէն² ակնարկեսցեն եւ զյարութիւնն³ ստուգեսցեն: Զի թէ մարմնովն համբարձաւ եւ նովաւ է զալոց, յայտ է զի ի դատել, ապա ուրեմն նովիմք⁴ մարմնովն եւ յարեալ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ, որ ոք ցաւագին է, զի ոչ ետես զնա, լսելով ահա, թէ «եկեսցէ դարձեալ», վարս սրբականս ցուցցէ, եւ հաւաստեալ տեսցէ զնա: Զի յոյժ մեծագոյն փառաւք եւ սքանչելի տեսեամբ յերկնից իջանէ: Այլ այս իսկ զյարութիւնն հաւատարիմ առնէ, զի թէ մարմնովն համբարձաւ՝ յոյժ մանաւանդ մարմնովն յարեալ: Ո՞ւր են, որ յաղագս յարութեանն թերահաւատ են ելլենացիքն⁵: Նա եւ արարչութեան արարածոցս ոչ հաւատան յոչէից առնել Աստուծոյ զգոյսս, յամալթ լինին՝ ոչ զիտելով զգաւրութիւնն Աստուծոյ, զի որ յիմարն է, յիմարագոյն խաւսեսցի: Ամաչեցէք զայդ ասելով, թէ «յէից առնէ Աստուած»: Զի թէ «յէից առնէ», ի՞նչ զանազանի ի մարդկանէ: Այլ ուստի՞ է, ասեն, չար, եթէ ոչէէ արար Աստուած զգոյս: Ասեմք թէ⁶ ոչ է չար յԱստուծոյ, թէպէտ եւ յոչէէ արար զգոյսս: Մի՛ զկրկնապատիկ չարիւք⁷ անկանիր, զի չար՝ ոչ է հուլիւն, այլ բարոյ⁸ յաւժարութեան պղերգութիւն:

¹ ԱԲ յերկնից

² ԱԲ զդատաստանեն

³ ԱԲ զյարութիւն

⁴ Բ նովիմք

⁵ Ա հեղլեմացիքն, Բ հելլեմացիքն] ելլեմացիքն

⁶ ԱԲ > ասեմք թէ

⁷ ԱԲ չարեօք

⁸ ԱԲ բարւոյ

[ԳԼՈՒԽ Գ.]

Յայնժամ դարձան յերուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց (Ա. 12):

Ե՞րբ, յորժամ լուան, թէ դարձեալ գալոց է: Ձի թերեւս ոչ յանձն առնոյին, թէ չէր նոցա միւսանգամ գալուստ նոցա խոստացեալ: «Որ է մերձ յերուսաղէմ ըստ շարաթոյն ճանապարհին» (Ա. 12): Ինձ թուի ըստ հրէիցն ի շաբաթու եղեալ իրացս, զի այլ եւ այլ շաբաթք պաշտեցեալ լինէր առ նոսա: Սմին վասն նշանակէ զմիջոցն ի լեռնէն ձիթենեաց, «որ է մերձ յերուսաղէմ ըստ շարաթոյն ճանապարհին»: Յայտ իմն կամի առնել, թէ չէր արէն հրէից երկար ճանապարհ դնալ ի շաբաթու, կամ զի ցուցցէ զառաքեալսն վասն երկիւղի հրէիցն դեռ եւս ոչ իշխեալ հեռագոյնս¹ մեկնել, կամ թէ լոկ յիշէ գտեղին, զի որպէս ասի բան՝ «ի ժամանակ անփի դարձին հրէից² ի Բարելուն³ վասն նեղելոյ ի շրջակայ ազգացն եղին վասն զգուշութեան այն/10ա/չափ ճանապարհ ելանել⁴ ըստ քաղաքն ի շարաթոյն, զի մի՛ դաւեսցեն ի շարաթոյն որպէս զմակարայեցիսն»:

Եւ յորժամ մտին յերուսաղէմ, որպէս առին պապուլը յերուսաղէմէ մի՛ մեկնել, ելին ի վերնապարտն՝ ուր վանքն իսկ էին (Ա. 13):

Ուրեմն յայտէ, զի յերուսաղէմ ագանէին յետ յարութեանն⁵, այլ զի ոչ համարձակէին շրջել, ելին ի վերնատունն, զի մի՛ ըմբռնեսցին: Բայց զի մի՛ ընդդէմ միմեանց թուիցին, աստ ասելն, թէ «ելին ի վերնապարտն», եւ յաւետարանին, թէ «էին հանապազ ի քաճարին⁶ կապարելով⁷» (Ղուկ. ԻԳ. 53), ի ժամ հանգստեան կամ կերակրոյ ի վերնատունն ելանէին:

Այլ ասիցէ՞ որք, թէ եւ ի տաճարին զիա՞րդ ոչ կասկածէին ի դաժան հրէից անտի: Ասեմ, թէ զի ոչ դեռ եւս ընդ հրեայսն ինչ որ⁸ վի-

¹ Աբ հեռագոյն

² Բ հրէիցն

³ Ա ի բաբիղոնէ, Բ ի բաբելոնէ] ի բաբելոնէ

⁴ Աբ արարեալ] ելանել

⁵ Աբ յարութեան

⁶ Աբ տաճարին + իմանալ պիտոյ է, զի զհանապազորդ աղօթսն ի տաճարին կատարելով

⁷ Բ > կատարելով

⁸ Աբ ինչ] ինչ որ

ճէին կամ զՔրիստոս քարոզէին, այլ մտեալ լռիկ միայն զազաւթան¹ վճարէին. «Պերոս իսկ եւ Յակովբոս, Յովհաննէս եւ Անդրեաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողոմէոս² եւ Մարթէոս³, Յակոբոս⁴ Ալփեայ եւ Շմաւոն նախանձայոյզ եւ Յուդա Յակոբեան⁵» (Ա. 13):

Արդ, Շմաւոն⁶ նախանձայոյզ՝ Մատթէոս եւ Մարկոս Սիմոն⁷ կանանացի ասեն: Թերեւս երբայեցերէն բառիւ նախանձայոյզ ասի, եւ⁸ ստուգի ի բազմաց, զի որդի է սա Յովսէփա⁹ աստուածաճաւերն եւ եղբայր Տեառն: Եւս եւ Յուդայ յակոբեանս¹⁰ եղբայր սորին Սիմոնի¹¹ եւ որդի Յովսէփո¹², որ եւ սա եղբայր Տեառն: Սա ինքն գրեաց զԹուխթն Կաթողիկեա¹³, որ յիւր անուն կոչի Թուղթ Յուդայի, որում յիսկզբանն խոնարհութեամբ փոխանակ եղբայր Տեառն զինքն ասելոյ, եղբայր Յակոբայ¹⁴ գրէ: Եւ յայտ է ահա, զի սա ինքն է նա, զոր Մատթէոս եւ Մարկոս Ղեբէոս եւ Թադէոս անուանեն, եւ ոչ թէ զայլ ոք նոքա եւ զայլ ոք Ղուկաս նշանակեն, այլ զմի եւ զնոյն անձնն այլ եւ այլ անուամբ կոչեն: Եւ չէ՛ զարմանք, զի յերբայեցիսն յաճախ գոյր երկանուն եւ բազմանուն: Ուստի եւ տարածայնութիւն ակետարանչացն ի Թադէոս եւ ի Յուդայ յակոբեան¹⁵ անուամբ միայն է եւ ոչ անձամբ¹⁶, զի յառաջնոց ընտրելոցն ի Քրիստոսէ ոչ ոք կորեալ բաց ի Յուդայէ մատնչէն¹⁷: Ստոյգ է ապա եւ միւս Թադէոսն, որ առ Աբգարաւ¹⁸ յեւթանասնիցն գոլ, զոր վկայեն եւ գերեզմանք նոցա. զի Թադէոս, որ ի¹⁹ յեւթանասնիցն, կատարեցաւ ի Հայս ի գաւա-

¹ ԱԲ գաղօթս

² ԱԲ բարդողովմէոս

³ Ա մաթէոս

⁴ Ա յակովբոս

⁵ ԱԲ յակովբեան

⁶ ԱԲ գշմաւոն

⁷ ԱԲ սիմոն

⁸ ԱԲ > եւ

⁹ ԱԲ Յովսէփայ

¹⁰ ԱԲ յակովբեանս

¹¹ ԱԲ Սիմովնի

¹² Ա յովսէփայ, Բ յովսէփո

¹³ ԱԲ զթուղթն կաթուղիկեայ

¹⁴ ԱԲ յակովբայ

¹⁵ ԱԲ յակովբեան

¹⁶ ԱԲ անձամբք

¹⁷ ԱԲ մատնչէն

¹⁸ ԱԲ Աբգար չոգաւ] Աբգարաւ

¹⁹ Բ > ի

ուին Արտագու. իսկ Յուդա յակորեան¹, այն որ ըստ Մատթէոսի եւ Մարկոսի Թադէոս յերկոտասանիցն, կայ ի յՈրմի Հայոց: Այսպէս ստուգի համաձայնութիւն աւետարանչացն յանուանս առաքելոցն:

Յոհ.² Զորս եւ Ղուկաս որպէս յաւետարանին՝ բարուք³ յիշէ եւ աստ զաշակերտսն Քրիստոսի, զի ոմն մատնեաց եւ միւսն ուրացաւ եւ այլք թերահաւատեցին, ցուցանէ աստ, թէ բաց ի միոյն ամենեքեան ողջ են: Այլ տես, զոր⁴ եւ ի կարգս դասու անուանց նոցա խրատէ զմեզ Հոգին ի սէր միաբանութեան, եւ սմին վասն երկու երկու լծակցէ զնոսա շողկապաւն. ո՞րգոն, Պետրոս եւ Յակովբոս: Եւ զի մի՛ վերջին մետասաներորդն՝ Յուդա յակորեանն⁵ անընկեր մնասցէ, խառնէ զնա ընդ երկուսն եւս, լաւ գիտելով զերկուսն եւ անխզելի⁶ զերիսն, զորս եւ հետագայս զայսոսիկ հաստատէ:

/10բ/ Սորա ամենեքեան էին, ասէ, հանապազորդեալք միաբան յաղաւթս (Ա. 14):

Յոհ. Տե՛ս զնոսա տքնեալս հանապազ յերկոսին՝ յաղաւթս եւ ի ժուժկալութիւն իբր միով հոգևով: Զի հանապազորդեալն⁷ զժուժկալելն ցուցանէ, իսկ աղաւթք⁸ մեծ զէն է ընդդէմ փորձութեանց: Սոքաւք այժմ վառին իբր նախկի խրատեալք չմտնել ի փորձութիւն, նա զի եւ⁹ երկիւղ հրէիցն ածէր զնոսա յայնոսիկ: «Նանդերձ կանամբք» (Ա. 14) ասէ: Յայտ է, թէ որք շրջէին ընդ Յիսուսի եւ պաշտէին զնա: «Եւ Մարնմաւ մարրն Յիսուսի եւ եղբարք նորա» (Ա. 14): Մայրն Յիսուսի առ խաչին սիրեցելոյ աշակերտին յանձնեցաւ ի Յիսուսէ, զոր եւ առ իւր իսկ առ աշակերտն¹⁰: Այլ աստ՝ ի միասին ժողովէ զմայրն Յիսուսի եւ զեղբարսն եւս ի սպասել Հոգւոյն, զի եւ եղբարքն երբեմն էին թերահաւատեալք, զի այժմ ցուցցէ զնոսա հաւատացեալս¹¹:

¹ Աբ յակովբեան

² Գ > յոհ.

³ Ա բարիոք

⁴ Աբ գի] զոր եւ

⁵ Աբ յակովբեանն

⁶ Բ նախզելի] անխզելի

⁷ Ա հանապազորդելն, Բ հանապազորդելն] հանապազորդեալն

⁸ Աբ աղօթքն

⁹ Աբ նա եւ գի] նա գի եւ

¹⁰ Աբ աշակերտսն

¹¹ Ա թերահաւատացեալս

Իսկ զՅովսէփ¹ ո՛չ այժմ յիշէ, զի վախճանեալ էր, զի որպէս թերահաւատ մնայր, որ նախ քան զամենեսեան ծանեալ զնա:

Յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պերրոս ի մէջ եղբարցն ասլ (Ա. 15):

Վայելչապէս. Պերրոս իբրեւ զնախապատուեալ ի Քրիստոսէ միշտ նախ սկսանի զբանն: Եւ այժմ իբրեւ զՋերմ սիրաւղ Քրիստոսի, յորմէ եւ զհաւտն իսկ յանձնեցաւ հովուել², զառաջի կայիցն հոգայ: Վասն զի ցնա իսկ ասաց Տէր. «Դու երբեմն դարձցիս եւ հաստատես³ զեղբարս քո» (Ղուկ. Իբ 32): Եւ ո՛չ ոք այժմ յայլոցն նախանձի ընդ սա որպէս երբեմն, այլ այժմ համամիտք են, զի չմնաց եւ ոչ մի ինչ առ նոսա կենցաղական: «Եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիր եւ քանից» (Ա. 15): Յայտ է, զի եւթանասուէքն⁴, եւ այլք ոմանք յաշակերտացն, յորոց եւ Յովսէփ եւ Մատթիաս, այլ եւ ի կանանց եւս յոլովք:

Արք եղբարք, ասէ, պարտ էր կապարել գրոյն (Ա. 16):

Վայելչապէս եղբարս ասէ: Զի թէ Տէրն եղբարս կոչեաց զնոսա, «Ասացէք, ասէ, եղբարցն իմոց» (Մարթ. ԻԸ. 10), յոյժ մանաւանդ սա զմիաբանեալսն հրեշտակական կարգաւորութեամբ, ուր ոչ արու եւ ոչ էգ, այլ ամենեքեան գաւտէպնդեալք ի ժուժկալութեան: Այսպէս եւ այժմ կամի Քրիստոս լինել զեկեղեցիս. զի ոչ ոք անդ յաղագս տան կամ գոյից զբաղէր: Այսչափ բարի են նեղութիւնք եւ փորձութիւնք, զի այն իսկ զնոսա ընտիրս գործէր, եւ սիրով ընդ միմիանս կապէր հարազատաբար, առ որս ասէ, թէ «Պարտ էր կապարել գրոյն, գոր յառաջ ասաց հոգին Սուրբ բերանովն Դաւթի վասն Յուդայի» (Ա. 16): Մխիթարէ զնոսա կանխասացութեամբ Հոգւոյն վասն անկմանն Յուդայի՝ որ ոչ փոքր տարակուսանս եթող բազմաց, եւ այժմ եւս, թող թէ յայնժամ: Սմին վասն որպէս Քրիստոս առնէր ի գրոց պատմելով, նմանապէս եւ սա, զի ցուցցէ, թէ չեղեւ ինչ նոր, այլ զի գիրն լցցի⁵,

¹ Ա Յովսէփ

² ԱԲ հովուել

³ Բ հաստատես

⁴ Ա եւթասանուէքն

⁵ ԱԲ լցցի

զոր ոչ Դաւիթ, այլ Հոգին Սուրբ ասաց բերանովն Դաւթի: Նա եւ ի ձեռն Դաւթի ասելն ոչ փոքր մխիթարութիւն բերէր լսողացն¹:

Վասն Յուդայի, ասէ, որ եղև առաջնորդ ունելեացն Յիսուսի (Ա. 16):

Եփր. Այսինքն՝ տարաւղ դահճացն ի պարտէզ անդր, ուր կալան գՅիսուս: Բայց զգոյշ լեր վասն կանխասացութեան Հոգւոյն: Զի ոչ եթէ զի ասաց Հոգին՝ արար Յուդա զայս, այլ զի ծածկելով ոչ /11ա/ ծածկեցաւ ի Հոգւոյն, զոր հանդերձեալ էր առնել Յուդա:

Յոհ. Բայց դու տե՛ս զհեղութիւն սորա, զի ոչ անարգելով ձաղեաց, եւ ոչ ասաց՝ պղծոյն եւ անամաւթ լրբին, այլ պարզաբար զրուցատրէ զեղեալսն. «Վասն Յուդայի» ասէ: Եւ ոչ ասէ՝ որ մատնեացն, այլ յայլս ճեպի փոխել զամբաստանութիւնն: «Առաջնորդ եղև ունելեացն», ասէ, սակայն վճարեալն ի նմանէ հարութիւնն ուժգնապէս շուրջ զնովաւ դնէ զվնասն առաջնորդ եղելոյն ասէ ըմբռնողացն գՅիսուս: Եւ ոչ յիշէ, զոր կանխաւ ասաց Քրիստոս բազում անգամ զնմանէ, եւ ոչ զայն, թէ յորում վայրի ասաց Դաւիթ վասն մատնելոյն զնա Յուդայի: Իբրեւ այն, թէ «Քերան մեղաւորի բացաւ ի վերայ իմ» (Մաղմ. ճԸ. 2), այլ լոկ զհատուցումն պատուհասին յիշէ ի մխիթարութիւն լսողացն, այսինքն՝ զհեղելովք² պատժաւքն Յուդայի, եւ զառաջիկայն հարկաւոր լինելոյ ցուցցէ: Յայտ է՝ զլրումն երկոտասան թուոյն, առ որ փութայ տանել զբանն:

Զի ի թիւս մեր էր, ասէ, ընդ մեզ (Ա. 17):

Եփր.³ Ո՞վ: Յայտ է, զի Յուդա: Եցոյց զՏեառն մարդասիրութիւնն⁴, որ ընտրեաց զնա՝ իբրու գիտէր զնա: «Ի թիւս մեր էր, ասէ, եւ հասնաւ էր նմա վիճակ պաշտամանս այս» (Ա. 17): «Վիճակ» կոչէ զառաքելութիւնն ցուցանելով, թէ յԱստուծոյ շնորհացն ունին զամենայն: Որպէս զղեւտացիսն յայնժամ իւր ինքեան բաժին խնդրեաց⁵ Աստուած, եւ ոչ ետ նոցա վիճակ ընդ ցեղսն Իսրայէլի:

¹ ԱԲ լսողացն

² ԱԲ զի եղելովք] զհեղելովք

³ Գ > Եփր.

⁴ ԱԲ մարդասիրութիւն

⁵ ԱԲ ընտրեաց] խնդրեաց

Եւ յամէ Պետրոս ի բանս, որ վասն մատնչին, զի վարձն իսկ մատնութեանն¹ եղեւ քարոզ պատուհասին: Զի թէպէտ առ կացոյց զնա Տէր մեր քսակակալ, այլ նա ժլատութեամբ գողութեանն իւրոյ ոչ յագեցաւ, այլ «Ստացաւ գեաղ ի վարձուց անիրաւութեան» (Ա. 18): Եւ ահա նա ոչ ստացաւ զգեղն, այլ եւ զարծաթն եւս զանիրաւ, զոր առ՝ ընկէց առ քահանայսն, եւ նոքա զնեցին զգեղն: Այլ յիրաւի նորա կոչի ազարակն, զի որոյ գինքն էին, նա իսկ իցէ տէր մեծի աւերակին: Ասէ ապա եւ զբատաստանն, զոր կրեաց: «Ուտուցեալ հերձաւ, ասէ², ընդ մէջ եւ հեղաւ ամենայն փոր նորա» (Ա. 18): Բարւոք ոչ զվնասն, այլ զպատուհասն ճառէ ի մխիթարութիւն զարհուրելոցն ի հրէիցն³: Այլ զի անկաւ ի վերայ երկրի եւ հերձաւ եւ վայթեցաւ փոր նորա, նման է այսպէս, զի զգուրսն փակեաց ընդդէմ իւր նախ քան զխեղդելն զանձն, եւ կաց մնաց ի կախաղանի անդ գուրբաթն եւ զշաբաթն, իբրեւ ուռեաւ եւ ծանրացաւ, հատաւ չուանն զորմէ կայր՝ անկաւ հերձաւ եւ վայթեցաւ: Բայց հոտ նեխոյ փարթին եւ փորոտւոյն ժողովէր զորդիսն Երուսաղէմի երթալ տեսանել զծանականս նորա եւ զնշանն սոսկալի՝ որ եղեւ նմա կարապետ գեհենի հրոյն:

Եւ այս յայտնի եղև, ասէ, ամենեցուն, որ բնակեալ են յերուսաղէմ, մինչեւ⁴ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամա, այսինքն՝ է գեղ արեան (Ա. 19):

Յոհ.⁵ Արդ, հրեայքն⁶ կոչեցին⁷ զանունս զայս: Ո՛չ զի զանիրաւ գործսն⁸ յայտնեսցեն, զոր արարին ինքեանք, այլ վասն զՅուդաս հրապարակելոյ: Այլ Պետրոս ի նոսա դարձուցանէ զանիրաւ գործն, որոյ եւ ինքեանք, թշնամիքն վկայեն ի ձեռն անուան գեղջն, |11բ| զի ասելն, թէ իւրեանց⁹ բարբառն՝ զայս իսկ յայտ առնէ:

Եւ դու տես, զի Աստուծոյ տնաւրէնութիւն էր յայտնել զանիրաւութիւն զմատնչին եւ զխաչողացն, զի իբրեւ զայս անիրաւութիւն ոչ ուրեք երբեք եղեւ: Սմին վասն, ոչ առժամայն պատահելոցն

¹ Բ մատնութեան

² Բ > աստ

³ ԱԲ ի հրէից

⁴ Բ մինչեւ

⁵ Գ > յոհ.

⁶ Ա հրեայքն

⁷ ԱԲ կոչեցին գեղջն] կոչեցին

⁸ ԱԲ գործն

⁹ ԱԲ յիւրեանց

միայն եղեւ յայտնի, այլ եւ ամենեցուն յետոյ, զի թէպէտ ինքեանք ծածկել զիրան փութային, հռչակեցին յաւէտ զձաղանսն, որպէս Կայիափայ յակամա մարգարէացաւ: Ուրեմն Աստուած հարկեաց զնոսա երբայեցերէն կոչել գեղջն Ակեղդամա՝ որ է գեղ արեան, զի զհանդերձեալ չարիսն յայտնէր՝ որ հասանելոց էր հրէիցն, զի ոռոգելոց էր Երուսաղէմ արեամբ խաչողացն:

Յուցանէ եւ զկանխասացութիւնն Քրիստոսի՝ մասամբ վճարեալ առ մատնիչն, թէ «Այ մարդոյն այնմիկ, լաւ էր թէ չէր ծնեալ» (Խմբ. Մարթ. ԻԶ. 24): Զոր ասելի էր առ հրեայսն, թէ ով դուք, եղուկ էք դուք, զի թէ առաջնորդն ձեր Յուդայ զայս կրեաց, յոյժ¹ առաւել դուք: Բայց ո՛չ ասաց ինչ յայսպիսեաց, այլ տեսեալ, թէ զոր գնեցին ի գերեզմանս աւտարաց, ի ճահ կոչի տեղին ակեղդամա յետ ելիցն ի գլուխ, այսինքն՝ աւերմամբն, զոր կրէ Երուսաղէմ ի տիտոսեանցն², վասն որոյ զնելով ապա զպատշաճ վճիռն ագարակին՝ ածէ ի մէջ գմարգարէն: «Գրեալ է, ասէ, ի գիրս Սաղմոսաց՝ այս է յաւրհանութիւնս³ Դաւթի. Եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ ի յարկս նորա ոչ որ բնակեսցէ» (Ա. 20): Զայս ասաց վասն քաղաքին եւ տանն: Վայելչապէս. զի զի՞նչ աւերակագոյն քան զգերեզման, այլ աւերումն տանն, յոր խեղդեցաւ մատնիչն, նախաքարոզ էր հրէից վերջնոյ աւերածին: Զի վեսպիանեանք եւ տիտոսեանք զնոսա սրով եւ սովով մաշեալ՝ լինէր քաղաքն ըստ հրէից վճռին գերեզման աւտարաց, այսինքն՝ պաշարողացն զինուորաց: Զի զնոսա ոչ թողուին գնել ի շիրիմս, այլ անթաղ տային ընկենուլ, վկայէ քեզ Յովսէպոս⁴ առ այս: Ապա զի մեծ իմն թուէր, որ առաջին կայր, այսինքն՝ լնուլ թուոյն, վկայութեամբ կնքէ. «Զկարգ նորա ասցէ այլ ոմն» (Ա. 20): Յայտ է, թէ զիշխանութիւն առաքելութեանն եւ խոստացեալ տեղի արքայութեանն:

Իբրեւ ասաց գմարգարէին, ապա եւ զիւրն եւս դնէ. «Արդ, պարտ է յարանցս եկելոց ընդ մեզ յամենայն ժամանակս» (Ա. 21): «Պարտ է» ասելն, թէ հարկ է նշանակէ, եւ զի այնպէս մեծ էր հարկն, զի եւ մարգարէն վկայէր լնոյ երկոտասան թուոյն, ընդէ՞ր ապա ոչ զՔրիստոս աղաչեաց կարգել զոք ի տեղին Յուդայի: Ասեմ՝ նախ զի այժմ Պետրոս լաւագոյն ոմն երեւի ի գոլ քան յայնժամ, զի յայնժամ առ այլ ինչ անպարապ էր: Երկրորդ՝ զի դեռ եւս ընդ նոսա իսկ էր Քրիստոս:

¹ Ա յոյժ առ

² ԱԲ ի տիտոսեանց

³ Ա յօրհնութիւնս

⁴ Բ յովսէպոս

Դարձեալ. զի եւ այս մեծ իմն նշանակ էր¹ ի մխիթարութիւն նոցա, զի որպէս յայնժամ մաւտ գոլով ընտրէր Քրիստոս, եւ այժմ ի հեռուստ: «Պարտ է, ասէ, յարանցս եկելոց ընդ մեզ վկայ լինել յարութեան նորա լինել» (հմմտ. Ա. 21): Տե՛ս զխնամոտ եւ զանփառասէր միտս նորա, զի վարդապետ ի Քրիստոսէ կարգեալ այլովքն, ոչ ասաց, թէ մեւք² շատասջիք, այլ հաւասարապատիւ սիրով եւ աննախանձ ըստ Մովսէսի ի լրումն թերի թուոյն փութայր: Եւ զի ճահ էր այս առաքինութեան նորա՝ յայտ է: Այլ զի յայնժամ ոչ պ/12ա/ատիւ էր աշտիճանն, այլ սպասաւորութիւն էր մեծին առ փոքունսն, սմին վասն ասելով, թէ պարտ է վկայ լինել միում ումեք, ոչ տայ թոյլ ընտրելոյն հպարտանալ իբր ի նեղութիւն կոչեցեալ, եւ ոչ այլոցն տրամել³: Այլ աւաղ, զի այժմ ոչ այսպէս, այլ սորին լինի հակառակն:

Տե՛ս դարձեալ Պետրոսի զառաքեալոյն եւ առ ժողովսն զխաղաղականութիւնն, զի ոչ իշխանաբար ինքն ընտրէր զայրն⁴, այլ ի կցորդութիւն ընտրութեանն⁵ առնն զբազմութիւնն⁶ առնոյր, եւ զայն վասն յոլով շահից: Նախ՝ զի ինքեան եւեթ ընտրել ոչ էր պարտ, զի մի՛ թուիցի շնորհ ընտրելոյն առնել: Երկրորդ՝ զի մի՛ առանց Հոգւոյն մասին թուիցին իրքն: Երրորդ՝ զի մի՛ մարտ վիճման ի ներքս ի նոսա մտցէ եւ այժմ որպէս յառաջն, ուստի յոլով չարիք յիշխանասիրութենէն լինին, յորմէ փախչել արժան է փութով: Չորրորդ՝ զի զայն, որ ընտրելոցն էր, պատկառելի ցուցցէ, եւ զի յայտ արար, թէ ընտրել պարտ է ի հարիւր եւ ի քսանիցն զմի ոք, եւ զայն հասարակաց կամաւք: Յայտնէ եւ զայն, թէ յորո՞ց պարտ է ընտրել:

Յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակս՝ յորս մուտք եւ ել առ մեզ Տէր Յիսուս (հմմտ. Ա. 21):

Յայտ է հաւա, զի ոչ երկոտասանքն եւեթ, այլ եւ բազումք հետեւէին նոցա ի սկզբանէ անտի մկրտելոյն Տեառն ի Յովհաննէ, որպէս այն, որ լուաւն ի Յովհաննէ վասն Յիսուսի եւ գնաց ընդ Անդրէի զհետ Յիսուսի: «Ի սոցունց, ասէ, ընդ⁷ մեզ շրջելոցս»: Ոչ ասաց ի հեզոց եւ ի խոնարհաց, զի մի՛ թուեսցի զայլսն անարգել, այլ ժամանա-

¹ Բ Աշան երեւի] Աշանակ եր

² Ա մեւք

³ Բ պատմիլ] տրտմել

⁴ ԱԲ զայր

⁵ Բ ընտրութեան

⁶ Բ զբազմութիւն

⁷ Բ յընդ

կաւն տայ զվճիռն: Ոչ բաց արձակ ասէ եկելոցս, եւ ոչ ի բաց առնուինչ ի ժամանակէն, այլ լիով «յամենայն ժամանակս», ասէ, շրջելոցս ընդ մեզ»: Տեսանե՞ս զսաստիկ փոյթ ճշմարտասիրութեանն. զի թէպէտ Հոգին կատարելոց էր զնոսա, ոչ այնու եւեթ, այլ եւ ականատես կամի գոլ զվկայն իրացն գործելոց: Հանապազ ասէ, «յորս մուր եւ ել առ մեզ Տէր Յիսուս»: Յուցանէ եւ զինքեանս բնակակիցս նորա լինել, եւ ոչ լոկ իբր միայն աշակերտք մաւտ պահեալք¹:

Եւ թէ ե՛րբ մուտ Տէր Յիսուս, «Սկսեալ ի մկրպորթննէն» (Ա. 22) եւ յառաջ, եւ ե՛րբ ել, «Յարն՝ յորում² վերացաւ³ ի մէնջ, վկայ յարութեան նորա լինել միում ի սոցանէ» (Ա. 22): Եւ ոչ⁴ այլոցն ասէ լինել, այլ յարութեանն եւեթ վկայ: Զի ոչ էր⁵ պարտ միայն նշանաց այնմ ժամանակին, որ նախ էր յարութեանն եւ որ յետոյ՝ լինել վկայ, այլ առաւել յարութեանն՝ որ չքնաղ էր քան զբնաւսն եւ զժուարին առ Հաւատալ: Տինա՛ զի այլքն յայտնիք էին, եւ յարութիւնն գաղտնի եւ սոցա միայն յայտնի: Սմին վասն Հաւատարմագունի առն պէտք էր, որ կարէր ասել, թէ «Նա, որ եկեր եւ արբ եւ խաչեցաւ, նա յարեաւ», զի ոչ ասէին, թէ հրեշտակք ասացին մեզ, այլ թէ մեք տեսաք: Եւ ուստի՞ զիտասցուք. ի սքանչելեացն, զոր գործեմք⁶ յանուն նորա:

Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւ Յուսարոս, եւ զՄարթաիաս (Ա. 23):

Ոչ ինքն Պետրոս զսոսա կացոյց, այլ ըստ նոցա միաբան կամացն, միայն պատմեաց, թէ ոչ յիւրմէ, այլ ի վերուստ մարգարէութեան էր իրքն: Եւ ոչ կացուցին բազումս, զի մի՛ մեծագոյն լիցի տրտմութիւնն, այլ եւ ոչ մի, զի վիճակաւ էր ընտրութիւնն: Եւ ընդէ՞ր մականուամբ զնէ զՅովսէփն, զի զատուսցէ ի հոմանուանց, զի եւ յոլովք հոմանունք⁷ էին ի նոսա, որպէս Յակոբոս⁸ ալփեանց եւ Զբեթեայ⁹, Սիմոնք եւ Յուդայք, կամ թէ բերանունութեամբ զառաքինութեամբ¹⁰ բարուցն ունի Բարսաբայն զնշանակ:

¹ Ա պատահեալք

² Աբ յօր որում] յօրն յորում

³ Աբ վերացաւն

⁴ Աբ > ոչ

⁵ Աբ է] էր

⁶ Բ գործեմ

⁷ Բ համանունք

⁸ Աբ յակովբոս

⁹ Աբ զեբեդեայ

¹⁰ Աբ զառաքինութեան

Եւ կացեալ միաբան յաղաւթս՝ ասեն. Դու, Տէ՛ր, սրբազէր յամենայնի, յայրնեա՛ր գմի որ ի սոցանէ երկուց (հմմտ. Ա. 24):

Բարևոք աղաւթելով Աստուծոյ տան զընտրութիւնն. զի յուրվակի ի մարդկանէ ընտրեալն՝ առ Աստուծոյ նուազ է: «Դու, Տէ՛ր, սրբազէր, ցո՛յց գմի որ»: Դու եւ ոչ մեք: Եւ ի դէպ ժամու «սրբազէր» կոչեն զԱստուած, զի այս իսկ է խտրոց ընտրութեան Աստուծոյ եւ մարդոյ. զի մարդ հայի յերեսս, եւ Աստուած ի սիրտս: Վասն որոյ «ցո՛յց, ասեն, գմի որ», վստահ էին միումն ի նոցունց անվրէպ լինել: Եւ չասացին, թէ ընտրեա, այլ «ցոյց» զընտրեալն, գիտէին կանխաւ ընտրեալմիում ի նոցանէ: «Անուլ գլխակ գպաշտամանս այտորիկ եւ գառաքելութեան» (Ա. 25): Զի է եւ այլ ինչ պաշտաւն հոգեւոր, թէպէտ եւ նուազ, այլ աստ զառաքելութեան¹ հայցեն առնուլ զաստիճան:

Յորմէ անկաւ Յուդաս գնալ ի փեղի իւր (Ա. 25):

Եփր. Ոչ յայն, որ լուսաւորն է, զոր խոստացաւ նմա Տէ՛ր, այլ ի խաւարինն:

Յոհ. Վայելչաբար յիշեն զնորա սխալականսն, ցուցեալ, թէ վկայ հայցեն. ոչ յաճախել խնդրեն զթիւն, այլ զթերին ընուլ: «Եւ երուն վիճակս նոցա, եւ ելանէր վիճակն Մաքարեայ» (Ա. 26): Եւ ընդէ՞ր վիճակաւ, զի չեւ էր Հոգի: Եւ զի գանձինս անարժան վարկանէին ի ձեռն նշանի յայտնել: Եւ զի առ Յեսուաւ պաշտեցան իրքս այս: Եւ այլազգ. թէ ուր ոչ խնդրուածք եւ ոչ արք² արժանաւորք, եւ վիճակն այնպէս զաւրացաւ առ Յունանու³ զի յուղիղ մտաց էր, բազում առաւել աստ վիճակ՝ որով ցուցանէր զարժանն⁴: Դիոն. Քանզի թուի ինձ «վիճակն» ասացեալ՝ աստուածային իմն պարգեւ յայտնէ սրբազանի դասուն այնորիկ յաստուածայնոցն ընտրութենէ ցուցեալ: Ուստի եւ զառ ի յաստուածայնոյն վիճակէ աստուածայնաբար յայտնեալն ի սրբոց երկոտասանից առաքելականն թիւ ընկալան, զի թուեցաւ ասէ ընդ մետասան առաքելսն՝ երկոտասան:

Յոհ. Այլ ընկերն ոչ ցաւագնէր: Եւ ուստի՞ է յայտ: Յայնմանէ, զի ոչ թաքուցանեն⁵ ուրեք⁶ առաքելալքն զիւրեանց նուազութիւնն, եւ

¹ ԱԲ > զի է եւ այլ ինչ պաշտաւն հոգեւոր, թէպէտ եւ նուազ, այլ աստ գառաքելութեան

² ԱԲ > արք

³ ԱԲ > յովնանու

⁴ ԱԲ զարժանն + եւ կատարէր զդասն

⁵ ԱԲ թագուցանեն

⁶ Ա ուրեք

մանաւանդ զի եւ վասն զլխաւորացն ասեն զայլսն խռովեալս, եւ ոչ մի անգամ, այլ բազում. եւ վասն այնր մեղադրեալս ի Քրիստոսէ, հեթանոսական ասելով զփառասիրութիւն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ընդ որս եւ մեզ արժան է փախչել ի պատուասիրութեանց՝ հայելով զծանրութիւն գործոյն, զոր պարտի ուղղել եպիսկոպոսն, եւ զճշդապահանջ համարն ի մեծ ատենին Քրիստոսի, ըստ որում սպառնայ Եզեկիէլիւ տարամիտ հովւաց¹: Այլ վասն այսորիկ փութալի եղեւ բազմաց եպիսկոպոսութիւն, զի ի հանգիստ եւ ի փառս անձանց դիմեն եւ ոչ ի պաշտան² եւ ի սպասաւորութիւն բազմաց: Զի եթէ զմտաւ ածէր, թէ վերակացու պարտ է լինել, եւ զամենեցուն³ պատասխանատուութիւն ստանձնել⁴, եւ թէ դժնդակս⁵ պահանջելոց է պղերգա/13ա/նալով, իբրու զի ռամիկն ներելի է մեղուցեալ, այլ նա ոչ եւս, ոչ արդեւ⁶ փութացեալ լինէր յայս ինչ:



¹ ԱԲ հովուաց

² Ա պաշտան

³ ԱԲ զամենեցունց

⁴ Բ ստանձնեալ

⁵ Ա դժնդակս

⁶ Ա արդեւք

[ԳԼՈՒԽ Դ.]

Եւ ի կապարել աւուրցն պենպակոստից էին ամենեքեան միաբան ի միասին (Բ. 1):

Պենտակոստէն¹ ըստ յունաց յիսներակ ասի: Եւ էր սա ի մեծ եւ ի նշանաւոր տաւնիցն հրէից. յետ եւթն եւթներորդաց աւուրց զկնի զատկին ի յիսներորդն կարգեալ, եւ նոյն ինքն սկիզբն հնձոց: Յորում աւուր եւ տեսչութիւն աւրինացն ի Սինա: Նա եւ ամն իսկ յիսներորդ յայնժամ էր առ Իսրայէլ պատուեալ, թողութեամբ պարտոց եւ անդրէն դարձութեամբ հայրենեաց:

Լամբ. Աստանաւր առ միմեանս հաւաքեալ յիսներեակքս, որ ըստ ամացն եւ ըստ աւուրց, զի մեծասցին առ մեզ հաւէտ շնորհքն աստուածային, ընդ գրոյն Հոգին եւ ընդ հայրենեացն այսրէն դառնալոյ ի մեզ դրախտն²:

Յոհ. Եւ ոչ սոքիմք միայն հաղորդի աւրինակն ընդ ճշմարտութիւնս³, այլ եւ այնու՝ զի յորժամ սկիզբն էր հնձոց, զի արկցի մանկաղն⁴ յոճն եւ հաւաքեսցի պտուղն, յայնժամ փոխանակ մանգաղոյ Հոգին Սուրբ զլեզուս սրեալ զառաքելոցն, որովք⁵ թեւակոխեալ⁶ զբանաւոր խրճուսն հաւաքէր, զայնս՝ զորմէ եւ Քրիստոս ասէր, թէ «Նունձք բազում են եւ արքարեայք⁷ սպիտակացեալք» (հմմտ. Մտթ. Թ. 37), յորում ինքն իսկ Քրիստոս եարկ⁸ նախ զմանգաղ բանին, եւ զառաջին պտուղ հաւատոցն ժողովեաց, որոց հնձոց սերմն էր քարոզութիւն բանին իւրոյ: Արդ, «Յելս պենպակոստիւն⁹ էին, ասէ, ամենեքեան միաբան ի միասին» (Բ. 1), ըստ պատուիրելոյն Տեառն մի՛ ելանել յԵրուսաղէմ¹⁰: Եւ յորում աւուր տաւնն մեծ էր ըստ աւրինացն, որոյ հարկի սակս յԵրուսաղէմ ժողովեալ լինել պարտ էր պատահելոցն անդ յաւուր խաչին Քրիստոսի, զի տեսաւզքն անարգանաց նորա տեսցեն ի փառս նորա եւ զայս: Զո՞րս:

¹ Բ պենտակոստեն

² ԱԲ դրախտ

³ ԱԲ ճշմարտութեանս

⁴ ԱԲ մանգաղն

⁵ Ա թէ որովք

⁶ Ա թեւակոխեալ

⁷ ԱԲ արտօրայք

⁸ ԱԲ էարկ

⁹ ԱԲ պենտակոստիւն

¹⁰ ԱԲ յԵրուսաղէմ

«Զի եղև յանկարծակի հնչումն յերկնից եկեալ իրրև սաստիկ հողմոյ» (Բ. 2):

Եփր. Ձայն սաստիկ հողմոյ եղև ի տան անդ, ուր ժողովեալ էին աշակերտքն Յիսուսի, եւ հոտ անոյշ զի բուրէր ի սաստիկութենէ հողմոյն եւ գտունն ամենայն ընոյր:

Յոհ.¹ Եւ ընդէ՞ր ոչ առանց զգալի աւրինակի լինէր գալուստ Հոգւոյն: Ասեմ, թէ վասն հրէիցն. զի թէ յետ այսքան հաւաստութեանս քաղցուալիցս զնոսա զրաբանէին, եթէ ոչ այսպէս լինէր՝ զի՞նչ ոչ յանդգնէին ասել: Եւ ոչ բաց արձակ էր_հնչումն, այլ յերկնից, ուր Տէրն² չոգաւ, անտի դիմեալ գա եւ³ Հոգին, զի Աստուած է, որ ոչ ի կողմանէ, այլ ի վերուստ երեւի, որոտալով յերկնից եւ ի բարձանց տալով զձայն զաւրութեան իւրոյ: «Եկեալ իրրև զհողմ սաստիկ»: «Եկեալ» ասէ ինքնիշխանաբար՝ զաստուածութիւն հոգւոյն յայտնելով: Իսկ այն, թէ «իրրև հողմն սաստիկ» վայելչապէս. փշրել իբրեւ զՅունանուն⁴ ի Թարշիշ զնաւն փախչողացն յԱստուծոյ, եւ ցուցանել, թէ ոչ ինչ կարէ յաղթել ընդունողացն զնա, այլ իբրեւ⁵ ի հողմոյ հակառակորդք նոցին ցնդեսցին:

Եւ ելից գամենայն փունն, յորում նստէին (Բ. 2):

Եփր. Նիւս. Եւ զիա՞րդ հողմն ընոյր գտունն: Յայտ է՝ անոյշ հոտով եւ պայծառ լուսով:

Յոհ. Եւ յոյժ բազում էր հեղումն Հոգւոյն, զի պատահեալքն մաւտ հաւատասցեն եւ արժանասցին նմա, զի իբրեւ զաւազան ինչ ջրոյ ելից գտունն՝ մկրտել/13բ/ով, զորս ի ներքս էին: Նա զի եւ աշխարհի էր աւրինակ տունն, զոր ելից Հոգին իբրեւ զջուրս բազումս: Այլ զի եւ⁶ աւրինադրեսցէ մարմնոյս տան մաքրիլ, նախ բարձրագոյն վարուք, խորհրդով վերնատանն զարդարեցելում՝ յորում եկն Աստուած, եւ ապա Հոգւոյն ընոյր զհոգիս: Ընդ նոսին նկարէ եւ զպատիւ եկեղեցւոյ, յորոյ⁷ ի ջուրս աւազանին նախ իջմամբ Հոգին ծնանի մկրտեալսն շնորհաւք իւրովք Որդիս Աստուծոյ, որով աղա-

¹ ԱԲ > յոհ.

² Բ տէր

³ ԱԲ գայ] գա եւ

⁴ ԱԲ գյովնանուն

⁵ Ա իրրև փոշի

⁶ Բ ~ եւ զի

⁷ Ա յորոց

դակեմք՝ «Նայր մեր, որ յերկինս» (Մտթ. 9): *Դնէ ապա եւ զահագին¹ աւրինակն:*

Եւ երևեցան նոցա, *ասէ, լեզուք՝ զի բաժանէին իրրև հուր²* (հմմտ. Բ. 3):

Նիւս. *Ի միտ առ զկարգ եղելոցն: Նախ ի լսելիս նոցա Հոգին Սուրբ Հնչեաց ձայն ահեղ որոտման իբրեւ զհողմ սաստիկ շնչեալ, ապա եւ աչաց նոցա եղեւ տեսեալ Հոգին ի ձայն հրեղէն լեզւաց³ տալաւորեալ:*

Ածար. *Եւ վասն է՞ր ի ձեւ հրեղէն⁴ լեզուաց: Զի առ բանն ընտիր եւ անսայթաք սրեսցէ⁵ զլեզուս նոցա:*

Յոհ. *Իսկ զի բաժանեալ երեւէին⁶ լեզուքն իբրեւ գոստս ծառոյ, զի ի միոյ արմատոյ էին ի Հոգւոյն Սրբոյ, որ բաժանէ եւ տայ շնորհս, յորժամ եւ որչափ եւ որպէս կամի: Իսկ զի «իրրև զհուր»: Բարևոք զիրբեւն դնէ առ հողմովն եւ առ հրովս, զի մի՛ զՀոգին զգալի հողմ կամ հուր լոկ կարծիցես: Սմին վասն եւ ի գանազան կերպս երեւի, զի ոչ հողմ եւ հոտ եւ լոյս եւեթ, այլ եւ լեզուս երեւեալս տեսանին⁷, եւ այնք իբրեւ զհուր, զի բազում դէմս ակնարկեսցէ հրովն:*

Եւ նախ, թէ ընդէ՞ր աստ ի տեսակ հրոյ եւ ի Յորդանան ի կերպարանս աղանոյ⁸ երեւէր Հոգին: Ասեմ, զի անդ զհեզութիւնն Քրիստոսի եւ զիւրն եւս յայտ առնիցէ, զի⁹ ուր զմեղս թողուլ պէտք եւ ժամանակ է, հեզութիւնն¹⁰ յառաջեսցէ: Իսկ աստ «հուր»:

Յոհ. աստժր. *Զի յետ ընդունելոյ ումեք զպարգեւս, ապա եւ դատաստանք պահեալ կան: Եւ հուր երկայն եւ տաժանելի տանջող զոչ հաւանեալսն, ըստ որում ասաց Յովհաննէս զՔրիստոսէ. «Նա մկրտեսցէ զձեզ նախ հոգով Սրբով աստ՝ եւ ապա հրով՝ անդ» (հմմտ. Ղուկ. 9. 16): Երկրորդ՝ զի որպէս հողմն¹¹ ուժգնութեան¹² ցոյցք, այսպէս եւ հուրն՝*

¹ ԱԲ զհոգին] զահագին

² Բ զհուր

³ ԱԲ լեզուաց

⁴ ԱԲ > հրեղէն

⁵ ԱԲ սիրեսցէ] սրեսցէ

⁶ ԱԲ երեւին

⁷ ԱԲ տեսանէին

⁸ Բ աղանուոյ

⁹ Ա զի զի

¹⁰ ԱԲ հեզութիւն

¹¹ ԱԲ հողմն

¹² ԱԲ ուժգնութեան է

առատութեան: Զի ծանիրցուք զճոխութիւն ընդունողաց այսր հրոյ¹, ճրագս որչափ կամիս վառեալ լինի, այսպէս աղբեր Հոգւոյ առնոյր իւրաքանչիւր ոք ի նոցունց, որպէս Քրիստոս աղբեր ջրոյ կենաց ունէր: Իսկ առ մարգարէսն ոչ այսպէս առատ, այլ Եղեկիէլ մատեան գրոյ յուտել առնոյր, եւ Երեմիաս ձեռն Աստուծոյ ձգեալ, Եղիսէոս մորթով առնոյր զչնորհս² եւ Դաւիթ իւղով, զի դեռ եւս աւրինակաց կարաւտէին նոքա: Այլ աստ՝ Հոգին ինքն բնակցաբար ի նոսա լինի, ըստ որում ասաց Քրիստոս, թէ «Ի ձեզ րնակեսցէ» (Յովհ. ԺԳ. 16, Ա. Թ. Յովհ. Ա. 24): Եւ թէպէտ Մովսէսի հրով երեւիւր Աստուած, այլ ոչ եւ աստ ի մորենևոջ բոցն³ վառի, այլ ինքն իսկ ի նոսա հուր⁴ նստի: Երրորդ՝ եւ զի ձուլէսցէ⁵ զնոսա եւ մաքրեսցէ որպէս զոսկի: Չորրորդ՝ եւ զի թրծեալ եւ հրագինեալ զնոսա իբրեւ զանաւթս կաւեղէնս՝ ամուրս եւ անբեկանելիս սերտեալ պնդեսցէ: Հինգերորդ՝ եւ զի ջեռուսցէ նոքաւք զսառուցեալսն եռեալ ի բարիս հոգւով: Վեցերորդ՝ եւ զի ծախեսցէ նոքաւք զչարիս յաշխարհէ որպէս շանթ հրոյ զեղէգն⁶: Եւ վայելչապէս առատանայր յանձինս առ/14ա/աքելոցն, զի սոքա ոչ իբրեւ⁷ զմարգարէսն առ մի ազգ, եւ այն առ իւրեանցսն⁸ առաքեալ լինէին, այլ մանաւանդ առ հանուրս եւ անձանաւթս. ոչ մրցել ընդ Փարաւոն⁹ կամ սպառնալ Յեզաբելի¹⁰, այլ ընդ դաժան եւ չար դիւին տալ պատերազմ: Սակս որոյ եւ յառաքիլն, ոչ մանուկ կամ ծանրախաւս, զինքեանս գոլ փաստաբանէին, այլ իսկոյն պատրաստաբար ընթանային: Բայց թէ ընդէ¹⁰ր ոչ հրով լնոյր Հոգին գտունն, զի ոչ եկն զարհուրեցողցանել որպէս զժոյլս եւ զարբեցեալս, այլ մխիթարել իբրեւ զգաստս եւ հսկեցողս¹¹:

Եւ նստալ իւրաքանչիւր ի վերայ նոցա (Բ. 3):

Եփր. Այսինքն լեզուքն երեւեալք նստան ի վերայ միոյ միոյ ի նոցանէ: Յայտ է, զի իւրաքանչիւրքն նստան յանցն իւրան, բոլո-

¹ ԱԲ + գառաքելոցն ասեմ, զի որպէս ի հրոյ՝ ճրագ

² ԱԲ շնորիս

³ ԱԲ մորենևոջն բոց

⁴ Բ հուրն

⁵ ԱԲ ձուլեցէ

⁶ Բ զեղեգն

⁷ Բ իբր

⁸ ԱԲ իւրեանս

⁹ ԱԲ փարաւովն

¹⁰ Ա յեզաբելի

¹¹ ԱԲ զհսկողս

րեքեան մասունքն առ մի մի ի նոսա վերանստեալ¹, սակա որոյ եւ վասն նոյնութեան բնութեանն² զբոլոր մասունսն ի մի ժողովելով եգականապէս ասէ, թէ «նստա իւրաքանչիւրսն»:

Յոռ. Իսկ նստելն զարքունական պատիւն եւ զմիշտ ի նոսա լինելն յայտնէ զՀոգւոյն, զի նստելն Հաստատուն գոլոյ է նշանակ եւ կալոյ եւ մնալոյ: Ի վերայ երկոտասանիցն միա³ յն արդեւք նստաւ: Ոչ, այլ ի վերայ Հարիւր եւ քսանիցն: Զի թէ ի նոսա եւեթ նստիւր, ոչ ածէր Պետրոս վկայ ի մէջ զմարգարէն, թէ «Ասաց Աստուած. Նղից յՈգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ» (Բ. 17): «Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով» (Բ. 4): Նա եւ ոչ զայս թերեւս ասէր Ղուկաս միահամուռ, թէ «լցան ամենեքեան», թէ եւ ոչ⁴ այլքն առին զՀոգին, այլ որոշէր յատուկ գերկոտասանսն որպէս վերոյ: Զի թէ ուր լոկ մէրձ էին եւ այլքն՝ եւ⁴ առանձինն յիշեաց զառաքեալսն, ո՞րչափ առաւել եւ⁵ աստ առնէր զնոյն: Եւ զի ասէ. «Լցան ամենեքեան Հոգւով Սրբով», այս է, ոչ մասնաւոր առին զչնորհս, այլ բոլորքն բոլորիւ լցեալ եղեն: Եւ տես, զի ոչ եւս տարակուսին առ ընտրելն գեւթանսն որպէս առ Մատաթեաւ:

Այլ տես, զի առ ժրացեալսն յաղաւթս եւ առ սրբեալսն յախտից ժամանէ Հոգին, որպէս առ մարգարէսն՝ որք աւտարացան յաշխարհէ, որպէս Մովսէս յարքունեացն, Դաւիթ յետ յաղթութեանն ճեպեալ ի Հովականն⁶, Եղիսէոս զամենայն թողեալ, եւ յայնժամ առին զՀոգին: Սոյնպէս եւ սոքա զբոլոր զինքեանց զաշխարհիս թողին, եւ ապա լցան Հոգւով զեր քան զմարգարէսն: Զի ահա մեծն ի նոսա Մովսէս նուազէր առնէլ զձերսն Հոգեկիրս, իսկ նոքա տային զՀոգին ձեռս զնելով առատութեամբ:

Եւ սկսան խաւսել յայլ եւ այլ⁷ լեզուս, որպէս եւ Հոգին փայր բարբառել նոցա (Բ. 4):

Յառնուլն զՀոգին՝ առաջին զայս ցուցին նշանս, զի յայլ եւ յայլ լեզուս խաւսին, ոչ թէ զի մեծ էր այս քան զամենայն նշանս, այլ զի նոր էր եւ անծանալթ, զի զարմասցին լսաւղքն:

Նա եւ առժամայն չէին պէտք այլոյ նշանի Հոգակելի առնել

¹ ԱԲ վերայնստեալ

² Ա > բնութեանն

³ ԱԲ ~ ոչ եւ

⁴ ԱԲ > եւ

⁵ Բ եւս] եւ

⁶ ԱԲ հովականն

⁷ ԱԲ > եւ այլ

զեղեալան: Թող զայն, զի առաջի կայր նոցա աշակերտել զագգսս եւ զլեզուս. ի սկզբանս ճոխացան լեզուաւք, զի խիզախեալ համարձակեսցին առ քարոզութիւնն: Զի զբաժանեալսն յաշտարակէն եւ ի բազմաստուածութիւն ցրուեալսն /14բ/ ի մի աստուածապաշտութիւն ժողովեսցեն սիրով: Եւ որպէս անդ՝ մի լեզուն ի բազումս եղեւ բաժանեալ, նոյնպէս եւ աստ՝ բազում լեզուքն ի մի մի մարդ եղեւ ժողովեալ, զի մի եւ նոյն Հոգւոյն գործ էր եւ աստ եւ անդ: Սմին վասն խաւսէին յայլ եւ այլ լեզուս: «Որպէս եւ Հոգին փայր բարբառել նոցա» (Բ. 4): Զի՞նչ կամի բարբառելն մեզ նշանակել, եթէ ոչ զայս՝ զի ոչ էր պարտ միայն յինքեանս ի խորհրդոջ՝ խաւսել, այլ յառաջբերական բանիւ յայտնի ի բաց բարբառել:

Եւ էին բնակեալ յերուսաղէմ հրեայք արք երկիւղածք յամենայն ազգաց (Բ. 5):

Ուրեմն յերուսաղէմ բնակե՞լն երկիւղի Աստուծոյ էր նշանակ: Այո եւ կարի իսկ քաջ: Զի յայնչափ² ազգաց զտոհմս եւ զհայրենիս թողեալ՝ անդ բնակէին, կամ զի էին նոքա հեթանոսք ընդ հրէական կարգաւք³ մտեալք, կամ մանաւանդ հրեայ ի գերութենէն Անտիոքու դարձեալք, եւ զի պարտ էր նոցա ըստ աւրինացն երիցս ի տարւոջ երեւել ի տաճարին, զի մի՛ յոյժ նեղիցին⁴ յաճախ անդր երթալովն, անդէն իսկ բնակէին յերուսաղէմ:

Եփր. «Իրրել եղև բարբառս այս, եկն միարան բազմութիւնն եւ խոնկցաւ»: Զայնն, որ զայր յերկնից լսելի եղեւ ամենայն քաղաքացեացն, եւ հոտն, որ ի բռնութենէ անտի հողմոյն բուրէր, զբազումս ժողովեաց ած անդր⁵. այս է բարբառն, որ եղեւ:

Լամբ. Իսկ կիսոց թուեցաւ զլինել բարբառոյս ի վերայ այլատարագ խաւսից առաքելոցն առնուլ, եւ երկոքեան իսկ են ի դէպ:

Յոհ. «Եկն միարան բազմութիւնն եւ խմբեցաւ»: Զի ի վերնատանն եղեւ բարբառն՝ ուր էջ Հոգին, յիրաւի արտաքուստ⁶ հոսեալ բազմութիւնն անդր ժողովէին: Զի բազումք ի նոցունց իբրեւ զերկիւղածս

¹ Բ խորհրդուոջ

² Ա այնչափ

³ Ա կարօք, Բ կարօս] կարգոք

⁴ Ա նեղեսցին

⁵ Ա անտր

⁶ Բ յարտաքուստ

կասկածէին եկեալ հասեալ ի վերայ նոցա զպատուհասն սպառնացեալ վասն յանդգնութեանն¹, որ ի Քրիստոս:

Եփր.² Սոքին իսկ այսոքիկ, զորս շարժեաց բարբառն ահագին եւ ած ժողովեաց հոտն անուշուութեան³, իբրեւ տեսին զգալիլացիսն⁴, զի խաւսէին յամենայն լեզուս՝ զարմացան, ըստ որում ասէ. «Զի լսէին յիրաքանչիւր լեզուս խաւսել նոցա» (Բ. 6): Այլ մի՛ ոք կարծիցէ առաքելոցն ի բարբառն⁵ հայրենի խաւսել, եւ լսողացն յիւրաքանչիւր լեզուս լսել:

Ածար. Զի այսպէս իմանալ՝ պարսիցն եւ պարթեւաց զայ սքանչելագործելն, այլ մանաւանդ յայլ եւ յայլ խաւսէին լեզուս: Զոր յընթեռնուէն՝ ստորակիտաւ պարտ է կտրել զլսէինն. եւ ապա երկար առողանութեամբ առնել մեծավերջ⁶ զիւրաքանչիւրն, եւ խառնել սղիւ ընդ լեզուս խաւսել նոցա, այսպէս ընթեռնելով, զի լսէին, յիւրաքանչիւր լեզուս խաւսել նոցա, զի ուղիղ տացէ զիմաստն, որպէս զի իցէ սքանչելագործելն ոչ լսողացն, այլ խաւսողացն առաքելոցն⁷: Եւ տե՛ս ահա:

Սքանչանային, ասէ, ամենեքեան զարմացեալք (Բ. 7):

Յոհ.⁸ Յիրաւի, զի նոր եւ չքնաղ էին սքանչելիքն, վաղվաղակի յառաքեալսն հայէին եւ ասէին ցմիմիանս. «Ո՛հ ապաքէն սորա, որ խաւսինս՝ գալիլացիք⁹ են, աղքատք եւ շինականք: Եւ գիա՛րդ լսեմք յիրաքանչիւր բարբառս մեր, յորս ծնեալք ենք, պարթեւքս եւ մարքս եւ ելիմացիքս¹⁰, հրեայքս եւ եկքս կրեպացիքս եւ արարացիք, լսեմք խաւսել¹¹ դոցա ի մեր լեզուս գմն/15ա/ծաւնեմս Աստուծոյ» (հմմտ. Բ. 7-11):

Յոհ. Տե՛ս արդ՝ յելիցն արեւու մինչեւ ի մուտս այն ինչ զնոսա հասեալս, զի յամենայն կողմանց աշխարհի անդր ժողովեալք էին, եւ այս զաւրացուցանէր զառաքեալսն, զի թէ պարթեւերէն¹² էր բարբա-

¹ ԱԲ յանդգնութեան

² Գ > Եփր.

³ Ա հոտ անոյշութեան] հոտն անուշութեան

⁴ Ա զգալիղեացիսն] զգալիլացիսն

⁵ Բ բառն] բարբառն

⁶ ԱԲ միջավերջ] մեծավերջ

⁷ ԱԲ > այլ խաւսողացն առաքելոցն

⁸ Գ > յոհ.

⁹ Ա գալիղեացիք] գալիլացիք

¹⁰ Ա եղեմացիքս, Բ եղեմացիքս] ելիմացիքս

¹¹ Ա խաւսել

¹² Բ պարթեւերեմ

ուեալն, ինքեանք որ խաւսէինն¹ ոչ գիտէինն², այլ ի նոցունց ի լսողացն ուսանէին: Եւ զի յանւանէ յիշեաց զազգսն զթշնամիս հրէից, առ ի ցուցանել, թէ ամենեցունց իսկ առաքեալքն³ յաղթեսցեն:

Արդ, սոքա կամ յայտոցիկ յիշելոց ազգաց⁴, ի գերութենէ եկեալ հրեայք էին այլալեզուք, կամ անդանաւր⁵ ի Հրէաստան ծնեալ հեթանոսք, զի նոր աւանդութիւնս բազումս կալցի վկայս, զհրէաստանեայս⁶ եւ զեկս աւտարս: Որք ապշեալք⁷ եւ տարակուսեալք, այլ ոք առ այլ ասէին. «Զի՞նչ կամիցի այս լինել» (Բ. 12): Առ որս ասելի է, թէ զի՞ զարհուրիք: Զի լսեմք, ասեն, խաւսել⁸ մերով լեզուովս⁹ զմեծամեծս Աստուծոյ: Տե՛ս, զի ոչ բանս ինչ լոկ խաւսէին, այլ սքանչելիս ոմանս բարբառէին մարգարէանալով կամ իմանալով վկայութիւնս մարգարէիցն զՔրիստոսէ, ընդ որ յիրաւի լսողքն¹⁰ տարակուսէին: Եւ այս զբարեմտութիւն նոցա յայտնէր. զի զարհուրեալք ընդ եղեալսն՝ ասէին զի՞նչ կամիցի այս լինել. զի հանդերձելոց իրաց նախագուշակ զնշանն վարկանէին, այլ թէ բարւո՞յ իցէ արդեւք կամ չարի, ոչ գիտելով տարակուսէին:

Իսկ կիսոցն այսպն արարեալ ասէին, թէ¹¹ քաղցուալիցք են (հմմտ. Բ. 13):

Ով անամաւթ չարութեանն. նախ զի չեւ էր ժամանակ արբեցութեան, զի պենտակոստ էր: Եւ զի հրէից եւ հեթանոսաց, թերեւս եւ խաչողաց խոստովանելով զսքանչելիսն, նոքա ծաղր¹² առնէին: Այլ չեն զարմանք, զի սոքա եւ գտէրն տեսանէին զի հանէր դեւս, եւ դեւ ունել նմա ասէին, եւ աստ ընդ այլ կողմն թիրերէին զեղեալն, զի թշնամանասէրն զասելն եւեթ խնդրէ, այլ ոչ զի¹³ դէպ ինչ ասելն:

¹ ԱԲ խօսէին

² ԱԲ գիտէին

³ Ա առաքեալք

⁴ ԱԲ ազգացս

⁵ Բ անտանօր

⁶ Ա զիրեստամայս

⁷ ԱԲ ավշեալք

⁸ ԱԲ խօսել սոցա] խաւսել

⁹ ԱԲ լեզուովս

¹⁰ Ա լսողքն

¹¹ ԱԲ > թէ

¹² Բ խաղ] ծաղր

¹³ Բ > զի

Յարուցեալ Պետրոս հանդերձ մեքասանիւքն ամբարձ գծայն իւր (Բ. 14):

Տե՛ս զարիութիւն¹ նորա: Զի թէպէտ կէսքն զարհուրեալք էին, սակայն սքանչելի էր համարձակիլն նորա եւ գծայն համբառնալ այր մի ռամիկ՝ եւ առ իւրսն, թող թէ առ սպանիչս: Եւ զի չէին գինւով արբեալք եւ ոչ ապշեալք² որպէս զղիւթսն, իսկոյն ձայնիւն Պետրոս եւ հայելովն յայտ արար, եւ զի անճահ էր ամենեցուն խաւսել³, մետասանքն մերձ կալով վկայէին ասացելոցն, եւ ամենեցուն նայ էր բերան: Այլ վաշ զաւրութեան Հոգւոյն. զի ահա՛ որ ոչն տարաւ հարցման աղջկան միոյ վատթարի, ի մէջ անցեալ արիւնահեղ խռանն՝ այսչափ բանիւ համարձակի, զի աներկբայ լիցի նշան յարութեանն Քրիստոսի եւ զաւրութիւն Հոգւոյն՝ որ զարժանիսն իւր ոսկի առնէ ի կաւեղինէ, որպէս զՊետրոս զերբեմն երկչոտն եւ զանհանճար: Այլ տե՛ս եւ զընկերսն նախանձոտս՝ նմա այժմ թողեալ զատենաբանելն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Եւ արդ միայն զանձինս արժանիս Հոգւոյն կազմեսցուք, եւ ամենայն ինչ դիւրաւ մեզ վճարի, որպէս եւ յայնժամ պետրոսեանք Հոգւովն վառեալք որպէս արս հրեղէնս ի մէջ ծղի անկեալք ոչ չար ինչ կրէին, այլ ի հպեալսն /15բ/ գործէին զյաղթութիւն, ոչ միայն հրէից յաղթելով, այլ եւ բռնաւոր իշխանաց եւ գոռոզ աշխարհակալաց, եւ միանգամայն բանիբուն ճարտարաց եւ փիլիսոփայիցն հելլենացւոց⁴: Որպէս եւ այժմ ի մէջ անցեալ առ խաչեցաւդսն⁵ հանդիսաբանէ եւ ասէ:

[ԳԼՈՒԽ Ե.]

Արք հրլասպանեայք⁶, եւ⁷ որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեւեան, այս ձեզ յայտնի լիցի եւ ունկն դիք բանից իմոց (Բ. 14):

¹ Ա զարութիւն

² ԱԲ ակշեալք

³ Ա խօսել

⁴ Ա հեղեղացւոց, Բ հելլեացւոց] հելլենացւոց

⁵ Ա խաչեցաւդսն, Բ խաչեցաւդսն] խաչեցաւդսն

⁶ Բ հրեաստանեայք

⁷ Բ > եւ

Ոչ առ որս նախ արս երկիրդածս¹ եւ ատարս ասաց յամենայն ազգաց՝ խաւսի այժմ՝ զբանս, այլ տակաւին առ կատակաւղսն. առ ի յուղղել զթիւր կարծիս նոցա: Եւ դու տես, զի այսն առնելն պատճառ եղեւ բանին, եւ բարւոք, ոչ իբրեւ առ կատակաւղս ընդդիմաբանէ, այլ յարգանաւք իմն, թէ «Արք հրէաստանայք, եւ² որ բնակեալք էք յԵրուսաղէմ», զի մեծ իմն գովեստ կարծէին զբնակելն յԵրուսաղէմ եւ Հրէաստանեայ³ գոլն, որ է յուղայեան վիճակն, զորս⁴ այսու բանիւ առ ինքն դարձուցանէ, թէ «Ունկն դիք բանից իմոց»: Ոչ որպէս դուք կարծէք, թէ խազմզելով⁵ լցեալ իցեմք: Տե՛ս զմեծանձնութիւնն⁶, զի գյուղով մասն ամբոխին զարմացեալս ընդ իւր ունելով՝ ոչ շփանայ, այլ հեզութեամբ ընդ խիստսն բարբառի: Հայեաց եւ զոգւոյ⁷ նորա զազատութիւնն. զի ոչ գովեաց զասողսն⁸, թէ լսեմք խաւսել սոցա ի մեր լեզուս զմեծզմեծս Աստուծոյ, այլ զհեզնաւղսն մեղմով ի կշտանբելն, զսքանչացեալսն փութացաւղս արար յերկիրդ, եւ խոյս տուեալ բանիւն յամբառնալոյ եւ ի սուտակասպասութենէ, նախ ի բաց խլէ գանպատշաճ կարծիս նոցա, թէ «Ոչ որպէս դուք կարծէք, թէ խազմզով լցեալ իցեմք» (Բ. 15), եւ ապա զուղղիղն հաստատէ: Եւ չասաց, թէ ոչ որպէս դուք կատակէքդ, զի մի՛ կամաւ չարութեան⁹ զծաղրն դիցէ:

Զի դեռ երեք ժամք են աւուրս (Բ. 15):

Եւ այս զի՞նչ առնիցէ՝ թերեւս ասիցէ ոք, զի մարթի եւ յերրորդուժ ժամու արբեալ լինել: Ասեմ, թէ ոչ ասաց ճշդիւ վասն արբեցութեան, զի եւ նոքա ոչ զսոսա արբեալս ունէին, այլ կատակելով զայն ասէին: Ուստի ուսանիմք, թէ առ ոչ հարկաւորսն չեն պէտք բազում բանից: Եւ այլազգ. զի ըստ ակրինացն, մանաւանդ յայնմ ժամու եւ յաւուր, չէր ակրէն առն հրէի արբեալ գոլ, զի պենտակոստ էր: Այլ տեսցուք դարձեալ. զի յերրորդ ժամու իջեալ Հոգւոյն ոչ էր վայրապար: Այլ նախ՝ զի հռչակելի լիցի, զի չեւ եւս յուտել

¹ Ա երկիրդածս + եւ օտարս երկիրդածս եւ օտարս բանս

² ԱԲ > եւ

³ Բ զհրէաստանեայ

⁴ Բ զոր

⁵ Բ խազմզով

⁶ Բ զմեծանձայնութիւնն] զմեծանձնութիւնն

⁷ ԱԲ զհոգւոյ

⁸ ԱԲ զասողսն

⁹ Ա չարութեան + այլ անգիտութեան

կամ ի գործ կամ յընթրիս զբաղեալք, այլ աւրն մեկնեալ, եւ մարդիկն զուարթացեալ պայծառ եղեալքն ցուցցին:

Խոսք. Եւս, ի սոյն ժամու ասի Ադամ ստեղծեալ եւ զՀոգին Սուրբ փչմամբ զգացեալ:

Ներս.կթղ. Յորում ժամու եւ կինն ի չարէն պարտեալ եւ ի Հոգւոյն թափուր մնացեալք, զորս ի սոյն ժամու եւ Տւրն ի խաչին քաւեաց, եւ զՀոգին Սուրբ այժմ դարձեալ պարգեւեաց, զոր իբրեւ նախ արբին պետրոսեանք՝ ոչ խազմուզ¹ ասեն արբաք եւ արբեցաք, այլ բաժակ անապական բերկրութեան, ի կենացն աղբիւրէ², գետաւրէն բղխման ուղիւից փափկութեան կանխաձայնեալն խոստման:

Յոհ. Որով եւ զմարգարէութիւնն Յով/16ա ելայ այսու լցեալ ցուցանէ, աստի եւ յառաջ առ ամենեսեան նոսա խաւսելով, թէ «Այս է, որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովկա³: Եւ եղիցի յեր այսորիկ յաւուրս յերինս⁴ ասէ Աստուած՝ հեղից յՈգւոյ իմոյ» (Բ. 16-17): Յուցանէ այժմու եղելոցս մերձ գոլ զկատարածն, զի յաւուրս վերջինս ասէ գերեւումն Քրիստոսի եւ զհեղումն Հոգւոյն, այլ ոչ յիշէ առժամայն զանունն Քրիստոսի, կամ զխոստանալն նորա զՀոգին, այլ ի Հաւրէ ասէ զխոստումն Հոգւոյն: Բայց սուղ ինչ յետոյ ասէ վասն Քրիստոսի, եւ զի խոստացան զՀոգին եւ սփռեաց ասէ որպէս տեսանէք: Վայելչապէս զայս արար Պետրոս, զի թէ նախ յիշէր զՔրիստոս՝ ի վէճ դրդէր զնոսա, այլ ի յետոյ ասելն հաւատացին Աստուած գոլ զնա: «Նեղից, ասէ, յՈգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ» (Բ. 17): «Նեղուլն»՝ զառատութիւնն յայտնէ, եւ «ի վերայ ամենայն մարմնոյ»՝ այսինքն՝ ի հաւատացեալս, ոչ ի հրէայս միայն, այլ եւ ի հեթանոսս՝ յայտ է: Այլ դեռ եւս ոչ յայտնեաց զայս, զի մի՛ յաղաչեսցեն հրեայք:

Այլ իբրեւ ետ նոցա քաղցր խոստումն զհեղումն⁵ Հոգւոյն, թէ՛ ընդունել կամեսցին, ոչ ետ տեղի նոցա նախանձելոյ ընդ հեթանոսս, այլ իսկոյն ի բաժանմունս ընդունողաց Հոգւոյն փոխեաց զբանն, թէ՛ «Մարգարէասցին ուսրերք ձեր եւ դսրերք» (Բ. 17): Ոչ ի ձեզ հարսդ, ասէ, այլ ի մանկունս ձեր հեղցի Հոգին, որք եւ յամենայն լեզուս խաւսելով մարգարէասցին, վերստին առեալք զչնորհսն, զոր կորոյս Ադամ: Սմին վասն նախ զուստերսն զնէ, զի փոխանակ հաւրն առին

¹ ԱԲ խազամուզ

² ԱԲ աղբերէ

³ Ա յովկեղայ

⁴ ԱԲ յետին

⁵ ԱԲ զհեղուլ

որդիքն՝ առաքեալքն եւ Ագաբոսք, եւ շիղայեանք, եւ ապա¹ դաստերք՝ որպէս Փիլիպպոսին եւ այլք:

Եւ երիտասարտք ձեր փեսիլ² փեսցեն (Բ. 17):

Եւ են սոքա հզաւրքն յառաքինութիւնս, առ որս գրէր³ Յովհաննէս, թէ «Յաղթեցւք դուք չարին» (Ա. Թ. Յովհ. Բ. 13): Եւ զի մի՛ յորդիսն եւեթ կացուցէ զչնորհան՝ յաւելու. «Եւ ձերք ձեր երազով երազեցին» (Բ. 17): Յայտ է՝ աստուածային հանճարով արեւորեալքն, զորս ցուցանէ ահա արդէն արժանացեալ եւ հասեալս շնորհին, իսկ զկատակաւսն՝ ոչ: Սմին վասն զմարգարէն ածէ ի մէջ ի դիմաց Աստուծոյ ասելով. «Հեղու՞մ յՈգւոյ իմոյ», յոմանս դէմ յանդիման, որպէս այսաւր յինքեանս՝ յորս նստաւ նախ, եւ յայլս երազովք՝ որպէս ի մարգարէսն. ո՞րգոն յերազի երեւէր⁴ Պաւղոսի այր մակեդոնացի, հրաւիրելով զնա անդ ի քարոզել, եւ ցԱնանիա ի Դամասկոս ասէր Տէր ի տեսլեանն մտանել առ Սաւղոս:

Իսկ ի վերայ ծառայից իմոց⁵ եւ աղախնաց իմոց հեղից, ասէ, յՈգւոյ իմոյ (Բ. 18):

Յառաքինութենէ կոչէ զսոսա, որք են երկիւղածքն եւ փոյթքն ի պաշտաւն Աստուծոյ, ազատեալքն ի մեղաց եւ ծառայեալք Աստուծոյ, յորս եւ առատ հեղուն շնորհքն, ոչ ի սակաւս ոմանս, իբրեւ ի հնումն յԱննա⁶ կամ Դեբովրա, այլ աստ՝ ի յոյժ բազումս առատացեալ⁷, որք եւ մարգարէսացին, ասէ: Ըստ այնմ. «Ամենայն այր կամ կին, թէ աղաթի կամ մարգարէանայ»: Արդ, որպէս երբեմն Քրիստոս կամելով ուղղել զառ ի յինքն զչար կարծիս նոցա, թէ «Բեղզերուդա հանէ դա գղես» (Մարթ. ԺԲ. 27), ասաց, թէ «Նոգովն Աստուծոյ հանեմ ես գղես» (Մարթ. ԺԲ. 28), նոյնպէս եւ այժմ Պետրոս, զի ոչ արբե/16բ/ցութեան գինւոյ, այլ Հոգւոյն Սրբոյ Աստուծոյ ցուցցէ գործ զխաւսելն ինքեանց յայլ եւ յայլ լեզուս, ի մարգարէն ապաւինի, կնքել նովաւ զբանն, որում ոչ կարէին ընդդիմանալ: Զոր սմին վասն եւ Քրիստոս առնէր, յաճախ զմարգարէսն յիշելով, եւ նոքաւք զբանն կնքէր, որպէս այն,

¹ Բ ~ ապա եւ

² ԱԲ տեսիլս

³ Բ գրէրն

⁴ ԱԲ երեւի

⁵ ԱԲ > իմոց

⁶ ԱԲ յանանիա

⁷ Բ առատացեալս

«ԹԷ Դաւիթ զնա ՏԷր կոչէ, զհա՛րոյ որդի նորա իցԷ» (Մփրթ. ԻԲ. 45), եւ այլ բազում ուրեք, առ որ ոչ կարէին տալ պատասխանի:

Արդ, իբրեւ ուղղեաց աստ Պետրոս մարգարէիւն զթիւր կարծիս նոցա ասելով, թէ «Այս է ասացեալն ի ձեռն Յովնայ» (Բ. 16), ոչ ի¹ նոյն առնու գտեղի, այլ ընթեռնու ըստ կարգի եւ զահագիւնսն եւս՝ զի երկիցեն: «Տաց, ասէ, նշանս յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ, արիւն եւ հուր եւ սրբիկ ծխեալ» (Բ. 19): Այսոքիկ ասացեալ են նախ վասն եղելոց նշանացն յաւուր խաչին Քրիստոսի, նա եւ վասն սաստիկ հասելոց² վշտացն Երուսաղէմի ի զաւերացն հռոմոց, եւս եւ վասն նշանաց հանդերձեալ աւուրն վերջնոյ, զորս ամէ ի մէջ բանիւս: Նախ զի ցուցցէ, թէ Հոգւովն խաւսին ի լեզուս, որոյ իջմանն ի նոսա նախագուշակք եղեն նշանքն ահաւորք՝ որ եղեն ի ժամ խաչին, նախ քան զգալ մեծի աւուրս այսորիկ, յորում եկն ահա Հոգին, զի այսու ցուցցէ զիջումն Հոգւոյն Սրբոյ ընդ չարչարանացն Քրիստոսի ի Հաւրէ պարգեւ³ հեղեալ ի մեզ հաւատացեալսս⁴: Ապա եւ սպառնայ եւս խաչահանուացն զանցսն՝ որ կրելոց են ի տիտոսեանց, թէպէտ եւ ոչ մեկնեաց զասացեալս, որպէս եւ ոչ զպատուհասն Յուդայի յիշեաց զասացեալն բերանովն Դաւթի: Եւ⁵ եցոյց, թէ զոր կրենն ի տիտոսեանց զդժընդակսն ի⁶ դժընդակագունից վշտաց, վերջնոյ աւուրն են նախագուշակք՝ եթէ ոչ գայցեն ի զգաստութիւն: Եւ զի խիստք եւ նշանախնդիրք ոմանք էին առ հաւատ հանդերձելոցն, «Տաց, ասէ, նշանս» (Բ. 19): Ո՞յր: Յայտ է՝ ըստ առաջին կարգին, թէ հեղման Հոգւոյն այսմ աւուր, զոր աւր մեծ եւ երեւելի կոչէ:

Եփր. Զի որպէս առաւաւտն⁷ նշան է ծագմանն⁸ արեւու, եւ նշանքն, որ յաւուր խաչին Քրիստոսի, գուշակ⁹ հեղման Հոգւոյն Աստուծոյ, «յերկինս»՝ արեգակն զի խաւարեցաւ, եւ «յերկիր»՝ շարժումն զի եղեւ, արիւն՝ Քրիստոսին որով փրկեցաք մեք, զոր¹⁰ նոքա առին ի վերայ անձանց եւ որդւոց իւրեանց ի դատապարտութիւն փոխանակ արեանն՝ որ ցանիւր ի վերայ նոցա ի փրկութիւն, եւ «հուր»՝

¹ ԱԲ եւ] ի

² Բ հասելոյ

³ Բ պարգեւս

⁴ ԱԲ հաւատացեալս

⁵ ԱԲ եւս

⁶ ԱԲ > ի

⁷ Ա առաւաւտն

⁸ ԱԲ ծագման

⁹ ԱԲ գուշակք

¹⁰ Բ զի] զոր

Աստուած Բանն՝ որ ջրով կողին շիջոյց զհուերն Ադամայ, եւ վառեաց, զոր ինքն եկն արկանել յերկիր, կամ որ երեւեցաւն այսաւր լեզուաւք հրեղինաւք: Դարձեալ «հուր»՝ մարմինն աստուածացեալ յերկինս, եւ «արիւն»՝ Բանն մարմնացեալ ի խաչին, «մրրիկ ծխոյ»՝ նախատանք¹ խաչահանուացն²:

Դաւ. փիլ. Կամ ի շարժմանէն³ երկրի եւ ի փլմանէ վիմաց փոշի ծխատեսակ յաւդս վերացեալ: Ուստի եւ արեգակն խաւարմամբ քաւղ արկեալ պատկառանաց ի տեսանել զնախատինս արարչին, եւ լուսինն շրջեալ ի գոյն արեան ստեղծչին, ըստ որում ասէ. «Արեգակն դարձցի ի խաւար եւ լուսին՝ յարիւն» (Բ. 20), թէպէտ եւ ոչ գրեցաւ յաւետարանսն, որպէս եւ ոչ արտասուքն, որ ընդ ուժգին պաղատանացն Քրիստոսի:

Կիր. Այս/17ա/ոքիկ, որպէս յայտ է յաւետարանչացն, կանխագոյն վճարեցան քան զգալուստ Հոգւոյն յաւուրն⁴ պենտակոստէից, վասն որոյ եւ մարգարէն ասէ. «Մինչ չեմ եկեալիցէ ար Տեառն մեծն եւ երեսկին» (Բ. 20), յայտ է՝ իջման Հոգւոյն, որ եւ վասն այսր նշանաց եւ անմեղին մահու, եկն ահա աւրս այս մեծ, յորում հեղաւ Հոգին:

Յոհ. Իսկ ըստ երկրորդ կարգին կերպագրէ կանխաւ զանցս աղէտիցն⁶, յորժամ առցի ի Հոռոմաց Երուսաղէմ: «Արիւն»՝ սպանելոցն պատժապարտաց, եւ «հուր»՝ քաղաքին հրդեհեցելոյ, եւ «մրրիկ ծխեալ»՝ նոյն հրոյն հարելոյ, «արեգակն խաւարեալ եւ լուսին յարիւն դարձեալ»՝ ի վերայ ծախելոցն ի սրոյն եւ ի սովոյն՝ յայտ է: Կամ զսաստիկ վիշտս նոցա այսու նշանակէ եւ զմեծութիւն նեղութեանն սպառնալեաւքս՝ որով զիտասցեն եղուկ զինքեանս, զի հասեալ է աւերն Երուսաղէմի: Նա զի եւ նշանս ոմանս ահագինս յայնժամ եղեալս ի պաշարմանն Երուսաղէմի պատմէ Յովսէպոս հրեայ: Ապա եւ զարհուրացուցանէ եւս զկատակաւոսն նախաճաշակ նշանաւքս այսոքիւք⁷ ական ունել մեծին հրոյն հանդերձելոյ ի գալստեան աւուրն Տեառն յերկնից, զի հուր երթայ առաջի նորա:

Եփր. Որոյ լոյս պարգեւեացն հեթանոսաց, եւ մրրիկ ծխոյն խաչահանուաց ի խնդրել ի նոցանէ զվրէժ արեանն Քրիստոսի եւ արդա-

¹ Բ նախատանօք

² Բ խաչահանուացն

³ Ա շարժմանէն

⁴ ԱԲ յօրն

⁵ ԱԲ մինչեւ] մինչ չեմ

⁶ Բ աղետիցն

⁷ Բ այսոքիկք

րոյն¹. Եւ խաւարի ի վերայ նոցա արեգակն նախ քան զըմբռնելն զնոսա² ի լիճ հրոյն³, զորմէ ասէ. «Մինչ չն⁴ եկեալ իցլ ար Տեառն մեծ եւ երևելի⁵» (Բ. 20):

Զի թէպէտ տակաւին առանց պատուհասի մեղանչէք, ասէ, այժմ, այլ ոչ է պարտ դովաւ քաջալերեալ: Զի թէ նեղութիւնքն, որ նախագուշակ լինելոց են դժուարագունիցն, այսչափ սաստկագոյնք են, ապա վասն յոյժ մեծագունիցն կարի յաւէտ զարհուրելի է: Եւ իբրեւ կարի յոյժ սասանեցոյց զնոսա, եւ զծիծաղելն նոցա ընդ այնքան տագնապաւ փակեաց, դարձեալ տայ ապացոյց նոցա ոգի կլանել⁶: «Եղիցի, ասէ, ամենայն, որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ» (Բ. 21): Եւ զայս ասաց մարգարէն վասն Քրիստոսի, զի նա է Տէր, զորոյ անունն, որ խոստովանի՝ կեցցէ: Այլ Պետրոս զեռ եւս զայս ոչ ասաց յայտնի, այլ պարզաբար զբանն առնու ոչ յաւելլով, թէ որ կարդայն զանունն Քրիստոսի, որպէս այն, թէ «ամենայն, որ կարդասցէ», ոչ յաւել, թէ հրէայն իցէ եւ թէ հեթանոսն, որոց չիք խտիր ի Քրիստոս: Որպէս յարքունիս, զի ոչ ի քաջատոհմութենէ, այլ յարուեստէ եւ ի գործոյ յարգի իւրաքանչիւր ոք: Սմին վասն եւ ոչ զկարդալն⁷ յաւէլ⁸, թէ ոչ լոկ ասելն Տէր Տէր, հերիք է առ կացուցանել, այլ պատուիրանացն կատարմամբ: Բայց առ այժմ, զի դեռ սկիզբն էր, զբան հաւատոյն միայն ի ներքս ածէ, թէ «Անագին փանջանցն կարդացմամբ անուանն Տեառն Է փրկութիւն» (հմմտ. Սաղմ. Գ. 9): Իսկ զայն, թէ «յետ խաչին, որ ոք խնդրէ զփրկութիւն»՝ պարտի ի Քրիստոս հաւատալով եւ կարդալով փրկիլ՝ յետոյ կարգէ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ, այս ձեւ աւրինակի բանից առ նորընծայսն այսպէս ի ճահ է, զոր դեռ եւս պիտոյ է նախ ի հաւատս աշակերտել: Իսկ ըստ մեզ /17բ/ վաղուց հաւատացելոցս պիտոյ է զաւրինակ վշտացն Երուսաղէմի ի ստուգութիւն առնուլ հանդերձեալ գեհենին սպառնալեաց: Եւ մի՛ վասն զի բարերար է Աստուած՝ արհամարհել զնա, այլ մա-

¹ ԱԲ արդարոցն

² ԱԲ զըմբռնել նոցա] զըմբռնելն զնոսա

³ ԱԲ ջրոյն] հրոյն

⁴ Ա մինչեւ] մինչ չեւ

⁵ ԱԲ երանելիս] երևելի

⁶ ԱԲ ելանել] կլանել

⁷ ԱԲ զկարդալ

⁸ ԱԲ յաւել

նաւանդ զարհուրել, զի եւ տանջաւղ¹ եւս է: Զի ո՛ր այլ ոք զայնչափ չարիս հասոյց հրէիցն, մինչ² կանանց առ կարիս սովոյն զորդիս խորովել եւ ուտել, եթէ ոչ ինքն Քրիստոս: Առ որ եւ նախ ի հաւատալ ի նա հրէիցն փութայ Պետրոս հասուցանել զբանն յասելն:

[ԳԼՈՒԽ Զ.]

Արթ³ իսրայէլացիք, լուարուք զբանս զայս (Բ. 22):

Ոչ է փաղաքշանաց հանդարտագոյն խաւսելս, այլ զի վերագոյն զարհուրեցոյց զնոսա սպառնալեաւք մարգարէին, զի մի՛ վհատիցին կամ զայրասցին, դարձեալ նախերգան սկսանի, յիշեցուցանել կամելով նոցա զՔրիստոս: Եւ ոչ ասաց, թէ արք իսրայէլացիք հաւանեցարուք, զի ծանր թուէր, այլ թէ «լուարուք»: Եւ իսկոյն վաղվաղակի ի մէջ բերէ զանունն Քրիստոսի, եւ ի սկիզբն բանիս ոչ ասէ ինչ ի բարձրագունիցն զՔրիստոսէ, այլ ի յոյժ խոնարհագունիցն. «ԶՅիսուս»՝ ասէ: Եւ վաղվաղակի զհայրենիսն յիշէ: «Զնագովրեցի» (Բ. 22)՝ ասէ, որ ոչ ինչ մեծագոյն ցուցանէ զնա քան զմարգարէ:

Եփր.⁴ «Զայր», մարդ քարոզէ զնա, զի իբրեւ կաթն ջամբեսցէ նոցա զաւետարանն, այլ իբրեւ կատարեսցին, քարոզեսցեն զնա դատաւոր արարիչ եւ Աստուած:

Յոհ. «ԶՅիսուս, ասէ, զայրն», եւ զնովիմբ ածէ զմեծն, թէպէտ մեղմով, թէ «յԱստուծոյ առաքեցաւ» (Բ. 22), ասէ «Զցուցեալն յԱստուծոյ ի ձեզ» (Բ. 22): Զայս եւ Քրիստոս ամենայն ուրեք փութայր ցուցանել, թէ ոչ յանձնէ, այլ ի Հաւրէ եկն, եւ Մկրտիչն՝ թէ «Նա ասաց ցիս. Յոյր վերայ իջցէ ևս հանգսիցի Նոզին⁵, նայ է Քրիստոսն» (հմմր. Յովհ. Ա. 33): Զայս եւ երանելին Պետրոս ձեպելով ցուցանել այսպանողացն, նախ՝ զսպեաց զնոսա երկիւղիւ, ապա համարձակի պատմել ի մէջ խաչեցողացն, թէ յարեաւ: Բայց նախ զայն դնէ, թէ յԱստուծոյ եկն: Եւ այս ուստի⁶ է յայտ, ի զաւրովթեանցն եւ յարուեստիցն, զոր արար: Եւ դեռ եւս ոչ ասէ, թէ ինքն Յիսուս արար, այլ թէ ի ձեռն նորա Աստուած, «Որպէս և դուր իսկ զիսկ» (Բ. 22) ասէ: Առանց երկիւղի իրիք զնոսա կոչէ վկայս, զտեսաւղսն եւ զլսաւղս սքանչելեացն Յիսուսի, զոր եւ

¹ Բ տանջող

² Բ մինչեւ

³ Ա արդ] արք

⁴ Գ > Եփր.

⁵ Բ հոգի

Նիկողոզիմոս¹ ասէ, թէ «ՅԱստուծոյ եկեալ ես՝ զի ոչ որ կարէ ամեն, զոր դուդ ամենս» (Յովհ. Գ. 2):

Եւ իբրեւ ասաց զնոցին զիտացեալսն, ապա եւ առ անյայտսն գայ: «Զնա, ասէ, նկատեալ խորհրդով եւ կանխագիտութեամբն Աստուծոյ մտանալ ի ձեռաց անարինաց բնեռեալ ի փայտի սպանէք» (Բ. 23): Զչար կատաղութիւնն զայն՝ ոչ եթէ դուք զաւրացայք եւ խաչեցէք ասէ, եթէ ոչ ինքնիշխան յաւժարութեամբ գայր² ի մահ, որ ցուցանէ զնա Աստուած, այլ կանխագիտութեամբն Աստուծոյ էր սահմանեալ: Եւ տես, զի թէպէտ փութացաւ ազատել զնոսա յամբաստանութեանէն ասելով, թէ «Տեսչութիւն Աստուծոյ էր, որ եղեն³», որպէս եւ Յովսէփ ասէր «Մի՛ բարկանայք միմեանց, զի Աստուած առաքեաց զիս աստ» (հմմտ. Ելք ԼԲ. 22): Այլ զի մի՛ ասիցեն, թէ տեսչութիւն Աստուծոյ էր՝ ապա բարուք գործեցաք, զի խաչեցաք: Ոչ, ասէ, զի |18ա| թէպէտ նախասահմանեալ էր, այլ դուք այրասպան⁴ էք: Սմին վասն յաւել, թէ «Մտանալ ի ձեռաց անարինաց բնեռեալ ի փայտի սպանէք» (Բ. 23): Զբոլոր չարն ի գլուխն Յուդայի կուտէ, որ մատնեացն զնա համբուրիւն ի ձեռս անաւրինաց՝ զինուորացն: Զի ոչ պարզաբար սպանէք, այլ ի ձեռն⁵ արանց անաւրինաց, եւ զոր ինչ վասն սպանութեանն ծանր էր նոցա լսել՝ ոչ ածէ ի մէջ, թէ կարաւ էր, որ մահու հաղթեաց, եւ զձեզ սպանանել, այլ ճեպի ցուցանել⁶, թէ մեռաւ եւ յարեաւ: Եւ ոչ ձաղէ դեռ եւս զնոսա, թէ «դուք ուրանայք»՝ մարգարէն վկայէ, զի ուսուցցէ զմեզ՝ զիջանելով ըմբռնել զանհաւատսն:

Եւ նախ զմահն Յիսուսի խոստովանեալ՝ գայ առ յարութիւնն: «Զոր Աստուած յարոյց» (Բ. 24) ասէ: Տե՛ս, թէ որպէս ի մէջ քաջայայտիցն զանյայտն⁷ դնէ, զյարութիւնն⁸ ասեմ, զի զաւրութիւնքն եւ նշանքն եւ սպանումնն յայտնիք էին: Եւ ոչ ասէ, թէ ինքն յարեաւ, այլ թէ «Աստուած յարոյց», զի դեռ զխոնարհագունիւքն գայ, եւ⁹ զի ցուցցէ, թէ չէր աւտար ի Հաւրէ, այլ միաբան եւ համակամ:

¹ Աբ Գիլղոբեմոս

² Աբ գայ

³ Բ եղեն

⁴ Աբ այրասպանք

⁵ Աբ ի ձեռս

⁶ Աբ > այլ ճեպի ցուցանել

⁷ Ա գայտն

⁸ Բ գյարութիւն

⁹ Աբ > եւ

Ապա ի վեր հանել զլսաւորն՝ բարձրագոյնս ճառելով զնմանէ: «Առ-
ծեալ, ասէ, զերկուսն մահու, զի ոչ էր հնար ըմբոնել նմա ի նմանէ» (Բ. 24): Ոչ
էր հնարդ՝ ցուցանել, թէ ինքն իսկ մահն եկնէր յունելն զնա, եւ չա-
րաչար պատառումն իւր կրել փութայր՝ զոր լուծանել ասէ¹: Որպէս
որ երկնէն ծնանել՝ ոչ կարէ ի ներքուստ ունել, զոր ունին, այլ ճեպի
արտաքս տալ, այսպէս ոչ կարողանայր մահ իշխել նմա ունելով,
այլ լուծեալ քարկտիւր ի նմանէ: Այլ եւ երկուսն մահու զնախնի
պատուհասն ասէ զմեր, որ վասն մեղաց գտին զմեզ, զոր լուծեալ
անգործ արար: Դարձեալ. ոչ էր հնարդ՝ յայտ առնել, թէ ոչ դարձեալ
մեռանի որպէս այլք ոմանք յարուցեալք եւ դարձեալ մեռեալք:

Եւ իսկոյն փութա² բառնալ զայլ ազգ ինչ մտածութիւն ի նոցունց
ասելով. «Դաիթ իսկ ասէ զնմանէ» (Բ. 25): Զի յոյժ մեծարգոյ էր այրն,
զնա ածէ վկայ մահուն եւ յարութեանն, եւ ի վերուստ ի խոնարհա-
գունիցն առնու զբանն վկայութեան զՔրիստոս³, զի ցուցցէ, թէ
չէր ինչ տրտմեցուցիչ մահ նորա, վասն որոյ եւ ի դիմաց Քրիստոսի
առնու զբանս: «Յառաջագոյն, ասէ, րեսանէի գրէր առաջի իմ յամենայն ժամ,
զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց» (Բ. 25): Յուցանէ, զի չէր աւտար
յԱստուծոյ կամ հակառակ ըստ կարծեաց նոցա, եւ ոչ առ տկա-
րութեան մեռաւ, այլ կամաւ եւ Հաւր գործակցութեամբ յաղթեաց
մահու ուրախութեամբ, զոր եւ ասէ. «Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ
իմ» (Բ. 26), այսինքն՝ բանական հոգին Քրիստոսի յաւերելն զդիւար-
նակ բանտն դժոխոց: «Յնծացալ լեզու իմ» (Բ. 26): Հոգևովն սրբով ի կո-
չելն զՀայր Տէր երկնի եւ երկրի, եւ դարձեալ զեղեալ խնդութիւնն
աշխարհի ինքն ասէ զխիզախողացն, թէ «Ու՛ր է մահ խայթոցն քո» (հմմտ.
Ա. Կրթն. ԺԵ. 55, Ովսէլ ԺԳ. 14): Վասն որոյ յաւերու. «Եւս եւ մարմին իմ
րնակեսցէ յուսով» (Բ. 26): Յայտ է՝ անմահութեանն, որում սպասեմք
դեռ եւս փրկութեան մարմնոյ մերոյ, ընդ որ եւ ինքն ուրախացեալ
փառս կոչէր /18բ/ զառիթն այսմ փրկութեանս զխաչն:

Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս (Բ. 27):

Կալ մնա ի խաւարչուտ սանդարամետս ընդ կապելոցն ի ներքսն
ողուցն: «Եւ ոչ րացես սրբոյ քում րեսանել զապականութիւն» (Բ. 27), որ է
լուծումն ի նեխութիւն, զի թէպէտ մեռաւ ճշմարտապէս, այլ ելոյժ

¹ ԱԲ > զոր լուծանել ասէ

² Բ փութայ

³ ԱԲ զքրիստոս

զմահ եւ զապականութիւն, եւ զդժոխս զդժուարին ամրոցն չարին յաւիտէնից քակեաց¹:

Կիւղ.² Զի ոչ եթէ անձնաւոր իմն է դժոխք, թէպէտ եւ գիրք դէմս դնեն նմա ուրեք իբրեւ անձնաւորի ուրուք, թէ «Լայնցին դժոխք գանձինս» (Եսայի Ե. 14): Սակայն տեղի է մանաւանդ դժոխք եւ թշուառական հոգւոց տխուր կապարան: «Ծանուցեր ինձ գանապարս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց» (Բ. 28): Տակաւին եւս զխոնարհագոյնսն ճառէ զՔրիստոս: Այսինքն՝ թէ առեալ ի Հաւրէ զանմահութիւն եւ բաշխեալ ամենեցուն՝ վերացաւ յերկինս, յանդիման եղեալ վասն մեր երեսացն Հաւր:

Յոհ. Եւ յետ վկայութեան մարգարէին՝ յաւելու մեկնել զնոյն: «Արք եղարք» (Բ. 29) ասէ. ի մեծ ինչ ասելն դնէ զառաջաբանս զյաս՝ զարթուցանելով զնոսա եւ ընդանեցուցանելով: «Պարտ է համարձակութեամբ ասել ձեզ³, ասէ, վասն նահապետին Դաւթի» (Բ. 29): Բազում խոնարհութեամբ խաւսի, զի մի՛ խցցեն զականջս չլսել կամ բարկացին: Սմին վասն ոչ ասաց, թէ չեն ասացեալ բանքս վասն Դաւթի, այլ վասն Քրիստոսի, զի մի՛ թուիցի անարժանս ինչ զԴաւթի խաւսել: Վասն այսորիկ եւ ոչ ասաց լոկ վասն Դաւթի, այլ «վասն նահապետին Դաւթի»: Այսու եւ զնոսա եւս մեծարէ՝ վասն ցեղապետն ունելով ի վերուստ ինքեանց զԴաւթի: «Զի մնտաւ, ասէ, եւ թաղեցաւ» (Բ. 29): Եւ ոչ ասաց, թէ ոչ յարեաւ, այլ գողանալով իմն զբանն՝ մեծագոյն ասաց քան զայս, թէ «Գերեզման նորա կայ ի միջի մերում մինչև ցայսար» (Բ. 29):

Եւ ոչ դեռ այսպէս եւս⁴ եկն ի Քրիստոս, այլ տակաւին հանդերձ մեծ իմն գովութեամբ զԴաւթի: «Զի մարգարէ էր եւ գիրք, ասէ, թէ երդմամբ երդուաւ նմա Աստուած» (Բ. 30): Հարկ առնէ նոցա ընդունել զՔրիստոսի յարութեանն⁵ բան, ապա թէ ոչ՝ վնասի պատիւն եւ մարգարէութիւնն Դաւթի: «Զի գիրք, ասէ, զի ոչ պարգարար խոստացաւ նմա Աստուած, այլ երդմամբ երդուաւ ի պտղոյ որովայնի⁶ նորա ըստ մարմնոյ յարուցանել զՔրիստոս եւ նստուցանել յաթոռ նորա» (հմմտ. Բ. 30): Համարձակապէս խաւսի զբարձրագոյնս, զի նախկին բանիւքն հանդարտեցոյց զնոսա: Եւ ոչ մերկ դնէ զմարգարէութիւնն⁷, այլ եւ մեկնէ եւս.

¹ ԱԲ > Եւ զդժոխս զդժուարին ամրոցն չարին յաւիտէնից քակեաց

² ԱԲ > կիւղ.

³ ԱԲ ձեզ ասել] ասել ձեզ

⁴ ԱԲ դեռեւս այսպէս] դեռ այսպէս եւս

⁵ Բ յարութեան

⁶ Բ յորովայնէ

⁷ Բ զմարգարէութիւն

«Երդմամբ, *ասէ*, երդուալ յարուցանել ըսք մարմնոյ գՔրիստոսու եւ նստուցանել յարթոն նորա» (Բ. 30): «Ըսք մարմնոյ» *ասէ*, *զի ըստ հոգւոյ թագաւորութիւնն նորա յերկինս է: Եւ ընդ յարութեանն եւ զթագաւորութիւնն Քրիստոսի լծակցէ, զի «յարուցանել, ասէ, եւ նստուցանել յարթոն նորա»:*

Եւ ցուցանէ¹, թէ հարկ էր ընդ մարգարէութեանս² այսմիկ: Եւ զի վասն Քրիստոսի իսկ էր մարգարէութիւնս, «Յառաջագոյն, ասէ, ծանուցեալ խաւսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի» (Բ. 31): /19ա/ Եւ չասաց, թէ վասն թագաւորութեան նորա, այլ «վասն յարութեանն», զի յասելն, թէ «Նստալ յարթոն Դարթի» (Գ. Թագ. Բ. 12), եցոյց, թէ թագաւոր է հրէիցն, որ խաչեցին զնա: «Ձի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, եւ ոչ մարմին նորա երես գապականութիւն» (Բ. 31): Այսպէս ասելս քան զյարեան ասել՝ նուազ թուի, այլ նոյն է, զի անապականն ոչ էր մահուամբ: Նա եւ սքանչելի եւս քան զայլոց ցուցանէ զյարութիւն նորա. զի ընկալաւ իսկ զնա մահ, այլ ոչ կարաց զիւրն գործել ի նմա, այսինքն՝ զի մինչեւ ցերիս առուրս իբրեւ գթար ինչ խառատեալ ոչ կարաց կրկտել³ զնա, այլ փշրեալ ի նմանէ ժանեացն՝ փութացաւ արտաքս տալ զնա, եւ ընդ նմին եւ յառաջագոյն կլեալսն փսխեաց ի բաց:

Հաստատեալ⁴ Պետրոսի զբան յարութեանն Քրիստոսի վկայութեամբն Դաւթի՝ համարձակ ապա եւ զիւրն եւս ի նոյն յարէ:

Չայս Յիսուս, *ասէ*, յարոյց Աստուած (Բ. 32):

Օձեցոյն⁵ Ոչ տայ այլ ազգ իմանալ զնա յետ յարութեանն, զի յամալթ արասցէ զմարկեղիտոսն եւ զմաքսիմինիտոսն եւ զսեւեռիտոսն, որք անկատար եւ անփառաւոր ասեն զմարմինն Տեառն մինչեւ զխաչն, եւ յարութեամբն այլայլեալ եւ փառաւորեալ, զորս կշտամբէ եւ ինքն, որ յարեան՝ ասելով, թէ «ես նոյն եմ⁶»: Իսկ «յարոյց Աստուած» ասելն՝ զիջանելով է ըստ նոսա: Եւ ոչ ասաց, թէ յարոյց Հայր, այլ «Աստուած», ըստ որում եւ ինքն Քրիստոս ասաց, թէ «Աստուածն իմ» (Յովհ. Ի 17):

Որում ամենեքեան մեր ենք վկայք (Բ. 32):

Եփր. Եւ մեզ վկայ սաստիկ բարբառն, որ հնչեաց, եւ անոյշ հոտն, որ բուրեաց, եւ լեզուքս աւտար, զոր խաւսիմքս:

¹ Բ ցուցանել

² ԱԲ մարգարութեան

³ ԱԲ կտրել] կրկտել

⁴ Բ հաստատել

⁵ Ա աւձեցոյն

Յոհ. Ոչ ասաց, թէ ես եմ վկայ, այլ թէ «ամենեւեմ իսկ մեր»: Եւ զի հաւատարիմ ցուցցէ ինքեանց վկայութիւնն, դիմէ ի սոյն յայս սքանչելիսս: Բայց ոչ զայս եւեթ կազմէ սոքիմբք, այսինքն՝ հաւատարմացուցանել զինքեանց վկայութիւնն, այլ եւ ցնոսա զարհուրեցուցանէ, զի յորժամ ցուցանի ի նոցանէ սպանեալն յարուցեալ եւ Որդի Աստուծոյ եւ սիրելի Որդի, թէպէտ եւ դու լուես զպատուհաս վրիժուցն, մեղուցեալն իւրովի հաշի, յայս միտս ասէ «Աջովն Աստուծոյ բարձրացեալ, զաւերիս Տոբոյն Սրբոյ ընկալեալ ի հարւ:՝ սփռեաց զայս, զոր դուր իսկ փեսանէք եւ լսէք» (Բ. 33): Յայտնեաց աստանալը զաստուածութիւնն Քրիստոսի, եւ զի Որդի է Աստուծոյ, եւ զի գործակից է նմա Հայր, յորմէ եւ զաստուածութիւնն ունի որպէս ի Հաւրէ,¹ եւ ինքն բաշխէ որպէս եւ կամի, որովք երեւի մեծ քան զմարգարէս: Զի ահա Մովսէս տկարանայր բաշխել զՀոգին, իսկ սմա զի Որդի է, ոչ չափով տայ Հայր զՀոգին, զի եւ իւր իսկ է, Որդւոյ՝ որում զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Եւ զի յոյժ մեծամեծս ասաց զՔրիստոսէ, զնոսին իսկ ածէ վկայս. «Սփռեաց, ասէ, զայս, զոր փեսանէք եւ լսէք» (Բ. 33):

Եւ զի ասաց, թէ որդի է Աստուծոյ, եւ զի յարեալ եւ զի առաքեաց զՀոգին, ասէ եւ զհամբարձումն նորա: «Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս» (Բ. 34): Որպէս ոք զմանուկ տհաս ի բարձր ուրեք կամիցի հանել մեղմով, զի մի՛ յանկրթութենէն ապշեալ ի վայր անկցի, այսպէս եւ Պետրոս զգետնա/19բ/քարչ² միտս նոցա: Եւ զի անհաւատալի թուէր հրէիցն, թէ յերկինս ել, որք եւ ոչ յարուցեալ իսկ զնա զիտէին, մարգարէիւն դարձեալ կնքէ զբանն, զի մի՛ վասն այլոյ ուրուք կարծիցեն զասացեալն, զոր ինքն իսկ Դաւիթ ասէ. «Ասաց Տէր ցՏէր իմ. Նիսփս ընդ աջմէ իմմէ» (Բ. 35): Զոր եւ Տէրն ասելով զբանս զայս՝ պապանձեցոյց զնոսա: Եւ զի նոքա մեռեալ համարէին զնա, ցուցանէ, թէ յերկինս է եւ ընդ աջմէ Հաւր իբրեւ զգուզապատիւ եւ զաթոռակից: Նա եւ արհաւիրս արկանէ յաջորդաւն. «Մինչեւ եղից, ասէ, զթշնամիս քո պարուանդան ուրից քոց» (Բ. 35): Ցուցանէ զնոսա եւ Հաւր դիմադարձս, վասն որոյ եւ զվերջին հնազանդութեան աւրինակն դնէ, «Պարուանդան ուրից քոց» ասէ: Եւ այսու զանհնարին տանջանսն ազնարկէ եւ զաւերումն քաղաքին:

Եւ յորժամ մարգարէիւն հաստատեաց զտէրութենէ նորա զբանն, ապա եւ ինքն համարձակ զնոյն վկայէ. «Արդ, ճշմարտիս զիտացել ամն-

¹ Ա հօրէ + եւ զհոգին ամնու որպէս ի հօրէ, եւ

² Աբ գետնաքաչ

նայն րունդ Իսրայէլի, զի եւ Տէր զնա եւ ածնալ Աստուած արար» (Բ. 36): *Զամենայն ինչ Հաւր յանձն արար զՔրիստոսին, զի ընդունելի լիցի բանն ի լսաւղսն, եւ զոչ գորն յինքենէ Հնար Հաստատել ի մարգարէէն ստուգէ, ապա եւ ինքն եւս վճիռ տայ բանիւս՝ ցուցանելով զնա Տէր եւ դատաւոր Հաւասար Հաւր, եւ Քրիստոս իսկ՝ որ է աւծեալ, զոր եւ ինքեանք իսկ հրեայքն քաջ գիտէին, եւ զՅովհաննէս Հարցանէին, թէ դու՞ ես Քրիստոսն, եւ զնոյն իսկ զՅիսուս՝ եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ, զի գիտէին, թէ Քրիստոսն Որդի է Աստուծոյ: Եւ սմա՞ ոչ Հաւատացին, այլ եւ խաչեցին իսկ, ցուցանէ արդ, թէ սա նա է, որում ական ունէիք, եւ ոչ Հաւատացէք ճշմարտութեանն:*

Այլ զասելն, թէ «Աստուած արար զնա», մի՛ արիոսաբար ընկալցիս, զի զմարմնոյն է բանս եւ ոչ յատուկ զաստուածութենէն, զորոյ եւ Պաւղոս իսկ ասէ. «Աստուած Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Եփս. Ա. 17): Եւ այլազգ. որոց հակառակ Հաւր կարծէին զնա, ի սկզբանս կամի ցուցանել, թէ ի Հաւրէ ունի զճոխութիւնն: Եւ զայս Հաստատեալ ի գլուխս նոցա ի ծածոկ կուտէ զմեղադրանս՝ ասելով. «Զայն Յիսուս, զոր դուք խաչեցէք» (Բ. 36): Եւ այսու սաստիկ դնէ զսպառնալիս, զի զՈրդին Աստուծոյ սպանին, եւ չէ Հնար, թէ ոչ տանջեսցին:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Եւ զի զբազումս ի մարդկանէ քան թէ բարերարութիւնն՝ յոյժ մանաւանդ երկիւղն զգաստացուցանէ, այլ այս ծառայական բարուց եւ նորեկ անձանց է երկիւղիւ զգաստանալ³, իսկ առաքիւնին ոչ երկիւղէ գեհեհին, եւ ոչ ի շահից արքայութեանն ական ածէ, այլ ազատաբար առ Աստուած զսէրն ուղղէ: Այլ աւաղ, զի եւ ոչ վաճառականապէս վասն բարի խոստմանցն Հաւանիմք Աստուծոյ, այլ բանսարկուին՝ որ յառիթս գեհեհին⁴ զմեզ ստիպէ⁵ ի բարկութիւն, ի փառամոլութիւն, ի պակշտութիւն, որք եւ առանց գեհեհին⁶ ըստ ինքեանց են փախչելիք: Զորս ի բաց մղեալ՝ ուղղեսցուք զհեղութիւն, զխոնարհութիւն, զգաստութիւն, աւրինակ ոչ բարկանալոյ

¹ ԱԲ ԳՄԱ

² ԱԲ զՄԵՂԱՊՐԱՆՍԱՆ

³ Բ զԳԱՍՏԱՆԱԿԱԼԸ

⁴ ԱԲ զԵԻԵՆՈՅՆ

⁵ ԱԲ ԸՍՏԻՊԱԷ

⁶ Ա զԵԻԵՆԻԹՆ

առնելով ի Պետրոսէ՝ /20ա/ որ մանաւանդ հեզութեամբ հավանեցոյց զխստասիրտն¹, զոր եւ աստ է տեսանել²:

[ԳԼՈՒԽ Է.]

Լուեալ, ասէ, զայս՝ զղջացան ի սիրտն³ իւրեանց եւ ասեն ցՊետրոս եւ ցայլ առաքեալսն⁴. Զի՞նչ գործեսցուք, արք⁵ եղբարք (Բ. 37):

Յոյժ զաւրաւոր է հեզութիւն քան զխստութիւն, զի արագագոյն խթելով զսիրտս ազդաւղ քանիւ զարթուցանէ: Զի որպէս զանզգայեալ մարմինն ոչ խոցելով ոք ածէ ի զգայութիւն՝ այլ կակղացուցիչ դեղովք, այսպէս զանիրաւութիւն ի խիստ ոգւոյ ոչ ցասումն ի բաց հանէ կամ նախատինք, այլ մանաւանդ հեզութեամբ առ նա մատչելն: Այսպիսի ինչ արար Պետրոս. յիշեցոյց նոցա զիւրեանց յանդգնութիւնն՝ հեզաբար եւ ոչ կշտամբելով, ասաց եւ զպարզեւան Աստուծոյ, եւ զնոսին էած վկայս: Եւ չեւ եւս յերկարեալ զբանն՝ պատկառեցին ի մեծ հեզութենէ նորա, զի առ խաչաւղսն Տեառն իւրոյ եւ ծարաւիսն արեանն հայրաւրէն գթովք խաւսեցեալ լինէր, ուստի եւ ոչ պարզաբար հաւանեցան, այլ եւ պարսաւեցին զինքեանս: Վասն զի միշտ այսպիսի են բարք մարդկան: Զի յորժամ ասեմք զոք անիրաւ կամ թիւր գոլ, զընդդէմսն ճեպի ցուցանել, այլ թէ ասեմք զնա ոչ անիրաւեալ, ինքն վաղվաղէ ասել զինքն անիրաւ, զի վիճասէր է ազգ մարդկան:

Սմին վասն Պետրոս ոչ պարսաւեաց զնոսա, այլ ցածութեամբ զիջոյց ի զղջումն. մինչեւ ասել նոցա ցպետրոսեանս «Զի՞նչ գործեսցուք, արք եղբարք»: Զորս վերագոյն արբեալս ասէին, արդ եղբարս կոչեն, ոչ այնքան առ հաւասարս ինքեանց զնոսա ունել ցուցանելով, որչափ ի գութ խնամոց առ ինքեանս զնոսա յորդորելով: Եւ դարձեալ. զի նախ նա արժանացոյց կոչել զնոսա եղբարս: «Զի՞նչ արասցուք» ասեն: Ոչ ասացին իսկոյն, թէ ապաշաւեմք, այլ զինքեանս նոցա յանձն արարին, որպէս ալէկոծեալն նաւավարին եւ հիւանդն⁶ բժշկին զամենայն ինչ յանձն առնեն, այսպէս եւ նոքա խոստովա-

¹ Բ գխտասիրտսն

² Բ տեսանել զի

³ Բ սիրտս

⁴ Ա ցառաքեալսն] ցայլ առաքեալսն

⁵ Աբ > արք

⁶ Բ զհիւանդն

նեցին զինքեանս ընդ անյոյսս¹ կենաց, զի ոչ ասացին, թէ զիա՞րդ կեցցուք, այլ թէ «Զի՞նչ արասցուր»:

Ասլ Պերրոս, դարձեալ ընդամենեցունց նա պատասխանէ. Ապաշաւեցէք, եւ մկրտեսցի իւրաքանչիւր որ ի ձէնջ (Բ. 38):

Ոչ ասաց իբր նեղելով, թէ տանջեալք լերուք, այլ պարզաբար «ապաշաւեցէք», իբր թէ² լալ կամ ափսոսել: Եւ ոչ ասաց հաւատացէք, այլ թէ «մկրտեսցիք», զի զհաւատնսն մկրտութեամբն առցեն: Եւ չասաց զմկրտիլն ի խաչն եւ ի մահն, այլ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի, խոստովանել զայն, զոր ուրացանն, զի այս է սկիզբն բարեաց՝ յորմէ եւ զայլսն կարէին գիտել: Վասն որոյ նախ զգիւրագոյնն ասէ զունաւղն բազում պարզեւեաց, այսինքն՝ զմկրտելն: Եւ բարուք յաւել զիւրաքանչիւրն, զի մկրտութեանն լուացումն ոչ համանգամայն է բոլոր աշխարհի որպէս ջրհեղեղն, այլ ուրոյն ուրոյն հաւատով մատուցելոցն աւր ըստ աւրէ: Ապա եւ զչահն ասէ, զոր յոյժ փափաքէին լսել, թէ զինչ իցեն արդիւնք մկրտութեանն: «Ի թողութիւն մեղաց, ասէ, եւ ընկալօք զաւերիս /20թ/ Վոգույն Սրբոյ» (Բ. 38): Արդ, եթէ «թողութիւն մեղաց» եւ «զաւերիս Վոգույն» պարզեւ ունի մկրտութիւնն, ապա ընդէ՞ր հեղգայք:

Եփր. Զի «թողութիւն», որ ծածկեալ է ի մկրտութիւն նորա, քաւիչ լինի ձեզ յանաւրէնութենէն, զի ի խաչ հանէք զնա, եւ յորժամ քաւիք եւ սրբիք, ապա եւ պարզեւեաց Հոգւոյն, զոր տեսէքս ի մեզ՝ արժանի լինիք եւ դուք: Եւ հաւանական առնէ զբանն եւ ասէ. «Զի ձեզ են աւերիքս եւ որդոց ձերոց» (Բ. 39): Յայտ է առ ի Յովելեայ աւետարանեալն, թէ «Նեղից յՈգույ իմոյ» (Բ. 17):

Յոհ. Մեծ են պարզեւքն, յորժամ եւ զորդիսն եւս հաղորդս եւ ժառանգս բարեացն ունիցին: «Եւ ամենայն հետաւորաց, ասէ, զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր» (Բ. 39): Այսինքն հեթանոսաց, այլ նախ մանաւանդ ձեզ մերձաւորացդ: Եւ տե՛ս յո՞րժամ ասաց «հետաւորաց», յորժամ եզիտ զնոսա զգաստացեալս մեղադրելով անձանց, զի ոգի յորժամ զինքն յաղագս յանցանաց իրիք ըստգտանաւք դատապարտէ, ոչ կարէ մախալ ընդ այլոց բարիս:

¹ ԱԲ անյոյսս

² ԱԲ > թէ

Եւ այլովք բանիւք բազմաւք վկայութիւն դնէր եւ մխիթարէր գնոսա եւ ասէր. Ապրեցարուք յազգէ ասարի խոփորելոյ յայսմանէ (Բ. 40):

Ոչ շփացութեամբ իբրեւ առ ցոյցս ինչ յերկարէ զբանս մատենագիրս, այլ մանաւանդ համառատէ սոսկ անցանելով, թէ եւ «այլովք բանիւք»: Եւ ոչ մի ըստ միողէ զասացեալսն ի մէջ բերէ: Բայց դու տե՛ս զիա՞րդ յայտնիս եւ կատարեալս տայ զցոյցս վարդապետութեանն սուղ բանիւս. զի վկայութիւն դնելն երկիւղ արկանելոյ եւ զգուշութեան է ցոյցք, որոյ սակս եւ զփոշի ոտիցն այլուր թաւթափէին: Իսկ մխիթարելն սիրոյ եւ քաջալերս կենաց տալոյ:

Ապրեցարուք, ասէ, յազգէ ասարի խոփորելոյ (Բ. 40):

Խոտորեալ ազգ յաղագս առժամայն ներկայից հրէիցն ասաց, որք յայնժամ խոտորեցան ի Քրիստոսէ, որով առաւել առժամայն կշտամբին եւ պատուհասին մարդիկ ի չարում գործոջ ըմբռնեալք, որպէս բանիւս այսու խաչաւդքն¹ ահա, յորոց ի բաց կտրելով զլսաւդսն՝ յորդորէ ի հաւատս Քրիստոսի, եւ ցուցանէ, թէ հաւատքն զնոսա յայնպիսի չարէն² ազատէ: Այս է³ «ապրեցարուք»:

Ոմանց յաւժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան, եւ յաւելան յաուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք⁴ (Բ. 41):

Հայեաց ի փրկելոցն բազմութիւն՝ որ առաւել քան զնշանսն քաջալերեալս եւ զաւրեղս առնէր զառաքեալսն. զի ընկալեալ զբանն գովեցին եւ երկիւղիւ լիով մկրտեցան, եւ նոյն ժամայն ընկալեալ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ՝ իսկոյն առ բարևոք վարս եղեն փոխադրեալք: «Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան ատաքելոցն, եւ հաղորդութեա եւ բեկանելոյ⁵ հացին եւ աղաթից» (Բ. 42): Երկու առաքելութիւնս համանգամայն ցուցանէր⁶ զնոցանէ, միաբանութիւն եւ ժուժկալութիւն, զի հանապազաւր ուսուցանէին զնոսա⁷ առաքեալքն, եւ իբրեւ զնորագոյն մանկունս սնուցանէին հոգեւոր կերակրով, |21ա| ոչ բաւականացեալք առ նոսա ասացելովքն, զի այն հաւա-

¹ Ա խաչեցօղքն

² Բ չարեմ

³ ԱԲ եւ] է

⁴ ԱԲ հազար

⁵ ԱԲ հաղորդութեամբ ի բեկանելոյ] հաղորդութեան եւ բեկանելոյ

⁶ ԱԲ ցուցանէ

⁷ ԱԲ գնա] գնոսա

քեաց ահա¹ զնոսա ի հաւատոս: Իսկ զկնի այնր ցանկ ուսուցանելն, թէ զինչ պարտ է հաւատացելոց առնել, խրատէր: Եւ տե՛ս ապա զնոսա ի կերակուր, յաղաւթս եւ ի հաղորդութիւն ամենայն կարեաց, միաբանեալս յամենայնն հասարակաց եւ ժուժկալութեամբ:

Եւ լինէր ամենայն անձին ահ եւ երկիւղ (Բ. 43):

Յայտ է, զի ոչ հաւատացելոցն միայն. նախ զի յանկարծ իմն տեսանէին այնպէս փոխադրեալս զնոսա, զի հրեշտակք այն ինչ եղեալք՝ միայն յաղաւթս եւ յունկնդրութիւն բանին ժուժկալէին²: Եւ դարձեալ ի յոլով նշանացն եղելոց՝ յաճախէր երկիւղն: «Զի բագում նշանք եւ արուեստք ի ձեռս առարկոցն գործէին» (Բ. 43): *Զի որպէս առ Քրիստոսիւ՝ նախ նշանքն գործէին ի նմանէ, եւ ապա վարդապետութիւն, եւ դարձեալ նշանք, նոյնպէս եւ աստ, որով աճէր երկիւղն հանապազ: Այլ ոչ ասէ աստանաւր զվարդապետութիւնն, կամ զբազում նշանն մի ըստ միոջէ, այլ համառուտ անցանէ, զի գիտասցուք՝ զի ոչ զամենայն ինչ գրեցին ոչ Քրիստոսին եւ ոչ զառաքելոցն:*

Ամենայն հաւաքացեալքն էին ի միասին, եւ ունէին զամենայն ինչ հասարակաց (Բ. 44):

Տե՛ս զաճումն նոցա ի բարիսն վաղվաղակի: Զի ոչ տեղեալ միայն եւ վարդապետութեամբ եւ աղաւթիւք էր հաղորդութիւնն, այլ եւ քաղաքաւարութեամբ, զի ունէին զամենայն ինչ հասարակաց իբր գտէրունիս եւ ոչ անձանց: Քանզի տեսին, թէ³ Հոգւոյն Սրբոյ պարգեւքն հասարակաց էին, եւ ոչ ոմն քան զոմն ունէր յոլովագոյն, վաղվաղակի եւ ինքեանք զգոյսն հասարակեցին սիրով. զի սէրն իսկ է պատճառ ամենայն բարեաց: Ամենեքեան, ասէին, միաբան, եւ ոչ ոմն էր եւ ոմն ոչ, զի վաղվաղակի արմատն չարեաց ազահոլութիւնն ի բաց հատաւ:

Եւ զսպացուածս եւ զինչս վաճառէին եւ բաշխէին ամենեցուն, ում զիարդ պիտոյ ինչ լինէր (Բ. 45):

¹ ԱԲ > ահա

² ԱԲ ժուժկալեալ էին

³ ԱԲ թէ զի] թէ

Տե՛ս զգաւրութիւն Հոգւոյն ո՛րչափ փոյթ եւ երկիւղ¹ արկ ի նոսա: Վաճառէին զգոյսն, որպէս եւ Քրիստոս ասաց, եւ բաշխէին ոչ վայրապար որպէս ելլենացւոց² իմաստունքն, յորոց ոմանք զգոյսն լոկ ընդ վայր թողին, եւ այլք ոսկի բազում ի ծովն ընկեցին, իբրութէ չէր հնար բարւոք ուղղել զայն բաշխելով, որ էր անմտութիւն: Այլ սոքա «բաշխէին», ասէ, որոց պէտք էին, եւ «Խնքանք հանապազաւր կանխէին միարան ի փաճարն» (հմմտ. Բ. 46): Քան զերիս հազարս աւելի գոլով ելանէին հանդերձ առաքելովքն բազում համարձակութեամբ, զի վայելելով աւր ըստ աւրէ վարդապետութեամբն նոցա՝ ոչ մարմնական ինչ իրս հոգային, այլ ի տաճարն ժողկալէին առ սովորական տեղին, յոլով սէր եւ պատկառանս ունելով: Զի եւ առաքեալքն ոչ մերժէին զնոսա անտի, եւ ոչ ի հրէական կարգացն տակաւին փոխէին ինչ, զի մի՛ ի հաւատն զնոսա վնասեսցեն, քանզի եւ ինքեանք իսկ անդ ի տաճարն կանխէին յաղաւթս:

Եւ առօրին րեկանէին զհացն եւ առնուին կերակուր ուրախութեան (Բ. 46):

Միայն «զհացն» ասացեալ՝ թուի ինձ զպահս եւ զխիստ վարս աղնարկեալ, զի կերակրոյ եւ ոչ փափկութեան հաղորդէին: Եւ թէպէտ |21բ| պահքն եւ ի բաց տալն ընչիցն կարէր զնոսա արկանել ի տրտմութիւն, այլ երկոքումբքն իսկ ուրախ էին, զի ուրախութիւնն առնէ զվայելումն, եւ ոչ յղփութիւն կերակրոց եւ ըմպելեաց³ յաճախութիւն՝ որ արկանեն ի ցաւս:

Եւ միամտութեամբ սրբիւ արինէին զԱստուած (Բ. 46-47):

Յայտ է, զի ողջախոհք եղեն վարուք. զի ոչ է հնար ի ցնծութեան լինել, ուր ոչ իցէ պարզամիտ յստակութիւն, զի սա իսկ՝ յայտնէ⁴, զառաքինութիւն նոցա, քան զընչիցն տուրս եւ զպահս եւ զաղաւթս՝ մեծագոյն գոլով միամտութիւնն: Այսպէս մաքրապէս աւրհնէին զԱստուած, զի այս է առաւել աւրհնել զԱստուած՝ պարզամտութիւն: Այլ տե՛ս զնոսա վաղվաղակի ընկալեալ զփոխարէնն: «Ունէին, ասէ, շնորիս առ ամենայն ժողովուրդն»: Յայտ է՝ վասն ընչիցն արհամարհելոյ եւ ողորմածութեանն, զոր առնէին, փափաքելիք ոմանք էին եւ

¹ ԱԲ ~ երկիւղ եւ փոյթ

² ԱԲ եղդենացւոց

³ Ա ըմբելեաց

⁴ ԱԲ յայտ առնէ] յայտ է

ցանկալիք. զի ո՞վ ոք ոչ սքանչանայ¹ ընդ նոցա պարզամտութիւնն: Եւ մի՛ զայս ինձ ասիցես, թէ քահանայապետքն դառն աչաւք հայէին ընդ նոսա որպէս եւ ընդ Քրիստոս, այլ զի առ ժողովրդեանն մեծարգի էին, թուի թէ եւ բազումս ի նախանձ բարուք կրանիցն յորդորէին: «Եւ Տէր յաւելոյր ի փրկեալսն հանապազար ի նոյն» (Բ. 47): Յիրաւի Տեառն վերագրէ զկոչումն փրկելոցն², զի նա ինքն զիրաքանչիւր ոք ի դէպ ժամու կոչէ՝ միաւորելով ընդ փրկեալսն: Որպէս ցուցանէ ահա զաւրինակ աճման հաւատացելոցն սքանչելեաւքս, զոր կամի պատմել:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Բայց հայեաց, զի բազում բարութեանց պատճառք են անստացուածութիւնն՝ բացադրութիւն առնելով ամենայն չարեաց, եւ ներքսադրութիւն անչարութեան ըստ անմեղ մանկանց: Այսպիսիք էին Յովսէփ եւ Դաւիթ եւ խորամանկանցն յաղթեցին: Զի որ գնայ³ միամտութեամբ, գնայ յուսով, գործակցէ այսմ եւ նեղութիւն եւ անձուկ, յաղաւթս եւ ի յոյսն Աստուծոյ զարթուցանելով զտագնապեալն, առ որ փութով հասանէ այցելութիւն⁴ բազմադիմի յեղանակաւք: Եւ լուր ահա որոց ի կարգիս:



¹ Աբ սքանչանայր

² Ա փրկելոյցն

³ Բ գնա

⁴ Աբ այցելութեամբ

[ԳՆՈՒԽ Ը.]

Պեպրոս եւ Յովհաննէս ելանէին ի փաճարն յինն ժամու աղաւթիցն (Գ. 1):

Բագու՛մ յոյժ երեւի սոցա միաբանութիւն. զի սմա ակնարկէր Պետրոս հարցանել զմատնչէն, եւ ի գերեզմանն սոքա¹ զուգընթացք, եւ յայն, թէ «Տէր, իսկ սա զի՞» (Յովհ. ԻԱ. 20), եւ այժմ յաղաւթս ժուժկալէին, կարգաւ եւ աւրինաւք զայն կատարէին եւ անդ աղաւթէին: Սմին վասն՝ ոչ ասէ, թէ ելին ի տաճարն յինն ժամ յաղաւթս կալ՝ իբր զնորոգ սկսեալ սովորութենէ, այլ թէ «ելանէին ի փաճարն յինն ժամու աղաւթիցն», զի ցուցցէ, թէ աւրէն իսկ էր հրէից աղաւթել ի ժամուն յայնմիկ, թերեւս ի Դաւթէ կարգեալ էր ժամն յեւթն ժամուցն աւրհնելոյ զԱստուած:

Ներս. կթօ. Զորոյ ելից Տէր զխորհուրդ յայնմ ժամու, փոխանակ մահուն վճռի, զոր ետես նախնի մարդոյն եւ արտաքսեաց, եմոյծ ի դրախտն զաւազակն ի սոյն ժամու, եւ ինքն անմահն մահացաւ. զի ընդ այլոցն դիմադարձութեանցն եւ ժամ ընդ ժամու կշռեսցէ ի բժշկելն զմեզ: Զի եւ մեք մի՛ տու/22ա/ժեսցուք ծուլութեամբ զաղաւթս ի դէպ ժամուցն: Եւ զի ընդդէմ յամելոյ ի մեղս չափեսցուք եւ զապաշխարութեանն ժամանակ:

Եւ էր այր մի կաղ յորաւայնէ մար իւրոյ (Գ. 2):

Յոհ. Զայլովք նշանաւքն, որ նախ քան զայս՝ զանց արար Ղուկաս, եւ զայս միայն յիշէ՝ որով զամենեսեան ի հիացումն շարժեցին, զհաւատացեալսն հաստատեցին եւ զայլսն ի հաւատս ձգեցին, զի իբրեւ զայս նշան դեռ եւս ոչ էին արարեալ: Քանզի բնական էր ախտն առ այրն, որ դժուարին եւ ի վեր է քան զարուեստ բժշկութեան: Քանզի քառասուն ամ կաղ գոլով ոչ ոք կարաց բժշկել զնա: Բայց տե՛ս եւ² զառաքեալսն՝ ոչ ի սկզբան զայս արարեալ, զի յամենայն փառասիրութենէ մաքուրք էին իբրեւ զվարդապետն իւրեանց, այլ յետոյ ուրեմն եկին յայս նշան մեծ՝ բժշկել զկաղն ի ծնէ:

¹ Աբ սոքոք

² Բ > եւ

«Զոր բարձեալ դնէին, ասէ, հանապազ¹ առ դրան փաճարին խնդրել ողորմութիւն» (Գ. 2): Յոյժ էր պատահարք վշտաց մարդոյն, զի եւ ոչ ի հարկաւոր կերակրոյն պաճարանս կարողանալ նմա գոյր հնար, այլ այլոց ոտիւք բարձեալ, որովք եւ նշանաւոր իսկ էր այրն, յախտէն՝ ի ժամանակէն եւ ի տեղւոյն, զի բառնալով տանէին զնա ի դուռն տաճարին, եւ մանաւանդ ի ժամ մտանելոյ մարդկան² ի տաճարին³:

«Խնդրել ողորմութիւն» ասէ: Զի մի՛ կարծեսցես⁴ վասն այլոյ իրիք կրեալ եւ եղեալ զնա անդ, այլ զի ողորմութիւնն⁵ առցէ: Եւ է՞ր վասն գտեղին յիշէ. առ ի յանդիմանել զանագորոյն բարս կրողացն զնա՝ որ ոչ մատուցին զնա առ Քրիստոս, որպէս եւ ոչ զերեսուներու թամեա հիւանդն: Թերեւս էին թերահաւատք ոմոնք նստեալ ի տաճարին, որք զբազումս յայսմանէ խափանէին: Եւ տե՛ս ահա, զի ոչ առ առաքեալսն զնա մատուցին՝ տեսանելով զնոսա մտեալս ի տաճարին եւ բազում սքանչելիս գործեալ: «Որոյ փեսեալ զՊետրոս եւ զՅոհաննն⁶ մտանելով ի փաճարն՝ աղաչէր ողորմութիւն առնուլ» (Գ. 3): Ողորմութիւն միայն առնուլ հայցէր, ոչ զիտելով, թէ ոյք ոմանք էին, այլ զի իբրեւ առաքիւնի արանց եւ արդարոց ետես զձեւ նոցա յատուկ յայլոց: «Հայնցաւ ի նա Պետրոս Յոհաննու⁷ հանդերձ եւ ասէ. Հայնաց ի մեզ» (Գ. 4): Զայս ասաց, զի զմիտս նորա ի բարձրագոյն իմացուածս զարթուցէ, այլ նա եւ ոչ այնպէս զգաստանայր, այլ ստէպ ստէպ թախանձեցուցանէր, զոր եւ ասէ. «Նա դարձաւ ի նոսա եւ ակն ունէր առնուլ ինչ ի նոցան» (Գ. 5): Զի այնպիսի է տնանգութիւնն⁸, որ եւ առ հրաժարեալսն ի տալոյ ստիպով հայցել հարկէ: Ամաչեսցուք ապա եւ մի՛ յաղաւթիցն արտաքսելցուք, այլ մնասցուք՝ թախանձելով զԱստուած:

Եւ ասէ Պետրոս (Գ. 6):

Տե՛ս զՅովհաննէս, զի յամենայնի լուէ եւ զգահերիցութիւնն⁹ այլ ոչ խնդրէ, այլ Պետրոս ընդ նորա տայ պատասխանի: «Արձաթ եւ ոս-

¹ Աբ հանապազօր

² Աբ նմա] մարդկան

³ Բ ի տաճարն

⁴ Ա կարծիցես

⁵ Բ ողորմութիւն

⁶ Ա յովհաննէս

⁷ Ա յովհաննու, Բ յովհաննէս] յոհաննու

⁸ Աբ տնանկութիւն

⁹ Բ զգահերիցութիւն

կի ոչ ունիմ» (Գ. 6): *Ոչ ասաց, թէ աստ ոչ ունիմ, որպէս մեք ասեմք, այլ թէ բնաւ ոչ ունիմ: Եւ զիա՞րդ՝ անտե՞ս առնես զհայցաւզս: Ոչ: Այլ զոր ունիմս յայսմանէ առ: Եւ ոչ ասաց, թէ պատուականագոյն քան¹ զոսկի տաց քեզ, զի այն յարդեանցն յայտնէր: Եւ զի՞նչ իցէ, զոր տասդ: «Յան/22բ/ուն Յիսուսի Քրիստոսի² Նագովրեցոյ արի՛ եւ գնա՛» (Գ. 6): Եւ միշտ զնագովրեցիւն անուանեն, զի առ ժամայն այն ինչ էր խնդրելի, զի հաւատասցեն ի նա: «Եւ կալեալ գաջոյ ձեռանէ նորա յարոյց գնա՛»³ (Գ. 7): Այսպէս եւ Քրիստոս՝ երբեմն բանիւ բժշկէր, եւ երբեմն ձեռս զնելով, ուր⁴ տկարքն էին ի հաւատս, նոյնպէս եւ սա, զի մի՛ թուեսցի ինքնին լինել նշանն՝ կալաւ զաջոյ ձեռանէն⁵ եւ յարոյց զնա: Եւ այս ինչ առնէր յայտնի զյարութիւնն Քրիստոսի, զի յարութեան էր պատկեր եւ աւրինակ յարուցանելն⁶ զկաղն: Սմին վասն եւ յանուն նորա առնէին:*

Այսպիսիք էին հրեայք՝ կաղք ի հաւատս, որոց պարտ էր խնդրել զառողջութիւն, այլ կացին կաղացեալք, զի գետնաքարչք եւ ընչասէրք էին: Այլ զսա Պետրոս ոչ արար անտես: Եւ հայեաց զագատութիւն անձինն, զի ոչ առ ցոյցս արար զբարերարելն, զի բերանն եւ ձեռն զամենայն վճարէր. եւ նա ոչ զոք⁷ ի փարթամաց խնդրեաց առ բժշկութիւն, եւ ոչ ասաց, թէ սմա բժշկելով՝ ոչ լինի յայտնի եւ մեծ սքանչելիքս: Նա զի⁸ ոչ գնոյ ակնկալութիւն գոյր ի նմանէ, եւ ոչ առաջի ոմանց բժշկէր զնա, եւ ոչ տանէր ի ներքս, ուր էր բազմութիւնն⁹: Եւ ոչ ի ներքս մտեալ քարոզեաց զեղեալն, այլ ի համեստ ձեւոյ իւրմէ զկաղն ձգեաց առ հայցուածս, եւ ետ նմա, զոր ոչ ակն ունէր:

Յանուն Յիսուսի Քրիստոսի արի, ասաց (Գ. 6):

Եւ անդէն հաստատեցան բարձք նորա եւ սրունք. ի վեր վագեաց եւ սկսաւ գնալ: Սքանչելի էր եւ հաւատք առնն, զի փութապէս հաւատաց լինել բժշկութեանն: Զի յամեալքն յախտս հազիւ կարեն

¹ Ա քանն

² ԱԲ > քրիստոսի

³ Ա գնայ

⁴ Ա որ] ուր

⁵ ԱԲ ձեռանէ

⁶ Բ յարուցանել

⁷ ԱԲ ոք

⁸ Ա զի եւ] զի

⁹ Բ բազմութիւն

Հաւատալ, իսկ նա ընդ տեսութիւնն եւ ընդ լսելն զբանն՝ Հաւատաց եւ բժշկեալ եղեւ: «Ի վեր վագեաց եւ եմուր ընդ նոսա ի փաճարն. գնայր եւ վագեր եւ արհնէր գԱստուած» (հմմտ. Գ. 8): Արդ, քանզի տկար էին ոտքն եւ ոչ Հաւատեալք, եւ վասն այնորիկ վագվագէր¹ փորձելով² թերեւս զանձն իւր եւ յորովագոյն առնելով զքննութիւնն:

Եփր. Այլ ոմանք ասեն, թէ վասն զի անփորձ էր ոչ գիտէր գնալ, զի չէր երբեք գնացեալ:

Յոռ. Իսկ սքանչանալ գայ, զի եւ ընդ նոսա ի տաճարն եմուտ, զի ոչ նոքա գնա ածին, այլ ինքն Հետեւէր եւ զերախտաւորսն ցուցանէր եւ աւրհնէր գԱստուած: Զի ոչ ընդ նոսա միայն սքանչանայր, այլ ի ձեռն նոցա գԱստուած աւրհնէր եւ ոչ դադարէր, այլ մասն ինչ առ Հեշտութեանն որպէս ի խաղս իջեալ վագս առնոյր, եւ մասն ինչ յար կալով ընդ³ նոսա, խնոյր զբերանս անհաւատիցն: Եւ զի մի՛ կեղծաւորութիւն իրքն կարծիցի վագելով գնայր, զի այն չէր կեղծաւորութիւն, զի թէ առ սովոյն վտանգի լոկ ի վայր կոխել ոչ կարէր, ոչ թերեւս վագվագէր եւ ցնծայր առաջի կրողացն գնա, զի մի՛ բաժանեսցին զառ ի յողորմութենէ տուեալսն նմա, զոր միայն իւր լինել կարծէր բաւական: Եւ այլագգ. զի ա՞րդ կեղծաւորէր վասն յուսոյ ընչից ի Պետրոսէ՛ որ ոչ ունէր ստացուած, այլ վասն զի գոհացաւ չէր նախ քան զբժշկիլն, եւ յետ առողջութեանն եւս առ Աստուած եւ առ նոսա բարեմիտ լինէր:

Եւ /23ա/ երես ամենայն ժողովուրդն, զի գնայր եւ արհնէր գԱստուած, եւ զիսէին, թէ սա էր⁴ առ Գեղեցիկ դրան փաճարին (Գ. 9-10):

Բարևոք ասէ, թէ ճանաչէին, թէ նա էր՝ ցուցանելով, զի իբրեւ զանծանաւթ զոմն Համարէին զայրն, որպէս զկուրէն իբրեւ զանծանաւթ⁵ ասէին. «Ոչ սա էր, որ նստէրն եւ մուրանայր» (Յովհ. Թ. 8): Նոյնպէս եւ աստ, Հագիւ ուրեմն յիշեն⁶, թէ սա էր, որ նստէր վասն ողորմութեան: Զի այսպիսի բառիւս վարիմք ի վերայ, որոց Հագիւ ճանաչեմք առ ժամն, ասեմք, թէ «յառաջ ճանաչէաք սա էր, այս նիչ ոմն»: «Եւ լցան զարմանալեալք ի վերայ նշանին, որ եղև» (Գ. 10): Վայելչապէս. զի

¹ Ա վագեր

² Ա վագեր փորձելով] փորձելով

³ ԱԲ առ] ընդ

⁴ ԱԲ սա էր, որ նստէր

⁵ ԱԲ իբր զի անծանօթ] իբրեւ զանծանաւթ

⁶ ԱԲ յիշէին

բնաւորեալ իսկ է նշան ի սքանչուամն ըմբռնել զտեսաւազան: Թերեւս զհինգ հազարացն ահնարկէ աստ, որ այսու նշանաւս հաւատացին:

Եւ մինչ նա ունէր զՊետրոս եւ զՅովհաննէս (Գ. 11):

Յայտ է՝ բժշկեալն, զի ոչ մեկնէր ի նոցանէ, գոհանալով զԱստուծոյ եւ զնոցանէ: Եւ քարոզէր ամենեցուն զեղեալսն: «Ընթացաւ ամենայն ժողովուրդն ի սրահն Սողոմոնի¹ զարմացեալք» (Գ. 11): Յայտ առնէ այսու՝ զբարեմիտ եւ զաննախանձ կամս ժողովրդեանն, որպէս զառաջին սքանչացեալսն երկիրղածս զոլ վկայեաց: «Եւ տեսեալ գնոսա Պետրոս զարմացեալս՝ արար պարասխանի» (հմմտ. Գ. 12): Դարձեալ Պետրոս որպէս ի սկզբանն ատենաբանէ: Այլ յայնժամ յարոյց զնա առ քարոզութիւնն իրքն, որ վասն լեզուացն էր, իսկ այժմ նշանն, որ եղեւ: Սմին վասն յայնժամ սկսանէր ի կատակելոյն, եւ այժմ ի տարադէպ կարծեացն, թէ «Ընդ մեզ զի՞ւր պշուցեալք» (Գ. 12): Տեսցուք ապա զհասարակութիւն եւ զզանազանութիւն այնր եւ այսր հրապարակախաւսութեան:

Արդ՝ սքանչելիք եւ այն եւ այս, եւ զարմացեալս եւ անդ եւ աստ, եւ բազմութիւն նմանապէս խմբեալք, եւ անգլիտացեալք նոքա եւ սոքա զգիրարդն եւ զուստին, եւ առաքելոցն ուղղեալ զկարծիսն, եւ հաւատալ բազմաց: Այլ զանազանին, զի այն ի տան, եւ այս ի տաճարին, զի յայտնի լիցի եւ բազումք հաւատացեն, անդ առանց բժշկութեան, եւ աստ մերձ կալով բժշկեալն քարոզէր զերախտիսն, անդ կէսք խաղ առնէին, եւ աստ ամենեքեան զարմացեալք, անդ հանդերձ մետասանիւքն խաւսէր Պետրոս, եւ աստ հանդերձ Յովհաննու միայն, զի այժմ ուժգնագոյն է եւ համարձակ ի յաճախութեանէ նշանացն: Սմին վասն եւ հաւատացեալքն անդ երեք հազարք, իսկ աստ հինգ հազարք: Զի այսպէս՝ առաքինութիւն բնաւորեալ է յառաջանալ միշտ եւ զաւրանալ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ուստի խրատեսցուք՝ նախ զփոքրն խլել զհարիս իբրեւ զերդումն եւ զծաղրաբանել, եւ սկսանել զբարին, եւ սովորել առանց ձանձրութեան, թէպէտ եւ յոյժ ի փոքունցն իցէ փութով ի մեծամեծս ելանէ, որպէս փոքր կայծակն ի դիզանել փայտից:

¹ Ա սողովմոնի

[ԳԼՈՒԽ Թ.]

Իբրև երես Պետրոս, պապասխանի եր ժողովրդեանն. Արք իսրայելացիք¹, զի՞ զարմացեալ էք ի վերայ այսոցիկ, կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ (Գ. 12):

Համարձակագոյն քան զառաջինն է այժմու հրապարակախաւսութիւնս, ոչ թէ վասն զի երկնչէին յայնժամ, այլ զի անդ ծաղրարարք գոլով լսողքն² ոչ հանդարտ/23բ/էին, զորս եւ յառաջաբանսն անդ՝ առ ինքն դարձուցանել կամելով ասէր, թէ «Ունկն դիք բանից իմոց» (Բ. 14): Իսկ այժմ վասն զի նշանն զսոսա յորդորեաց, եւ լի էին ահիւ եւ զարմացմամբ, ոչ կարաւտացաւ այնպիսի ինչ բանից, այլ այլ ազգ հնարեցաւ զնոսա շահել³: «Ընդէ՞ր, ասէ, հայիք ընդ մեզ, իբր թէ անձանց զաւրութեամբ արարաք զգնալ դորա»: Զայս ասելով նախ զայն կամի յայտ առնել, թէ ինքեանք արարին զսքանչելիսն, եւ ոչ տա թոյլ թերահաւատ լինել յեղելոցն՝ բայց զգուշանայ դարձեալ, զի մի՛ յայս եւեթ դադարեալ՝ վնասեսցին հաւատք նոցա. սմին վասն ի բաց մղէ յինքեանց զառ ի նոցանէ փառսն եւ զգովեստ, յԱստուած վերաբերելով զզաւրութիւն հրաշիցն, զի այնպէս քաջ մանաւանդ զանձինս փառաւորեսցեն արհամարհելովն փառս եւ ցուցանելով, թէ աստուածային իմն էր, որ ինչ ի ձեռն նոցա եղեւ: Քանզի այս իսկ է ախորժակ սրբոցն, ըստ որում եւ Դանիէլ ասէր. «Ես ոչ թէ իմաստութեամբս որ յիս է՝ զիպացի» (Դան. Բ. 30), եւ Յովսէփ՝ թէ «Աստուծով է մեկնութիւն երագոյն» (Ծն. Խ 8), եւ Դաւիթ թէ «Զարջ եւ զառիծ⁴ փողոպէի յանուն Տեառն» (Խմմբ. Ա. թագ. ԺԷ. 34, 36): Նոյնպէս եւ աստ Պետրոս՝ «Վասն եղևոյ նշանին, իմացարուք, ասէ, սքանչելարարն եւ մի՛ վրդովիր»:

Աստուած Արրահամու՝ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ⁵ (Գ. 13):

Միշտ զնախնիսն յիշէ եւ ի նոսա յարի, զի մի՛ թուիցի նոր ինչ կրաւնս ի ներքս մուծանել: Սմին վասն անդ զԴաւիթ յիշեաց, եւ աստ զաբրահամեանսն: «Աստուած հարցն մերոց փառաւորեաց զՌդի իր զՅիսուս»: Տե՛ս ընդ ցածութեանն եւ զիմաստութիւնն, ոչ ասաց չփացութեամբ վաղվաղակի, թէ արդ հաւատացէք, ահաւաղիկ տեսա-

¹ Ա իսրայելացիք

² ԱԲ լսողքն

³ ԱԲ շահելոյ

⁴ Բ զառեւծ

⁵ ԱԲ յակովբայ

նէք, զի քառասնամեայ կաղն անուամբն Յիսուսի յարեալ, զի մի՛ վիճաւդս արասցէ զնոսա: Այլ առ ժամայն գովէ զնոսա յիշմամբ նախնեացն, զի սքանչացեալ էին ընդ եղեալսն. եւ ապա զԱստուած¹ ի մէջ բերէ, եւ ի ծնողէ² անտի կոչէ զՅիսուս Որդի Աստուծոյ: Եւ դեռ եւս ոչ ասէ, թէ «Յիսուս զսա բժշկաց», եւ մանաւանդ զի նա իսկ բժշկեաց: Այլ զի³ նչ. «Աստուած փառաւորեաց գորդի իր զՅիսուս» (Գ. 13): Եւ յորժամ յԱստուած ապաւինի ցուցանելով ի նմանէ զամենայն, յայնժամ առանց ահի ինչ զարհուրեցուցանէ զնոսա, զի վերագոյն ասէր, զՅիսուս զայր ցուցեալ յԱստուծոյ ի ձեզ նշանաւք, եւ այժմ, թէ «Աստուած փառաւորեաց գորդի իր զՅիսուս»:

Եւ զի մի³, թէ զիա՞րդ զաւրինագանցն փառաւորէր Աստուած, ցուցանէ, թէ յԱստուծոյ Հաւրէ միշտ փառաւորեալ էր նա նշանաւքն, զոր արար ի միջի ձերում: Քանզի խոնարհաբար դարձեալ սկսանի ճառել զնմանէ որպէս յառաջնումն ի խաւսսն, եւ ապա յամելով բանիւն ի ճառս չարչարանացն՝ ի բարձրագոյնսն Հանէ լսաւդսն⁴: Սմին վասն զիջանելովն⁵ ասէ. «Փառաւորեաց զՅիսուս, զոր դուքն մաքնեցէք եւ ուրացարուք առաջի Պիղատոսի ի դարելն նորա արձակել» (Գ. 13): Յիշեցուցանէ նոցա զդատաստանն, որ եղեւ առաջի Պիղատոսի: Զի թէ կամիցին ի միտ առնուլ՝ ոչ էր Յիսուս աւրինագանց, եւ թէ այնպիսի ոք էր, թերեւս եւ ոչ Պիղատոս ի բաց արձակէր զնա:

|24ա| Եւ ոչ ասաց ի կամելն նորա արձակել, այլ «ի դարելն»: Զյոյժ անամաւթուլիւն եւ զկարծրուլիւն նոցա յայտ առնելով աստ՝ կրկին դնէ զամբաստանութիւնն⁶: Զի Հեթանոսն՝ եւ որ յայնժամ առաջին ետես զնա, ի բաց արձակէր, եւ այն զի ոչ ինչ մեծամեծս ետես կամ լուաւ ի նմանէ, այլ զի զիտաց զի առ նախանձու մատնեցին զնա: Իսկ նոքա, որ բանիցն եւ նշանացն սնընդակիցք էին, զհակառակն այնմիկ առնէին: Եւ ի դատելն Պիղատոսի արձակել, զի մի՛ կարծեսցեն շնորհ ինչ առնել նմա, ինքն իսկ ասաց, թէ «Է՛ ձեր սովորութիւն, զի արձակեցից ձեզ այր մի» (հմմտ. Յովհ. ԺԸ. 39):

Այլ դուք գտորբն եւ զարդարն ուրացարուք, ասելով չիք մեր թագաւոր բաց⁷ ի կայսերէ, եւ խնդրեցէք այր մի մահապարտ շնորհել

¹ Ա գաստուած դարձեալ

² Բ ծնողէ

³ ԱԲ մի ասիցեն

⁴ Բ զլսողն

⁵ ԱԲ զիջանելով

⁶ Բ զամբաստանութիւն

⁷ ԱԲ բայց

ձեզ: Որ գայլս սպանանէր աւագակն՝ հայցեցէք ի բաց արծակել, եւ որ գսպանեալսն¹ կենագործէր՝ զառաջնորդն կենաց սպանէք (հմմտ. Գ. 14-15):

Յոյժ դժուարացոյց զծանրութիւն չարեացն: Նախ զի ոչ խնդրեցեք, ասէ, զանմեզն: Եւ զի ի կամելն Պիղատոսի արձակել ոչ կամեցայք, եւ դարձեալ ոչ ուրացայք, այլ եւ սպանէք եւս: Յոյժ զարհուրեցուցանէ զնոսա, քանզի յերկիրդիւ եւ ընդ ձեռամբ ունէր զնոսա: Իսկ յառաջնում նուագին ոչ ինչ այսպիսի ասաց զնոսա², այլ այժմ յորժամ եւ զգալ կարէին զասացեալսն, զի որպէս արբեցելոցն ոչ ինչ ասեմք մինչեւ սթափեալ յարբեցութենէն զգաստանան, եւ ապա զահն յաճախեմք, այպէս Պետրոս՝ յորժամ կարէին ի միտ առնուլ, յայնժամ թեքեաց զլեզուն եւ աճեցոյց զամբաստանութիւնն, թէ «Չոր Աստուած փառաւորեաց, դուք մարմնեք, գոր Պիղատոս արծակեաց, դուք ուրացարուք» (հմմտ. Գ. 13):

Այլ տես, թէ ո՛րպէս ի ծածուկ զգալութիւն նորա ցուցանէ, թէ «գանձն իւր յարոյց», որպէս յառաջնում կացրդականումն ասաց, թէ «Չի հնար բմբոնել նմա ի մահուանէ», եւ աստ՝ թէ «Չառաջնորդն կենաց սպանէք»: Ուրեմն ապա ոչ յայլմէ ունի զկեալն. զի որպէս առաջնորդ սպանութեան ասի, որ զսպանութիւնն ուսուցեալ իցէ, եւ առաջնորդ կենաց՝ որ յինքենէ ունի զկենդանութիւնն: Եւ ապա զիջանելով ընդ նոսա՝ խոնարհագոյնս բարբառի: «Չոր Աստուած յարոյց, ասէ, ի մեռելոց» (Գ. 15): Իբրեւ գործակից յայտ է, զի ոչ տկարանայր զանձն յարուցանել առաջնորդն կենաց³, որոյ անունն կանգնեաց զկաղն՝ որ չէր ընդհատ ի մեռելոց: Եւ ուստի՞ զիտասցուք. «Մեր իսկ եմք վկայք» (Գ. 15) ասէ: Տե՛ս, զի ոչ այժմ ի մարգարէսն ապաւինի, այլ յանձն իւր, զի այնուհետեւ արժանի հաւատալոյ ոմն էր: Զի անդ յասելն, թէ յարեաւ, զ Դաւիթ հաճ վկայ, իսկ այժմ զգուռնդն առաքելական:

Եւ հաւարովք անուան նորա գսա, գոր փեսանէքս⁴ եւ գիպէք, հաստարեաց անուն նորա, եւ հաւարքն, որ նովալ⁵ եպուն դմա զառողջութիւնս գայս յանդիման ձեր ամենեցուն (Գ. 16):

Կամեցեալ ասել զիրս փրկութեան նոցա, թէ՛ «Դարձարուք ի ջնջել զմեղս ձեր» (Գ. 19), եւ նախ քան զայն ասել, ճանապարհ գործելով հա-

¹ Ա գսպանեալսն

² Բ ցնոսա

³ ԱԲ կենացն

⁴ Բ տեսէքս

⁵ ԱԲ > նովալ

Լատոյ նոցա, յառաջեաց զնշանն ի վերայ էած, զոր եւ ինքեանք իսկ կամէին, մանաւանդ լ/24բ/սել եւ գիտել, թէ զիարդ կամ յուամէ եղեն սքանչելիքն, զոր յայտնէ ասելով, թէ հաւատքն, որ ի Քրիստոս՝ զամենայն ինչ վճարէ: Եւ ոչ ասաց ի ձեռն անուանն, այլ անուամբն: Եւ դեռ եւս ոչ ասէ, թէ ի նա հաւատացէք, զի տակաւին ոչ վստահանայր, այլ թէ «հաւաքքն, որ նովա»: Եւ¹ զի մի՛ նուազ երեւեսցի ասելն, թէ «նովա», ասաց, թէ անուն նորա հաստատեաց զդա:

Եւ ապա յորդորելով ի հաւատս, ածէ ի վերայ, թէ «հաւաքքն, որ նովա՝ նորուն դմա գառողջութիւնդ գայդ²» (Գ. 16): Եւ դիտեա³, թէ որպէս յամենայնի զնոսա կոչէ վկայս. զի վերագոյն ասէր, «Որպէս եւ դուք իսկ գիտք», եւ աստ՝ թէ վկայ ձեզ «առողջութիւնս, զոր տուաք սմա, յանդիման ձեր ամենեցուն»: Զի զայն⁴, թէ անուամբն Յիսուսի եղեն սքանչելիքն, ո՞չ գիտէին, այլ թէ կաղ էր եւ արդ առողջացեալ՝ տեսանէին իսկ: Այլ սոքա, զոր⁵ արարին, զայն խոստովանին, թէ ոչ իւրեանց զաւրուժեամբ զայն արարին, այլ «անուամբն Յիսուսի»: Զի թէ չէր այսպէս, եւ ոչ ճշմարտապէս տեսեալ էին զնա, զի յարեալ՝ ոչ ապա ախորժէին զփառս մեռելոյն հաստատել⁶, այլ յաւէտ եւս զինքեանցն, եւ մանաւանդ առաջի այնոցիկ՝ որք ի նոսա իսկ հայէին իբրեւ ընդ սքանչելարարս:

Եւ քանզի յոյժ սաստկապէս բուռն եհար զնոքաւք եւ զարհուրեցոյց՝ ցուցանելով յարուցեալ զխաչելեալն ի նոցանէ, զի մի՛ հատցէ զյոյս նոցա, որ խաչեցին զնա, եւ սպառսպուռ կորիցեն՝ դարձաւ թողացոյց նոցա՝ տալով զիշխանութիւն ապաշխարութեան: Եւ վաղվաղակի եղբարց անուանակոչութեամբ⁷ մխիթարեաց զնոսա, եւ զոր ինչ նոցա պարտ էր ասել՝ ինքն ասէ. «Եւ արդ եղբարք, գիտեմ զի անգիտութեամբ արարէք՝ որպէս եւ իշխանքն ձեր» (Գ. 17): Եւ վասն զի անդ յառաջ ոչ ասաց այսպիսի ինչ յաղագս Քրիստոսի մեծագոյնս, այլ միայն, թէ «Ճշմարտի գիտացել ամենայն րունդ Իսրայլի, զի Տէր գնա եւ Աստուած արար» (Բ. 36), բայց աստ եւ ողորջանս մատուցանէ, թէ «անգիտութեամբ արարէք»: Անդ զտեղի⁸ առնոյր, զի նոքա տացեն

¹ Բ > եւ

² Բ գղա] գայդ

³ ԱԲ գիտեայ] դիտեայ

⁴ Բ այն

⁵ Բ որ

⁶ Բ հաստատելոյ

⁷ ԱԲ անուանակոչութեամբ

⁸ Բ տեղի

պատասխանի, իսկ այժմ, զի ընտանացեալք¹ եղեն՝ ինքն նոցա պատասխանէ:

Եւ զի չէր յանգիտութենէ, յայտ է, զի զաւագակն² հայցել, եւ զդատեալն արձակել ոչ առնուլ՝ այլ եւ սպանանել՝ զիարդ էր անգիտութեան: Սակայն ետ նոցա տեղի ոչ ուրանալ զեղեալն, այլ զղջանալ: Արդ, զի զանպարտն սպանին՝ գիտէին, բայց թէ զառաջնորդ³ կենաց եւ զտէրն փառաց՝ ոչ գիտէին, զոր եւ ինքն Քրիստոս ասաց, թէ «Ոչ գիտնն զինչ գործնն» (Ղուկ. 34): Եւ ոչ միայն զնոսա ազատէ յամբաստանութանց, այլ եւ զիշխանսն եւս զճարտարապետսն չարեաց: Եւ զայս հանճարով. զի թէ ի դատախազութիւն զբանն արտաբերէր, վիճականս զնոսա առնէր, զի չարագործք ոք յորժամ պարսաւիցի, ճեպի ուժգնագոյնս լինել ի պատասխանիս: Սմին վասն ոչ ասաց այժմ դարձեալ, թէ խաչեցէք սպանէք, այլ թէ «արարեք»՝ նեղութիւն տալով նոցա: Զի թէ իշխանքն եւ առաջնորդք անգէտք էին, քաջ մանաւանդ սոքա, եւ եթէ նոցա թողաւ, |25| յաւէտ եւ սոցա: Արդ, մի՛ այս է պատասխանի, եւ երկրորդ՝ միւս նոր եւ սքանչելի, որպէս Յովսէփ ասէ, թէ «Աստուած առաքեաց զիս առաջի ձեր» (Ծն. ԽԵ. 5), եւ աստ, թէ յԱստուծոյ եղեւ: Եւ զոր ինչ վերագոյնն ամփոփելով ասաց, թէ «Սահմանեալ խորհրդով եւ կանխագիտութեամբն Աստուծոյ» (Խմբ. Բ. 23), զնոյն եւ աստ ասէ յայտնի եւ ընդարձակ:

Այլ Աստուած, ասէ, որպէս յառաջագոյն պատմեաց ի բերանոյ ամենայն մարգարէից զհարչարելն Քրիստոսի իրոյ, նոյնպէս եւ կարարեաց (Գ. 18):

Յուցանէ, թէ զոր ինչ կրեացն Յիսուս, ոչ էր ի նոցա զաւրուութենէ, այլ յայտնի ցուցեալ լինի ի մարգարէից, թէ «Ըստ Աստուծոյ կամացն եղն»: Եւ զոր հեզներով ասէինն, «Թէ որդի է Աստուծոյ՝ իջցէ այժմ ի խաչն, զի ասաց, թէ Աստուծոյ որդի եմ, արդ փրկեսցէ զդա, եթէ կամի զդա» (Մարթ. ԻԷ. 43), ոչ էր առ տկարութեան այն, զի ոչն էջ, այլ ըստ զաւրութեան, զի կամաւ Հաւր եկն յայն, որ կանխեաց քարոզեաց զնմանէ բերանով ամենայն մարգարէից: Եւ մի՛ ասացեն, թէ զիարդ այժմ զնա փառաւորեաց, որոյ յայնժամ աւգնել ոչ կամեցաւ, ածէ ի մէջ զմարգարէսն, թէ այնպէս պարտ էր լինել: Բայց ոչ զուրուք յիշէ զվկայութիւն, զորս իւրաքանչիւր ոք ի նոցանէ զխաչողացն ամբաստան եղեն⁴,

¹ Բ ընդանացեալք

² ԱԲ զաւակն] զաւագակն

³ ԱԲ զառաջնորդն

⁴ Բ եղէն

եւ զտանջանան, որ նոցա հասանելոց էր, քարոզեցին, ըստ այնմ, թէ «Տաց զչարս փոխանակ թաղման նորա (Ես. ԾԳ. 9): Եւ մեծացոյց զխորհուրդս չարչարանացն յաճախութեամբ մարգարէիցն, թէ ոչ մի ոք կամ երկու, այլ ամենեքեան իսկ ասացին, զորս եւ կատարեաց, ասէ, զի մի՛ կարծիցին պակաս ինչ լինել յասացելոցն:

Եւ զի մի՛ վստահացին՝ զԱստուծոյ տնաւրէնութիւնն պատասխանի գոյ ինքեանց, կանխեաց առաջին բանիւքն ըմբռնեաց զնոսա, զի առաջի Պիղատոսի ուրանալն նոցա ոչ էր ըստ Աստուծոյ, ի կամելն նորա արձակել: Եւ դատապարտէ զնոսա մարդասպանն, զոր հայցեցին եւ զանմեղն սպանին, թէպէտ առ ի նմանէ տնաւրէնութիւն¹ մեծ էր, որ մեռաւ եւ զմահ ելոյժ, որ միայն Աստուծոյ իմաստութեանն է ի ճահ զնոցա չարութիւնն յաւգուտ բոլորից վճարել:

Առ որս թէպէտ ի դէպ էր ասել, թէ «մի՛ կարծէք», թէ զի մարգարէքն զայսոսիկ² ասացին, կամ թէ զի ըստ անգիտութեան գործեցէք, թէ այսու ազատեալք լիջիք ի պատժոց: Այլ ոչ ասաց զայս, այլ յոյժ հեգութեամբ. «Արդ, ապաշունցէք» (Գ. 19) ասէ: Զի թէպէտ ըստ տնաւրէնութեան կամ անգիտութեամբ եղեւ, այլ մեծամեծս մեղայք: «Եւ այժմ ապաշունցէք եւ դարձարուք ի ջնջել մեղս ձեր» (Գ. 19): Ոչ ասաց դարձարուք ի մեղաց ձերոց, այլ «ի ջնջել զմեղս ձեր»³: Ոչ ասեմ միայն զյանդգնութիւնն⁴, որ ի խաչին, զի այն թերեւս ըստ անգիտութեան էր, այլ զի եւ այլ եւս մեղքն ձեր ջնջեցին, որ անդ ասաց «Մկրտեսօք իւրաքանչիւր որ ի թողութիւն մեղաց» (Բ. 38): Ապա եւ զշահն ցուցանէ. «Որպէս զի⁵ եկեացն ի վերայ ձեր ժամանակը⁶ հանգստեան⁷ յերեսաց Տեառն» (Գ. 20): Աստանաւր յաղագս հասարակաց յարութեանն պատմէ, զի այն իսկ է ճշմարիտ հանգստեան⁸ ժամանակ: Զոր եւ Պաւլոս հայցէ, թէ «Ի քաղաքի աստի հեծնք ծանրացեալք եւ ինկութեանն երկնից փափաք/25բ/եմք⁹» (հմմտ. Բ. Կրնթ. Ե. 2), զնոյն եւ սա ցուցանէ, թէ աշխատեալք էին եւ բազում պատերազմաւք չարչարեալք, զի առ ողբացեալս՝ եւ բազում մխիթարութեան խնդրողս¹⁰ հարմարի այս բան: Եւ յայտ առնէ,

¹ Բ տնօրէնութիւնն

² ԱԲ զայսոսիկ

³ ԱԲ > այլ ի ջնջել զմեղս ձեր

⁴ ԱԲ զհանդգնութիւն

⁵ Բ > զի

⁶ Բ ժամանակ

⁷ Ա հանգստեան

⁸ ԱԲ հանգստեանն

⁹ Բ փափագեմք

¹⁰ ԱԲ խնդրողս

Թէ նայ¹ ինքն է հանգստեան ժամանակացն պատճառք, որ յայսքան չարեաց հանգուցէ, զորմէ ոչ ետ աւետիս, թէ զմի² եւեթ զմեզս ջնջեացէ, այլ յոքնապէս զմեզս բազումս, եւ զայն հաւասարապէս:

Եւ տես՝ զիա՞րդ ճանապարհաւ յառաջ վարէ զբանս. զի յառաջ-նում ատենախաւսութեանն ի ծածուկ իմն զյարուլթիւնն Քրիստոսի եւ զերկինս նստելն նշանակեաց, եւ աստանաւր յայտ յանդիման ասէ եւ զերկրորդ գալուստն: Եւ նախ զիջանելով ըստ նոսա «Առաքեացէ, ասէ, ձեզ», եւ ապա հորդորական, թէ «Ձյառաջագոյն³ նկարեալն ձեզ գՅիսուս Քրիստոս» (Գ. 20)՝ ցուցանելով ի վերուստ ի սկզբանց անդի գհանգիստն զայն պատրաստեալ ձեզ Քրիստոսի:

Չոր պարս Է, ասէ, յերկնից ընդունել (Գ. 21):

Փոխանակ ասելոյ, թէ հարկ է յերկնից ընդունել, եւ զիա՞րդ դեռ ընդունել, ընդէ՞ր ոչ ասաց՝ որ յերկինս ընկալեալ եղեւ, այլ զկանխագոյն ընկալեալն այսպէս ասաց, ցուցանելով, թէ յերկինս է: Եւ ընդէ՞ր այժմ ոչ լինի եկեալ, յայտնէ զպատճառն, թէ «Մինչև ի ժամանակս ամենայնի հաստատելոյ, զորոց⁴ խաւսեցաւ Աստուած ի բերանոց սրբոց իւրոց մարգարէիցն» (Գ. 21): Որպէս զի բազում ինչ իրաց դեռ եւս պակաս գոլով՝ լնուլ պատշաճ է, եւ զիա՞րդ ապա ասացեր, թէ կատարեաց զմարգարէիւք խոստացեալսն: Այլ զոր պարտն էր կատարել՝ լցաւ, եւ այն ինչ որ դեռ եւս լինել պարտն է՝ ոչ եւս:

Գայ ապա ըստ իւրում խոստմանն ի մարգարէս, որպէս եւ անդ զԴաւիթ, եւ աստ զՄովսէս ի մէջ ածէ: «Մովսէս ասաց ցհարսն՝ թէ մարգարէ յարուցէ ձեզ Աստուած» (Գ. 22): Եւ զայլոցն ոչ պատմեաց, այլ միայն թէ խաւսեցաւ բերանով սրբոց մարգարէիցն, որոց հարկ է լսել, զի ոչ ոք կարէ ասել զնոսա սխալեալս: Եւ ամենեցուն նոցա կանխասացութեամբ ի ներքս մոլծանէ զՔրիստոս, զորմէ նախ Մովսէս ասաց. «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իրրև գիս» (Գ. 22): Եւ այլ ոք, ասէ, ոչ ունի զիմ նմանութիւնս բաց ի նմանէ: Եւ «յեղբարց ձերոց» ասելով՝ առաւել իմն ընտանեցուցանէ զնոսա: Եւ յորդորէ ապա. «Նմա լուիջիք ըսք ամենայնի, գոր խաւսեցի ինքն» (Գ. 22): Եւ ոչ ասաց, թէ լուիջիք, որոց Քրիստոս խաւսիցի, իբրու ինքն էր, որ խաւսէրն: Սմին վասն եւ զպատուհասն բազում դնէ ոչ լսողացն.

¹ Բ ի նա

² ԱԲ գի] զմի

³ Ա յառաջագոյն

⁴ ԱԲ զոր ասաց] զորոց

«Եղիցի ամենայն, որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ, սաքակեսցի» (Գ. 23): *Տեսանե՞ս, թէ ո՞րպէս ընդ խոնարհագոյնս¹ խառնէ եւ զբարձրագոյնսն: Աստուած զնա յարոյց ասելն յեղբարց ձերոց՝ այս խոնարհագոյն, իսկ սպառնալն ոչ լսողացն նմա, զի «Որ ոչ լուիցէ՝ սաքակեսցի», զբարձրագոյն պատիւն նորա նշանակէ, եւ յայտ առնէ, թէ ամենայն ինչ լինի, զոր խաւսեցաւ Քրիստոս: Եւ բարւոք եղ զսատակելն ոչ լսողացն. զի յորժամ մեծ ինչ ասէ, զի յառաջինս ապաւինի, եւ զայն բերէ վկայութիւն² ի մարգարէից, որ համանգամայն ունի գեր/26ա/կոսին տեսակ հնազանդութեան եւ անլսողութեան, որ է հրաշափառագոյն, որպէս նախ եբեր, թէ «Մինչև և եղից գրջնամիս քո պարուանդան ուրից քոց» (Երր. Ա. 13):*

Եւ յորժամ եցոյց զնոսա սաստկապէս մեղուցեալս, զի զանմեղն սպանին, եւ հաղորդս արար ներողութեան ի ջնջելն զմեղսն, եւ խոստացաւ զքաղցր հանգիստն, ի վերայ է ած վաղվաղակի, թէ եւ Մովսէս զնոյնդ ասէ: Որով ցուցանէ՝ ըստ կարգի զամենայն ինչ լինել մինչեւ ի ժամանակս ամենայնի կատարելոյ, զորոց ասէ, թէ «Եւ ամենայն մարգարէք, որ ի Սամուել³ և այսր խաւսեցան և պարմնցին գաւուրս⁴ զայստսիկ» (Գ. 24): Եւ ոչ կամեցաւ ի մէջ ածել զիւրաքանչիւրոցն խաւսս, զի մի՛ երկայնեսցէ զբանն, այլ զնշանաւորն յիշելով վկայութիւն զմովսիսականն՝ զայլովքն զանց արար:

Եւ քանզի նոքա վասն յանդգնութեան, որ ի Քրիստոս՝ կարծէին զինքեանս աւտարացեալս, այժմիկ մխիթարէ զնոսա եւ ցուցանէ, թէ եւ հարչարիլն Քրիստոսի եւ աւրհնելն զձեզ ըստ մարգարէութեանցն է, յորոց լսողութիւնն յորդորէ զնոսա հանդերձ գովասանութեամբ, զի այսու նուաճեսցին ի հաւանիլ: «Գուր էք, ասէ, որդիք մարգարէիցն և կրակին, զոր ուխտեաց Աստուած» (Գ. 25): Եւ զի՞նչ են որդիք կտակին կամ ո՞րպէս, այսինքն է՝ ժառանգք էք խոստմանցն: Եւ զիս՞րդ ապա ի ձեր⁵ իրսդ աւտարաբար կայք հեղագեալք: Պատժոց եւ արտասուանաց արդեւք արժանիս գործեցէք, այլ կարէք հանդիպել ներողութեան, արդ մի զրկիջիք յաւրհնութենէն, զոր աւրհնեաց Աստուած զԱբրահամ եւ ասէ. «Ի գաւալի քում արինեսցին ամենայն ազգք երկրի» (Գ. 25): Եւ ոչ մեկնեաց զասացեալսն, եւ ոչ յիշեաց զՔրիստոսէ, այլ պարզաբար եանց⁶:

¹ Բ խոնարհագոյնսն

² Բ ի վկայութիւն

³ Բ Սամուելէ

⁴ ԱԲ գաւուրսս

⁵ Բ ձեզ] ձեր

⁶ Բ էանց

Եւ զի մի՛ թուիցի իբրեւ թէ ի շնորհացն Պետրոսի միայն զայնոսիկ առնուլ, ցուցանէ, թէ ի վերուստ ի¹ վաղուց հետէ պատրաստեալ է նոցա ււրհնութիւն Աստուծոյ, եւ զի հաւատասցեն, «Ձեզ, ասէ, նախ յարոյց Աստուած գորդին իւր եւ առաքեաց արհնել ձեզ» (Գ. 26): Թերեւս արդեւք ո՞չ եւ այլոց: Այո, այլ ձեզ յառաջագոյն խաչեցողացո՛ւ: Սմին վասն ոչ լոկ ասաց, թէ առաքեսցէ², այլ թէ «Ձեզ յարոյց եւ առաքեաց», այսինքն՝ թէ եւ յետ յարութեանն, եւ յետ խաչելոյն ի ձէնջ, ձեզ նախ առաքեաց: Եւ զի մի՛ ասիցեն, թէ ինքն զայսոսիկ ոչ կամի, այլ միայն Հայրն, վասն այնորիկ³ ասաց՝ «արհնել ձեզ»: Ոչ ասաց կեցուցանել, այլ որ ինչ մեծագոյնն էր, զի խաչեալ ււրհնէ զխաչաւղսն, որ է անբաւ բարերարութեան: Եւ վայելչապէս. զի թէ եղբայր է ձեր, նա եւ ււրհնէ զձեզ. որպէս խոստացեալ է Աբրահամոս ի զաւակի նորա ււրհնիլ եւ այլոց: Յայտ է ահա, զի այնչափ հեռի է յոչ կցորդելոյն Հաւր վասն ձեր, զի եւ այլոց զձեզ ախորժէ պատճառս եւ առաջնորդս ււրհնութեան լինել: Եւ զի մի՛ իբրեւ ի պատժոց արձակեալք, յանհոգս լիցին⁴ յաւել, թէ «Ի դառնալ ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց⁵» (Գ. 26), զի զգուշասցին յառաջիկայսն: Եւ դարձեալ ցուցանէ, թէ այնպէս մեծ է ււրհնութիւնս այս, զի ոչ միայն ի չարեացն դադարեցուցանէ, այլ եւ զմեղս լուծանէ: Զի թէ ոչ լուծանէր, զիւ⁶ ղ ււրհնութիւն շնորհէր: Զի ոչ եթէ դադարելն միայն ի մեղաց անդանաւր⁶ եւ ււրհնեալ եղեւ, կամ մեղացն |26բ| եզիտ թողութիւն առանց Քրիստոսի ււրհնութեանն հաղորդելոյ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Նմա այսուհետեւ նմանեսցուք եւ մեք, որ յետ խաչին զամենայն հնարս շարժեաց յաղագս փրկութեան խաչողացն, առ որս եւ առաքեալսն առաքեաց անոխակալ մտաւք: Ի բաց հանցուք եւ մեք զոխս եւ զնախանձ, եւ մի՛ բաւական համարեսցուք զոչ հատուցանելն վրէժ, այլ եւ մահուչափ ցուցցուք առ նենգիչսն⁷ զսէր: Եւ յայսոսիկ մեծ աւգնական առցուք զոչ⁸ երդնուլ, ուստի լինի ոչ բարկանալ:

¹ Բ > ի

² Բ առաքեաց

³ ԱԲ այսորիկ

⁴ Բ լիցին

⁵ Բ > ձերոց

⁶ ԱԲ անդէն] անդանաւր

⁷ ԱԲ ցենգիչս

⁸ ԱԲ զոչն

[ԳԼՈՒԽ Ժ.]

Եւ մինչդեռ խաւսէին նոքա ընդ ժողովուրդսն, հասին ի վերայ նոցա քահանայապետքն եւ իշխանք փաճարին եւ սաղուկեցիքն, զայրագնելոք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն (Գ. 1):

Տե՛ս, թէ զիա՞րդ յաճախել սքանչելեացն եւ փորձութիւնքն ի միմեանց զնոսա առնուն, ուստի եւ քաջութիւնն իսկ նոցա յայտնի լինի: Զի յետ առաջնոյ փորձութեանն՝ որ էր պարսաւանք վասն լեզուացն, որպէս թէ չեւ եւս խառնեալք համարելով ընդ մարտակիցսն, փութապէս ապա ընդ ուժգնագոյնս ընդ այս խառնին¹ պատերազմ: Բայց տե՛ս դարձեալ, թէ ո՛րպէս կարգաւ լինէր իրքն տնաւրինեալ. զի ոչ անընդմիջաբար կալան զնոսա փորձութիւնք², այլ յառաջնումն քաջ կրթեալք հրապարակախաւսութեամբն, եւ յետ այնորիկ սքանչելեաւքն, որ առ կաղն՝ մեծարեալք եւ քաջալերեալք, ապա այժմ եւս զչարչարանաց եւս բուռն հարկանեն խնամաւքն Աստուծոյ, զոր պատմէ, թէ «Մինչդեռ³ խաւսէին եկին հասին քահանայքն եւ իշխանք փաճարին» (Գ. 1):

Եւ դու հայեաց, թէ զիա՞րդ ի վերայ Քրիստոսի յարուցեալք մատնչիս խնդրէին եւ սպասաւորաւք ոմամբք վարէին. իսկ այժմ ինքեանք իսկ եկեալ իշխանքն՝ ձեռս մխէին յանդրգունք⁴ եւ անամաւթագոյնք եղեալք յետ խաչին: Վասն զի այսպիսի են մեղք, մինչ չեւ եւս է կատարեալ, ամաւթ ինչ ունի, իսկ ի կատարումն եկեալ՝ անամաւթագոյն զգործաւղն առնէ: Որով եւ սոքա լրբեալք հասին քահանայքն եւ սաղուկեցիկ⁵ եւ իշխանք տաճարին, զի կամին դարձեալ հանդիսական ամբաստանութիւնս վասն բժշկութեանն յարուցանել: Եւ ոչ ախորժէին ի ծածուկ ինչ լինել վրեժխնդրութեանն: Քանզի զոր ինչ արարին առ Քրիստոսիւ, նոյնպէս եւ զայս եւս նոքին վասն մարդկայնոց փառաց առնէին, որոյ սակս՝ այժմ եւ զայս եւս կեղծաւորին, զի մի՛արիւնահեղք գոլ երեւեսցին, զոր եւ յետոյ ասեն, թէ «Կամիր ընկնուլ ի վերայ մեր զարիւն գառն⁶ զայնորիկ» (Ե. 28):

¹ ԱԲ խառնէին

² ԱԲ փորձութիւնքն

³ ԱԲ մինչ] մինչդեռ

⁴ Բ յանդրգունք

⁵ ԱԲ սաղուկեցիք

⁶ Բ գառնն

Եւ տե՛ս զանամաւթութիւնն, ի նշանաց եւ յարուեստից հաւատալի եղեալ, թէ յարեալ, որով ցուցանիւր Աստուած գոլ: Զոր մահ ոչ կարաց ընբռնել, նոքա հնարիւք ջանան շիջուցանել. եւ իբրեւ զգագանս կատաղիս զայրագինս ի վերայ նոցա դիմէին, վասն ուսուցանելոյ զժողովուրդն եւ պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց: Ոչ զնա միայն ասէին յարուցեալ, այլ եւ զմեզ ի ձեռն նորա լինել յարուցեալս: Այսպէս զաւրաւոր եւ յայտնի եղեւ յարութիւն¹, որպէս զի եւ այլոց զնա պատճառ լինել |27ա| յարութեանն²: Եւ դու հայեաց, զի ամենայն ուրեք ասէին, թէ «Աստուած գնա յարոյց», բայց զնշանսն յանուն Յիսուսի ասէին, որով ցուցանիւր, թէ ինքնին իսկ յարեալ Քրիստոս, որոյ անունն եւ զայլս յարուցանէ:

Եւ քանզի եւ նոքա յարութիւն³ կարծէին մեռելոց, թէպէտ եւ ցուրտ իմն եւ տղայական, սակայն կարծէին եւ մեծապէս խռովէին, զի սոքա Յիսուսիւ պատմէին զյարութիւն մեռելոց: Վասն որոյ թէպէտ բաւական էր հաւանեցուցանել զնոսա նշանքն եւ համարձակութիւն բանի առաքելոցն, այլ զի ռիսութեամբ լցեալք էին ընդ անունն Յիսուսի, «Մխեցին ի նոսա գձեսս իւրեանց եւ եղին գնոսա ի բանսրի» (Գ. 3, Դուկ. ԻԱ. 12): Արդ, առ Քրիստոսիւ ոչ այսպէս մոլեգիրնք⁴ էին. այլ ի մէջ գիրչերի առաքեալք զնա անյապաղ ի բաց տանէին՝ երկնչելով յոյժ ի բազմութենէն⁵: Բաց յաղագս սոցա յանձինս վստահացեալք ոչ խորհեցան ի բազմութենէն⁵. զի վասն այսր իսկ եւ իշխանքն ընդ նոսա էին, որք այն ինչ զձեռս արեամբն Քրիստոսի լցեալս ունելով՝ զայս եւ ի նոյն յաւելուին: Եւ ոչ եւս առ Պիղատոս ածեն զնոսա ամաչելով վասն առաջնոց իրացն, գուցէ եւ վասն այսր ամբաստանիցին, այլ զեռ եւս ինքեանք եղին ի բանտի մինչեւ ի վաղիւն, թերեւս զի չարչարեսցեն, զի էր ընդ երեկս ժամանակ⁶:

Եփր. Յոհ⁷. Արդ, նոքա կամելով կակղացուցանել զնոսա եղին ի բանտի. այլ զառաքեալսն կարծրագոյն⁸ գործեաց յապաղումն ժամանակին: Բայց տես, զի զգլուխսն առաքելոցն ըմբռնեցին, որով աւելի իմն կարծէին զայլսն զարհուրեցուցանել եւ աւցտել ի մի-

¹ Աբ յարութիւնն քրիստոսի

² Աբ յարութեան

³ Աբ յարութիւնն

⁴ Բ մոլեգիրնք

⁵ Ա ի բազմութենէն

⁶ Աբ ժամն] ժամանակն

⁷ Բ > յոհ.

⁸ Աբ կարծրագոյնս

մեանց. այլ հակառակն եղեւ: Ձի «Քազումք ի լսողաց բանին հաւարացին, եւ եղև թի մարդկանն իրրև հազարաց հնգից» (Գ. 4): *Սքանչելի է, թէ զիարդ հաւատացին: Միթէ քաջ զաւրացեալս զնոսա տեսին, ոչ ապաքէն կապեալս եւ ի բանտ դժուարին վարեալս, որ բաւական էր եւ զնախկին հաւատացեալսն¹ դղրդել: Այլ տե՛ս զզաւրութիւնն Քրիստոսի, զի ոչ ինչ ի նոցանէ զարհուրէին, եւ ոչ զհասեալ դժուարութիւնն ծանր ինչ գրէին, զի ասէին, թէ խաչեալն զայսպիսի ինչ գործէ, ապա ոչ երկնչիմք ի սոցանէ, զի մեծ է զաւրութիւնն, որ կանգնեաց զկաղն: Եւ այս Աստուծոյ տնաւրինելով լինէր, զի յուրվ են այժմու հաւատացեալքս քան զառաջինն: Սմին վասն եւ տեսանելով նոցա կապեցին զառաքեալսն, զի եւ զնոսա երկեցուսցեն. եւ ոչ առաջի նոցա արտաքս հանին, զի մի՛ ի նոցա համարձակութենէն այլքն շահեսցին:*

Եւ ի վաղի² անդր ժողովեալ նոցա զիշխանսն եւ զերիցունս եւ զգպիրս յԵրուսաղէմ, եւ զԱննա քահանայապետ եւ զԿայիափա, եւ զԱղէքսանդրոս³ եւ զՅովհաննէս, եւ զոր միանգամ յազգէ քահանայիցն (Գ. 5-6):

Տե՛ս զնոսա յետ առաջնոց չարեացն բնաւին կոխեալ զաւրէնսն. ինքեանք դատաւորք, ինքեանք դատախազք, ի նոյն դատարանի⁴, ի նոյն իրս շարամերձին: Աննա դարձեալ եւ Կայիափա, զի նոյնպէս պարտականք լիցին անիրաւ դատաստանի: Դարձեալ. յԵրուսաղէմ ժողովին, ուր սովոր իսկ⁵ են անիրաւել, ուր եւ զՔրիստոսի արիւնն հեղին, նա եւ ի քաղաքէն ոչ պատկառէին:

Եւ կացուցեալ զնոսա ի մէջ հարցանէին. Որո՞վ զաւրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք գայն (Գ. 7):

/27բ/ Ապաքէն գիտէին որով անուամբ, այլ ի խոր խոցեալք վասն պատմելոյ նոցա զյարութիւնն՝ ըմբռնեցին զնոսա: Եւ ընդէ՞ր հարցանեն⁶, ական ունելով՝ առաջի բազմութեանն ուրանալ նոցա, եւ զամենայն ինչ այնու համարէին ուղղել: «Որո՞վ անուամբ արարէք դուք

¹ Բ հաւատացեալս

² ԱԲ վաղիւն

³ ԱԲ գաղէկսանդրոս

⁴ Բ դարանի] դատարանի

⁵ ԱԲ > իսկ

⁶ ԱԲ հարցանեն

զայն» (Գ. 7): *Զո՞ր, ընդէ՞ր ոչ ասէք, զի կամիք ստուերացուցանել, այլ քարոզէք ահա, զի դոքա, մանաւանդ ասեն, թէ «Մեք ոչ արարաք»:*

Յայնժամ Պոպրոս լցեալ Հոգւով Սրբով ասէ ցնոսա (Գ. 8):

Աստանաւր յիշեա, զոր ասաց Քրիստոս, թէ «Յորժամ անցնն զձեզ ի ժողովս, մի՛ հոգայք. զի Հոգին Սուրբ խաւսեսցի ի ձեզ»: Արդ, տե՛ս զզաւրութիւնն Հոգւոյն, զի որ հարցուածոյ աղախնոյն ոչ հանդուրժեաց, այժմիկ ի մէջ անցեալ համարձակագոյնս բարբառի. «Խշխանք ժողովրդեան, ասէ, եւ ձերք Իսրայելի» (Գ. 8): *Տե՛ս զհանճարեղ զանձն¹. ոչ ասաց վաղվաղակի, թէ յանունն Յիսուսի մեք արարաք, եւ ոչ ամբարտաւանս ինչ բարբառեցաւ, այլ հանդերձ պատուով առանց ցասման եւ երկիրղի. «Խշխանք ժողովրդեան եւ ձերք Իսրայելի» (Գ. 8): Եթէ արժան իցէ դատել զմեզ այսաւր վասն երախտեաց առն միոյ տկարի, որո՞վ սա բժշկեցաւ: Յոյժ բուռն եհար զնոքաւք. վասն որոյ եւ ի նախերգանէն սկսեալ կատարէ զնոքաւք, զի վասն բարերարութեան դատեն զնոսա: Իբրու թէ զայս ինչ ասիցէ, թէ պարտ էր մանաւանդ վասն այսր պսակել զմեզ եւ իբր զբարեգործս քարոզել, նա եւ դատի՞մք եւս ի ձէնջ վասն երախտեաց առն տկարի, ոչ հարստի եւ ոչ փառաւորի, եւ վասն այսորիկ յաղաչէ՞ ոք: Եւ մանաւանդ այս իսկ խոցէր զնոսա, զի ցուցանէր զնոսա թշնամիս փրկութեան մարդկան, եւ որպէս Քրիստոս ասաց՝ «Միշոյ ի սպանութիւնս ընթացեալք» (հմմտ. Եսթ. ԺԴ. 9):*

*Բազում ծանրութեամբ լի է բանս, յայտ առնելով, թէ «Ինքեանք իսկ զիրեանց բերանս խնուն», եւ ինքեանք թէպէտ եւ ոչ կամաւ, զՔրիստոս քարոզէն՝ խաչաւղքն եւ դատողքն² առ որս համարձակապէս գոչէ. «Յայտնի լիցի ձեզ եւ ամենայն փանդ Իսրայելի» (Գ. 10): Այսու առաւել տրտմեցուցանէր զնոսա, թէ յայտնի լիցի ձեզ ամենեցուն: Եւ այս է, զոր ասաց ցնոսա Քրիստոս, թէ «Զոր լսէք յունկանէ, քարոզեցէք ի վերայ փանեաց» (Մտթ. Ժ. 27): *Եւ զի՞նչ ասէս. «Զի յանունն Յիսուսի Քրիստոսի Նագովրեցոյ, զոր դուքն խաչեցէք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նովաւ սա՛ կայ առաջի ձեր ողջացեալ» (Գ. 10): Մի՛ կարծէք ասէ, թէ թաքուցանեմք ինչ զհայրենիսն, կամ զհարչարանսն իբր զամալթալիս: Գրեթէ նախատելով զնոսա զայսոսիկ ասէր՝ ի մէջ բերելով դարձեալ զհարչարանսն, դարձեալ զյարուլթիւնն, եւ ապա համարձակ եւ յայտնի քարոզէ, զոր թշնամիքն ոչ կամէին լսել, թէ «յանունն նորա եւ նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ»:**

¹ ԱԲ անձնն

² ԱԲ դատողքն

Եւ ոչ ասէ, թէ առ ի մէնջ եղեւ ողջ, եւ ոչ անցանէ փռութով, այլ եւ յամէ¹ ի բանին: «Նա է, ասէ, վեմն անարգեալ ի ձեւն շինողաց» (Դ. 11): Յիշեցոյց նոցա բան, որ բաւական էր զարհուր/28ա/եցուցանել զնոսա, զոր կանխեաց ասաց Քրիստոս, թէ «Որ ընդ² հարցի ընդ վիմիս ընդ այսմիկ, փշրեսցի» (Մփթ. ԻԱ. 44): Ապա եւ ուսուցանէ զնոսա ի վերայ ածելով, թէ «Նա եղև զլուխ անկեան» (Մփթ. ԻԱ. 42), այսինքն՝ ընտրեալ զաւրաւոր պատճառ հաստատութեան երկուց որմոց: Զայսոսիկ խաւսի, զի բազում եւ աստուածեղէն³ էր զաւրութիւնն եւ մեծ նշանացն համարձակութիւն: Այլ յորժամ ուսուցանել պարտ էր, տե՛ս որպիսի⁴ խաւսին, եւ մարգարէութիւնս բազումս յառաջ ածեն, իսկ յորժամ միայն համարձակել պիտոյ էր, պատասխանատրեն:

Եւ չիք, ասէ, այլովք իւիք փրկութիւն⁴ (Դ. 12):

Արդ, որպիսի⁵ գանս ոչ առնուին նոքա ի բանից աստի յայսցանէ: «Զի եւ ոչ անուն, այլ գոյ ի ներքոյ երկնից, ասէ, փռեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ» (Դ. 12): Տե՛ս զիա՛րդ զբարձրագոյնս բարբառի: Ամենեցուն, ասէ, յայտնի է, զի ոչ մեզ միայն տուաւ անունն կեցուցիչ, այլ բոլորից: Եւ զնոսա ածէ վկայս բանիցն, քանզի հարցեալք, թէ որո՛վ անուամբ արարէք, Քրիստոսին ասէ, զի ոչ գոյ այլ անուն: Զիա՛րդ հարցանէք, զի ամենեցուն այս յայտնի լիցի՝ զի ոչ անուն այլ կայ ընդ երկնաւ, որով կեանս է գտանել. այլ սա միայն կարաւղ է զմեզ կեցուցանել: Տեսանե՛ս աստ զհամարձակութիւնն, որով յայտ է, զի զխոնարհագոյնսն ոչ առ երկիւղի, այլ զիջանելով խաւսէր: Իսկ այժմ, զի ոչ էին աւգտելոց՝ աներկիւղ, մանաւանդ զնոսա զարհուրեցուցանէ:

Նայեցեալ ի համարձակութիւնն Պեփրոսի եւ Յովհաննու, եւ ի վերայ հասեալ, թէ արք փգւ.փք եւ առանց դպրութեան են, զարմանային (Դ. 13):

Ահա այլ նշան՝ ոչ պակաս քան զառաջինն, զի երկու այր առանց դպրութեան շնորհաւք Հոգւոյն հոնտորք երեւեցան ընդդէմ քահանայապետիցն, եւ զարհուրեցուցանէր զնոսա համարձակութիւն նոցա, զի ռամիկք եւ առանց դպրութեան էին: Զի իցէ ռամիկ⁵ լի-

¹ Ա յամէ եւս

² ԱԲ > ընդ

³ Բ աստուածեղէն

⁴ ԱԲ փրկութիւնն

⁵ Բ ռամիկք

նեղ՝ եւ առանց դպրութեան ոչ, իցէ եւ առանց դպրութեան գոլ՝ եւ ռամիկ¹ ոչ, իսկ աստ՝ երկոքին իսկ: Եւ յարդարուն եւ գեղեցկապէս, համառաւտ եւ ոչ երկայն բանս տարածանէին, եւ ի շարադրութենէ սասցուածոյն զիմաստութիւն ընդ համարձակութեանն զոյգ ցուցանէին, ընդ որ նոքա յոյժ սքանչանային:

Եւ զի ճանաչէին զնոսա, զի ընդ Յիսուսի Էին (Գ. 13):

Ոչ պարզաբար եղ զայս աւետարանիչն, այլ զի սոքա միայն էին յայնժամ ի չարչարանսն Յիսուսի երկուցեալք եւ խոնարհեալք. ուստի առաւել զարմանային ընդ անչափ փոփոխումն՝ յոր զսոսա տեսանէին յանկարծակի, զի եւ անդ իսկ էին Աննայ եւ Կայիափա², որք եւ տեսին զսոսա³ ընդ Յիսուսի: Եւ այն իսկ հաւատալ հարկէր զնոսա, թէ առ ի Յիսուսէ իսկ զայս գիտէին, եւ իբր նորա աշակերտք զամենայն ինչ գործէին: Այլ ոչ պակաս քան զբանս սոցա եւ նշանն ձայն արձակեալ խնոյր զբերան նոցա: «Ձի փեսանէին, ասէ, գայրն եւս բժշկեալ, զի կայր ընդ նոսա. եւ ոչ կարէին փալ պարասխանի» (Գ. 14): Բազում էր համարձակութիւն առնն, զի եւ ի դարանին⁴ իսկ ոչ թողոյր զնոսա: Ձի թէ որպէս սովոր էին հրեայքն՝ ժխտել ջանային եւ ծածկել զիրսն, նա իսկ կարկեցուցան/28բ/էր զնոսա:

Եւ քանզի բժշկութիւն նորա ոչ տայր թոյլ չարչարել զնոսա, «Նրամայեցին նոցա արփաքս քան զափեանն ելանել, խորհեցան ընդ միմեանս եւ ասեն. զի՞նչ արասցուր արանցս այսոցիկ» (Գ. 14-15): Տե՛ս յոյժ վտանգեալս զնոսա. եւ⁵ զամենայն ինչ առ մարդկան երկիւղի հնարելով՝ որպէս առ Քրիստոսիւ ասէին «Ձի՞նչ արասցուր, զի աշխարհ⁶ ամենայն⁷ գկնի նորա գնաց», նոյնպէս եւ աստ ասէին, ստուերացուցանել զիրս⁸ չէ հնար: «Ձի երեւելի նշան եղև ի ձեռն դոցա, ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայր Է, եւ ոչ կարենք ուրանալ» (Գ. 16): Յայտ է ասա՝ զի ուրանային իսկ, թէ ոչ քաջայայտ էր նշանն եւ բազմացն վկայութիւն:

Այլ զի մի՛, ասեն, անաւել ճարակեսցի ի ժողովուրդն, սպառնասցուր նոցա մի՛ եւս խաւսել յանունն յայն, եւ մի՛ ումեք ի մարդկանէ (Գ. 18):

¹ Աբ ռամիկք

² Ա կայիափայ

³ Աբ զնոսա

⁴ Ա դատարանիս] ի դարանիս

⁵ Աբ զի] եւ

⁶ Աբ աշխարհս

⁷ Աբ > ամենայն

⁸ Աբ զիրսդ

Ո՛վ անմտուլթեանն. զի զորս ճաշակել չարչարանացն համար-
ձակագոյնս արար, կարծեն սպառնալեալք զարհուրեցուցանել: Զի
այսպիսի է չարուլթիւն, ոչ երբեք դադարէ, թէպէտ եւ կշտամբեալ
յանդիմանի: Եւ տես, զի զորոց զվարդապետն սպանին, եւ զնոսա
ոչ դադարեցուցին, եւ զորս կապանքն եւ բանտն ոչ թողացուցին,
համարէին բանիւ լուեցուցանել: Յոյժ լաւագոյն էր թողուլ զնոսա
քան թէ սպառնալ: Վասն որոյ զոր խափանելն կամէին, յոյժ մա-
նաւանդ յանչափս աճեցեալ լինէր: «Եւ կոչոցեալ զնոսա ի ներքս, պա-
պուիրեցին ամենեւին մի՛ խաւսել եւ մի՛ ուսուցանել յանունն Յիսուսի» (Գ. 18):
Իբրու յաղթահարեալք եւ ամաչեցեալք յեղելոցն՝ զիջանին տակաւ,
թէպէտ յանմտուլթեանէն ոչ կան ի բաց:

Իսկ Պերրոս եւ Յովհաննէս պապասխանի եպոսն եւ ասնն. Եթն
արժա՞ն իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ.
ընտրեցէք (Գ. 19):

Յորժամ մասն ինչ յերկիւղէն մահու հատաւ, զի մանաւանդ պա-
տուիրելն ոչ այլ ինչ էր քան թէ արձակել, յայնժամ հեղագոյնս
բարբառի, զի այսպէս հեռի էին ի յանդգնութենէ: «Եթէ արժա՞ն է առա-
ջի Աստուծոյ ձեզ լսել քան Աստուծոյ»: Աստանաւր Աստուծոյ՝ զՔրիստոսէ
ասէ, զի նա նոցա բազում անգամ հրամայեաց քարոզել, եւ «առա-
ջի Աստուծոյ» ասելով՝ զամենամերձն գոլ զԱստուած ցուցանէ, որով
առաւել իմն կամի գրաւել զնոսա յերկիւղ եւ յամաւթ. այլ զընտ-
րուլթիւնն ի կամս նոցա թողու: Եւ զի դուք թերեւս զձերն ակոր-
ժէք քան զԱստուծոյն նախապատուել հրաման, «Այլ մեր ոչ կարնմք, զոր
տեսարն եւ լուար՝ չպարմնլ» (Գ. 20): Դարձեալ այսու բանիւ հաստատեն
զյարուլթիւնն. «զոր եւ տեսար», ասեն. որով եւ հաւատալոյ արժանի
եմք վկայքս. եթէ սո՞ւտ է, զոր ասեմքս, քննեցէք եւ ի վերայ հասէք,
իսկ եթէ ճշմարիտ, ընդէ՞ր արգելուք:

Նորս սպառնացեալ արձակեցին զնոսա (Գ. 21):

Տե՛ս զյանդգնութիւնն¹. զի ոչ ներէին սոցա կատարել զխաւսս
իւրեանց, այլ ի մէջ ասացուածոյն հատանէին զբանն յոյժ քամա-
հելով: Այլ եւ յիմարեալք ի վարանս մտանէին: «Զի ոչ ինչ գրանէին, թէ
որով պարտիասեսցն զնոսա» (Գ. 21), զի եխից զբերանս նոցա նշանն:

¹ Բ գանդգնութիւնն

«Եւ ամենեք/29ա/եան փառաւոր առնէին¹ զԱստուած վասն իրացն եղելոց: Զի ամաց էր այրն աւելի քան զքառասուն, յորոյ վերայ եղև նշանս բժշկութեան²» (Դ. 21-22): Արդ, ժողովուրդն փառաւոր առնէին զԱստուած. այլ նոքա աստուածամարտք զոլով սպառնային եւ սպանանել մտաբերէին. ուստի եւ երեւելագոյնս եւ պայծառս զնոսա ցուցին, զի «Զարութիւն իմ, ասէ, ի փկարութեան կապարի» (Բ. Կրնթ. ԺԲ. 9): Զի այսպիսի է հոգեւոր իմաստութիւն. նոքա ի վտանգի, եւ սոքա յուրախութեան, նոքա զարհուրեալք, զի մի՛ ճարակեսցի բանն առ ժողովուրդն, եւ սոքա³ համարձակեալք, թէ «Ոչ կարեմք զմեծամեծսն պատմել»:

ՅՈՐԴՈՐԱԿ

Մերձեսցուք այսուհետեւ յառաքինութիւն, եւ մի՛ մինչեւ ի հրճուանս լսելեաց լիցին մեզ ասացեալքս: Ամաչեսցուք, զի փոխանակ զկատարելագոյն վարուց, այսինքն՝ բարի առնել ատողաց՝ պէտք են դարձեալ վասն ոչ երդնլոյ պատուիրել: Որպէս ոք ի կատարեալ⁴ հասակի եւ աշտիճանի գիտութեան⁵ զոլով՝ հեգից եւ վանգից⁶ ուսման պիտոյանայ⁷, ո՞չ ապաքէն ծաղու է արժանի:

[ԳԼՈՒԽ ԺԱ.]

Եւ անփի արձակեալք եկին առ իւրեանցսն, եւ պապմնցին որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն (Դ. 23):

Տե՛ս զցածուն եւ զիմաստասէր բարս առաքելոցն: Զի ոչ չուրջ եկեալ հոչակեցին պանծալով, թէ զինչ պատասխանատրեցին քահանայիցն կամ զիա՞րդ զերծան ի նոցանէ, զի ոչ էին պատուասէրք, եւ ոչ ի բազմութեանն⁸ համարձակութիւն վստահացեալք՝ դժուարինս ինչ ասէին զնոցանէ, այլ հանդարտապէս եւ հեզաբար եկեալք առ ընկերսն պատմեցին որչափ ինչ ասացին զնոսա քահանայապետքն, ոչ սակս պատուասիրութեան, այլ առ⁹ ի ցուցա-

¹ Բ փառաւորէից] փառաւոր առնէից

² ԱԲ բժշկութեանց

³ Բ նոքա] եւ սոքա

⁴ Բ կատարել

⁵ ԱԲ գիտութեամբ

⁶ Ա վանկից

⁷ Ա պիտանայ] պիտոյանայ

⁸ ԱԲ բազմութեանց

⁹ Ա > առ

նեւ զՔրիստոսի շնորհացն զաւրութիւն: Զի զոր ինչ նոքա ասացին զայն պատմեցին, իսկ զիւրեանցն թէպէտ եւ իրաւապէս էր ասել՝ ոչ ասացին առ յոյժ խոնարհութեանն, զի զմեզ խրատեսցեն ի բաց կտրել զփառասիրութիւնն¹:

«Իսկ նոցա լուեալ» (Բ. 24) եւ ոչ զարհուրեալք, այլ քաջալերեալք՝ ի ճշմարիտ աւգնականութիւնն ապաւինեցան եւ յանմատչելի զաւրութիւնն: «Եւ միարան համարածին զձայնս իրեանց եւ ասեն» (Բ. 24): Աղաղակելն նոցա ձայնիւ՝ լինէր ի հեշտութենէ եւ ի բազում լրջմտութենէ: Եւ տես՝ զիա՞րդ փութով աղաւթեն: Եւ զի մեծաւ իմաստութեամբ եւ բազում խորհրդով առ ստուգեալ են աղաւթք նոցա: Զի յորժամ, զոր արժանն էր յառաքելութիւն ցուցանել՝ այսպէս ասէին. «Գու, Տէր, սրբագէտ, յայտնեալ՝ զմի որ» (Բ. 24): Զի անդ կանխագիտութեան էր պէտք, իսկ աստ քանզի լռեցուցանել զհակառակամարտսն պարտ էր, յաղագս տէրութեանն բարբառին. «Գու Տէր Աստուած, որ արարեր զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն, որ ի նոսա» (Բ. 24): Ահա սահման կատարեալ աղաւթից, յորժամ յաղագս այսպիսի իրաց լինի, եւ յայսպիսեաց ոմանց եւ այսպիսի յեղանակաւ, զի որ ոչ այսպէս նուիրէ զինքն յաղաւթս, գարշելի ոմն է: Եւ տես, զի ոչ պառաւականս եւ ցուրտ բանս ի կիր առնուն /29բ/ որպէս բազումք՝ որ առ այլս անկեալ կան չարութեամբ, այլ յաղագս զաւրութեան նորա խաւսին:

Եւ որպէս Քրիստոս ասաց, թէ «Նոզուով Աստուծոյ հաննմ եւ զղեւս» (Մարթ. ԺԲ. 28), ահա եւ Հայր Հոգւովն լինի բարբառեալ, զոր եւ ասեն իսկ: «Տէր Աստուած, որ ի բերանոյ հար մերոյ Դաւթի ծառայի քո Նոզուովն Սրբով ասացեր, զմէ՛ խոովեցան հեթանոսք եւ ժողովուրդք խորհեցան ի սնորիս» (Բ. 25): Որպէս ուխտ պահանջելով յԱստուծոյ՝ զմարգարէութիւնն ի մէջ ածեն, միանգամայն եւ զինքեանս իսկ մխիթարելով, զի ունայն խոկացին զամենայն ինչ թշնամիքն. զայնոսիկ ի կատարումն, ասեն, հաստ, եւ ցոյց, թէ սնոտիս խորհեցան: «Յանդիման եղեն թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան ի միասին» (Բ. 25): Եւ վասն զի անդ ոչ էին բազում իշխանք եւ թագաւորք, այլ Հերովդէս եւ Պիղատոս, այլ սովոր են զիրք զմիոյ որպէս զբազմաց խաւսել, որպէս Պաւղոս ասէ, թէ «Ոչ որ յիշխանացս³ այսոցիկ⁴ ծանեալ» (Ա. Կրնթ. Բ. 8):

¹ Բ գփառասիրութիւն

² ԱԲ յայտնեա

³ Բ յիշխանաց

⁴ ԱԲ աշխարհիս] այսոցիկ

Վասն Տեառն եւ վասն ամենայն նորա (Դ. 26):

Եփր. Վասն զի զՔրիստոսն, զոր անարգեցին, զՀայրն, զոր ոչ անարգեցին՝ անարգեցին նովաւ: «Զի ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայսմիկ ի վերա սրբոյ Ռրդոյ քոյ¹ Յիսուսի, զոր ամեն, Ներովդէս եւ Պոնափոս Պիղատոս ազգար եւ ժողովրդար Իսրայէլի առնել որչափ ձեռն քո եւ կամք յառաջագոյն սահմանեցին լինել» (Դ. 27-28):

Յոհ. Արդ, եկին սոքա ի միասին իբր թշնամիք սպանողական մտաւք ընդդէմ քո հակառակեալք, այլ զայն առնէին, զոր ինչ դու կամէիր: Զի ոչ նոքա զաւրէին գալ յայն, այլ դու, որ զչարութիւնն նոցա ի փրկութիւնն աշխարհի ի կիր արկեր, քաջահնարդ իմաստուն եւ զաւրեղ, որ զքո թշնամիսն ըստ կամս քո թողացուցեր առնել որչափ ձեռն քո եւ կամք կարգեցին յառաջագոյն: Զեռն զզաւրութիւնն ասեն, զի ոչ է այլ ումեք զաւրութիւնն սահմանել յառաջագոյն, կամ թէ ասեն, որչափ ձեռն քո դասաւորեալ ետ նոցա իշխանութիւն, զոր եւ Քրիստոս ցՊիղատոս ասէր. «Ոչ ունիր դու ի վերայ իմ իշխանութիւն, եթէ ոչ էր քուսալ քեզ ի վերուստ» (Յովհ. ԺԹ. 11): Իսկ կամս, զի ամենայն ինչ կամելով նորա հաստատի: Եւ տես, զի եւ յաղաւթսն ոչ մոռանան, այլ յիշեն զչարհարանսն եւ զամենայն ի նա վերաբերեն, եւ համարձակութեան պատճառ ինքեանց զնա լինել ասեն:

Եւ արդ, Տէր, հայեա՛ց ի սպառնալիս նոցա (Դ. 29):

Զայս ոչ անիծանելով ասեն, եւ ոչ զոր ինչ սպառնացան նոքա՝ ի մէջ բերեն, որպէս եւ ոչ Եզեկիայն զՀռափսսակայ, թերեւս զի դժնդակս ինչ ասացին, թէպէտ եւ Ղուկաս ոչ զնէ: Սակայն ոչ ասացին, թէ կորովանեա կործանեա, զի այսպէս բազումք անկեալ ի ձեռս սպանանել սպառնացողաց, ցասմամբ եւ սաստիկ թշնամութեամբ լցեալ լինէին: Այլ ոչ այսպէս եւ սուրբ գոռնդս այս, այլ զի՞նչ. «Նայեաց, ասեն, ի սպառնալիսն», եւ տուր նոցա եւ այժմ եւս սնոտիս խորհել որպէս եւ յայնժամ, եւ մի՛ հասանիցեն ի գործ սպառնալիք նոցա: Զայս ասէին ոչ իբր ի վշտաց հրաժարելով, այլ յաղազս քարոզութեանն եւ փառացն Աստուծոյ: Զի ոչ ասացին, թէ փրկեա զմեզ /30ա/ ի վշտաց, այլ զի՞նչ. «Տուր ծառայից քոց խաւսկ համարձակութեամբ զբանն² քո» (Դ. 29): Տեսանե՞ս, զի յանձանց իւրեանց խոստանան ոչ զարհուրել ի նոցանէ, բայց աղաչեն լինել նշանացն:

¹ Ա քո

² ԱԲ գրանս

Առ ի փարածել, *ասեն*, զձեռն քո ի բժշկությունս եւ նշանս եւ արունսփս լինել (Դ. 30):

Վայելչապէս. զի առանց այնոցիկ թէպէտ եւ բիւր յաւժարութիւնս ցուցանէին, ընդ վայր էր ամենայն: Այլ ոչ պարզաբար զլինելն հայցեն: Այլ անուամբ ասեն սրբոյ Որդւոյ քո Յիսուսի: Զի յորժամ ի նորա անունս սքանչելիքն լինիցին, մեծ լիցի համարձակութիւնն մեր, վասն զի ոչ այլով իւրք կարեն ցուցանել, թէ յարեալ, բայց միայն ի նշանացն: Զի ոչ միայն զգուշութիւն խնդրէին անձանց, այլ զոչ լինելն յամալթ եւ զհամարձակութեամբ խաւսելն զբանն Աստուծոյ:

Եւ մինչ կային նորա յաղաթիւս, շարժեցաւ փեղին ուր ժողովեալն էին (Դ. 31):

Աղաւթելով նոցա շարժիւր¹ տեղին, նշանակեալ թէ լուաւ Աստուած աղաւթից նոցա: Տինա՝ եւ զի եհաս ինքն առ նոսա. զի յերեսաց Տեառն սասանեցաւ երկիր, որ հայի ի սա եւ տայ դողալ սմա: Այլ զայս արար Աստուած, զի դեռ սկիզբն էր, եւ զգալի նշանաց կարաւտանային, զի հաւանեցուցէ զնոսա քաջալերել, իսկ յետ այնորիկ ոչ այսպիսի ինչ լինէր: Բայց գիտելի է, զի շարժումն երբեմն սաստկապէս եղեալ՝ բարկութեան է նշանակ, որպէս հիմունք լերանց սասանեցան, զի բարկացաւ Աստուած, եւ որպէս յաւուր խաչելութեանն² Քրիստոսի, եւ իբր զառ յապա լինելոցան, զոր ասէր Քրիստոս լինել շարժմանց մեծամեծաց՝ սովոյ եւ սասանութեան: Իսկ այժմուս թերեւս ընդդէմ հրէիցն ընդդիմադարձից այսպէս, այլ իւրոցն խնամոց եւ այցարարութեան ցոյցք. զի առ իւրսն միայն եղեւ եւ ոչ սաստիկ, զի «շարժեցաւ, ասէ, տեղին, յոր կային»: Սասանեցաւ տեղին, այլ զնոսա անշարժս հաստատեաց եւ Հոգւով Սրբով լցոյց:

Զի լցան, *ասէ*, ամենեքեան Տոգուով Սրբով (Դ. 31):

Եւ զի՞նչ է «լցանն», այսինքն՝ վերստին³ հրացան եւ ջերմագոյնք եղեն, եւ բորբոքիւր ի նոսա շնորհքն, որպէս բոց ի կայծակունս շարժեալս եւ շնչով արծարծեալս: «Եւ խաւսին զբանն Աստուծոյ համարձակութեամբ» (Դ. 31): Զի բազում էր զաւրութիւն Հոգւոյն, որ ի նոսա

¹ Ա շարժեցաւ

² Բ խաչելութեան

³ ԱԲ վերստին

չնչեաց, որ եւ ինքն իսկ է սկիզբն եւ առաջադրութիւն բարեաց, զոր եւ յիշէ երկրորդ անգամ, թէ ո՞րպէս Հոգւովն ի բարիս յորդորեալք եղեն ամենեքեան:

Եւ քազմութիւն հաւաքացելոցն, *ասէ, Էր սիրտ եւ անձ¹ մի* (Գ. 32):

Յետ Աստուծոյ շնորհացն եւ զառ ի յինքեանցն եւս ի ներքս բերէին: Զոր եւ մեզ պարտ է առնել, որպէս եւ Պետրոս ասէր. «Արծար եւ ոսկի ոչ ունիմ²» (Գ. 5): Եւ այլքն զինչս հասարակելովն, աւելիք³ գոլով քան զհազարս ութ, եղեն սիրտ եւ անձ մի. եւ զիա՞րդ: «Զի ո՛չ եւ մի որ ասէր զնչից իւրոց գոլ»: Ասաց վերագոյն, թէ «Լսելի եղեն աղաւթք նոցա», ցուցանէ եւ զառաքինութիւն նոցա: Այլ զի այս ինչ որ լինի առանց սիրոյ: Աղէ տեսցուք: Սէ՞րն զանստացուածութիւնն ծնանէր, թէ ան/30բ/ստացուածութիւնն⁴ զսէրն: Յայտ է՝ զի սէրն զանստացուածութիւնն. իսկ ի բաց տալն զգոյսն՝ սերտէր⁵ եւ պահէր զսէրն, զի էր նոցա ամենայն ինչ հասարակաց:

Եւ զաւրութեամբ մեծաւ փային վկայութիւն առաքեալքն զաւրութենէն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (Գ. 33):

Ոչ միայն ի նշանացն ցուցանէ զաւրացեալս զնոսա, այլ եւ ի բազմութեանն յաւտարութենէ աւգնեալք, որով իբրեւ մեծամեծ շնորհաւք եւ զաւրութեամբ համարձակեալք՝ համարձակութեամբ տալին զվկայութիւնն՝ զթերութիւնն զամենայն ի բաց հանելով վասն յարութեանն: Տինա՞ զի ո՛չ բանիւ միայն, այլ եւ զաւրութեամբ, եւ այն ոչ պարզաբար, այլ մեծաւ զաւրութեամբ: Ըստ Պաւղոսի ասիցն, թէ «Բանն մեր եւ քարոզութիւն ոչ է պարիք բանիւք մարդկեղէն ինչ իմաստից, այլ ազդմամբ հոգւոյն եւ զաւրութեամբ» (Ա. Կրնթ. Բ. 4): «Եւ շնորհք մեծամեծք էին ի վերայ ամենեցուն, եւ ոչ որ կարաւոր ի նոսա» (Գ. 33-34): Վասն այսորիկ մեծ ասէ զշնորհսն, զի ոչ եւ մի ոք էր կարաւտեալ, յայտ է, զի աւրհնութիւնն Աստուծոյ աճեցուցանէր զգոյսն: Ուստի առաւելութեամբ առանց կարաւտութեան, որպէս ի տուն հայրենի, համապատիւք էին ամենեքեան: Զի ոչ թուէր գոյաւորացն կերակրել զայլսն, այլ իբրեւ յիւրականաց իւրաքանչիւր ոք վայելէր. զի յինքեանց ի

¹ ԱԲ անձն

² ԱԲ գոյիմ] ունիմ

³ ԱԲ աւելի

⁴ ԱԲ անըստացուածութիւն

⁵ Ա սերտել

բաց եղեալ զիւրեանցն իրս՝ ոչ իբրեւ յիւրեանցայոց¹, այլ իբրեւ² ի հաղորդակից կերակրէին ընդ այլս, որ եւ սքանչելի ցուցանէ զառաքինութիւն նոցա:

Զի որ միանգամ տեսարք Էին գեղից³ կամ ապարանից, վաճառէին եւ բերէին զգինսն, դնէին առ ոսկոս⁴ առաքելոցն (Դ. 34-35):

Այս լինէր ի բազում յաւժարութենէ հաւատացելոցն. զի ոչ եթէ մասն ինչ ի գոյիցն տային ցառաքեալսն, որպէս տունն անանիանց, այլ ինքնակամ իսկ զբոլորն, որով եւ ի բազում առատութեան վայելէին, զանհաւասարութեան⁵ ի միջոյ ի բաց բարձեալ արարին բարէկարգութիւն⁶: Եւ տես, զառաքեալսն ոչ յորդորէին վաճառել, այլ ինքեանք վաճառէին, եւ զգինսն ցնոսա տային, եւ բազում պատուով զայն առնէին, զի ոչ ի ձեռն⁷ համարձակէին տալ, եւ ոչ հպարտացեալ ինքեանք շնորհէին, որոց պէտք էին, այլ առ ոտսն բերեալ դնէին, զնոսա առնելով տեսարս եւ հոգաբարձուս, զի իբրեւ ի հասարակաց իրաց ծախքն լինիցին եւ ոչ յիւրականաց ուրուք. այս ինչ՝ եւ առ ոչ սնափառել նոցա ի Հոգւոյն լինէր պատշաճեալ: «Եւ բաշխէին իւրաքանչիւր ումեք ըստ որում պիտոյ ինչ լինէր» (Դ. 35): Յայտ է, զի առաքեալքն, իբրեւ⁸ զհաւատարիմ տեսուչս, ըստ բազմապատիկ կարեաց մարդկան տային զարժանն:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այս ինչ, թէ այժմիկ լինէր, յոլովագոյն հեշտութեամբ քաղաքավարեալք լինեաք⁹ եւ ճոխք եւ տնանկք¹⁰, եւ ոչ տնանկացն այնչափ՝ որքան փարթամացն բերէր զհեշտութիւն: Ապա թէ ասիցես, զի՞նչ առնեաք¹¹ յետ ծախման ընչիցն, մի՛ զարհուրիր, զի բիւրապատիկ Աստուծոյ շնորհքն աճե/31ա/ցուցանէր: Զի թէ առ ուրի հազարսն այնչափ յաճախէր շնորհքն, ո՞րչափ առաւել առ եւս բազումս այժմ:

¹ Ա յիւրեանցայոց

² Բ իբր] իբրեւ

³ ԱԲ գիւղից

⁴ ԱԲ > առ ոտս

⁵ ԱԲ զանհաւասարութիւն

⁶ Բ բարեկարգութիւն

⁷ ԱԲ ի ձեռսն

⁸ Բ իբր

⁹ ԱԲ լինեաք

¹⁰ Ա տնանկք

¹¹ ԱԲ առնեաք

Զի՞նչ ունիմք ասել այժմ, վասն այնորիկ ի փոքունցն¹ սկսայ՝ յոչ² երդնելոյ:

[ԳԼՈՒԽ ԺԲ.]

Յովսէփ, որ կոչեցան³ Բառնարաս՝ յառաքելոց անտի, որ թարգմանի որդի մխիթարութեան (Բ. 36):

Կրկին պիտոյից սակս ի մէջ ածէ զսա: Նախ իբրեւ զպատկեր ոմն կենդանի ի դէմս ածել սովաւ զբազմացն առաքինութիւն, զորոց վերագոյն ասաց առ տուրս ընչիցն: Եւ դարձեալ ի կշտամբանս Անանիայ եւ Սափիրայ, ցուցանելով զնոսա ի վատթարութեան սխալեալս: Վասն որոյ նախ զբազմացն ուղղութիւնս յիշէ. զի այնչափ բազումք գոլով, որք զայն առնէին՝ այնչափ յաւժարք գոլով յառատութիւն շնորհաց, նոքա եւ ոչ ի միողէ խրատեալք կորուստ ածին անձանց իւրեանց: Բայց Յովսէփս այս ոչ թուի ինձ այն գոլ⁴, որ ընդ Մատթեայն⁵ եկաց, զի նա եւ Յոստոս կոչիւր: Իսկ զի որդի մխիթարութեան կոչեցին զսա առաքեալքն, թուի ինձ բերանունապէս յառաքինութենէ անտի կոչեցեալ, որպէս թէ առ այն ինչ բաւական գոլ զսա եւ ճահաւոր:

Ղևւրացի, ասէ (Բ. 36):

Տե՛ս զբարէկարգութիւն⁶ բազմացն, զի եւ զբահանայսն ի սոյն յորդորեցին զաւրութեամբ հաւատոցն: «Ազգաւ կիպրացի» (Բ. 36): Յուցանէ ամենայնիւ քակեալ զաւրէնսն, զի ղեւտացի գոլով զիս⁷ ըզ էր կիպրացի, այլ զի տարաբնակ եղեալք այնուհետեւ անդէն իսկ ի հեռաստան մնային ղեւտացիքն: «Էր նորա գեղ⁷» (Բ. 37): Յայտ է, զի զայն միայն էր ստացեալ, եւ զայն վաճառեալ եբեր զգինսն եղ առ ոտս առաքելոցն, հպատակ եւ յոյժ ցածուն գոլով բարուցն, ըստ որում վերագոյն ցուցաւ:



¹ ԱԲ փոքուցն

² Ա յոչն

³ ԱԲ կոչեցան

⁴ ԱԲ անգոլ] այն գոլ

⁵ Ա Մատթեայն

⁶ Բ գրարեկարգութիւն

⁷ ԱԲ գէղ

Իսկ այր ոմն Անանիայ անուն, հանդերձ կնաւ իւրոյ Սափիրաւ, վաճառեաց ագարակ, եւ խորեաց ի գնոց անփի գիփակցութեամբ կնոջն, եւ երեր մասն ինչ եղ առ ոյս առաքելոցն (Ե. 1):

Դժուարագոյն էր իրքն, զի միաբանութեամբ եղեւ սխալանքն, եւ այլոք ոչ գիտաց, ուստի եւ արագ պատուհասն ի վերայ եհաս թշուառականացն: «Աւել Պեպրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սափանայ գսիրք քո սքել քեզ Նոգոյն Սրբոյ եւ խորել ի գնոց գեղօն» (Ե. 3): Տե՛ս, զի յոյժ մեծ է նշանս այս քան զառաջինսն, զիտելն զծածուկսն: «Ընդէ՞ր, ասէ, ելից սափանայ գսիրք քո» (Ե. 3): Ոչ զնա կշտամբէ, թէ ընդէ՞ր արար սատանայ զայս ինչ, զի դեւն յայս իսկ յամառեալ կայ: Վասն որոյ եւ ոչ Աստուած հարցանէր ինչ զաւճն՝ որ չէր ինչ ուղղելոց, այլ նզովէր զչարն: Այլ աստ զայս ինչ ասէ, թէ ընդէ՞ր ներեցեր ընդ սատանայի չարիւք¹ գսիրտ քո: Եւ եթէ սատանայ զայս զինչ արար, դա զի՞նչ մեղաւ կամ ընդէ՞ր պարտաւորի: Այո ասեմ յիրաւի, զի² ընկալաւ կամաւք իւրովք զներգործութիւնն սատանայի, եւ նովաւ լցաւ: Այլ պարտ էր ուղղել ասպ³ զնա: Այլ ոչ ուղղէր, որ յայնպիսի շահն հայեցեալ լինէր: Բայց դու տես, զիարդ վաղվաղակի ի սկզբանն ի վերայ եհաս բանսարկուն, եւ ի մէջ /31բ/ նշանացն, եւ այնչափ սքանչիցն սա որպէս յամառեցաւ, որպէս Սաքարն⁴ այն ի հնումն վերագրեալ իրին ցանկացաւ եւ դժնդակ⁵ վրէժն⁶ կրեաց, զի յոյժ ծանր եւ դժուարին է տաճարակողոպուտ լինելն, զի ի բազում արհամարհանաց ժպրհի ոք յայն: «Ոչ վաճառել հարկեցաք» ասէ, եւ յետ վաճառելոյն տալ զինչսն դու կամեցար, զիա՞րդ այժմիկ գողացար ի նուիրեալ ընչիցդ:

Ոչ ապաքէն մինչ կայրն քո էր, եւ ի վաճառելն ընդ քո իշխանութեամբ: Միթէ ի մէնջ արգելա՞ր ինչ: Զի՞ է գի եղիր ի սքի քում սքել քեզ Նոգոյն Սրբոյ. ոչ սքեցեր⁷ մարդկան, այլ Աստուծոյ (հմմտ. Ե. 4):

¹ ԱԲ չարտօք

² ԱԲ վասն գի

³ ԱԲ ասպ ուղղել] ուղղել ասպ

⁴ ԱԲ արարն

⁵ Ա դժընդակ

⁶ ԱԲ վրեժսն

⁷ Ա ըստեցեր

Տեսանե՞ս զծանրութիւն չարեացն եւ զարհամարհանաց: Եւ արդ՝ ո՞ւր են այնոքիկ, որ ընդ Հոգւոյն պատերազմին, լուիցեն աստանաւր, զի որպէս զՀաւրէ խաւսի յայտնապէս քարոզելով զաստուածութիւն Հոգւոյն:

Եւ լուեալ Անանիայ զրանս զայսոսիկ անկաւ եւ եհան զոգին (Ե. 5):

Յեղելոց աստի յայտ է, թէ մեծ է այս, քան զոր առ կաղուն արարայս է սպանանելն եւ զգաղտնի լեալն գիտելն: Եւ յոյժ մանաւանդ պարտ էր այսմ լինել, այսինքն՝ սպանանել, եւ ոչ այլ ազգ շահել զնա, զի ոչ էր արժան պարզաբար անցուցանել, զոր ինչ եղեւն, այլ որպէս զապականագործ փտութիւն ինչ ի բաց հատանել, զի մի՛ վնասեսցէ զբոլոր մարմինն: Եւ զի եւ նա իսկ շահեսցի ոչ ընդ երկար վարելով ի խորագոյն չարիս, եւ զի այլքն զգուշասցին, զի մի՛ ի բազումս տարածեսցի չարն: Բայց ոչ յանկարծակի պատուհասեսց, այլ նախ դատաստան կարգեաց: «Ընդէ՞ր, ասէ, որո՞վ կամաւք արարեր»: Ի սկզբանն ունել պարտ էր քեզ զինչսն եւ ոչ խոստանալ: Տե՛ս ո՞րչափ դժուարին է տաճարակապտութիւնն, զի այլ ոք ակտարին ցանկացեալ, թերեւս յիրաւի թաքուցանէր¹, քեզ զքոյդ ունել եւ ոչ գողանալ պարտ էր. զիա՞րդ արարեր զդա ընծայս տաճարին, եւ դարձեալ առ քեզ շորթեցեր: Յայտ է, զի ի բազում արհամարհանաց արարէր, վասն որոյ ոչ ունի հնար ներողութեան:

Բայց մի՛ գայթաղեսջիք, թէ եւ այժմ իցեն ոմանք տաճարակապուտք. զի եւ Յուդա այսպիսի² էր, այլ ոչ գայթաղեցան աշակերտքն: Այլ յանդիմանեսցուք զնոսա առաջի ամենեցուն, զի եւ այլքն երկիցեն: Ապա թէ ասիցէ ոք, թէ «Այժմ ընդէ՞ր ոչ զնորայն կրեն պատուհաս», ասեմ, թէ ընդ այն առաւել պարտ է զարհուրել, զի դժընդակագոյն³ չարեաց պատահին թէ ոչ ապաշխարեսցեն⁴:

Եւ եղև, ասէ, ահ մեծ ի վերայ ամենեցուն, որ լուան զայս (Ե. 5):

Նա պատուհասեալ եղեւ, եւ այքն մեծապէս շահեցան. զի թէպէտ եւ եղեն յառաջագոյն նշանք, այլ ոչ էր այլոցն այնպիսի երկիւղ:

¹ ԱԲ թագուցանէր

² Բ այնպիսի

³ Բ դժնդակագոյն

⁴ Ա ապաշարեսցեն

Ի ճահ իմն ղիպի ասացեալն, թէ «Ճանաչի ՏԼր յառնել¹ զդաբաստանս իւր, եւ ի գործս ձեռաց իւրոց ըմբոնեացի մեղաւորն» (հմմտ. Եզկ. ԻԸ. 22): Այսպէս եւ առ տապանակաւն եղեւ. սա² պատուհասեցաւ, եւ այլոցն երկիրդ մեծ անկանէր, եւ թագաւորն հեռացուց/32ա/անէր յինքենէ զտապանակն: Այլ վայ եւ աւաղ: Զի որոց պարտ էր հեռանալ, այժմ առաւել իմն հպին³: «Յոքն կացին երիտասարդքն, զսպեցին զնա եւ փարան թաղեցին» (Ե. 6): Իբրեւ փոյթ եւ խելացիք՝ յինքեանց առնեն զարժանն:

Եւ եղև իբրև ժամք երեք անցին, եւ կին նորա ոչ գիպէր զինչ եղևալն էր (Ե. 7):

Այս է երկիրդ վարդապետի, այս պատիւ աշակերտաց, լսողութիւն եւ հպատակութիւն: Երից ժամուց միջոց անցեալ եղեւ, եւ կինն ոչ ինացաւ: Ոչ ոք ասաց ի պատահելոցն, եւ մանաւանդ զի բաւական էր իրքն յայտնի լինել, այլ այնչափ երկնչէին, զի եւ խաւսել չհամարձակէին, զոր ինչ եղեւն: Ընդ այս եւ աւետարանիչս սքանչացեալ ասէ. «Կինն ոչ գիպէր զեղևալն» (Ե. 7): «Եմուր ի ներքս» (Ե. 7): Տե՛ս, ոչ զկինն կոչեաց Պետրոս, այլ սպասեաց մինչեւ իւրովի եմուտ: «Պատասխանի եր Պետրոս եւ ասէ. Ասա դու ինձ, ա՛յնչափ զնոց զգեղն վաճառեցր» (Ե. 8): Գիտակակից էր կինն եղելոցն, վասն այնորիկ եւ զնա քննէ՝ կամելով զնա ապրեցուցանել, զի այրն էր առաջնորդ մեղացն: Վասն այնորիկ ետ նմա պայման պատասխանոյ⁴ եւ իշխանութիւն ապաշխարութեան: Զի կարաւոր էր կինն յայնմանէ իմանալ, թէ Պետրոս գիտէ գեղեալսն, զի ոչ զայլ ոք, այլ զնոսին հարցանէր: Այլ բազում յամառութիւնն ոչ ետ նմա թոյլ զանձն ճողոպրել⁵ ի վրիժուցն, այլ եւ բազում համարձակութեամբ տայր պատասխանի. «Այո, ասէ, այնչափ»: Զի կարծէր որպէս ընդ մարդոյ խաւսել: Ո՞չ թէ որչափ դժուարին եւ ծանր էր իրքն, զի միով հոգևով առ մի մեղս միաբանեցին: Ասէ ցնա Պետրոս. «Զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն»: Իբրեւ նա ոչ կամեցաւ ասել զստոյգն, ինքն յանդիմանեալ կշտամբեաց զնա՝ յայտնի առնելով զվնասն, եւ ապա իրաւապէս ի վերայ յամառեցելոյն եղ զնոյն պատուհասն⁶, զորոյ

¹ ԱԲ առնել

² Ա ոգա, Բ ոգիայ] սա

³ Ա հրպին

⁴ Ա բ պատասխանույ

⁵ Ա ժողոպրել

⁶ ԱԲ պատուհաս

նմանապէսն մեղաւ: «Ահա ուրքն, որ թաղեցին զայրն քո արքարս, հանցն եւ զքեզ: Եւ անկեալ առ ոքս նորա եհան զոգին¹» (Ե. 9-10), *քանզի մաւտ առ նմա կայր:*

Եփր. Այսպէս սպանեալք եղեն տունն անանիանց, ոչ միայն զի գողացան եւ թաքուցին, այլ զի ոչ երկեան, եւ կամեցան խաբել զայնոսիկ՝ որ Հոգին Սուրբ ամենաքնին² բնակեալ էր ի նոսա:

Յոհ. Այլ թերեւս ասիցէ ոք, թէ յոյժ դառնապէս զնոսա պատուհասեաց: Եւ արդ ասա ինձ, ո՞ր է դառնագոյն. եթէ կրկուտ քաղելով ոք պատուհասի, ո՞չ յոյժ մանաւանդ տաճարակապուտն. քանզի սոցա ինչքն այնուհետեւ նուիրեալ եկեղեցւոյն էր: Զի որ ոք յանձն առնու զգոյնն իւր վաճառել եւ բաշխել, եւ ապա զղջացեալ³ արգելու, սեղանակապուտ է եւ անհնարին պատժոց արժանաւոր: Արդ, եթէ յիւրոց նուիրելոց խորոզն⁴ սեղանակապուտ է, յոյժ մանաւանդ, որ յաւտարացն⁵: Այլ եթէ ոչ այսպէս առ ոտս⁶ պատժին, մի՛ կարծեսցուք անպատուհաս մնալ: |32բ| Այլ զայն տեսցուք, զի վասն այսորիկ սոքա ամբաստանին, զի մեք զգուշացուք⁷, զի մեծամեծ չարիք ծնանին յայսպիսի⁸ ախտէ⁹, ազահուլթիւն, Աստուած արհամարհուլթիւն, ամպարչտուլթիւն¹⁰: Սմին վասն պատժեաց զնոսա սակս հասարկաց աւգտի: Այլ զի յոյժ ծանր հանդերձեալ էր¹¹ երեւիլ¹² Պետրոս եւ պատուհասիչ՝ զայս առնելով, գրեթէ բազում հարուածովքն պատասխանի առնէ ամենեցուն, նախ ցուցեալ զմեղսն եւ ապա¹³ տանջեալ:

Արդ, եթէ որ սուտ խաւսեցաւ միանգամ, թէ «Այո, այնչափ»՝ եւ այսպէս պատժեցաւ, զի՞նչ կրեսցեն յարակա ստախաւսքն եւ երդմնահարքն, որոց անվրէպ սպառնալիք գերանդւոյն մեծի պահեալ կայ: Այլ մի՛ յայն հայեսցուք, զի ոչ տանջիմք, այլ թէ ո՞չ մեղաք, զի թէ

¹ Բ զոգի

² Ա ամենաքընիս

³ Ա ողջացեալ] զղջացեալ

⁴ ԱԲ խորոզն

⁵ Ա օտարացն

⁶ ԱԲ ոտսն

⁷ Ա գուշացուք

⁸ Ա յասպիստ, Բ յայսպիս] յայսպիսի

⁹ ԱԲ յախտէ

¹⁰ ԱԲ ամբարչտուլթիւն

¹¹ ԱԲ > էր

¹² ԱԲ երեւելի] երեւիլ

¹³ ԱԲ ապա ցուցեալ

մեղուցեալք ոչ տանջիմք¹, դողալ առաւել պարտ է: Զի բազումք զառ ջրհեղեղաւն եւ զսողոմացւոցն եւ զՓարաւոնին յանդգնելով ոչ իսկոյն պատժին, զի պահեալ կայ նոցա վայն մշտենջենաւոր: Բայց կրեն ոմանք եւ այժմ մասնաւոր, որոց պարտ է զեղբարցն Յովսէփու² յիշել եւ ասել, թէ «Յիրաւի, քանզի մեղաւորք եմք» (հմմտ. Դան. Գ. 28):

Մտին երիտասարդքն, գտին գնա մեռեալ, եւ հանին թաղեցին գնա առն իւրում (Ե. 10):

Ուստի մտին, յայտ է՝ զի ի սրահէն Սողոմոնի, ուր եւ բնակէին իսկ: Այլ տե՛ս ի հաւտացելոցն անդէն իսկ լուծեալ զաւրէնսն. զի անվահեր³ ի մեռեալսն հպելով փութով զսպել⁴ թաղէին: Դիտեսցուք եւ զայս, եթէ զիա՞րդ առ ընդանիսն⁵ ուժգին⁶ էին առաքեալքն, եւ առ աւտարսն ներողակաք, զի ոչ այնչափ արտաքնոց⁷ իրք պատերազմի ընդ մեզ, որչափ որ յընտանեացն: «Եւ եղև երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցոյն, որ լուսն զայն» (Ե. 11): Եւ ո՛րք ոչ երկնչէր յառաքելոցն եւ սքանչանայր ընդ նոսա, կամ ո՛րք տեսանելով զսաստն զայն ոչ հեծեծէր եւ յոգւոց ելանէր, զի ամենեքեան երկուցեալք եղեն:

Եւ ի ձեռս առաքելոցն լինէին նշանք եւ արուեստք բազումք ի ժողովրդեանն (Ե. 12):

Յետ լինելոյ ի նոսա երկիւղին՝ յուրվագոյն նշանս առնէր եւ Պետրոս եւ այլքն, քանզի հաւատոցն բազմաց տարածանելով՝ նշանք յուրվագոյնք լինէին: «Եւ էին ամենեքեան միարան ի սրահին Սողոմոնի» (Ե. 12): Եւ ուստի՞ զայս առնէին, ինձ թուի յայնմանէ, զոր Քրիստոս յառաջագոյն ասաց նոցա՝ անդ լինել եւ ոչ այլուր մեկնել: Ուստի ոչ եւս այնուհետեւ ի տան, այլ ի տաճարին կացեալ մնային. ունկնդրութեան բանին պարապեալք⁸, զի բազում եւ մեծ էր հաւատ նոցա, որ առ Քրիստոս: Ո՛վ սքանչելեացն. առ վաճառարանին այնուհետեւ չըջեալ լինէին, եւ մեծաւ համարձակութեամբ բնակէին ի նշանաւոր

¹ ԱԲ > այլ թէ ո՞չ մեղաք, զի թէ մեղուցեալք ոչ տանջիմք

² Բ յովսէփու

³ ԱԲ անվեհեր

⁴ ԱԲ զսպել

⁵ Բ ընտանիսն

⁶ ԱԲ ուժգինք

⁷ Բ արտաքնոցն

⁸ Ա պարըսպեալք

տեղւոջն¹՝ ուր ամենայն հրեայքն ժողովէին եւ զամենայն գործ անդ վճարէին, եւ ի մէջ թշնամեացն զաւրանային: Եւ ընոյր մարգարէութիւնն, թէ «Գաւազան գաւրութեան² առաքեացէ քեզ Տէր ի Սիոն³, եւ փրկեսցս զու ի մէջ թշնամեաց քոց» (Մաղմ. ճԹ. 2): Այն⁴ ի/33ա/սկ էր նշանակ մեծի զաւրութեան, զի ըմբռնեալքն եւ կապեալք զայսոսիկ գործէին:

Եւ յայլոց անտի ո՛չ ո՛ք իշխէր մերձենալ ի նոսա (Ե. 13):

Այսինքն յառաքեալսն. զի ոչ ոք համարձակէր հպել ի նոսա: Զի առաւել զարմանալի էր այնուհետեւ⁵ Պետրոս, ընդ որ հայէին ամենեքեան հիացեալք վասն առաջին, երկրորդ եւ երրորդ ատենաբանութեանն եւ վասն նոյնքան նշանացն, զի այժմուս կրկին է նշան, յանդիմանելն⁶ զձածուկան եւ սպանանելն հրամանաւ: Եւ այլազգ. զի ասաց վասն բազմութեանն, թէ «ի տաճարին բնակէին». զի մի՛ զարմասցիս, թէ զիա՞րդ տեղի տային՝ անդ կալոյ, ասէ, թէ եւ ոչ հպել եւս ոք ի նոսա համարձակէր:

Այլ յարգէր զնոսա ժաղավորոյն եւ մեծարէր, եւ ոչ եւս դիւրաւ արհամարհեալք լինէին որպէս յառաջն ի կապակողացն: Եւ առաւել եւս յաւելուին հաւաքացեալքն ի Տէր, բազմութիւն արանց եւ կանանց (Ե. 13-14):

Այսուհետեւ զթիւն ոչ ասէ զհաւատացելոցն. այնպիսի բազմութիւն անեզր տարածեալ լինէր իրք հաւատացելոցն, եւ յարութիւնն քարոզեալ լինէր: Եւ այն իսկ էր զարմանք, զի ի սուղ ժամանակի, որպէս թէ ի միում պահու, այնչափ իրք եղեն ի ձեռն ձկնորսին եւ մաքսապետին եւ ընկերաց նոցին⁷, զի եւ երկիրս երկին եղեւ: Եւ այս յաղագս առաքինութեան նոցա եւ սքանչելեաց⁸ եւ համարձակութեան: Զի իբրեւ զհրեշտակս սքանչելիք էին ամենեցուն, աներկիւղք ի վշտաց եւ ի սպառնալեաց, մարդասէրք, խնամիչք, յաւրինիչք, ոմանց ընչիւք աւգնէին, կիսոց բանիւ, այլոց բժշկութեամբք հոգւոց եւ մարմնոց, «Մինչև ի հրապարակս հանել զհիւանդս⁹ եւ դնել բազ-

¹ ԱԲ տեղւոջ

² ԱԲ զօրութեանն

³ ԱԲ սիովնէ

⁴ Բ այլ

⁵ ԱԲ այնուհետ

⁶ ԱԲ յանդիմանել

⁷ ԱԲ > եւ ընկերաց նոցին

⁸ ԱԲ սքանչելեացն

⁹ ԱԲ զհիւանդ

մականար եւ մահճար իւրեանց, զի ընդ անցանել¹ Պերրոսի գոնէ հովանի նորա հասցէ ուրուք ի նոցանէ» (Ե. 15): Այս ինչ՝ առ Քրիստոսիւ ոչ եղեւ: Այլ տե՛ս աստ կատարեալ զառ ի նմանէ ասացեալն, թէ «Որ հաւատայ յիս, զգործսն, զոր ես գործեմ, նա գործէ եւ մեծամեծս եւս»:

Եւ ժողովը բազմութիւն շուրջ ի քաղաքաց անփի յերուսաղէմ՝ բերելով զհիւանդս եւ զնեղեալս յայսոց պղծոց, որք եւ բժշկէին ամենեքեան (Ե. 16):

Ամենայն ուստեք ի սքանչելեացն համբաւ ժողովէին ի հաւատացելոցն, ի բժշկելոցն, ի պատժողական երկիւղէն, ի համարձակութենէ առաքելոցն, յառաքինութենէ հաւատացելոցն, զի այս ամենայն ոչ միայն ի նշանացն էր, որ լինէր, այլ յաւէտ եւս յառաքինութենէ առաքելոցն: Զի թէպէտ եւ նոքա ըստ բազում խոնարհութեան զանձինս առ չափաւորս ունելով՝ զամենայնն Աստուծոյ վերադրէին, այլ ընդ առաքինութիւնս նոցա ուրախացեալ Հոգին՝ յայտնէր նոքաւք զիւր գաւրութիւնն:

Այլ տե՛ս ի հակառակացն զկենցաղն նոցա շարամանեալ: Նախ յառաջ տրտմութիւն եղեւ նոցա վասն համբառնալոյն Քրիստոսի, ապա ուրախութիւն վասն իջման Հոգւոյն: Դարձեալ տրտմութիւն վասն ծաղր առնելով կատակողացն, ապա ուրախութիւն վասն հաւատացելոց երից հազարացն եւ վասն առ կաղն եղելոյ նշանին: Տրտմութիւն դարձեալ վասն ըմբռմանն, եւ ապա աստանաւր ուրախութիւն եւ տրտմութիւն խառնեալ: Քանզի պայծառք էին, եւ Աստուած յայտնի արարեալ էր զնոսա, այն ուրախութիւն էր, այլ զի նոսին զիւրեանցսն սպանանէին՝ տրտմութիւն: Ուրախութիւն դարձեալ ի պայծառութենէ անտի եւ այնչափ նշանացն եւ յանթիւ հաւատացելոցն, եւ տրտմութիւն ի քահանայապետիցն² եւ յայլոցն ի վերայ յառնելոյ: Եւ բոլորովին իսկ զամենայն կեանս նոցա այսպէս տեսցես:

ԲԱՐՈՅԱԿԱՆՑ³

Արդ, մեծապէս հոգաբարձութեամբ զգուշասցուք յերդմնահարութենէ: Եւ նախ քան զայս ի գողութենէ, որ մայր է երդմնահարութեան, մանաւանդ ի տաճարակապուտ լինելոյ, զմտաւ ածելով

¹ Ա անցանելն, Բ յանցանելն] անցանել

² ԱԲ քահանայապետին

³ Ա > բարոյական

զխոստացեալ պատուհասս՝ առ ոմանս զեղեալս եւ առ այլս զսպառնացեալն, զի եւ յաստի տանջանաց զերծեալք եւ խոստացելոց բարեացն¹ ժամանեցուք շնորհաւք կեցուցչին Քրիստոսի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն²:

[ԳԼՈՒԽ ԺԳ.]

Յարուցեալ քահանայեքն եւ ամենեքին, որ ընդ նմա, եւ աղանդն սաղուկեցուց՝ լցան նախանձու (Ե. 17):

«Յարուցեալ»՝ այսինքն՝ շարժեալ նախանձու եւ խռովեալ վասն եղելոցն: «Արկին գձեռս յառաքելսն, եւ ևդին գնոսա հրապարակաւ ի բանսի» (Ե. 18): Եւ ընդէ՞ր հրապարակաւ, զի այժմ կարի յանդուզն հասին ի վերայ նոցա, այլ ոչ վաղվաղակի դատեցին զնոսա, ակն ունելով դարձեալ հաւանականս լինել նոցա երկնչելով ի տանջանաց:

Ապա³ հրեշտակ Տեառն ի գիշերի երաց գղութս բանսին եւ հանեալ գնոսա⁴ (Ե. 19):

Որ ինչ եղեւն ի հրեշտակէն՝ ի մխիթարութիւն էր նոցա եւ ի քաջալերութիւն, իսկ բանտողացն⁵ զնոսա՝ յուսումն եւ ի կշտամբանս, թէ իզուր յանդգնին⁶: Եւ տես, զոր ինչ Քրիստոս արար ընդ փակեալ դրունսն⁷ մտանելով, զնոյն⁸ եւ աստ եղեալ: Բայց ո՞չ թողացոյց հրեշտակն պահպանացն տեսանել զեղեալ սքանչելիսն, որպէս եւ ոչ ինքն Քրիստոս զայն. թէ ո՞րպէս յարեաւ: Զի որպէս գինի, որ ի ջրոյ խառնեալ լինի, ոչ բազմականքն՝ որ յարեցութեան են տեսանեն, այլ զընտրութիւնն այլոց հրամայեն, այսպէս եւ աստանաւր նոքա զարտաքս հանելն ի բանտէն զառաքելսն ո՛չ տեսանեն, այլ զնշանսն միայն եւ զարուեստս տեսին, յորոց եւ կարող⁹ էին ի միտ առնուլ, թէ աստուածային գործ էր, զոր ինչ լինէրն: Եւ ընդէ՞ր ի գիշերի զնոսա հանէր: Վայելչապէս. զի այսպէս հաւատալի լիցի

¹ Աբ բարեաց

² Ա > ամեն

³ Բ ահա] ապա

⁴ Բ գնոսա աստ

⁵ Աբ զբանտողացն] բանտողացն

⁶ Աբ յանդգին

⁷ Աբ դուռն] դրունսն

⁸ Ա եւ գնոյն

⁹ Աբ կարող

եղեալն, քան թէ ի տուրնջեան: Թերեւս զի եւ ոչ հարցանել զնոսա ժողովեալ լինէին, եւ ծածկեալ լինէր իրքն, իսկ այսպէս հռչակելի լինէր:

Գնացէք կացէք, ասէ, ի փաճարին եւ խաւսեցարոյք ընդ ժաղավրդեանն զամենայն բանս կենացս այսոցիկ (Ե. 19):

Ի բացեայ հեռի ուրեք երթալ կամ արտաքոյ կալ տաճարին ոչ թողացոյց զնոսա: Զի ի միտ առցեն ժպիրհքն բանտարկաւղքն, զի թէ ի պահապանացն¹ եղեն հանեալք՝ որպէս կարծէին² ինքեանք, կամ ոչ իսկ հաւանէին ելանել, կամ թէ ելեալք՝ փախչէին վաղվաղակի, կամ ի տեսողացն իսկ փախուցեալք լինէին, այլ ի տաճարին ոչ լինէին կացեալք խաւսելով ընդ ժո/34ա/ղովուրդն: Զի «Իրրեւ լուան՝ մտին ընդ առաւարն ի փաճարն եւ ուսուցանէին» (Ե. 21): Վայելչապէս ընդ առաւաւտն, զի ուսուցանել պատուէր առին, մնացին մինչեւ ցժամն՝ յորում լսել սովոր էին ժողովուրդն որպէս առ Քրիստոսիւ:

Եկն քահանայապետն եւ որ ընդ նմա, կոչեցին միարան գարեանն եւ զամենայն ձերակոյր որդուցն Իսրայէլի, եւ առաքեցին ի բանսն ածել զնոսա (Ե. 21):

Եփր. Տեսանե՞ս զիա՞րդ ջեռեալք էին: Զի թողին նոքա գալ կալ յաղաւթս ընդ առաւաւտն ի տաճարին, եւ փութացան նստել դատել զաշակերտսն Քրիստոսի. զի թէ ոչ մեծ թուէր նոցա քան զաղաւթսն չարչարելն զառաքեալսն, մարթ իսկ էր ի գնալն անդր՝ զի իբրեւ ուսուցանէին նոքա, ոչ կարաւ լինել ինքեանց ուրուք՝ յղել զնոցանէն: Այլ կատարէր բանն, թէ «Որ սպանանիցէ զձեզ, համարիցի մտերիմ պաշտաւնեայ գոլ Աստուծոյ»:

Իրրեւ եկին սպասաւորքն, ոչ գտին զնոսա ի բանսն. դարձան անդրէն պարմեցին, թէ գրանսն գրաք փակեալ ամենայն զգուշութեամբ, եւ զպահապանսն, զի կային առ դրանն, բացաք եւ ի ներքս, գոք ոչ գտաք (Ե. 22-23):

Յոհ³. Կրկին էր եղեալ զգուշութիւնն որպէս առ գերեզմանաւն Քրիստոսի, եւ կնիքն եւ զինուորքն: Առ որս ասելի է, թէ ով աստուածամարտք, զիա՞րդ ելին ընդ փակեալ դրուսն: Ո՞չ ահա մոլելոց է

¹ Բ պահպանացն

² ԱԲ կարծէինն

³ Բ > յոհ.

ատեանդ եւ բանքդ, զի զորս փակեալ զըրունքն ոչ կարացին ունել, յաղթահարել կարծէք: Այլ բարւոք էր, զի սպասաւորքն նոցա եկեալ յայտնապէս խոստովանեցին զեղեալսն: Եւ որպէս այնք սպասաւորք զՔրիստոսէ ասէին, թէ «Ոչ երբեք խաւսեցաւ ոք որպէս մարդն այն», նոյնպէս եւ սոքա հաւատարիմք գտան քան զնոսա, որք առ յարութեամբն ոչ ինչ սոքա թաքուցին, զի մի՛ քահանայապետքն խծբիծս ինչ կցեսցեն: Այլ տե՛ս զնշանսն զանազանեալս, զոմանս յառաքելոցն յայլս եղեալս, եւ զոմանս յինքեանս իսկ յառաքեալսն, որովք եւ պայծառք իսկ եղեն:

Իբրև լուան գրանս զայս իշխանք փաճարին եւ քահանայապետքն¹, հիանային, թէ զի՞նչ արդէս լինիցի այն (Ե. 24):

Այս ինչ եւ ի հնումն եղեւ առ Նաբուգոդոնասորաւ², զի մինչ ետես զմանկուսնսն աւրհնելով զԱստուած, յայնժամ եկն ի զարհուրանս: «Եւ եկն ոմն պարմեաց նոցա, թէ ահա արքն, գորս եղիքն ի բանքի, կան ի փաճարին եւ ուսուցանեն զժողովորդն» (Ե. 25): Բարւոք էր, զի ոչ վաղ-վաղակի նոցա ազդ եղեւ, այլ յառաջագոյն ի տարկուսանս եղեն, զի խորհելով եւ որոնելով զիրան, իմասցին աստուածային զաւրութեանն զեղեալ գործն, եւ ի ձեռն այլոց իմանան զամենայն, զի մի՛ կարասցեն ստել:

Յայնժամ երթեալ իշխանն հանդերձ սպասաւորաւքն ածեն զնոսա ոչ բռնութեամբ, զի երկնչէին ի ժողովրդենէն³, զի մի՛ քարկոծեսցին (Ե. 26):

Ո՛վ անաստուած բարուցն, ամենայն ուրեք զմարդկային երկիւղն երկնչին. պարտ էր յԱստուծոյ երկնչել, որ իբրեւ զթռչունս միշտ ի ձեռաց նոցա յափշտակէր զնոսա: «Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յարենի, եհարց զնոսա քահանայապետն. ո՛չ պարուիրելով պարուիրեցար ձեզ մի՛ խաւսել եւ մի՛ ուսուցանել յանունն յայն» (Ե. 27-28): Ո՞վ անամաւթ եւ /34բ/ կարծր անձինն, պարտ էր հարցանել, թէ ո՞րպէս եղէք⁴ ելեալ. այլ առ չար⁵ նախանձուն, իբրու թէ եւ ոչ միոյ իրիք նշանի եղելոյ, հեզագոյն հարցուածովքն պարտաւորէ. «Ո՛չ պարուիրելով պարուիրեցար ձեզ մի՛ խաւսել եւ մի՛ ուսուցանել յանունն յայն» (Ե. 28): Զանայ առ ի ցուցանել,

¹ ԱԲ քահանայապետն

² ԱԲ նաբուքոդոնոսորաւ

³ Ա ի ժողովրդէն

⁴ Բ եղէք

⁵ ԱԲ > առ չար

Թէ իրաւապէս պատուիրէր նոցա մի՛ խաւսել յանունն Յիսուսի, զոր եւ առ չարութեանն, զոր ունէին ընդ նմա, եւ ոչ զանունն անգամ կամէին¹ յիշել: Առ որ ասելի է, թէ «Ով անմիտ, եթէ դոքա հաւանեցան ձեզ՝ բարւոք² պատուիրէք», ապա թէ ի նմին ժամու ասացին ոչ հաւանել, որպիսի³ պարտաւորութիւն է այդ. ահա ամբաստանութիւն անյար եւ լի անմտութեամբ: Այլ հայեաց զկեղծաւորութիւնն. զի այսուհետեւ ոչ սպանողականս կամ զուր³ պատուհասողս կամին ցուցանել զինքեանս, այլ որպէս վասն ճշմարտութեան զայն սպառնացեալ:

Եւ արդ⁴ աւասիկ լցէք, ասէ, գերուսաղէմ ուսմամբ ձերով, եւ կամիր ածել ի վերայ մեր գարին գառն⁵ զայնորիկ (Ե. 28):

Քանզի զարհուրեցուցանել զնոսա կամէր եւ արգելուլ զքարոզութիւնն⁶, զոր քաջ մանաւանդ ախորժէր, քան թէ զնոսա սպանանել: Այլ զի այնմ ոչ եղեւ հնար, կամի այժմ զամենեսեան շարժել ի ցասումն, զի յաճախ յարուցէ նոցա գտագնապս չարչարանաց, ասէ. «Կամիր ածել ի վերայ մեր⁷ գարին գառն» (Ե. 28): Զայս ինչ եւ Քրիստոսի արար հարցանելով, թէ «Դու⁸ ես Որդի Աստուծոյ», զի ամենեցուն զնա մահապարտ երեւեցուցէ: «Զարին գառն զայնորիկ» ասէ, զՔրիստոսի՝ յայտ է: Եւ տես⁸ յամառի տակաւին, զի մարդ լոկ ցուցանէ⁹ զնա: Եւ զոր ասէն այս է, թէ քարոզութեամբ ձերով եւ նշանաւք, զոր առնէք յանուն նորա, կամիր զմեզ անիրաւ սպանաւղս¹⁰ երեւեցուցանել: Այլ տես՝ զնոսա դարձեալ հեզութեամբ ընդ նոսա խաւսեցեալ. եւ այն զի ի դէպ էր ասել, զի⁹ դուք, ո՞վ կամ ո՞ք ոմանք էք հակառակել ընդ հրամանն Աստուծոյ: Բայց ոչ ասացին, զի բազում էր իմաստութիւն նոցա, այլ կարգաւ ողորջանաց եւ խորհրդակցութեան եւ ողորմելով դիտէին, թէ զիւ⁹ զազատեսցեն զնոսա: Բազում հեզութեամբ պատասխանեն, սակայն եւ այսպէս աստուածամարտս զնոսա ցուցանեն, եւ լուր ահա.

¹ Բ կամին

² ԱԲ բարիոք

³ ԱԲ զուրս

⁴ ԱԲ > արդ

⁵ ԱԲ գառնն

⁶ Բ քարոզութիւն

⁷ ԱԲ > մեր

⁸ ԱԲ տես, զի

⁹ ԱԲ ցուցէ

¹⁰ ԱԲ սպանող

**Պատասխանի եր Պեպրոս եւ այլ առաքեալքն եւ ասեն. Տնա-
զանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան (Ե. 29):**

*Ոչ եւս որպէս յառաջնուամն ասեն ցնոսա, թէ «Դուք ընտրեցէք»,
զի նոքա աստուածամարտք եւ սուտք եւ անիրաւք յանդինամեալք
եղեն: Եւ ոչ ասացին, թէ չասացա՞ք ձեզ յայնժամ, թէ ոչ կարեմք զոր
տեսաք եւ լուաք¹ չպատմել՝ զի չէին պատուասէրք: Այլ դարձեալ
զնոյն ասեն զխաչն, զյարուլթիւնն:*

**Աստուած հարցն մերոյ յարոյց զՅիսուս, զոր դուք սպանէք կա-
խեալ զփայլել, զնա Աստուած առաջնորդ եւ փրկիչ բարձրացոյց
տալ ապաշխարութիւն Իսրայէլի եւ թողութիւն մնդաց (Ե. 30-31):**

*Մեծ գոլ ցուցանէ զամբարշտուլթիւն նոցա. եւ ի Հայր դարձեալ
զամենայն, որ ինչ զՔրիստոսէ՝ վերաբերէ, որպէս զի մի՛ թուեսցի
Քրիստոս ի Հաւրէ աւտար գոլ: Եւ այս իսկ սաստիկ զնոսա խո-
ցէր, ցուցանելն զնոսա Հաւր |35ա| թշնամիս: «Քարձրացոյց», ասէ,
ոչ պարզաբար զյարուլթիւնն եւեթ ցուցանէ այսու, այլ եւ զվերա-
նալն առ Հայր: Եւ արդ. ո՞ր ճարտասանութիւն աստանաւր, եւ ոչ
մի, այլ յամենայնի չարչարանքն² եւ յարուլթիւնն եւ համբարձումն
ատենաբանեալ, որ յոյժ իսկ անհաւանական³ գոլ թուին: Սակայն
ոչ իշխանքն եւ ոչ բազմութիւնն ընդդիմադրել ունէին առ այս, այլ
ոմանք լուել սպառնային եւ այլք ուսեալ լինէին, ուստի եւ զշահն
ի վերայ ածէ: «Տալ, ասէ, ապաշխարութիւն Իսրայէլի» (Ե. 31): Եւ զհե-
թանոսս ոչ յիշէ, զի մի՛ ցասման կամ նախանձու պատճառս տա-
ցէ նոցա, այլ ասէ⁴. «Եւ թողութիւն մնդաց» (Ե. 31): Տե՛ս ի կարգի պա-
տասխանտրութեան⁵ վարդապետութիւն աւարտեալ: Եւ զի յիշելով
զհանդգնութիւն նոցա՝ զթողութիւն ի վերայ ածեն, ցուցանելով զի
ինքեանք ըստ որում սպանին զնա, արժանի են մահու, եւ որ ինչ ի
նմանէ տուեալ լինի, իբրեւ երախտաւորաց, լինի տուեալ: Եւ այս է
«թողութիւն մնդաց», որ ցուցանէ զմեծ առ նոսա զսէրն եւ զանոխակա-
լութիւնն Քրիստոսի, թողութիւն տալով զղջացելոց խաչողացն, զոր
եւ ի Հաւրէ հայցէր՝ «Նայր, թող սոցա» (Ղուկ. ԻԳ. 34):*

¹ ԱԲ լուաք եւ տեսաք] տեսաք եւ լուաք

² ԱԲ չարչարանք

³ ԱԲ անհաւանականք

⁴ Ա ասէ նոցա

⁵ Ա պատասխանաւորութեան

Եւ մեր ենք վկայք բանիցս այսոցիկ (Ե. 32):

Բազում Համարձակութեամբ խաւսի, ունելով զվստահութիւն Հաւատարմութեանն¹: «Վկայք ենք նորա բանիցս այսոցիկ»: Որո՞ց, եթէ ապաշխարութիւն, եթէ թողութիւն մեղաց խոստացաւ, զի յարութիւնն այնու իսկ խոստովանեալ լինէր ի Հաւատալն², թէ «թողութիւն տայ»: «Եւ մեր վկայք ենք եւ Նոզին Սուրբ» (Ե. 32): Որ թերեւս չէր եկեալ, եթէ ոչ յառաջագոյն մեղքն³ լուծեալ էին. որպէս զի աներկբայելի նշան⁴ այս իսկ է յարութեանն⁵: Այլ տես, զի զՀոգւոյն տուչութիւնն ոչ միայն ինքեանց ի կիր առնու, զի ոչ ասէ, թէ զոր ետ մեզ, այլ «Ձոր եր, ասէ, Աստուած հնազանդեցելոց իւրոց» (Ե. 32): Ձայս ասեն զանձինս չափաւորելով, Համանգամայն եւ յայտ առնեն, թէ եւ նոցա Հնար է առնուլ, թէ Հնազանդեսցին Աստուծոյ: Այլ այնպէս պինդ էր յամառութիւն նոցա, զի այնքան գործովք եւ բանիւք խրատեալք՝ ոչ առնուն ի միտ, որպէս զի յիրաւի դատապարտեսցին՝ ոչ կամելով զաւգուտն իւրեանց: Ձի վասն այսորիկ թոյլ տայր Աստուած մատնել սոցա ի դատաստան, զի նոքա խրատեսցին, եւ ամենեքեան ուսանիցին, եւ առաքեալքն ի Համարձակութիւն յարիցեն:

Իսկ նորա իրրեւ լուան, ասէ, արաբանային խորհէին սպանանել զնոսա (Ե. 33):

Տե՛ս զխիստ խակութիւնն: Այլքն լուեալ զղջանային, եւ նոքա առաւել զրդեալք եռային ցասմամբ զնոսա սպանանել, զորս պարտ էր մանաւանդ իբրեւ զմարգարէս աւետաբերս պատուել եւ առաւել եւս, իբրեւ զթողութեան պատգամաւորս եւ յարութեան ի նոր աւուրս քարոզաւղս, այլ ոչ մահու սպառնալ⁶ թողութիւն մեղաց լսելով: Ո՞վ⁷ եղկելի, ոչ տանջանք պահանջէ, ոչ վրէժ, եւ սպանանե՞լ մտաբերես: Այլ պարտ էր կամ յանդիմանել զդոսա իբրեւ զստախաւս⁸, կամ զայս ոչ կարելով⁹ առնել՝ Հաւանել, այլ ոչ սպանանել: Այլ յարբեցութենէ ակտին չգիտէին զի՞նչ /35բ/ արասցեն,

¹ Աբ հաւատարմութեան

² Աբ ի հաւատալ

³ Աբ > մեղքն

⁴ Ա նշանս

⁵ Բ յարութեան

⁶ Աբ սպառնալով

⁷ Ա > ո՞վ

⁸ Բ գստախոսս

⁹ Աբ կամելով] կարելով

զի էին դարձեալ նոքա ի վտանգի եւ սոքա ի դիւրութիւն¹ եւ ուրախութեան: Նոքա փոքր ինչ նուազ՝ եւ հերձուին ի սաստիկ բարկութենէն, զոր յայտ առնէ առատանայինն: Զի այսպէս առնելն չարաչար՝ մանաւանդ կրել է² չարաչար, որպէս որ զադամանդ հարկանէ՝ ինքն յաւետ առաւել վտանգի³, այսպէս սոքա մեծաւ համարձակութեամբ ի դատաստանի կալով առանց հոգալոյ զբանն խաւսէին, եւ դատաւղքն ի մեծ իմն անճարութիւն վտանգէին:

ՅՈՐԴՈՐԱԿ

Զի այսպէս մանաւանդ տնանգն քան զճոխսն ի դիւրութեան վայելեն: Զի մեծատունն իբր զքաղաք է անպարիսպ ի մէջ դաշտի, որ բազում կողմանց յինքն ձգէ զդաւաճանաւղան, գտրտմութիւն, զբարկութիւն, զերդումն եւ զայլս: Իսկ տնանգութիւն⁴ դղեակ է ամուր պատեալ պղնձով, զոր ոչ կարեն տրտմեցուցանել եւ ոչ մի վտանգք փորձութեանց, որ թէ գան ի վերայ, որպէս առաքելոցն, որով ոչ միայն յայլոց ախտից, այլ եւ յերդնլոյ կարասցուք զանձինս պարսպել: Զի երդումն որոգայթ է սատանայի: Տե՛ս զՅեսու առ քաբաւոնացիսն երդուեալ՝ եւ զՀերովդէս ի դժնդակ չարիս ըմբռնեալ: Կտրեա զլարան եւ ոչ ըմբռնիս յորոգայթն⁵: Եւ մեծահոգողութեան եւ ազատամիտ առաքինութեան կալ աւրինակ զառաքեալսն սուրբս: Բայց թերեւս ասիցէ ոք, թէ «Ո՛ր ոք ի մարդկանէ այսպիսի շնորհս վայելելով ոչ արդեւք մեծ լինէր եւ պայծառ»: Այլ⁶ դու տե՛ս նախ քան զշնորհսն զիս՝ որ էին ժուժկալք միաբան յազաւթս՝ յուսալով ի վերին տեսչութիւնն: Նա զի եւ դու հոգի ընկալեա եւ յոյս ունիս արքայութեանն, եւ ոչ ինչ այնպիսի տազնապիս⁷. Իսկ զնոսա փորձութիւնքն ի միմեանց առնուին: Եւ ոչ ամենայն ինչ շնորհացն էր, այլ եւ յոլով ինչ իւրեանց փութոյն եւ լաւութեանն: Զորս⁸ իբրեւ սպանանել սպառնացան՝ ապրեցոյց զնոսա Գամաղիէլ:

¹ Աբ դիւրութեան

² Աբ կրել] կրել է

³ Բ գանի] վտանգի

⁴ Աբ տնանկութիւն

⁵ Աբ յորոգայթսն

⁶ Բ արդ] այլ

⁷ Ա տազնապիս

⁸ Աբ զոր

[ԳՆՈՒՄ ԺՂ.]

Յարուցեալ ոմն, *ասէ*¹, ի մէջ արեւնին փարիսեցի, որում անուն էր Գամաղիէլ, արեւնուսոյց, պապուական ամենայն ժողովրդեանն (Ե. 34):

*Սա վարդապետն Պաւղոսի է: Եւ զարմանք են ահա, զի ըստ կամաց իւրոց ունելով զգատարանն², եւ աւրինացն քան զբազումս քաջ գիտակ, զիա՞րդ ոչ³ եւս էր հաւատացեալ: Այլ եւ չէ ի դէպ կարծել արդէն իսկ բողոքովին գոլ սմա ոչ հաւատացեալ, եւ այս յայտ ի նորա բանիցս է: «Տրամայեաց, *ասէ*, սակաւիկ մի գարսն արքաքս ելանել» (Ե. 34): Վայելչապէս. *զի մի՛ թուիցի ի նոցա կողմն⁴ գոլ, կամ վասն նոցա ասել, զոր ասաց⁵. «Արք իսրայէլացիք⁶, *ասէ*, հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ զինչ արժան իցէ տանել» (Ե. 35): Տե՛ս զիմաստուն հրապարակախաւսութիւնն, թէ զիա՞րդ յառաջին բանիցն յերկիւղ զնոսա արկանէ: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ զնոցա իւր խորհի՛ իբր ընդ համակրաւնս հեզութեամբ ընդ նոսա խաւսի, սակայն որպէս ընդ արբեալս սրտմտութեամբ եւ չարութեամբ: «Արք իսրայէլացիք⁷, *ասէ*, հայեցարուք ի ձեզ».* մի՛ վայրապար եւ մի՛ որպէս դէպ լինի բերեալ լինիք իբրեւ փշեալք⁸: Զի*

Յառաջ քան զա/36ա/ուորսս զայսոսիկ յարեաւ Թելոսս ասել զանձնէ՛ թէ իցէ ոմն, յորս⁹ ական արք թուով իբրն չորեքարիւր¹⁰, որ սպանաւ, եւ ամենեքեան, որ միարանեալ էին ընդ նմա՝ քակրեցան եւ եղեն յոչինչ (Ե. 36):

Աւրինակաւք ոմամբք կամի միսիթարել զնոսա եւ մտախոհս առնել: Եւ ոչ ի հին պատմութեանց բերէ ի մէջ, թէպէտ բազումս¹¹ ունէր ասել, այլ զնորագոյնս, որ մանաւանդ զաւրեղ էր առ հաւատալ: Սմին վասն¹², թէ «յառաջ քան զայս աւուրսս» (Ե. 36): Բայց նախ քան զյա-

¹ ԱԲ ասէ ոմն] ոմն ասէ

² Բ զգատատանն] զգատարանն

³ ԱԲ > ոչ

⁴ ԱԲ կողմ

⁵ ԱԲ ասացս

⁶ Ա իսրայէլացի

⁷ Ա իսրայէլացիք

⁸ ԱԲ ասչեալք

⁹ ԱԲ յոր

¹⁰ ԱԲ չորեքարիւր

¹¹ ԱԲ բազում

¹² Բ վասն, ասէ

րացոյցս ասաց՝ «հայեցարուք ի ձեզ», ցուցեալ այսու՝ ստույթեամբ զնոսա եւ ի զուր մոլեալս: Զի թէ վաղվաղակի ասացեալ էր, թէ «Ի բաց կացէք եւ թոյլ փութ արանցդ» (Ե. 38), եւ ինքն իսկ եղեալ էր կասկածաւոր, որպէս Նիկողիմոս առ փրկչաւն, եւ բանն այսպէս¹ ոչ լինէր զաւրաւոր, այլ յետ աւրինակացն բանն զիւրն էառ զաւրութիւն: Վասն որոյ եւ զայն, որ յուրվագոյնն ապստամբեցւոյց² ի վերջոյ զնէ:

Յնք նորա, ասէ, յարեալ Յուդաս գալիլեացի³ յաւուրս լինելոյ աշխարհագրին, եւ ապստամբեցոյց⁴ ժողովուրդս բազում⁵ (Ե. 37):

Եփր.⁶ Արդ, յարոյց զսոսա սատանայ նախ քան զծնունդն եւ առ ծննդեամբն⁷ Տեառն մերոյ. զի լուաւ նա զծննդեան⁸ նորա ի բանից անտի հրեշտակին, որ առ Զաքարիա եւ Մարիամ, այլ եւ ետես⁹ զի արգելաւ Շմաւոն ծեր, զի մի ճաշակեսցէ զմահ մինչեւ տեսցէ զտէր մեր Յիսուս Քրիստոս, փութացաւ, զի ի ձեռն այսոց ապստամբաց՝ վնասեսցէ զխորհուրդն Քրիստոսի: Սակայն փութով որպէս նա, այնպէս¹⁰ եւ սա կորեաւ, եւ որք ընդ¹¹ նմա հաւանեալք էին՝ ցրուեցան:

Յոհ.¹² Սմին վասն ոչ զմին միայն յիշեաց, այլ եւ զերկրորդն, զի յերկուց վկայից հաստատեսցէ զբանն: Ունէր ասել եւ զեզիպտացին եւ զչորս հազարսն, այլ զսոսա բաւական համարել գայ ի խնդրելին: «Եւ զարդիս ասեմ ձեզ, ի բաց կացէք յարանցդ յայդցանէ¹³ եւ թոյլ փութ դոցա, զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդ¹⁴ այդ կամ գործդ, քակտեսցի, ապա թէ յԱստուծոյ՝ ոչ կարէք քակտել գոռս» (Ե. 38-39): Տե՛ս որպիսի՝ հեզութեամբ լի է բանս եւ համառաւտ, եւ լցեալ հանճարով: Ոչ զնոսա նախատելով թշնամանէ, այլ միայն պատմողաբար ասէ, թէ «սպանան», եւ ոչ զսոսա ամբաստանելով եւ սրտմտութեամբ յիշէ, եւ ոչ վնասաբանէ ինչ

¹ Բ այնպէս

² ԱԲ ապստամբեցոյց

³ Ա գաղիլեացի

⁴ Ա ապստամբեցոյց

⁵ ԱԲ բազում գկմի իւր

⁶ Գ > եփր.

⁷ ԱԲ ծննդեամբն

⁸ ԱԲ ծննդեանէ

⁹ ԱԲ տես] ետես

¹⁰ ԱԲ սոյնպէս] այնպէս

¹¹ ԱԲ > ընդ

¹² Գ > յոհ.

¹³ ԱԲ յայցանէ

¹⁴ ԱԲ խորհուրդ

կամ ասէ, թէ զի «Թէպէտ եւ երկոտասանք էին՝ եւ արդ բազումք, մի՛ երկնչիք ի բազմութենէն»:

Եւ դարձեալ. զի չէր բաւական հաւանեցուցանել, թէ յայտնի ասէր վասն Քրիստոսի, թէ ահա ի բազում ժամանակաց հետէ լուան նմա ամենեքեան եւ հաւատան հրեայք եւ հեթանոսք, եւ լցաւ Երուսաղէմ ուսմամբ դոցա, արդ ընդէ՞ր ոչ հաւատայք, ապաքէն այս ոչ է մարդկային, զի ոչ կարացէք քակտել զդա: Սակայն զայս ինչ այլովք բանիւք տայ իմանալ: Զի ոչ ասաց, թէ Աստուած է Քրիստոս, այլ ի գործոյն յայտ արար, թէ է, յասելն, թէ յԱստուծոյ իցէ՛ ոչ ոք զաւրէ քակտել զդա: Եւ տես՝ ոչ համարձակեցաւ մարդկային ասել, այլ եւ ոչ աստուածային. զի թէ յԱստուծոյ ասէր գո՛ւ՝ հակառակէին, եւ թէ ի մարդկանէ՛՝ եւս առաւել զինէին: Վասն այսր ամենայնի հրամայեաց նոցա սպասել կատարածին: Զի թէ մարդկային իցէ, զի՞նչ /36բ/ պէտք են այսչափ դժուարանալ, զի չեն իսկ կարաւտ ի ձեռն ուրուք սպանանիլ, այլ անդէն իսկ յինքեանց յինքեանք լուծեալ քակտեսցին եւ ի բաց հոսեսցի բազկացուծիւն նոցա: Ապա թէ աստուածային՝ ոչ կարէք դուք ձերով տկար ուժով հաղթել նմա: Եւ ապա ահագին եւ անպատշաճ իրաւքն զարհուրեցոյց զնոսա:

Գուցէ, ասէ, եւ աստուածամարտք գրանիցիք¹ (Ե. 39):

Զի զի՞նչ² արգելու զնա, զի եւ զձեզ քակտեսցէ. զի դուք ընդ Աստուծոյ մարտնչել³ ոչ կարէք: Տե՛ս զիա՞րդ յոյժ անըմբռնելի էր բան նորա, որով եւ սաստիկ զայրագնեալքն եւ արիւնարբուքն հաւանեցան: Արդ, ստուգապէս պատմէ եւ Յովսէպոս⁴, թէ որքան համարձակեցաւ նա այնուհետեւ ասել, թէ «յԱստուծոյ է գործն»: Յորժամ յիրողութեանցն զհաւատարմութիւն ընկալաւ, այսինքն՝ ի սքանչալեացն զյարուծիւնն Քրիստոսի, բայց եւ առժամայն իսկ՝ սաստիկ եւ անաչառ էր համարձակութիւն նորա: Ոչ ասաց, թէ զի ոչ քակտեցաւ՝ յԱստուծոյ է, այլ թէ «յԱստուծոյ է»՝ ոչ քակտի, եւ ոչ բնաւ իսկ ոք քակտել կարէ: Որով զազանամիտքն պատկառեցին յիմաստութենէն, ի պատուոյն, ի կարծեաց ահաւոր եւ ստուգախաւս բանիցն: Ուստի հաւանեցան ոչ սպանանել, այլ դեռ գանիւ տանջել:

¹ ԱԲ գտանիցի

² Ա ինչ] զինչ

³ Ա մարտընչել

⁴ Բ Յովսէպոս

Նաւանեցան նմա, ասէ, եւ կոչեալ գառաքեալսն գան հարին (Ե. 40):

Զի թէպէտ եւ աներկբայելի իրավաբանութեանն ընդդիմամարտել ոչ ունէին, սակայն զցասումն լցին զիւրեանց, եւ դարձեալ զի տանջելովն՝ երկեցուցանել ակն ունէին: «Եւ պապուիրեցին մի՛ խաւսել եւ մի՛ ուսուցանել յանուն Յիսուսի» (Ե. 40): Տե՛ս՝ դարձեալ սպառնան, թէպէտ գիտէին, զի ոչ ինչ վճարեն այնու, սակայն զիւրեանցն ցուցանեն, զի այսպէս լիբբ է չարութիւն, զի եւ յանհնարինսն ժրտին՝¹ ձեռնարկել: «Եւ նորա գնացին խնդալով յերեսաց ափնին, զի վասն անուան Յիսուսի՝² արժանի եղն անարգելոյ» (Ե. 41): Այսինքն՝ վասն քարոզելոյն զանունն Յիսուսի, զոր սպառնացան հրեայքն, մի՛ ուսուցանել յանունն յայն, վասն որոյ տանջեալք՝ խնդալից եղեն: Եւ թէպէտ ոչ սպանան՝ վասն հաւանելոյ հրէիցն Գամաղիելի՝³, այլ զպատուէր նոցա այլ ընդ այլոյ լուեալ գնացին:

Եւ զամենայն ար ի փան եւ ի փաճարին՝ ոչ դադարէին աւեփարանել եւ ուսուցանել զՅիսուս (Ե. 42):

Բարէ. քանիցս անգամ գան արբեալ⁴ լինին, եւ դարձեալ զվարդապետութիւնն տարածեալ, մինչ զի եւ առտնին եւ ի տաճարին ուսուցանէին: Քան զո՞րչափ նշանս այս ինչ ոչ իցէ սքանչելի, որ բազում առաւելութեամբ զանազանեալ է ի կրից առաջնոցն սրբոց: Զի եւ Երեմիաս գանս էառ վասն բանին Աստուծոյ, եւ Եղիա սպառնալիս կրեալ փախստեայ գնայր, եւ այլք բազումք այսպիսի: Բայց սոքա ոչ ի նշանացն միայն, այլ եւ յիւրեանց փութոյ առաւել զԱստուծոյ զաւրութիւնն ցուցանէին: Եւ ոչ ասաց, թէ ցաւս ոչ կրեցին, այլ թէ գանս կրեալ խնդալիցք էին: Եւ այս ուստի՞ է յայտ. ի համարձակութենէն, որ յետ այնորիկ, զի այնպէս եւ յետ գանիցն միշտ առաւելեալ լինէին ի քարոզութեանն⁵ դեգերեալք⁶:



¹ ԱԲ ժտին

² Բ > յիսուսի

³ Ա գամաղիէղի

⁴ Բ արգել] արբեալ

⁵ ԱԲ քարոզութիւնն

⁶ Ա դեգերեալք

Եւ յաւուրսն յա/37/յնոսիկ ի բազմանալ աշակերտացն (Ձ. 1):

Ո՞վ սքանչելեացն. յորժամ այս ամենայն լինէր, յորժամ գանս եւ հարուածս, յորժամ սպառնալիս բազումս, յայնժամ բազմանայր թիւ աշակերտացն: Այլ տե՛ս զստուգութիւն պատմագրողիս: «Եղև¹ փրփունք յունաց առ երրայցիսն, զի արհամարհեալ լինէին ի պաշտաւնն հանապազորդ այրիք նոցա» (Ձ. 1): Ոչ թէ անդէն ի մաւտոյ եղեւ այս ինչ, այլ ժամանակի ընդ մէջ անցանելոյ, այլ սովորութիւն է գրոց այսպէս ասել ի բազում տեղիս. «Եղև, ասէ, փրփունք յունաց» (Ձ. 1):

Տե՛ս՝ ի բազմութենէն զայս ինչ եղեալ. քանզի ամենայնիւ ստուգութիւն եւ հաստատութիւն առ բազմութիւնն² ոչ գտանի: Եւ ուստի⁶ լինի այս, յայտ է, զի յանփութութենէ, զի բազումք ի քահանայիցն հպատակէին հաւատոցն, որպէս յետոյ ասէ: Եւ զի պատուականազոյն թուէր ազգն այն, որոց կարծէին բազմութիւնն աւելի նուիրել պաշտաւն, ըստ որում եւ եղեւ տրտունջ յունացն³: Յունականս զայնոսիկ կոչէին, որք ի յունարէն բարբառ խաւսէին. յայտ է, զի վասն երկար բնակելոյ հրէիցն ի մէջ նոցա, զի ոչ ամենեքեան խաւսէին յունարէն: Անտես լինէին, ասէ, ի հանապազորդ պաշտամանն, ապա ուրեմն աւր ըստ աւրէ պաշտաւն լինէր այրեացն: Եւ տես, զի պաշտաւն եւ ոչ ողորմութիւն զսա կոչէ, զի ոչ զարարաւղսն եւեթ, այլ համանգամայն եւ զկրաւղսն այսպէս ասելովս բարձրացուցէ:

Այլ տրտունջն զի եղեւ՝ ոչ էր ըստ չարութեան, այլ ըստ պղերգութեան բազմութեանն⁴ թերեւս: Վասն այսորիկ եւ աւետարանիչն յառաջագոյն ի մէջ բերէ զիրն, զի ցուցցէ, թէ ոչ փոքր չար էր յառաջելով: Բայց եւ զայս տեսլիր՝ թէ զիարդ փորձութիւնք չարեացն անդէն ի սկզբանն՝ ոչ միայն արտաքուստ, այլ եւ ի ներքուստ ի վերայ յառնէին առաքելոցն: Եւ մի՛ յայս եւեթ հայեսցիս, թէ զիարդ փութով խնդիր իրացն ուղղեալ եղեւ, այլ զի մեծ չար էր հեղգութիւնն եւ տրտունջն: Ուստի եւ առաքեալքն որպէս առ արտաքինսն՝ ոչ իւրեանց կամաւ, այլ ըստ հարկի պատասխանատրէին, այսպէս եւ առ իւրեանցսն⁵:

¹ ԱԲ եղև ասէ

² ԱԲ բազմութեան

³ ԱԲ յունաց

⁴ Բ բազմութեան

⁵ Բ իւրեանսն

Զի կոչեցին, ասէ, երկուրասանքն բագմութիւն աշակերտացն եւ ասեն. Ոչ է մեզ հաճոյ թողուլ¹ գրանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանն (Ձ. 2):

Քանզի հարկաւորացն կարեւորագոյնն նախապատուելի է, սմին վասն յառաջագոյն զանտեղին² ասէին³, իբրու զի ոչ էր վայելուչ փութով երկաքանչիւրոցն ի միասին լինել: Այլ տես, թէ զիարդ վաղվաղակի եւ այսմիկ նախախնամութիւն եւ հոգ առնէին. եւ ինքեանք ի քարոզութիւնն փութային, եւ ընտրեցին կարգել առ այն, ինչ որ⁴ արս՝ որ առաւել երկիւղածք էին ի նոսա:

Ընտրեցէք, ասեն, եղբարք՝ վկայեալս ի ձեռք արս եւթն, գորս կացուցորք ի վերայ պիտոյիցս այսոցիկ (Ձ. 3):

Այսինքն՝ զի իցեն լի Հոգւով եւ իմաստութեամբ: Եւ քանզի յորժամ զՄատաթիայն ձեռնադրել հանդերձեալ էին, յառաջագոյն զպէտս իրացն ցուցանէին, զի պակասութիւնն⁵ լցցի, այսպէս եւ աստ զպէտսն յայտնեն: Եւ ոչ յառաջագոյն արարին զայս, այլ սպ/37բ- /ասեցին մինչեւ պէտք իրացն յայտ լինէր ի տրտնջողացն, որում ոչ ներեցին բազում անգամ այսմ իրաց լինել: Եւ տես, զգատաստան ընտրութեան⁶ այսոցիկ նոցա առնել յորդորէին, զի հաճոյ իցեն ամենեցուն, եւ որ վկայեալ իցեն յամենեցունց, զայնոսիկ յառաջ արկցեն: Զի եւ մեք ուսցուք զնոյն, քանզի յոյժ բարի եւ զեղեցիկ է զայսպիսիսն ընտրել:

Եւ եւթն այր յառաջ կացուցանէին, եւ ոչ եւս երկոտասան ըստ ինքեանց, եւ իմաստունք եւ վկայեալք բարուք եւ կենաւք: Արդ, յորժամ զՄատաթիայն պարտ էր յառաջ մատուցանել. «Պարտ է, ասէին, յնկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի» (Ա. 21): Այլ աստ՝ ոչ այնպէս, զի ոչ էր այնպիսի աստիճան ընտրութեան⁷, եւ ոչ եւս վիճակաւ յորդորէին ընտրել, զի այն նուազ էր, վասն չեւ եւս եկեալ Հոգւոյն: Այլ աստ կամաւք ամենեցուն, եւ այն՝ զի ինքեանք կարաւղք էին ընտրել Հոգւովն, այլ սակայն եւ զառ ի նոցանէ զվկայութիւնն⁸ ախորժէին:

¹ Ա թողուլ

² Բ զայն տեղին] զանտեղին

³ Ա ասէ

⁴ ԱԲ > որ

⁵ Բ պակասութիւն

⁶ Բ ընտրութեան իրացս

⁷ Բ ընտրութեանն

⁸ Ա զվկայութիւն, Բ վկայութիւն

Այդ սահմաններն զթիւն եւ ձեռնադրել եւ յայնպիսի պէտս նոցա լինել, եւ բաժանել զարան ի պաշտաւնն, առաքելոցն եղեւ հրամայեալ. զի մի՛ թուիցին այլքն շնորհուկս ինչ արանցն կամ առանց շնորհի ինչ Հոգւոյն առնել: Քանզի եւ Աստուած Մովսէսի հրամայեաց ընտրել զերիցունսն: Նա զի եւ բազում իմաստութեան պէտք¹ էին առ այնպիսի տնաւրէնութիւնս: Եւ մի՛ կարծեսցես, թէ զի բան ոչ եղեւ ընձեռեալ պաշտել նոցա, այլ զգործ տնտեսութեանն, թէ ոչ ունի պէտս իմաստութեան այնպիսի իրք, այլ եւ յոյժ բազում թերեւս քան զբան:

Եւ մեք, ասեն, աղաւթից եւ պաշտամաման² եւ բանին հպարակեսցուք (Ձ. 4):

Այս է ժողովակեսցուք: Տեսանե՞ս, զի ոչ պարզաբար, այլ բազում փութոյ պնդութեամբ զաղաւթսն առնէին, եւ մանաւանդ որպէս զքարոզութիւնն զաղաւթսն լինէին վճարել՝ եւս եւ ի պաշտամանէ աղքատացն ոչ անհոգ մնային, այլ մեծաւ փութով իբրեւ յոյժ մեծագոյն իրի հպատակէին: Իսկ զքարոզութիւնն³ բանին իբրեւ զտուեալ յԱստուծոյ գործ՝ ոչ թողուլ. եւ ի Մովսէսէ իսկ խրատէին, այլ պահել զամենայն աւանդեալսն ըստ կարգի: Սմին վասն որպէս ի սկզբանն ասացին, թէ ոչ է պարտ ի բանէն դադարել, զնոյն եւ այժմ ասեն: Զի պարտ էր՝ ոչ պարզաբար եւ ոչ որպէս դէպ լինէր, այլ բազում ջանիւ ժողովակել ի պաշտաւն բանին: «Եւ հաճոյ եղև բանն առաջի ամենայն բազմութեանն» (Ձ. 5): Վայելչապէս. զի արժանի ըստ նոցա իմաստութեան էր, վասն որոյ եւ ամենեքեան գովեցին զասացեալսն, զի այնպէս լի էր հանճարով:

Եւ ընտրեցին զՍպարտանոս, այր լի հաւաքովք եւ հոգով Սրբով, եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովրա եւ զՏիմոնա եւ զՊարմենա եւ զՆիկողաոս գեկն անտիրացի (Ձ. 5):

Ապա ուրեմն եւ սոքա ամենեքեան լի էին հաւատովք եւ հոգւով Սրբով: Եւ ոչ պարզաբար հոգեւորս զսոսա ասէ, այլ լի հոգւով եւ իմաստութեամբ, զի թէ հաւատովք եւ հոգւով լիք, յայտ է, թէ /38ա/ եւ իմաստութեամբ, զի մեծ իմաստութեան պէտք էր հանդուրժել տժգոհութեան այրեացն, ըստ որում պարտ էր լինել

¹ Բ պետք

² ԱԲ պաշտաման

³ Բ քարոզութիւն

ոչ միայն հաւատարիմ, այլ եւ իմաստուն: Զի զի՞նչ աւգուտ է, թէ չգողանայ, յորժամ զբոլորն կորուսանէ անիմաստ գոլով՝ յանդուզն կամ զայրացեալ:

Սմին վասն, որպէս Ստեփանոս լի հաւատովք եւ իմաստութեամբ, այսպէս սքանչելի եւ Փիլիպպոս, յաղագս որոյ գրէ Ղուկաս. «Մտնալ, ասէ, ազար ի փունն Փիլիպպոսի աւերարանչի, որ էր յևթանց¹ անփի» (ԲԱ. 8):

Եւսերի Այսպէս Պրոխորոն հետեւող Յովհաննու աւետարանչի: Այսպէս Նիկողոսոս, այն որ թէպէտ ի պատճառս շնութեան կնոջ իւրոյ, զոր արձակեաց խրատու առաքելոցն, համարձակին ի շնութիւն նիկաւլացիք², այլ ինքն յոյժ սքանչելապէս եկաց մնաց, որպէս պատմէ Կղեմենտէս³: Այլ զի եկ կոչէ զսա Անտիոքայ⁴, ինձ թուի ի հեթանոսաց գոլ նշանակել զսմանէ, կամ որպէս զՅովսէփ կիպրացի եւ զՊաւղոս տարսոնացի, այսպէս եւ զսա անտիոքացի:

Յոհ.⁵ Արդ, զի մի՛ այնպիսի ինչ լիցի որպէս առ Յուդայիւ, Անասիալ եւ Սափիրալ, ընտրեալ որոշեցին զսոսա ի բազմութենէն:

Եւ կացուցին առաջի առաքելոցն (Ձ. 6):

Ոչ եթէ առաքեալքն ածին, այլ ի բազմութենէն արքն ձգեալք լինէին: Այլ սքանչելի է, թէ զիա՞րդ ոչ հերձաւ բազմութիւնն յընտրութիւն արանցն, եւ ոչ ի նոցունց անհնազանդութեամբ անպատուեցան առաքեալքն: Եւ տես՝ զիարդ եւթն արանց կարաւտացան առ այնպիսի իրս, այնչափ զինչսն ի վերայ հոսեալ լինէին, եւ այնչափ էր այրեացն բազմութիւնն: Եւ տե՛ս զի ոչ էր կարգելն զսոսա մարդկային եւ աւելորդ, եւ զի լի էին Հոգւով եւ իմաստութեամբ. եւ յայտ անտի է, զի ոչ հայցէին ուսանել զհանգամանս գործոյն, թէ զիարդ մատակարարեսցեն: Այլ թէ «Աղաւթս արարեալ եղին ձեռս ի վերայ նոցա» (Ձ. 6): Եւ ոչ ասէ աստ զաղաւթսն, այլ համառուտ անցանէ: Այլ տես՝ զի ամենայն ուրեք զհոգեւորսն՝ պահաւք եւ աղաւթիւք եւ բազում ջանիւ եւ ընտրութեամբ առնէին: Որպէս յորժամ զպաւղոսեանսն յուղարկելով՝ աղաւթիւք եւ ջանիւ առաքէին, այսպէս եւ սոցա ընդ գործոյն եւ զքարոզութիւն բանին աւանդեցին: Որպէս ինքեանք հսկելով բանին՝ ի պաշտամանէն ոչ հեղգացան: Իսկ զի թէ-

¹ Ա յևթանց

² ԱԲ Գիկողացիք

³ ԱԲ Կղեմենտես

⁴ Բ յԱնտիոքայ

⁵ Գ > յոհ.

պէտ ձեռս վերադրեալ լինի առն, այլ Աստուած է, որ զամենայն ինչ ներգործէ, եւ նորին ձեռն մերձեցեալ լինի ի գլուխ ձեռնադրելոցն, որպէս ի հնումն առ Յեսուաւ եւ այլովք ոմամբք: Միայն թէ ըստ արժանի եւ որպէս պարտն է լիցի ձեռնադրութիւնն, որպէս եւ աստ:

Այլ որպիսի¹ ինչ է իշխանութիւն սոցա, զոր ընկալան ձեռնադրութեամբ: Զսարկաւագացն ունէին զպատիւ՝ յայտ է: Իսկ այսպէս այժմ ոչ գոյ յեկեղեցի¹, այլ երիցանց է տնաւրէնութիւն, զոր նոքայն առնէին: Այլ ինձ թուի, զի դեռ եւս ոչ մի ոք էր եպիսկոպոս, այլ առաքեալքն միայն: Սմին վասն եւ ոչ զերիցանց եւ ոչ զսարկաւագաց կարծեմ զանուանան² յայտ յանդիման գոլ: Այլ առժամայն ոչ միայն ի սարկաւագութեան, այլ եւ յայլ շնո/38բ/րհս աստուածայինս եղեն սոքա ձեռնադրեալք: Ուստի ոչ հարեւանցի, այլ բազում աղաւթիւք լինէր ձեռնադրութիւնն, զի զաւրասցին կարողութեամբ: Զորս եւ ոչ բարձրամտեալս ինչ ասէ վասն իշխանութեանն կամ հեղգացեալս ի գործն, զի եւ մեք այսպէս զգուշասցուք:

Եւ րանն Աստուծոյ անէր, եւ րազմանայր թիւ աշակերպացն յոյժ յերուսաղէմ (Ձ. 7):

Ոչ լոկ եւ պարզաբար ինչ ասէ զայս, այլ զի ցուցցէ, թէ որչափ էր ողորմութեան եւ կարգաւորութեանն զաւրութիւն: Եւ այս եւս մեզ ի խրատ, զի եւ մեք այսու կարասցուք զբազումս ձգել ի հաւատս: Այլ ո՞վ սքանչելեացն, զի յերուսաղէմ աճեալ լինէր բազմութիւնն, ուր Քրիստոս եղեւ սպանեալ, անդ աճեաց եւ քարոզութիւնն: Եւ ոչ միայն ոչ գայթապեցին³ ոմանք սակս անցիցն Անանիայ եւ Սափիրայ, այլ եւ երկիւղն եւ հաւատոցն հաստատութիւն⁴ յոլովագոյն եղեւ: Զի թէպէտ զոմանս տանջեալս տեսանէին յառաքելոցն վասն անուանն Յիսուսի, եւ ոմանց սպառնացեալ մի՛ խաւսել յանունն յայն, ոմանք փորձելով զՀոգին եւ այլք տրտնջէին, այլ տե՛ս աճեցեալ զբազմութիւնն, եւ այն զկնի փորձութեանցն եւ ոչ յառաջագոյն:

Հանդերձեալ այսուհետեւ աճեցուցանել զիրսն Ստեփանոսի, նախադրէ եւ զպատճառս նորին իրաց: «Բազում ժողովք, ասէ, ի քահանայիցն անսային հաւարոցն» (Ձ. 7): Զի տեսին զքահանայապետսն եւ

¹ Բ եկեղեցի

² ԱԲ զանուան

³ Բ գայթակղեցան

⁴ Բ հաստատութեան

զիշխանան եւ զայլսն սուտ եղեալս, եւ զսքանչեւեացն եւ զգեղեցիկ կարգացն փորձ տեսեալ, զհնազանդէին հաւատոցն: Այլ տե՛ս զան-
 չափ մարդասիրութիւնն Աստուծոյ, մինչ զի եւ ի քահանայապե-
 տիցն, որք հանապազ չարաչար տրտնջէին եւ հայհոյէին զնա, եւ
 ասէին՝ «Խաչեսցի զդա՛ ի հաւատս ընկալաւ, որք կամեցան»:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ձոր եւ մեզ պարտ է բարիս փոխարինել դաւաճանողացն, զի այ-
 սու նմանիլ կարիցեմք¹ Քրիստոսի: Ձի եւ նա եկեալ ի բարերարել
 մարդկան՝ խաչեցին եւ զաշակերտան նորա տանջեցին, այլ նա յետ
 այնորիկ ի պատիւ աշակերտացն հասուցանէր զհաւատացեալսն ի
 խաչողացն: Արդ, որորմածութեամբ յայսոսիկ կրթեսցուք, եւ բա-
 րերարելով թշնամեացն, եւ մեծահոգութեամբ անցասուծն լինելով
 առ անարգաւդան եւ անյիշաչար: Ձի այսպէս պայծառք երեւեալք
 քաջութեամբ պսակացն հասանիցեմք շնորհաւքն Քրիստոսի՝ որ է
 աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

[ԳԼՈՒԽ ԺԵ.]

Սրեփանոս այր լի շնորհաւք եւ զօրութեամբ (Ձ. 8):

Տեսանե՞ս, զի առ եւթանսն նա² էր նախապատուեալ եւ առաջ-
 նորդէր այլոցն, զի թէպէտ ձեռնադրութիւնն հասարակաց էր, սա-
 կայն բազմապատիկ շնորհս եւ զաւրութիւնս սա յինքեան ընկալաւ,
 զի ըստ չափոյ հաւատոցն տայ Աստուած: Եւ զի լի էր հաւատովք,
 լցաւ եւ Հոգւով շնորհաց եւ զաւրութեանց, շնորհաւքն՝ ի բարեգոր-
 ծել բժշկութեամբք, եւ զաւրութեամբն՝ ի բազմապատիկ նշանս եւ
 ի պատուհասել կարողանալ: «Աոնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժո-
 դովրդեանն» (Ձ. 8): Համառաւտ անցանէ եւ աստ, եւ ոչ յանուանէ յիշէ
 զեղե/39ա/ալսն ի նմանէ: Այլ «արուեստ» ասի՝ որ ձեռս զնելով իցէ,
 որպէս կաւով ձեփելն Տեառն զաչս կուրին, եւ «նշան» որ հրամանաւ,
 որպէս այն, թէ «Երթ, որդին քո կենդանի է», կամ «Ղազարէ, եկար արարարս»
 (Յովհ. ԺԱ. 43): Յայսպիսիս զաւրանալ ասէ սմա:

Եւ տե՛ս, զի նախ քան զձեռնադրութիւնն³ այսպիսի ինչ ոչ առ-
 նէր: Ձի յայտ լիցի, թէ ո՛չ միայն շնորհաց, այլ եւ ձեռնադրութեան

¹ Բ կարենք

² ԲԳ Մայ

³ Բ զձեռնադրութիւն

պէտք են, որովք սա ոչ միայն բանիւ ուսուցանէր զամենեսեան, այլ եւ յաճախէր զմեծամեծ գործս եւ զնշանս զարմանալիս: Յորմէ դարձեալ նոքա չար նախանձու շարժեալք՝ ամբոխ եւ խռովութիւն յարուցանեն, ըստ որում ասէ. «Յարեան ոմանք ի ժողովրդնէն, որ կոչէր լիբեացոց¹, կիւրենացոց, աղէքսանդրացոց, կիլիկեցոց, ասիացոց» (Ձ. 9): Դարձեալ յառնել՝ զգայրանալն ասէ եւ զբարկութիւնն: Այլ աստ յոյժ առաւել ցուցանէ զբազմութիւնն² ի վերայ յարուցելոցն. ոչ միայն զայնոսիկ, որ յերուսաղէմ էին, այլ եւ այլս բազումս, որք յայլ եւ այլ ժամանակս գերեալք ընդ բազում աշխարհս, եւ հետոյ ուրեմն անդրէն դարձեալք, կէսք ի լիբեացոց³ ի սահմանակցացն Եգիպտոսի եւ Հնդկաց, եւ այլք ի կիւրենացոցն, որ է անդր եւս քան զԱղէքսանդրիա⁴, եւ ոմանք յասիացոց, որոց լեզուաւքն վարժեալք եւ յերուսաղէմ բնակեալք, զի մի՛ յար երթեակութեամբ աշխատեսցին. որք եւ ժողովարանս ունէին լսել զաւրէնսն եւ աղաւթել: Սոքա իբրեւ տեսին զսուրբն այնքան պայծառացեալ նշանաւք, ոչ բերելով նախանձուն՝ խնդիրս ոմանս ի մէջ արկանէին. վիճել ընդ Ստեփաննոսի⁵: Ո՛վ անմտութեանն, զի որոց գործով չարչարանաց ոչ յաղթէին, ակն ունէին բանիւք յաղթել. եւ զոր ինչ առ Քրիստոսիւ առնէին՝ զնոյն եւ աստ, զի միշտ բանս ի մէջ արկանէին վիճախնդիր լինել, զի հարկ արասցեն նմա ասել ինչ, թերեւս պատճառս կարասցեն յաւդել:

Եւ ոչ կարէին զդէմ ունել իմաստութեանն եւ զՆոզույն՝ որով խաւսէր (Ձ. 10):

Ոչ միայն պարտեալ լինէին, այլ եւ ոչ հակառակել ինչ ընդդէմ կարէին: Եփր. Զի զաւրաւոր մաքառմամբ ի մարգարէից շուրջ ածէր զնոսա եւ խռովէր:

Յոռ. Զդադարումն թերեւս ասելով զաստուածային աւրինացն, կամ թէ եւ յայտնի ոչ ասէր, սակայն զնոյն նշանակեալ լինէր: Զի թէ ինքն յայտնապէս ասէր, ոչ էին պէտք եկամուտ արանցն կամ սուտ վկայիցն:

¹ ԱԲ լիբեացոց

² Բ զբազմութիւն

³ Բ լիբեացոց

⁴ Բ զԱղէքսանդրիայ

⁵ Բ ստեփանոսի

Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել, թէ լուսք գղորս խաւսել բանս հայհոյութեան ի Մովսէս եւ յԱստուած (Ձ. 11):

Արդ, գառաքելոցն ասէին, թէ գյարութիւնն պատմեն, եւ թէ լցէք գերուսաղէմ ուսմամբ ձերով, իսկ աստանաւր, զի բազումք բժշկեալ լինէին, վասն որոյ եւ գոհանալ պարտ էր, ընդ այն իսկ խոովէին, եւ յայլ ձեւ շրջեն¹ գչարախաւսութիւնն, եւ գՔրիստոսէ ոչ ինչ յիշեն, զի յայնմանէ արգել զնոսա Գամաղիէլ², այլ իմն պատճառս յաւդեալ ի մէջ բերեն. «Չարախաւսութիւն, ասեն, առնէ եւ խաւսի զԱստուծոյ եւ զՄովսէսէ» (հմմտ. Ձ. 11):

Եւ քանզի պարզաբար յափշտակել ամաչէին՝ ոչ ինչ ունելով վնասաբանել: Տես զինչ առնեն. ոչ ինքեանք /39բ/ դատաւղքն վկայեն, կասկածեալք, զի մի՛ կշտամբեսցին դաւաճանաւղս եւ անիրաւս գոյ, զայլս հրապուրեալ արծաթով վարձաւորեն ասել, թէ «Լուսք գղորս խաւսել բանս հայհոյութեան ի Մովսէս եւ Աստուած» (Ձ. 11): Ո՛վ անամաւթք, գհայհոյութեան իրս դուք առնէք, եւ չէ ձեզ փոյթ: Վասն այսորիկ զՄովսէս ի մէջ բերեն, զի զԱստուծոյ փոյթ ոչ ունէին, այլ ի վեր եւ ի խոնարհ զՄովսէս յիշեն. «Մովսէսն այն, որ եհան գմեզ, ոչ գիտեմք զի՞ եղև» (Է. 40): Այլ պարտ էր զմտաւ ածել դժնէիցն, թէ զիա՞րդ հայհոյիչ այր՝ այնպէս յաղաւթիցէ, զի ոչ կարէին զգէմ ունել, կամ զիա՞րդ նշանս այնպիսիս առնել ի ժողովրդեանն:

Այլ ամբոխ չար եւ անկարգ գոյով՝ ծանրացուցանելով զյաւդեալ ամբաստանութիւնն, «Խոտվեցին գժողովորդն եւ գերիցունս եւ գղպիրս» (Ձ. 12): Եւ քանզի ոչ ախորժէին պարզաբար ապանանել, այլ դատաստանաւ իբրեւ հայհոյիչ խորամանկէին³ իմն, զի եւ գճշմարտութիւն առաքելոցն ստութեան կարծեալք⁴ վնասեսցեն: Սմին վասն զնոսա թողեալք ընդ սմա վիճաբանէին, եւ ստայաւդ⁵ զպարտութեամբն զամենայն ժողովուրդն զայրացուցին որպէս սովոր էին:

Եւ ապա յանդուգն⁶ համարձակութեամբ իբր զգազանս արիւնաբոս «Տասնալ ի վերայ յափշտակեցին գգառնն անմեղ եւ քարշեցին յանիրաւ արեանն, եւ կեցուցին վկայս սուրս, որ ասէին, թէ այրս այս ոչ դաղարէ խաւսել բանս հայհոյութեան գրեղոյն սրբոյ եւ գաւրինացն» (Ձ. 12-13): Սուտ վկայիւք զանմեղն դատապարտէին, զի մի անիրաւ սպանաւղք երեւես-

¹ ԱԲ շրջեալ

² Ա գամաղիէլ

³ ԱԲ խորամանգէին

⁴ ԱԲ կարծեօք

⁵ Ա ստաւուդ, Բ ստաօղ] ստայաւդ

⁶ ԱԲ յանդուգն

ցին, այլ իբրեւ ջատագովք ակրինացն եւ պահաւըբ զասացեալն, թէ «Մի՛ որ առանց երկուց վկայից¹ մնոցի» (Օրէնք Բ, ԺԷ. 6): Եւ այսպէս զանմեղն զրպարտէին, որպէս միշտ սովոր էին² առնել, որպէս առ Քրիստոսիւ, Շոռչանաւ եւ Նաբովթաւ, զի աշակերտք էին չար ծերոցն եւ Յեզաբէլի³, վկայէին, թէ այրս այս ոչ դադարէ հայհոյել զՄովսէս, զտաճարն եւ զԱստուած: Տեսանե՞ս ո՛րքան ծանր է չարախաւսութիւնս. ոչ ասեն, թէ խաւսի, այլ թէ ոչ դադարէ ի խաւսելոյ⁴ զհայհոյութիւնն: Այսինքն՝ թէ գործ հանապազորդ զայս ունի իւր՝ հայհոյել⁵ զսուրբ տաճարն եւ զաստուածային ակրէնքն:

Եւ ոչ զայս բաւական համարին, այլ յաւելուն իբրու ցուցական առնելով. «Մեր, ասեն, լուսք ի դմանէ, զի ասէր, թէ Յիսուս Նագովրեցին⁶ նա քակեսցէ զտաճարն եւ փոխեսցէ զաւրէնսն Մովսէսի» (Ձ. 15):

«Նագովրեցին» ասեն նախատելով, «նա քակեսցէ զտաճարս»՝ զայս միշտ եւ ի վերայ Քրիստոսի կարկատէին. «Վա՛հ, որ քակէր զտաճարն» (Մարթ. ԻԷ. 40): Քանզի մեծ իմն վստահութիւն հաստատութեան ազգին կարծելով զտաճարն, յոյժ ախորժելի էր նոցա, որով եւ զչարախաւսութիւնն աններելի ջանան ցուցանել. որպէս թէ զտաճարն այն քակել ասէ Յիսուսի, եւ զբնակութիւնն եւ զաւրէնսն փոփոխել, զոր ետ մեզ Մովսէս: Եւ յանուանէ զՄովսէս ի մէջ բերելն կրկին չարախաւսութիւն էր: Նախ՝ թէ փոխէ զսո/40ա/վորական ակրէնսն, եւ երկրորդ՝ թէ զայլս ի ներքս մոռնանէ: Սմին վասն ոչ ասացին, թէ զոր ետ մեզ Աստուած, այլ «զոր ետ մեզ Մովսէս» (Ձ. 14), զի ցուցանել ջանային, թէ վասն քակելոյ քաղաքին եւ տաճարին եւ ամբարշտութեանն յԱստուած, որ էր փոփոխումն ակրինացն, զնա չարախաւսէին, զի այսպէս ի ցասումն սպանութեան զամենեսեան գրգռեսցեն:

Արդ, իբրեւ կարծէին, թէ զարհուրեցուցին զնա ատենիւն, եւ ակն ունէին այլագունել երեսացն յերկիւղէ եւ յամաւթոյ՝ վրիպեալ գտան: «Ձի հայեցեալ ի նա ամենեցուն, որ նստէին յաբնին, րեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի» (Ձ. 15): Վայելեչապէս. զի Տէրն հրեշտակաց ի ձեւ անմարմին սպասաւորացն իւրոց երեւեցոյց զմարմնաւոր սպասաւորն իւր յամաւթ դիւաղէմ լրբենեացն: Եւ ի յոյս վստահութեան՝ այսրէն ի մեզ դառնալոյ առաջին պայծառ փառացն, ուստի վրիպե-

¹ Բ վկայի

² Բ են] էին

³ Բ յեզաբելի

⁴ Բ խօսելով] ի խաւսելոյ

⁵ ԱԲ հայհոյէ

⁶ Գ նագավրեցին

ցաք, զի «Ծագեսցին արդարքն իբրև գարեգակն» (Մտթ. ԺԳ. 43): Եւ ի խրախոյս քաջալերութեան յետ այնորիկ հետեւողացն ի նոյն հանդէս:

Եւ տես, զի եւ ի փոքր աշտիճանի գոլով, է փայլել մեծապէս, որք կամեսցին, որպէս եւ սա¹: Բայց եւ զի² նչ նուազագոյն սա ընկալաւ քան զառաքեալսն. ի նշանաց ոչ էր նուազեալ, եւ համարձակութեամբ բանի պայծառագոյն, որով ի խոր խոցեալ լինէին դժնեայքն: «Տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի» (Ձ. 15): Այս իսկ էր շնորհ փառացն Մովսէսի, որով խնդալից արար զնա Աստուած լուսափայլութեամբ դիմացն. իսկ զսորայս առաւել պայծառութեամբ փայլեալ, բազում եւ անչափ լցեալ ուրախութեամբ: Եւ վայելչապէս. զի վասն Յիսուսի կրէր զգրպարտութիւնն, սակս որոյ ընդ մեծապէս բերկրել սրտին, զուարթացան երեսքն՝ որպէս եւ առաքեալքն խնդային² ընդ անարգանսն՝ որ վասն անուանն Յիսուսի: Եւ քանզի հանդերձեալ էր ընդ երկար աստուածաբանել, նախ երեսաւքն հիացոյց զնոսա, նուաճելով յունկնդրութիւն, զի գոյ եւ ի պայծառ դէմս լրումն հոգեւորական շնորհի՝ սիրելեացն ի յոյս հաստատութեան, եւ թշնամեացն յամալթ եւ ի զարհուրանս, որով եւ ներեցին ատենաբանութեանն:

Այլ թէ ուստի³ էր շնորհացն լոյս փայլեալ ի դէման Ստեփանոսի: Յայտ է, զի կատարելութիւն հաւատոցն շնորհալից արար զնա, զոր վկայեաց, թէ «Լի էր հաւաքովք եւ հոգով Սրբով» (ԺԱ. 24): Զի է հաւատովք շնորհս ունել, ոչ միայն ի բանս եւ ի բժշկութիւնս, այլ եւ յայս ինչ շնորհք Հոգւոյն բաշխի, որ աջողէ զամենայն յամենայնի, որով տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի. զի զպարզամիտսն եւ զանչարսն՝ յաւէտ շնորհաւք լնու Աստուած, որպէս զԲառնաբա³ վկայէ Ղուկաս: Եւ թէ յինչ սակս այս եղեւ, վասն զի ոչ էր նա պատճառ այսպիսի յանդուզն զրպարտութեանս՝ դիմացն լուսաւորութիւն եւ հեզութիւն եւ հանդարտութիւն նորա յայտ առնէր: Զի ուր զառաքեալսն ոչ այսպէս զրպարտէին՝ այլ միայն արգելուին, այսպիսի ինչ ոչ եղեւ, իսկ աստ զի սա |40բ| զրպարտեալ լինէր, վայելչապէս ուղղէր զայն Աստուած, զի նախ քան զամենայն լուսաւորութիւն⁴ դիմացն պատասխանի արասցէ ընդդէմ ստութեանն: Այս իսկ եւ⁵ զքահանայապետն յամալթ արար, եւ զիջոյց ի խիստ դառնութենէն ունկն դնել բանից նորա:

¹ Բ սսէ] սա

² Բ խնդացին

³ ԱԲ զբառնաբայ

⁴ ԱԲ լուսաւորութեան

⁵ Ա է] եւ

Ասէ քահանայապետն, թէ արդարեւ այդ ա՛յդպէս իցէ (Է. 1):

Տե՛ս զխորամանկութիւնն. հեզութեամբ հարցանէ, զի մեծ ինչ չարագործեսցէ, զոր եւ առ Քրիստոս արար: Վասն այնորիկ եւ նա հեզաբար սկսանի զբանն եւ ասէ. «Արք եղարք եւ հարք, լուարուք ինձ. Աստուած փառաց երևեցաւ հար մերում Արրահամու մինչդեռ ի Միջագետս Էր, մինչ չևս բնակեցուցեալ Էր զնա ի Խառան» (Է. 2): Ոչ առանց խորհրդոյ կամ պարզաբար ի վեր ի նահապետ անդր տանի զբանս:

Եփր. Այլ քանզի ախմար¹ եւ անգէտս դպրութեան հենգնէին գոլ զառաքեալսն՝ սկսաւ երկրորդել նոցա զգիրս, սկսեալ յԱբրահամէ համառատէ մինչեւ ի Քրիստոս եւ ի լրբութիւն նոցա:

Յոհ. Եւ իսկ եւ իսկ յառաջին² բանիցն զթուեցեալն նոցա մեծ ի բաց բառնայ, եւ ցուցանէ ասացելովքն, թէ ոչ ինչ է տաճարն եւ հրէական սովորութիւնքն: Զի ի Միջագետս երեւեցաւ Աստուած Աբրահամու, եւ անդ տաճար ոչ էր եւ ոչ զենմունք, եւ յաստուածային տեսլենէն Աբրահամ ոչ վրիպեաց. եւ այն, զի նախահարս քաղդեայս³ պարսիկս ունէր: Եւ բարեոք սկսանելով ի բանն՝ Աստուած փառաց կոչեաց ցուցանելով, թէ զանպատիւսն փառաւորս արար: Զի նա, ասէ, որ զնոսա⁴ արար փառաւորս, եւ զմեզ արասցէ: Տե՛ս, թէ⁵ զիա՞րդ ի բաց տանի զնոսա ի մարմնական ընծայիցն. եւ նախ ի տեղւոյն սկսանի, զի բանն վասն⁶ տեղւոյն էր: «Աստուած փառաց» ասէ, զի ոչ կարաւտի ի մէնջ փառաց, այսինքն՝ ի ձեռն տաճարիդ, զի ինքն է աղբեր փառաց եւ ի նմանէ ամենեցուն փառք: Ապա մի՛ կարծէք այսու փառաւորել զնա, զի երեւումն Աստուծոյ եւ խոստումնն նախ է քան զտաճարն եւ յառաջ քան զթլփատութիւնն եւ քան զզենմունսն: Եւ զի դուք ոչ ըստ արժանեաց ձերոց առէք ոչ թլփատութիւնն եւ ոչ զաւրէնսն, այլ այս ամենայն Աբրահամու լսողութեանն վարձ էր, զի զերկիրն խոստանայր տալ նախ քան զթլփատութիւնն եւ զաւրէնսն, եւ զհայրենիսն թողուլ հրամայէր՝ զի այն է հայրենիք, զոր Աստուած պարտ գոլ վարկանի:

¹ Աբ ախմարս

² Բ առաջին

³ Աբ քաղդեայս

⁴ Բ զնա

⁵ Աբ > թէ

⁶ Աբ > տեղւոյն սկսանի, զի բանն վասն

Եւ, *ասէ*, յերկրէ քումմէ¹, եւ եկ յերկիր, գոր ցուցից քեզ (Է. 3):

Յուցանել կամի, թէ սոքա ոչ են զաւակ Աբրահամու, զի նա այնպէս հաւան եւ հնազանդ էր Աստուծոյ, զի «Եւ, ասէ, յերկրէ եւ յազգէ քումմէ» (Է. 3): Երկոքեան իսկ դժուարինք են, այլ նա աշխատութեան համբեր, եւ դուք զպտուղն հաւաքեցէք: Եւ թէ ամենեքեան նախահարքն ի վիշտս եւ ի նեղութիւնս էին եւ ի հրամանէն Աստուծոյ ոչ խոտորէին, առ ի խրատել զմեզ՝ թէ առանց նշանաց պարտ է հաւանել Աստուծոյ, թէպէտ եւ դժուարինք² իցեն պատահեալքն. զի եւ հայրապետն զչիբիմս հայրենիս թողեալ եւ զայլն³ ամենայն հնազանդեալ լինէր Աստուծոյ:

Յայնժամ /41/ ելեալ, *ասէ*, յերկրէն քաղղեացոց՝ փոխարնակեցաւ ի Խառան (Է. 4):

Ուրեմն ստուգապէս քննելով՝ քաղղեացիքն են հրեայքն, զի «Եւ, ասէ, յերկրէն քաղղեացոց»: Իսկ այն զի *ասէ* զիր, թէ «հայրն Աբրահամու կամեցաւ երանել», *աստի ուսանիմք, թէ տեսլեամքն Աստուծոյ ինքն Աբրահամ շարժեալ եղեւ առ յելանել: Եւ յայտ է, զի հայրն երեւմամբն Աստուծոյ ոչ ուղեկցէր նորա զնացկանութեանն, այլ վասն գլխոյ մանկանցն, թէպէտ բազում ճանապարհ հատանէին, զհետ զնացեալ լինէր մինչեւ ի Խառան:*

Եւ անփի յեւր մնօանելոյ հար նորա՝ փոխեաց պանդխտեցոյց զնա յերկիրս յայս, յորում դուք այժմիկ բնակեալ էք (Է. 5):

Տեսանե՞ս, թէ⁴ զիարդ զնոսա յերկրէ ի վեր հանէ ցուցանելով, թէ նոքա պանդխտութեամբ բնակէին՝ ազնուագունին սպասելով. եւ զսոսա կշտամբէ՝ բնակիչս երկրի, եւ ստորագաւառէ այս ախորժաւղս գոլ զաստիս նախապատուելով: Այլ զնորա հաւատն եւ զերկայնամտութիւնն եւ ինքն Աստուած կամելով յայտնի առնել. «Ոչ եւր նմա ժառանգութիւն ի սմա եւ ոչ քայլ մի ուրին» (Է. 5): Եւ նա ոչ երկմտէր կամ տագնապէր ինչ, այլ ի հաւատս յեցեալ զխոստացեալսն յԱստուծոյ իբրեւ զառեալ ունէր, որով հաւատով եւ զազգն եւ զհայրենիսն թողեալ՝ եկն զհետ խոստմանն Աստուծոյ, այլ դեռ

¹ ԱԲ > քումմէ

² Ա ք դժուարինք

³ ԱԲ զայլս

⁴ ԱԲ > թէ

եւս ոչ ետ զժառանգութիւնն, զի աւրինակ ուրեմն էր այն՝ այլոյ երկրի, զոր առնլոց էին:

Եւ խոստացաւ Կալ նմա զսա ի բնակութիւն (Է. 5):

Ոչ վայրապար զբանս վերստին առնու, ոչ ետ ասէ, եւ խոստացաւ տալ: «Եւ գաւալի նորա, ասէ, յեփ նորա» (Է. 5), դեռ եւս զաւակ ոչ գոլով նորա: Զայս ասէ՝ զի բազում ցուցցէ զԱստուծոյ մարդասիրութիւնն եւ զամենահնար զաւրութիւնն, որ զամենայն ինչ յանհնարից կազմեալ ի մէջ ածէ. զի զբնակեալն յերկրին¹ քաղաքացւոց եւ զայնչափ հեռացեալն տէր ասաց առնել երկրին պաղեստինացւոց: Յայտնէ միանգամայն զԱբրահամու հաւատսն եւ զլսողութիւնն, զի ոչ գոլով նորա զաւակ՝ ունկնդիր լինէր Աստուծոյ, եւ մանաւանդ զի եղեալքն զհակառակն ցուցանէին: Զի իբրեւ եկն, ոչ ունէր տեղի եւ ոչ քայլ մի ոտին, եւ ոչ ունէր որդի, այլ ոչ կասէր ի հաւատոցն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի ուսուցուք եւ մեք մի՛ տազնապել ընդ աստեացս նեղութիւնն, մանաւանդ հրաւիրեալքս ի նեղութիւնս աշխարհի աստ. զի այսպէս զխոստումն² Աստուծոյ ընդունել մարթասցուք, թէպէտ ներհականք թուրիցեն պատահքն: Բայց այժմ առ մեզ ոչ ներհականք, այլ յոյժ հետեւեալք ըստ խոստմանցն, զի աստանաւր նեղութիւն ունել մեզ ասացաւ, եւ անդ հանգչիլ. ապա մի՛ փոփոխեսցուք զժամանակս, զի աշխատութեանց եւ մրցմանց է ժամ, մի՛ աստ հանգիստ խնդրեսցուք: Եւ զի այժմ հալածանք ի կռապաշտից ոչ գոյ, մարտիցուք ընդ սնափառութիւն, ընդ բարկութիւն, ընդ անպատեհ ցանկութիւնս, ընդ ազահոլութիւն: Տարցուք թշնամանացն՝ որ դժնդակք են, չարչարիչք հոգւոց, որոց յաղթելով՝ պսակացն հասցուք շնորհաւքն Քրիստոսի, ընդ որում Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

[ԳԼՈՒԽ ԺԶ.]

/41բ/ Եւ մինչ ոչ գոյր նորա որդի, խաւսեցաւ Աստուած այսպէս՝ թէ եղիցի գաւալ նորա պանդուխտ յաւարար երկրի. եւ ծառայե-

¹ Աբ յերկիրն

² Աբ զխոստումնն

ցուցեն գնա եւ չարչարեացն ամս չորեքարիւր¹, եւ զագգն, որում ծառայեացն, դապեցայց ես՝ ասէ Աստուած, եւ յետ այսորիկ ելցեն եւ պաշտեացն գիս ի փեղոնս յայսմիկ (Է. 6-7):

Հայեաց, թէ քանի ամաւք յառաջ է խոստումնն, եւ որպիսի՞ խոստմանն յեղանակ, եւ ոչ ուրէք² էր զենմունքն, եւ ոչ թլփատութիւնն: Եւ դարձեալ. թէ ո՞րպէս ինքն Աստուած զիւրսն թոյլ տայր չարչարանս կրել եւ յաւտարութեան պանդխտանալ այնչափ ժամանակս, եւ չարաչար նեղիլ յայնցանէ՝ որոց ոչ ինչ մեղան: Զի ոչ որպէս տեարք ծառայուք եգիպտացիքն նոքաւք վարէին, այլ որպէս թշնամիք եւ գոռոզք՝ ի կոխել միայն եւ ի չարչարել փութալով:

Այլ թէպէտ զայսքան ժամանակս էգ թուով չափեալ, թոյլ տայր վիսանալ վատթար գոռոզացն՝ սակայն ոչ առանց պատուհասի թողոյր զնոսս: Այլ «Զագգն, որում ծառայեացն, դապեցայց ես՝ ասէ Աստուած»: Զայս ասելով իբր շնորհս իմն առնել երեւի չարչարելոցն ի պանդխտութեան, պատուհասելովն³ զնեղիչսն: Բայց անդէն վաղվազակի՝ ոչ սոցա Հանգիստ լինել տուեալ, եւ ոչ նոցա տանջանս, այլ նախ յառաջ խոստանայ միայն: Ապա մի՛ ով դուք, այսու միայն բարեպարիշտք լինել Համարիք՝ ասելով զՅիսուսէ. «Թէ յուսացաւ ի Տէր, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի զդա» (Մարթ. ԻԷ. 43): Զի նա, որ խոստացաւ Աբրահամու, որ ետն⁴ զերկիրն, յայնժամ նախ գալոյ չարեացն տեղի տայր, նոյնպէս եւ այժմ թէպէտ արքայութիւն խոստացեալ է, այլ նախ թողու կրթել փորձութեամբք: Եւ եթէ անդանաւր⁵ յետ չորեքարիւր⁶ ամի էր ազատութիւնն⁷, յաղագս արքայութեանն զի՞նչ զարմանք են ո՛չ տալն առ ժամայն:

Բայց դու գայն տես, զի զոր խոստացաւն՝ արար, եւ ոչ կարաց յովով ժամանակն եւ խիստ ծառայութիւնն խափանել զխոստումնն. եւ ոչ մինչ⁸ ի թշնամեացն պատուհասելն եկաց մնաց, այլ ի նոցա կորնչելն բնաւ, սոքա ի նեղութեան աւգնեալք, փրկութեամբ մեծաւ ելին ի Հանգիստ. զոր եւ յիշեցուցանէ նոցա զմեծ երախտիսն յասելն, թէ «Յետ այսորիկ ելցեն եւ պաշտեացն գիս ի փեղոնս յայս»

¹ ԱԲ չորեք հարիւր

² ԱԲ ուրեք

³ Բ պատուհասելով

⁴ Ա ետ

⁵ Բ անտանօր

⁶ ԱԲ չորեք հարիւր

⁷ ԱԲ ազատութիւն

⁸ ԱԲ ինչ] միցչ

(Է. 7): Այսինքն՝ թէ ազատութեամբ մեծաւ վերստին այսրէն դարձցին եւ առանց պատուհասի մնասցեն: Եւ յետ այսչափ երեւմանցս եւ խոստմանց: «Ապա եր նմա ուխտ թլփաբութեան» (Է. 8): Իբրեւ դրոշն ինչ կնքոյ եւ նշան՝ որով զատչիցին հաւատացեալքն յանհաւատիցն¹:

Եւ ապա ծնաւ գիսահակ (Է. 8):

Աստանաւր հանգիստ եւ դիւրութիւն արար Աբրահամու կատարմամբ աւետեացն ի ձեռն պարգեւական զաւակին: «Եւ թլփաբեաց գնա յաւոր ութերորդի, եւ Իսահակ գՅակոր, եւ Յակոր գերկոբասան նահապետսն» (Է. 8): Աստ թուի ինձ զաւրէնսն նշանակել թլփատութեամբն Յակոբաւ եւ նահապետաւքն. զի ըստ աւրինացն հրամանի յութերորդում թլփատէին աւուր, որ էր ստուէր հանդերձելոյ ութերեկին, /42ա/ յորժամ թլփատեալ ի բաց կտրին² չարքն յառաքինեաց, որ եւ առ³ մեզ Քրիստոսիւ պայծառացաւ անձեռագործ թլփատութիւն:

Եւ նահապետսն նախանձեալ ընդ Յովսեփայ վաճառեցին գնա յԵգիպտոս (Է. 9):

Աստանաւր Քրիստոսի աւրինակն է յայտնեալ նոցա՝ իրաւք զոր կրեաց Յովսեփ յեղբարցն⁴, որք ոչ ինչ ի նմանէ վնասեալք, այլ եկեալ կերակրել զնոսա, նոքա չարաչար զնմանէ խորհեցան, առ որ թէպէտ խոստումնն Աստուծոյ յամէ, սակայն կատարած առնու: «Զի էր, *ասէ*, Աստուած ընդ նմա, եւ փրկեաց գնա յամենայն նեղութեանց նորա» (Է. 9-10): Տե՛ս, զի ոչ գիտելով գործակից լինէին եղբարքն մարգարէութեանն, եւ զի ինքեանք լինէին պատճառ, սմին վասն եւ չարիքն ի նոսա դարձեալ լինէր: «Իսկ նմա եր Աստուած շնորհս եւ իմաստութիւն առաջի Փարաունի արքային եգիպտացոց, եւ կացոյց գնա իշխան եգիպտացոցն եւ ամենայն փան նորա» (Է. 10): Շնորհս ետ նմա առաջի առն բարբարոսի ծառային գերեցելոյն. զի զոր եղբարքն մատնեցին՝ նա⁵ պատուեաց: Զոր եւ առ Քրիստոս տեսանեմք եղեալ, յեղբարցն խաչեալ⁶, եւ ի հեթանոսաց երկրպագեալ եւ հաւատացեալ:

¹ Ա յանհաւատից

² Բ կրտրին

³ ԱԲ > առ

⁴ Ա յեղբարձցն

⁵ Բ գնա

⁶ ԱԲ > յեղբարցն խաչեալ

Եւ եկն սով մեծ յամենայն երկիրն եգիպտացոց եւ Քանանու եւ նեղութիւն մեծ (Է. 11):

Ձի իրաւունք դատաստանացն Աստուծոյ սովով ճնշել պարտ վարկաւ զյղփուլթեամբ¹ անազդակեալսն: Եւ տես, թէ ո՛րպէս կազմէ զիրսն այլոցն ի խրատ, եւ զի իւրքն փառաւորեացին: Եւ զի էր ասէ «նեղութիւն մեծ», զի ոչ բաւական լինէր զիւրել վտանգի սովոյն ընտովք ինչ կամ ձկամբք կամ բանջարովք՝ անզաւր եղելոյ սոցունց: «Եւ ոչ գրանելին կերակուր հարբն մեր» (Է. 11): Ընդ բազումս նեղեալ վտանգեալք դաւաճանաւղքն Յովսէփայ՝ ի տեղի պատժոց, իսկ Յակոբ ըստ մատակարարութեան², զի ի պատճառս նորա կեցցեն ընդ³ նովաւքն:

Եւ լուեալ Յակոբաւ, թէ գրանի կերակուր յեգիպտոս (Է. 12):

Վայելչապէս. ոչ այլ ոք, այլ արժանաւորն կելոյ ասէ զՀնարս կենացն, յոյժ մանաւանդ մարգարէաբար քան թէ ի Համբաւոյ: «Առաքեաց զհարսն մեր յառաջագոյն, եւ յերկրորդումն եր ծանախս Յովսէփ եղրարցն իւրոց, եւ յայրնի եղև Փարաւոնի ազգ⁴ նորա» (Է. 12-13): Արդ, իջեալ եղեն, զի կերակուր զնեսցեն, եւ ի պէտս կարեացն առ նա անգեալ⁵ եղեն: Իսկ նա ոչ մինչեւ յայս միայն⁶ զսիրելութիւնն իւր եցոյց, այլ եւ Փարաւոնի ծանոյց եւ զնոսա առ ինքն էած, պահելով եւ այսուամբողջ զնմանութիւն⁷ Տեառն իւրոյ, որ յերկրորդումն գալստեանն⁸ փառաւք յայտնելոց է, եւ որոց խոցեցին զնա:

Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց զՅակոբ զհայր իւր եւ գամենայն ազգապոռհմնն՝ ոգիս եւթանասուն⁹ եւ հինգ (Է. 14):

Յորժամ թիւ զաւակացն Յակոբայ¹⁰ Հաւասարեաց արու թուոյ՝ կրկին եւթանասնեակ ամացն Աբրահամու, յորում խոստացաւ Աստուած նմա զաւակ, եւ որչափ եկեաց յետ տալոյ զաւակին, սկիզբն առնէ ապա միւսոյ նախասացութեանն լրման, թէ «Եղիցի

¹ Բ զղփութեամբ

² Բ մակարարութեան] մատակարարութեան

³ ԱԲ > ընդ

⁴ ԱԲ ազգն

⁵ ԱԲ անկեալ

⁶ ԱԲ միայն մինչեւ] միայն

⁷ ԱԲ զնմանութիւնն

⁸ Ա զալրստեանն

⁹ ԱԲ իւթանասուն

¹⁰ ԱԲ յակոբա

զաւակն քո պանդուխք»։ Եւ ի պատճառս սովոյն «Էջ /42բ/ Յակոբ յԵգիպտոս, եւ¹ վախճանեցաւ ինքն եւ ամենայն հարքն մեր» (Է. 15), զի չեւ էր ժամանակ ելիցն։ «Եւ փոխեցան ի Սիրբն, եւ եղան յայրին, զոր սրացաւ Արրահամ գնոց արծաթոյ յորդոցն² Եմովրայիս³ ի Սիրբն» (Է. 16)։ Զի զեռ եւս ոչ տեղւոյ գերեզմանի անգամ տեարք էին ի Քանան, այսինքն⁴ է՝ քայլ մի ոտին։

Իրրեւ մերձեցաւ ժամանակ աւերեացն, զոր խոստացաւ Աստուած Արրահամու, անեաց ժողովուրդն եւ բազմացաւ յԵգիպտոս (Է. 17)։

Ոչ ի չորեքարիւր ամ անցոյց զնոսա, այլ մաւտ ի կատարածն, եւ մանաւանդ չորեքարիւր ամն անցեալ էր՝ եւ յոլովագոյնն յԵգիպտոս։ «Մինչև յարեաւ այլ թագաւոր, որ ոչ ճանաչէր գՅովսէփ, նա հնարեցաւ ազգին մերում եւ չարչարեաց զհարսն մեր՝ առնել ընկեցիկ զմանկունս նոցա, զի մի՛ ապրեսցին» (Է. 18-19)։ Եւ այս իսկ է սքանչելի, զի յայնժամ անցոյց, յորժամ թագաւորն Հնարեցաւ գետընկէց առնել զմանկունսն, զի նոսա ոչ կամէր յայտնապէս սպանանել, այլ զմանկունսն, զի մի՛ բազմասցին։ Եւ այս դարձեալ այլ յուսահատութեան տաղնապ յետ առաջնոյն՝ որ էր սովն, այլ յայնմանէ ապրեցան։ Եւ երկրորդ՝ ի ձեռս եգիպտացւոցն անկանելն։ Իսկ երրորդս⁵ դժնդակ քան զայլսն, կորընչելն ի ձեռաց թագաւորին։

Այլ տե՛ս աստանաւր զքաջ ամենահնարութիւնն Աստուծոյ յայտնեալ, այլ⁶ թէպէտ եկն սովն ի վերայ նոցա, այլ ոչ սատակեաց զնոսա։ Նա, եւ զի, որ գիտէր զնոսա թագաւորն՝ վախճանեցաւ, այլ մանաւանդ յայնժամ անցոյց զնոսա։ Եւ զի եւ Հրաման թագաւորական եւ ոչ զաւրեաց սպառել զնոսա, այլ որովք բանսարկուն ձեռնարկէր քակել զխոստումնն Աստուծոյ, այնու իսկ առաւել եղեն անցեալ։ Եւ յայնժամ սքանչելապէս լցեալ լինէր խոստումն⁷ Աստուծոյ, զի ոչ ի բարեբաստութեան եւ ի հանգիստ գոլով, այլ չարչարեալք եւ սպանեալք՝ անցեալ լինէին։

¹ ԱԲ > Եւ

² ԱԲ յորդոցն

³ ԱԲ Եմովրայ

⁴ ԱԲ այլ ինքն] այսինքն

⁵ Բ երրորդ

⁶ ԱԲ զի] այլ

⁷ ԱԲ խոստումնն

Յորում ժամանակի ծնաւ եւ Մովսէս (Է. 20):

Դարձեալ եւ այս եւս սքանչելի զտեսչութիւնն Աստուծոյ յայտնէ. զի այն, որ պաշտպան լինելոց էր ազգին, այսինքն՝ Մովսէս, ոչ յառաջ քան զխուճապ խռովութեանն եւ ոչ յոտոյ, այլ ի մէջ սաստկութեանն ծնանէր: Իսկ զի՞նչ այն, թէ «Էր կայտառ առաջի Աստուծոյ» (Է. 20): Յուցանէ, որ զի թէպէտ ըստ մարմնոյ զաւրութիւն ինչ կամ իմաստութիւն ոչ երեւէր ի նմա, բայց առ ի յԱստուծոյ շնորհաւքն փայլէր: «Որ եւ սնաւ ի փան հար իւրոյ ամիսս երիս» (Է. 20): Զոր Պաւղոս հաւատով, ասէ, թաքուցին. զի ծաղիկ զիմացն յոյս տայր՝ շնորհացն Աստուծոյ ապրեցուցանել զնա: Եւ ոչ եւս կարելով թաքուցանել, թէպէտ ոչ կամէին, ի գետ ընկեցին:

Եւ յրնկեցիկն առնել զնա՝ երարձ զնա դուստրն Փարաւոնի, եւ սնոյց զնա իւր յորդէգիրս (Է. 21):

Զի ո՛չ վայրապար ընկեցին, այլ մեծաւ յուսով եւ բազում խնամարկութեամբ, ակն ունելով յայտնել ի նմա տուեալ շնորհացն Աստուծոյ պարգեւք¹, որ եղեւ իսկ: Զի յորժամ ի մարդկայնոցս անյոյս եղեւ՝ եւ արտաքս ընկեցին զնա, յայնժամ ամենայն բարերարութիւնն փայլեալ ցուցանիւր. զի եբարձ զնա ոչ այլ ոք, այլ դուստրն Փարաւոնի: Ահա՛ չէր ուրեք տաճար եւ ոչ զենմունք զոհից, եւ այսչա/43ա/փ տնաւրէնութիւնք եղեն: Արդ, եթէ Յովսէփայն սքանչելի էր, որ յեղբարցն վաճառեալ եղեւ, եւ ի վաճառմանն թագաւորեալ, ապա այս՝ Մովսէսիս² եւս սքանչելագոյն: Զի զայն, որ պարտական եղեւ մեռանել, եւ ի մահ իսկ մերձեցաւ ի գետ ընկեցեալ, թագաւորն ինքն սնուցանէր զնա, զայն որ հանդերձեալ էր կործանել զիշխանութիւն նորա: Տեսանե՞ս, յամենայնի գրեթէ զմեռելոցն յաւրինեալ զյարութիւն, եւ մանաւանդ զի չեն հաւասար նորին Աստուծոյ առնելն ինչ եւ մարդկային կամաւք առ լինել. քան զի այսոքիկ մարդկային լինէին կամաւք: Եւ տե՛ս զփոյթ նոցա, զի եւ զիմաստունս եգիպտացւոց կացուցանէին ի դայեկութիւն վարժից կորուսչին իւրեանց: «Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ եգիպտացոցն, եւ էր զարաւոր բանիւր եւ գործով իւրով» (Է. 22), այսինքն՝ ի խրատս հանճարոյ եւ ի հրահանգս գրաւորական կրթութեան³:

¹ Աբ պարգեւոք

² Բ մովսէսի

³ Աբ կրթութեանն

Իրրեւ լցան նորա քառասնամեա ժամանակ, անկաւ ի սիրպ նորա շրջել գեղրարք իւրովք գորդովքն Իսրայելի (Է. 23):

Զի ակն ունելով վարձուցն, բարւոք, բարւոք¹ համարեցաւ չար-չարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ: «Եւ փնտելալ գոմն գրկելալ, գտարեցաւ» (Է. 24) ուղիղ նախանձու եւ աւգնական եղեւ զրկելոյն: Եւ թէպէտ կասկածելի էին իրքն, «Խնդրեաց զվրեժ գրկելոյն սպանելալ գեգիպացին» (Է. 24): Տե՛ս, թէ ո՞րպէս ինքեանք ի զգուշութեան գոլով՝ զիւրեանց հանգիստն անտես առնէին, եւ սա եւ Յովսէփ, զի զայլս ապրեցուցեն:

Զմտաւ ածէր, թէ իմասցին եղրարք նորա՝ թէ Աստուած ի ձեռն նորա փալոց էր գիրկուրթին նոցա, այլ նորա ոչ իմացան (Է. 25):

Բազում աստանաւր ցուցանէ առ հարս նոցա զխնամակալութիւնն Աստուծոյ ի նեղութիւնս, զի ի ձեռն բարերարութեան եւ տանջանաց եւ սքանչելեաց նուաճէր զնոսա ի հաւատս, որով արժանասցին փրկութեանն, այլ նոքա ոչ իմանային զխնամս նորա: Զայս ասելով Ստեփանոսի եւ զսոցանէ ակնարկէ իբրեւ զյիմարաց, որ զամենեցուն եկեալ հասեալ փրկութիւնն զՅիսուս առաւել քան զՄովսէսին, որ ոչ առ յապա գուշակէր, այլ անդէն իսկ եկեալ հասեալ, ոչ իմացան իբրեւ ապշեալք: Զի որո՞յ արդեւք հանճարոյ, կամ անդ կամ աստ պէտք էին առ ի գիտել, վասն զի ոչ լոկ բանիւք, այլ ի ձեռն գործոյ լինէր պաշտպանութիւնն, սակայն ոչ իմացան: Այլ հայեաց, թէ զիա՞րդ այնչափ խաւսելով Ստեփանոսի, ոչ էր ծանրագոյն ատենին, այլ լսէին բանից նորա, զի տեսանէին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի:

Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ, ասէ, երկուց երրայեցուց ընդ միմեանս մարտուցելոց: Եւ կամէր առնել խաղաղութիւն ի մէջ նոցա, ասէ. Արք եղրարք էք, ընդէ՞ր գրկէք զմիմեանս (Է. 26):

Ի միտ առ, թէ զիա՞րդ անդ զզրկիչն ոչ խրատէր, այլ սատակէր, որ թշնամի էր եւ ոչ լսէր խրատու: Իսկ աստ առ անիրաւն հեզութեամբ խաւսի իբրեւ առ ընտանի՞² եւ երէկ փրկեալ առ ի նմանէ ի ձեռաց եգիպտացւոյն՝ որում ի ճահ իսկ էր հաւանել փրկչին իւրոյ: Այլ նա ապերախտ եղեալ եւ ըմբոստացեալ ընդդիմաբանէր «Ո՞՞ կա-

¹ ԱԲ > բարւոք

² Ա ընդանի

³ Ա ոչ] ո

ցոյց գրեզ, *ասէ*, իշխ/*43բ*/ան եւ դադաւոր ի վերայ մեր» (Է. 27): *Այսպիսի ինչ եւ ընդ Քրիստոսի ասէին*. «Որո՞վ¹ իշխանութեամբ ատնես զայդ, կամ ով եր գիշխանութիւնդ զայդ» (Մարթ. ԻԱ. 23), *զի այս իսկ է սովորութիւն հրէից, առ բարերարսն անիրաւութեամբ գնալ: Եւ տե՛ս զբազում պղծութիւն ապերախտ առնն*: «Միթէ սպանանե՞լ կամիցիս զիս, *ասէ*, որպէս երէկ² սպաներ զեգիպտացին» (Է. 28): *Այնպէս վաղվաղակի զերախտիսն մոռանային եւ դժնդակսն³ բարեացն փոխարինէին: Զի ահա որ վասն իւր փրկութեան զձածուկ եղեալն՝ յայտ յանդիման հրապարակէր⁴:*

Եւ փախեալ Մովսէս ի բանիցս յայցանէ, եւ եղև պանդուխտ յաւարար երկրի, ուր ծնաւ երկուս որդիս (Է. 29):

Բայց ո՛չ խափանեաց փախուստն զտնաւրէնութիւնն, այլ եւ պատճառ եւս եղեւ: Զի թէպէտ նոքա չարաբարոյք առ երախտաւորսն լինէին, սակայն որպէս յայնժամ ի ձեռն չարաչար կրողին Յովսէփայ⁵ ապրեալ եղեն, եւ այժմ ի ձեռն չարաչար կրողին յինքեանց՝ ապրեցան, այսինքն՝ ի ձեռն Մովսէսի: Զի որ զերախտիսն ընկալաւ ի նմանէ, թէպէտ եւ գործով ո՛չ սպան զնա, սակայն բանիւ սպան, որպէս եւ նոքա, եւ նոքա զՅովսէփ յերկրէն իւրեանց յաւտարն վաճառեցին, իսկ սոքա զՄովսէս յաւտարէն յաւտարն փախըստեայ արարին. եւ նոքա զկերակրիչն ինքեանց դաւաճանեցին, եւ սոքա զբարւոյ⁶ զխորհրդակիցն եւ զփրկիչն իւրեանց կամեցան սպանանել: Այլ ըստ Գամաղիելի⁷ ոչ զաւրեցին քակել զկարգեալն յԱստուծոյ խորհուրդ, այլ դաւաճանեալքն պատճառ փրկութեան լինէին դաւաճանողացն, ի ձեռն որոց ապրեալք եւ փրկեալք լինէին հանդերձ Աստուծով, որպէս ի կարգի ասացելովքս ցուցանէ:

Եւ ի կարարել, *ասէ*, ամացն քառասնից երեւեցաւ նմա յանապարին ի լեինն Մինա հրեշտակ Տեառն ի բոց հրոյ մորենույ (Է. 30):

Տեսանե՞ս, զի ո՛չ կարէ երկար ժամանակն խափանել զխոստումն⁸ Աստուծոյ, այլ յորժամ բազում ժամանակս յաւտարութեան

¹ Ա սրով] որով

² ԱԲ երեկ

³ ԱԲ դժընդակսն

⁴ ԱԲ հրատարակել] հրապարակել

⁵ Բ յովսէփայ

⁶ ԱԲ զբարւոյք

⁷ Ա գամաղիելի, Բ գամաղիելի

⁸ ԱԲ զխոստումնն

էր եւ ոչ եւս ունէր ակն անդրէն դառնալոյ, քանզի եւ մանկունս երկուս անդէն ծնեալ էր, յայնժամ նմա հրեշտակն երեւեալ լինի: Եւ մի՛ գարմանար, թէ գՈՐԳԻՆ Աստուծոյ հրեշտակ կոչէ, զի կոչէ եւ առ Յեսուաւ մարդ: «Յանապարին» եւ «ի լերին» ասէ, եւ ո՛չ ի տաճարին. եւ ոչ ուրեք տաճար եւ ոչ գեոնումն: Նա եւ ոչ յանապատին երեւէր, այլ¹ ի տկար եւ ի փշալից թփում, ի մորենւոջն առ ի նշանակ մեծի խորհրդոյն, որ առ յապայն լինելոց էր ի ձեռն կուսին Մարիամու՝ որ կրեաց զիմանալի հուր աստուածութեանն եւ ոչ կիզաւ, որպէս մորենին, որ² վառեալ էր եւ ո՛չ այրէր:

Եւ Մովսէսի փեսեալ՝ զարմացաւ ընդ փեսիլն (Է. 31):

Զի ասի, թէ եւ չորն ձաղկ՝ դալարացեալ տերեւէր, իբրեւ զՄարիամ, որ թէ գոյր ի նմա տեսակ փուշոյ ի զանկուածոյ տանն Ադամայ, եւ այն եւս սրբեալ հոգէխառնէր: «Եւ ի մափչելն նորա նշմարել՝ եղև ձայն Տեսոն» (Է. 31): Ահաւասիկ ոչ միայն տեսեան, այլ եւ ձայնի արժանացաւ: «Եւ եւ, ասէ, Աստուած Արրահամու, Աստուած Իսահակայ³ եւ Աստուած Յակովբայ» (Է. 32): Զոր վերագոյն հրեշտակ ասաց, աստա/43բ/նաւր Աստուած եւ Տէր կոչէ Աբրահամու, Սահակայ եւ Յակոբայ՝ զմեծի խորհրդոյ հրեշտակն: «Եւ գահի հարեալ Մովսէս՝ դարձուցանէր զերեսս եւ ո՛չ իշխէր հայել առաջի Աստուծոյ: Եւ ասէ ցնա Տէր. Լոյժ զկաշիկս ոտից քոց» (Է. 32-33): Կոխել զեգիպտացիսն որպէս զողկոյզս ի հնձանի, ըստ որում Յեսու գբանանացիսն, ըստ ասելոյն՝ «Յեղոմ լուծից զկաշիկ ին»:

Աստուածք. Եւ մեզ առ յաւրինակ. զի որ մովսիսապէս հպի առ Աստուած աշտիճանաւ⁴ ինչ ըստ առաքելոցն⁵, մերկանալ պարտի եւ ի սակաւ ախտից, որով եւ զերկիր կոխէ, զի ի հոգալ զհարկաւորսն կերակուր կամ ծածկոյթ՝ մի՛ աղտեղասցի:

Զի փեղիդ, յորում դուդ կացեր, երկիր սուրբ Է (Է. 33):

Ոչ ուրեք տաճար՝ եւ տեղին սուրբ է: Զի վէր երեւութեամբն եւ ներգործութեամբ միածնին՝ յոյժ սքանչելի եւ սրբագոյն էր վայրն, եւ քան զնոյն ինքն զսրբութիւն սրբութեանցն, վասն զի անդ ոչ երբեք այսպէս երեւեցաւ Աստուած, եւ ոչ այսպէս զողացեալ եղև

¹ Ա այլ զի] այլ

² Աբ > որ

³ Աբ սահակայ] իսահակայ

⁴ Աբ աստիճանաւ

⁵ Աբ առաքելոյն

Մովսէս: Նշանակէր այսու զմարմնով զայլուստն իւր, որով սրբելոց էին ամենայն արարածք. առաւել քան տաճարն եւ զդաբիրայն: Ապա ասէ եւ զբազում¹ մատակարարութեանն² զխնաման:

Տեսանելով Կնիսի գտարչարանս ժողովրդեան իմոյ (Է. 34):

Յայտ է, զի ոչ իբրեւ զմարդ տեսանէ: «Եւ լուայ հեծութեան նոցա» (Է. 34): Զի աղաղակեն եւ հեծեն ի դառնութենէ վշտին: «Եւ իջի փրկել զնոսա» (Է. 34): Ոչ տեղւոջէ ի տեղի իջանէ, այլ յանհաս բարձրութենէն ի գլխութիւն՝ յիջելով զխոստումն արդարոցն: Յուցանէ Աստուած զզիջանելն³ իւր խնամաւք առ հարս նոցա ի նեղութեանն. զի եւ սոցա տացէ գիտել, թէ որպէս նոքա եղեն անիմայք եւ ապերախտք՝ նոքա⁴, նոյնպէս եւ սոքա:

ԲԱՐՈՅԱԿԱՆ⁵

Այլ մեր լսելով զայս՝ ի նեղութիւնս առ նա ապաւինեսցուք, քան զի հեծութեան նոցա լուա⁶, ասէ, եւ իջի փրկել զնոսա: Ոչ պարզաբար վասն նեղութեանցն, այլ եւ վասն հեծութեանն եւ աղաղակի նոցա առ իս, զոր եւ Դաւթաւ յուսադրէ, թէ «Վասն հեծութեան փնանկին յարեայց ի փրկել» (Մաղմ. ԺԱ. 6): Ապա թէ ոք ասիցէ, թէ ընդէ՞ր թողացոյց Աստուած չարչարել նոցա անդանաւր: Նախ զայս ասասցուք, թէ ամենայն յանիրաւ չարչարանք եկեալ ի վերայ ուրուք. մեծաց վարձուց պատճառ լինի: Եւ ապա զի զգաւրութիւն իւր ցուցցէ թանձրամտացն, թէ կարաւղ էր փրկել ի միջոյ չարեացն: Եւ դարձեալ. զի խրատեսցէ զնոսա տանջանաւքն զսպիլ յաւելորդաց. զի ահա յորժամ յանապատին անդորրացան, պարարտացան եւ թողին զԱստուած զարարիչն: Սմին վասն թոյլ տայր նոցա չարչարիլ, որպէս Ադամայ քրտամբք ուտել զհաց, զի յորժամ հասցեն դարձեալ ի հանգիստն, գոհասցին զԱստուծոյ, զի մեծ բարի է նեղութիւնն, ըստ ասողին «Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որով ուսայց զարդարութիւն⁷ քո» (Մաղմ. ճԺԸ. 71):

¹ ԱԲ բազում

² ԱԲ մատակարարութիւնն

³ ԱԲ զիջանելն

⁴ ԱԲ > նոքա

⁵ Գ > բարոյական

⁶ ԱԲ լուայ

⁷ ԱԲ զարդարութիւնս

Արդ, եթէ որբոցն բարի էր նեղութիւնն, յոյժ մանաւանդ մեզ: Ապա մի՛ փափկանալ խնդրեսցուք, զի ոչ կարեմք յաշխարհիս խնդալով՝ միանգամայն եւ յԱստուած խնդալ, զի չիք ինչ խայտառակագոյն քան զփափկութիւն, զի ոչ դադարէ ի վերայ իւրում հիմանն հոգի փափկացեալ, այլ բերեալ լինի իբր ի դժնդակ¹ ջրհեղեղէ հեշտութեանցն ան/44բ/կարգապէս ի ծաղր անհամ եւ ի բանս վայրապարս: Եւ տե՛ս զԱդամ որպիսի² ոք էր ի փափկութեան² դրախտին, եւ ո՞րպէս յետ այնորիկ, կամ զնոյն ինքն զԴաւիթ, յորժամ ի հեշտութեան էր եւ ի խնդութեան զինչ ասէր. «Ես ասացի ի բարեկենդանութեան իմում թէ ոչ սասանեցայց» (Սաղմ. ԻԹ. 7). զինչ եւ ի նեղութեանն, թէ ասիցէ՝ «Թէ ոչ կամիմ գրեզ, ահա արասցի ընդ իս, գոր ինչ կամեսցի³»: Տեսանե՞ս զգաստութիւնն ի նեղութենէն. զի չիք իմաստասիրագոյն քան զտրտմութիւն: Սմին վասն՝ եւ Սողոմոն ասէ. «Լա է երթալ ի փունս գոյ քան ի փունս ուրախութեան» (Անկ. Է. 3): Եւ ապա զաւրինակ փրկելոյն զնոսա յայտ առնէ. «Եկ, ասէ, առաքեցից գրեզ յԵգիպտոս», սպասաւոր զքեզ լինել կամիմ փրկագործ կամաց իմոց, եւ հանել անտի զիմ ժողովուրդն, վասն որոյ «եկ առաքեցից գրեզ»:

[ԳԼՈՒԽ ԺԷ.]

Զայն Մովսէս⁴, գոր ուրացանն եւ ասեն. Ո՞ր կացոյց գրեզ իշխան եւ դապաւոր ի վերայ մեր (Է. 35):

Յոյժ միաբանի իրքն Մովսէսի ընդ խորհուրդն Քրիստոսի, զի մի՛ զարմասցուք, թէ բարեգործեալքն ի Քրիստոսէ ի բաց հրաժարեն ասելով՝ չիք մեր թագաւոր. զի եւ առ Մովսէսիւ զայս ինչ արարին: Սմին վասն ցուցանէ ի վաղնջուց⁵ զապերախտութիւն նոցա: Զայն Մովսէսն, ասէ, գոր տազնապեցիինն կորնչել, զայն յորմէ հրաժարեցին: Զնա Աստուած փրկիչ նոցա առաքեաց, որպէս եւ⁶ զՅիսուս, գոր յարոյցն եւ առաջնորդ կենաց առաքեաց: Եւ տես, թէ զիա՞րդ ի ձեռն Քրիստոսի ցուցանէ եւ զլեալսն⁷ յառաջագոյն: «Ձեռամբ իրնչ-

¹ Բ դժընդակ

² ԱԲ ի փափկութիւն

³ ԱԲ կամիցի

⁴ ԱԲ Մովսէսն

⁵ ԱԲ ի վաղընջուց

⁶ ԱԲ > եւ

⁷ ԱԲ զլիեալսն

փակին» (Է. 35) *ասէ, այնմ որ ասաց ի մորենւոջն* «Ես եմ Աստուած Արրահամու» (Մփր. ԻԲ. 32):

Մովսէսն այն եհան զնոսա, ասէ (Է. 36):

Եւ տե՛ս զհարդ ցուցանէ զնա պայծառագոյն: «Արարեալ, ասէ, նշանս եւ արուեստս յերկրին եգիպտացոց եւ ի Կարմիր ծովուն եւ յանապատին զամս քառասուն» (Է. 36): Յայտ առնէ, թէ վասն նոցա առնէր¹ զնշանսն զամենայն. ոչ² ի միտմ տեղւոջ կամ սակաւս, այլ յԵգիպտոս, եւ ի ծովուն, եւ յանապատին, ուր եւ դեգերեալ³ էին⁴ զամս քառասուն: Զի ոչ պարզաբար ընտրեաց զնոսա, այլ այսպիսի հրաշիւք ի ձեռն այնպիսի առն, որ ընդ Աստուծոյ խաւսեցաւ, որ ի հրաշափառ երեւմանցն ապրեցաւ, այնչափ նշանս կարողացեալ առնել:

Այն Մովսէսն, ասէ, որ ասաց⁵ ցորդիսն Իսրայելի մարգարէ յարուցել ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց արհամարհեալ ի ձէնջ իբրն զիս (Է. 37):

Զի զոր աւրինակ անարգեցին հարքն նոցա զՄովսէս, սոյնպէս անարգեցին եւ սոքա զՔրիստոս: Եւ որպէս անդ զնա Փարաւոն, սոյնպէս եւ աստ զսա Հերովդէս կամեցան սպանանել, այլ նա ի Մադիամ, եւ սա յԵգիպտոս զերծեալ ապրեցան: «Նմա լուիջիր» ասէ:

Բերէ ի մէջ զմարգարէութիւնս⁶ վասն Քրիստոսի եւ զնորին աւրինակն ի նոր աւրէնսս⁷ հաստատելոյ, թէ առաջինն լուծանելոց էր ի յառնել մարգարէին: Եւ եցոյց, թէ առանց պատճառի լնուլ պարտ է մարգարէութեանն, եւ ոչ հակաճառի ընդ նմա Մովսէս:

Սա է, որ եղև յեկեղեցւոջն, որ յանապատին էր, ընդ հրեշտակին, որ խաւսեցաւ ընդ նմա ի հրոյ մորենու/45ա/ոջն՝ ես եմ Աստուած Արրահամու, եւ ընդ հարսն մեր՝ ես եմ Տէր Աստուած քո (Է. 38):

Տեսանե՞ս, զի անդուստ էր արմատն հաւատոյ, զի փրկութիւն ի հրէից է, ասէ: Եւ ապա զմեծ սքանչելիսն ցուցանէ, որ ի լերինն լիեալ լինէին. «Որ բնկալաւ, ասէ, զպարզամտ կենդանիս փալ մեզ» (Է. 38):

¹ Բ առնել

² ԱԲ զի] ոչ

³ Ա դեգերեալ

⁴ Բ լինէին

⁵ ԱԲ յասաց

⁶ ԱԲ զմարգարէութիւն

⁷ Բ օրէն

Տե՛ս, զի զհրեշտակն, որ խաւսեցաւ ընդ նմա, զնոյն ինքն զնա աւասիկ ցուցանէ գոլ տուաւդ աւրինացն: Զի՞նչ է պատգամս կենդանիս, այսինքն՝ որոց կատարումն կենդանութիւն էր, թէ պահեսցեն եւ հնազանդեսցին, ըստ այնմ, թէ «Որ արասցէ գայն, կեցցէ նորիմր» (Գղղ. Գ. 12), որ են մարգարէութիւնքն ի Քրիստոս, եւ նովաւ կարէին նոքա կենդանի մնալ ի հնումն: Իսկ վասն¹ ոչ պահողացն զբանս կենդանիս ասէ Եզեկիէլիւ, թէ «Տաց նոցա հրամանս անբարիս եւ իրաւունս՝ որովք ո՛չ կարիցեն կեալ» (Եզկ. Ի 25): Ահա՛ ոչ ուրեք տաճար եւ ոչ զենումն, եւ ընկալաւ, ասէ, զբանս կենդանիս: Յամենայնի սքանչելի ցուցանէ զՄովսէս, թէ «Ոչ միայն նշանս արար, այլ եւ աւրէնս ետ», որպէս եւ Քրիստոս յառաջագոյն նշանս առնէր եւ յայնժամ ապա աւրէնս զնէր եւ պատուիրանս աւանդէր, նոյնպէս եւ նա:

Այլ աստանաւր ամբաստանութիւն հասուցանէ նահապետացն, որք ոչ լուան նմա անհաւանական բարս ունելով յետ այնչափ նշանացն եւ յետ առնլոյն զպատգամս կենդանիս՝ ի հակառակն եւս դարձման նմա: «Որում ոչ կամեցան, ասէ, հնազանդ լինել հարքն մեր, այլ մերժեցին եւ դարձան սրբիւք իւրեանց յԵգիպտոս» (Է. 39): Ուր հեծէին² եւ յողոց հանէին, ուստի գոչէին եւ առ Աստուած աղաղակէին, դարձեալ անդանաւր³ դառնային: «Եւ ասեն ցԱհարոն. Արա մեզ Աստուածս» (Է. 40): Ով չարութեանն, «արա» ասեն, ոչ Աստուած, այլ «Աստուածս»: Եւ այս իսկ է սքանչելի, զի զոր ոչ գիտէին՝ խնդրէին: «Զի երթիցեն առաջի մեր» (Է. 40), ասեն: Ու՞ր: ՅԵգիպտոս: Տեսանե՞ս, թէ՞ զիարդ դժուարաքակ իմն հպեալ էին ի բարս եգիպտականս, եւ ո՛րպէս ուրանան զերախտաւորն եւ զհանաւղն անարգեն:

Զի Մովսէսն այն, ասեն, որ եհան գմեզ յԵգիպտոսէ, ոչ գիտնմք զի՛ եղև նմա (Է. 40):

Ոչ ուրեք անուն Աստուծոյ, այլ զամենայն Մովսէսի վերագրեն: Արդ, ուր գոհանալ զԱստուծոյ պարտ էր, զՄովսէս ի մէջ բերէին, եւ ուր հաւանել պարտ էր աւրինացն, զՄովսէս ոչ յիշեն: «Ոչ գիտնմք ասեն, զի՛ եղև նմա» (Է. 40): Եւ սակայն ասաց Ահարոն, թէ «Ելեալ է⁵, զի առնուցու զաւրէնսն», այլ ոչ հանդուրժեցին զաւուրս քառա-

¹ ԱԲ > վասն

² ԱԲ հեծէինն

³ Բ անտանօր

⁴ ԱԲ > թէ

⁵ ԱԲ > է

սուև¹. «Այլ արարին որթ ի Քորեր, ուր Աստուած երեւացաւ Մովսէսի, եւ մաքուցին զոս կոտց, եւ ուրախ լինէին ի գործս ձեռաց յիւրեանց» (Է. 41): Վասն որոյ պարտ էր ամաչել եւ պատատել զերեսս իւրեանց, նոքա ի խնճոյս ծաղու իջեալ կաքաւելով ուրախ լինէին: Եւ զի² նչ սքանչելի, թէ զՔրիստոս ոչ գիտացին, այնոքիկ՝ որ զՄովսէս եւ Աստուած զցուցեալն ի ձեռն այնչափ նշանաց ոչ միայն անգիտացան, այլ եւ անարգեցին կուռս առնելով³: Այլ «Դարձոյց գնոսա Աստուած եւ մաքունաց ի պաշտան գաւրութեան երկնից» (Է. 42): Ապա յայտ է, թէ աստուատ են զոհքս /45բ/ ի սովորութենէ չարութեանցն: «Եւ նորա, ասէ, արարին զոս կոտց» (Է. 41): Վասն այնորիկ նշանակէ յանուանէ, թէ արարին որթ եւ մատուցին զոհ. զի նախ քան զայն չիք անուն զոհի, այլ հրամանք կենդանի եւ բանք կենաց: «Եւ ուրախ լինէին ի գործս ձեռաց իւրեանց» (Է. 41), վասն այնորիկ լինէին եւ տաւնքն մարմնականք:

Կիրակոս³ Իսկ զի⁴ նչ այն, թէ «Մաքունաց գնոսա ի պաշտան գաւրութեան երկնից» (Է. 41): Այսինքն՝ յերկրաւոր⁴ չար սովորութենէն փոխեալ՝ ընդ երկնաւորացն արար խորհրդակից պաշտամամբքն: Իսկ մատնելն զթոյլ տալն յայտ առնէ, որ ոչ ըստ նորին կամաց էր անբանիցն արիւնքն եւ նիւթական պաշտամունքն, այլ ըստ նոցին հեթանոսաբարոյ սովորութեանն, որ յիմանալին եւ ի հոգեւորն մարմնապէս հպէին, ոչ կարելով ըստ միտս կատարել զպաշտաւնն, այլ կերակրովք եւ պէսպէս լուացմամբք մարմնոյ:

Որպէս եւ գրեալ է ի գիրս մարգարէից (Է. 42):

Յոռ. Եւ ոչ ածէ զվկայութիւնն պարզաբար, այլ զի ոչ գոյր պէտք զոհիցն՝ ցուցանէ ասելով. «Միթե՞⁵ գո՞հս եւ պարարագս մաքուցէք ինձ գամս քառասուն յանապարին, փունդ Իսրայէլի» (Է. 42): Զի ոչ թէ փոխանակ զոհից եւ պատարագաց կերակրեցան նոքա մանանայիւն եւ լորամարգովն, ի վիմէ բղխմամբն ջրոյ եւ այլ պարգեւաւքն:

Եփր. Եւ զի յայտ արասցէ⁶, թէ ոչ այժմ եւեթ սկսաւ չարութիւնն նոցա, այլ անդէն ի սկզբան ընտրութեան նոցա: Զի ահա եւ կոտց երկրպագէին⁷, որում եւ համբերէր Աստուած, եւ զի թողին զպաշ-

¹ Բ քառասունս
² ԱԲ ունելով] առնելով
³ ԱԲ > կիրակոս
⁴ Ա ինքն յերկնաւոր
⁵ Բ զի թէ] միթե
⁶ Բ յօտարասցէ] յայտ արասցէ
⁷ Ա երկրպագանէին

տաւն զարմանալի ի խորանին Աստուծոյ, եւ ընտրեցին զվրանն Մողոքայ մեռելոտի կռոց: Սմին վասն մեռելոտի պատկերաւն, զոր պաշտեցին, նախատէ զանմտութիւն նոցա եւ զամբարշտութիւն: «Առեք, ասէ, զվրանն Մողոքայ» (Է. 42): Այս է պատճառ զոհիցն:

Եւ գաստղն աստուծոյն ձերոյ Նոեմփայ (Է. 43):

Հռեմփայն կռուք էին անուն¹ կնոջ միոյ բողի, եւ յորջորջումն պատկերին Աստղիկ, զոր Աստուած նոցա ասէ: Յանդիմանապէս զբառս անուանցն ի կիր առնու Հռեմփայ եւ Մողոքայ: Եւ ի վերայ ածէ. «Ջպարկերսն, զոր արարէք երկիր պագանել նոցա» (Է. 43), թերեւս զԱփրոզիտեայ եւ զԱրտեմեայ, զի ոչ ունիք ասել, թէ վասն զոհելոյ ինձ աշխատ եղէք ի ծախս զոհից, այլ նոցա զոհեցէք, եւ զայն ինչ արարէք մանաւանդ յանապատին, ուր պաշտպանեցի ձեզ: «Ջի վասն այսորիկ փոխեցից զձեզ յայն կողմն բարեւացուց» (Է. 43), այսինքն՝ գերի տաց զամս եւթանասուն²: Տեսանե՞ս, զի գերութիւնն նախատինք չարութեան նոցա է:

Այլ եւ խորանն³ վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին, որպէս հրաման ետ, որ խաւսէրն ընդ Մովսէսի առնել զայն ըստ արինակին, զոր ետես (Է. 44):

Վկայութեան էր, զի վկայ զԱստուած ունիցին զասաւղն «Մի՛ եղիցին քեզ, այլ աստուածք՝ բաց յինէն» (Մաղմ. Ջ 10): Կամ զի զԱստուծոյ վկայէր, զի բնակէր ընդ նոսա խորանաւն, այն որ ի լերինն անմարմնապէս տպաւորեաց զնմանութիւն նորա: Եւ դարձեալ. վկայէր սքանչելեացն եւ հրամանացն Աստուծոյ: Արդ՝ ասէ, թէ այս ամենայն էր, եւ նոքա ոչ ունէ/46ա/ին տաճար: Նա եւ խորանին գոլով՝ զոհք ոչ էին: «Միթէ գննիս եւ պարարագս⁴ մաքուցէք ինձ» (Է. 42) ասէ: Այլ տես, զի թէպէտ եւ էր ընդ նոսա խորանն վկայութեան, այլ ոչ ինչ աւգտէր նոցա, եւ ոչ որ նախ քան զայս նշանքն՝ եւ ոչ որ յետ այնորիկ լինէին, այլ ամենեքեան⁵ ջնջեալ տապաստ անկանէին ոսկերքն: «Եւ յանապատին, ասէ, զի տեղի ընդ տեղոյ բաղդատիցէ», այսինքն՝ ընդ տաճարին, զի ցուցցէ, թէ անդ է տեղի սուրբ՝ ուր Աստուած իցէ: Ապա յայտնէ, թէ նախ էր բարերարութիւնն քան զխորանն:

¹ ԱԲ յանուն

² ԱԲ իւթանասուն

³ Բ խորան

⁴ ԱԲ պատգամս] պատարագս

⁵ ԱԲ ամենեքին

Ջոր ընկալեալ բերէին հարքն մեր, փոխանորդելով գմիմեանս, հանդերձ Յեսուա ի կալուածս քանանացւոցն (հմմտ. Է. 45):

Թէպէտ եւ յԱստուծոյ եղեւ ստորագրութիւն¹ խորանին, ասէ, բայց եւ այնպէս յանապատին շրջաբերեալ լինէր եւ ոչ ի տեղւոջ դադարեալ. եւ ոչ էր տաճար, եւ սակայն քանանացիքն արտաքսելեալ լինէին: «Ջորս եւ մերժեաց, ասէ, Աստուած յերեսաց հարցն մերոց» (Է. 45): Այլ եւ ոչ յայնժամ գոյր տաճար եւ այնչափ սքանչելիք եղեն, եւ ոչ էր ուրեք տաճար: Որպէս զի ասիցէ, թէ առաջինն էր իբրեւ գտադաւար զիւրափոփոխ, զփոփոխումն ակրինացն տպաւորելով: «Մինչև յաւուրս Գաթի, ասէ, ոչ էր քաճար: Նա եգիպ շնորիս առաջի Աստուծոյ, եւ խնդրեաց գրանել գյարկս Աստուծոյ Յակորայ» (հմմտ. Է. 45-46): Հայցեաց գտանել շնորհս առաջի Աստուծոյ, եւ նա ոչ շինեաց, այլ ի բաց ընկեցեալն Սողոմոն. «Այսպէս ոչ մեծ ինչ է տաճարդ», ասէ:

Եւ զի կարծէին նոքա մեծ գոլ զՍողոմոն վասն շինելոյն գտաճարն, ցուցանէ, թէ չէր լաւագոյն քան զհայրն, եւ ոչ հաւասար եւս, որպէս յայտ է: «Նա եւ Սողոմոն շինեաց նմա քուն, այլ ոչ եթէ բարձրեալն ի ձեռագործ քաճարս բնակէ» (Է. 47-48): Եւ զի զայսոսիկ եցոյց նախ ասացելովքն, ցուցանէ եւ ի ձեռն Եսայեայ զնոյն ասացեալ:

Երկինք արթոռ իմ են եւ երկիր պարուանդան, ասէ (Է. 49):

Եւ ոչ թէ տուն բնակութեան իմոյ: Զի թէպէտ արարածք իւր են եւ գործք ձեռաց իւրոց, բայց ոչ այսուիկ արժանի Աստուծոյ, եւ եթէ սոքա ոչ, զի ա՞րդ ի ձեռաց մարդկան եղեալն: «Որպիսի՞ քուն շինիցէք ինձ, ասէ, կամ զի՞նչ քունի հանգստեան իմոյ՝ զի զայս ամենայն ձեռն իմ արար» (հմմտ. Է. 49-50): Այսպէս փոյթ եւ համարձակ Ստեփանոս զբանն կիր արկանէ, զի բազում էր համարձակութիւնն, հանդերձեալ նորա մեռանել, զոր եւ քաջ գիտէր իսկ:

Եփր. Վասն որոյ իբրեւ եցոյց զնոսա, զի զխորանն փառաց ընդ վրանն Սողոմոն փոխանակեցին, եւ գտաճարն պարծանաց իւրեանց անարգեաց բարձրեալն՝ զի զինքեանս արասցեն նմա տաճար երկիւղիւն Աստուծոյ: Այլ զի ծանեալ, թէ չեն ինչ ակգտելոց, այլ սպանանել խնդրեն զնա, զուարճացեալ հոգւովն՝ ի նոսա իսկ դարձոյց զբանն կշտամբելով զկարծրութիւն նոցա մարգարէիցն ձայնիւ եւ ոչ յիւրմէ. «Ո խստապարանոցք, ասէ, եւ անթլիպար սրբիւք²» (Է. 51),

¹ Բ սորա գրութիւն

² ԱԲ սրտիւ

որով էր Երեմիաս նախատէր զնոսա: Անարգեաց եւ սա զթլփատութիւն մարմնոյ եւ մեծարեաց զթլփատութիւն սրտի, զոր խնդրէ Աստուած, յորմէ նոքա ի բաց կացին: /46բ/ Սմին վասն ի մարգարէական կշտամբանսն եւ զիւրն եւս յաւելու:

Դուք հանապազ, ասէ, Նոգուոյն Սրբոյ հակառակ կայք որպէս եւ յայսմ ժամանակի (Է. 51):

Յոհ. Զի յորժամ ոչ կամէր զոհս գոլ, դուք զոհս արարէք, եւ վասն որոյ ոչ կամէր տալ ձեզ պատուէր, խնդրեցէք զնա, եւ իբրեւ առէք՝ պղերգացեալ հետեցէք նմա: Դարձեալ՝ մինչ կանգուն էր տաճարն՝ կուռս կանգնեցէք, եւ այժմ զի առանց տաճարին կամի զպաշտաւնն՝ դուք զտաճարն խնդրէք, մարգարէքն Հոգւովն խաւսէին եւ ոչ անսայիք, առաքեալքն նովաւ սքանչելիս գործեն, եւ դուք հակառակ յառնէք: Եւ ոչ ասաց, թէ ընդ Աստուծոյ հակառակիք, այլ ընդ Հոգւոյն, զի եւ ոչ մի գիտէ զանազանութիւն, այլ զՀաւրն Որդւոյ ասէ եւ զՈրդւոյն Հոգւոյ: Եւ հայրենի ցուցանէ զանհաւատութիւն նոցա. «Որպէս հարքն ձեր, ասէ, եւ դուք» (Է. 51):

Եւ զի մեծամեծս պարծէին ի նահապետսն, աւտարացուցանէ զնոսա յարդարոցն եւ մեծապէս խոցոտէ զսիրտս նոցա. որպէս Յովհաննէս ծնունդս ի թից ասաց զնոսա, եւ Քրիստոս՝ որդիս սատանայի, եւ սա սպանողաց: Զի «Ձո՞ ի մարգարիցն, ասէ, ոչ հալածեցին հարքն ձեր, եւ սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պարմեցին վասն զայստան արդարոյն» (Է. 52): Ո՛չ այժմ եւեթ ի Քրիստոսէ ապստամբք էք¹, ասէ, այլ եւ վաղ իսկ ի Հաւրէ նորա, որպէս գիրք ամբաստանեն. «Տէր գտնան քո կործանեցին, եւ զմարգարէսն քո կոտորեցին» (Նոնմ. ԺԱ. 3), որք յառաջագոյն խաւսեցան վասն զայստեանն Քրիստոսի, զոր տակաւին արդարոյն ասէ՝ կամելով ամփոփել զնոսա, եւ անհամեմատ զնէ զկատաղութիւն սոցա քան զհարցն. զի նոքա զմարգարէսն սպանին, եւ սոքա զԱստուածն մարգարէից:

Որոյ դուք այժմ, ասէ, մարմնիք եւ սպանաւոր եղերուք, ի ձեռս տալով Պիղատոսի եւ խաչելով զնա: Ոյք առէք զաւրէնս ի հրամանս հրեշտակաց եւ ո՛չ պահեցէք (Է. 52-53):

Ոմանք ասեն, թէ զայն, որ ի ձեռն հրեշտակաց միջնորդութեան կարգաւորեալ էր, զաւրէնսն ասէ, կամ զայն իսկ ընձեռեալ նմա ի

¹ Աբ ապստամբք] ապստամբք էք

ձեռն հրեշտակին՝ որ երեւեցաւ նմա ի մորենւոջն, զոր վերագոյն ասաց: Քանզի թէ մարդ ոք էր, որ հրամայէր, չէր ինչ մեծ ապախտ առնելն, ո՞չ ապաքէն ի վերուստ էր կարգաւորութիւնն, այնմ ասէ, «Եղէք հակառակ, որ զայնոսիկ արար ի ձեռն Մովսեսի եւ զայսոսիկ ինքեամբ, զորոյ զպատմաւդսն եւս սպանէք»: Յոյժ մանաւանդ զնոսա՝ Աստուծոյ, եւ հրեշտակաց իւրոց, եւ մարգարէիցն, եւ Հոգւոյն, եւ միածնին եւ ամենեցուն իսկ եցոյց լիեալս անհաւանս:

Եւ քանզի նոքա այսոքիւք¹ շատագովք լինէին աւրինացն, եւ ասէին², թէ ի Մովսէս վնասաբանէ³: Յուցանէ արդ՝ զի նոքա մանաւանդ էին հայհոյիչք եւ դիմադարձք Մովսէսի: Եւ զի ասէին, թէ եւ յԱստուած հայհոյութիւն խաւսի, ցուցանէ, թէ ինքեանք ի բնէ ի վերուստ զայն առնէին, եւ թէ զաւրէնսդիրն նոքա փոխեցին, եւ թէ աւրէնքն ոչ է փոյթ նոցա: Եւ զի ամբաստանելով ասէին՝ ընդ Մովսէսի հակառակել զնա, յայտ առնէ, զի ինքեանք ընդ Հոգւոյն միշտ հակառակէին, եւ այս ոչ պարզաբար, այլ հանդերձ /47ա/ սպանանելով զբնակարանս Հոգւոյն: Եւ թէ զոր Հոգին կանխաւ պատմեաց վասն գալստեանն Քրիստոսի, նոքա զնա ոչ միայն ոչ ընկալան՝ ի վերուստ ունելով ընդ նմա թշնամութիւն, այլ եւ զեկեալն ի փրկել զնոսա ոչ մատնեցին միայն, այլ եւ սպանին: Այսպիսի է համարձակութիւն առն զխաչն բարձողի:

ՅՈՐԴՈՐԱԿ

Նմանեցուք եւ մեք այնպիսի համարձակութեանն, զի թէ պատերազմի ժամ ոչ է, այլ համարձակութեան ժամ է⁴, խաւսեցուք զվկայութիւնս⁵ Աստուծոյ առաջի թագաւորաց, խցցուք զբերանս հեթանոսաց, այլ առանց սրտմտութեան, զի ոչ բնակէ Հոգին Սուրբ հեզութեան, ուր սրտմտութիւն է: Զի որպէս ի ծովային ձմերանի բազում է աղմուկն եւ ոչ ունի տեղի ոք իմաստասիրելոյ, նոյնպէս եւ ի սրտմտութենէ՝ ոչ ինչ յառաջեալ լինի ամբողջ. զի ոչ ինչ ընդհատ է բարկացեալն յարբեցելոց եւ ի դիւրահարաց անկարգութենէ: Եթէ կամիցիմք զհամարձակութիւն ցուցանել, մաքուրք լիցուք ի բարկութենէ: Տե՛ս զՍտեփանոս, ոչ ցասամբ զրուցատրելով, զի ոչ

¹ Ա այսոքիկ

² ԱԲ > եւ ասէին

³ ԱԲ վնասաբանեն

⁴ ԱԲ հանապազ ժամ է] ժամ է

⁵ ԱԲ զվկայութիւն

անարգէր զնոսա խստապարանոցս ասելովն, այլ զմարգարէութիւնն յիշեցուցանէր հեզաբար: Եւ զի ոչ էր սրտմտութիւն առ նմա, ի քարկոծիլն ի նոցունց ըղձայր ասելով. «Տէր, մի՛ համիր¹ սոցա գայս մեղս» (Է. 59): Զսոյն եւ մեր ուղղելով՝ հանդերձելոց բարեացն հասցուք ի փառս Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

[ԳԼՈՒԽ ԺԸ.]

Եւ լուեալ գայս գայրանային ի սիրքս իրեանց եւ կրճարէին զաբամունս իրեանց ի վերայ նորա (Է. 54):

Ահաւասիկ իբրեւ պատճառս իմն առեալ լինէին յասացելոցն սպանանել զնա, զի անիրաւք զոլով եւ չարք յամենայնի տարակուսին, որպէս վասն առաքելոցն ասէին զկծեալք՝ «Ձի՛նչ արասցուր արանցս այսոցիկ» (Գ. 16): Նոյնպէս եւ աստանաւր հերձուն ի բարկութենէն: Եւ թէպէտ նմա իսկ էր ի դէպ սրտմտիլ, որ յանիրաւի զրպարտիւրն, այլ նա ոչ ինչ այնպիսի կրէր, այլ մանաւանդ զրպարտաւղքն իբրեւ ի խիստ դիւէ մոլեգնեալք սատակեալք լինէին ընդ լուրն ճշմարտութեանն²: Զի ըստ որում ասէի, առնելն չար՝ նոյն է կրել չարաչար. զի եւ մեք, ուր ոչ ինչ իցեմք սխալեալք, եւ զրպարտեալք լիցուք³, մի՛ ախտասցուք տրտմտութեամբ կամ սրտմտութեամբ:

Արդ, քանզի կամէին զնա սպանանել, պատճառս իմն իրաւացիս խնդրէին առ ի ընուլ զկատաղութիւն⁴ իւրեանց: Եւ զի թէպէտ ճշմարիտ էր, զոր ինչ կշտամբեալ յանդիմանեաց զնոսա, այլ ոչ կամէին տալ կարծիս, թէ վասն առ նոսա կշտամբանացն սպանանեն զնա, այլ թէ վասն ամբարիշտ հայհոյութեանն: Զի⁵ յետ սպանանելոյն վնասել ախորժէին զկարծիս ամենեցուն ի նա իբր առ հայհոյիչ ոք, որովք եւ հերձեալք բարկութեամբ կրճտէին զատամունս եւ նախատինս առ նա արձակէին:

Եւ նա էր լի՛ Նոզով Սրբով, հայեցաւ յերկինս եւ երես զփառս Աստուծոյ, եւ զՅիսուս զի կայր ընդ աջմէ Աստուծոյ (Է. 55):

Յայտ է ահա, զի ի բոլոր Երրորդութեանն փառս վայելեն չարչարեալքն վասն Քրիստոսի: Ետես զՀայր՝ եւ զՅիսուս ընդ աջմէ նորա,

¹ ԱԲ համարիր] համիր

² Բ ճշմարտութեան

³ ԱԲ կամ անարգեալք լիցուք] լիցուք

⁴ ԱԲ զկատաղութիւնն

⁵ ԱԲ եւ զի

զի իւրոցն միայն երեւի Յիսուս, որպէս յետ յարութեանն առաքելոցն: Եւ զի ի մէջ կատ/47բ/աղի տիրասպանացն կայր նահատակն առանց աւգնականի, եւ զի կայր¹ ժամ պսակելոյ էր առաջին վկային, ետես զտէրն ունելով զպսակն, զի կայր թագադիր² ընդ աջմէ նորա յաղթել մահու, զի ցուցցէ, թէ նոյնպէս աւգնէ ի ծածուկ, որք վասն նորա ի մահ մատնին: Սմին վասն յայտնէ, զոր ետեսն զերկինս բացեալ, զայն որ յետ փակելոյն Ադամայ՝ նախ Քրիստոսի միայն բացաւ ի Յորդանան, իսկ յետ խաչին բացեալ լինի եւ խաչակցացն Քրիստոսի, եւ նախ սմա զոր³ եւ ասէ. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զորդի մարդոյ, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ» (Է. 55): Տեսանե՞ս, զի յայտնեաց զպատճառս⁴ լուսաւորութեան երեսաց նորա, զի հանդերձեալ էր զսքանչելին⁵ զայն տեսանել զտեսիլ, վասն այնորիկ եւ ի կերպարանս հրեշտակի փոխեցաւ, զի հաւատարիմ լիցի վկայութիւն նորա:

Եւ քանզի վերագոյն ճառեաց յաղագս մահուն Քրիստոսի, որում նոքա մատնիչք եւ սպասաւորք եղեն, այժմ եւ զյարութեանն յաւելու զբան, զի գոնէ պատկառեալ ի հրեշտակատիպ փառաց երեսաց նորա հրեայքն՝ ընկալցին զասացեալսն: Զոր դուք սոսկ մարդ կարծելով սպանէք, ասէ, ես կենդանի զնա յերկինս փառաւք՝ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ տեսանեմ: Եւ զի ծանր թուէր նոցա ընդ աջմէ Աստուծոյ զնա լսելն, զի այն ինչ եւ թէ յարեաւ ի մեռելոց՝ յայտնէր ահա, սմին վասն ընդ յարութեանն⁶ ոչ եւ զհամբառնալն եւեթ վկայէ, այլ եւ զհամապատիւ բնութիւնն ընդ Հաւր եւ զուզահաւասար զփառսն:

Եւ ոչ ասաց զՈրդի Աստուծոյ, այլ «զորդի մարդոյ», զի հաստատեսցէ ծանաւթ բանիւն, թէ նա է⁷, որ ասէրն, թէ «Տեսանիցեք զորդի մարդոյ ելեալ, ուր էր գառաքինն» (Յովհ. Զ. 63), որ եւ Աստուած գոլով վասն այնր էջ եւ⁸ եղեւ մարդ մնալով անմեղ, որպէս զի զաղխեալ դրունս երկնից ընդդէմ մեղուցելոյ նախահաւրն մկրտութեամբ եւ արեամբ վերստին բացեալ՝ ընդ իւր տարցի մուծցէ զպատրանաւք կոխեալն ի դիւաց եւ յանդիման կացուցցէ երեսացն Աստուծոյ եւ Հաւր: Առ

¹ ԱԲ > կայր

² ԱԲ թելադիր] թագադիր

³ ԱԲ որ

⁴ Ա զպատճառն

⁵ Բ սքանչելիսն

⁶ Բ յարութեան

⁷ ԱԲ էր

⁸ Բ > էջ եւ

որ¹ եւ փութայր սուրբն² հասանել առ Տէրն եւ Աստուած Քրիստոս, որ եւ վասն մեծ սիրոյն, որ առ նախնի վկայն իւր՝ յարեալ պսակել զքաջ նահատակն:

Եւ զի ընդ աջմէ աստուծոյ ասաց եւ ոչ ընդ աջմէ Հաւր, զի զմարմնոյն իրս կամէր հաստատել, յաղագս որոյ եւ որդի մարդոյ կոչէ զնա, եւ զի սքանչելի տեսիլն հաւատալոյ արժանի լիցի, եւ երեսքն փառաւորեալ լինէր, զի մարդասէր գոլով Աստուած զհարութիւնն նոցա ի նոցին յաւգուտ յեղաշրջեալ, այնչափ նշանաւք արծարծէր զնոսա ի հաւատս, յաղագս որոյ եւ սուրբն երկեցուցանել կամելով զնոսա. «Աղաղակեալ ի ձայն մեծ» (Է. 56): Բարձրագոչ ձայնիւ ի լսելիս նոցա հնչեցոյց, զոր ետեսն, զի ցածուսցէ զնոսա ի մոլեգնութենէն: Այլ նոքա զի³նչ. «Խցին զականջս իւրեանց» (Է. 56) իբրեւ զիժս: Իսկ ոմոնք եւ այսպէս ընթեռնուն. «Աղաղակեալ ի ձայն մեծ խցին զականջս իւրեանց»: Եւ զոր առ Քրիստոսիւ արարին, լսելով թէ «Տեսանիցք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զարութեանն» (Մտք. ԻԶ. 64), հայհոյութիւն զայն զրաբանելով մահապարտ զնա դատեցին, զնոյն եւ աստ առնեն: Աղաղակեց/48ա/ին, թէ հայհոյեաց՝ մահապարտ է: Եւ որպէս առ³ Քրիստոսիւ զհանդերձս պատառեցին, եւ աստ զականջս խցին, զի մի՛ լուիցեն, զոր ասացն:

Եւ դիմեցին առ հասարակ ի վերայ նորա (Է. 56),

վասն վկայելոյն զՔրիստոսէ, թէ յերկինս է ընդ աջմէ Աստուծոյ, զոր ոչ կամէին լսել: Վասն որոյ զցասումն⁴ եւ զոխան, զոր ընդ Քրիստոս ունելով ոչ կարացին լնուլ՝ հատուցին յՍտեփանոս: «Եւ հանեալ արքարոյ⁵ քաղաքին՝ քարկոծիին⁶» (Է. 57): Դարձեալ «արքարոյ քաղաքին», որպէս զՔրիստոս արտաքոյ այգւոյն. զի ձեռն, որ կապեցին գտէրն, զիա՞րդ խորշէին ի ծառայէն: Եւ էր տեսանել, զի տեղային ի վերայ նորա քարինքն որպէս տարափս անձրեւաց. զորոց ընդունէր երանելին զգարկուածսն ուրախութեամբ յաստուածակիր մարմին իւր՝ որպէս զծաղիկս անուշահոտ գարնայնոյ, եւ իբրեւ զցաւ հեշտալի ամարայնոյ: Եւ ի սաստիկ հարուածոց քարանցն խոցոտեալ

¹ Բ որս

² ԱԲ > սուրբն

³ ԱԲ > առ

⁴ ԱԲ զցասումնն

⁵ ԱԲ արտաքս

⁶ ԱԲ քարկոծեցին

սուրբ մարմնոյն, հեղոյր արիւն¹ արդարոյն փոխանակ արեանն Քրիստոսի, եւ մանրեալ ոսկերացն ջախջախիւր եւ գլուխն սուրբ աստուածեղէն գլխոյն Յիսուսի խոնարհելոյ ի վերայ խաչին:

Եւ վկայքն, գրպարտիչք, որպէս Նաբաւթայ արդարոյ, դնէին զձորցս² իւրեանց առ ոքս երիպասարդի միոց, որ կոչէր Սաուուղ (Է. 57):

Տե՛ս, թէ զիա՞րդ ստուգիւ պատմէ զիրսն Պաւղոսի ի սկզբանն, զի ցուցցէ քեզ մեծ յետ այնորիկ զաստուածայինն առ նա ներգործութիւն: Զի առ ժամայն վասն այնքան նշանացն ոչ միայն ինքն ոչ հաւատաց, այլ եւ ի ձեռս բազմաց սպանողաց ընկէց իսկ զնա:

Եփր. Եւ զի փոքր թուեցաւ յաչս նորա ընկենուլ ի նա քար, եղեւ նա կարասպահ սպանողաց նորա, զի ընդ ամենեցունց մասն բաժանեսցի: «Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս» (Է. 58): Ոչ վայրապար կրկնէ «գրարկոծ առնելն³», այլ զի ցուցցէ, թէ սուտ վկայքն նախ սկսան քարկոծել գտէրն, զի կարծիս տացեն իբրեւ թէ զհրամանս ակրինացն պահիցեն, թէ ձեռք վկայիցն նախ ընկեսցեն զքարինս⁴ ի հայհոյիչն, զայսպիսի⁵ կարծիս խորամանկելով⁶ նոցա հաստատել սուտ վկայիւքն ի վերայ սրբոյն, քարկոծ առնէին զՍտեփանոս: «Ար կարդայր եւ ասէր, Տէր Յիսուս, քնկալ զոգի իմ» (Է. 58):

Յոռ. Յուցանէր այսու, թէ ո՛չ լինէր կորուսեալ, այլ եւ յորդորէր զնոսա, թէ պարտ է հաւատալ ի Քրիստոս, զի նա է Տէր կենդանեաց եւ մեռելոց: Եւ ոչ այսչափ միայն հոգայր զփրկութիւն սպանչացն, այլ եւ մեծապէս եւս: «Զի եղ ծունր եւ աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր սոցա զայս մեղս» (Է. 59): Ո՛վ մեծի սիրոյն եւ գթութեանն, զոր ունէր առ նոսա, եւ որպէս պատասխանի տալով զայս յայտնէր⁷, թէ յառաջագոյն ասացեալքն ոչ էին⁸ ցասմամբ, եւ այնպէս կամէր զնոսա առ ինքն դարձուցանել, եւ ի բաց թողուլ զբարկութիւնն, եւ գոնէ յետ սպանմանն⁹ զնա՝ ողջանալ յախտէն: Եւ զի դիւրընկալ առ-

¹ Աբ արիւնն

² Աբ զձորձս

³ Բ առնել

⁴ Բ քարինս

⁵ Բ զի այսպիսի] զայսպիսի

⁶ Աբ խորամանկելով

⁷ Բ առնէր] յայտնէր

⁸ Ա > էին

⁹ Ա սպաննն

նիցէ զխրատն, ոչ պարզաբար աղաւթէր, այլ մեծաւ զգուշութեամբ ծունր կրկնէր, եւ զայն ինչ ասէր, զոր ուսաւ ի Տեառնէ իւրմէ՝ զոր ասաց ի ժամ խաչին. «Մի՛ համարիր սոցա զայս մեղս» (Է. 59):

Եւ զայս իբրեւ ասաց, /48բ/ ննջեաց (Է. 59):

Տեսանե՞ս, զի աստուածահաճոյ էր մահ նորա: Զի մինչեւ ցայն վայր թողացոյց լինել ոգւոյն ի նմա, մինչեւ աղաւթիւք փոխադրեաց զսպանաւղսն: «Եւ Սաւղոս էր կամակից սպանման նորա» (Է. 59): Զի դահիճ խիստ եւ դժնդակ¹ էր նա ի տղայութեանն, յանդուգն² եւ զայլ յափշտակաւ, այլ ի լինելն աղաւթիւք սրբոյն այր եւ ձեր հաւատովք՝ մի անգամ քարկոծ լինելով վճարէր³ զպարտս քարանցն, որովք հազորդ եղեւ սպանողաց⁴ նորա:



¹ Բ դժընդակ

² ԱԲ յանդուքն

³ ԱԲ վճարէ

⁴ ԱԲ սպանողաց

Եւ եղև յաւուրն¹ յայնմիկ հալածումն մեծ ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ (Ը. 1):

Քանզի կատաղիք² գոլով ոչ շատացան սպանմամբն Ստեփանոսի, այլ մեծամեծս իմն փքացեալք իբրեւ զյաղթաւզս³, ձեռնարկեն լրբութեամբ զբոլոր հաւատացեալսն խափանել՝ հալածելով:

Եփր. Եւ նման է, թէ յայնմ աւուր առին զինչս նոցա յաւարի, զորս գովէ⁴ Առաքեալ, թէ «Չհափշտակութիւն ընչից ձերոց ընկալայք ուրախութեամբ» (Եփր. Ժ. 34): «Եւ ամենեքեան ցրուեցան ի զեղս Նրեսսրանի⁵ եւ ի⁶ Սամարեայ բաց յառաքելոցն» (Ը. 1): Յայտ է, զի յերեսաց հալածչացն բացազնացք լինէին:

Այլ տես, թէ զիա՞րդ փախուստ⁷ նոցա տնաւրիներէ լինէր յայլոց փրկութիւն, զի մի՛ այնուհետեւ ամենեքեան յԵրուսաղէմ միայն նստցին, այլ եւ ի հեռաւորս տարածեսցի բանն: Վասն որոյ եւ առանց խղճի ինչ համարձակ խառնին ընդ սամարացիսն այնոքիկ՝ որք երբեմն լուան ի Քրիստոսէ խորշել ի հեթանոսաց: Իսկ առաքեալքն, զի եւ այնպէս⁸ առ իւրեանս կամէին ձգել զհրեայսն, ոչ ի՞⁹ բաց թողուին զքաղաքն, այլ եւ յայլոց քաղաքաց տային պատճառս վստահութեան¹⁰ քարոզել զբանն կենաց: Այլ հայեաց, թէ որպէս դարձեալ թոյլ տայր Աստուած լինելոյ փորձութեանն, եւ միտ առ, թէ որպէս զիրսն տնաւրինէ ասդուստ¹¹ ի վերուստ: Աքանչեւ լիք եւ պայծառք եղեն ի ձեռն նշանացն, ապա ի տանջանս մտեալ՝ այլ ինչ ոչ կրեցին: Կացուցին պաշտպանս տեսչութեան այրեացն, աճեաց բանն հաւատոյ: Դարձեալ ներէ, զի լինիցի արգել մեծ եւ հալածումն ոչ զինչ եւ իցէ, այլ սաստիկ, զի ամենեքեան երկուցեալք եղեն, որով ցուցանին մարդիկ գոլ երկուցեալքն եւ փախու-

¹ ԱԲ յաւուր

² ԱԲ կատաղի

³ ԱԲ գյաղօթօղս] գյաղթաւզս

⁴ ԱԲ գովի

⁵ Բ հրէաստանի

⁶ ԱԲ > ի

⁷ ԱԲ փախուստն

⁸ ԱԲ այսպէս

⁹ Բ > ի

¹⁰ Բ վստահութեանն

¹¹ ԱԲ անդուստ

ցեալք, զի մի՛ յետ¹ այնորիկ ասիցես շնորհաւք միայն առնել նոցա զուղղութիւնն. զի ահա հալածեալք եւ զանգիտեալք եղեն, եւ հալածիչքն յանդգունք²:

Եւ բարձին զՍփեփանոս արք երկիւղածք, եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա (Ը. 2):

Ո՞ք արդեւք էին սոքա: Աւրէնսուսոյցն Գամաղիէլ³, եւ եղբաւրորդին իւր Նիկողիմոս, որ եւ թաղմանն Տեառն սպասաւորեաց: Եւ զի երկիւղածք էին, ընդէ՞ր առնէին զկոծն, զի ոչ աշխարելի՛ այլ խնդալի է⁴ այրն: Զի չեւ եւս կատարեալք գոլով՝ տակաւին զհրեական սովորութեամբքն գային. նա եւ այս իսկ ցուցանէր զնոսա մարդիկ գոլ, ոչ միայն երկիւղն, այլ եւ տրտմութիւնն եւ կոծն: Բայց եւ ո՞վ⁵ ոք թերեւս ոչ լայր՝ տեսանելով զհանդարտ եւ սքանչելագործ վկայն, որպէս զգառն անմեղ քարկոծեալ եւ եղեալ մեռեալ: Այլ բաւական գերեզման/49ա/ական խաւսեցաւ աւետարանիչն, զձայնն, զոր ասաց ի ժամ քարկոծմանն. «Տէր, մի՛ համարիր սոցա զայս մեղս» (Ը. 59), եւ թէ, «Արարին կոծ մեծ ի վերայ նորա» (Ը. 2):

Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. ի փունս փունս մտանէր, քարշէր⁶ զարս եւ զկանայս՝ մափնէր ի բանս (Ը. 3):

Եփր. Քանգի այսմ հալածանս, որ եղեւ ցրուել եւ վատնել⁷ աշակերտացն յերուսաղէմէ, թուեցաւ քահանայիցն, դատաւորացն եւ Շաւուղի, թէ ահա խափանեցաւ աւետարանութիւնն անդէն ի սկզբանն, եւ վասն այսորիկ շրջէր Շաւուղ տանէ ի տուն. քննել եւ տեսանել, թերեւս գտցէ զոք տակաւին:

Յոհ. Եւ տես, զի բազում եւ անչափ էր մոլորութիւն նորա, զի եւ միայն գոլով ի տունսն մտանէր, զի զանձն իսկ եղեալ էր վասն աւրինացն: «Քարշէր, ասէ, զարս եւ զկանայս» (Ը. 3): Տե՛ս զհամարձակութիւնն եւ զամբարտաւան մոլորութիւնն, զի զանկեալսն ի բուռն բազում խոշտանգանաւք չարչարէր, զի ի սպանմանէն⁸ Ստեփանո-

¹ Բ դու յետ

² Ա յանդրգունք

³ Ա գամաղիէլ

⁴ Բ է] էր

⁵ ԱԲ ո՞] ով

⁶ ԱԲ քարեալ] քարշէլ

⁷ Բ մատնել] վատնել

⁸ Ա ի սպանմանն

սի յանդգնագոյն¹ եղեւ: «Եւ սփռեալքն շրջիւն աւերարանէին գրանն» (Ը. 4): Արդ, այժմ քանզի յոյժ եղեւ հալածումն քան զառաջինն, զի այժմ² թէպէտ ըմբռնեալ եղեն, այլ ազատեաց³ զնոսա նշանքն, բայց մահն Ստեփանոսի ոչ շիջոյց զցասումն նոցա, այլ ջերմացոյց: Զի ահա եկեղեցին, որ նախ քան զմահ նորա աւելի քան զուրթ հազար մարդ էր ի նմա, երկոտասան այր միայն մնացին անդ: Այլ թէպէտ հալածիչքն ցրուելով եկեղեցւոյն կարծէին, թէ ամենեւին բնաջինջ սպառի ուսումն ճշմարտութեանն, այն իսկ ցրուեաց զվարդապետան, որք յերուսաղէմն խափանեալ կային, զի հանին տարածեցին զնոսա հալածիչքն ընդ գաւառս, զի աշակերտութիւնն բազմացի ընդ ամենայն աշխարհ, որ եւ էր այն ուրախութիւն մեծ առ նոսա: Տեսանե՞ս որչափ իրս տնաւրինի ի ձեռն մահուանն Ստեփանոսի, զի թէպէտ մեծ եղեւ սուգն յառաջագոյն, այլ ի բաց ջնջեցաւ դարձեալ⁴ ուրախութեամբն, զի բացաւ դուռն հաւատոց ամենեցուն: «Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն սամարացոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս» (Ը. 5): Ինձ թուի սա յեւթանցն գոլ, որ էր ընդ Ստեփանոսի: Եւ տես, զի ոչ ինքեան յառաջելով եղեւ գալ ի Սամարիա, այլ հալածեալ ի հրէիցն լինելով, որպէս եւ յաւուրսն Քրիստոսի եղեւ: Այլ դու ինձ ընդ այն զարմացիր, զի եւ ի ժամանակի վշտացն ոչ պղերգանան ի քարոզելոյն, այլ փութացեալ լինին:

Եփր. Արդ, էջ անդր Փիլիպպոս, եւ ի զաւրութիւն նշանաց իւրոց⁵ ելից զաշխարհն շամրտացւոց յաշակերտութենէ անտի իւրմէ այնքան, զի եւ Շմաւոն մոգ, այն որ կախարդանաւքն իւրովք զարմացուցանէր զշամրտացիս, յանձին կալաւ իջանել ընդ շամարտացիսն ի մկրտութիւն աւագանին, զոր եւ ըստ կարգի պատմէ աւետարանիչս:

Ունկն դէին, ասէ, ժողովուրդն⁶ բանիցն Փիլիպպոսի միարան (Ը. 6):

Յոռ. Տե՛ս աստանաւր ի սկզբանս զդիւրահաւան եւ զիմաստասէր բարս հեթանոսաց: Եւ այս իսկ է սքանչելի. զի ոչ ոմանք յատուկ,

¹ Ա յանդրգնագոյն
² ԱԲ յայնժամ] այժմ
³ ԱԲ ազատեալ
⁴ Բ > դարձեալ
⁵ Բ > իւրոց
⁶ ԱԲ ժողովուրդք

այլ միաբան ունեն ղնէին: Վկայի վասն նոցա եւ յաւետարանի անդհաւ[49ր]ատալ բազմաց ի Քրիստոս վասն բանի¹ նորա: «Եւ ի լսել նոցա եւ ի րեսանել գնշանսն, գորս առնէր» (Ը. 6): *Ձի գկնի քարոզելոյն բանիւ, սքանչելի նշանաւք եւ բարեգործական բժշկութեամբք հաստատէր ի հաւատս զլսաւղս բանին: «Քանզի բազումք, որ ունէին այսս պիղծս, գոչէին ձայնի մեծաւ եւ ելանէին»* (Ը. 7): *Ձի աղաղակաւ ելանելն՝ էր յայտնի նշան, որ ցուցանէր զմեծ զաւրութիւն² շնորհացն Աստուծոյ ի ձեռն Փիլիպպոսի: Ձի ոչ որպէս կախարդքն Եգիպտոսի առնէին առ աչաւք, կամ որպէս եւ ինքն իսկ Սիմոն, որ կարծիս իմն տայր մոգութեամբն, թէ բժշկիցէ, զի նա թերեւս կապէր զդեւան մոգելովն³ մնալ ի նոսին, որ ոչ աղաղակէին եւ ոչ ելանէին, եւ յայտ անտի է, զի բազում էին, ասէ, զիւրաւարք անդանաւր⁴: «Եւ բազում⁵ անդամալոյծք եւ կաղք, որք բժշկէին, ասէ, գաւրութեամբն Աստուծոյ ի ձեռն Փիլիպպոսի»* (հմմտ. Ը. 8): *Եւ աստանաւր խաբէութիւն ոչ էր, զի զնալ կաղացն եւ գործել անդամալուծիցն, ի բաց բառնայր զայնպիսի կարծիս, որոց եւ ճշմարիտ բժշկութեամբն եղեւ ուրախութիւն մեծի ի քաղաքին:*

Այր ոմն Սիմոն անուն յառաջագոյն էր ի քաղաքին, եւ մոգելով ափշեցուցանէր զազգն սամարացոց, եւ ասէր զանձնէ իւրմէ, թէ իցէ մեծ ոմն (Ը. 9):

Ահա եւ այլ ինչ փորձութիւն՝ անդէն սկսեալ կախարդութիւնն⁶ Սիմոնի: Եւ տե՛ս, զի որպէս առ Մովսէսիւ՝ բաղդատութեամբ, եւ իբր հակընդդէմ միմեանց լինէին սքանչելագործութիւնքն, նոյնպէս եւ աստ յայտնի նշանք յառաքելոցն եւ զանազան բժշկութիւնք ճշմարտապէս եղեալք, եւ առ աչաւք խաբէութիւն ընդդէմ նոցունց կերպարանաւք կախարդութեամբ մոգեալ: Եւ զի մանաւանդ ոչ եւ միոյ զիւրաւարի պարտ էր լինել անդ, եթէ մոգութիւնքն Սիմոնի, որ ի կարծիս բժշկութեան լինէին, չէին սուտ:

Յոր հայէին, ասէ, ամենեքեան ի փոքրկանց մինչեւ ցմեծամեծս վասն բազում ժամանակաւք ապշեցուցանելոյն զնոսա, եւ ասէին. **Սա է գաւրութիւն Աստուծոյ, որ կոչի մեծ** (Ը. 10):

¹ Բ բան

² ԱԲ գօրութիւնն

³ Բ մոլեգնելովն] մոգելովն

⁴ Բ անտանօր

⁵ ԱԲ բազումք

⁶ Բ կախարդութիւն

Զայս ասելով զմոգեկան¹ չարարուեստութիւն նորա կամի նշանակել, եւ զկոչմունս առ ի նոցունց համբաւելոց՝ բարեգործաց զիւլաց ոմանց, որք ի յուռթել պիղծ կախարդացն կցորդեալ բարեգործել ձեւանային՝ սուտ երեւութիւք խաբելով զպարզամիտսն. մինչ զի ասել «Սա է գաւրութիւն Աստուծոյ, որ կոչի մեծ» (Ը. 10): Եւ լցեալ լինէր ասացեալն ի Քրիստոսէ, թէ «Եկեսցեն սուր² քրիստոսք եւ փացն նշանս մեծամեծս եւ գրագումս մոլորեցուցն» (Մարթ. ԻԳ. 24):

Իսկ Փիլիպպոս միայն բանիւ զնոսս յանուն Յիսուսի բժշկէր եւ հաւանեցուցանէր, ըստ որում ասէ. «Բայց յորժամ հաւաքացին Փիլիպպոսի, որ աւերարանէր վասն արքայութեանն Աստուծոյ եւ անուանն Յիսուսի, մկրտին ամենեքեան» (Ը. 12): Թուի ինձ «աւերարանէր» ասելովն՝ հաստատել, զոր վերագոյն ասացի, բանիւ միայն զնոսս բժշկել եւ ոչ ձեռս զնելով, զի առ ժամայն լուծցէ զկարծիս այնպիսի ինչ մոգական արուեստից եւ բժշկանաց: Ընդ որ եւ առ/50ա/աւել սքանչացեալք ի բանիւ միայն եղեալ սքանչելեացն մկրտէին ամենեքեան: Ապա թէ ասիցէ ոք, թէ եւ յետ այնորիկ ընդէր առանց կասկածի ձեռս զնելով տային զՀոգին նոցունց իսկ սամարացւոցն, զորս եւ ի կարծեաց մոգութեան ազատել իսկ կամէին: Ասեմ, թէ վասն զի յայնժամ մկրտեալք եւ հաստատեալք էին ի հաւատան: Եւ այլազգ. զի զՀոգին նշանաց առեալք, ինքեանք իսկ սքանչելագործելով յասպիսի կարծիս ոչ գային:

Այլ եւ ինքն իսկ Սիմոն հաւաքաց եւ մկրտեալ կանխէր³ առ Փիլիպպոս (Ը. 13):

Մկրտէր Սիմոն ոչ վասն հաւատոց, այլ զկեղծաւորութիւնն թաքուցանելով⁴: Ապա ընդէ⁵՞ր ասէ, թէ «հաւաքաց»: Զվերին կերպարանսն ասէ, զի իբրեւ զհաւատացեալ մատեալ, որպէս եւ վասն վհկին ասէ զիր, թէ «եհան Սամուէլ⁵», զոր ոչ եհան, այլ զգեւ զոմն ի կերպարանս նորա: Եւ ընդէ⁵՞ր ապա մկրտէր զնա Փիլիպպոս: Որպէս եւ զՅուդա յայնժամ ընտրեաց Քրիստոս, եւ զի մի՛ դարձեալ հալածիցի որպէս երբեմն ի Քրիստոսէ, զի կասկածէր, ժուժկալեալ կանխէր առ Փիլիպպոս դեգերելով առ նմա: «Եւ փեսեալ զմեծամեծ նշանս, զոր

¹ ԱԲ զմոգական

² Ա սուտք

³ Ա կանկնէր] կանխէր, Բ կանգնէր

⁴ ԱԲ թագուցանելով

⁵ Ա Սամուէլ

առնէր, զարմանայր» (Ը. 13): Այսպիսի ինչ եւ վասն կախարդացն ասի, որք յաղթահարեալք ասէին, թէ «Մարն Աստուծոյ է այս» (Երբ Ը. 19): Այլ ոչ համարձակէր¹ առժամայն հայցել² զայն, ինչ զոր հայցեաց յետոյ, զի եւ ոչ այլքն դեռ եւս ընկալեալ էին շնորհս նշանաց:

Իսկ իբրև լուան, որ յերուսաղէմ առաքեալքն՝ թէ եւ Սամարիա ընկալաւ զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊեպրոս եւ զՆովիաննէս, որք իջեալ կացին յաղաւթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն Տոբի Սուրբ, զի ցայնժամ³ չեւ եւս էր եւ ոչ ի վերայ միոյ ուրուք ի նոցանէ հասեալ, այլ միայն մկրտեալք էին յանուն Տեառն (Ը. 14-16):

Արդ, զի ի ձեռն Փիլիպպոսի ընկալան նոքա զբանն Աստուծոյ եւ մկրտեցան, ահա յայտ է, եւ զի նշանք մեծամեծք եղեն ի ձեռն նորա, ապա զիս⁴ րդ ոչ էին ընկալեալ Հոգի Սուրբ:

Եփր. Այո, ընկալեալ էին Հոգի Սուրբ, այլ զմեղացն թողութիւն եւ ոչ զնշանացն զաւրութիւն⁵: Զի Փիլիպպոս թէպէտ եւ զաւրութիւնս առնէր եւ զմկրտութիւն հոգւովն ի քաւութիւն մողաց մկրտէր, այլ զՀոգին՝ առնել զաւրութիւնս՝ չիշխէր տալ:

Յոհ. Կամ վասն պատուելոյ զառաքեալսն, կամ վասն ոչ ունելոյ այնպիսի շնորհս, կամ զի յեւթանացն⁶ էր, զոր եւ մանաւանդ թուի ինձ ասել, իսկ ներքինւոյն Փիլիպպոսն՝ յառաքելոցն: Եւ տես, զի առաքեալքն ոչ եղեն նախ ելեալ յերուսաղէմէ, այլ այսպէս տնաւրինեցաւ, զի նախ սոքա ելին⁷, ի քարոզել, ի մկրտել, ի բժշկել, եւ առաքեալքն յետոյ եկեսցեն վասն տուչութեան Հոգւոյն Սրբոյ՝ որ կատարուամն էր պարգեւացն: Զի նոքա եւթանքն⁸ նշանս առնելոյ զաւրութիւն⁹ ընկալան, բայց ոչ եւ այլոց զնոյն Հոգի պարգեւել, քանզի այս իսկ էր առաքելոցն վեհագոյն առաւելութիւն⁹:

Եփր. Եւ վասն այսորիկ¹⁰ առաքեցին զՊետրոս եւ զՅովհաննէս, զի ձեռնադրութեամբ նոցա ընկալցին շամրտացիք զՀո/50բ/զին նշա-

¹ Բ համարձակեր

² Աբ հայցեալ

³ Աբ յայնժամ

⁴ Աբ գորութեան

⁵ Բ եւթանցն

⁶ Աբ ելցեն

⁷ Բ իւթանքն

⁸ Աբ գորութիւնս

⁹ Աբ առաւելութիւնս

¹⁰ Աբ այնորիկ

նաց եւ զարմացուցեն զմանկունս Երուսաղէմի գործովք Հոգւոյն, զոր ինչ առնէին շամրտացիքն: «Յայնժամ եղին ձեռս ի վերայ նոցա, եւ առնուին զՆոգի¹ Սուրբ» (Ը. 17):

Յոհ.² Յայտ է, զի աղաւթս առնելով որպէս ասաց՝ «դնէին ձեռս»: Զի ոչ պարզաբար տուեալ լինէր Հոգին Սուրբ, կամ կարէին տալ՝ այլ բազում խնդրուածոց պէտք էին, զի ոչ է հաւասար հանդիպիլն³ բժշկութեան եւ առնուլն զաւրութիւն բժշկութեանց:

Տեսեալ Սիմոնի, զի ձեռս դնելով առաքելոցն փուեալ լինէր Նոգի Սուրբ, մաքոյց նոցա ինչս եւ ասէ. փութ եւ ինձ զիշխանութիւնդ զայդ, զի յոյր վերայ դնիցեմ զձեռս, արցէ Նոգի Սուրբ (Ը. 18-19):

«Տեսեալ, ասէ, Սիմոնի»: Այլ թերեւս ոչ տեսանէր, եթէ ոչ նշանք ինչ յայտնիք լիեալ էին ի շամրտացւոցն: Այլ⁴ տես, զի եղեն նոքա արժանի յանկարծակի առնել զգաւրութիւնս եւ նշանս ի ձեռն Հոգւոյն, զոր ընկալան ձեռնադրութեամբն պետրոսեանց, բայց ինքն ոչ գտաւ արժանի, այլ յանդիմանեցաւ ի նմանէ, որպէս այնոքիկ ի Պաւղոսէ, որք ի լեզուս խաւսելոյ հպարտացեալք էին՝ կշտամբեցան փոքու ժամանեալք շնորհի, եւ են խժդժագոյնք առանց թարգմանելոյ: Այսպէս եւ Սիմոն, որոյ պարտ էր հաւատով մատչել եւ հայցել, զի ընդ այլսն եւ ինքն առցէ Հոգի Սուրբ, այլ ոչ ինչ փոյթ էր նմա վասն այնորիկ, այլ խնդրէր, զի զՀոգին զաւրութեան այլոց բաշխեսցէ: Եւ վասն զի այլքն ոչ էին առեալ, զի եւ այլոց տացեն, այլ ոչ կամէր նա ի թիւ եւ ի համար այլոցն անկանել կամ ընդ բազումսն միաբանել, այլ մանաւանդ եւ քան զՓիլիպպոս կամէր լինել պայծառագոյն, զորոյ տեսանելով զնշանսն, զոր առնէր, կարծէր զիրսն արուեստ գոլ, այլ իբրեւ ետես զմեծագոյն իշխանութիւնն յառաքեալսն, հիացեալ եկն առ նոսա: «Մաքոյց առաջի նոցա արծաթ» (հմմտ. Ը. 18): Ընդէ՞ր. միթէ զշամրտացիսն ետե՞ս զայն ինչ արարեալ, կամ զՓիլիպպոս առնելով այնպիսի ինչ: Եւ ոչ երբեք: Եւ միթէ կարծէ՞ր ո՞չ գիտել նոցա, թէ որպիսի մտաւք զարծաթն մատուցանէ⁵, կամ թէ ոչ իմանայր, թէ նոքա որպիսի միտս ունէին, մանաւանդ զի ոչ ետես զնոսա ընչիւք տուեալ ումեք զՀոգին:

¹ Բ զհոգի

² ԱԲ > յոհ.

³ ԱԲ հանդիպելն

⁴ ԱԲ այլ եւ

⁵ ԱԲ մատուցանէր

Այլ տե՛ս զպղծութիւն կախարդութեանն նորա, զի ոչ էր իրքն անգիտութեան, այլ փորձողի եւ կամեցողի զնոսա ընդ չարութեամբ արկանել: Վասն որոյ ասէ ցնա Պետրոս. «Արժաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ» (Ը. 20). զի ոչ որպէս պատշաճ է վարիս դովաւ: Ոչ են բանքս անիծողի, այլ կամ խրատողի՝ իբրու ասել՝ ի բաց կորուսչիր զայդպիսի չար կամսդ հանդերձ արծաթովդ, կամ մարգարէութեամբ զհանդերձելոցն նմա գուշակողի, զի երկիրցէ: «Զի գպարգևսն Աստուծոյ համարեցար ընչիս սրանալ» (Ը. 20): Փոքր խորհելով այդպէս յաղագս ձրիցն Աստուծոյ: Տե՛ս զնոսա յամենայնի մաքուրս յընչից, զի եւ մեք ուսցուք¹, թէ չկարեմք ընչիւք աշխարհի ստանալ զպարգեւսն Աստուծոյ: Եւ բարևոք պարգեւ կոչէ, զի ոչ արծաթով բաշխի: Եւ զի բն/51ա/աւ իսկ, ասէ, ահն կալար մարդկային գոլ զիրս զայս՝ որ ոչ է այնպիսի, սմին վասն՝ զքեզ հանդերձ, որովք իբրեւ զքեզ արծաթով ընտրիլ բռնագբաւսեն, խոտեալ ի բաց վարէ Հոգին Սուրբ ասելով. «Ոչ գոյ քեզ մասն եւ վիճակ ի բանիդ յայդմիկ» (Ը. 21): Այլ տես, զի որ յաղագս մեծամեծացն փոքր խորհի, կրկին մեղանչէ ի մեծամեծսն՝ եւ յաստուածայինսն ամբարշտելով եւ զանձն վնասելով որպէս Սիմոն մոգ. զի թէ պարզամտութեամբ էր մատչելն նորա, թերեւս ընդունէին² զյաւժարութիւն³ նորա: Այլ զի՞նչ. «Սիրս քո, ասէ, ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ» (Ը. 21): Տեսանե՞ս, զի ի չարութենէ զամենայն ինչ գործէր, եւ մանաւանդ զի պարտ էր առ նոսա յստակ եւ պարզամիտ գոլ, այլ զի կրկին էր չարն, երկուս իրս հրամայէ նմա:

Ապաշաւեա դու, ասէ, ի չար խորհրդոց քոց յայդցանէ⁴, եւ աղաչեա զպէր՝ թերևս թողութիւն լիցի քեզ ի մեղմնիս խորհրդոց սրբի քո (Ը. 22):

Տե՛ս, զի չարիս ինչ մտածէր. սմին վասն, զոր ինչ ի մտածութիւն նորա էր, զայն ի մէջ բերէ, զոր նա զանխլանալ կարծէր⁵: Զի զնոյն եւ Քրիստոս առնէր նմա, յորժամ մատչէր առ նա յաշակերտութիւն իբրեւ զմի ի դպրաց: Եւ զի գիտէր Պետրոս զնա առանց ուղղութեան՝ ասէր. «Թերևս թողութիւն լիցի քեզ ի ննգաւոր խորհրդոց սրբիդ եւ ի դասն կապանաց արժաթ սիրութեանդ, յորում կապեալ կաշկանդեալ կաս դու»

¹ ԱԲ ուսուցուք

² ԱԲ ընդունէի

³ ԱԲ գյօժարութիւնսն

⁴ Ա յայտցանէ

⁵ Բ կարծեր

(հմմտ. Ը. 22): «Թերևս, *աս է, թողութիւն լիցի քեզ*» (Ը. 22): *Զայս ասաց՝ ոչ թէ զի ոչ լինէր նմա թողութիւն, թէ ապաշխարէր արտասուլաք, այլ զի երկիւղ արկցէ նմա, որպէս Դանիէլ ասէր ցՆաբուքոդոնոսոր. «Զմեղս քո ողորմութեամբ քաւեսօր, թերևս երկայնամիտ լիցի ի վերայ յանցանաց քոց¹»* (Դան. Դ. 24): *Քանզի է իսկ այս սովորութիւն մարգարէիցն, իբրեւ թէ հրաժարել եւ լքանել իմն, եւ ոչ ասել հաւաստի, թէ զայս ինչ արասցես՝ «թողութիւն լիցի քեզ»:* Եւ զայս առնեն, է երբեք՝ զի առ անհաւատսն, զի մի՛ առանց պատճառի թուիցի պատուհասն, որ առ նոսա լիցի, որպէս այն, թէ «Զի մի՛ դարձցին եւ թողցի նոցա» (Մրկ. Դ. 12): Եւ է դարձեալ իբրեւ յահ ըմբռնելով, զի երկուցեալն ինքնին խնդրեսցէ հնարս փրկութեան, որպէս այն, թէ «Երնք աւուրք եւ Նինուէ կործանեսցի» (Յովհ. Գ. 4), նոյնպէս եւ սմա արկանէ երկիւղ:

Զի ի դատնութիւն մաղծի եւ ի կնճիոն անիրաւութեան² րեսաննմ գրեզ (Ը. 23):

Բազում ցասամբ լի է յանդիմանութիւնս. զազգի ազգի եւ զպէսպէս կախարդութիւնս չարեացն, յորոց միջի վարակեալ կայր, այսու ապացուցիւք խայտառակելով: Ապա այսպիսի դժնդակ³ գոլով նորա, ընդէ՞ր ոչ սպան զնա որպէս զԱնանիա եւ զՍափիրա: Ասեմ, զի որպէս ի հնումն, որ զփայտն քաղէր՝ սպանաւ առ յայլոցն ողջախոհութիւն՝ եւ այլ ոչ եւ ոք կրեաց զնոյն, նմանապէս եւ այժմ: Եւ այլազգ. ոչ սպան եւ կամ տանջեաց զնա, զի մի՛ հաւատն ի հարկէ լինիցի, այլ խստագոյնս յանդիմանեաց, զի մի՛ իրքն փոքր կամ առանց խղճի գոլ թուիցի: Դարձեալ. զի տեղի կամէր տալ նմա ապա/51բ/չխարելոյ: Եւ ահա շատ բաւական է առ ի խրատ ուղղութեան յանդիմանելն եւ ասել, զոր ինչ ի սիրտն մթերեալ չար խորհուրդք իցեն:

Մեծ էր եւ խոստովանելն ինքնին, թէ ընդ պատժովք ըմբռնեալ եղեւ, եւ մեղադիր լինելն անձին իւրում, քանզի ասաց մոզն. «Աղա՛սնցք դուք վասն իմ գլուխ, զի մի՛ ինչ եկեսցէ ի վերայ իմ, յորոց դուք⁴ ասացք» (Ը. 24): Այս բանք խոստովանողի են զսխալանսն, եւ զայս առ ի մաքրումն իւր ասէր իբր թէ զղացեալ, այլ պարտ էր ի խորոց սրտէ լալ եւ ողբալ թերեւս քաւեսցի: Բայց տե՛ս զնա պիղծ գոլով ամենայ-

¹ ԱԲ քոց Աստուած

² Բ անիրաւութեան, աստ

³ ԱԲ դժընդակ

⁴ ԱԲ դուք

նիւ Հանդերձ մոգութեամբն, եւ ի տոռունս չարեաց կապեալ անլոյծ Հանգուցիւք: Զի յորժամ յանդիմանեցաւ, հաւատաց, եւ յորժամ դարձեալ յանդիմանեցաւ, խոնարհեցաւ՝ կարծելով հնար գոլ գանխլանալ: Այլ զարհուրեալ ի բազմութենէն երկեաւ ուրանալ զյայտնեալ չարիսն իւր: Եւ այն զի կարէր ասել, թէ ոչ գիտէի, այլ պարզամտութեամբ արարի, այլ զարհուրէր, զի յառաջագոյն նշանաւքն ըմբռնեալ եղեւ: Եւ դարձեալ զի զչար խորհուրդս նորա յայտնապէս¹ ձաղեաց: Վասն այնորիկ ընդ երկար գնայր փախստական ի Հոռոմ², կարծելով ոչ հասանել անդր առաքելոցն:

Եւ նոցա եղեալ վկայութիւն՝ խաւսեցան գրանն Աստուծոյ եւ դարձան յԵրուսաղէմ (Ը. 25):

Վկայութիւն եղին վասն նորա, թերեւս զի մի՛ դարձեալ պատրեալք խաբէութեամբ նորա լիցին, այլ զգուշանալ ի նմանէ եւ կալ հաստատուն յաւանդեալ վարդապետութեանն Աստուծոյ, զոր աւետարանեցին: Այլ ընդէ՞ր արդեւք դարձան յԵրուսաղէմ: Վայելչապէս. անդ գնային, ուր բռնութիւն չարեացն էր, ուր մանաւանդ էին սպանաւորք³, որպէս ի պատերազմունս զաւերավարքն առնեն, զբռնամարտիկ տեղի ինչ եւ դժուարակռիւ՝ հմտագունից քաջամարտկացն տալով: «Եւ ի բազում գեղս⁴ սամարացոցն անտարանէին» (Ը. 25): Տե՛ս, զի եւ ճանապարհք նոցա ոչ էին դատարիք, այլ մանաւանդ զործաւքն⁵ զբազումս փրկելով, եւ ոչ ինչ վայրապար երբեք առնէին:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի եւ մեք ուսցուք՝ մի՛ ի սնոտի ծախել զփոքր ժամանակս: Զի բազումք, որ ունին գեղս եւ ագարակս, հնարին թէ ո՞րպէս բաղանիս կամ գինէվաճառս շինեսցեն եւ զշահսն բազմացուցեն, կամ շիրիմս եւ ապարանս կանգնեսցեն: Այլ թէ ո՞րպէս զհոգիս իւրեանցայոցն⁶ շահեսցին՝ ոչ է փոյթ, կամ զի եկեղեցիս շինեսցեն ի փառս Աստուծոյ եւ ի⁷ զգուշութիւն երկրագործ մշակացն, որ յագարակսն: Վասն որոյ փութալ խրատ տամ ստացուածաւորացն, յագարակս

¹ ԱԲ յայտնեաց] յայտնապէս

² Բ հովմ

³ Բ սպանողքն

⁴ ԱԲ գեղս

⁵ Գ գործօնք

⁶ Բ իւրայնոցն

⁷ Բ > ի

իւրեանց եկեղեցիս շինել եւ քահանայ կարգել, զի աղաւթիւք եւ գոհութեամբ պարսպեսցին վայրքն եւ արարք եւ արմտիքն, եւ յիշատակ բարեացն կանգնողին յերկարածգեսցի մինչ ի գալուստն Տեառն: Եւ մեծ է մասն վարձուց նորա, զի զթագաւորն երկնից ի ձեռն եկեղեցւոյն խառն¹ ընդ իւր ունի²:

[ԳԼՈՒԽ ԺԹ.]

Նրեշտակ Տեառն խաւսեցաւ առ Փիլիպպոս եւ ասէ. Արի եւ գնա դու³ ընդ կողմն հարաւոյ ընդ /52ա/ ճանապարհն՝ որ իջանէ յԵրուսաղէմէ ի Գագա, զի այս է անապար, եւ յարեաւ եւ գնաց (Ը. 26-27):

Ինձ թուի յառաքելոցն եւ ոչ յեւթանցն⁴ գոլ զսա, քանզի յԵրուսաղէմէ ի Հարաւ գնացեալ լինի, այլ ոչ ի Հիւսիս⁵: Իսկ ի Սամարոյ ի Գագա՝ ոչ ընդ Հարաւ պարտ էր գնալ: «Զի այս է, ասէ, անապար» (Ը. 26): Զի մի՛ երկնչիցի ի Հրէիցն բռնութենէ: Եւ նա ոչ եհարց, թէ վասն է՞ր, այլ «յարեաւ գնաց»: «Եւ ահաւասիկ այր մի եթովպացի⁶ ներքեւի⁷, հզար՝ Կանդակա⁸ փիկնոջ եթովպացւոց» (Ը. 27): Քանզի անդանաւր⁹ ի Հնումն կանայք թագաւորէին, եւ այս իսկ առ նոսա աւրէն էր, եւ ներքենին, «որ էր ի վերայ ամենայն գանձուց նորա, եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ» (Ը. 27): Մեծ էր գովութիւն սորա¹⁰, զի եթովպացի¹¹ գոլով եւ ի կռամով քաղաքի բնակելով եւ յոյժ ի մեծութեան գոլով՝ եկեալ լինէր ի տաւնին երկիր պագանել յԵրուսաղէմ:

Եփր. Այլ նման է՝ թէ վասն այնր եկն, զի ընկալաւ նա կարգաւ ի տուչութենէ զչխոյին Հարաւոյ, որ եկն երկիր պագանել ի տաճարին յաւուրս Սողոմոնի:

Եւ էր անդրէն դարձեալ, եւ նստեալ ի կառս իւր ընթեռնոյր գմարգարէն զԵսայի (Ը. 28):

¹ ԱԲ ի տուն] խառն

² Բ իւր ընդ ունի] ընդ իւր ունի

³ ԱԲ > դու

⁴ ԱԲ յիւթանց

⁵ Ա ի հիւսւս, Բ ի հիւսիւս

⁶ Բ եթովպացի

⁷ Բ ցերքինի

⁸ ԱԲ կանդակայ

⁹ Բ անտամօր

¹⁰ ԱԲ նորա

¹¹ Բ եթովպացի

Յոհ. Բարևոք այր հզաւր ասաց զսա¹՝ զքաջութիւն անձինն² նշանակեալ, զի ահա յԵթևովաի³ գնալով, եւ այնչափ ճանապարհի հոգաւք եւ իրաւք պաշարեալ, այնչափ փութոյ պնդութեամբ նստեալ ի կառս իւր ընթեռնոյր զմարգարէն:

«Ասէ Նոզին զՓիլիպպոս. Մաքիր եւ յարեաց ի կառսդ» (Ը. 29): Եւ ո՞րպէս ասէր Հոգին՝ մտածութիւն թերեւս ի նմա արկանելով, եւ ի միտս նորա խաւսի: Ոչ լեզուաւ եւ բանիւք, որպէս առ մեզ կատարի, այլ զհանդերձելոցն գիտութիւն զաւրէն լուսոյ ի միտս եւ ի սիրտս պայծառացուցեալ, որպէս ինքն միայն գիտէ եւ նոքա ընդ որս խաւսէր: «Մաքիր, ասէ, եւ յարեաց ի կառսդ» (Ը. 29): Եւ ընդէ՞ր ոչ ներքիննոյն երեւէր հրեշտակն եւ ածէր զնա առ Փիլիպպոս, այլ զսա⁴՝ առ նա ածէր: Զի թերեւս ոչ հաւանէր այրն անծանալթ գոլով, այլ եւ զարհուրէր եւս: Սմին վասն՝ եւ յԵրուսաղէմ ոչ յայտնեցաւ, կամ ետես զնա Փիլիպպոս, զի չէր աւգուտ նմա տեսանել զառաքեալսն հալածեալս վասն տակաւին տկարամիտ գոլոյն:

Եւ ընթացեալ Փիլիպպոսի լսէր՝ զի ընթեռնոյր գեսայի մարգարէ (Ը. 30):

Ընթանալովն ցուցանէր, թէ ասել ինչ կամիցի: «Եւ ասէ. գիտիցն⁵ս, զոր ընթեռնուցուսդ» (Ը. 30): Տե՛ս զմեծանձնութիւն նորա. ոչ նախատեաց զնա եւ ոչ ասաց, թէ տգետ ես, եւ ես ուսուցից զքեզ, եւ ոչ զինքենէ ասաց, թէ զայդոսիկ ես ստուգապէս գիտեմ: Եւ դարձեալ. ոչ մեծարելով եւ գովելով զնա ասաց, թէ «Երանի է քեզ, զի զաստուածային գիրսն ընթեռնուս», այլ ի յանդգնութենէ եւ ի մարդահաճութենէ ազատեալ արար զբանն: Զի եւ մանաւանդ տնաւրիներաբար եւ մարդասիրագոյն արար զայն, զի նմա, որ ընթեռնոյրն՝ պարտ էր հայցել ի սմանէ եւ փափաքել փրկութեան իւրոյ ի ձեռս նորա: Այլ սա միայն երեւեցոյց զանձն իւր, եւ պատճառ տալով՝ հոգաբարձաւրէն ասաց ցնա. «Գիտիցես արդեւք, զոր ընթեռնուցուսդ» (Ը. 30): Եւ /52բ/ միանգամայն հարցանելովն ցուցանէ բազում գանձս ներկայեալ ի բանն: Այլ բարևոք եւ ներքինին⁶ ոչ հայեցաւ ի ձեռն Փիլիպպո-

¹ Բ սա

² Բ գանձին

³ Ա յեթովաի, Բ յեթովաի

⁴ ԱԲ սա

⁵ Բ գիտիցես արդեւք

⁶ ԱԲ ներքին

սի, եւ ոչ ասաց ցնա, թէ դու ո՞վ ես, ոչ պարսաւեաց զնա, եւ ոչ ինքն ամբարհաւաճեաց կամ ասաց գիտել զբանն, այլ ցածութեամբ ասաց. «Զիա՞րդ կարիցեմ, թէ ոչ որ առաջնորդեսցէ ինձ» (Ը. 31): Տե՛ս զերկիւղածութիւնն, զի եւ ոչ գիտելովն¹ ընթեռնու. ապա յետ ընթեռնոյն եւ քննէ եւս, վասն որոյ եւ ուսաւ: «Զիա՞րդ կարիցեմ», ասէ: Եցոյց զանգիտութեան վէրն² բժշկին, իմացաւ, թէ գիտէ զայնոսիկ եւ կամի ուսուցանել, ետես զնորա հեզուութիւնն եւ զանփքացութիւնն, զի ոչ պայծառագոյն յանձին ունէր ձեւ, եւ այնպէս էր լրասէր եւ բանիցն միտ զնէր, եւ զոր եւ ասաց Քրիստոս, թէ «Որ խնդրէ առնու, առ սմա լցեալ կարարէր» (հմմտ. Մարթ. Է. 4):

Եւ աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստել ընդ նմա (Ը. 31):

Ապա թէ ասիցէ ոք, թէ Փիլիպպոսի պարտ էր ստիպել եւ յորդորել զնա, ասասցուք, թէ ոչ գիտէր զինչ պէտս ունէր ներքինին, եւ ամենեւին թէ զինչ հանդերձեալ էր ասել ընդ նմա, այլ կարծէր պարզաբար զմարգարէութիւնն ընդունել եւ ընթեռնու զնա: Բայց մեծապէս պատուեաց զնա ներքինին. զի ոչ հրամայեաց նմա կամ ասաց լոկ, այլ աղաչեաց զնա «ելանել նստել առ³ նմա»: «Եւ գլուխ գրոցն, գոր ընթեռնոյր, էր այս. իրրն գոչխար ի սպանդ վարեցաւ, եւ իրրն գորոջ⁴ առաջի կրթի անմոռն⁵ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր, առ խոնարհութեան նորա դարաստան նորա բարձաւ, եւ զազգարոհմն նորա ո՛ր պարմեսցէ, զի բառնան⁶ յերկրէ կեանք նորա» (Ը. 32-33): Եւ այս իսկ նորին իմաստասիրութեան էր, զմարգարէս զայս ունել ի ձեռին, որ բարձրագոյն էր քան զայլսն:

Պարասխանի եր ներքինին Փիլիպպոսի եւ ասէ ցնա. Աղաչեմ զքեզ, վասն ո՞յր ասէ մարգարէս զայս, վասն իւր, թէ վասն այլոյ ուրուք (Ը. 34):

Հայեաց ընդ համեստութիւն նորա, զի ոչ նախ բարբառեալ եղեւ առ Փիլիպպոս մինչեւ ի նմանէ հարցեալ եղեւ: Այլ եւ ոչ նա իսկոյն ձեռնարկեաց պատմել նմա մինչեւ ետես զհաւժարութիւն նորա: Զի նախ աղաչեաց նստել առ նմա, եւ այժմ աղաչէ ասելով՝ «վասն ո՞յր

¹ ԱԲ գիտելով

² ԱԲ վերն

³ Բ ընդ] առ

⁴ ԱԲ որոջ

⁵ Ա անմոռնչ

⁶ ԱԲ բարձան] բառնան

ասէ մարգարէն զայս», *ամենեւին ցուցանէ զինքն զիտել, թէ այլ ազգ, եւ յաղագս այլոց ասեն մարգարէքն, եւ յաղագս անձանց իւրեանց յայլ դէմս խաւսին: Տե՛ս, զի յոյժ խորհրդաբար հարցանէ զայս: Արդ, ամաչեսցուք եւ տնանկք եւ մեծատունք ի շտեմարանապետին յայն մանէ ճշմարտասէր բարուցն:*

Երաց Փիլիպպոս զրերան իւր, եւ սկսեալ ի գրոցս յայցանէ աւեփարանեաց նմա զՔրիստոս (Ը. 35):

Ոչ պարզաբար եւ հարեւանցի ինչ պատմեաց նմա, այլ հեզաբար եւ բազում յաւժարութեամբ: Եւ տես, թէ ո՞րպէս տնաւրինեալ լինէր. նախ ընթեռնուլ եւ ոչ իմանալ, ապա եւ զայն եւս զվկայութիւն՝ ուր էր չարչարանքն եւ յարութիւնն¹ եւ պարգեւքն:

Իբրեւ երթային զճանապարհայն, եկին ի ջուր ինչ. ասէ ներքին/53ա/ին. Ահա² ջուր, զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ (Ը. 36):

Տե՛ս զնորա ստուգագոյն յաւժարութիւնն, զի դարձեալ հայցէ ասելով. «Ահա ջուր, զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ»: Յամալթ լիցին հեղձացեալքն ի մկրտութենէ: Բայց տե՛ս դարձեալ զհեզութիւն նորա եւ զպատկառկոտութիւն, զի ոչ ասաց, թէ մկրտեա զիս, բայց եւ ոչ լռեաց, այլ ի մէջ ցանկութեանն եւ պատկառանացն բարբառի ասելով՝ «Ահա ջուր, զի՞նչ արգելու զիս» (Ը. 36):

Ասէ ցնա Փիլիպպոս. Եթէ հաւաքաս բոլորով սրբիւ քով, մարթէ: Եւ նա ասէ. Նաւաքամ եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ (Ը. 37):

Տեսանե՞ս, զի զաւանդութիւն հաւատոցն կատարեալ ունէր, եւ փութով խոստովան լինէր: Քանզի մարգարէն Եսայի զամենայն ինչ ունէր յինքեան՝ զմարմնանալն Քրիստոսի եւ զչարչարելն, զյարութիւնն, զհամբարձումն, զհանդերձեալ դատաստանն, եւ մի ըստ միողէ ուսաւ ի գրոցս յայցանէ: Ուստի թէ բազում ցանկութիւն ցուցանէ՝ մի՛ սքանչանար:

Եւ հրամայեաց կացուցանել զկառսն (Ը. 38):

Համանգամայն ասաց զբանն հաւատոյ, եւ հրամայեաց կացուցանել նախ քան, թէ լսել ինչ: «Եւ իջին երկորին ի ջուրն՝ Փիլիպպոս եւ

¹ Բ յարութիւն

² ԱԲ ահաւասիկ] ահա

ներքինին, և մկրտեաց գնա: Եւ իբրև ել ի ջրոյ անսրի, Տոգին Սուրբ եկն ի վերայ ներքինոյն» (Ը. 38-39): Վայելչապէս. զի աստուածային ցուցեալ լինի¹, որ ինչ եղեւն, զի մի՛ կարծեսցէ, թէ մարդկային իրք եղեն առ նմա ի ձեռն Փիլիպպոսի, այլ զի յայտ լիցի, թէ յԱստուծոյ առաքեցաւ Փիլիպպոս ի նորա փրկութիւն. եւ Հոգւոյն էր գործն²:

Եփր. Վասն որոյ իբրեւ ել նա յաւազանէ³ անտի մկրտութեան, բնակեցաւ անդէն ի վերայ նորա Հոգին զաւրուութեան գործոց, զի գործովք Հոգւոյն, զոր ի Հնդիկս գործէր, հաւատարիմ լիցի խաչն ամաչեցեալ, զոր քարոզէր: «Եւ հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ոչ եւս երես գնա ներքինին» (Ը. 39): Իսկ ի հին աւերինակս մեկնութեանս՝ «Տոգի Տեառն յափշտակեաց, ասէ, Փիլիպպոս» (Ը. 39): Եւ բազում անգամ կրկնէ զՏոգին: Ինձ թուի, թէ զի յայտ առնել կամի՛ թէ յափշտակել հրեշտակին զՓիլիպպոս, անտեսաբար եղեւ ի ներքինոյն, զի մի թանձր կերպանանաւք երեւեալ հրեշտակն որպէս բազմաց մարդակերպ, կարծեսցէ⁴ ներքինին մարդ գոլ զնա:

Եւ Է՛ր վասն վաղվաղակի վերացոյց գնա Տոգին:

Զի որ⁵ ինչ եղեւ⁶, սքանչելի ցուցցի: Եւ վայելչապէս. ոչ առ կամ վերացոյց, այլ «յափշտակեաց», ասէ, որ է հանկարծակի իմն, զի մի՛ աղաչեսցէ զնա ներքինն ընդ նմա երթալ, եւ ոչ յանձն առնլով նորա՝ տրտմիցի, քանզի չէր ժամ զհետ նորա գնալ: «Եւ երթայր զճանապարհս իւր ուրախութեամբ» (Ը. 39): Զի թէ կացեալ մնացեալ լինէր անդէն, ի հեղգութեան լինէր ամբաստանալ, այլ երթայր ուրախութեամբ, յայտ է՝ զի թէ ոչ յառաջագէտ էր ամենայն բարութեանցն եղելոց առ նա, թերեւս ոչ այնպէս հեշտացեալ ցնծայր: Նա զի եւ ոչ ինչ արգելոյր զնա զամենայն ինչ ստուգագոյն ուսանել մինչդեռ ի կառսն անդ էին: Այլ եւ ցուցանէ, թէ տրտմեալ լինէր, եթէ էր գիտացեալ զբաժանիւն Փիլիպպոսի. /53բ/ այլ բազում խնդութեամբ զգածեալ եւ Հոգւոյն արժանացեալ՝ զյափշտակիլն Փիլիպպոսի ոչ տեսանէր յուրախութենէն:

Բայց Փիլիպպոս գրաւ յԱզովտոս (Ը. 40):

¹ Բ լիցի

² Ա հոգւոյ ներգործն] հոգւոյն էր գործն

³ Բ յաւազանէն

⁴ ԱԲ կարծեսցի

⁵ ԱԲ զոր

⁶ Բ եւ] եղեւ

Այս ցուցանէ հեռի բացարձակութիւնն ճանապարհի զնացեալ նորա, մինչ զի յԱզովտոս, ասէ, գտեալ եղեւ, քանզի անդ եղ զնա Հոգին, ուր այնուհետեւ աւետարանել պարտ էր: Այլ մեծամեծս այսու Փիլիպպոս շահեցաւ. քանզի զոր լուեալ էր վասն Ամբակումայ եւ Եզեկիելի¹, զնոյն առ ինքն ետես սքանչելիս: «Եւ շրջնալ առկարաներ ամենայն քաղաքացն մինչև ի գալ նորա ի Կեսարիայ» (Ը. 40): Բայց տե՛ս զհրեշտակս յաւգնականութիւնն հասեալ քարոզութեանն. զի թէպէտ ինքեանք ոչ քարոզէին, այլ զաշակերտսն յորդորէին²: Սքանչելի իմն եւ աստուստ ցուցեալ լինի, զի ոչ ինչ ի հնումն հազիւ միոյ միոյ ուրուք ի հեթանոսաց լինէր հաւատալ, աստանաւր յոյժ առատութեամբ յաճախէր, զի ահաւասիկ զայլագգիս վաղվաղակի ածեն ի հաւատս յամալթ եւ ի կշտամբանս³ հրէից յամառկոտաց:



¹ Բ եզեկիելի

² Աբ յորդորեց

³ Բ կըշտամբանս

Իսկ Սաւղոս փակաւին լցեալ սպառնալեալք եւ սպանմամբ աշակերտացն Տեառն (Թ. 1):

Արժանապէս ասաց աւետարանիչս¹ կանխաւ վասն նախանձուն² Պաւղոսի, եւ ցուցանէ, թէ տակաւին սաստիկ յանդգնութեամբ ի նոյն յարձակի, ոչ եւս յագեալ սպանմամբն Ստեփանոսի, եւ ոչ շատացեալ հալածմամբ եկեղեցւոյն յերուսաղէմ, որով ցրուեալ սփռեցան ամենեքեան: Եւ յայնժամ լցեալ լինէր առ ի Տեառնէ ասացեալն, թէ «Եկեսցէ ժամանակ, զի որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մարտիցանկ Աստուծոյ» (Յովհ. ԺԶ. 2): Եւ արդ՝ սա այսպէս առնէր, եւ զի ըստ նախանձու առնէր, որպէս կարծէր վասն աւրինացն մրցել, յայտ է: Քանզի եւ արտաքին քաղաքսն³, ուր եւ մնացեալ իցեն, հասեալ լինէր հալածել զնոսա: Իսկ այլ հրէայքն միայն երուսաղէմացւոցն փոյթ առնէին, զի մի ինչ դիտելով⁴ միայն, զի պատիւ յամենեցունց կալցին ինքեանք:

Եփր. Իսկ սա իբրու զի ոչ ոք յղեաց զնա, ինքն իսկ դշխէմ կամաւք «Մարտիցեալ առ քահանայապետն՝ խնդրեաց ի նման թուղթ ի Դամասկոս առ ժողովսն, որպէս թէ զոր գրցել զայն⁵ ճանապարհի արս կամ կանայս, կապեալս անցէ յերուսաղէմ» (Թ. 1-2):

Յոռ. Եւ ընդէ՞ր ի Դամասկոս երթայր: Զի մեծ էր քաղաքն եւ թաղաւորական, կասկածէր գուցէ նախ ըմբռնեսցի յաշակերտացն Քրիստոսի, եւ դժուարադարձ լիցի: Եւ տե՛ս զփափաք յաւժարութեան նորա, թէ զիա՞րդ վասն աւրինացն զինէր: Զի ոչ մատեալ առ իշխանս, այլ առ քահանայապետն, ի նմանէ առնու զհամարձակուլթիւնն, զի թէ զմանս գտցէ, որ կարդասցեն զանունն Յիսուսի՝ կապեալս անցէ յերուսաղէմ: «Զայն⁶ ճանապարհի» (Թ. 2), ասէ. քանզի այսպէս կոչէին յայնժամ զհաւատացեալսն ի Քրիստոս, կամ զուսուամն նշանանակելով ճանապարհի անուամբն, որպէս Պաւղոս ասէր, թէ «վասն ճանապարհին, զոր ասեն հերձուած նազաւրացւոց⁷», կամ թերեւս վասն զճանապարհն հատանելոյ անցանելոյ՝ որ

¹ Բ աւետարանիչն

² ԱԲ նախանձու

³ ԱԲ քաղաքն

⁴ ԱԲ գիտելով] դիտելով

⁵ Ա զայրն Բ զայն] զայնր,

⁶ Ա զայրն Բ զայն] զայնր,

⁷ Գ նազորեցոյն

յերկինսն բերէր: |54ա| Եւ ընդէ՞ր ոչ էառ իշխանութիւն անդէն ի Դամասկոս պատուհասել զնոսա, այլ յԵրուսաղէմ ածել: Զի անդ՝ բազում իշխանութեամբ զայն ինչ գործեսցէ: Եւ տես, թէ յորպիսի տազնապ արկանէ զանճն իւր, ո՛չ երկնչելով, զի մի՛ դժուարինս ինչ՝¹ կրեսցէ, նա եւ զայլս ոմանս առ ընդ ինքեան: Ո՛վ կարծր խստութեանն, զի զորս՝² եւ գտցէ, ասէ, զայնր՝³ ճանապարհի, կապեալս ածցէ յԵրուսաղէմ, զի յերկար միջոցաւն ամենեցուն զնոսա տեսարան արասցէ: Արդ, հրեայքն այսպէս ոչ լինէին փութացեալք, այլ սա եւ յառաջ իսկ քան զայս. ջան ունէր խափանել զառ ի Քրիստոս կրաւնս, եւ զոր ինչ նոքա ոչ կարացին առնել, նա առնել յամառէր:

Եւ վասն զի քան զքահանայսն եւ զայլսն նա կարի դառն էր առ եկեղեցիս, ո՛չ եղեւ նմա Աստուած երկայնամիտ մինչեւ յաճախեսցէ ի հալածանսն, եւ ապա կոչեսցէ զնա, այլ յառաջ քան զհալածելն նորա որչափ կամէր եկեղեցւոյ աշակերտ արար զնա:

Զի ընդ երթալն նորա եւ մերձենալ ի Դամասկոս, յանկարծակի շուրջ գնովաւ փայլաբակեաց լոյս յերկնից, եւ անկեալ յերկիր՝ լուաւ բարբառ, որ ասէր ցնա. Սաւուղ՝⁴ Սաւուղ, զի՞ հալածես զիս (Թ. 4):

Յոհ. Եւ ընդէ՞ր ոչ ի ներքս ի քաղաքին փայլատակէր լոյսն զնովաւ: Զի մի՛ ոմանք առ չհաւատալ խաղ առնիցեն, որպէս զձայնն Հաւր լսելով՝ ասէին որոտումն լինել: Եւ դարձեալ. զի մի՛ այլոցն, որ ընդ նմա էին՝ հնար լիցի այլ ազգ պատմել, այլ ինքն հաւատարիմ պատմաւղ լիցի իրացն, որ վասն այնորիկ գնացեալ լինէր: Վասն որոյ զնոյն ասէր ցԱգրիպաս, թէ «Տեսի յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինս լոյս» (ԻԶ. 15): Զի գերազանցութիւն լուսոյն հարեալ զաչսն՝ գանեաց զսովորական տեսութիւնն, զի աչք՝ չափ ունին տեսութեանն: Այլ ասի, թէ առաւելութիւնն այն եւ խուլս առնէ եւ անզգայս, բայց զնա կուրացոյց միայն:

Եփր՝⁵ Արդ, լուսովն, զի կուրացոյց՝ երկեցոյց զնա, եւ երկիւղիւ ահագին փառացն շիջոյց զսրտմտութիւն նորա, եւ մեղմ բարբառովն՝⁶ կակղացոյց զնա, որովք եւ նա հաւանեցաւ յանձին ունել, եւ

¹ Բ > ինչ

² Բ որս

³ Ա գայրն] գայնր, Բ գայն

⁴ Ա սուղ

⁵ ԱԲ > Եփր.

⁶ ԱԲ բարբառով

զի երկեալ նա արհամարհել զխոնարհութիւն Տեառն մերոյ, որ հեզագոյն բարբառովն¹ երեւէր, եւ զահի հարաւ անարգել զսաստկութիւն նորա, որ ի ձեռն սաստիկ լուսոյն շրտացոյց² զնա: Եւ մինչդեռ յերկիր ընկեցեալ յիմարեալ կայր ոչ յետ բարբառոյն, այլ յառաջ ի բարբառոյն, ապշեալ զարմացմամբ, թէ ո՞վ յերկնից կուրացոյց զնա, զի ահա Յիսուս³ եւ ոչ ի մեռելոց իսկ յարեալ որպէս եւ կարծէր նա, այլ իբրեւ ասաց ցնա ամբաստանելով՝ «Սաւուդ Սաւուդ, զի՛ հալածես զիս», զի՞նչ առ յինէն անիրաւեալ առնես զայդ ընդիս, լքաւ նա ի միտս իւր, թէ «Ես վասն Տեառն երկնից հալածեմ», եւ ոչ թէ զայն, որ «բնակէն յերկինս՝ հալածեմ»: Հարցանէ ապա. «Ո՞վ ես, Տէր» (Թ. 5)՝ առժամայն խոստովանի զինքն ծառայ: Ո՞վ ես դու, Տէր, որ յերկնիցդ հալածեալ ես. զի ես զՅիսուս՝ /54բ/ զայն, որ ի մեռեալս է՝ աշակերտաւքն նորա⁴ հալածեմ:

Յոհ. Եւ Տէրն ասէ. «Ես եմ Յիսուս, զոր դուն հալածես» (Թ. 5): Մի՛ կարծէր⁵ ընդ մարդկան ունել դու մարտ, այլ ընդ Աստուծոյ: «Այլ յոսն կաց եւ մուր ի քաղաք, եւ պարմեսցի զի՛նչ քեզ պարտ իցլ ատնել» (Թ. 7): Տե՛ս, ո՞րպէս ոչ⁶ վաղվաղակի զամենայն ի վերայ ածէ, այլ նախ կակղացուցանէ զտրամախոհութիւն նորա եւ զբրտութիւն:

Եւ մինչդեռ կայր ապա ի դողման վասն անցիցն, որ անցին ընդ նա, եւ զահի հարեալ երկնչէր, թէ գուցէ ո՛չ յառնիցէ յերկրէն, որ զարկաւն, եւ լոյսն, որ բարձաւ ի նմանէ, այլ ոչ դառնայցէ ի նա, եւ ատամնակարկաջ կայր ի յերերման, գուցէ ունիցին զնա պատիժք պատուհասից մեծ քան զոր ընկալաւն, տայ⁷ նմա յոյս քաղցրութեան, զի վերստին տեսանիցէ:

Յոհ. Բայց ոչ բժշկեաց զնա անդէն ի տեղւոջն, ուր կուրացոյց զնա:

Եփր. Զի Դամասկոս ամենայն եկեսցէ տեսցէ զնա սոսկալի նշանաւն, որ եղաւ ի նմա:

Յոհ.⁸ «Իսկ արքն, որ բնդ նմա երթային, կային անշշունջ, գծայնն միայն լսէին, բայց փեսանէին եւ ոչինչ» (Թ. 7): Զձայնն Պաւղոսի

¹ Բ բարբառելովն] բարբառովն

² ԱԲ շրտոյց

³ ԱԲ > յիսուս

⁴ ԱԲ > աշակերտաւքն նորա

⁵ ԱԲ կարծել

⁶ Բ > ոչ

⁷ ԱԲ տաց

⁸ ԱԲ > յոհ.

լսէին, որ ընդ նմայն էին, զի ասէր, թէ «Ռ՛վ ես Տէր», այլ ոչ զոք տեսանէին, եւ թէ ու՛մ տայր պատասխանի՝ ոչ գիտէին: Քանզի նուաստագունիցն միայն արար զնոսա լսաւոյս: Զի թէ զձայնն զայն լուեալ էին, թերեւս ոչ լինէին թերահաւատեալ¹, բայց զի Պաւղոս տայր պատասխանի, սքանչանային:

Եփր. Այլ եւ զսաստիկ փայլատակումն ոչ տեսին, զի մի կուրասցին եւ նոքա, եւ եղիցի շփոթութիւն: Այլ կուրացոյց զՇաւուղ ստուգութեամբ, եւ ողորմեցաւ նոցա շնորհաւք:

Յոհ. Եւ վասն զի զթողթն ի քահանայից անտի նա խնդրեաց եւ ոչ նոքա, եւ զի յառաքելութիւն քարոզութեան նա ընտրեցաւ² եւ ոչ նոքա:

Եփր.³ Սմին վասն՝ յայնժամ եւ յերրորդ երկինս զնա անքննաբար վերամբառնայր եւ զանճառելիսն գերաբնապէս նմա վարդապետէր. զի մի՛ նուազ ինչ գտցի քան զսիւնսն եկեղեցւոյ ի հաւասարութենէ ծայրագոյն պատուոյ առաքելութեանն: Բայց առ ժամայն դեռ եւս յարեաւ, ասէ, Սաւղոս յերկրէ անտի, եւ աչաւք բացաւք ոչ զոք տեսանէր: Քան արբ երկու աչաւքն իւրովք, զի յանդգնեցաւ նա հալածել զողջ եւ զանարատ մարմինն եկեղեցւոյ: «Ձձնանէ առեալ նորա՝ մուծին ի Դամասկոս» (Թ. 8): Մեծաւ վատթարութեամբ ձգեալ տանէին զնա ի Դամասկոս, ուր դիմեալ երթայր մեծաւ հպարտութեամբ, ձգեալ տանէին զնա, զայն⁴ որ ակն ունէր զայլս⁵ ձգել բռնութեամբ, որպէս կապեալ ի ներքս մուծանելով զայն՝ որ զայլս հանդերձեալ էր⁶ կապել:

Յոհ. Բայց տե՛ս, թէ⁷ ոք արդեւք այնպէս ձգէին, զաւարաւղն բանսարկուին անաւթիցն, զկապեալն Յիսուսի Քրիստոսի, եւ զկապաւղն ի նոյն զընդհանուրս, զնա իբր ի քաղաքի ուրեք⁸ կամ ի մայրաքաղաքի ի Դամասկոս ըմբռնեալ: Նա եւ որ սքանչելին է, զի նոքա մարտոցեալքն եւ թշնամիքն Յիսուսի ի ներքս մուծանէին զնա /55ա/ ամենեցուն տեսանելով:

Եւ էր անդ գերիս աուրս եւ ոչ փեսանէր (Թ. 9):

¹ Բ թերահաւատալ

² ԱԲ > ընտրեցաւ

³ ԱԲ > Եփր.

⁴ ԱԲ > զայն

⁵ Ա զայլսն

⁶ ԱԲ հանդերձեր] հանդերձեալ էր

⁷ ԱԲ զո՞] թէ

⁸ Ա ուրեք

Եփր. *Զի գիտասցէ զնա Դամասկոս եւ ամենայն շուրջ զնովաւ՝ եթէ գան արբ եւ ապա կալաւ յանձին, եւ ոչ թէ կաշառաւք¹ իւրիք հրապուրեցաւ նա լուել եւ դադարել:*

Եւ ոչ եկեր եւ ոչ արբ (Թ. 9):

Յոհ. *Քանզի մեղադիր էր անձին իւրում վասն յինքենէ² եղելոցն: Եւ յաւուրսն յայնոսիկ խոստովան լինէր, խնդրէր, աղաւթէր ըղձայր, ողորէր, աղաչէր զԱստուած: Եւ ապա զի^օնչ:*

Եփր. *Յայտնեցաւ Տէր ի տեսիլ գիշերի Անանիայի, զի առանց երկիւղի երթիցէ մկրտեսցէ զհալածիչն: Յայտնեցաւ դարձեալ Շաւուղի, զի առանց երկմտութեան լրջասցի ընդ առաջ բժշկին իւրոյ:*

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ ամաչեսցուք, որպէս ասացի, ի ներքինւոյն, զի ի զաւրեղութեան գոլով եւ ի փարթամութեան, եւ ի ճանապարհի, եւ ոչ մի ինչ խափանէր զնա յընթեռնւոյն³ զգիրս, կամ ի լուացմանէ մկրտութեան, զի թէ ի ճանապարհին այնպէս ժրանայր, զի^օնչ արդեւք էր ի տան: Արդ, փութաբար ընթերցջիք զգիրս աստուածային, զի այն իսկ զներքինն պայծառագործեաց, զի ոչ կարաւտացաւ նշանաց ինչ, այլ վաղվաղակի հաւատացեալ մկրտեցաւ: *Զի որ ոք միտ դիցէ մարգարէից՝ նշանաց ոչ կարաւտանայ, վասն այսր⁴ ասացաւ յաւրէնսն, թէ «Խաւսեսցիս զաւրէնսն Աստուծոյ ի ճանապարհի, յանկողնի, ի նստել ի փան», զի մեծ իմն վճարէ գրոց վերծանութիւն: Ապա թէ ասիցես, թէ եւ Պաւղոս ո՞չ ընթեռնոյր զգիրս, զիա՞րդ սքանչից պէտք եղեն նմա առ հաւատալ, ասեմ, թէ վասն հրէիցն կարծրութեան սքանչելեաւք կազմեաց զփոփոխումն նորա, որով ի ճահ էր զհրեայսն շահել՝ զոր ըստ կարգի պատմէ աւետարանիչս:*

[ԳԼՈՒԽ Ի.]

Եւ Էր, *ասէ, աշակերտ ոմն ի Դամասկոս, Անանիա անուն, ասէ ցնա Տէր ի փելւեան. Անանիա: Եւ նա ասէ. Աւասիկ եմ, Տէր⁵: Ասէ ցնա Տէր. Յոյրն կաց եւ գնա ընդ փողոցն՝ որ կոչի ուղիղ, եւ խնդրես-*

¹ ԱԲ կաշառովք

² Բ յինքինէ

³ ԱԲ յընթեռնուլ

⁴ ԱԲ այսր

⁵ ԱԲ > տէր

ցնս յապարանսն Յուդայ զՍաւղոս փարսոնացի, զի կայ դեռ յաղաւթս (Թ. 10-11):

Բազում նշանակաւ տայ Աստուած Անանիայի, զի մաղթասցէ¹ գտանել զՊաւղոս, որպէս հրեշտակն Կուռնելիոս² այսպիսի նշանս տայր գտանել ի Յոպպէ զՊետրոս: Արդ, ուղիղ փողոցն այսու անուամբ հռչակեալ, ամենայն քաղաքացեացն էր գիտելի: Եւ ի կողմն մի փողոցին ապարանք Յուդայի՝ հրէի միոյ, առ որ մուծին, որք ածէինն զՊաւղոս, որպէս առ խաղախորդին մտեալ էր Պետրոս:

Յոհ. Բայց ընդէ՞ր արդեւք ոչ ի մեծամեծաց եւ ի հաւատարմագունից ձգեաց ած Աստուած առ հաստատուն հաւանութիւնն եւ ողորքանսն³ Պաւղոսի: Վայելչապէս. քանզի ոչ էր լինելոց կոչումն նորա ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն նորուն ինքեան Քրիստոսի⁴, զի եւ Անանիա ոչ ինչ ուսոյց զնա, այլ միայն մկրտեաց, քանզի հանդերձեալ էր նա ընդ մկրտութիւնն⁵ բազում շնորհս Հոգւոյն կրել յանձին, ըստ բազում նախանձուն, զոր ունէր յանձին եւ յաւժարութեանն: Իսկ Անանիա, |55բ| զի ոչ էր ի յոյժ նշանաւորացն՝ ի կասկածագին պատասխանելոյ նորա յայտ է. զի թէ Տեառն ընդդէմ խաւսէր, յոյժ մանաւանդ, թէ հրեշտակ առ նա առաքէր: Բայց ոչ այսպէս եւ Փիլիպպոս, զի ոչ նախ լուաւ, զոր ինչ լինելոցն էր, այլ միայն զհրեշտակն ետես, եւ ապա հոգին հրամայեաց նմա յարել ի կառսն⁶, եւ ոչ դեռ թերեւս զամենայն լուաւ:

Բայց ի սմանէ տե՛ս, թէ որպէս հատանէր Աստուած գերկիւղն: «Մի՛ երկնչիր, ասէ, խոպանեալ է և աղաւթս առնէ»: Եւ ոչ ասաց, զոր ինչ ուղղութիւն հանդերձեալ էր ի նմանէ. զմեզ խրատելով, մի՛ պատմել զանձանց ուղղութիւնս: Այլ եւ երկուցեալ տեսեալ զնա՝ ոչ ասաց մի՛ անհաւատ լինիր, եւ ոչ ասաց, թէ ուսոյ կամ ողորքեա զնա: Զի թէ ասելով, թէ «աղաւթս առնէ», եւ ետես այր մի եղեալ ձեռս ի վերայ, զի տեսցէ, եւ ոչ այսու հաւանեցոյց, յոյժ մանաւանդ, թէ զայն իսկ ասիցէր: Այլ զի՞նչ. «Եփես ի փեպեան այր մի Անանիա անուն, մտեալ և եղեալ ձեռն ի վերայ նորա, որպէս զի փեսցէ» (Թ. 12): Գրեալ իր, թէ այսպէս ասիցէ, թէ ոչ անհաւատ⁷ լինի քեզ: Քանզի ետես տեսեամբ

¹ Աբ մարթասցէ] մարթասցէ

² Աբ Կուռնելու

³ Աբ ողորքականսն] ողորքանսն

⁴ Յիսուսի] Քրիստոսի

⁵ Ա մկրտութեանն

⁶ Ա ի կառսն] ի կուռսն

⁷ Աբ անհաւան] անհաւատ

զերթալն քո առ նա, եւ զնելով զձեռս լուսաւորել. եւ վասն այնորիկ տեսլեամբ, զի խաւարեալ էր: Իսկ առ Պաւղոս այս ինչ եղեւ, զի հաւատասցէ գնացելոյն առ նմա Անանիայի, ըստ որում յերազի ետես նախ ազդեցեալ նմա:

Պապասխանի եր Անանիա. Տէր, լուայ ի բազմաց վասն առն այնորիկ, որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ, եւ աստ ունի իշխանութիւն ի քահանայապետիցն կապել զամենեսեան, որ կարդան զանուն քո (Թ. 13-14):

Տե՛ս ա՛յնչափ զարհուրեալ զաշակերտն, մինչ զի եւ ոչ եղելոցն¹ առ Պաւղոս սքանչելեացն առաւելութիւն հաւանեցուցանէր զնա: Այսպէս եւ Սովսէս երբեմն երկուցեալ լինէր, ըստ որում եւ սորա բանքս ո՛չ թերահաւատի, այլ երկուցելոյ եւ հրաժարելոյ են, զի ասէ. «Տէր, լուայ ի բազմաց՝ թէ այրն այն որչափ արար չարիս սրբոց քոց» (Թ. 13): Զի՞նչ ասես, ով մարդ. Աստուած խաւսի ընդ քեզ, եւ դու յերկուանա՞ս: Տե՛ս, դեռ ոչ² եւս գիտէին վայելչապէս զզաւրութիւնն Քրիստոսի: Եւ ուստի՞ այս յայտ իցէ, զի զարհուրեալ գոլով քննէր զիրսն: Ոչ թէ իբրեւ ոչ գիտելով Քրիստոսի՝ ասէր զայս, այլ թէ այսպիսի գոլով առնն, զիա՞րդ հնար իցէ առնել զհրամայեալսդ: Քանզի նոքա կան եւ ասեն, ասէ, թէ ոչ ուրուք ի հաւատացելոց Քրիստոսի հնար իցէ կեալ, այնպէս երկուցեալ զողայր, զի ոչ միտ զնէր ասացելոցն, այլ ի լսելն զանունն Պաւղոսի՝ յոյժ տազնապեցաւ երկիւղիւ, մինչ գրեթէ³ ասել. «Տե՛ս Տէր, յո՞յր ձեռն զիս մաքրնես» (հմմտ. Մտթ. ԻԶ. 24), որ աստ վասն այնր եկեալ է, զի կապեսցէ զորս կարդան զանուն քո. երկնչիմ գուցէ եւ զիս յԵրուսաղէմ տարցի⁴, թոյլ տուր նմա խաւարեալ կալ, թէ ամենեւին կոյր իցէ, ընդէ՞ր հրամայես ինձ բանալ զնա, զի դարձեալ կապեսցէ⁵: Զայստսիկ ասէր զարհուրեալ գոլով:

Եւ յայսմանէ ահա յայտնի լինի արւուրթիւն⁵ առնն, զի հրէիցն ասել զայս՝ ոչ էր սքանչելի, այլ սոցա այսպէս եր/5Ճա/կնչելն մեծագոյն զարուեստս զաւրութեանն⁶ ցուցանէ, որ զայնպիսի սաստիկն հաւանեցոյց, զոր յայտ առնելով Աստուած՝ ասէ. «Ե՛րթ դու, զի

¹ Ա եղելոցն

² ԱԲ ոչ դեռ] դեռ ոչ

³ Ա գրեթէ

⁴ ԱԲ տարցի + ընդէ՞ր ընկենուս զիս ի բերան առեւծուս. բարուք ունի

⁵ Բ արուրթիւն] արուրթիւն

⁶ Բ զօրութեան

անաւթ ընտիր¹ է նա ինձ կրել զանուն իմ առաքի ազգաց» (հմմտ. Թ. 15): Առաւելութեամբ գովութեանն ելոյժ զերկիւղն վաղվաղակի: Մանաւանդ, ասէ, այնքան յաւժարագոյն է գմերս² խորհել, որպէս զի եւ բազումս վասն այնր հանդերձեալ է չարչարել: Եւ անաւթ ընտիր կոչէ զնա ցուցանելով, թէ ոչ է բնական նորայն չարութիւն. զի զփորձն եւ զլաւն կոչեմք ընտիր, որպէս եւ զոմանս ի չարեաց «անաւթս, ասէ, բարկութեանն Աստուծոյ» (հմմտ. Նոռմ. Թ. 22), եւ զայլս՝ «անաւթս ողորմութեան» (Նոռմ. Թ. 23), եւ զՊաւղոս՝ «անաւթ ընտիր» (Բ. Տիմ. Բ. 21):

Բայց զիտելի է, զի ոչ միայն շնորհացն Աստուծոյ, այլ եւ մարդոյն փուլթոյ պէտք³ են յարգոյ առնել զընտրութիւնն, զի «Թէ որ սրբէ գանձն իւր, ասէ, եղիցի անաւթ ընտիր եւ պիտանի Տեսոն ի գործս բարիս պատրաստել» (Բ. Տիմ. Բ. 21): Որպէս զՊաւղոսէ ասէ «անաւթ ընտիր», զի ոչ միայն հաւատացեալ լինելոց է, ասէ, այլ եւ վարդապետ, որ եւ բազում համարձակութեամբ վարելով այնչափ աճեցուցանէ զվարդապետութիւնն, որչափ յառաջագոյն զարհուրեցուցանէր զբազումս:

Եւ զի «անաւթ ընտիր» ասաց զնա, պահէ զկարգ հետեւմանն, եւ ի կրեկեացն ցուցանէ զարժանաւորութիւն անաւթոյն: «Կրել գանուն իմ, ասէ, առաքի ազգաց եւ թագաւորաց եւ որդուցն Իսրայէլի» (Թ. 15): Լուաւ ահա զոր ինչ ախորժէր Անանիա, թէ ոչ միայն ոչ կապեացէ, զորս կարդան զանուն իմ, այլ մանաւանդ ինքն կարգալով եւ կրելով զանուն իմ ընդդէմ կացցէ հրէից եւ ազգաց եւ թագաւորաց: «Ձի եւ ցուցից նմա որչափ պարտ է նմա չարչարել վասն անուան իմոյ» (Թ. 16): Թերեւս յորժամ աղաչէր ի բաց առնել զսատանն, եւ լաւ⁴, թէ «Շար եւ քն շնորհք իմ⁵, զի գարութիւն իմ ի փկարութեան⁶ կարարի» (Բ. Կրնթ. ԺԲ. 9): Բայց թուի, թէ եւ առ Անանիա նախատական է բանս, թէ նա իսկ զամենայն կրեսցէ վասն իմ, որ⁷ որչափ մոլեալն էր, իսկ դու եւ մկրտե՞լ ոչ կամիս զնա: Մի՛ երկնչիր, զի բացմամբն ոչ հակառակ ձեր յառնէ, այլ վասն ձեր լիցի ի տագնապ մտեալ:

Յայսմանէ համարձակութիւն առեալ՝ «Գնաց Անանիա եւ եմուր յապարանն, եղեալ ձեռս ի վերայ նորա եւ ասէ. Մաւուղ եղբայր, Տէր առաքեաց զիս առ քեզ, Յիսուս երեսցաւ քեզ ի ճանապարհին, յորում գայիր, որպէս զի փնս-

¹ Ա ընդիր

² ԱԲ գմերս

³ Բ պէտք

⁴ ԱԲ լուաւ

⁵ Ա իմք

⁶ Ա տկարութեան] ի տկարութեան

⁷ ԱԲ > որ

ցես եւ լցցիս Տոգուով Սրբով» (Թ. 17): Վաղվաղակի ընտանեցուցանէ զնա անուամբն Յիսուսի: «Յիսուս, ասէ, որ երևեցաւն¹ քեզ» (Թ. 17): Եւ մանաւանդ զայս ոչ ասաց նմա Քրիստոս, այլ ի Հոգւոյն ուսաւ: Եւ ոչ ասաց, թէ՛ Յիսուս, որ խաւարեցոյց զքեզ, եւ ոչ թէ՛ Յիսուս Որդին Աստուծոյ խաչեալն՝ որ նշանս առնէր, այլ «երևեալն քեզ», ասէ. ի նորա ծանաւթ իրացն հաստատէ զբանն: Նա զի եւ ոչ Քրիստոս յաւել ինչ առ Պաւղոս յայսցանէ, եւ ոչ ասաց, թէ՛ ես եմ Յիսուս, որ ի խաչելի եւ յարեայ, այլ թէ՛ «գոր դուդ հալածես» (Թ. 15): Բայց ոչ ասէ Անանիա, թէ հալածեալն ի քէն, զի մի՛ թուիցի այսպանել ինչ նախատելով, այլ «երևեալն² քեզ», ասէ: Եւ սակայն ոչ երեւեցաւ, այլ ի ձեռն իր/56բ/ացն երեւեալ եղեւ:

Եւ վաղվաղակի կամելով ի բաց բառնալ զնախատինսն, ի վերայ էած, «Որպէս զի տեսցես եւ լցցիս Տոգուով Սրբով» (Թ. 17): Յայտ արար, թէ՛ ոչ եկն՝ զի յանդիմանեսցէ զեղեալսն³, այլ զի տացէ զպարգեւն, այսինքն՝ զՀոգին: Եւ ինձ թուի, զի եւ Պաւղոս՝ որպէս կուռնէլիեանքն, ընդ ասել բանիս՝ Հոգւոյն Սրբոյ եղեւ հաղորդեալ, եւ մանաւանդ զի աստ, որ տայրն Անանիա, ոչ էր մեծ: Վասն զի ոչ ինչ էր մարդկային, որ լինէրն, եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ Աստուած էր մերձ, որ առնէրն զայն: Համանգամայն եւ խրատէ զնա խոնարհել: Ոչ ածէ զնա առ սքանչելի առաքեալսն, զի ցուցցէ, թէ՛ ոչ ինչ էր մարդկային աստանաւր: Սակայն Հոգւով լի եղեւ, այնու Հոգւով, որ զնշանսն առնէ, զի եւ այնպէս հաւատք նորա ցուցեալ լիցի: Բայց սքանչելիս ինչ դեռ եւս ոչ առնէր:

Եւ վաղվաղակի անկան յաչաց⁴ նորա իրրեւ կեղեւանք, երես եւ յարեաւ մկրտեցաւ (Թ. 18):

Ոմանք ասեն, թէ քան զայն ինչ արար նշան խաւարման, ընդէ՞ր իսկ⁵ ոչ խփեաց զաչս նորա: Ասեմ՝ թէ վասն զի այն հրաշափառագոյն էր, բաց գոլով աչացն ոչինչ տեսանել մինչեւ զանունն Յիսուսի կարգալով առ նմա Անանիա՝ լուսաւորեաց զնա եւ մկրտեաց: «Եւ առեալ, ասէ, կերակուր, զարացաւ» (Թ. 19): Զի տկարացեալ էր ի ճանապարհէն⁶, յերկիւղէն, ի սովոյն զերիս աւուրս, ի տրտմութենէն: Զի

¹ Բ երևեցաւն

² Բ երևեալն

³ ԱԲ գեղեալն

⁴ ԱԲ աչաց

⁵ Բ > իսկ

⁶ Ա ի ճանապարհեւ

կամելով Աստուած անեցուցանել զտրտմութիւնն¹ նորա, կուրացոյց զնա յառաջ քան զգալն սորա², եւ զի մի՛ կարծիցէ տեսիլ ինչ խաւարումնն, սմին վասն իբրեւ կեղեւանք թափեալ լինէին: «Եւ եղև ի Դամասկոս աուրս ինչ ընդ աշակերտսն, եւ վաղվաղակի ի ժողովուրդսն³ քարոզեաց գՔրիստոս, թէ սա է Որդին Աստուծոյ» (Թ. 19): Արդ, տե՛ս զսքանչելիսն. ոչ կարաւտացաւ այլոց վարդապետութեան, այլ պատահումնն եղև նմա վարդապետութիւն:

Եփր. Եւ այն, որ զիմեալ երթայր խռովել զաշակերտսն⁴ Աւետարանին, գտաւ նա խռովիչ Հալածչաց Աւետարանին, զի ասէր նա, թէ «Որդի Աստուծոյ է Յիսուսն այն, գորմն դուք կարծէք, թէ ի դժոխս է»: Եւ քարոզեաց զաստուածութիւնն նորա եւ զմարդեղութիւնն միանգամայն լսողաց եւ անհաւատից:

Յոհ. Եւ տե՛ս զփոյթն, զի վաղվաղակի, ասէ⁵, քարոզէր եւ վարդապետէր ի ժողովսն, եւ ի սկզբան անդ զմահ իսկ⁶ յանձն առնոյր՝ առ սպանմունս պատրաստելով: Տեսանե՞ս որպիսի հաստատուն նշանն եղև, եւ այս իսկ զամենեսեան զարհուրեցուցանէր: «Ջարմանային⁷ ամենեքեանքն, որ լսէին, եւ ասէին. Ո՛չ սա է, որ աւարն հարկանէր զայնոսիկ՝ որ կարդային գանունն Յիսուսի, եւ այսր նմին իրի եկեալ էր, զի կապեալ գտոսա փարցի յերուսաղէմ առ քահանայապետսն» (Թ. 21): Տե՛ս, զի ի⁸ թերահաւատութիւնն եկեալ լինէին վասն քարոզութեանն նորա: Ո՛վ յիմարութեանն, զի ոչ միայն սքանչանալ պարտ էր, այլ եւ երկիր պագանել Քրիստոսի եւ պաշտել, որ զնայն⁹ փոփոխեաց իսկոյն: Զի ոչ պարզաբար Հալածիչ էր, այլ եւ աւար հարկանաւդ¹⁰ /57ա/ զաշակերտսն Յիսուսի. եւ ի յոյժ թշնամութենէն եւ ոչ զանունն նորա լսել յանձն առնոյր: Եւ որ մեծն է քան զայս, զի եւ անդանաւր վասն այսորիկ եկեալ էր, եւ ոչ ունէին ասել, թէ «Յառաջագոյն հաղորդեալ էր իւր ինչ ընդ առաքեալսն»: Տեսանե՞ս, թէ որքան իրաւք յայտնի է, զի թշնամի էր:

¹ Բ գտրտմութիւն

² ԱԲ նորա

³ ԱԲ ժողովուրդսն] ի ժողովուրդսն

⁴ ԱԲ զաշակերտս

⁵ Բ ասէր

⁶ Բ > իսկ

⁷ ԱԲ զի զարմանային

⁸ ԱԲ > ի

⁹ Ա զայն

¹⁰ ԱԲ հարկանէր

Այլ Սաղոս առաւել եւս զաւրանայր եւ յաղթահարէր զհրեայսն, որ բնակեալ էին ի Դամասկոս, եւ խելամարեցուցանէր, թէ սա է Քրիստոսն (Թ. 22):

Տե՛ս, ոչ միայն ոչ լինէր ամաչեցեալ կամ ծածկեալ զերեսս, այլ առաւել զաւրացեալ լինէր եւ յաղթահարէր զհրեայսն, այսինքն՝ իբրեւ աւրէնագէտ գոլով խնոյր զբերանս այնոցիկ՝ որ հակառակէինն, եւ ոչ թողոյր ասել ինչ հաստատելով, թէ նա է Քրիստոսն: Իսկ նոքա երկուցեալ եւ ամաչեցեալ լինէին ասել, թէ «Դու էիր, որ աւարէիր զուսումնդ¹ գայդ, արդ ընդէ՞ր փոխեցար²»: Զի ամաչէին եւ առ ինքեանս խորհէին³ զի մի՛ ստիցէ, թէ այս իսկ փոփոխումնս իմ բաւական էր զձեզ ուսուցանել առ ի ճանաչել զզաւրութիւն այնր, որ զիս փոփոխեացն:

Իսկ զհաւանեալսն խելամտեցուցանէր, այսինքն՝ հեզութեամբ ուսուցանելով եւ հաստատելով, թէ նա է Քրիստոսն: Եւ զի կեղծաւորէին հրեայքն ազատիլ ի մեղադրութենէ յոչ լսելն քարոզութեանն, եւ այնպիսի կարծեաւք մոլեգնէին ի վերայ Ստեփանոսի, ահաւասիկ⁴ գտին զսա ընդդէմ ինքեանց ուժգնագոյն մանաւանդ քան զՍտեփանոս: Եւ արդ զի՞նչ հաւասար գտցի այսմ ուրախութեան, որ յաղագս տրտմութեանն, որ վասն Ստեփանոսի, մխիթարութիւն եղեւ գալուստն Պաւղոսի, որով ամենեքեան զուարթանային, մանաւանդ զի այսպիսի աւրինակաւ եղեւ գալուստ նորա:

Այլ թէ ընդէ՞ր ի սկզբանն ոչ եղեւ այս, այլ յետոյ ուրեմն: Վայելչապէս. զի ցուցեալ լիցի, թէ ճշմարտապէս յարեաւ Քրիստոս: Զի որ հալածէրն զնա եւ ոչ հաւատայր յարուցեալ զնա, ուստի՞ արդեւք հաւատացեալ եղեւ, եթէ ոչ բազում էր զաւրութիւն յարուցելոյն: Արդ, համարեսցուք, թէ աշակերտքն Քրիստոսի շնորհս ինչ առնեն Քրիստոսի, զիա՞րդ եւ զայս առ սմա ոք կարծիցէ: Վասն այնորիկ ոչ վաղվաղակի կոչեաց զնա, զի յայտնի լիցի սորին պատերազմն ընդ Քրիստոսի: Զի որ այնպէս մոլեալ էր՝ զի արիւն արդար հեղլով, եւ ի բանտ արկանելով, եւ հայհոյելով, եւ զՔրիստոսիսն հալածելով ոչ շատացաւ, այլ պարտ գոլ վարկաւ⁵ ուժգնապէս եւս մարտնչել ընդ հաւատացեալսն, մինչ զի առ քահանայապետն մատուցեալ ի

¹ ԱԲ զուսումնդ

² Բ փոփոխեցար] փոխեցար

³ ԱԲ խորիէի

⁴ ԱԲ աւասիկ] ահաւասիկ

⁵ Ա գոլով արկաւ] գոլ վարկաւ

մեծամեծ վիշտս զանձն¹ ընկենոյր, սորա հաւատալն յանկարծակի մեծ էր եւ սքանչելի:

Ապա թէ ոք ի հարկէ բռնադատեալ ասիցէ զիրան, ասեմ, թէ «Ելիմաս² գնոյն կրեաց, ընդէ՞ր ոչ փոխեցաւ³»: Եւ դարձեալ. զի՞նչ ահաւորագոյն քան զշարժումնն, որ առ յարութեանն զգինուորսն⁴ տագնապեցոյց, եւ զայլ նշանսն, որ եղեն, եւ տեսանելով եւս զնա⁵ յարուցեալ՝ բայց ոչ կամեցան աւագտել: Ընդէ՞ր ոչ եւ⁶ հրեայքն հաւատացին լսելով զեղեալսն, որ առ սա, որոց յայտն/57թ/ի էր ճշմարտութիւնն, քանզի եւ ոչ իսկ լինէր նա՝ փոխադրեալ առանց այսմիկ:

Արդ, հարցանեմ⁷ ցհրեայսն⁸: Ուստի՞, ասա ինձ, փոխադրեցաւ Պաւղոս. այն որ այնչափ նշանք եղեն յառաջագոյն, եւ ոչ փոխադրեցաւ: Նորին վարդապետն փոխադրեալ հաւատաց, եւ նա ոչ փոխեցաւ: Արդ, ո՞վ ոք զսա ոչ միայն հաւանեցոյց, այլ եւ յանկարծակի այնչափ արկ ի նմա յաւժարութիւն, մինչ զի եւ ի գեհենն ցանկայր գնալ վասն սիրոյն Քրիստոսի: Ո՞չ ահա յայսմանէ յայտնիցէ իրացն⁹ ճշմարտութիւն, զի աստուածային իսկ էր առ նա գործն վճարեալ: Վասն որոյ եւ որպէս այլոցն պարտ է հաւատալ, որ քարոզեցին զյարութիւնն Քրիստոսի, ոչ ինչ նուազ եւ սմա, որ յանկարծակի փոխեցաւ:

Եւ զի հաւաստի լիցի, թէ եղեալք առ նա՝ ոչ բռնադատութիւն էր հարկեցուցիչ, այլ վարժողական աւրինակ հաւանութեան: Տեսցուք եւ զայլս աւագտեալս, զոմանս առանց նշանի եւ զայլս նշանաւք, որպէս սամարացւոց գաւառքն, որոց հաւատալն ոչ փոքր ինչ ուրախութիւն էր ընդդէմ յայնմ ժամու տրտմութեանն: Այլ ներքինին հնդիկ, զի՞նչ նշանս տեսեալ հաւատաց, ընդ որ սքանչանալ արժան է ճշմարտապէս: Զի զՔրիստոս ոչ ետես եւ ոչ զայլ ինչ նշանս, այլ մանաւանդ զերուսաղէմացիսն դեռ եւս պայծառացեալս ետես աւրինաւքն: Ուստի՞ ապա եկն յայնչափ խոհեմութիւնն. զի ահա աւագակն նշանս ետես, եւ մոգքն զաստղն, իսկ սա ոչ ինչ այսպի-

¹ Բ գանձնն

² Ա Եղիմաս

³ Ա փոխեցաւ] փոփոխեցաւ

⁴ Բ գինուորսն

⁵ ԱԲ > գնա

⁶ Ա > եւ

⁷ Ա հարցացեմ

⁸ ԱԲ ցիրէայս

⁹ ԱԲ յայտնի է իրացս] յայտնիցէ իրացն

սի, եւ ոչ կարաւտացաւ նշանաց առ փրկութիւնն: Ապաքէն ի գրոց ստուգութեամբ ընթեռնելոյն:

Եւ զիա՞րդ, Պաւղոս ո՞չ ընթեռնոյր զաւրէնսն: Այլ տնաւրինաբար Պաւղոս այսպէս փոփոխեցաւ՝ կամելով Քրիստոսի ամենայն ուստեք շահել զհրեայսն, որք թէ միտս ունէին, քան զամենայն նշանսն, որ եղեն ի ձեռն առաքելոցն, բավական էր¹ շահեցուցանել զնոսա բերելն զնա ի հաւատս: Այլ տե՛ս ահա յետ առաքելոցն եւ զԱստուած արարեալ նշանս առ ի հաւատալ նոցա, զի յետ առաջնոյ սքանչիցն, որ առ կաղն՝ ի բանտ արկին զառաքեալսն, ուր եւ Աստուած իսկ առնէր նշանս, եւ էր այն, հանելն զնոսա ի բանտէն: Երկրորդ նշան ցուցանելն զինքն Ստեփանոսի: Երրորդ նշան, ածելն Փիլիպպոս առ ներքինին: Չորրորդ նշան՝ ձգելն զՊաւղոս առ ինքն. այլ ոչ կամեցան նոքա աւգտել: Այլ տեսցուք դարձեալ, թէ զիա՞րդ Պաւղոս պատուով կոչի, եւ ո՞րպէս ներքինին. զի աստանաւր Պաւղոսի երեւի Քրիստոս վասն կարծրութեանն թերեւս, զի ոչ արդեաւք² հաւանէր առանց այսորիկ³:

Եփր. Արդ, իբրեւ խռովեաց նա զ Դամասկոս՝ Աւետարանաւ⁴, զոր սկսաւ նա քարոզել անդ, խռովեցաւ ամենայն Դամասկոս ընդդէմ նորա:

Եւ իբրեւ կապարէին ասորք բազումք, խորհեցան հրեայքն սպանանել զնա (Թ. 23):

Յոռ. Առ ունակացեալ⁵ չարարուեստութիւնն իւրեանց եկեալ լինէին դարձեալ հրեայքն՝ ոչ տակաւին զրպարտաւորք եւ սուտ վկայք խնդրելով, այլ ինքեանք ըստ ինքեանց զխորհուրդն իւրեանց կատարեն, |58ա| քանզի տեսին զԱւետարանն տարածեալ, վասն որոյ եւ ոչ եւս դատաստան նստուցանեն:

Յայսնեցաւ Սաղոսի նենգութիւն նոցա, քանզի պահէին զդրունսն ի փուլ եւ ի գիշերի, զի սպանցեն զնա (Թ. 24):

Քանզի այս իսկ անհանդուրժելի էր նոցա եւ ծանր թուէր քան զյառաջագոյն եղեալ նշանսն զամենայն. եւ քան զհինգ հազարացն

¹ Բ է] էր

² Գ արդեւք

³ Բ այսոցիկ] այսորիկ

⁴ ԱԲ ավետարանաւն

⁵ ԱԲ ունկացեալ

եւ զերեք հազարացն¹ սորայն փոփոխուամն խոցոտէր զնոսա: Այլ տե՛ս զնա առ ժամայն ոչ շնորհիւ կեցեալ, այլ մարդկային իմաստութեամբ, եւ ոչ այնոքիւք², որովք այլ առաքեալքն, զի եւ յայսմիկ իմասցիս զառնն զարուածիւն փայլեալ առանց նշանաց:

Եփր. Արդ, զի մի՛ խափանեսցի նա ի ձեռն մահուն իւրոյ եւ քարոզութենէ անտի, որում կարաւտեալ էր նա, խորհեցաւ նա իջնել ընդ պարիսպն, ոչ զի երթիցէ նա ի քաղաքս հեթանոսաց, ուր ընդունէին զնա, այլ յերուսաղէմ աւելի քան զԴամասկոս սպառնայր նմա: Եւ առեալ զնա աշակերտացն ի զիշերի ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ, որպէս զի առանց կասկածանաց իրքն լինիցին:

Յոհ. Եւ զիա՞րդ. յայնպիսի վշտաց ճողոպրել փախչի՞ արդեւք: Ոչ, այլ զնացեալ լինի անդ՝ ուր մեծապէս թերեւս զնոսա բորբոքէ: Քանզի ստուգապէս հաւատացեալ էր, բայց զի անհաւատալի թուէր այս, վասն այնորիկ յետ բազում աւուրց այս լինի: Եւ զի վայել էր նմա առժամայն ոչ կամել ելանել անտի, բազմաց թերեւս աղաչելով զնա, այլ քանզի իմացաւ, զոր ինչ խորհէինն, յայնժամ յորդորեաց զաշակերտսն, զի իջուցեն զնա: Տե՛ս, զի եւ աշակերտս ունէր վաղավաղկի, զի չէր կարաւտ յումեքէ ուսանիլ³, այլ ուսուցանել: Վասն սորին իրաց եւ գրէ իսկ, թէ «Ազգապետն Արեփա արքայի պահէր զքաղաքն դամասկացոց ունել զիս, եւ կախեցա վանդակաւ եւ փախեալ» (ԺԱ. 22-23):

Եւ եթէ⁴ ոք ասիցէ, թէ՛ ընդէ՞ր եղեւ փախուցեալ, ասեմք, թէ ոչ էր իրքն զանգիտութեան, այլ պահէր զանձն վասն⁵ քարոզութեանն: Զի թէ զանգիտեալ էր, ապա ոչ յերուսաղէմ էր եկեալ, եւ ոչ վաղավաղակի զվարդապետութիւնն յանձն առեալ, այլ թողացուցեալ էր արդեւք զուժգնութիւն⁶, խրատեալ թերեւս կրիւքն Ստեփանոսի: Նա եւ այս իսկ տաւրինական էր, զի ոչ ինչ մեծ վարկանէր զմեռանիլն փութով վասն մեծագոյն շահի քարոզութեանն: Այլ եւ հանդերձ բազում շահիւք զբազումս փրկելով, զճողոպրելն զիտելով՝ առնէր զայն: Եւ այնչափ փոյթ էր այրն, մինչ զի եւ զՔրիստոս ոչ տեսանել կամելով, զոր եւ այնչափ սիրէր եւ յաւէտ քան զամենայն փութայր տեսանել, այլ զայս առնէր, քանզի դեռ ոչ էր աւարտեալ նմա, որ առ մարդկան էր տնաւրէնութիւն: Զի թէ յետ այնչափ ժա-

¹ ԱԲ > գերեք հազարացն

² ԱԲ այնոքիկ

³ ԱԲ ուսանել] յումեքէ ուսանել

⁴ Բ թէ

⁵ Բ > վասն

⁶ Բ զուժգնութիւնն

մանակաց ոչ կամէր լուծանէլ, այլ ասէր, թէ «Կալ մնալ ի մարմնի կարեւոր եւս է վասն ձեր, յոյժ մանաւանդ ի սկզբան վաճառականութեանն մինչդեռ այն ինչ ելեալ էր ի նաւահանգստէն»:

Արդ, բազում ինչ որպէս ասացի եւ մարդկային հանճարով լինել թոյլ տայր Քրիստոս, զի ուսանիցիմք, թէ մարդիկ էին, եւ ոչ յամենայնի¹ շնորհացն էր իրքն: Եւ ե/58թ/թէ ոչ էր այսպէս, ապա իբրեւ զծառս էին պարզաբար անշարժք, այլ բազում ինչ եւ ինքեանք տնաւրինէին մարդկեղէն հնարիւք: Եւ այս ոչ է նուազ քան զմարտիրոսութիւն, յոչ եւ միոյ իրաց հրաժարել վասն բազմաց փրկութեան:

Այլ տե՛ս զաշակերտն, որ պատմէ՝ ոչ պատուասիրաբար պայծառացուցանելով զՊաւղոս, զի միայն զնա արձակեցին եւ ոչ զայլ ոք ընդ նմա, եւ այս յոյժ պատշաճապէս, զի երեւելի լիցի նա առաքելոցն, որ յերուսաղէմ էին: Արդ, նոքա արձակեցին զնա՝ իբրեւ պարտ գոլով նմա փախստեամբն գտանել փրկութիւն, իսկ նա² զներհակն³ առնէր, առ մոլեալսն մանաւանդ դիմելով. այս իսկ է տապանալ եւ Քրիստոսի սիրովն վերստին եռեալ: Յառաջնմէ իսկ աւրէ ծանեաւ զամենայն պատուիրեալսն, զոր լուան առաքեալքն ի Տեառնէ, «Ձի եթէ⁴ ոչ որ բարձցէ զիսաչն եւ եկեսցէ զիս իմ, չէ ինձ արժանի» (Մարթ. ԺԱ. 38): Այլ եւ հեղգագոյն գալն նորա քան զայլ առաքեալսն առաւել յաւժարագոյն արար զնա, զի «Որում բազում թողուցու, ասէ, առաւել սիրեսցէ»: Ձի որչափ յետոյ եկն, այնչափ յոլովագոյն սիրեաց, մինչ զի յառաջին ամին դարանս լինէր արարեալ նմա:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Սմին եւ մեք նմանեսցուք եւ զոգիս ի ձեռս առցուք առ ամենայն վիշտս ձգնել, զի այլս⁵ աւգտեցուցուք, զի ոչ այլ ինչ այսպէս ուրախ առնէ զԱստուած, որպէս զբարեգործելն զայլս, ոչ ի բարեկամս եւեթ, այլ եւ ի⁶ դրժաւդս: Զսոյն զայս իսկ արար Քրիստոս, եւ մեզ⁷ ունիք ի սիրտս ձեր զումեքէ, յորժամ յաղաւթս կայցէք՝ ոչ եւթնիցս⁸

¹ Ա ամենայնի

² ԱԲ զնա

³ Ա զնէրիակն

⁴ Բ թէ

⁵ ԱԲ զայլս

⁶ Բ > ի

⁷ ԱԲ մեզ ետ պատուէր, «թողջիք, ասէ, զոր ինչ ...

⁸ ԱԲ ոչն իւթնիցս

եւ եւթն¹, այլ եւթանասնիցս² եւթն անգամ, որպէս եւ ինքն արար ի խաչին, «Նայր՝ թող դոցա» (Ղուկ ԻԳ, 34) ասելով: Եւ ոչ այսչափ եւեթ, այլ եւ բարիս գործեսցուք առ կարաւտս, եւ մի՛ գաղքատութիւն պատճառեսցուք. զի կինն, որ արկ գերկուս լուծայս³, դատապարտէ զմեզ: Ոչ ինչ գոյ ցրտագոյն, քան թէ քրիստոնեայն զայլս ոչ կեցուցանէ, զի ո՞րք աղքատ քան զՊետրոս, թէ «ճառայ իցես, եւ Ոնեսիմոս, թէ Հիւանդոտ ես, եւ Տիմոթէոս», մի՛ պատճառես սնտոխս. զի որ զանձին եւեթ հոգայ, ոչ կարէ ապրիլ: Լուր զճառս յիմար կուսիցն, եւ որ զարծաթն թաքոյց⁴, զի ոչ վասն վատթար գործոց, այլ զի ոչ բարեգործեցին⁵, դատապարտեցան:

[ԳԼՈՒԽ ԻԱ.]

Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ, ընդելանէր յարել յաշակերփսն (Թ. 26):

Արժան է աստանալը տարակուսել, թէ զիա՞րդ ասէ ի Գաղատացւոց թղթին, թէ «ոչ ել ի յԵրուսաղէմ» առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին, այլ չոգայ՝ յԱրաբիայ՝ եւ դարձեալ դարձայ ի Դամասկոս, եւ յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս: Եւ աստանալը կանխաւ ասէ, թէ «Ել յԵրուսաղէմ»: Եւ անդ ասէ, թէ «Ձայլ որ յառաքելոցն ո՛չ փեսի, բայց միայն զՅակոբոս» (Գղտց. Ա. 19), եւ աստ ասէ, թէ «Բառնարաս ամ գնա առ առաքելսն» (Թ. 27): Նախ⁷ զայս ասացուք, թէ այժմ ոչ զուսանելոյ ինչ յառաքելոցն նշանակէ զնալով առ նոսա, այլ զդարձն եւ զհաւատան իւր ցուցանելոյ: Եւ զի ետես զտէր եւ ի նմանէ կոչեցաւ, եւ ապա ոչ ինչ ընդերկ/59ա/արեալ անդ վասն հակառակութեան հրէիցն, այլ զնացեալ անտի եւ մինչեւ յերիս ամս աւետարանեալ՝ ապա ելանէ յԵրուսաղէմ միայն զի տեսցէ՞ զՊետրոս, այլ ոչ եթէ ուսանել ինչ ի նմանէ, զոր եւ անդ զնոյն ասէ, թէ «ոչ զնացի, զի ուսայց ինչ կամ վերադրեալ եղէց»: Կամ թէ զայս ելանելս անդ ոչ ասէ, այլ թողու: Որպէս զի լինել այսպէս, թէ զնա-

¹ Ա եւեթ] եւ եւթն

² ԱԲ իւթանասնիցս

³ ԱԲ լուծայսն

⁴ ԱԲ թագոյց

⁵ Ա բարեգործեցին

⁶ ԱԲ չոգա

⁷ Բ նա եւ] նախ

⁸ ԱԲ > միայն զի տեսցէ

ցեալ յԱրաբիա՝ ապա եկն ի Դամասկոս, ապա յԵրուսաղէմ, կամ թէ որպէս բազում ուրեք համառուտեն պատմագիրք զբազում ժամանակս ի միասին ժողովելով:

Այլ իբրևս եկն, ասէ, ընդելանէր¹ յարել յաշակերտսն (Թ. 26):

Տե՛ս, արդ զաշակերտսն զՂուկաս, թէ ո՞րպէս ոչ է պատուասէր. զի եւ ոչ գտեսիլն զայն ահագին պատմէ մեզ, յորժամ յափշտակեցաւ Պաւղոս եւ զանճառելիսն լուաւ, այլ թոյլ տայ: Տե՛ս եւ զՊաւղոսի չափաւորութիւնն, զի իբրեւ եկն, ոչ առ առաքեալսն չոգաւ, այլ փութայր առ աշակերտսն ոչ անամաւթաբար մատուցեալ, այլ պարկեշտաբար ամփոփեալ² ի նոցա աւրինակին, զի աշակերտք ամենեքեան կոչեցեալ էին³ յայնժամ վասն բազում առաքինութեանն: Եւ զի պատկերն եւ աւրինակն յայտնի աշակերտաց էր, որ յանուն վարդապետին խաւսէին եւ գործէին զամենայն ինչ: Առ որս փութայր յարել, ասէ, ցածութեամբ, իբրեւ աշակերտ գոլով, որ վարդապետն էր, եւ վասն անակնունելի⁴ իրացն՝ տակաւին չէր կարծեցեալ հաւատարիմ:

Եւ ամենեքեան երկնչէին ի նմանէ (Թ. 26):

Տեսանե՞ս զհա՞րդ տակաւին երկուցեալ լինէին⁵ ի վշտացն, գիտելով զյանդգնութիւն առնն. յայսմանէ ահարկութիւն եւ եռանդնոտ սիրտն Պաւղոսի յայտնի լինի: Ոչ Անանիայէ միայն, կամ որոց ի Դամասկոս սքաչեցեալ էին ընդ նմա, այլ առաւել յայնցանէ, որ յԵրուսաղէմ՝ զարհուրէին ի նմանէ, զի ոչ էր իրքն այն ըստ մարդկային ակնկալութեան:

Եփր. Արդ, իբրեւ ի հրէիցն, որ անդ էին⁶, հալածական էր նա, եւ յաշակերտացն, որ անդ էին, չէր հաւատալի նա: «Զի չհաւարային, ասէ, թէ իցէ աշակերտ: Յայնժամ Բառնարաս, որ յԵրուսաղէմ էին, յամենայն ընկերաց իրոց մարևա կալաւ զձեռանէ նորա եւ ամ առ առաքեալսն» (հմմտ. Թ. 26-27):

Յոհ⁷. Ինձ թուի, զի Բառնաբաս ի վերուստ ի վաղուց բարեկամ էր նորա: Վասն որոյ նմա եւ ոչ այլ ումեք ի նոցանէ ասաց ինչ

¹ Բ ընդելանել

² Բ ամփոփեալ յաշակերտացն

³ Բ լինէին] էին

⁴ ԱԲ ակնունելի] անակնունելի

⁵ ԱԲ լինին

⁶ ԱԲ > որ անդ էին

⁷ Գ > յոհ.

Պաւղոս զիւրոց իրաց, սմին վասն ոչ նա յայլս վստահանայ, այլ ինքն առեալ ածէ զնա: Եւ զի քաղցրաբարոյ էր Բառնաբաս, եւ ի Յովհաննու իրացն եւ ի Ղուկայ¹ վկայելոյն յայտ է: Վասն որոյ եւ ոչ եղեւ երկուցեալ, զի այր փոյթ էր, այլ ած զնա առ առաքեալսն: «Եւ պարմնաց նոցա որպէս ի ճանապարհին ետես զտէր, եւ զի խաւսեցաւ ընդ նմա, եւ զի ի Դամասկոս համարձակեցաւ յանունն² Յիսուսի» (Թ. 27): Այսոքիւք Բառնաբաս կազմէ զնորա հաւատարմութիւնն³, ուստի եւ դիւրահուպ եղեւ առ նոսա Պաւղոս:

Եւ էր ընդ նոսա մտանել եւ ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ յանուն Տեառն (Թ. 27):

Քանզի աշակերտքն երկուցեալք էին ի նմանէ, եւ առաքեալքն հաւատային⁴ նմա, այսու լուծանէ զերկիւղ նոցա՝ համարձակ /59բ/ քարոզելով զանունն Յիսուսի, որով եւ ամենեքեան իսկ ի սա վստահացեալ լինէին: Եւ տե՛ս զփոյթ նորա եւ անդ ի Դամասկոս եւ աստ յԵրուսաղէմ, զայսն նախախնամելով եւ պատրաստելով⁵ գալ ի հաւատս. եւ առժամայն ի սկզբանն ոչ միայն աստուածային⁶ տեսչութեամբն մատակարարէր⁷ զաւետարանն, այլ եւ իւրով փութով, որով եւ ցուցեալ իսկ եղեւ ուժգնութիւն նորա: Զի որպէս ինձ թուի, ոչ ընդ երկարս ինչ առնել նմա ճանապարհս ուրեք յետ կոչմանն⁸, այլ փութով յԵրուսաղէմ հասեալ: Եւ այս տնաւրինաբար լինէր, զի նախ անդ քարոզեսցէ: Ուրեմն եւ դաւաճանութիւնքն առ նա ի Դամասկոս՝ տնաւրինաբար լինէր, որով եւ գալն նորա եղեւ յԵրուսաղէմ, զի այս ամենայն եղեւ եւ տակաւին թերահաւատէին վասն նորա, զի ոչ ոք այսոցիկ ակն ունէր:

Իսկ նա ոչ զանգիտէր եւ ոչ դադարէր ի քարոզելոյ. «Այլ խաւսէր եւ վիճէր ընդ յոյսն» (Թ. 29): Որք յունական լեզուովն խաւսէին: Եւ զայս առնէր յոյժ իմաստութեամբ, զի բուն խորին երբայեցիքն եւ ոչ տեսանել անգամ զնա կամեցան. զորս իբրեւ խոռովեաց, նոքա խոկային սպանանել զնա: Եւ այս ուժգնութեան նորա է նշանակ եւ զաւրա-

¹ ԱԲ յղուկայ] ի ղուկայ

² ԱԲ յանուն

³ ԱԲ հաւատարմութիւն

⁴ ԱԲ չհաւատային] հաւատային

⁵ ԱԲ > եւ պատրաստելով

⁶ ԱԲ > աստուածային

⁷ ԱԲ մատակարարեր

⁸ Բ կոչման

և որ յաղթութեանն, եւ նոցա յոյժ տրտմութեանն, վասն որ ինչ եղեւ¹ նորին իրացն: Ուստի եւ երկուցեալ աշակերտացն, զի մի՛ լինիցի այն, ինչ որ առ Ստեփանոսիւ², «Վասն որոյ իմացեալ, ասէ, եղբարց իջուցին զնա ի Կեսարիա, եւ անտի առաքեցին զնա ի Տարսոն» (Թ. 30): Տե՛ս, զի ոչ ամենայն շնորհիւ լինի, այլ թոյլ տայր նոցա Աստուած բազում իրս տնաւրինել իւրեանց իմաստութեամբն մարդկապէս. զի թէ յիւրում աւուրսն ի Յիսուսի բազում ինչ այսպէս եղեւ, յոյժ մանաւանդ առ սոքաւք, զայս առնէ Աստուած, զի լուծցէ զպատճառս³ պղբերիցն: Արդ, փախուցին զնա մինչեւ ի Տարսուս՝ իբրեւ յիւրում հայրենի գաւառի ի զգուշութիւն նմա, միանգամայն եւ ի քարոզել նմա մինչեւ ի հեռաւորսն:

Բայց եկեղեցին ընդ նմա ամենայն հրեաստան⁴ եւ Սամարիա եւ Գալիլեա⁵ ունէր խաղաղութիւն շինեալ եւ երթեալ զհետ երկիւղի Տեառն (Թ. 31):

Հանդերձեալ ասել, թէ իջեալ Պետրոս յԵրուսաղէմէ շրջեալ առ ամենեքումբք, զի մի՛ առ երկիւղի զայս կարծիցես առնել Պետրոսի, յառաջագոյն ասէ⁶, թէ «Հրեաստան⁷ ունէր զխաղաղութիւն»: Զի յորժամ սաստիկ հալածումնն էր յԵրուսաղէմ էր, եւ նա եւ այլքն, իսկ յորժամ յամենայնի ամրացեալ եւ խաղաղացեալ եղեն եկեղեցիքն, յայնժամ թողուին զԵրուսաղէմ: Արդ, շրջեալ լինէր Պետրոս ուժգին զաւրութեամբ առ ամենեսին. զի թէպէտ խաղաղութիւն ունէր եկեղեցին, այլ ի դէպ կարծէր ոչ ինչ անկարաւտանալ զալատեան նորա:

Գնաց Երուսաղէմէ Պաւղոս, եւ խաղաղութիւն էր, եւ ոչ եւս պատերազմ եւ ոչ խռովութիւն, քանզի ի պետրոսեանց պատկառեալ լինէին, մանաւանդ իբրեւ բազում անգամ եւ սքանչելիս արարեալ եւ ժամանակաւ կացեալս առ նոսա: Իսկ Պաւղոս արհամարհէին, այլեւ մանաւանդ զայրացեալ լինէին նմա: Տե՛ս որպիսի⁸ էր պատերազմն⁸, եւ վաղվաղակի եղեւ խաղաղութիւն: Եւ հայեա, թէ զինչ մեծագոյն

¹ Բ եղեւն

² Ա ստեփանոսի

³ Բ զպատճառ

⁴ ԱԲ հրեաստան

⁵ Ա գաղիլիա

⁶ ԱԲ ասէ զայս] ասէ

⁷ ԱԲ հրեաստան

⁸ ԱԲ պատերազմ

շահ արար /60ա/ մարտն այն, որ առ Ստեփանոսիւ յառաջնմէ: Քանզի սփռեաց ընդ գաւառս գաւառս զարարաւղսն խաղաղութեան, ի Սամարիա՝ որով յամաւթ եղեւ Սիմոն, որպէս եղեւ ի Հրեաստանի¹ իրքն Անանիայ եւ Սափիրայ: Այլ տե՛ս զմեծ ջերմութիւն փութոյ² աշակերտացն. զի թէպէտ խաղաղութիւն էր յոյժ, այլ այսու զփոյթ քարոզութեանն ոչ լքանէին: Եւ այնպիսի էր խաղաղութիւնն, որպէս զի մխիթարութեամբ Հոգւոյն Սրբոյ լի առնէին զամենեսեան: Քանզի Հոգին Սուրբ մխիթարէր զնոսա ի ձեռն սքանչելեացն եւ ի ձեռն գործոցն, եւ ի վերայ այսոցիկ զիւրաքանչիւր ոք ըստ ինքեան երկիւղիւն Աստուծոյ:

Եւ եղև ի շրջելն Պեփրոսի առ ամեներումբք:

Իբրեւ զաւրավար երկնաւոր թագաւորին շրջեալ լինէր ի դատաւորութիւն դասուցն եկեղեցւոյ, տեսանել, թէ ո՞ր մասն իցէ սպառազինեալ, կամ ներկուռ եւ դիւրեալ ըստ բարձրագոյն ճանապարհին, կամ ո՞ր վայելչագոյն եւ զեղեցիկ, կամ ո՞ր իցէ, որ նորին գալստեանն կարաւտանայ: Տեսանե՞ս զփոյթն՝ առ ամենեսեան շրջելով զնա:

Յառաջագոյն յորժամ պարտ էր ընտրել ազառաքեալսն, սա էր առաջին, եւ յորժամ հրապարակախաւսել առ հրեայսն, որք զնոսա արբեալս ասէին, սա դարձեալ, յորժամ զկաղն բժշկել, յորժամ հանդիսաբանել յատենի եւ առ իշխանսն, սա էր յառաջագէմ քան զայլսն, յորժամ առ Անանիայիւ, յորժամ ի ստուերէն³ ամենայն հիւանդութիւնք բժշկէին, սա էր: Տե՛ս եւ յամենայնի իսկ, ուր տագնապ լինէր նեղութեան եւ տնաւրէնութիւն խորհրդոց, սա էր: Իսկ ուր խաղաղութեամբ լի եղեն առ նոսա իրքն՝ նա հասարակաց առ ամենեսեան էր եւ ոչ պահանջէր առաւել պատիւ: Արդ, յորժամ սքանչելիս գործել պարտ էր, նա յառաջեալ լինէր. եւ աստանաւր դարձեալ սա լինէր աշխատեալ նախ եւ ի տառապանս հասեալ:

Իջեալ լինի եւ առ սուրբսն, որ բնակեալ էին ի Լիդիա⁴ (Թ. 32):

Տե՛ս, զի ոչ միայն հաւատացեալք, այլ եւ սուրբք էին ամենեքեան: «Եգիպտ անդ այր մի, որում անուն էր Ենեա⁵, ութամեայ դնէր ի մահիճս անդամա-

¹ ԱԲ հրէաստանի

² ԱԲ փութոյ

³ ԱԲ ի ստուերն

⁴ ԱԲ ի Լիդա

⁵ Բ Ենա

լոյծ» (Թ. 33): *Եւ յառաջ քան զխաւսելն նորա կամ աղաչելն¹՝ ասէ ցնա. «Ենեա², բժշկէ զբեզ Տէր Յիսուս, արի եւ քեզէն³ թաւթափեա⁴՝ զանկողինս քո» (Թ. 34): Իսկ նա բանիս այսմիկ հաւատացեալ՝ եղեւ առողջացեալ, եւ վաղվաղակի յարեաւ: Ընդէ՞ր ոչ սպասեաց Պետրոս հաւատալոյ առնն, եւ ոչ եհարց, թէ կամիցի բժշկել: Վայելչապէս. քանզի մանաւանդ առ ի բազմաց փրկութիւն եւ ի մխիթարութիւն եղեն սքանչելիքս զամենեսեան ածելով ի հաւատս: Եւ լուր իսկ, թէ ո՞րչափ շահ եղեւ:*

Տեսին զնա, ասէ, ամենեքեան, որ բնակեալ էին ի Լիդիա⁵ եւ ի Սարոնա, որք եւ դարձան իսկ ի Տէր (Թ. 35),

քանզի նշանաւոր էր այրն եւ ամենեցուն ծանաւթ:

Բայց տե՛ս եւ զառաւելութիւնն. զի ոչ ի ցաւոց⁶ միայն ազատէին, այլ եւ զառողջութիւն շնորհէին եւ զզաւրութիւն: Եւ քանզի անդ ցայն ժամ ոչ էր տուեալ զարուեստ զաւրութեան, յիրաւի ոչ պահանջէր հաւատս, որպէս եւ ոչ կաղն |60բ| պահանջեցաւ յԵրուսաղէմ: Եւ զի որպէս Քրիստոս ի սկիզբն նշանացն ոչ պահանջէր հաւատս յումեքէ, նոյնպէս եւ ոչ սոքա, եւ Երուսաղէմ յետ սքանչելեացն զփորձ առնլոյն՝ վայելչապէս մատուցելոցն հաւատքն յառաջագոյն ցուցեալ լինէր, զի ասէ իսկ, թէ «Յանցս ճանապարհաց դնէին զհիւանդս, զի յանցանելն Պետրոսի գոնէ հովանի նորա հասցէ ումնք ի սոցանէ⁷» (Ե. 15): Եւ զայս առնէին, զի անդանաւր⁸ յԵրուսաղէմ բազում նշանք եղեն, բայց աստ՝ առաջին այս հանդիպեցաւ, քանզի ի նշանաց ոմանք վասն զայլս առ ինքեանս ի հաւատս կորզելոյ լինէին, եւ ոմանք՝ վասն հաւատացելոցն մխիթարութեան, որպէս եւ հետագայ կարգ պատմութեանս իսկ յայտ առնէ:

Եւ ի Յոպպէ Էր կին ոմն աշակերտեալ, անուն Տարիթա, որ թարգմանեալ կոչի այժմմնիկ (Թ. 36):

Ոչ վայրապար ուսուցանէ մեզ Ղուկաս զանուն կնոջն, այլ զի ցուցցէ, թէ «բերան ունէր, եւ աչս այնպէս ունէր սրահայեացս եւ

¹ Աբ զաղաչել

² Բ ենա

³ Բ քեզեն

⁴ Ա թօթափեայ

⁵ Աբ ի Լիդա

⁶ Աբ ի ցաւոցն

⁷ Բ ի նոցանէ

⁸ Բ անտանօր

զարթեալս¹ որպէս այծեամն²»: Քանզի բազում անուանք տնաւրինաբար³ եղեալ լինէին, որպէս բազում անգամ ասացաք ձեզ: «Սա էր ի բարևար գործովք» (Թ. 36): Ոչ միայն ողորմածութեամբ, այլ եւ բարի գործովք յառաջագոյն, եւ ապա ողորմածութեամբ էր զարդարեալ:

Եւ եղև յաուրսն յայնոսիկ հիւանդանալ նորա եւ մեռանել (Թ. 37):

Ոչ յանկարծակի մեռաւ, այլ հիւանդացաւ, եւ ոչ կոչեցին զՊետրոս մինչեւ վախճանեցաւ: Ոչ կոծ էր անդանաւր⁴ եւ ոչ ողբք, զի տե՛ս ո՛րպէս մաքուր պատմէ մեզ զիրան: «Աուացին գնա, ասէ, եւ եղին ի վերնաբանն», այսինքն՝ զոր ինչ աւրէն⁵ է մեռելոյ, զամենայն արարին եւ ապա առաքեցին:

Եւ էր մերձ Լիդիա ի Յոպպէ. աշակերպացն լուեալ, թէ Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա, աղաչեցին զի մի՛ դանդաղիցի⁶ գալ առ նոսա (Թ. 38):

Ընդէ՞ր սպասեցին մեռանելոյն, եւ ոչ յառաջ քան զմահն աղաչեցին զՊետրոս: Զի անարժան վարկանէին յաղագս այնպիսի իրաց աշխատ առնել զաշակերտան եւ հատուած տալ քարոզութեանն, վասն այսորիկ իսկ եւ ասէ, թէ «Մերձ էր Լիդիա ի Յոպպէ»: Զի իբրեւ վարկաբարազի ինչ զիրան խնդրէին՝ եւ ոչ նախահոգութեամբ, զի վախճանեալ կրին աշակերտուհի էր:

Եւ յարուցեալ Պետրոս եկն առ նոսա (Թ. 39):

Տեսանե՞ս, զի զայլս առաքելով կոչեն, եւ նա եկեալ եղև, ոչ անարգանս համարեցաւ զկոչելն ի ձեռն երկուց արանց: Այնպիսի դիւրահաւանք եւ խոնարհք եղիցուք եւ մեք, մեծ վարդապետութիւն այսոցիկ զիտելով զնեղութիւն: «Եւ իբրև եկն՝ հանին գնա ի վերնաբանն⁷» (Թ. 39): Ոչ աղաչեցին, այլ պարզաբար յորդորեցին, զի զփրկութիւն ի մահուանէն նմա շնորհեսցէ: Եւ ի տունն մտեալ լինէր Պետրոս՝ իբրու իմաստասիրելով յիրան: Եւ տե՛ս ապա՝ որպիսի՞ աւրինակաւ եւ որչափ աճումն եղև աղաչանացն: «Կացին, ասէ, շուրջ

¹ ԱԲ գաղթուցեալս] գաղթեալս

² ԱԲ այծեմն

³ Ա տնաւրինաբար

⁴ Բ անտանօր

⁵ Բ օրեմն

⁶ ԱԲ դանդաղեցի

⁷ ԱԲ ի վերնատանն

զնովաւ այրիքն ամենայն, լային եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս որչափ առնէր նոցա այժմանիկն» (Թ. 39): *Տե՛ս զողորմածութիւնն նորա, որչափ եւ որպիսի իրի լինի յորդորիչ: Յուցանէ/ՅՆա/ին, ասէ, Պետրոսի շուրջ զնովաւ եկեալք¹, զի բազում² էր խոնարհութիւնն նորա. եւ ոչ որպէս մեքս, այլ հաւասարաբար կայր ընդ ամենեսեան:*

Եւ հանեալ արքաքս զամենեսեան Պետրոսի, եղ ծունր կաց յաղաւթս (Թ. 40):

Եւ ընդէ՞ր հանէր արտաքս: Զպտուղն բարեաց առ ցոյց³ ոչ առնելով, նմանելով ի ձեռնն այսոցիկ⁴ իւրում վարդապետին: Նա զի եւ լային իսկ, զի մի՛ շփոթումն եւ զբաղումն արասցեն արտասուս հեղլով եւ խռովելով, զի ուր սքանչելիք իցեն, ոչ է պարտ խռովել ողբովք, մանաւանդ, ուր այսպիսի խորհուրդ լինի կատարեալ: «Եղ ծունր կաց յաղաւթս» (Թ. 40): Նախ ջերմութեամբ եւ խոնարհութեամբ զաղաւթսն տարածեալ, «Դարձաւ ի մարմինն եւ ասէ. Տարիթա, արի կաց յանուն Տևառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ նա երաց զաս իւր, եւ փնտելալ զՊետրոս, նստաւ կանգուն» (Թ. 40): Աստի ուսանիմք, թէ ոչ զամենայն նշանսն այնպէս դիւրութեամբ արարեալ լինէին: Եւ այս լինէր վասն նոցին շահու, զի ոչ միայն այլոց փրկութեան, այլ եւ նոցա փոյթ առնէր Աստուած: Զի ահա որոյ ստուերն զայնչափ բիւհսն⁵ բժշկէր յերուսաղէմ, այժմ որպէս ոչ երբեք արարեալ այնպիսի ինչ առնէր: Այլ է ուրեք, զի եւ հաւատք մատուցելոցն գործակից լինի:

Զայս առաջին մեռեալ յարուցանէր⁶ Պետրոս: Եւ տես, ո՛րպէս զնա իբրեւ ի քնոյ զարթուցանէ, զոր մանրամասն պատմէ՝ առ սակաւ սակաւ նախ զկեանս տուեալ նմա, որով եւ զաչսն եբաց, ապա տեսեալ զնա՝ նստաւ կանգուն: Զայսոսիկ բանիւ. ապա եւ շաւաղամամբ ձեռին զնախկին զաւրութիւնն ընձեռեալ: «Ձեռն եր նմա եւ յարոյց զնա: Կոչեաց զսուրբսն եւ զայրիսն, առաջի կացոյց զնա կենդանի» (Թ. 41): Սրբոցն ի միտթարութիւն, զի առին դարձեալ զքոյրն կենդանի, եւ զի զմեծ սքանչելիսն տեսին, եւ այրեացն ի պաշտպանութիւնն տածողութեան:

Եւ յայտնի եղեւ այս ընդ ամենայն Յոպալ, եւ հաւաքացին բազումք ի Տէր (Թ. 42):

¹ Ա եկեալք] ելեալք

² ԱԲ զբազում

³ ԱԲ ցոյցս

⁴ Բ այսորիկ

⁵ ԱԲ բելրսն] բիւհսն

⁶ ԱԲ յարուցանէ

Տե՛ս, յամենայն տեղիս լինելով զնշանսն եւ զամենեսեան ածելով ի հաւատս: «Եւ եղև արուրս բազումս լինել նմա ի Յոպպե առ ումնն Սիմոնի խաղախորդի» (Թ. 43): Տե՛ս զխոնարհամտութիւնն¹ Պետրոսի, զի ո՛չ առ յարուցեալ կնոջն ագանի, եւ ո՛չ առ այլ ոք ի նշանաւորաց, այլ առ մշակի ումեմն մորթեգործի², որ ազգաւ եւ արուեստիւ ունէր զաղքատութիւն, ի ձեռն ամենայնի ի խոնարհութիւն ածելով զմեզ եւ զնոսա: Ոչ զնուաստագոյնսն յամաւթ արարեալ, եւ ոչ զմեծագոյնսն բարձրացուցեալ հպարտութեամբ: Իսկ աւուրս բազումս լինել անդ, զի կարաւտանային վարդապետութեան նորա, որք նշանաւքն հաւատացին:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ լուարուք աղաչեմ, եւ մի՛ անաւգուտ եւ վնասակար կոծս եւ ողբս յարուցանէք ի վերայ ննջեցելոց: Ասա ինձ, թէ մինչ մեք նստեալ իցեմք, եւ առաքեսցէ թագաւորն եւ կոչեսցէ զոք ի մէնջ առ ինքն, լա՞ւ պարտ է զնա, ի բաց տար. քանի զի եւս առաւել այս կոչումն է ահագին եւ սարսափելի, եւ աւրհնութեանց եւ երգոց արժանաւոր, զի իբրեւ զարեգակն մաքուր /61բ/ պայծառութեամբ հոգին թողեալ զմարմինն իբրեւ յասպարիսէ իմեմնէ³ փութացեալ լինի առ Տէր. մանաւանդ նորակնիքն եւ անմեղութեամբ քաղաքավարեալքն, զորս ոչ է պարտ սգալ՝ որպէս եւ ոչ զծնեալսն, զի եւ այս եւս ծնունդ է քան զայն լաւագոյն՝ առ այլ ոմն լոյս յառաջ եկեալ: Ապա թէ զմեղաւք զնացեալսն ողբասցես, առաւել եւս ես արտասուեցից: Զի թէ ոք քսան ամ ի սնոտիս վաստակէր՝ ողբայր, քանի եւս ողբոց արժանի, որ զամենայն կեանս ի սնոտիս ծախեաց: Այլ թէ կամիմք, կարեմք զայնպիսին ի վշտացն ի բաց յափշտակել, աղաւթս վասն նորա եւ ողորմութիւնս առնելով. շուրջ կացուցուք զայրիս պաղատանս առնել վասն նոցա եւ հաշտեցուցանել զԱստուած. զի վասն նոցին աղաչանաց եւ Պետրոս յարոյց զՏաբիթայն: Ի սոյն եւ մեք վստահասցուք ի շնորհս Աստուծոյ, որ է աւրհնեալ⁴ յաւիտեանս⁵. ամէն⁶:

¹ ԱԲ եւ զհեգուփիւնն] զխոնարհամտութիւնն

² ԱԲ մորթեգործի

³ Բ ումեմնէ] իմեմնէ

⁴ Ա ~ օրհնեալ է

⁵ Ա յաւիտան

⁶ Ա > ամէն

[ԳԼՈՒԽ ԻԲ.]

Այր մի էր ի Կեսարիա, անուն նորա¹ Կոռնելիոս², հարիւրապետ ի գնդէն՝ որ կոչէր իփալիացի, բարեպաշտաւն եւ երկիւղած յԱստուծոյ:

Այրս այս ոչ էր հրեայ. եւ ոչ յայնցանէ՝ որ ընդ աւրինաւքն էին, այլ նախ ընկալեալ էր զմերս բարեպաշտութիւն: Եւ տե՛ս աստանաւր երկուս հաւատացեալս ի հեթանոսաց նմանս միմեանց, զներքինին, որ վերակացուն էր զանձուցն, եւ զԿոռնելիոս³. զերկաքանչիւրս իշխանութեան գոլով: Եւ դիտեա զբազում փոյթն, որ լինէր վասն սոցա. եւ զայն ոչ թէ վասն իշխանութեանցն, ի բաց տար, այլ բարեգործութեանցն, զի վասն այսորիկ իսկ եւ զիշխանութիւնս նոցա եղ Ղուկաս, անդ՝ շտեմարանապետ⁴, եւ աստ՝ հարիւրապետ, զի զարմանալի եւ մեծ ցուցեալ լիցի նոցա⁵ բարեգործութիւնն: Զի սքանչելի այն է, յորժամ ի ճոխութեան եւ ի զաւրեղութեան ոք իցէ եւ այնպիսի լինիցի: Զի այն իսկ էր՝ ներքինւոյն գովութիւն, զի ճանապարհորդելով յայնչափ հեռաւորութիւն, եւ ժամուն անհաճ գոլով այնմ, եւ կառաւք լինելով բերեալ՝ զիրս ընթեռնոյր, եւ զՓիլիպպոս աղաչէր մեկնել, եւ այլն, որ զկնի: Մեծ էր եւ սորայս իսկ ողորմութիւն առնելն եւ աղաւթս հանապազ, եւ արդար եւ սուրբ լինել յայնպիսի իշխանութեան⁶: Վասն այնորիկ զայրն ծանաւթ եւ յայտնի առնէ, զի մի՛ ոք կարծեսցէ, թէ ստէ պատմութիւնս աստուածեղէն⁷ գրոց:

Եւ տես, ուստի՛ լինի սկիզբն կոչման հեթանոսաց, յառնէ բարեպաշտէ եւ արժանի Աստուծոյ երեւեցելոյ ի գործոց իւրոց: Զի թէ այս ամենայն եղեւ, եւ տակաւին գայթակղէին հրեայքն խղճալով ի Պետրոսէ. եթէ չէր այսպէս եղեալ՝ զի՞նչ ոչ լինէր: Քանզի նշանաւոր էր այրն եւ ի նշանաւոր քաղաքի բնակեալ. այլ եւ ի Հրէաս-

¹ ԱԲ > նորա

² ԱԲ կոռնելիոս

³ ԱԲ կոռնելիոս

⁴ Բ շտեմարանապետ

⁵ Բ > նոցա

⁶ ԱԲ իշխանութեանն

⁷ Ա աստուածեղէն

տան է իր քն սկիզբն առեալ լինի եւ անտի յամենայն հեթանոսն տարածեալ:

Ի գնդէ, որ կոչէր ի Կալիպան (Ժ. 1):

Եւ է գունդս այս, զոր այժմիկ նուամերովն կոչեն, այսինքն է՝ թիւ զասուլթեան, «բարեպաշտան, ասէ, Էր եւ երկիւղած յԱստուծոյ» (Ժ. 2): Դնէ ըստ կարգի զբարեգործութիւնս¹ նորա, զի մի՛ կարծիցես վասն իշխան/ՅԶա/ուլթեանն լինել փութոյն զնմանէ: Լուարուք որք ի զինուորութեան էք եւ մաւտակացք թագաւորաց: Բարեպաշտ էր, ասէ, եւ արդար եւ երկիւղած յԱստուծոյ: Այլ թերեւս ասիցէ ոք, թէ հեթանոսք գոլով, սորա եւ ներքինւոյն, ուստի՞ ընկալան զճամբրիտ Աստուածն պաշտել եւ երկնչել ի նմանէ: Ասեմ, կամ զբնական գիտութիւնն ունէին ամբողջ՝ որ բաւական էր արարածովքս զարարին քարոզել, կամ ի ժամանակաց անտի սքանչելեացն՝ որ ի ձեռն Մովսէսի, որ յԵգիպտոս եւ յառաջ, ի յաճախ զարմանալեացն յայտնի եղեւ համբաւ հրաշիցն Աստուծոյ, որում եւ պաշտաւն² նուիրէին սորա: Եւ որ մեծագոյն է սորայս, զի ոչ ինքն եւեթ գոլով աստուածապաշտ, այլ ամենայն տամբն իւրով: Ոչ որպէս մեք, որ յայն փութամբ միայն, զի պաշտաւնեայքն մեր ահիւ եւ երկիւղիւ զամենայն ինչ մեզ առնիցեն, իսկ զի եւ բարեպաշտք եւս իցեն՝ պղերգանամք, եւ զայս ոչ միայն վասն ծառայիցն, այլ եւ վասն տանց մերոց փրկութեան, այլ նա՞ ամենայն տամբն էր արդար, եւ որպէս հայր հասարակաց հոգայր ընդ ամենեցուն, եւ զինուորացն եւս առնէր փոյթ լինել բարէպաշտս⁴:

Եւ ողորմութիւնս բազումս առնէր ի ժողովրդեանն (Ժ. 2):

Դարձեալ եւ աստ ողորմածութեան գովութիւն, որպէս եւ անդ վասն Տաբիթայն, որով եւ սա զկեանս իւր ուղղեալ լինէր: «Եւ յաղաթս կայր, ասէ, առ Աստուած յամենայն ժամ» (Ժ. 2): Եւ ոչ⁵ կարէր վրիպել զնա յաստուածային գործոյ աղաւթիցն ցնորք աշխարհականք. յայտ է, զի մեծ եւ բազում էր փոյթ նորա ի պարապումն աղաւթից:

¹ Բ բարեգործութիւնս

² Բ պաշտոն

³ ԱԲ > մերոց փրկութեան. այլ նա

⁴ Բ բարեպաշտս

⁵ ԱԲ > ոչ

Եփեսոսի փրկարան յայտնապէս յիններորդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ՝ զի մփանէր առ նա եւ ասէր. Կուսնելիէ¹: Եւ նա հայեցեալ ընդ նա զարհուրեցաւ եւ ասէ. Զի՞ է Տէր: Եւ ասէ ցնա. Աղաւթք քո եւ ողորմութիւնք ելին յիշապակաւ առաջի Աստուծոյ (Ժ. 3-4):

Ընդէ՞ր տեսանէր զհրեշտակն: Առ ի ստուգութիւն Պետրոսի, եւ մանաւանդ ոչ վասն նորա միայն, այլ եւ վասն այլոց տկարագունից: Եւ ոչ ընդ քուն երեւի ի նմա հրեշտակն, այլ յարթնութեան ի տուէ յիններորդ ժամու, քանզի եւ այնպէս էր այրն զգուշացեալ միշտ անձին իւրում, մանաւանդ յայնմ² ժամու պարապեալ լինէր ի ցնորից, եւ էր ի հանդարտութեան, եւ յաղաւթս, եւ ի զղմման:

Եւ կոչեաց զնա հրեշտակն եւ ասէ. Կուսնելիէ: Եւ նորա հայեցեալ ի ընդ նա զարհուրեցաւ ընդ³ փեսիլն (հմմտ. Ժ. 3-4):

Յայտ առնէ, թէ նախ ճայնիւ կոչեաց զնա, եւ այնպէս ապա ետես. զի թէ չէր կոչեցեալ՝ եւ ոչ տեսանէր թերեւս: «Եւ ասէ ցնա. Աղաւթք քո եւ ողորմութիւնք ելին յիշապակաւ առաջի Աստուծոյ» (Ժ. 4): Քանզի այսպէս ամենեւին յամենեւեան տարածեալ էր համբաւ բարեաց նորա: Իսկ զի՞նչ այն, թէ «ելին յիշապակաւ»: Այսինքն՝ ելին յիշեցան առաջի Աստուծոյ, քանզի յիշատակին առաջի Աստուծոյ գործք ամենեցուն, ոմանց յիշեցին մեղք հարց նորա առաջի Տեառն, որպէս մեծն Բաբելոն յիշեցաւ, ասէ, առաջի Աստուծոյ տալ նմա զբաժակ ցասմանն Աստուծոյ. եւ ոմանց յիշի գնալն առաջի Աստուծոյ արդարութեամբ՝ որպէս Եզեկիայն: Եւ այս ի ձեռն հրեշտակաց, որք հանեն մատ/62բ/ուցանեն առաջի Աստուծոյ զաղաւթս սրբոցն, որպէս Հռափայլէ զՏուբիթ ասէր, «Մարուցի գլխապակ աղաւթիցն ձերոց առաջի սրբոյն» (Տվր. ԺԲ. 12):

Արդ, երեւեալ հրեշտակն, ոչ վաղվաղակի ասաց Կուսնելիւ, զոր ինչ ասելոցն էր, այլ նախ վերացոյց առ Աստուած զմիտս նորա, զի տեսեամբն իւրով յերկիւղ արկ գնա այլ չափաւորէր զերկիւղն. որչափ զհայցուածս նորա առ ինքն դարձուցանել միայն, եւ ապա ասացելովքն զերկիւղն ելոյժ եւ գովութեամբն ի համարձակութիւն աս, եւ ապա ասէ. «Յիւսի ի Յոպպէ արս⁴ եւ կոչեա զՄիմն՝ որ կոչի Պնպրոս»

¹ ԱԲ կոսնելիէ

² Բ յայն

³ Ա ընտ

⁴ ԱԲ > արս

(Ժ. 5): *Զայս ասաց, զի մի՛ առ այլ ոք երթիցեն¹: Բայց ոչ ի մականուականն միայն, այլ եւ ի տեղւոյն յայտնի առնէր² զայրն:*

Նա մտնալ է, ասէ, առ Սիմոնի ումեմն մշակի, որոյ է փունն մերձ ի ծով (Ժ. 6):

Տեսանէ՞ք, թէ ո՞րպէս զառանձին տեղեաց քաղաքացն առաքեալքն զհետ երթալին, սիրաւղք անապատի գոլով եւ հանդարտութեան: Այլ զիս՞րդ արդեւք, թէ պատահեալ լինէր եւ այլոյ ուրուք Սիմոնի լինել խաղախորդ³: Ահաւասիկ տայ եւ այլ նշան զառ ի ծովուն բնակելն, քանզի այլոյ ուրուք ոչ էր հնար երից նշանացն ի միասին լինել: «Արդ, կոչնա՛» ասէ, եւ ոչ յաւել զքաղցրագոյնն, թէ ընդէ՞ր, զի մի նորին փափաքն լցեալ լքանիցի. այլ թոյլ ետ նմա ի ցանկութիւն սիրոյ եւ ի կարաւտութիւն լսողութեանն⁴ լինեն: Այսպէս եւ ոչ Պետրոսի ասաց զամենայն զնորայսն, այլ յամենայնի ի մասնէ լինին պատմութիւնքն առ նոսա, որպէս զի յարուցանիցէ զլսաւղսն ի⁵ խնդիր իրացն: Այսպէս եւ զՓիլիպպոս կոչէ միայն յանապատն:

Եւ իբրև գնաց հրեշտակն, որ խաւսէր ընդ նմա, կոչեաց յերկուս ի ծառայիցն եւ զինուոր մի բարեպաշտան⁶ ի ծառայից իւրոց, եւ պարմեալ⁷ նոցա զամենայն առաքեաց⁸ ի Յոպալէ (Ժ. 7-8):

Տեսանէ՞ս, զի ոչ վայրապար ասէ զայսոսիկ, այլ զի ցուցցէ մեզ, թէ որ պաշտէին զնա, այնպիսիք էին: Այլ տե՛ս զխոնարհամտութիւն նորա: Ոչ ասաց, թէ կոչեցէք առ իս զՊետրոս, այլ զամենայն ինչ պատմեաց նոցա, որպէս զի նոքա հաւանեցուցեն զնա: Եւ զայս իմաստութեամբ եւ տնաւրինաբար առնէ, զի ոչ պարտ եւ արժան համարի իչխանութեամբ ածել զնա: Սմին վասն զամենայն ինչ պատմէր, զի այնպէս էր այրն չափաւոր, եւ զի մանաւանդ ոչ ինչ էր մեծ շփանալ ի վերայ առն⁹ որ իջեւանեալ էր առ մշակի:

¹ ԱԲ երթիցեն

² Բ առնէր

³ ԱԲ խաղաղորդի

⁴ ԱԲ լսողութեան

⁵ ԱԲ > ի

⁶ Ա բարեպաշտան

⁷ Բ պատմել

⁸ Բ առաքեաց գնոսա

⁹ ԱԲ առնն

Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկեալ նոցա եւ մաւր ի քաղաքն լինել (Ժ. 9):

Վայելչապէս. ընդ մաւտելն նոցա՝ յայնժամ Պետրոս զտեսիլն տեսանէր, զի մի՛ ընդ երկար ի տարակուսանս կացցէ: «Եւ, ասէ, Պետրոս ի քանիսն կալ յաղաթս զվեցերորդ ժամուն» (Ժ. 9): Տե՛ս, թէ՛ ո՛րպէս եւ զժամն իսկ ստուգիւ հաւաքեալ յաւրինէ Հոգին, եւ ոչ կանուխ քան զայն եւ ոչ անազան թողացուցանէ լինել, այլ յորում ժամու եւ զսամարուհին Քրիստոս կոչեաց յանստուեր եւ յամենաճառագայթ ժամուն առ ի խորհուրդ նորոյ փրկութեանս, որ կատարելոց էր առ ազգս ամենայն: Իսկ ի տանիս ելանելն, |ՅՅ| զի առանձինն հանդարտութեամբ լինիցի իբրեւ ի վերնատան: «Քաղեցաւ եւ կամէր ճաշակել» (Ժ. 10): Տե՛ս, զի եւ ոչ քաղցնուլն յաղաւթիցն կասեցոյց¹ ինչ զնա: «Եւ ի պարաստելն նոցա եղև ի վերայ նորա զարմացումն, եւ քնսանէ զերկինս բացեալ» (Ժ. 10-11): Եւ այս մանաւանդ հոգեպէս² եղև առ նմա տեսութիւն, եւ որպէս ասիցէ ոք, թէ՛ «Ի մարմնոյն հոգին վերացեալ եղև, որով քնսանէ զերկինս բացեալ» (Ժ. 11):

Եւ զգորեցունց քրտնոց կախեալ անաւթ ինչ իբրև կրաւոյ մեծի իջեալ նստեալ ի վերայ երկրի, յորում էր ամենայն չորքոպոնիք եւ սողունք երկրի եւ թռչունք երկնից (Ժ. 11-12):

Եփր. Զի՞նչ արդեւք էր այն: Նշանակ էր ամենայն տիեզերաց կոչման³: Եւ քանզի առաքեաց զՊետրոսէ Կոռնէլիոս⁴ ի հեթանոսաց, ի ձեռն տեսեանն, որ եղև ի վերայ նորա՝ յորդորեաց զի մի՛ անարգեսցէ Շմաւոն եւ ոչ երթիցէ, մանաւանդ վասն այլոց եւս հրէիցն, զորոց յետոյ պատմելոց է:

Յոհ. Քանզի այրն⁵ անթլփատ էր եւ ոչ ինչ հաղորդութիւն ունէր ընդ հրէից, եւ հանդերձեալ էին ամենեքեան չարախաւսել զՊետրոս իբրեւ զանցաւոր աւրինացն: Երեւեցաւ նմա ի տեսեանն անաւթ մի⁶ իբրեւ զկտաւ ինչ մեծ զգորեցունց տտնոց կախեալ յերկնից եւ էին ի նմա չորքոտանիք սուրբք եւ անսուրբք:

¹ ԱԲ կասկեցոյց

² ԱԲ հոգեպէս

³ ԱԲ կոչմանս

⁴ Ա կոռնիէղիոս, Բ կոռնելիոս

⁵ ԱԲ այր

⁶ Գ > մի

Եփր. Նիւս. Արդ, կտաւն երեւեալ Պետրոսի՝ էր խորհուրդ Աւետարանին, զանազան կենդանեաւքն զամենայն ազգս զանազան¹ պաշտամամբք յինքն պարունակեալ:

Յոհ². Եւ այլազգ. «կրան»՝ երկիր էր, եւ որ ի նմա էին զազանքն՝ հեթանոսք, ի վերուստ կախեալն՝ զի յԱստուծոյ եղեալ են ամենեքեան, իսկ զանազան ազգ³ անբան կենդանեացն՝ զիւրաքանչիւր բարս եւ զվարս նշանակէր, զի զբանական միտս, զոր առին, յանբանութիւն շրջեցին: «Եւ եղև ձայն առ նա. արի, Պետրոս, զեն⁴ եւ կեր» (Ժ. 13): «Արի», ասէ՝ թերեւս զի ի ծունր իջեալ ետես զտեսիլն: «Ջեն եւ կեր» (Ժ. 13): Ճահողապէս ասացաւ «զեն⁵ եւ կեր», զի վերայ հասանելն կտաւուն ի նմին իսկ ի ժամ քաղցոյն եղեւ: Վասն քարոզութեանն այսպէս յաւրինեալ, զի որ ինչ լինէրն⁶, աստուածային էր: «Ջեն, ասէ, եւ կեր», այսինքն՝ թէ զնոսա եւս որպէս զհրեայս պարտ է քեզ յանձն առնուլ, եւ յանպիտանութենէ առնել պիտանիս եւ կերակրողականս:

Եւ Պետրոս ասէ. Քաւ լիցի, Տէր, զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ (Ժ. 14):

Բագուժ աստ երեւի յանդգնութիւն Պետրոսի, թէ ընդէ՞ր եղեւ Աստուծոյ ընդդիմախաւս⁷: Այլ զայս առնէր Հոգին, զի մի՛ ոք ասիցէ, թէ «Փորձեր գնա Աստուած որպէս զԱրրահամն» (Ծն. ԻԲ. 1): Վասն այսորիկ Պետրոս խաւսեցաւ զայս, եւ ո՛չ ընդդիմախաւս լինելով, զի ոչ վասն ինքեան, որպէս կանխաւ ասացի, այս ամենայն եղեւ, այլ նոցա էր ընդդիմակաց⁸ որ ի նմանէ խղճելոց էին: Եւ տես, թէ զիա՞րդ լինի տնաւրինեալ: «Ոչ երբեք կերեալ եմ, ասէ, այդպիսի» (Դան. ԺԴ. 6) ասէ: Զի ունիցի պատասխանի առ ապստամբաւդան⁹ նախ զտեսիլն, եւ ապա զի ընդդէմ խաւսեցաւ: Եւ ոչ է սքանչելի, զի թէ Պաւղոս յետ այնորիկ անազան ուրեմն թլփատութեան եւ զենման¹⁰ կարաւտացաւ¹¹ վասն /63բ/ նոցա, առաւել յայնժամ ի սկզբան քարոզութեանն

¹ ԱԲ > զանազան

² ԱԲ > յոհ.

³ Բ ազգք

⁴ ԱԲ զէն

⁵ ԱԲ ասացաւ, քէ զէն

⁶ ԱԲ լինէր

⁷ ԱԲ դիմախոս] ընդդիմախաւս

⁸ ԱԲ ընդդիմակայ

⁹ ԱԲ ամբաստանողսն] ապստամբողսն

¹⁰ Ա զէնման

¹¹ Ա կարօտացեա, Բ կարօտացա

պէտք էին այսպիսի տնաւրէնութեան, մինչ դեռ եւս տկարագոյնք էին եւ առ հրէականսն ջերմք: Եւ քանզի առ հեթանոսս առաքեալ լինէր, զի մի՛ կարծիք ինչ տեսիլն թուիցի, եւ չարախաւսեացեն զնմանէ, քաւ լիցի ասաց: «Ձայն եղև առ նա կրկին անգամ. զոր Աստուած սրբեաց, դու մի՛ պիղծ համարիր¹» (Ժ. 15): Եւ թուի այս ընդ նմա գոլ ասացեալ, բայց ամենեւին վասն հրէիցն ասացաւ: Զի թէ գլխաւորն եւ վարդապետն² բանադրեալ եղեւ, զի մի՛ զայն այլ ասիցէ, յոյժ մանաւանդ եւ նոքա³: «Այս եղև երիցս⁴, եւ վերացաւ անաւթն ի յերկինս» (Ժ. 16): Արդ, երիցս կրկնելն⁵, թէ «Զոր Աստուած սրբեաց, դու մի՛ խառնակ համարիր», մկրտութեանն⁶ կոչումն եւ դաւանութիւն Երրորդութեան է:

Եփր. Նիս. Աստուած, որ մաքրէ՝ Հայր: Աստուած, որ սրբէ՝ Որդի: Աստուած, որ զամենայն անմաքուրսն մաքրէ՝ Հոգին Սուրբ: Իսկ ի վերուստ իջանելն անաւթոյն եւ անդրէն վերանալն, յայտնի ցուցիչ է սրբութեանն⁷, որ երիցս խոստովանութեամբն ի Սուրբ Երրորդութիւնն եղեւ ընդհանուր, եւ որք նախ անմաքուրք էին, սրբեցան եւ ընդունելիք եղեն Աստուծոյ մինչեւ յերկրէ յերկինս վերանալ:

Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միփս Պետրոս, թէ զի՞նչ իցէ րեսիլն, զոր երես, ահա արքն առաքեալք ի Կոռնելիէ⁸ հարցին զապարանիցն Միմոնի, կացին առ դրանն, կոչեցին եւ հարցանէին, թէ Միմոն, որ կոչի Պետրոս, ա՞ստ մտեալ իցէ (Ժ. 19-20):

Յոհ.⁹ Յորժամ ինքն առ ինքեան տարակուսեալ լինէր Պետրոս, ի դէպ ժամու հասեալ լինէին արքն՝ լուծանելով զտարակուսութիւնն¹⁰: Քանզի եւ զՅովսէփ վասն Մարիամու թողացոյց Քրիստոս, զի եղիցի զարհուրեալ, եւ ապա առաքեաց¹¹ զհրեշտակն, զի դիւրաւ այնուհետեւ ի հոգին ընկալցի զիրացն պատասխանին յառաջագոյն գոլով ի տարակուսանս: Բայց Պետրոսի ոչ ընդ երկար լինի տարակուսութիւն, զի ի նմին իսկ ժամու հարցանէին, թէ «Պետրոս ա՞ստ մտեալ իցէ»:

¹ Ա պղծեր] պիղծ համարիր + զոր աստուած սրբեաց դու մի պիղծ համարիր

² Բ գվարդապետն

³ ԱԲ սոքա

⁴ Բ երից

⁵ ԱԲ երկնչելն] կրկնելն

⁶ ԱԲ մկրտութեան

⁷ Բ սրբութեան

⁸ Ա Կոռնելիէ, Բ Կոռնելիէ

⁹ Բ > յոհ.

¹⁰ Բ գտարակուսութիւն

¹¹ Ա առաքեացն, Բ առաքեցին

Եւ մինչդեռ Պնփրոս զմքաւ ամէր վասն փելեանն՝ ասէ Տոգին ցնա. Ահաւասիկ արք, ոմանք խնդրեն զքեզ, այլ արի էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա (Ժ. 19-20):

Դարձեալ եւ այս իսկ պատասխանի է Պետրոսի առ աշակերտսն, զի իմասցին, թէ տարկուսեալ եղեւ եւ խրատացաւ յԱստուծոյ առանց խղճի լինել: «Ես առաքեցի» ասէ: Բազում եւ մեծ է իշխանութիւն Հոգւոյն, զի զոր ինչ Աստուած Հայր առնէ, զայն իսկ ասացեալ լինի, թէ Հոգին արար: Իսկ հրեշտակն ոչ այսպէս, այլ յառաջագոյն ասաց «Աղաթք քո եւ ողորմութիւնք ելին առաջի Աստուծոյ» (Ժ. 31), զի ցուցցէ, թէ անդուստ¹ էր առաքեալ: Այլ Հոգին ոչ այսպէս, այլ թէ ես առաքեցի զնոսա: Տեսանե՞ս զմիակամ զմիապատիւ² բնութեան Հոգւոյն զիշխանութիւն:

Եւ իբրեւ էջ Պնփրոս առ նոսա, ասէ. Ահաւասիկ ես եմ, զոր խնդրէքն (Ժ. 21):

Այսպէս պարտ է հաւանել Հոգւոյն՝ պարտս եւ հաւատս միայն³ պահանջելով: Շատ է առ ի նմանէ լսելն միայն, թէ զայս ինչ արա եւ այսմ հաւատա, ամենայնին հաւատալ՝ եւ այլ ինչ աւելի ոչ խնդրել: Իսկ Պետրոս տեսանէ զգինուորսն, յորժամ էջ, եւ ոչ զարհուրեցաւ, այլ յառաջագոյն խոստովան եղեւ, թէ նա ինքն է, զոր խնդրեն: Ապա եւ հարցանէ իսկ զպատճառն. «Զի՞նչ իրք են վասն, որոյ եկիրք» (Ժ. 21), իբրու կամեցեալ զկամս իւր թաքուցանել⁴ մինչեւ նոքա ասասցեն զպատճառս կոչմանն:

Կուռնէլիոս, ասեն, հարիւրապետ՝ այր արդար եւ երկիւղած, վկայեալ յամենայն ազգէն հրէից, հրաման առ⁵ ի հրեշտակէ սրբոյ կոչել զքեզ ի փուն իւր եւ լսել բանս⁶ ի քէն (Ժ. 22):

Ասեն զլաւութիւն առնն, զի հաւանեցուցեն, թէ հրեշտակ երեւեցաւ նմա: Այլ տես, ասեն, եւ դու, զի «արդար եւ երկիւղած» է: Յաւելին եւ զայս, թէ վկայեալ յամենայն ազգէն հրէից: Եւ զիա՞րզ՝ զի նա անթլփատ էր, նոքա վկայէին նմա: Զի ոչ ինչ է ողորմութեան հաւասար: Մեծ է սորայս զաւրութիւն, յորժամ ի մաքուր եւ յարդար

¹ Ա անտուստ

² ԱԲ զմիւս պատիւ] զմիապատիւ

³ ԱԲ ոչ] միայն

⁴ Բ թագուցանել

⁵ Բ հրամանաւ] հրաման առ

⁶ Բ բան

շտեմարանաց հեղեալ լինի. որպէս եւ սորայն առատաբար լինէր ի ժողովրդեանն, որով եւ վկայեալ լինէր ի բարեկրելոցն¹: Տե՛ս ո՛րչափ է ողորմութեանն² զաւրութիւն, որ զՏաբիթայն եւ յառժամայն³ մահուանէն ազատեաց, եւ զսա ի յաւիտենականէն, եւ զըրուսս երկնից եբաց. եւ այնչափ արար⁴ հաւատալ Կոռնէլոս⁵, եւ հրեշտակ երեւեցաւ, եւ Հոգին ներգործեաց, եւ զլուիս առաքելոցն կոչեցաւ, եւ տեսիլ այնպիսի երեւեցաւ: Որչափ էին այլք ոմանք հարիւրապետք եւ թագաւորք, եւ ոչ մի ոք հանդիպեցաւ, որոց սա եղեւ հանդիպեալ:

Կոչեաց գնոսա ի ներքս եւ առ իւր ազոյց (Ժ. 23):

Ձի թէ վաղվաղակի փութացեալ էր ի ճանապարհ ելանել ընդ նոսա, ապա ոչ ժամանէր հիւրընկալութեամբ առ իւր ազուցանել: Այլ զայս առնէր, զի ուսանիմք⁶, թէ վասն այնչափ սաստիկ հրէական զգուշութեանն⁷, որ յառաջագոյն, այժմ ոչ ինչ հոգայ կամ դժուարինս համարի ընդ նոսա խառնիլ, այլ ի ներքս ածեալ եւ հիւրընկալեալ այնուհետեւ համարձակութեամբ նոցա տնակից լինի եւ հետեւաւղ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ դարձեալ հայեա՛ց⁸, զի մեծ է շահ ողորմութեանն⁹, յորժամ յիրաւացի շահից իցէ¹⁰, որպէս աղբիւր¹¹ յստակ եւ ցուրտ եւ բարեհամ, հեշտալի է ի տաւթաժամու: Այս աղբեւր խաղայ ի կեանսն յաւիտենից¹², սա զգետն հրոյ շիջուցանէ, զորդն անքուն մեռուցանէ. որ զսա ունի, ոչ պապակի ի տապոյ գեհենին: Այլ մի առ այս աղբեւր փիճիք եւ ցրդիք եւ նոճիք տնկեսցուք, զի այսպիսին անպտուղ է, աւելորդ խրախտութիւնք, եւ հանդերձից փափկութիւնք ի տեսանել

¹ ԱԲ ի բարեկրելոցն

² Բ ողորմութեան

³ ԱԲ առժամայն

⁴ ԱԲ փոյթ արար] արար

⁵ Ա կոռնէլիու, Բ կոռնէլիու

⁶ ԱԲ ուսանիցիմք] ուսանիմք

⁷ ԱԲ զգուշութեան

⁸ ԱԲ հայեա

⁹ ԱԲ ողորմութեան

¹⁰ Բ շահիցէ] շահից իցէ

¹¹ ԱԲ աղբեւր

¹² Գ յաւիտենից

միայն պատրիչք հեշտասէր աչաց՝ անաւգուտք եւ վնասակարք: Այլ տնկեսցուք ծառս քաջապտուղս ի ձեռս աղքատաց, որոյ ոչ ըստ երկրաւոր ծառոց վրիպակք պատահեն, այլ մանաւանդ յետ մահու տացէ քեզ պտուղ զկեանսն յաւիտենից:

[ԳԼՈՒԽ ԻԳ.]

/64բ/ Եւ ի վաղի անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա, եւ ոմանք յեղբարց անրի, որ ի Յոպպէ Էին, եկին ընդ նմա, եւ ի վաղի անդր մտին ի Կեսարիա (Ժ. 23-24):

Բարևոք յառաջագոյն պատուասիրեալ զարսն իբրեւ զվաստակեալս եւ իւր¹ ընտանեցուցեալ² գայր ընդ նոսա ի կոչն: Իսկ այլոց եղբարց³ գալ ընդ նմա տնաւրինաբար եղեւ, որպէս զի վկայք լինիցին յետ այնորիկ, յորժամ պարտ իցէ պատասխանատրել⁴ Պետրոսի: «Եւ Կուռնելիոս մնայր նոցա» (Ժ. 24): Տե՛ս, թէ ո՛րպէս հաւատաց, թէ ստոյգ եկեսցէ Պետրոս, վասն որոյ եւ զամենայն ինչ պատրաստ առնէր՝ մնալով նմա, այնպէս փոյթ էր այրն յամենայն բարիս: «Առջեալ⁵ եւ զազգաբոհմ իւր եւ զկարևոր բարեկամս» (Ժ. 24): Այս իսկ գործ է բարեկամի աստուածապաշտի, զի առ այնպիսի բարութիւնս հաղորդս արասցէ զկարեւոր բարեկամս: Վայելչապէս զնոսա միայն՝ յորս վստահացեալն էր հանապազ յաղագս այսպիսի իրաց գոլով նմա փոյթ եւ ջան, զի երկնչէր յայլոց ոմանց ընձեռել զիրսն⁶: Բայց տե՛ս ինձ աստանաւր, զի եւ սիրելիքն եւ ազգականքն առ ի նմանէ ընտրեալք էին:

Եւ եղև ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղև նմա Կուռնելիոս, եւ անկեալ առ ուրս նորա երկիր պագանէր (Ժ. 25):

Զայս առնէր նա՝ զայլսն խրատելով ի նոյն, եւ զԱստուծոյ գոհանալով վասն իրացն, եւ զխոնարհութիւնն իւր ցուցանելով, զի թէպէտ եւ հրաման առ կոչել զնա, սակայն անդուստ ի բնէ բազումս էառ բարութիւնս ի բնութեանն⁷: Զի ներքինին միայն աղաչեաց

¹ Բ իւրն

² ԱԲ ընդանեցուցեալ

³ Բ եղբարցն

⁴ Գ պատասխանատրեալ

⁵ Բ կոչեցեալ

⁶ ԱԲ զիրս

⁷ Բ բնութեան

զՓիլիպպոս ելանել նստել ի կառսն, եւ մանաւանդ ոչ զիտելով ո՛ր ոք է, այլ միայն վասն պատմութեան մարգարէին, զոր կամէր լսել: Իսկ սա ընդ առաջ երթայր եւ առ ոտս անկանէր, խոնարհամիտ գոլով բարուք:

Իսկ Պետրոս կանգնեաց զնա եւ ասէ. Յոքն կաց, եւ ես ինքն մարդ եմ (Ժ. 26):

Տեսանե՞ս, թէ ո՛րպէս նախ քան զայլ ինչ առ այս զնոսա խրատէր, ոչ ինչ մեծ յաղագս նորա կարծեալ: «Եւ խաւսելով ընդ նմա Եմուրի ներքս» (Ժ. 27): Եւ զի՞նչ արդեւք էր, զոր խաւսէրն: Զոր ինչ յառաջագոյն Կոռնելիոս արար եւ զոր ինչ առաջի՞ կայր ի գալն իւր խաւսելով: Եմուտ ի ներքս եւ եզիտ անդ ժողովեալ մարդիկ բազում, զի պատրաստ էին լսել նմա:

Եւ ասէ ցնոսա². Դուք ինքնին գիպէք ո՛րպէս անմարթ է առն հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի (Ժ. 28):

Տե՛ս, վաղվաղակի յաղագս Աստուծոյ մարդասիրութեանն³ պատմէ, ցուցանելով, թէ մեծամեծս նոցա շնորհեաց Աստուած բարիս՝ նորա գալովն առ նոսա: Եւ նայեաց⁴, թէ զիա՞րդ միայնգամայն ընդ մեծագոյն բարբառելն եւ խոնարհեալ լինի, զի ոչ ասաց՝ թէ որք չէին արժանի հպելոյ մեզ՝ եկաք առ ձեզ, այլ զի՞նչ, դուք զիտէք, զի Աստուած զայս հրամայեաց, անաւրէն գոլ մերձենալ հրէի առ այլազգի⁵: Եւ զի ոչ էր զայս ասելն սնափառութեամբ, նոցունց վկայութեամբ⁶ կնքէ զբանն: Ապա զի մի՛ ոք նմա շնորհ ունիցի ընդ այնմ, ցուցանէ աստուածային միայն հրաման գոլ զգալուստն իւր, այսինքն՝ /65ա/ զի Աստուած առաքեաց: «Եւ ինձ Աստուած եցոյց մի՛ զոր խառնակ կամ անսորբ ասել ի մարդկանէ» (Ժ. 28): Եւ զի մի՛ թուիցի⁷ բանն առ երեսս Կոռնելու ասացեալ, ոչ եւ զմի՞⁸ ոք ի մարդկանէ անսուրբ ասել ասաց. յայտ է, զի զահաւոր անուամբն Աստուծոյ սրբեալսն, որպէս կանխաւ ցուցաք:

¹ Բ առաջին

² Բ ցնա

³ Բ մարդասիրութեան

⁴ Ա նայեաց

⁵ Ա այլազգի

⁶ ԱԲ > նոցունց վկայութեամբ

⁷ ԱԲ թուեցի

⁸ ԱԲ մի

Վասն այսորիկ եւ ատանց ընդ բանս ինչ ամելոյ եկի կոչեցեալ (Ժ. 29):

Զայս ասէ, զի մի՛ անաւրէնութիւն կարծեսցեն զհպելն ի նոսա վասն առաջին բանիցն, զի ըստ այնմ ոչ միայն չյարել, այլ եւ ոչ գալ բնաւ առ նոսա՝ ավրէն էր: «Բայց արդ հարցանեմ, ասէ, յի՞նչ պէտքս կոչեցէք զիս» (Ժ. 29): Եւ զի զիտէր զամենայն Պետրոս՝ ուսեալ ի Հոգւոյն, յայտ է, լուաւ եւ առ ի զինուորացն, բայց կամի յառաջագոյն զնոսա խոստովանեցուցանել, եւ ի նոցին բանից զնոսա պարտականս առնել հաւատալոյ: Զի՞նչ ապա եւ Կուռնէլիոս. ազատեալ ամենայնիւ զբանն ի խաբէութենէ եւ լցեալ խոնարհութեամբ, ուստի եւ յամենայն կողմանց արժանի աստուածային իրացն ցուցեալ լինի: Ոչ ասաց, թէ որպէս զինուորքն պատմեցին քեզ, այլ դարձեալ խոնարհութեամբ պատմէ զամենայն:

Յառաջ քան զչորս ատուրս, ասէ, մինչև ցայս ժամ, կայի յաղաթս յիններորդ ժամուն ի քան իմուն, եւ ահա այր մի եկաց առաջի իմ ի հանդերձս սպիտակս (Ժ. 30):

Զի՞նչ է, զոր ասէս «զիններորդ ժամուն»: Ինձ թուի, թէ ժամանակս եւ ժամս սահմանեալ էր նա անձին իւրում աղաւթելոյ: Այսպէս փութայր յաղաւթս ստուգագոյն եւ բարի վարուք, նա եւ աւուրս ոմանս, եւ վասն այսորիկ ասէ, թէ «Սկսեալ յառաջ քան զչորս ատուրս մինչև ցայս ժամ» (Ժ. 30): Տեսանե՞ս ո՛րչափ է աղաւթից գաւրութիւն, զի յորժամ աճեաց բնական բարին, յայնժամ հրեշտակն եկեալ երեւէր նմա: Իսկ երեւումն հրեշտակին թուի ինձ յերկրորդում աւուր աղաւթիցն լինել, որպէս զի լինել այսպէս՝ ավր երկրորդ, եւ յերրորդում աւուրն առ Պետրոս առաքէր, եւ ի չորրորդումն եկն նա: Եւ ոչ ասէ, թէ հրեշտակ երեւեցաւ ինձ, այլ այր մի, զի այնպէս խոնարհամիտ եւ առանց պարծանաց էր հոգի նորա: Իսկ պայծառ հանդերձիւք երեւեալ հրեշտակն, զի զկեանս աւետարանէր:

Եւ ասէ. Կուռնէլիէ, լսելի եղեն աղաթք քո, եւ ողորմութիւնք քո ելին յիշարակեցան առաջի Աստուծոյ: Եւ արդ յղեա ի Յոպպէ եւ կոչեա՛¹ գՄիմոն՝ որ կոչոցեալն է Պետրոս, նա մտնալ է ի քուն Սիմոնի խաղախորդի մերձ ի ծով, որ եկեսցէ եւ խաւսեսցի ընդ քեզ: Եւ ես իսկ եւ իսկ յղեցի առ քեզ, եւ դու բարոք արարեր, զի եկիր.

¹ Գ կոչեա

արդ մեր ամեններեանքն առաջի Աստուծոյ կամք լսել զամենայն, գոր հրամայեալ է քեզ ի Տեառնէ (Ժ. 31-33):

Տեսանէ՞ս, զի վասն այնորիկ հարցանէր Պետրոս, թէ յինչ պէտս կոչեցէք զիս, զի զբանս զայս ասասցէ նա, թէ «Առաջի Աստուծոյ կամք լսել զամենայն հրամայեալսն քեզ ի Տեառնէ» (Ժ. 33): Զի այնչափ մեծ էր նորա հաւատքն եւ բնական բարին, զի անդէն գիտացեալ, թէ ոչ ինչ մարդկային ասաց Պետրոս, թէ «Աստուած եցոյց ինձ», ըստ որում եւ ինքն ասէ, թէ «Առաջի Աստուծոյ կամք լսել» (Ժ. 33), եւ ոչ առաջի մարդոյ: Այնպէս երկիւղիւ պարտ է ունկնդիր լին |65բ| ել ծառայից Աստուծոյ: Տեսանէ՞ք, թէ որպէս էր այրն պատշաճ իմաստութեամբ զարթուցեալ, եւ արժանի էր այսմ ամենայն բարեաց: «Երաց Պետրոս գրեթէ իմ» (Ժ. 34): Յայտ է, զի եւ լռութեամբն ուսուցանէր:

Եւ ասէ. ճշմարտութեամբ հասեալ եմ¹, զի ոչ գոյ ակնառութիւն առաջի Աստուծոյ, այլ յամենայն ազգս, որ երկնչին ի նմանէ եւ գործեն զարդարութիւն, ընդունելի է նմա (Ժ. 34-35):

Եփր. Զի եւ ի մէջ հեթանոսաց՝ որ թուէին մեզ, թէ անարգանք² են, եթէ գտանիցի ոք, որ պաշտէ զնա ճշմարտութեամբ, ընդունելի է առաջի նորա:

Յոհ. Զսոյն զայս եւ Պաւղոս ասէ, թէ «Փառք եւ պարիս ամենայնի, որ գործէ զբարի³, եթէ հրեայ եւ եթէ հեթանոս» (Տոմ. Ը. 11): Եւ զոր ասէս այս ինչ է, թէ այժմ ամենայն ոք, որ գործէ զարդարութիւն, ընդունելի է նմա, եթէ ի պարսիկս իցէ կամ ի պարթեւս կամ ի մարս կամ յայլս, ի տարածել եւ յառատանալ հաւատոյս՝ ընդունելի են նմա: Որպէս զներքինին եթեովպացի⁴ ո՛չ անտես արար⁵, եւ ո՛չ զաւագակն եւ ո՛չ զպոռնիկն, յոյժ մանաւանդ, որ զարդարութիւն գործեն եւ կամակից փրկութեան իւրեանց լինին ամենեւին:

Այլ զի՞նչ իցէ, ասեն, եթէ իցեն ոմանք հեզամիտք եւ հանդարտք եւ ոչ իցեն կամեցաւդք բարձրագունիցն, այսինքն՝ ի Քրիստոս հաւատոցն: Աւաղիկ բաւական պատճառ կորստեան է, զոր ասեսդ, թէ «ոչ կամին զբարձրագոյնն»: Եւ այլազգ. այնպիսոյն⁶ հեզամիտ ոչ

¹ ԱԲ > հասեալ եմ

² ԱԲ անարգք

³ Բ զբարին

⁴ ԱԲ եթովպացի

⁵ Ա + ապա յաղագս աստուածապաշտիցն, զիա՞րդ ասիցէ ոք անտես առնել, զի նա ոչ զոք ի բաց մերժէ յիւրմէ. զի թէ զկախարդս ոչ արար անտես

⁶ Բ այնպիսոյն

ասեմք, այլ այնմ, որ զարդարութիւն գործէ եւ յամենայնի անբիծ է եւ առաքինի, եւ զԱստուծոյ երկիւղն ունիցի որպէս պարտն է: Եւ զայնպիսին Աստուած միայն գիտէ, որոց գովութիւնն¹ ոչ ի մարդկանէ, այլ յԱստուծոյ է, որպիսի եւ Կուռնէլիոս էր հաճոյ եւ ընդունելի Աստուծոյ, եւ ի մի անգամ լրոյն այնպիսի կենաց եհաս: Այլ եւ այժմ եթէ հրեշտակ եկեալ լինէր, ասեն, թերեւս այնպէս իւրաքանչիւր ոք հաւատայր: Ասեմք, թէ եւ այժմ յոյժ մեծագոյն նշանք եւ սքանչելիք լինին եւ աստուածային յայտնութիւնք, բայց ոչ ոք զգաստանայ: «Որ գործն գարդարութիւն» (Ժ. 35) ասէ: «Արդարութիւն»՝ զամենայն առաքինութիւնս ասէ: Եւ տես, թէ ո՞րպէս ամփոփէ զխորհուրդս նոցա, զի մի՛ թուիցին իբրու ի կարգէ բազմաց գերազանցեալս գոյ: Ապա սկսանելով զվարդապետութիւնն՝ պահէ զազնուականութիւն հրէիցն:

Զրանն, ասէ, առաքեաց որդուցն Իսրայէլի (Ժ. 36):

Միթէ ակն առնելո՞վ, յորոց մերձ պատահեցան հրեայքն՝ քաւ լիցի. զի նախ քան զայս ասաց, թէ «Ամենայն որ, որ երկնքի ի նման է գործէ գարդարութիւն, ընդունելի է նմա» (Ժ. 35): Այլ զի ասելովն ի սկզբանն, թէ «Զրանն առաքեաց որդուցն Իսրայէլի», նախ զնոսա հաւանեցուցէ, որք ի թլփատութենէ անտի եկեալ էին ընդ նմա՝ իբրեւ պատասխանի առնելով նոցա: Սմին վասն եւ Կուռնէլիոս հարկ է ասել, զոր ինչ կամէր, զի հանդերձեալ էր նոցա իսկ ընձեռել զբանն քարոզութեան, վասն որոյ վաղվաղակի ասէ, զոր «առաքեաց որդուցն Իսրայէլի»: Եւ այսու ետ հրէիցն զմեծն եւ զառաջին պատիւն, զոր եւ Քրիստոս ասէր. «Ոչ ուրեք առաքեաց, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս փանն Իսրայէլի» (Մաթ. Ժ. 6):

Այլ հայե/66ա/աց ի խորագոյն դիտումն ասացելոցս: «Զրանն, ասէ, առաքեաց աւերարանն խաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. նա է ամենայնի Տէր» (Ժ. 36): Նախ յաղագս անսկիզբն ծննդեանն, որ ի Հաւրէ, խաւսի, եւ էական բնութեանն, ըստ այնմ. «Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Յովհ. Ա. 1). եւ ապա վասն տնաւրինական կարգացն: Ուստի եւ զնոյն անուանս ի մէջ բերէ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: Եւ ցուցանէ զնա զոյգ եւ մի Տէր ամենեցուն գոլով: Զայսոսիկ յոյժ բարձրապէս խաւսի, քանզի առ հոգւոյ բարձրագունի էր բանն, եւ զամենայն ջերմապէս ընդունողի, եւ ոչ

¹ Աբ գովութիւն

որպէս հրեայքն: Ապա կազմէ, թէ ո՞րպէս է Տէր ամենեցուն: «Ձոր առաքեաց, ասէ, աւերարանելով»: Ոչ դատապարտութիւն եւ պարտս ծառայաբար ի վերայ հասուցանելով, այլ տիրաբար աւետիս կենաց եւ խաղաղութիւն ընդ Աստուծոյ տալով՝ «յԱստուծոյ, ասէ, առաքեալ եղև»:

Ապա եւ կազմէ զնոյն յայնցանէ, զոր ինչ գործեաց յընդհանուր Հրեաստան, որոց եւ զնոսին իսկ ածէ վկայս ասելով. «Դուք ինքնին զիւրք գրանն, որ եղև ընդ ամենայն հրեաստան» (Ժ. 37): Ոչ ասաց, թէ զիտէք զՅիսուս, զի ոչ զիտէին, այլ «գրանն» ասէ, այսինքն՝ զգործսն մեծամեծս զառ ի նմանէ արարեալսն եւ ասացեալս, զի աստուածային էր եւ ոչ մարդկային, զի նոքին իսկ վկայէին վասն նորա, թէ Որդի Աստուծոյ է:

Սկսեալ ի Գալիլիէ յեւր մկրտութեանն¹ Յովհաննու (Ժ. 37):

Ապա եւ յայսմանէ ստուգէ՝ զոր քարոզեաց, ասէ, Յովհաննէս, իբրեւ թէ վասն նորա եկեալ ի մկրտութիւն, զի ամենեցուն զնա ուսուցէ, թէ սա է Որդին Աստուծոյ: Ասացեալ զուղղութիւնս գործոցն Յիսուսի, այսինքն՝ աւետարանել զխաղաղութիւն, դարձեալ վասն նորին ասէ. «ԶՅիսուս, որ ի Նազարեթ» (Ժ. 38): Եւ քաղաքին եւս անուամբն² հաստատէ զբանն: «Ձոր աւծն Աստուած հոգով Սրբով եւ զարութեամբ» (Ժ. 38): Եւ այս ուստի՞ իցէ յայտ. նախ ի բարութեանցն, զոր արար, ապա ի բժշկութեանցն եւ ի բազում զաւրութեանցն, որով եւ բանասարկուին յաղթեաց:

Որ շրջեցաւ բարի առնել եւ բժշկել զամենայն ընթոնեալսն ի սափանայլ (Ժ. 38):

Աստուատ ցուցանէ զբազում կուրութիւնս եւ խաւարմունս՝ դիւական գոլ, եւ խեղութիւնս մարմնոց առ ի նմանէ լիեալս: Որպէս Բրիստոս ասէր, թէ «Մարդասպան էր ի սկիզբանէ» (Յովհ. Ը. 44), եւ թէ «Նապեաց սափանայ» (Ղուկ. ԺԳ. 16), եւ թէ «Նամրդ եւ խուլ այս՝ եւ ի դմանէ» (Մարթ. Թ. 24): Արդ, զայս ամենայն զաւրեղապէս գործեաց: Զի Աստուած էր ընդ նմա: Զոր եւ Նիկողեմոս ասէր. «Գիտեմք, զի յԱստուծոյ եկեալ ես, զի ոչ որ կարէ գայդ նշանս առնել, գոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա» (Յովհ. Գ. 2):

¹ Աբ մկրտութեան

² Բ անուամբ

Արդ, կամի ցուցանել իբրեւ ի Հաւրէ զամենայնն եղեալ ըստ տնաւրէնութեանն, զոր եւ ինքն Քրիստոս ի բազում տեղիս յայտ առնէր զՀաւր գործակցութիւնն¹:

Եւ մեր եմք վկայք ամենայնի, զոր արար յերկրին Նրեաստանի եւ յերուսաղէմ (Ժ. 39):

Զի թէ զնոսա նախ կոչեաց զվկայս եղելոցն ի Քրիստոսէ, դուք ինքնին գիտէք ասելով զբանն, որ եղեւ, յոյժ մանաւանդ զինքեանս ի ճահ ածէ վկայս: Եւ դուք էք, ասէ, վկայք եւ մեք: Եւ յորժամ եցոյց, թէ յԱստուծոյ եղեւ առաքեալ եւ Աստուած էր, ապա ի վերայ ածէ, թէ «սպանաւ»: Տեսանե՞ս, զի ոչ ուրեք թաքուցանեն² զխաչն, այլ /65բ/ յետ այլոցն ամենայնի՝ եւ զեղանակն ասէ զխաչելութեանն: «Զոր եւ սպանին, ասէ, կախեալ զփայտէ, գնա Աստուած յարոյց յերրորդ³ աւուր եւ եր նմա⁴ յայտնի լինել ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ» (Ժ. 39-41): Որպէս նախ քան զայս՝ զգործան Քրիստոսի ի Հայր վերաբերեաց, այսպէս եւ զայն ասէ, թէ Աստուած յարոյց զնա, եւ թէ մեզ յայտնի եղեւ ընտրելոցս յԱստուծոյ, եւ սակայն Քրիստոս զնոսա ընտրեաց, բայց եւ զայն իսկ յԱստուած վերադրէ, զի այն իսկ էր ամենայն բարեացն զլուխ, հաւատալ, թէ յԱստուծոյ Հաւրէ եղեւ ամենայնն:

Որք կերաք, ասէ, եւ արբաք ընդ նմա յեր յարութեան նորա ի մեռելոց (Ժ. 41):

Տեսանէ՞ք զայս իսկ հաւաստի նշան ի հաստատութիւն յարութեան տուեալ: Եւ ընդէ՞ր, ասեն, յարուցեալ՝ նշանս ոչ արար, այլ միայն եկեր եւ արբ: Քանզի մեծ նշան իսկ յարութիւնն⁵ էր, ինքն զինքն յարուցեալ, եւ ոչ ինչ չէր հնար լինել քան զնա մեծագոյն, այլ ուտելն եւ ըմպելն⁶ զյարութիւնն⁷ ստուգէր: «Եւ պարտիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն դնել, թէ նա է սահմանեալ յԱստուծոյ դաբաւոր կենդանեաց եւ մեռելոց» (Ժ. 42): Բարեւք եւ ի դէպ հանէ զլսաւզան ի բարձրագոյնսն, եւ ցուցանէ զամենակալ տէրութիւնն Քրիստոսի,

¹ Աբ գործակցութիւն

² Աբ թագուցանեն

³ Աբ յերկրորդ] յերրորդ

⁴ Աբ յետ] ետ

⁵ Բ յարութիւն

⁶ Աբ ըմբելն

⁷ Աբ զյարութիւն

բայց եւ զահագիւնսն¹ յաւելլու զգատաստանն: Ապա եւ զառ ի մարգարէիցն վկայութիւնն² ի վերայ ածէ. «Նմա, ասէ, ամենայն մարգարեր վկայն» (Ժ. 43): Զի մի՛ ունիցին պատճառս յանգիտութեան³ անկանել, եւ ուժգնագոյն ի մարգարէիցն կազմէ զբանն, զի վասն նոցա մեծամեծ⁴ կարծիս ունէին:

Եւ յորժամ երկիւղիւն⁵ սասանեցոյց, յայնժամ ի վերայ էած զներումն թողութեանն: Եւ զայս ոչ յիւրմէ, այլ առ ի մարգարէիցն զասացեալսն. «Թողութիւն մնոցաց առնուլ անուամբ նորա ամենայն յուսացւոց ի նա» (Ժ. 43): Այս իսկ է նշան, ասէ, թէ ճշմարիտ Աստուած եւ յԱստուծոյ էր Քրիստոս, եւ ի հանդերձեալ լինելոյն յետ այսորիկ: Վասն այսորիկ եւ զմարգարէսն ածէ աստանաւր ի մէջ, ըստ որում եւ Եսայի ասէ. «Նա զմնդս մեր բառնայ եւ վասն մեր չարչարի» (Ես. ԾԳ. 4), եւ Երեմիա⁶ «Քաւիչ եղլց անարեւնութեանց⁷ նոցա, եւ զմնդս նոցա ոչ եւս յիշեցից» (Երմ. ԺԱ. 34), զնոյն եւ ամենեքեան իսկ:

Եփր. Արղ, մինչդեռ Պետրոս մատուցեալ պատմէր զքարոզութենէ Տեառն մերոյ, թէ ուստի եւ ուր սկսաւ եւ ուր կատարեաց ի ձեռն խաչին, եւ վասն յարութեան նորա, եւ վասն քառասուն աւուրն, զի կաց մնաց եւ ապա վերացաւ, եւ զի վկայ են նմա ամենայն մարգարէքն, եւ զի քաւի ամենայն, որ միանգամ հաւատայ եւ մկրտի յանուն նորա, ահա անդէն Հոգին Սուրբ եկն ի ձեռն լեզուաց եւ բնակեցաւ ի վերայ ամենայն լսողաց բանին, եւ սկսան խաւսել նոքա ի լեզուս լեզուս, որպէս եւ կարգ պատմութեանս ցուցանէ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Բայց արդ, որ ի ձեռն հաւատոց թողութեանս այսմիկ արժանացաք, եւ քաւեալք հոգիւրնկալք եղաք՝ գիտելով զմեծութիւն պարգեւացն Աստուծոյ, մի՛ վատթար զնացիւք թշնամանեսցուք զԱստուած, զի ոչ վասն այնորիկ թողու զմեղս, զի համարձակեսցուք ի չարիս, այլ զի դարցուք |Յճա| եւ լաւագոյնք լիցուք վասն մարդասիրութեան նորա: Արղ, մի զբարերարութիւնն⁸ պատճառս

¹ Բ գյաիագիւնսն

² Բ վկայութիւն

³ ԱԲ յանգիտութիւն

⁴ Բ մեծամեծս

⁵ Բ երկիւղն

⁶ ԱԲ Երեմիայ

⁷ ԱԲ > անարեւնութեանց

⁸ Բ զբարերարութիւն

չարի ցուցցուք՝ զներելովն¹ եւ զերկայնամտութեամբն Աստուծոյ արհամարհելով: Եւ այս առ խորհրդազգածսն, իսկ երախայք եւ չեւ եւս խորհրդազգածքն փութասցին հասանել մկրտութեանն² շնորհի եւ մի՛ յապաղել, զի մի՛ յանկարծադէպ ինչ վրիպակաւ տուժեսցին զմեծ պարգեւսն:

[ԳԼՈՒԽ ԻԴ.]

Եւ մինչդեռ խաւեր Պետրոս գրանս գայս, հանգեաւ Նոզին Սուրբ ի վերայ ամենեցուն, որ լսէին գրանն (Ժ. 44):

Յոհ.³ Տե՛ս զԱստուծոյ տնաւրէնութիւնն, զի ոչ ետ աւարտել բանին, եւ ոչ հրամանաւ Պետրոսի լինել մկրտութեանն⁴: Այլ քանզի լսաւդքն զիւրեանց զմիտսն⁵ ցուցին սքանչելի գոլով, եւ վարդապետութեանն⁶ սկիզբնն⁷ եղեւ, եւ հաւատացին, թէ թողութիւն կայ մեղաց, յայնժամ ի վերայ եկն Հոգին: Եւ այս իսկ լինէր յառաջագոյն տնաւրինաբար առ ի պատասխանի⁸ ունել⁹ Պետրոսի: Եւ ոչ միայն Հոգին եկն ի վերայ, այլ եւ լեզուաւք եւս խաւսէին: Վասն որոյ «Չարմացան որք ի թլփապութենէ անփի հաւաքացեալքն եկեալ էին ընդ Պետրոսի, զի եւ ի հեթանոսս պարգևք Նոզոյն Սրբոյ զեղոյին, քանզի լսէին ի նոցանէ խաւսել լեզուս եւ մեծացուցանել զԱստուծոյ» (Ժ. 45-46): Տե՛ս, ոչ ասէ, թէ զարմացաւ Պետրոս, այլ որք¹⁰ ի թլփատութենէն եկեալք էին ընդ նմա, վասն զի նա գիտէր զինչ լինելոցն էր: Այլ նոքա ընդ այն իսկ մանաւանդ զարմանային, թէ «Սորա գիա՞րդ գՆոզին ընկալան»: Զի յորժամ լուան յետոյ, որք ի Հրէաստանն էին, թէ հեթանոսք հաւատացին, ոչ¹¹ զարմացան, այլ այժմ յորժամ զհոգին շնորհեաց նոցա Աստուած:

Իսկ Պետրոս կանխագոյն եղեւ զարմացեալ, յորժամ գտեսին ետես, վասն որոյ եւ ասէր. «Ինձ եցոյց Աստուած՝ ոչ զոր անսուրբ ասել ի

¹ Բ գներելով

² ԱԲ մկրտութեան

³ ԱԲ > յոհ.

⁴ ԱԲ մկրտութեան

⁵ Բ միտսն

⁶ Բ վարդապետութեան

⁷ Բ սկիզբն

⁸ ԱԲ ի պատասխանին

⁹ Բ առնել] ունել

¹⁰ Բ որք] որք

¹¹ Ա եւ ոչ] ոչ

մարդկանն» (Ժ. 28). քանզի ի վերուստ գիտէր զայս, եւ յառաջ կազմէր զբանն, զի հեթանոսք այնուհետեւ ոչ էին հեթանոսք ի հաւատալն: Բայց ոչ ինչ են զարմանք այն, զի նախ քան զմկրտութիւնն առին զՀոգին: Յուցանէ եւ Պետրոս, թէ ի մէնջ այս ինչ ոչ եղեւ, զի ոչ որպէս այլքն եղեն նոքա մկրտեալք, այլ բազմապատիկ լաւագոյնք: Վասն այսորիկ այս ամենայն լինէր, զի երեւեսցի, թէ Աստուած էր, որ առնէրն: Զի ի մեծութենէ եղելոցն հաւանեսցին լուել խղճեալքն ի Պետրոսէ, եւ մի՛ ունիցին ինչ ասել վասն հաւատացեալ հեթանոսաց, այլ հաւասարս ինքեանց զնոսա համարեսցին: Զի թէ եւ¹ ի Կեսարիա եւ յԵրուսաղէմ յետ այնչափ գործոց յերկբայութիւն անկանէին, զի²նչ ապա կրէին, թէ այնպիսի գերազանցութեամբ ոչ էին եղեալ իրքն:

Ուստի եւ Պետրոս առեալ պատճառս² դարձաւ ի թլփատեալսն անդ, որ ընդ նմայն էին: «Պարասխան եր եւ ասէ ցնոսա³. Միթէ զօրն որ արգելու կարիցէ առ ի չմկրտել⁴ զնոսա, որք եւ զՆոգին Սուրբ ընկալան որպէս եւ մնք» (Ժ. 47): Տե՛ս, ո՞ւր⁵ վերացոյց զբանն, քանզի ասելովն՝ «Միթէ զօրն որ արգելու», յայտ արար, թէ յոյժ զնոյն⁶ կամէր: Եւ այսպիսի մտաւք եւ բանիւք սպառնացեալ լինի արգելողացն եւ ասողացն, թէ չէր պարտ այսմիկ լինել: /67բ/ «Ամենայն ինչ եղև», ասէ, այսինքն՝ որ կարեւորն էր եւ մեծն, զոր եւ մեք մկրտեալ եմք, ապա զփոքրս ո՞ւր արգելուցու: «Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի» (Ժ. 48): Յետ պատասխանի տալոյն ապա հրամայեաց նոցա մկրտել, խրատելով զնոսա, որ եկեալ էին՝ իրացն վճարմամբ, քանզի զարմացմամբ զայրացեալ էին հրեայքն: Վասն այնորիկ յառաջագոյն տայ պատասխանի, մանաւանդ⁷ իրացն աղաղակելով, ոչ լեզուաւքն միայն, զոր խաւսէին, այլ զի եւ յառաջ քան զմկրտութիւնն⁸ ընկալան զՀոգին՝ որ գուշակէր ժողովրդեանն հրէից, թէ յԱստուծոյ եղեւ կոչումն հեթանոսաց:

Յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ (Ժ. 48):

¹ Բ > եւ

² Բ պատճառ

³ ԱԲ > եւ ասէ ցնոսա

⁴ ԱԲ չմկրտելոյ

⁵ ԱԲ թէ ուր] ուր

⁶ ԱԲ զայն] զնոյն

⁷ ԱԲ եւ մանաւանդ

⁸ ԱԲ զմկրտութիւն

Զի այնուհետեւ յոյժ ընտանեբար¹ առ նմա լինէին առկայացեալ-որով եւ նա վայելչապէս վստահացեալ եկաց մնաց առ նոսա:

Եփր. Արդ, թէպէտ էր վկայ եւ միջնորդ այսմ իրաց տեսիլն Կոռնէլիոսի եւ Շմաւոնի, եւ զալ Հոգւոյն ի նոսա յառաջ քան զմկրտիլն, եւ զի յամենայն լեզուս իբրեւ զառաքեալսն խաւսեցան եւ² նոքա, սակայն ոչ վասն այնորիկ³ լինէին հրեայքն ընտանեբար⁴ առ նմա տրտմակայեալք, այլ եպերեցին թլփատեալքն զՇմաւոն⁵ իբրեւ եկն յԵրուսաղէմ, ըստ որում ասէ. «Լուան առաքեալքն եւ եղբարքն, որ Լին ի Նրեսաբանի, զի եւ ի հեթանոսս ընկալան զրանն Աստուծոյ: Բայց յորժամ ել Պեպրոս յԵրուսաղէմ, խղճէին ի նմանէ, որ ի թլփաբութենէն հաւարացեալքն եւ ասէին՝ թէ եմուք առ արս անթլփաբս եւ եկեր ընդ նոսա» (ԺԱ. 1-3):

Յոհ. Տե՛ս արդ զնախանձն, զոր ունէին յաղազս աւրինացն՝ զի ոչ յարժանաւորութենէն Պետրոսի եղեն վեհերեալք⁶, ոչ ի նշանացն, որ լինէին, ոչ յուղղութենէն վճարելոյ, եւ թէ ո՞րչափ էր փրկութիւն ընդունողաց զբան նորա: Այլ յետ այսչափ իրաց վասն փոքրագունիցն այնոցիկ հարցափորձեալ զիրսն թլփատեալքն խղճէին ի նմանէ. ոչ առաքեալքն, քաւ լիցի, այլ հրեայքն այլք՝ գայթազդեալ լինէին ո՛չ սակաւ:

Եւ տես, թէ զի՞նչ լինէին յառաջարկեալ: Ոչ ասէին, թէ ընդէ՞ր պատմեցեր նոցա զբանն, այլ թէ եւ կերակուր ընդէ՞ր կերար ընդ նոսա: Իսկ Պետրոս առ այսպիսի ցրտագոյն բանս ոչ ընդդիմադրեալ լինի վիճողականս, զի ցրտագոյն էր ճշմարտապէս, այլ զայն, ինչ որ մեծն է՝ բերէ յառաջ, զի ասէ⁷. «Նորա հոգւոյն Սրբոյ հաղորդք եղեն» (Երբ. Զ. 4), զիա՞րդ ընդ նոսա հազիւ հաղորդել ոչ է պարտ:

Այլ թէ վասն սամարացւոցն ընդէ՞ր ոչ եղեւ այսպիսի նախանձ առ հրեայսն՝ այլ եւ նորին հակառակն: Ասեմ, զի ոչ միայն նախ քան զմկրտութիւնն⁸ ոչ առին նոքա զՀոգին, այլ յետոյ ուրեմն. եւ անդանաւր ոչ տրտմեցան հրեայքն, այլ լուեալ առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅովհաննէս: Նա եւ աստանաւր ոչ զայս ինչ ամբաստանէին, զի զնաց առ հեթանոսս եւ խաւսեցաւ, զի գիտէին,

¹ Աբ ընտանեբար

² Բ > եւ

³ Բ այսոցիկ] այնորիկ

⁴ Աբ ընտանեբար

⁵ Ա զՇմաւոն

⁶ Աբ վեհերեալք + ոչ ի նշանացն, որ լինէրն

⁷ Բ ասիցէ] ասէ

⁸ Աբ զմկրտութիւն

Թէ աստուածային շնորհին էր գործ, այլ ընդէր, ասէին «կերար ընդ նոսա», յայնմանէ խղճէին: Եւ այլազգ. զի ոչ այնչափ էր աւտարութիւնն¹ սամարացւոց առ հրեայս, որպէս առ այլոց հեթան/ճճա/ոսաց: Այլ եւ ամբաստանելն նոցա տնաւրինաբար լինի եղեալ, զի ի ձեռն պատասխանւոյն Պետրոսի ուսանիցին, թէ նա ոչ ինչ էր պատճառ. եւ թէ մանաւանդ եւ ոչ մի ինչ յայսցանէ եղեւ հանճարով նոցա իմաստասիրեալ, այլ Հոգւոյն էին պատգամք, եւ ամենայն յամենայնի Աստուած, զի նա արար զամենայն, եւ մի՛ ինչ ածցեն զմտաւ այլազգ:

Սմին վասն ոչ միայն պարզաբար ետ պատասխանի Պետրոս, այլ յոյժ խոնարհութեամբ եւ առանց շփացութեամբ² «Սկսաւ պատմել կարգաւ եւ ասէ. Ես էի ի քաղաքին³ Յոպպէ յաղաթս» (ԺԱ. 5): Եւ ոչ ասէ, թէ ընդէր կամ զինչ պատճառաւ: «Եւ քեսի ի զարմացման⁴ քեսիլ՝ իջանել յերկնից անաթ ինչ իբրև կրտայ մնծի, գտրեցունց քրտոց⁵ կախեալ յերկնից, յորում էր ամենայն չորրոքանիք սողունք եւ թռչունք: Եւ լուայ բարբառ, որ ասէր ցիս. Արի, Պետրոս, գեն եւ կեր» (ԺԱ. 5-7): Այն իսկ բաւական էր հաւանեցուցանել, զի երեւեցաւ, այլ եւ ձայնիւ եւս յաւելոյր: «Ես ասեմ. Քաւ լիցի, Տէր, զի խառնակ ինչ եւ անսուրբ ոչ երբեք եմուք ի բերան իմ» (ԺԱ. 8): Տեսանէ՞ք, զի ես զիմն արարի, ասէ. զի ասացի ընդդէմ՝ թէ ոչ երբեք կերայ: Զի զայս իսկ ասէին՝ թէ եմուտ առ արս անթլիատսն եւ եկեր ընդ նոսա, ըստ որում եւ զայս առ նոսա խաւսի: Բայց առ Կուռնէլիոս ոչ ասաց զայս, զի չէր պիտոյ:



¹ Բ օտարութիւն

² ԱԲ շփացութեան

³ Ա ի քաղաքէն

⁴ ԱԲ զարմացմարն

⁵ ԱԲ տտնոցն

Պատասխանի ետ ինձ, *ասէ*, երկիցս անգամ բարբառն յերկնից. Չոր Աստուած սրբեաց, դու մի՛ խառնակ համարիր: Այս եղև երիցս, եւ վերացաւ դարձեալ ամենայն յերկինս (ԺԱ. 9-10):

Ընդդիմադրեցի, ասէ, եւ նա դարձեալ ասաց, թէ՛ «Չոր Աստուած սրբեաց, դու մի՛ պիղծ համարիր» (Ժ. 15): Եւ ոչ այնպէս լուայ, մինչեւ երիցս անգամ կրկնեաց՝ զոր «Աստուած սրբեաց, դու մի՛ խառնակ համարիր» (ԺԱ. 9):

Եւ ահա անդէն երեք արք եկին կացին առ ապարանիցն, ուր ենս էի՝ առաքեալք ի Կեսարիայ առ իս (ԺԱ. 11):

Արդ, այնոքիկ, որ ասացանն՝ բաւական էին հաւանեցուցանել զնոսա, բայց եւ ի ձեռն այսոցիկ, զոր ասէս¹՝ զնոյնն յարդարէ²: Եւ հայեաց, թէ՛ ո՛րպէս տայ պատասխանի. ոչ արժան համարի զառնն անուն առ նոսա ի կիր արկանել, զի որչափ հեզուլթեամբ բարբառի առ նոսա, այնչափ մանաւանդ ըմբռնէ զնոսա: Բայց եւ պատուով իսկ յիշէ զարսն, եւ առաքեալս անուանէ. ոչ անարժան համարի զվարդապետին անուն առնուլ ի վերայ սոցա, զի եւ սոքա իսկ յԱստուծոյ էին առաքեալք:

Ասէ ցիս հոգին՝ երթալ ընդ նոսա եւ մի՛ ինչ խղճել (ԺԱ. 12):

Տեսանե՞ս, զի Հոգւոյն էր աւրինադրուլթիւնն³, զի⁴ հրամայեաց ինձ գնալ, ասէ. նմին իրի իսկ⁵ ոչ դանդաղեցայ⁶: «Եկին ընդ իս եւ սորա վեցեքին եղրարքս» (ԺԱ. 12): Ոչ ինչ է քան զայսպիսի բարս խոնարհագոյն, յորժամ զեղբարցն վկայուլթիւն ի վերայ ածէ: «Եւ մտար ի փուն առնն այնորիկ» (ԺԱ. 12): Ասացեալ առ նոսա, թէ՛ Աստուած առաքեաց զիս առ ձեզ, եւ ոչ այնպէս մկրտեցի տակաւին: «Եւ նա պատմեաց մեզ ո՛րպէս երես գիրեշտակն ի փան իւրում, զի կայր եւ ասէր ցնա. Առաքեա ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոն գկոչեցեալն Պն/ՅԾԲ/փրոս՝ որ խաւսեցի բանս ընդ քեզ, որով կեցցես դու եւ ամենայն փուն քո» (ԺԱ. 13-14): Եւ ոչ ասաց զառ ի հրեշ-

¹ ԱԲ ասես

² Բ հորդորէ] հարդարէ

³ ԱԲ օրինադրութիւն

⁴ Բ զի հոգին

⁵ ԱԲ սմին վասն յնման իրի իսկ

⁶ Ա դադաղեցայ

տակէն ասացեալն ց'Կոռնէլիոս¹, թէ աղաւթք քո եւ ողորմութիւնք ելին յիշեցան առաջի Աստուծոյ, զի մի՛ ինչ ընդդիմացեալ երեւեսցի նոցա, որք անթլփատս ասէին զնոսա: Այլ զի՞նչ ասէ. «Խաւսեացի բանս, որով կեցցես դու եւ փունդ քո» (ԺԱ. 14), քանզի այս իսկ վայելչապէս ախորժելի լինէր առ Հրեայսն: Եւ ոչ ինչ ասէ յաղագս Հեզուլթեան առնն, նա եւ ոչ թէ Հոգւոյն հրամայելով եւ Աստուծոյ առաքելով ի ձեռն Հրեշտակի, անդուստ կոչելով ի Կեսարւոյ², եւ աստուստ յայտնութեամբն լուծանելով զիրացն խիղճ, ինձ զի՞նչ պարտ էր առնել: Այլ ոչ ասէ յայսցանէ եւ ոչ ինչ, այլ վերջին իրաւքն զնոսա զգուշացուցանէ, որ եւ ինքն ըստ ինքեան անյերկուանալի էր նշանն:

Արդ, ընդէ՞ր այս ինչ միայն ոչ եղեւ, այլ եւ Հոգին յայտնեցաւ եւ խաւսելն լեզուաւք: Զի առաւելութեամբ եղելոցն ցուցցի՞ ոչ յառաքելոցն սկսեալ յայտքիկ, զի թէ նա ինքնին գնացեալ էր, եւ ոչ մի ինչ յայսցանէ եղեալ, յոյժ թերեւս հրեայքն խոցեալ լիէին: Վասն այնորիկ ի վերուստ բանիւն զմիտս նոցա ընտանեցուցանէ, եւ ապա ասէ. «Որք³ գճոգին Սուրբ քնկալան որպէս եւ մեք» (Ժ. 47), եւ յառաջ քան զայս, թէ «Իբրև սկսա խաւսել, եկն ճոգին Սուրբ ի վերայ նոցա» (ԺԱ. 15): Եւ ոչ յայտն շատանայ եւ ոչ այնու, թէ որպէս ի վերայ մեր ի սկզբանն, այլ եւ զբանն Տեառն վերստին յիշեցուցանէ, զոր ասէր. «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, բայց դուք մկրտիցիք ի ճոգին Սուրբ» (ԺԱ. 16): Ոչ ինչ, ասէ, եղեւ, նորոգ ինչ կամ աւտար, այլ զոր ինչ յառաջագոյն Քրիստոս⁴ խաւսեցաւ, թէ «Մկրտեցիք⁵ ի ճոգին Սուրբ» (Ա. 5): Եւ այլ ոչ էր պարտ մկրտել, քանզի աւարտեցաւ մկրտութիւնն յԱստուծոյ, զի զամենայն ինչ Աստուած գործեաց՝ Աստուած մկրտեաց զնոսա, եւ ոչ ես: Վասն այնորիկ ոչ ասէ, թէ՛ ես հրամայեցի նոցա մկրտել, այլ եցոյց, թէ ինքն ոչ ինչ արար: Զի զոր ինչ մեք ընկալեալ էաք, ասէ նոքա զայն առին:

Իսկ արդ եթէ զհասարակաց պարգեւն եր Աստուած եւ նոցա, որպէս եւ մեզ ի հաւաքալն ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ զի՞նչ կարաւ էի արգելով զԱստուած (ԺԱ. 17):

¹ Բ գկոռնէլիոս

² ԱԲ ի կեսարիոյ

³ Ա որք եւ

⁴ ԱԲ յառաջ քրիստոս] քրիստոս

⁵ ԱԲ մկրտիցիք

Յոյժ ամաչեցուցանելով եւ ծանրամտութեամբ է բանս: Նա եւ ոչ ասաց յետոյ, թէ զայս գիտելով լուեցէք, այլ ընդունի զհանդգնութիւն նոցա, եւ ամբաստանելով տայ նոցա պատասխանի. «Ո՞րք էի, ասէ, արգելու¹ զԱստուած» (ԺԱ. 17): Եւ այսու մեծապէս խնու զբերանս² նոցա, վասն այսորիկ յաւել զայն, թէ «գիասարակաց պարգևն», զի մի՛ թողացուցէ նուազագոյնս ինչ քան զինքեանցն զնոցայն կարծել: «Նաւարացնոց, ասէ, ի Տէր Յիսուս Քրիստոս եր Աստուած գիասարակաց պարգևն որպէս եւ մեզ», զի եւ հաւասար է եւ հասարակաց ամենայն ազգաց, որ հաւատան, եւ ոչ հրէից միայն, զի զամենեսեան, որ հաւատան, սրբէ եւ մաքրէ: Եւ ոչ ասաց՝ որպէս ձեզ, այլ «որպէս մեզ»: Զի մի՛ ինչ անարժանս զնա³ կրել համարեսցին⁴, կամ թէ մոլեալ⁵ յորժամ եղ զհեթանոսս հաղորդս եղեալ Հոգւոյն:

Եւ լուեալ զայս լոնցին եւ փառաւոր առնէին զԱստուած եւ /69ա/ աւելին. Ուրեմն եւ ի հեթանոսս եր Աստուած զապաշխարութիւն կենաց (ԺԱ. 18):

Տեսանե՞ս, զի ի հանդիսաբանութենէն Պետրոսի եղեւ ամենայն ինչ բարւոք, զի պատմելով նորա զլեալսն⁶ փառաւոր առնէին զԱստուած, ասէ, զի զգաստացան եւ երկուցեալք⁷ եւ հանդարտեալք եւ խոնարհեալք եղեն ի բանիցս յայսցանէ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այսպէս եւ մեզ պարտ է յընկերացն բարութիւնս փառաւորել զԱստուած, եւ մի՛ տրտմել ընդ յաջողուածս ինչ հոգեկանս⁸ կամ մարմնականս, այլ մանաւանդ ի բարիսն նախանձել եւ առ ուղղութիւնս ապաշխարութեամբ զանձինս մեր զարթուցանել: Եւ մի՛ պղերգութեամբ զփոքր ժամանակս անցուցանել, մանաւանդ յեկեղեցւոջ ի ժամու աղաւթից անզբաղ մտաւք, եւ մի՛ ծաղր լինելով զրուցատրութեամբ եւ յաւրանչմամբ⁹ եւ այլով անկարգութեամբ,

¹ Աբ արգելու

² Աբ բերան գլեգուս նոցա] զբերանս նոցա

³ Ա գնոսս

⁴ Ա համարիցին, Բ համարեցին

⁵ Աբ մոլեալս

⁶ Ա զլիեալսն

⁷ Ա երկուացեալք

⁸ Ա հոգեկանս

⁹ Բ յորանջմամբ

այլ մեծաւ ահիւ եւ սարսափմամբ կալ առաջի աստուածային խորհրդոյն. ի շահ անձանց եւ յաւգուտ տեսողաց՝ ոչ միայն մերձաւորաց, այլ եւ հեռաւորաց, ըստ նմանութեան սրբոց քարոզչացն, զորս ոչ խափանեաց ի բարուք ընթացից վիշտք մարմնականք: Այլ աստուատ մանաւանդ այսուհետեւ բացեալ եղեւ նոցա դուռն համարձակութեան առ հեթանոսս քարոզելոյ, ըստ որում ասէ.

[ԳԼՈՒԽ ԻԵ.]

Եւ ցրուեալքն¹ ի նեղութենէն, որ եղև ի վերայ Սրբփանոսի, հասին մինչև ի Փիւնիկէ, եւ ի Կիպրոս, եւ յԱնդիոք² (ԺԱ. 19):

Ոչ փոքր ինչ ուղղութիւն եղեւ հալածումնն այն. զի այնոցիկ, որ սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս: Իսկ յանդգնեալքն առ նոսա ի հալածել ոչ արդեւք կարէին այլ ինչ առնել, քան թէ զի³ սփռեցին զվարդապետսն, որպէս զի ճահաւորութեամբ փութացեալ լինէին հաստատել զեկեղեցիսն: Եւ տե՛ս զնոցա քաջութիւնն, զի ոչ որպէս մեք ողբովք եւ արտասուաւք ի վայր կործանեալ լինիմք ի պատահել ինչ նեղութեանց, այլ մեծ եւ բարի գործոյ տուեալ զանձինս յոլովագոյն դիւրութեամբ քարոզէին զբանն իբրու հեռագոյն եղեալ յարգելողացն՝ ի հրէիցն ասեմ, եւ առ մարդկան հասեալք, որք աներկիւղ էին ի հրէից: Եւ տե՛ս ո՛ւր տարածեցաւ նոքաւք քարոզութիւնն, զի «Նասին, ասէ, մինչև ի Փիւնիկէ, ի Կիպրոս, եւ յԱնդիոք⁴»: Արդ, մինչեւ ի Կիպրոս հասին, ասէ, որ ի մէջ ծովուն է, ուր հոլովագոյն⁵ էր անհոգութիւնն⁶ յերկիւղէ հրէիցն:

Ոչ ումեք խաւսէին զբանն, բայց միայն հրէիցն (ԺԱ. 19):

Ոչ իբր երկնչելով ի հեթանոսաց, այլ զաւրինականսն պատուելով⁷ քան զհեթանոսս: Եւ այս իսկ անպատասխանիս առնէ զհրեայսն առաջի Քրիստոսի, որ ոչ երբեք արգել ի նոցանէ զպատճառս փրկութեանն⁸: Յիրաւի ապա այնչափ իրք եղեն վասն Կուռնէլիու,

¹ Աբ ցրուեալքս

² Աբ յանտիոք

³ Բ քանզի] քան թէ զի

⁴ Բ յանտիոք

⁵ Ա յոլովագոյն

⁶ Աբ անհոգութիւն

⁷ Բ պատուելով

⁸ Աբ փրկութեան

զի այնպիսի էր յաւժարութիւն նորա, եւ այլոց հեթանոսաց. զի յորժամ Ստեփանոս քարկոծեալ եղեւ ի հրէից, եւ առաքեալքն տանջեցան, եւ Պաւղոս երկիցս¹ վշտանգեցաւ, յայնժամ հեթանոսք ընկալան զբանն, յայնժամ սամարացիք: Սմին վասն եւ Պաւղոս ասէր, թէ «Ձեզ նախ կարևոր էր քարոզել զբանն Աստուծոյ, այլ զի դուք անարգեցէ/69բ/ք գնա, ահաւասիկ դառնամք ի հեթանոսս» (ԺԱ. 46):

Եւ էին ոմոնք ի նոցանէ արք կիպրացիք եւ կիւրենացիք, որք մտնալ յԱնտիոք խաւսէին ընդ յոյնսն, աւերարանէին զպէր Յիսուս Բրիսպոս: (ԺԱ. 20)

Տե՛ս ի ձեռն փոքունց զամենայն ինչ ուղղեալ եւ զքարոզութիւնն² անեցեալ, զի ոչ իբրեւ զկարծ ոգիս՝ յինքեանս ասացին, թէ մեք կիպրացիք եւ կիւրենացիք գոլով. զիա՞րդ այսպիսի պայծառ եւ մեծ քաղաքի համարձակիմք քարոզել, այլ ի շնորհսն Աստուծոյ հաւատալով ձեռն արկէին ի վարդապետութիւն բանին: Բայց եւ ոչ նոքա անարժան համարեցան առ ի նոցանէ ուսանել ինչ: Եւ զի սոքա յունարէն խաւսէին, գիտելի է՝ եւ յԱնտիոք այնպիսիս գոլ, ընդ որս խաւսէին:

Ո՞ւր են ստայաւդ առասպելախաւսքն, որք զանուանեալ դարձն Անտիոքու շաղակրատեն, եւ զՊետրոս եւ զՅովհաննէս ասեն երթեալ անդ զառաջինն եւ քարոզեալ³ զՔրիստոս, եւ տանջեալք, եւ խզեալք, եւ ոչ ինչ վճարեալք, մինչեւ զՊաւղոս ասեն ի թիկունս հասեալ նոցա. անյարմար եւ անհաւանական զրուցատրութեաբքն խաբին եւ խաբեն: Ձի ահաւասիկ Ղուկաս՝ ոչ զոք յառաքելոցն, այլ կիպրացիս ոմանս եւ կիւրենացիս գոլ ասէ զառաջին քարոզիչսն Անտիոքու որպէս լսես:

Յոհ⁴. Եւ զի ընդ յոյնսն խաւսէին, ոչ հրեայսն անտես առնելով, կամ վասն ոչ գիտելոյ եբրայեցերէն՝ թերեւս յոյնս զհրեայսն զայնս կոչէ⁵:

Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա, եւ բազմութիւն հաւաքացելոց դարձան ի Տէր (ԺԱ. 21):

¹ Աբ երկից

² Աբ զքարոզութիւն

³ Բ քարոզել

⁴ Ագ > յոհ.

⁵ Աբ զայնս կոչէ] կոչէ

«Ձեռն Տեառն»՝ աստ զնշանացն զաւրութիւնն¹ ասէ, այսինքն՝ զի նշանս գործէին: Տեսանե՞ս, թէ ընդէ՞ր եղեն պիտոյ նշանքն, զի բազմութիւնն² հաւատասցէ: Հայեաց դարձեալ զանմտութիւն այնոցիկ՝ որ ի մտաց իւրեանց գրեցին զանուանեալ դարձն Անտիոքու, զի ահա ի ձեռն կիպրացւոց քարոզչաց ասէ, թէ «Բազմութիւն հաւաքացւալոց դարձան ի Տէր» (ԺԱ. 21): «Լու եղև բանս այս յականջս եկեղեցոյն, որ յերուսաղէմ վասն սոցա, եւ առաքեցին զԲառնարաս մինչև յԱնտիոք» (ԺԱ. 22):

Յոհ.³ Տե՛ս զառաքեալսն ամենեցուն համանգամայն փոյթ արարեալս՝ իբրեւ մի տուն զտիեզերս հոգալով: Լուան, թէ յԱնտիոք հաւատացին, առաքեցին անդ զԲառնարաս, առաքեն դարձեալ եւ մարգարէս:

Եւ ընդէ՞ր արդեւք այսպիսի քաղաքի ընդունելով զբանն՝ ինքեանք ոչ եկին, այլ զԲառնարաս առաքեցին: Նախ զայս ասեմ, զի այսպէս կամեցաւ Հոգին, եւ նոքա զամենայն ինչ ըստ նորա կամացն գործէին: Եւ այլազգ. վասն զի բազում երկար էր միջոցն յերուսաղէմէ, ոչ էր պարտ առաքելոցն առժամայն մեկնել անտի, զի մի՛ փախստականս գոլ կարծեսցեն զնոսա հրէիցն: Զի յորժամ դատակնիք արեանն Քրիստոսի հասեալ լինէր ի վերայ նոցա հոռմայեցւովքն⁴, յայնժամ մեկնեալ լինէին, ոչ իբր զարհուրեալք ի հինէն, զի ահա առ այնոսիկ, որ հանդերձեալ էին պաշարել զերուսաղէմ՝ զնացեալ լինէին, եւ յետ վախճանի առաքելոցն ապա լինէր պաշարումն Երուսաղէմի: Եւ ընդէ՞ր առ Պաւղոս ոչ գրեցին, երթալ յԱնտիոք, այլ զԲառն/70ա/աբաս առաքեցին: Զի տակաւին ոչ եւս գիտէին զնորա քաջութիւնն⁵, զսա առաքեցին:

Որ իբրև եկն եւ երես զշնորհսն Աստուծոյ, ուրախ եղև (ԺԱ. 23):

Ոչ զփոյթն մարդկանն ետես, ասէ, այլ զշնորհսն Աստուծոյ, զի այս իսկ զբազմութիւնն դարձոյց: «Չորս եւ մխիթարէր զամենեսեան, յաւժարութեամբ սրբի կալ նոցա ի Տէր» (ԺԱ. 23): Զի՞նչ կամի աստ «մխիթարէրն», զի ի հալածողաց ոչ նշանակէ վշտանալ նոցա, յայտ է ապա, զի քաջալերէր հանդերձեալ յուսովն, ի վաստակս առաքինութեան ըստ հաւատոցն արժանապէս զնալ: «Զի էր այր զուարթամիտ եւ լի հոգով

¹ ԱԲ զօրութիւն

² Բ բազմութիւն

³ ԱԲ > յոհ.

⁴ ԱԲ հռովմայեցւովքն

⁵ ԱԲ քաջութիւն

Սրբով եւ հաւաքովք» (ԺԱ. 24): *Յայտ առնէ, զի յոյժ քաղց էր այրն եւ անկեղծ, եւ յոյժ ցանկայր փրկութիւն¹ մերձաւորացն, եւ խոնարհամիտ էր, եւ ներողական. զոր եւ վասն բարեյաւժար² կամացն, զոր ունէր յառաջադրութեամբ սրտին, ներբողելով ասէ, թէ լի էր Հոգւով Սրբով, զի Հոգին Սուրբ առ այնպիսիսն հանգչի:*

Եւ յաւելաւ ժողովուրդ քազում Տեառն (ԺԱ. 24):

Տեսանե՞ս ի ձեռն փոքունց զմեծամեծս գործեցեալ. յաղագս որոց ասացեալ է, եթէ «Ձոչ ինչս աշխարհիս ընտրեաց Աստուած» (Ա. Կրնթ. Ա. 28): Զի որչափ աննշանք էին, այնչափ մանաւանդ շնորհքն նոքաւք փայլեալ լինէին, որով եւ տնաւրինաբար լինէր Բառնաբայ անդր գալ: Եւ քանզի բազմութիւն յոյժ էր հաւատացելոցն, եւ ոչ ոք էր, որ խափանէր, վայելչապէս բղխեաց հաւատն: Եւ ընդէ՞ր³ նախ քան զայս յորժամ դժուարինքն եղեն յերուսաղէմ եւ հալածումնն ոչ առաքեցին յԱնտիոք⁴ զԲառնաբաս, վասն զի առ երուսաղէմացիսն անպարապացեալ էին: Եւ դարձեալ այսպէս տնաւրինէր, զի հրէիցն տացեն պատասխանի, զի⁵ հեթանոսք քան զնոսա յառաջեալ լինէին ի հաւատս, եւ ոչ այնչափ փութոյ հանդիպեալք: Բայց եւ ոչ զայրացան անտիոքացիք, զի յառաքելոցն ոչ առաքեցին առ նոսա, այլ վարդապետաւքն շատացան, զի այնպէս ամենեքեան եռային ի լուր բանին: Եւ որպէս հող պարարտ ընկալաւ զբանն Աստուծոյ քաղաքս այս, եւ յոյժ եցոյց զպտուղ իւր, եւ յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն:

Բայց ոչ այսու շատացաւ Բառնաբաս, զի անձն աստուածասէր ոչ յագի միշտ յառաջել ի բարիս: Սմին վասն «Եւ ի Տարսուն խնդրել զՊաւղոս. եւ գրեալ գնա ած յԱնտիոք» (ԺԱ. 25): Եւ ընդէ՞ր ի Տարսունէ ի բաց կացոյց զնա եւ աստանաւր ած: Զի աստանաւր առաւել⁶ էր բարեացն յոյս, եւ քաղաքն մեծագոյն եւ բազմութիւնն⁷ յաւժարք, եւ մանաւանդ զի ոչ ինչ աստանաւր կրեցին փորձութիւնք: Եւ Պաւղոս քարոզէր, եւ ոչ եւս հարկ լինէր փախչել: Եւ տե՛ս, զամենայն

¹ ԱԲ փրկութեան

² Ա բարեյոժար

³ ԱԲ թէ ընդէ՞ր] ընդէ՞ր

⁴ Բ անտիոք

⁵ ԱԲ զի, թէ

⁶ Բ աւել] առաւել

⁷ ԱԲ բազմութիւն

շնորհացն Աստուծոյ գործեցեալ եւ ոչ ի Պաւղոսէ, ի ձեռն փոքունցն սկիզբն առեալ իրացն:

Տե՛ս եւ յայսմիկ զԲառնաբաս զերանելի, զի ոչ հայեցաւ յիւրսն միայն առանձինն, այլ ընթացաւ ի Տարսոն վասն Պաւղոսի, քանզի գիտէր իսկ, զի ո՛չ փոքր ինչ փրկութիւն տնաւրինէր Հոգին անդ հասանելովն Պաւղոսի: Եւ հարկաւորապէս եկն առ նահատակին. զի մի՛ միայն ինքն, այլ եւ զնա ածցէ ի տեղի հանդիսին: Այլ եւ |70բ| առ ո՞րք արդեւք գայր, առ զաւրավարին իսկ, առ մենամարտիկ քաջին, առ ուժեղ առեւծուն¹, եւ ոչ ունիմ զի՞նչ ասացից որչափ եւ ասացից, առ շանն, որսականին² սպանչին առեւծուց³, առ հզաւր զուարակին, առ պայծառ լապտերին, առ բերանն այն՝ որով տիեզերք շատացեալ լինէին նովաւ: Եւ ասեմ, զի տնաւրինաբար նախ վասն նորա խռովէին հրեայքն, զի մի՛ նա պարփակեալ լիցի յԵրուսաղէմ՝ փողն երկնային եւ ձայնն քարոզութեան:

Բայց տես, թէ ո՞րպէս յամենայնի զչարութիւն հրէիցն ի պատշաճ պէտս եկեղեցւոյ ի կիր արկանէ Քրիստոս, զառ ի նոցանէ հալածեալսն վարդապետս առաքելով տիեզերաց, զի հանդերձեալ էր ընդ երկուս լինել քարոզութիւնն⁴, սմին վասն եւ Կոռնէլիոս իրքն յայնժամ յառաջեաց, որով համարձակագոյնք եղեն քարոզեալ հեթանոսաց, զոր եւ Պաւղոս ասէ վասն իւր եւ վասն Բառնաբայ, թէ «Աջ հաւանութեան երուն պերրոսեանք, զի մեր ի հեթանոսս եւ նորա ի թլփափութեանն⁵» (Գղտ. Բ. 9):

Եւ եղև, ասէ, նոցա զամն ողջոյն ժողովել յեկեղեցին եւ ուսուցանել ժողովուրդ բազում, եւ անուանել նախ յԱնտիոք նախ զաշակերպեալսն քրիստոնեայս (ԺԱ. 26):

Ոչ փոքր գովութիւն է այս այնմ քաղաքի: Այսու իսկ ամենեցուն հանդէպ կարաւղ է՞ կալ, զի բերանովն Պաւղոսի այնչափ վայելեաց ժամանակաւ յառաջագոյն՝ ի պարծանս ամենայն քաղաքաց: Քանզի ջերմք էին ի հաւատս, յաւժարամիտք եւ փոյթք ի լսել զբանն

¹ ԱԲ առիւծուն

² ԱԲ որսականի

³ ԱԲ առիւծուց

⁴ ԱԲ քարոզութիւն

⁵ Բ > ի թլփատութեանն

⁶ Բ կարտ] կարաւղ է

կենաց, վասն որոյ եւ նախկին աստանաւր աստուածային անուանն արժանացան:

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղէմէ մարգարէք յԱն-
պիոք (ԺԱ. 27):

Եւ վա՞սն էր արդեւք. զի պարտ էր ողորմութեանն¹ պտղոյ աստա-
նաւր տնկել: Եւ տես, թէ զիա՞րդ հարկաւորապէս դասք դասք մի
զմիոյ կնի հետեւէին, որոց յառաջնումն եւ ոչ մի ոք յերեւակացն
եւ մեծամեծացն եղեւ վարդապետ, այլ զկիպրացիս եւ զկիւրենացիս
ունէին վարդապետս: Եւ ապա զմեծագոյնսն ընկալան՝ զՊաւղոս եւ
զԲառնաբաս, զի սոքա գերազանցեալ էին քան զնոսս, զի Հոգին
Սուրբ ունէին վարդապետ. այժմ եւ մարգարէք եւս իջին:

Յարուցեալ ոմն ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց հոգ-
ւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, ոչ եղև առ Կղաւղեալ
(ԺԱ. 28):

Արդ, զի մի՛ կարծիցեն, թէ վասն զի² քրիստոնէութիւն ի ներքս
եմուտ եւ եղեւ սովն, եւ զի դեւք ի բաց կացին յառաջագոյն, վասն
այնորիկ ասէ՝ Հոգին: Բայց ոչ ինչ էր սքանչելի լինել սովոյն, զի
եւ Քրիստոս զնոյն յառաջագոյն ասաց: Եւ քանզի պարտ էր վաղ-
վաղակի յետ խաչին լինել սովոյն, այլ վասն նեղութեանն³ եւ հա-
լածանացն, որ յառաքելսն եղեւ՝ երկայնամտեաց Աստուած: Եւ
մինչ դեռ ի նոյնն էին տակաւին, սով մեծ լիեալ լինէր՝ գուշակելով
հրէիցն զհանդերձեալ չարիսն, եւ առնուլ ի միտ, թէ վասն նոցա իսկ
էր այն պատուհաս: Եւ զի պարտ էր ապաքէն երկնչել յայնմանէ եւ
դադարել յունականաց հրէիցն յապիրատութենէ: Քանզի եւ նոքա
իսկ բուն հրէիցն չարեաց կցորդեցին, փոխանակ զի պարտ էր նո-
ցա ընտիրս /71ա/ եւ լաւս լինել: Զի որ ինչ եւ յինքեանց հնար էր
առնէին, տանջէին⁴, սպանանէին⁵, յամենայն տեղիս հալածեցին:

Այլ զայսպիսի չարսն պարտ էր, ասեն, ի բաց բառնալ: Առ որս
ասեմ, թէ ընդէ՞ր ապա Քրիստոս յառաջ զնոյն իսկ ասաց, թէ «Յաշ-
խարհի աստի նեղութիւն ունիցիր» (Յովհ. ԺԶ. 33): Իբրու թէ ասիցես, թէ

¹ ԱԲ ողորմութեան

² ԱԲ վասն] վասն զի

³ Բ Անեղութեան

⁴ Բ > տանջէին

⁵ Ա > սպանանէին

«Պարտ էր ոչ մկրտել, զի մի՛ նեղութիւնս ունիցիմք»՝ ի բաց տար: Իսկ եթէ հարկաւոր կարեւոր է մկրտելն, յոյժ մանաւանդ եւ նեղութիւնք: Այլ տես, թէ ե՞րբ լինի սովն. յորժամ հեթանոսք ի հաւատս եկին, որոց եւ սովն լինի փրկութեան պատճառ, դուռն ի դէմս ողորմութեան, բազում բարութեանց առիթ: Այլ եւ ձեզ այժմ զնոյն ասէ Հոգին, թէ ախորժէիք, բայց ոչ կամիք: Արդ, յառաջագոյն ասէ զգալն սովոյն, զի նախ պատրաստեցին յողորմածութիւն. զի յառաջ քան զայս ոչ էին հրեաստանեայքն¹ ի կարաւտութեան կամ ի սովի: Բայց բարւոք մտածութեամբ ոչ յաղագս սովոյն նոքա ասէին, որ աւետարանէինն, զի մի՛ ումեք ծանր թուեսցի, այլ մարգարէքն զայն պատմէին:

Բայց զաշակերպաց անպի որպէս զհարդ կարող որ էր, իւրաքանչիւր ի նոցանէ որոշեցին առաքել ի պէքս² եղբարցն՝ որ բնակեալ էին ի Տրեսսրանի, գոր եւ արարին իսկ, առաքեալ առ երիցունսն ի ձեռն Բառնարայ եւ Սաւղոսի (ԺԱ. 29-30):

Տեսանե՞ս ընդ հաւատալն համանգամայն պտղաբերեալս զնոսա, ոչ միայն իւրեանց այլոցն եւ մաւտաւորաց, այլ եւ հեռագունիցն բացականաց: Եւ զայսմանէ իսկ ասէ Պաւղոս, թէ «Ձեռն երուն հաղորդութեան ինձ եւ Բառնարայ, զի մեր ի հեթանոսս, եւ նոքա ի թլփաբութեանն, բայց միայն զի գաղթաբուն հոգասցոր հասարակաց, գոր եւ ես իսկ փութացայ զնոյն առնել» (Գղտ. Բ. 9-10): Եւ այժմ տակաւին Յակոբոս եղբայրն Յովհաննու կենդանի է:

Այլ հայեաց ընդ յաւժարութիւնն սոցա. զի ոչ սպասեցին հասանելոյ սովոյն, այլ յառաջագոյն առաքեցին զՊաւղոս եւ զԲառնաբաս, զի պաշտաւն արասցեն հրեաստանեայցն որպէս եւ կարող էր իւրաքանչիւր ոք: Եւ տե՛ս զի առաքելովքն յԵրուսաղէմ՝ այլք³ ոմանք յայս գործ յորդորեալ լինէին: Իսկ յԱնտիոքայ Պաւղոս եւ Բառնաբաս լնուն զպաշտաւնն՝ տանելով զտուրս նոցա յԵրուսաղէմ: Եւ ոչ փոքր էր այս տնաւրէնութիւն սոցա տանելն, քանզի սկիզբն էր ողորմութեան բարեաց, եւ ոչ էր պարտ լինել զայթակրութեան⁴: Դիտեա եւ զայս եւս, զի այնուհետեւ կարիք սովոյն ի ներքս մուծանէ զհեթանոսաց հաղորդութիւնն⁵ տրոց, զեղեալն յո-

¹ ԱԲ հրեաստանեայք

² Բ պետրոս] պէտս

³ ԱԲ այլ

⁴ ԱԲ գայթագողութեան

⁵ Բ հաղորդութիւն

ողորմածութենէ: Իսկ հրեաստանեայքն¹, որ երբեմն խղճէին ի կերակրոց², ընդունէին ահա այժմ զառ ի նոցունց տուեալն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ այժմ ոչ ոք զայս առնէ ի մէնջ, զի մանաւանդ սով է դժուարագոյն քան զայն, քանզի ոչ է հաւասար հասարակաբար կրելն պատուհաս այնմ, զի ամենեցունց յառատութեան լինելով՝ միայն տնանկք³ իցեն ի սովի: Նա զի եւ անդ եւ տուաւդքն տնանկք էին, սմին վասն ասէ, թէ «Որպէս կարաւ չի իւրաքանչիւր ոք»: Արդ, սով /71բ/ կրկին է, որպէս եւ առատութիւն կրկին: Սով դժուարին՝ ոչ լսել զբանն Աստուծոյ, իսկ միւսն⁴ կարաւտութիւն մարմնոյ: Արդ, յառատանալ բանին⁵ հոգւոց լիութիւն, իսկ մարմին կերակրեալ ի ձեռն ողորմութեան, որպէս եւ յայնժամ տնանկքն, որ ի Հրեաստան վայելեալք լինէին, եւ որք յԱնտիոք տուեալք զինչս. եւ սոքա մանաւանդ վայելէին քան զնոսա: Այլ այժմիկ եւ մեք տնանկք գոլով ի ժամու սովոյ, յորժամ ոմանք հարկաւոր կերակրոյն կարաւտին, սերմանեացուք զկրկնակի ողորմութիւնն⁶ ի ցնծութիւն նոցա, որով մեք իսկ առաւել ի խրախութեան լինիմք ողորմութեամբն Աստուծոյ, ամէն⁷:



¹ ԱԲ հրէաստանեայքն

² Ա ի կերակրոց հեթանոսաց] ի կերակրոց

³ Ա տնանգքն, Բ տնանկքն

⁴ ԱԲ միւս

⁵ ԱԲ բանից

⁶ ԱԲ ողորմութիւն

⁷ ԱԲ > ամէն

[ԳԼՈՒԽ ԻԶ.]

Ընդ ժամանակս¹ ընդ այնուսիկ արկ Ներովդէս² արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն, եւ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով (ԺԲ. 1-2):

«Ընդ ժամանակս ընդ այն» *ասէ: Յայտ է, զի յամս Կղաւղեայ, զկարգ ասացելոցն պահելով, զի այս իսկ սովորութիւն է գրոց: Բայց Հերովդէս³ այս ոչ է նա, որ զՅովհաննէս գլխատեաց, այլ նորին որդի՝ թոռն առաջնոյն Հերովդէի: Սա կոչի եւ Ագրիպաս, եւ սորա որդի է միւս եւս Ագրիպաս⁴, որ առ Փեստոսիւ: Այլ ահաւասիկ դարձեալ միւս եւս փորձութիւն ի վերայ աշակերտացն հասանէ: Եւ տես, թէ ո՞րպէս շարամանեալ լինին իրողութիւնք սոցա, որպէս յառաջն իսկ ասացի: Ի ձեռն դիւրութեան եւ նեղութեան ամենայն ինչ նիւթեալ⁵ լինելով, բայց այժմ ոչ տակաւին հրեայքն եւ ոչ ժողովուրդն, այլ թագաւորն իսկ հալածէ, զի որչափ մեծ է իշխանութիւնն, դժուարին է մարտն. եւ այնպէս՝ զի եւ առ շնորհուկս առնէր հրէիցն, առնելով զոր ինչ կամէին:*

Եւ սպան զՅակոբոս զեղբայրն Յովհաննու սրով (ԺԲ. 2):

էր եւ այլ ոմն Յակոբոս՝ եղբայր Տեառն, սմին վասն նշանակէ զեղբայրն Յովհաննու: Եւ ո՛չ եթէ վայրապար ինչ իբրեւ հարեւանցի պատահմամբ սպան զնա, այլ քանզի յոյժ սաստիկ էր սա ընդդէմ հրէիցն առաւելեալ ի քարոզութեանն⁶ քան զամենայն առաքեալսն: Եւ զի ինքեանք հրեայքն վասն խորհրդական խրատուն Գամաղիէլի⁷ արգելեալ լինէին ի սպանմանէ առաքելոցն: Նաեւ այլազգ. քանզի պատճառս⁸ մահու ոչ կարէին գտանել, ի ձեռն այլոց զսպանութիւնն⁹ պատրաստէին: Ուստի ապա եւ երդմամբք հաւանեցուցին զՀերովդէս անյապաղ փութով զնա սպանանել, զի մի՛ այլ ինչ իրք

¹ ԱԲ ժամանակս

² ԱԲ Յերովդէ

³ Բ Յերովդէս

⁴ ԱԲ > եւ սորա որդի է միւս եւս ագրիպաս

⁵ ԱԲ նիւթեալք

⁶ ԱԲ ի քարոզութիւնս

⁷ Ա գամաղիէլի

⁸ ԱԲ պատճառ

⁹ Բ սպանութիւն

պատահեսցի եւ եղիցի զերծեալ նա, որպէս նախ քան զայս ի նոյն իսկ յԵրուսաղէմ Պաւղոս, կամ որպէս յետոյ առ Պետրոս եղեւ: Եւ նա որպէս գազան չար վայրագաբար եւ անսրբապէս ի վերայ հասեալ լինէր, եւ առանց ատենի եւ քննութեան սպանանէր զնա. եւ ընդր ասացեալն առ նա ի Քրիստոսէ, թէ «Զբաժակն իմ բմպիցէք¹ եւ գմկրպութիւնն իմ մկրպիցիք» (Մարթ. Ի 23):

Ապա թէ խնդրէ՞ որ ընդէ՞ր ներեաց Աստուած, ասեմք, թէ առաջին՝ վասն հրէիցն, զի ի միտ առցեն, թէ եւ սպանեալք լինելով աշակերտքն՝ յաղթեն թշնամեացն, որպէս առ Ստեփանոսիւ եղեւ: Երկրորդ՝ տեղ/72ա/ի տալով թշնամեացն յետ ընդոյն զցասումն զղջանալ ի մոլորութենէն: Երրորդ՝ ցուցանելով, թէ այն իսկ ներողութեամբ եւ երկայնամտութեամբ նորա եղեւ: Չորրորդ՝ յայտնի առնել զնոցա զարիութիւնն², զի³ այնպէս անխնայ տային զանձինս իւրեանց ի մահ վասն Աստուծոյ: Հինգերորդ՝ զի մի՛ որ ասիցէ, թէ վասն այնորիկ աներկիւղ համարձակին ի մահ, ակն ունելով ի բաց կորզել զնոսա Աստուծոյ, վասն այնորիկ թողացուցանէր սպանանել զնոսա, եւ մանաւանդ զգլխաւորսն իսկ՝ Ստեփանոս եւ զՅակոբոս, զի եւ գլուխ ամենայն աշակերտացն երեքս այսոքիկ էին՝ Պետրոս, եւ Յովհաննէս, եւ Յակոբոս, ջերմաջերմ ի քարոզութիւնն⁴ քան զայլսն: Եւ այս իսկ յաւետ⁵ դատապարտութիւն էր սպանաւղ հրէիցն, զի այնուհետեւ ցուցեալ լինէր ոչ մարդկային գոլ քարոզութիւնն, հաւանեցուցանելով զնոսա⁶ թէ այն ինչ ոչ ի բաց կացուցանէր զնոսա կամ խափանէր ի քարոզութենէն, այլ յետ սպանանելոյն առաւել եւս զաւրանայր, եւ ճշմարտապէս լցեալ լինէր բան մարգարէին, թէ «Նամարեցար որպէս⁷ գոսխար ի սպանդ» (Նոնմ. Ը. 36):

Իբրև երես, թէ հաճոյ է հրէիցն, յաւել եւս ունել զՊնկորոս (ԺԲ. 3):

Ո՛վ բազում պղծութեանն⁸ եւ ամբարշտութեանն⁹ Հերովդի. հաճոյութիւն էր սպանումն¹⁰, եւ այնպիսի սպանումն տարապարտուց:

¹ ԱԲ ըմբիցէք

² Ա գարութիւն, Բ գարութիւն] գարիութիւն,

³ ԱԲ եւ] զի

⁴ ԱԲ ի քարոզութիւն

⁵ Բ յաւետ

⁶ ԱԲ գնոսին

⁷ Բ > որպէս

⁸ ԱԲ պղծութեան

⁹ ԱԲ ամբարշտութեան

¹⁰ ԱԲ սպանումնն

Ուստի յայտնի մեզ լինի չարութիւն թագաւորին, զի անտեղի եւ պիղծ ցանկութեամբ հրէիցն պատեալ պաշարեալ էր: Որոյ պարտ էր զնոցին ներհակն առնել, ի բաց հատանել զարշաւանս մոլորութեան նոցա, իսկ նա մանաւանդ վերատարածէր՝ իբրեւ դահիճ ոմն գոլով հիւանդաց, այլ ոչ բժիշկ: Եւ այն զի բազում աւրինակս ունէր երկիւղի. նախ զպապուն իւրոյ եւ ապա զհաւրն, թէ ո՞րպէս մին¹ վասն մանկանցն կոտորածոյ դժնդակագոյն² կրեաց չարիս, իսկ միւսն զՅովհաննէս գլխատեալ՝ պատերազմ դժուարին յարոյց ինքեան, որով եւ անկաւ իսկ յարքայութենէ: Իսկ սա կարծրացեալ սրտիւ ոչ ի նոսա հայէր, այլ անմտաբար՝ տե՛ս թէ յաղագս որոց ոմանց, կամ որպիսի՞ իրաւք շնորհս առնէր նոցա, սպանմունս առնելով վայրապար եւ սնոտի:

Եւ Էին, ասէ, աւուրք բաղարջակերաց (ԺԲ. 3):

Դարձեալ այսու զառաւել չարութիւն հրէիցն յայտնէ, թէ յորպիսի՞ աւուրս սպանանել ոչ արգելուին, մանաւանդ, թէ այլ ինչ ոչ գործէին յայնմ ժամանակի: «Ջոր իբրև կալաւ, ասէ, եղ ի բանդի³ եւ մարնեաց չորից չորրորդաց գինուորաց պահել զնա» (ԺԲ. 4): Քանզի երկնչէր՝ կարծելով, թէ յերկիւղէն, որ վասն Յակոբայ Պետրոս տեղի տայցէ. եւ կամելով ունել զնա, յաւուրս արկ ի բանտի պահապանաւք: Այլ այս իսկ նշանակ էր առաւել ցասման եւ երկիւղի, զի ոչ բանտիւ միայն, այլ եւ այնքան զինուորաւք պաշարէր զնա: «Եւ կամեր յնոր գաբիկին ածել զնա ժողովրդեանն» (ԺԲ. 4): Եւ թէ⁴ զիա՞րդ ոչ այնպէս վաղվաղակի սպան զնա, որպէս զՅակոբոս, թուի թէ ըստ որում Ղուկաս յայտնի արար զպատճառն, թէ «Էին աւուրք բաղարջակերացն», կամ մանաւ/72բ/անդ զի կամէր զնա կտտամահ խայտառակել սպանմամբ:

Եւ Պետրոս ի պահեստի էր ի բանտին (ԺԲ. 5):

Այլ որչափ ամրագոյն էր բանտն, այնքան սխրալի եղեւ ցոյցք իրացն, եւ այն իսկ լինէր յաղագս Պետրոսի, զի ընտիր երեւեսցի՝ զիւրն արութիւն⁵ ցուցանելով: «Եւ աղաւթք սրբւպ ինէին յեկեղեցոյն⁶

¹ Ա սմին] մին

² Բ դժընդակագոյն

³ ԱԲ ի բանտի

⁴ ԱԲ եթէ

⁵ Բ արութիւն

⁶ Բ եկեղեցոյն էր

վասն նորա առ Աստուած» (ԺԲ. 5): *Քանզի խստագոյն¹ էր տազնապն, եւ յաղագս գլխաւորին էր խնդիրն, վասն որոյ եւ փութով աղաւթիւք առ Աստուած կարգային: Եւ զի Յակովբայ սպանումն² զարհուրեցոյց զնոսա, եւ Պետրոսի ի բանտ³ արկանելն, առ որ մեծ գթասիրութեամբ տրամակայեալք առ վարդապետն, ոչ խուճապեալք եւ խուժեալք եղեն, այլ միաբան յաղաւթս դարձան՝ ի ճշմարիտ մարտակցութիւնն⁴, եւ յանդիմամարտ ձեռն ապաւինեալք՝ ոչ ասէին, թէ խոնարհք եւ չնչինք գոլով մեք զիա՞րդ յաղագս նորա աղաւթեսցուք, որ մեծն է, այլ զի սիրով եւ միաբանութեամբ զիրսն առնէին, սմին վասն եւ առին, զոր հայցեցին⁵: Զի որչափ բռնադատութեամբ գործցին թշնամիքն եւ զգուշութեամբ պահէին, այնչափ փութագոյնս արարին զնոսա եւ ջերմս: Եւ զի ի տաւնին⁶ զփորձութիւնսն ի վերայ ածին, զի նոցա ընտրութիւնն եւ համարձակութիւնն⁷ երեւեսցի:*

Իբրև կամեցաւ ածել զնա Ներովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի բուն ի մէջ երկուց գինուորաց (ԺԲ. 6):

Տե՛ս զգարմանալիս, զի լուծեալքն յաղաւթս, իսկ կապեալքն ի քունն ննջեալ անհոգութեամբ: Եւ զիա՞րդ Պաւղոս ի բանտին ի գիշերի հսկէր Շիղայիւ՝ եւ սա ննջէր: Վայելչապէս. զի նա հսկելովն դուռն հաւատոյ ցուցցէ ի վիշտս եւ զգաւրութիւնն աղաւթից, իսկ սա ննջելովն զաներկիւղ լինելն ի մահուանէ, որ վասն Աստուծոյ, ըստ որում եւ ինքն ոչ զանգիտէր ինչ կամ դողայր, այլ ի նոյն իսկ գիշերին, յորում հանդերձեալ էր ածել ի սպանդ, ուրախացեալ յանհոգս ննջէր, զամենայն ինչ յԱստուած ապաստան արարեալ: «Եւ էր կապեալ կրկին շղթայիւք ի մէջ երկուց գինուորաց» (ԺԲ. 6): Տե՛ս զբազմապատիկ զգուշութիւնն⁸ սպանողացն, որովք յայտնի լինի նոցա չարութիւնն⁹ եւ սորա արւութիւնն¹⁰:

¹ ԱԲ > վասն նորա առ աստուած: քանզի խստագոյն

² ԱԲ սպանումն

³ ԱԲ ի բանտին

⁴ ԱԲ մարդակցութիւն

⁵ Բ հայցէին

⁶ ԱԲ տունին] ի տաւնին

⁷ ԱԲ ընտրութիւն եւ համարձակութիւն

⁸ ԱԲ զգուշութիւնս

⁹ ԱԲ չարութիւն

¹⁰ Ա արւութիւն, Բ արութիւն

Եւ ահա հրեշտակ Տեառն եկաց ի վերայ, եւ լոյս ծագեաց ի փանն (ԺԲ. 7):

Յայնմ գիշերի յայտնեցաւ հրեշտակն, որ ի վաղիւն սպանանելոց էր զնա Հերովդէս, եւ «լոյս ծագեաց», զի տեսցէ եւ լուիցէ Պետրոս՝ եւ մի՛ առ աչաւք երեւոյթ ինչ կարծիցէ: Եւ զլոյսն ոչ ոք ետես բաց ի նմանէ, զի թէ այնպէս եղեւ եւ տակաւին կարծէր երազ գոլ վասն անակնկալի սքանչիցն, թէ այնպէս չէր լիեալ՝ յորպիսի՞ կարծիս ոչ անկանէր: Քանզի յոյժ ճակատամարտեալ էր ընդդէմ մահու, առ որ փութալով ոչ երկնչէր, այլ յանհոգս կայր, նա զի եւ բազում աւուրս մնալով նորա ի բանտին եւ ոչ փրկիլն՝ առնէր զայն:

Եւ խթեաց զկողսն Պետրոսի, զի այնպէս ի խոր ննջէր, եւ յայոյց գնաւ եւ ասէ. Արի՛ վաղվաղակի (ԺԲ. 7):

Զի՞նչ է «յարոյցն» «եւ ասէ. Արի՛»: /73ա/ Թուի, թէ ընդ զարթուցանելն զնա խթելով, զի ընկողմնեալ էր, նստոյց զնա՝ թերեւս զձեռանէ կալեալ, զոր «յարոյց» ասէ նստոյցն, որպէս զայն, թէ «Կանգնեցաւ եւ նստաւ մեռեալն» (Ղուկ. Է. 15), եւ «Տարիթայն նստաւ կանգուն» (Թ. 40): «Եւ ասէ ցնա. Արի վաղվաղակի» (ԺԲ. 7), զի մի՛ պղերգասցի. վասն զի քնակիցք էին զինուորքն:

Եւ զի մի՛ խափանեցեն գնա կապանքն: Իսկոյն անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ ցնա հրեշտակն. աճ զգոյրի քո, եւ արկ գիողաթափս յոյս քո. եւ արար այնպէս (ԺԲ. 7-8):

Յուցանէր հրեշտակն այսու ամենայնիւ, թէ ոչ թշնամույ չարաբարւոյ դաւաճանութեամբ, եւ ոչ բարեկամի վշտակից փութով լինէր այն, զի ոչ ոք փութալով՝ ական հատանել, այնչափ չնչինցն հոգ տանի, մինչեւ առնուլ զհողաթափս, գաւտի ածել եւ ձորձս շուրջ արկանել, որպէս ասաց.

Արկ գիողաթափս¹ քո եւ եկ զկնի իմ, եւ ելեալ երթայր զհետ, եւ ոչ գիտէր, թէ ճշմարիտ իցէ, որ ինչ եղև նմա ի հրեշտակէն, զի համարէր երազ փեսանել (ԺԲ. 8-9):

Բարւոք. զի թէ որպէս եւ էրն, եւ այնպէս ճշմարիտ գոլ կարծէր զեղեալսն յառաջնմէ, թերեւս զարհուրեալ լինէր եւ ի յահէն զհիշա-

¹ ԱԲ զձորձս յ գիողաթափս

տակ իրացն մոռանայր: Բայց այժմ որպէս յերագի հեշտեալ տեսանելով առանց խռովութեան էր:

Եւ իրրել անցին նորա ըստ մի պահ եւ ըստ երկուս, եկին մինչեւ ի դուռն երկայթի (ԺԲ. 10):

Ո՞ր են հերձուածաւղքն, որ ամենայնի գիտակ համարին զանձինս եւ քննեն. ասացեն մեզ այժմ զորպէսն. ահաւասիկ Պետրոս անց ըստ մի՛ պահ եւ ըստ երկու՝ եւ տակաւին կարծէր երագ տեսանել, եւ մանաւանդ զի այս ամենայն եղեւ հաւանեցուցանելով զնա, թէ չէր իրքն կարծիք, վասն որոյ եւ զգաւտին ընդ մէջ ածել հրամայէր, եւ զհողաթափսն յոտս արկանել, եւ խթելովն գքունն ի բաց թաւթափեալ, զի գիտասցէ, թէ ճշմարիտ է, եւ իսկոյն անկանել շղթայիցն ի ձեռացն՝ եւ ասել «արի վաղվաղակի», որ ոչ էր զարհուրեցուցչի, այլ հաւանեցուցչի ոչ պղերգանալ, այլ նմա թուէր երագ տեսանել վասն գերազանցութեան եղելոցն: Արդ, եթէ¹ Պետրոսի թուէր երագ տեսանել առ այնչափ ժամս, եւ այն, զի ինքնին զգաւտին ածէր եւ զհողաթափսն ագանէր, զի՞նչ արդեւք այլ ոք կրեսցէ վասն աստուածայնոցն անհասանելեաց: Լռեսցեն այժմ, որք ունայնս պանծան:

Եկին, ասէ, մինչեւ ի դուռն երկայթի՝ որ հանէր ի քաղաքն, որ եւ ինքնին բացաւ նոցա (ԺԲ. 10):

Արդ, զի յԵրուսաղէմ ըմբռնեցաւ Պետրոս եւ արկաւ ի բանտի², այն ահա յայտ է յասելոյն յետ սակաւուց զՀերովդէս իջեալ ի Հրեաստանէ ի Կեսարիա: Իսկ զի՞նչ այն, թէ «Եկին ի դուռն երկայթի՝ որ հանէր ի քաղաքն» (ԺԲ. 10): Լեառնն Սիոն ի մէջ Երուսաղէմի փակեալ էր հզաւր պարսպաւք, որ եւ միջնաբերդն կոչիւր, որպէս ի Մակաբայեցիսն կայ, յորում էր արքունիքն եւ ապարանքն սեպհական գնդիցն, ի ներքս անդ էր եւ բանտն, ուստի եհան զՊետրոս, եւ ած մինչեւ ի դուռն³, /73բ/ որ հանէր յարտաքին քաղաքն ի նոյն յԵրուսաղէմ, «որ եւ ինքնին բացաւ», ասէ: Եւ ահաւասիկ իւրովի բացումն երկայթի դրանցն երկրորդ նշան ոչ փոքր քան զառաջին եղեալսն:

¹ ԱԲ թէ] եթէ

² ԱԲ ի բանտ

³ ԱԲ ի դուռնն

Եւ մտնալ անցին ընդ փողոց մի, եւ վաղվադակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն (ԺԲ. 10):

Եւ զի ի ներքս լիեալքն յոյժ սքանչելագոյնք էին, այլ այս մարդկեղէն էր զլինի հետեւել, սմին վասն՝ յորժամ ոչ ինչ էր, որ խափանէր զնա, յայնժամ ի բաց եկաց հրեշտակն, զի թէ յորժամ եհան ի բանտէն¹ եւ ի բաց լինէր, ոչ արդեւք յառաջեալ լինէր Պետրոս, այնչափ խափանողաց գոլով, զի ճշմարտապէս զարհուրեցուցիչ լինէր իրքն: «Եւ Պետրոս իբրև ի միտս եղևալ եւ ասէ. Այժմ գիտեմ ճշմարիտ, թէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր եւ փրկեաց զիս ի ձեռաց Ներովդի եւ յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն հրէից» (ԺԲ. 11): Յորժամ ի բաց եկաց հրեշտակն, յայնժամ իմացաւ Պետրոս եւ ասէ. «Այժմ ծանեայ՝ եւ ոչ նախ քան զայս»:

Եւ ընդէ՞ր արդեւք լինէր այնպէս, ոչ զգալ Պետրոսի զեղեալսն², եւ մանաւանդ այնպիսի ազատութեան հասեալ, որ մեծամեծ նշանս ունէր ոչ առ աչաւք գոլոյ: Ասեմ՝ թէ զի յանկարծակի կամեցաւ նմա հեշտութիւնն³ արկանել, զի յետ ազատելոյն յամենայնէ ապա առցէ զիրացն զգայութիւն, որ եւ այն չէր փոքր նմա ինչ նշան, որպէս եղեւ այնոցիկ, որոց աչքն կալեալ էին, զի մի ծանիցեն զՅիսուս, եւ ապա բացան եւ ծանեան զնա: Եւ եթէ ոք ասիցէ, թէ՛ ընդէ՞ր ոչ ի ձեռն ինքեանց իսկ առաքելոցն այսպիսիքս լինէին նշանք, այլ հրեշտակաւք, ասեմ՝ թէ վասն զի այսպէս պատուէր զնոսա Աստուած, ի ձեռն հրեշտակաց զնոսա յափշտակելով, իսկ յայլս՝ ոչ հրեշտակ, այլ ինքեանք իսկ առաքեալքն գործէին, զոր ինչ պարտ լինէր: Եւ թէ զիա՞րդ առ Պաւղոսիւ այսպէս ոչ եղեւ: Զի անդ հաւատալ պարտ էր բանտապետին, իսկ աստ ազատել միայն պարտ էր Պետրոսի. այնպէս զանազանաբար զամենայն ինչ յաւգուտն մեր տնաւրինէր Աստուած:

Այլ թերեւս ասիցէ ոք, թէ ընդէր ոչ թողացոյց զնա անկանել ի ձեռս Հերովդի, եւ ապա անդուստ յափշտակեաց, զի այն իսկ աւելի զնա ի զարհուրումն ածէր, իսկ այս անհաւատալի լինի եղեալ: Ասեմ, թէ այդպէս լինէր, թերեւս ոչ մարդիկ իսկ գոլ կարծեցեալ լինէին բազմաց: Եւ այլազգ. առ Ստեփանոսիւ զի՞նչ ոչ արար, ո՞չ եցոյց որպէս հրեշտակի զերեսս նորա: Տինա՝ զի՞նչ եւ աստանաւր յամենայնէ, որ բաւական էր հաւանեցուցանել զնոսա՝ պակաս եղեւ, այլ ոչ կամեցան շահել զփրկութիւն:

¹ ԱԲ ի բանտէն եհան] եհան ի բանտն

² ԱԲ հաւաստի զեղեալսն] զեղեալսն

³ ԱԲ հեշտութիւն

Եւ լեալ¹ ի միպս (ԺԲ. 12):

Յայտ է Պետրոս այսինքն, թէ ուր էր, եւ թէ ոչ միայն զնալ պարզաբար պարտ էր, այլ իմանալ զչնորՀս բարեբարին եւ աւրՀնութեամբ եւ գոհանալով փառաւորել: «Եկն, ասէ, ի քուն Մարեմու մարն Յովհաննու՝ որ կոչեցաւ Մարկոս» (ԺԲ. 12): Եւ ո՞վ արդեաւք էր սա: Թեբեւս նա էր միչտ ընդ նմա շրջէր, զի վասն այնորիկ զմականունն նորա յաւել Մարկոս:

Կիր. սրբագրաւոյ մեկնիչին.² Որ եւ զրեացն իսկ զաւետարանն՝ /74ա/ որ կոչի անուամբ նորա, ի տուն մաւր³ սորա եկն, ասէ. «Ուր էին բազումք ժողովեալ եւ աղաթս առնէին» (ԺԲ. 12): Տե՛ս, ի զիշերին աղաւթս առնելով որչափ ինչ կատարէին, եւ թէ որչափ բարի է նեղութիւն, զի իբրեւ զուարթունս զնոսա գործեաց: Տեսե՞ր զչաՀ սպանմանն Ստեփանոսի. տե՛ս արդ եւ զբանտիս զայսմ, թէ որչափ էր ամենեցուն աւգտակարութիւն: Եւ զի ուսանիցիս, թէ ոչ սաստելով Աստուած անիրաւացն, մեծ ցուցանէ զաւետարանն, այլ նոքաւք անիրաւողաւքն, ոչ ինչ կրելով իւրոցն ի զգոռողացն չարաչար, եւ զնեղութիւնն⁴ ըստ ինքեան եցոյց մեծամեծ շահս գոյ, զի մի՛ մեք անձանց ամենեկին զազատութիւն խնդրեսցուք, եւ ոչ թշնամեաց զվրէժիւնդրութիւն:

Եւ ի բախել զդուրս քանն, մաքեաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Տոմովէ: Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի, ի խնդալոյն ոչ երաց զդուրսն, ի ներքս ընթացեալ պապմեաց, թէ Պետրոս առ դրանն կայ (ԺԲ. 12-13):

Դիտեա, թէ ո՛րպէս եւ աղախինքն նոցա երկիւղածք էին եւ սուրբք. զի իբրեւ ծանեաւ զբարբառ նորա, թող նա բանալ նմա զդուրսն, եւ յուրախութենէ անտի իւրմէ փութացաւ նա աւետիս տալ ընկերացն: Բարևոք եւ այն իսկ եղեւ, զի մի՛ նոքա յանկարծակի տեսեալ զնա զարՀուրեսցին եւ թերահաւատեսցեն. այլ կանխաւ զգալն լսելով՝ կրթեսցին միտք նոցա, որ եւ մեր է սովորութիւն զայս առնել: Եւ զի աղջիկն այն փութայր, զի ինքն տայցէ զաւետիսն, զի աւետիք էր ճշմարտապէս, իսկ նոքա ոչ ունելով ակն իրացն՝ զայս յանձն ոչ առնուին: Այլ ասեն ցնա. «Մոլիս. եւ նա պնդէր, թէ այդպէս է: Եւ

¹ Բ լիեալ

² Ա > կիր. սրբագրող մեկնիչին

³ Գ մօրն

⁴ ԱԲ գնեղութիւն

նորա ասնն, թէ հրեշտակ նորա իցէ» (ԺԲ. 15): *Եւ զայս ճշմարիտ ասացին, զի իւրաքանչիւր ուրուք հրեշտակ գոյ, զոր եւ Քրիստոս ասաց, թէ «Նրեշտակք նոցա, որ յերկինս» (Մարթ. ԺԸ. 10): Զի՞նչ էր խորհուրդ հրեշտակին, կամ ընդէ՞ր զայն կարծէին: Ի ժամանակէն առին զակնկալութիւն այնմ լինել:*

Եւ Պնտրոս սքեպ բախէր: Զի հաստատեցէ, թէ: Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լոյս (ԺԲ. 16-17),

որպէս զի լուիցեն զառ ի նմանէ ասացեալսն: Քանզի փափաքելի էր այնուհետեւ Պետրոս բազում իրաւք աշակերտացն՝ ոչ ապրելովն միայն, այլ եւ առ նոսա հասանելովն եւ վաղվաղակի ի բաց գնալովն: «Եւ պարմեաց նոցա ո՛րպէս Տէր տեսն գնա ի բանսն» (ԺԲ. 17): Որով այնուհետեւ իմանային իւրքն զամենայն ինչ հաւաստեալ, իմանային եւ աւտարքն, եթէ կամեցեալ էր, բայց ոչ կամեցան զաւզուտն իւրեանց: Իսկ այս եւ առ Քրիստոսիւ եղեւ բազում անգամ, եւ յարութեամբն առաւել, բայց ոչ կամեցան աւզտել:

Եւ ասէ. Պարմեցէք Յակոբայ¹ եւ Եղբարց զայս (ԺԲ. 17):

Տե՛ս ո՛րպէս խոնարհ էր եւ ոչ փառասէր. ոչ ասաց, թէ ամենեցուն, որ յամենայն տեղիս են պատմեցէք, այլ եղբարցն միայն: Ասացէք, ասէ, Յակոբայ եւ եղբարց, զի խնդասցեն եւ զի մի՛/74բ/ հոգասցեն: Եւ տե՛ս, նոքա ի ձեռն սոցա իմանային, մեծքն² ի նուաստիցս, եւ ոչ սոքա ի ձեռն նոցա, զի խոնարհագոյն կողմանն մեծապէս փոյթ առնէին: Զնոյն արասցուք եւ մեք, եւ մի՛ թաքուսցուք զսքանչելիսն Աստուծոյ, այլ վասն մերոյ աւգտի փութասցուք զայնոսիկ հոչակել եւ առ ի յայլոց շինութիւն:

Եւ ել գնաց անտի յայլ փեղի (ԺԲ. 17):

Տե՛ս զհոգաբարձու եւ զխոնարհ հոգին Պետրոսի: Ո՛չ ուրեք վաղվաղակի կամեցաւ գնալ մինչ չեւ եւ սէր աւետիս տուեալ իւրոցն, զի որպէս սքանչելի էր կամաւ յանձն առնուլ ի կապանս մտանել, նոյնպէս սքանչելի էր ոչ յառաջագոյն գնալ մինչեւ պատմեսցէ իւրոցն զամենայն: Եւ ընդէ՞ր գնայր յայլ տեղի. զի ոչ փորձէր զԱստուած եւ ո՛չ արկանէր զանձն իւր ի փորձութիւն: Բայց եւ զայս եւս արա-

¹ Բ Յակովբայ

² ԱԲ մեծք

րին պետրոսեանք, յորժամ հրաման ընկալան, թէ «Մարք դարձեալ ի փաճարն եւ խաւսեցարուք ընդ ժողովրդեանն» (Ե. 20): Այլ սմա զայս այժմ ոչ ասաց հրեշտակն, բայց լռելեայն ի բաց կալովն եւ ի գիշերի հանելովն ո՛չ ետ իշխանութիւն վերստին ի նոյն դառնալ: Նա եւ այս եղեւ, զի ուսանիցիմք, թէ եւ մարդկաւրէն բազում ինչ տնաւրիներալ եղեւ, զի զայս նմա եթող առնել, եւ ոչ դարձեալ ի նոյնն անկանել բանդ¹: Բայց տես, զի յետ գնալոյ նորա ոչ ասացին, թէ հրեշտակ նորա է, այլ յառաջ: Զի եւ ի տեսանելն զնա զըզուեցաւ կարծիք նոցա, ըստ որում եւ նա ստէպ բախէր, զի մի՛ առ աչաւք համարեսցին, զի թէ հրեշտակն էր՝ ոչ բախէր արտաքոյ զգուրսն, եւ ոչ յայլ տեղի գնացեալ լինէր ի տուէ:

ՅՈՐԳՈՐԱԿ

Նմանեսցուք հսկողացն այնոցիկ, եւ մի՛ զամենայն գիշերն քնով ծախեսցուք: Զի ահա ոմանք եւ ոչ շուրջ անգամ առնուն ի մահիճս զամենայն գիշերի իբրեւ զմեռեալս, զի ոչ վասն այնր եղեւ գիշեր, զի հանապազ ննջիցեմք: Ապա թէ ասիցես՝ «վաստակեալ եմ ի տունջեան»² եւ ոչ կարեմ յառնել», արդ բարուրք է՝ հայեաց ի ճանապարհորդս, ի պղնձագործս եւ ի դարբինս եւ յայլ ձեռարուեստս, զմեծ մասն գիշերին³ ի գործ յարուցեալս: Պատկառեա՛ թէ եւ ոչ⁴ յումեքէ՝ ի գիշերապահացն, որք զամենայն գիշերն չըջին՝ մեծամեծս գոչելով՝ ընդ սառնամանիս եւ ընդ անձրեւս բերեալք: Եւ նոքա վասն մարդկային ահի եւ վասն քոյոց ընչից, արի՛ եւ դու վասն ոգւոյ քոյ հանդերձ կնաւ եւ որդւովք եւ աղախնովք⁵, որպէս նոքա զորոց վերագոյն լուաք: Յիշեա՛ զԴաւիթ, որ թագաւոր գոլով՝ զամենայն գիշերս արտասուէր. փուլթա եւ դու արտասուաւք՝ դալարացուցանել ի գիշերի զտապացեալ ոգիդ տունջեամբ⁶: Եւ առ այս յոյժ աւգնական լինի քեզ գիշերային խոր լռութիւնն⁷ ի յիշատակ մահու գքեզ ածելով, տեսանելով քո զգոռոզս եւ զանիրաւս ընդարմացեալս քնով իբրեւ զմեռեալս:

¹ ԱԲ ի բանտ] բանդ

² ԱԲ տուընջեան

³ ԱԲ գիշերոյն

⁴ Բ ոչ յայլ

⁵ ԱԲ > աղախնովք

⁶ ԱԲ տուընջեամբ

⁷ ԱԲ լռութիւն

[ԳԼՈՒԽ ԻԷ.]

Իբրև այգ եղև, էր խոովութիւն մեծ ի մէջ զինուորացն, զի՛ արդևք Պետրոսն եղև (ԺԲ. 18):

/75ա/ Զի որ ինչ եղեւն առ նա ի հիշատակէն, անյայտ ի զինուորացն եղեւ: Եւ զի թէ եւ զնոսա եւս ընդ Պետրոսի հանեալ էր հրեշտակին, փախուստ գոլ կարծեցեալ լինէր իրքն: Այլ քանզի ոչ գոյր ընդ նոսա, զոր այնչափ զգուշութեամբ պահէին, մեծապէս իսկ խոովէին յահէն Հերովդի, միանգամայն զարմացեալք ընդ իրսն:

Իսկ Ներովդէս իբրև խնդրեաց գնա եւ ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն հրամայեաց սպանանել (ԺԲ. 19):

Եփր. Զի զորս ուրախ արար մահուամբն Յակոբայ¹, տրտմեցուցէ մահուամբ սպանչացն² առաքելոցն:

Յոհ. Այլ թերեւս տարակուսեսցի ոք, թէ՛ «ընդէ՞ր անտես արար Աստուած», յայնժամ զմանկունսն կոտորեալս վասն Քրիստոսի, եւ այժմ դարձեալ զզինուորսն սպանեալս ի պատճառս Պետրոսի, եւ մանաւանդ զի հնար էր յետ Պետրոսի եւ զնոսա ազատել: Ասեմ, թէ որպիսի՞ վնաս եղեւ այժմ, ասա ինձ, զի ահա մանկունք, որ անիրաւ զչարիս կրեցին՝ հանգիստ գտեալ շահեցան եւ ոչ վնասեցան: Իսկ ընդէ՞ր եւ ոչ վասն Յակոբայ³ ասես զայդ, զի եւ զնա ոչ փրկեաց: Այլ քանզի անհասանելիք էին գործք նորա, եւ ոչ ոք բաւէ քննել:

Իսկ յաղագս զինուորացն ասեմք, թէ «Զի այժմ չէ ժամանակ դատաստանի իւրաքանչիւր ումեք զարժանն հատուցանել»: Եւ այլազգ. ոչ եթէ Պետրոս ընկէց զնոսա ի ձեռս նորա, այլ զի պարտեալ եղեւ՝ այն մանաւանդ տրտմեցուցանէր զնա, որպէս զնորուն պապն, խաբէրն ի մոգուցն, բարկութեամբ վառէր եւ ծանակ կացուցանէր, նոյնպէս եւ սա կիզոյր բարկութեամբ վասն վրիպելոյն ի սպանանելոյ զՊետրոս, զզինուորսն սպանանէր անիրաւաբար: Վասն զի հարցանելովն զպահապանսն՝ ապաքէն լուաւ ի նոցանէ զստոյգն, զի կապանքն այնպէս կային անկեալ, եւ զի մինչեւ ցայն գիշեր ընդ նոսա էր, այլ նա այնմ միտ ոչ առնէր, կամ զգայր զսքանչսն, այլ զնոսա սպանանէր առ ամբարտաւան ցասմանն:

¹ Բ յակովբայ

² ԱԲ սպանչաց

³ ԱԲ յակովբայ

Առ որ ասելի է, թէ ով անզգամ, ո՞չ տեսանես, զի երկաթքն ոչ լուծեալ է եւ ոչ փշրեալ, եւ պահապանքն ի ներքս, եւ արտաքուստ բանտն փակեալ, եւ յորմս տանն ոչ ական¹ հատեալ. եւ այսք ամենեքին գոչեն՝ զի ոչ մարդկային էր յափշտակիլն նորա: Արդ, զսոսա ընդէ՞ր դատապարտես, միթէ սոքա՞ փախուցին, ընդէ՞ր եւ ոչ ինքեանք ընդ նմին փախեան՝ գիտելով զաններելի դառնութիւնդ քո: Այլ թերեւս ինչս առեալ արձակեցին, այլ ուստի՞ տայր, որ եւ աղքատի տալ ոչ ունէր: Այլ պարտ էր յայսցանէ սքանչանալ նմա եւ ի միտ առնուլ, թէ աստուածային եւ ոչ մարդկային էր գործն, եւ զարհուրել, զի յանիրաւ իրս յանդգնէր: Բայց այնուհետեւ ի ձեռն սպանման նոցա ամենեցուն յայտնի լինէր նորա չարութիւնն² եւ Աստուծոյ սքանչելիքն: Եւ դու տե՛ս զճշմարտասիրութիւնն Ղուկայ, զի զայսոսիկ ոչ թաքուցանէ. եւ թէ զիարդ միաբանի միւս աւետարանչին, թէպէտ զմանկանցն սա ինչ ոչ ճառեաց յաւետարանին, բայց զՅովհաննուս միայն: «Եւ իջեալ ի Նրեսարա/75բ/տէ Ի Կեսարիա եւ անդ լինէր» (ԺԲ. 19): Այսինքն՝ Հերովդէս: Յայտ է ապա, զի յԵրուսաղէմ գործեաց զվերագոյն պատմեալս եւ զսպանումնն Յակոբայ³:

Եւսերի. Եւ իբրեւ առ Պետրոս վրիպեցաւ ի չար կամացն՝ յամաւթ եղեւ եւ տարակուսեալ էջ ի Կեսարիա: Յայն որ ասի, թէ Պեննադա⁴ է նա, յորում էր ի յիշատակ⁵ սքանչիցն Տեառն առ կինն տեռատես՝ պատկերն պղնձի⁶:

Եւ էր Ներովդէս ցասմամբ ընդ փիրացիս եւ ընդ սիդոնացիս (ԺԲ. 20):

Յոհ. Ընդէ՞ր զայս պատմութիւնս աստ յիշէ, կամ զի՞նչ միաբանութիւն ունի յառաջիկայս: Եւ կարի ի ճահ, զի զչարութիւն նորա մասամբ ինչ յայտնեաց, կամի եւ զամբարտաւանութիւն նորա ցուցանել, եւ զԱստուծոյ դատաստանին վճիռ, զի յամենայնի զճշմարիտն ցուցցէ, բերէ զայս ի մէջ, թէ էր նա ցասուցեալ ընդ սիդոնացիս: «Եւ նորա առ հասարակ եկին առ նա» (ԺԲ. 20): Ինձ թուի, զի եւ զնոսա ի պատասխանիս ածելով՝ զհետ տարեալ լինէր, քանզի

¹ Բ անկան] ական

² Բ չարութիւն

³ ԱԲ յակովբայ

⁴ ԱԲ պէննադա

⁵ ԱԲ յիշատակ] ի յիշատակ

⁶ ԱԲ պղնձի

ցասկոտ եւ խռովասէր միտս ունելով՝ բարկացեալ էր ի վերայ նոցա, եւ զհրեայնսն անեցուցանել կամէր: «Իսկ ծուրացիք ի բանի արարեալ զԲդասարոս¹ սենեկապետն նորա խնորել զխաղաղութիւն» (հմմտ. ԺԲ. 20): Տե՛ս, թէ զի՞՞րդ իբրեւ տառապեալ մի ի մտաց՝ դիւրաւ ի բարկութիւն յուզէր, եւ անագատ գոլով՝ ի ձեռն միոյ սենեկապետի ի հաշտութիւն փոխէր, յամենայնի ծառայ գոլով հանդիսին: Եւ քանզի վասն² սովոյն վտանգի, որ ի վերայ կայր, զոր վերոյ յիշեաց, աղաչէին նոքա կերակրել գաւառի նոցա յարքունուստ:

Իսկ յաւուր մի երեսելոջ Ներովդէս զգեցեալ հանդերձ թագաւորութեան նստելի յապենի եւ հրապարակաւ խաւսէր ընդ նոսա (ԺԲ. 21):

Տե՛ս, թէ ո՞րպէս սնափառ էր այրն, զի հանդերձեալ տալ նոցա զձիրն՝ հրապարակաբանէր յատենին: Իսկ Յովսեպոս ասէ, թէ «Հանդերձս պայծառս յարծաթոյ պճնեալ զգեցեալ էր», ուստի ընդ շողոյ արեգականն ի վերայ անկանելոյ ճառագայթք արձակէին, եւ այնպէս նստէր ի տե՛ս խաղուն հրապարակախաւսելով առ նոսա: «Եւ ամբոխն աղաղակէր, թէ Աստուծոյ է բարբառն եւ ո՛չ մարդոյ» (ԺԲ. 22): Տե՛ս զնոցա սուտակասպասութիւնն, թէ զի՞՞նչ աղաղակէին՝ Աստուած կարողալով զմարդ մահկանացու: Տե՛ս եւ զառաքելոցն խոհեմութիւնն³, զի զնա, որ զագգս բոլորովին այնպէս հանեցուցանէր, նոքա զնա ատէին:

Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ եր փառս Աստուծոյ, եւ եղեալ որդնալից սաքակեցաւ (ԺԲ. 23):

Ո՛չ փոքր աւգուտ եղեւ այս ինչ առ ի գիտել եւ ի միտ առնուլ զիրաւունս Աստուծոյ: Զի տես, թէ ո՞րպէս վաղվաղակի դատաստանն արդար եհաս ի վերայ, թէպէտ եւ ոչ վասն Պետրոսի, այլ վասն նորին գոռոզ բարձրամտութեանն⁴: Այլ ասեն. «Ամբոխն աղաղակեցին, նմա զի՞՞նչ մեղ էր»: Այո, վասն զի ախորժելով զայնպիսի ձայնն ընկալաւ, զի զանձն արժի՞՞ գոլ կարծեաց խաբեբայիցն աղաղակին: Վասն այսորիկ մանաւանդ եւ խաբեբայքն խրատեալ եղեն՝

¹ ԱԲ զԲդասարոս

² ԱԲ > վասն

³ ԱԲ խոհեմութիւն

⁴ ԱԲ բարձրամտութեան

⁵ ԱԲ արժանի] արժի

մի՛ յանդգնել տարապարտուց յայնպիսի իրս: |76ա| Տե՛ս դարձեալ զերկաքանչիւրսն արժանիս գոլ պատուհասի, զնոսս մնացեալս եւ զնա տանջեալ: Զի չէ այժմ¹ ժամանակ² դատաստանի հատուցման³, այլ նոցա թողացուցանէ, զի յայնմանէ շահեսցին զփրկութիւն անձանց, եւ զնա յաւէտ դատապարտեալ տանջէ՝ զանբժշկելին ախտացեալ:

Արդ, Յովսեպոս ասէ, թէ «Ձառուրս հինգ ի խիստ հիւանդութիւն անկաւ ի րես ռամկին»: Եւ քանզի բազումք ոչ գիտացին զայն, եթէ հրեշտակ Տեառն եհար զնա, այլ աւետարանիչն եդ եւ զայս իսկ, որպէս եւ գիտէր Հոգևով զճշմարիտն: Սակայն եւ անգիտանալն զայն բազում աւգուտ էր. խորհելով նոցա, թէ վասն աղաղակին եղեւ այն եւ վասն սպանմանն Յակոբայ⁴, եւ վասն զուր կոտորածի զինուորացն: Եւ տես, զի յորժամ զառաքեալն⁵ սպան, ոչ ինչ այնպիսի գործեցաւ, այլ յորժամ զսոսս դատապարտեաց: Եւ զի եկեալ առ նա սուտակասպաս լինէին ասելով, «Զի թէպէտ ցայժմ մարդ մահկանացու համարեաք զքեզ, այլ այժմ գիտացաք Աստուած գոլ զքեզ, իսկ եւ իսկ ապա ի կրուկն ամբարհաւած բարբառոյն՝ յորդունս զեռեալ գարշելապէս, եւ ողորմելաբար տանջանաւք քակեալ զկենցաղն, այլ ոչ լինի երեւեալ վիրագն»: Արդ, պարտ էր ի միտ առնուլ զայս հրէից, թէ նա լուաւ միայն, թէ «Աստուծոյ ձայն է եւ ոչ մարդոյ» (հմմտ. ԺԲ. 22), եւ մանաւանդ ինքն ոչ ինչ ասացեալ եւ զայնպիսի կիրս կրեաց, ապա յոյժ մանաւանդ եւ Քրիստոս, եթէ ոչ էր Աստուած, զոր եւ ինքն միշտ ասէր, եթէ «Բանն, զոր խաւսիմ, ոչ է իմ, այլ Նաւրն, որ առաքեացն զիս» (Յովհ. ԺԴ. 24), եւ «Իմ թագաւորութիւնս չէ յայսմ աշխարհի» (Յովհ. ԺԸ. 36), եւ զայլս սոյնպիսիս:

Եւ բանն Աստուծոյ անէր եւ բազմանայր (ԺԲ. 24):

Տե՛ս զԱստուծոյ տնաւրէնութիւնն եւ զհանգիստն նոցա զմեծ յետ նեղութեանն⁶, եւ բազում բարիս ի նորա պատուհասիլն: Քանզի այսոցիկ այսպէս եղեալ, հաւատացեալքն բազմացեալք լինէին:

¹ Բ այժմիկ

² Բ > ժամանակ

³ Բ եւ հատուցման

⁴ ԱԲ յակովբայ

⁵ Բ զառաքեալ

⁶ ԱԲ նեղութեան

«Բառնարաս եւ Սաւղոս դարձան յԵրուսաղէմ՝ իբրև կապարեցին զպաշտարանն: Զայն ասէ զպաշտարան, զի փարան նորա զթոշակն ի պէս սրբոցն, որ յԵրուսաղէմ: Առեալ ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցաւ Մարկոս: Եւ¹ Էին ոմանք յԱնտիոք² ըստ եկեղեցոյն մարգարէք եւ վարդապէտք, Բառնարաս եւ Շմաւոն կոչեցեալն Նիզել, եւ Ղուկիոս կիւրենացի, եւ Մանայէն դայեկորդի Ներովդի չորրորդապետի եւ Սաւղոս (ԺԲ. 25, ԺԳ. 1):

Տակաւին՝ յառաջագոյն զԲառնարաս եւ զայլսն յիշէ, զի ոչ եւս էր Պաւղոս պայծառացեալ եւ ոչ նշանս ինչ գործեալ: «Մինչդեռ ի պաշտարանն Տեառն կային եւ պահէին³, ասէ, Նոզին Սուրբ» (ԺԳ. 2): Զի՞նչ է «ի պաշտարանն Տեառն կայն»: Զքարոզութիւնն⁴ կոչէ պաշտաւն: Արդ, պահս կատարէին եւ պաշտաւն. զի գիտացես, թէ բազում արթնութեան պէտք էր: «Ասէ Նոզին Սուրբ» (ԺԳ. 2): Եւ ո՞ր պէս ասաց ցնոսա. ի ձեռն մարգարէիցն թերեւս: Վասն այսորիկ յառաջագոյն ասաց, թէ «Մարգարէք էին յեկեղեցոյն»:

Արդ⁵ գիտեա այսուհետեւ զիշխանական զաւրութիւնն Հոգւոյն Սրբոյ, զի պահելով նոցա, ասաց «Ասէ Նոզին Սուրբ»: «Որոշեցք ինձ զԲառնարաս եւ զՍաւղոս/76բ/ս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ գրոսս» (ԺԳ. 2): Զիս⁶ ըրդ արդեւք համարձակիցի ոք ոչ նորին հայրական իշխանութեանն գոլ ասել զայսոսիկ: Եւ քանզի զՊաւղոս Քրիստոս կոչեաց յառաջագոյն, որ եւ ասաց իսկ՝ «Անաւթ ընտիր է նա ինձ» (Թ. 15), եւ ինքն զՀաւրէ իսկ ասէ՝ «Այլ Աստուած, ասէ, յորժամ կամեցաւ՝ որոշեաց զիս յորովայն մար իմոյ եւ կոչեաց զիս ի ձեռն շնորհեաց իւրոց աւերարանկ զՈրդին իւր ինն» (Գղտ. Ա. 15-16): Իսկ աստ ասէ «Նոզին Սուրբ»՝ որոշեցէք ի գործ⁶, յոր կոչեցեալ է իմ գրոսս: Այլ զի յայտնի լիցի, թէ որ Հաւր ասի՝ «Այն Որդւոյ է եւ Հոգւոյն», եւ որ ինչ «Որդւոյ եւ Հոգւոյ»՝ նոյն եւ Հաւր: Եւ զի ո՛չ ասաց որոշեցէք Տեառն՝ այլ ինձ, զմիութիւն իշխանութեանն⁷ այսու եցոյց: Իսկ զի՞նչ է «Որոշեցէք ինձ ի գործ», այսինքն՝ յառաքելութիւն: Այլ զայս առնէ Հոգին, զի մի իցեն նոքա հասա-

¹ ԱԲ > ԵԼ

² Ա յանտիոք

³ Բ > ԵԼ պահէին

⁴ Բ զքարոզութիւն

⁵ Բ այլ] արդ

⁶ ԱԲ ինձ ի գործ] ի գործ

⁷ ԱԲ իշխանութեան

րակաբար ընդ այլոցն: Քանզի ետես զնոսա մեծագոյն զաւրութիւն ունելով եւ բազմաց հնարաւորեալ զփրկութիւն, շատ համարեցաւ միայն լինել նոցա:

Յայնժամ պահեալ եւ աղաւթս արարեալ՝ եղին ձեռս ի վերայ նոցա եւ արձակեցին (ԺԳ. 3):

Տե՛ս ո՛րչափ ինչ մեծ է պահք եւ բազում բարեաց պատճառք: Քանզի պահելով նոցա՝ ասաց «Նոզին Սուրբ՝ որոշեցիք ինձ»: Եւ յորժամ պարտ էր ձեռնադրել՝ պահս ընդ աղաւթից լծակցեցին եւ եղին ձեռս ի վերայ նոցա: Տե՛ս ի ձեռն ո՞րոց ոմանց եղեն ձեռնադրեալք. Ղուկիոսի կիւրենացոյ, Շմաւոնի եւ Մանայենայ, զի իմասցին, թէ ի ձեռն Հոգւոյն եղեւ ամենայն, զի ոչ նոքա, այլ Հոգին Սուրբ, զի որչափ դէմքն նուազագոյնք էին, այնչափ Աստուծոյ շնորհքն մեծապէս երեւեալ լինէր ի նոսա: Արդ, ձեռնադրեալք եղեն այնուհետեւ յառաքելութիւն, իբրեւ իշխանութեամբ քարոզեալ եւ առնել սքանչելիս, զորս եւ համանգամայն ձեռնադրեալ ի բաց արձակեցին: Արդ, զիա՞րդ ապա ինքն ասէ. «Ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ» (Գղտ. Ա. 1): Այո, զի ոչ եթէ մարդ ոք զնա կոչեաց եւ աշակերտեաց, այլ Աստուած: Այս է, «ոչ ի ձեռն մարդոյ», ըստ որում եւ աստանաւր զաճակիւն ասէ՝ «Ոչ յումեքէ, այլ ի Հոգւոյն Սրբոյ»:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ վերստին յիշեցուցանեմ զկարեւոր պիտանութիւն պահոց: Բայց ոչ անչափ պնդութեամբ խեղդ արկանեմ անսուաղ լինել, եւ ոչ զչափաւոր կերակուրն խափանեմ, որ տիրապէս է վայելումն, այլ յանչափ որկորստութենէ եւ ի վնասակար արբեցութենէ ուժգին սաստիւ ի բաց լինել հրամայեմ, որ մանաւանդ ապականիչ է հոգւոյ եւ մարմնոյ, եւ բազում աղմկով եւ խռովութեամբ զոգին պաշարէ, եւ քան դիւրահարսն դժնդակագոյն¹ զգուանաւք լլկէ: Զի ո՞ւմ վայ է, թէ ոչ որոց յամէնն ի գինևոջ: Եսաւ յորկորստութենէ կորոյս զանդրանկութիւնն², Ժողովուրդն նստաւ ուտել եւ ըմպել³ եւ կուպաշտել: Խնայեա ի քեզ եւ տե՛ս ի նահատակսն, զի անաւար⁴ եւ նրբագոյն մարմին զաւրեղ է, եւ ոգին՝ քաջ եւ ժիր: Առ եւ ի մաւտոյ

¹ ԱԲ դժընդակագոյն

² ԱԲ զանդրանկութիւն

³ ԱԲ ըմբել

⁴ Ա անսուար

աւրինակ զժուժկալ պահացողսս¹, զորոց Ղուկ/77ա/աս պատմաբանեաց:

[ԳԼՈՒԽ ԻԸ.]

Եւ նորա առաքեալք² ի Տոգոյն Սրբոյ, իջին ի Սելեւկիա (ԺԳ. 4):

ՅԱնտիրոք լինի Պաւղոս ձեռնադրեալ ի Հոգւոյն, քարոզել ուր առաքեսցի: Այլ դու յորժամ լսես, թէ ի Հոգւոյն առաքեցան, մի՛ խնդրէր հասու լինել ամենայնին, զի ոչ միայն ձեռնադրեալք եղեն ի Հոգւոյն, այլ եւ ի բաց առաքեցան:

Արդ, իջեալք ի Սելեւկիա, ո՛չ դեգերին³ անդ յերկար՝ գիտելով, զի ի մերձաւոր քաղաքէն Տարսոնէ առեալ լինին բազում աւգտակարութիւն: Այլ առ կարեւորսն փութալով անտի «Նաւեցին ի Կիպրոս» (ԺԳ. 4), իբրու⁴ ոչ գոյով անդանաւր⁵ դաւաճանութիւն⁶, մանաւանդ զի ընդարձակեսցի քարոզութիւնն⁷. քանզի յԱնտիրոք բաւական էին այնք, եւ Փիւնիկէ մերձ էր ի Պաղեստին, իսկ Կիպրոս՝ ոչ եւս:

Եւ հասեալք ի Սաղամինա, որ էր մայրաքաղաք կիպրացոց, պապմէին գրանն Աստուծոյ (ԺԳ. 5):

Քանզի յԱնտիրոք զամ մի ողջ արարեալ, պարտ էր եւ անդանաւր գնալ, եւ ոչ հանապազ աստ ելեթ նստել, այլ զի եւ նոքա մեծագոյն վարդապետաւքն վայելեսցեն: «Եւ ի ժողովս իրէիցն նախ պապմէին գրանն Աստուծոյ» (հմմտ. ԺԳ. 5): Զամենայն փոյթ նոցա արարեալ յառաջագոյն, զի մի վիճաբանագոյնս զնոսա գործեսցեն: «Ունէին եւ գՅովիաննէս պաշտանայ» (ԺԳ. 5): ԶՄարկոսէ ասէ, քանզի երկանուն էր: «Եւ շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև ի Պասփոս» (ԺԳ. 6): Ի մայրաքաղաքէն սկսեալ՝ անցանէին ընդ բոլոր կղզին, եկին ի Պամփոս, եւ անդ առ արմատ ցաւոցն հասանելով՝ զհոգեմոնն⁸ աշխարհին ուղղել փութացան:

¹ Բ պահողսս] պահացողսս

² ԱԲ առաքեալքն

³ ԱԲ դեգերէին

⁴ ԱԲ իբր

⁵ ԱԲ անտանօր

⁶ ԱԲ դաւաճանութեան

⁷ Բ քարոզութիւն

⁸ ԱԲ զհոգեմոնն

Եւ գփին անդ գայր զոմն մոգ, սուր մարգարէ, հրեայ, որոյ անուն էր Բարեյեսու¹ (ԺԳ. 6):

Որպէս անդ Սիմոն մոգ, դարձեալ եւ աստանաւր երեւի մոգ՝ հրեայ, անուն Բարչուժա, «Որ էր ընդ փոխանակի բղեշխին» (ԺԳ. 7): Այս է, զի շրջէր նա ընդ անթհիպատին Սերգեայ Պաւլոսի առն իմաստնոյ², որոյ աղաչեցեալ զԲառնաբաս եւ զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ: Այր իմաստուն ասելն զանթհիպատն՝ ոչ է ըստ ակնառութեան³. եւ ահա յիրացն տեսչիր: Թէ ո՞րպէս ոչ բազում բանից կարաւտացաւ, եւ զիա՞րդ իւրովի աղաչանաւք կամեցաւ լսել նոցա: Բայց եւ զանուանան եւս զնորին ասէ, որ զառաջինն Սերգէս⁴ գոլով, յայտ է՝ զերկրորդն⁵ նորոգ կոչեցին Պաւլոս: Եւ սքանչելի են սորա իրքն, զի նախ ըմբռնեալ կախարդութեամբ մոգին, եւ կամէր լսել զբանս առաքելոցն: Զայս ինչ եւ սամարացիքն արարին, զորս երբեմն ապչեցուցանէր Սիմոն: Բայց տե՛ս աստ զառաքելսն, զի ընդ կախարդին ոչ ինչ ասէին մինչեւ ինքն ետ զպատճառն, այլ միայն զբանն Աստուծոյ պատմէին: Եւ քանզի զայլսն տեսին հաւատացեալս, եւ առ մի միայն հայէին առ անթիպատն⁶, զի եւ նա հաւատասցէ: Այլ

Ընդդէմ եկաց նոցա Ելիմաս⁷ մոգ, զի այսպէս թարգմանի անուն նորա, խնդրէր⁸ շրջել զփոխանակ բղեշխին ի հաւաքոց (ԺԳ. 8):

Տե՛ս զանափառութիւն եւ զիշխանութիւն յամենայնի պատճառ չար/77բ/եաց վատթարացն, որպէս սմա, զի ահա յորժամ այլոցն քարողէին, ոչ կարի վշտանայր մոգն, իսկ յորժամ առ հոգէմոնն⁹ եկեալ լինէին քարողել նմա, յայնժամ մոլէր ընդդէմ կազելով:

Այլ աստանաւր ի բաղդատութենէ՝ յաղթութիւն պայծառ երեւի, կախարդութիւնն¹⁰ յաղթահարեալ լինելով: Վասն զի Սաւղոս, որ է¹¹ Պաւլոս, զի յետ ձեռնադրութեանն փոխեցաւ անուն նորա

¹ ԱԲ բարեհեսու

² ԱԲ իմաստնոյն

³ Բ ակնառնութեան

⁴ ԱԲ սերգեա

⁵ ԱԲ զի գերկրորդն] գերկրորդն

⁶ ԱԲ անթիպատն

⁷ ԱԲ եղիմաս

⁸ Ա խնդրեր

⁹ Ա հոգեմոնն

¹⁰ ԱԲ կախարդութեան

¹¹ ԱԲ որ] որ է

որպէս Պետրոսին եւ այլոցն, «Սա լցեալ Նոգուով Սրբով» (ԺԳ. 9): Զի մի՛ զասացեալսն սրտմուծիւն զոլ կարծիցես, «Նայեցաւ ի նա եւ ասէ. Ով լի ամենայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ որդի սաքանայի» (ԺԳ. 9-10): Ոչ են բանքս անարգողի, այլ յանդիմանողի զծածկեալ չարութիւնն¹ ի նմա. զի զխիստսն եւ զանամաւթսն այսպէս պարտ է զարհուրեցուցանել: «Լի, ասէ, ամենայն նենգութեամբ» (ԺԳ. 9), ոչ ինչ նուազեալ ի չարեաց: «Լի խորամանկութեամբ»՝ զի կեղծաւորութեամբ կայր՝ փրկութեան ձեռով կորուսանել խնդրելով զանթճիպատոսն: «Որդի, ասէ, սաքանայի» (ԺԳ. 10): Զի զնորին գործ էր զգործ, յորմէ եւ կախարդութիւնն² կորուսիչ: «Թշնամի ամենայն արդարութեան» (ԺԳ. 10): Զի ամենայն արդարութիւնն³ այն իսկ էր, զոր քարոզէրն: Բայց այսու եւ զկենցաղն նորա յանդիմանէ չար եւ զիղիս գոլ: «Ո՞չ լոնս ի թիրևիոյ գճանապարհս Տեառն գուղիս» (ԺԳ. 10): Ո՞չ ասաց, թէ ընդէ՞ր ոչ դարձարէս դարձուցանէլ զանթճիպատդ, այլ ընդէ՞ր թիւրես գուղիդ ճանապարհն Տեառն: «Ոչ ընդ մեզ մարտնչիս, ասէ, այլ ընդ ուղիդ ճանապարհին Տեառն» (հմմտ. ԺԳ. 10): Զայսոսիկ գովելով ասէ, զճշմարտութիւնն⁴ ցուցանելով:

Եւ արդ ահա ձեռն Տեառն ի վերայ քո, եւ եղիցիս կոյր, չքեսանել զարեւ մինչև ի ժամանակ մի (ԺԳ. 11):

«Ձեռն»՝ զներգործութիւն Հոգւոյն ասէ, եւ այս ոչ էր պատուհաս, այլ բժշկութիւն, եթէ կամէր: Գրեթէ այսպէս ասէ, թէ ոչ ես առնեմ զայս, այլ ձեռն⁵ Աստուծոյ: Եւ ահա «եղեցիս⁶ կոյր», որով ինքն ածեալ եղեւ, եւ⁷ կամէր եւ զնա ածել: Բայց աստ ոչ լոյս որպէս շուրջ զՊաւղոսիւ փայլեաց: Իսկ ասելն, թէ «մինչև ի ժամանակի», ոչ էր պակաս նշան քան զկուրացուցանելն: Եւ դարձեալ տայ նմա այսու յոյս, թէ կամեսցի, զի ոչ էր բանն տանջողի, այլ դարձուցանողի, զի թէ տանջել միայն կամէր, հանապազ սանմանէր ի վերայ նորա զկուրութիւնն⁸: Բայց այժմ ոչ այսպէս, այլ առժամայն, զի զանթճիպատն չահեսցի, եւ նմա տացէ ի չարեացն ապաշխարել: Վասն զի

¹ ԱԲ չարութիւն

² ԱԲ կախարդութիւն

³ Ա արդութիւն] արդարութիւն

⁴ ԱԲ զճշմարտութիւն

⁵ ԱԲ ձեռն

⁶ Ա եղիցես

⁷ Բ > եւ

⁸ ԱԲ զկուրութիւն

ոչ ախորժէին առաքեալքն պատուհասելով զթշուառականսն երեւելիք լինել, մանաւանդ զթշնամիսն, զի առ ընտանիսն վայելչապէս պատահի այս, այլ առ աւտարսն ոչ եւս, զի մի՛ ի հարկէ հաւատալն կարծիցի եւ յերկիւղէ:

Եւ անդէն անկաւ ի վերայ նորա մէջ եւ խաւար, եւ շրջեր խնդրէր առաջնորդ (ԺԳ. 12):

Արդ, նշան կուրութեանն¹ առաջնորդին խնդրելն էր, եւ այն յայտնի առնէր, զոր յոգւոջն նորա էր կուրութիւն: Եւ թէ ընդէ՞ր ոչ այլ ինչ նշան արար: Զի թերեւս այն ոչ լինէր այսմ հաւասար առ ի յըմբռնելն զթշնամին, զոր յառաջագոյն ամբաստանելով եցոյց արժանի գոլ կրելոյ զայս, զի գյառաջ/78ա/ագոյն ըմբռնեալն կախարդութեամբն, այնպիսի պատուհասիւ պարտ էր խրատել, որպէս գէտքն եւ մոգքն առ Մովսէսիւ ի ձեռն² խաղաւարտիցն խրատեալք լինէին:

Յայնժամ փնտելալ փոխանակի բղեշխին գիրսն, որ եղեն, հաւաքաց՝ զարմացեալ ընդ վարդապետութիւնն³ Տեառն (ԺԳ. 12):

Տե՛ս, զի նորա խաւարմամբն անթհիպատն ոչ միայն հաւատաց, այլ զարհուրեալ եւ զարմացեալ յառաջագոյն: Եւ տես, զի ոչ լոկ բանք եւ պատրանք էին այն: Եւ տես, թէ նա ո՞րչափ սէր⁴ եւ ցանկութիւն ունէր առ վարդապետութիւնն⁵, ի սկզբանէ գոլով այնպիսի:

Բայց ոչ յամեն⁶ նոքա ի տեղւոջն, զի հաւատաց անթհիպատն, եւ ոչ թուլացեալ կակղանան զիւրութեամն եւ պատուովն⁷, այլ իսկոյն ի գործ բանին՝ որ յայնկոյս էր ի գաւառն զիմեն⁸:

Եւ ամբարձեալ ի Պամփիլ պաւղոսեանց՝ եկին ի պերգէ Պամփիլեայ⁹ (ԺԳ. 13):

¹ ԱԲ կուրութեան

² ԱԲ ի ծայն] ի ձեռն

³ ԱԲ վարդապետութիւն

⁴ ԱԲ սիրէր] սէր

⁵ Ա բ վարդապետութիւն

⁶ ԱԲ յամէն

⁷ Բ պատուելովն] պատուովն

⁸ Ա բ դիմէն

⁹ ԱԲ պամփիլեայ

«Ամբարձան» ասելովն՝ զարագածեպ փոյթ ընթանալոյն կամի յայտ առնել: «Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ դարձաւ յԵրուսաղէմ» (ԺԳ. 13): ԶՀեղ-գութիւն նորա յայտ առնէ այսու, իբրու զի ընդերկարածիգ այնու-հետեւ առնէին նոքա ճանապարհ, եւ մանաւանդ զի նա պաշտաւ-նեայ էր, եւ նոքա ունէին զհոգսն եւ զտազնապն, այլ ոչ բարկացան ինչ առաքեալքն ի վերայ նորա, զի ոչ կարեւոր ինչ էին իրք նորա, այլ ի գործ անդր փութային: «Նորա գնացեալ, ասէ, ի Պերգեայ եկին յԱն-տիոք Պիսիդեայ» (ԺԳ. 14): Տե՛ս, թէ զիարդ համառուտէ շարագիրն, եւ ոչ մի ըստ միտջէ պատմէ մեզ:

Եւ մտնալ, ասէ, ժողովուրդն յաւուր շարբաթու՝ նստան (ԺԳ. 14):

Դարձեալ հրէական ձեւով ի ժողովուրդն մտանեն, որպէս զի մի՛ մատուցեալք լիցին կամ հալածեալք, այլ զի նախ բանին ճանա-պարհ հորդեցին, ըստ որում եւ ոչ յառաջագոյն սոքա խաւսեցան, այլ ի նոցանէ յորդորեալք իբրեւ զաւտարս ոմանս ի բանն յորդո-րելով զնոսա: «Եւ յեղ ընթեռնոյ զաւրէնս եւ զմարգարէս՝ առաքեցին առ նոսա ժողովրդապետքն եւ ասնն. Արթ¹ եղբարք, եթէ իցնն ի ձեզ բանք մխիթարութեանս առ ժողովուրդդ, խաւսեցարուք» (ԺԳ. 15): Տե՛ս զժողովրդապետսն, տակա-ւին զայս իսկ առանց մախանաց արարեալք, բայց յետ այսորիկ ոչ եւս: Առ որս ասելի է. եթէ զայսոսիկ ախորժէիք դուք՝ յոյժ մանա-ւանդ պարտ էր ձեզ մխիթարել ուրախութեամբ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ աւազ թշուառութեանս, զի իշխանասիրութիւն զամենայն ինչ վեր՝ ի վայր կործանէ, որոց առաջնորդք որպէս կուրաց պիտոյ են: Այլ երանի, թէ առաջնորդս խնդրէին այնպիսի կոյրքն, եւ ոչ յա-ռաջ վագէին այլոց լինել առաջնորդք: Այլ թէպէտ բուռն է ախտս այս, այլ երկիւղն Աստուծոյ բաւական է զսա յաղթահարել, զի թէ յերկիւղէ կամ յամալթոյ մարդկան բազում անգամ զախտաւոր յարձակմունս մեր խափանեմք, քանի՛ եւս թէ զերկիւղն Աստուծոյ առաջի աչաց ունիցիմք՝ սնոտի փառաց ցանկութեան յաղթեմք: Եւ տես, թէ զիարդ եւ զայս ուղղեցին առաք/78բ/եալքն, որպէս լսես: Եւ եթէ փառս սիրես, զաստուածայինն սիրես՛իր:

¹ ԱԲ արդ] արք

[ԳԼՈՒԽ ԻԹ.]

Յոսփն եկաց Պաւղոս (ԺԳ. 16):

Արդ, յառաջագոյն ասացելովքն ոչ փոքր ինչ յաղագս Պետրոսի իմացեալք, այսուհետեւ զՊաւղոսի զիրան իմասցուք: Աստանաւր առաջին Պաւղոս քարոզէ, քանզի այլ ոչ եւս էր եկեալ անդ: Եւ տե՛ս զնորա հանձարն, զի ուր էր բանն սփռեալ, անդուստ զանց առնէր, եւ ուր չեւ եւս էր հասեալ, անդանաւր դեգերէր, որպէս եւ ինքն գրելով ասէ, թէ «Այսպէս առաքացար աւեփարանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս, զի մի՛ իրրեւ յայլոյ հիման վերայ շինեցից» (Տոմ. ԺԵ. 20): Եւ այս բազում արևութեան նորա էր. զի ի սկզբանէ սքանչելի էր այրն, իսչեալ աշխարհի, եւ ճակատամարտեալ առ ամենայն տեսակս ճգանց, գիտէր որչափ շնորհս ընկալաւ, եւ հաւասարակշիռ զփոյթն ի ներքս մուծանէ: Ոչ զանգիտեաց ի հրէիցն յառաջագոյն, յորժամ ի մէջ բազմութեան սպառնացելոցն յԵրուսաղէմ էր, եւ աստ դարձեալ ի մէջ նոցա մտանէ: Եւ տես, թէ ո՞րպէս լինի տնաւրինեալ ի Հոգւոյն ոչ քարոզել Պաւղոսի առ երուսաղեմացիսն: Զի այն միայն իսկ շատ էր անդ՝ լսելն թէ հաւատաց, այլ քարոզելով ոչ ներէին՝ թերեւս վասն ատելութեանն¹, զոր ունէին առ նա: Սմին վասն եւ ի հեռաւոր տեղիս զնաց, ուր ծանաւթ ոչ գոյր, եւ անդ քարոզէ:

Այլ տե՛ս այժմ, զԲառնաբաս տեղի տալով Պաւղոսի. եւ զիս՞րդ ոչ այնմ, զոր ինքն ածէր ի Տարսոնէ. այլ եւ որպէս Յովհաննէս Պետրոսի յամենայնի տեղի տայր, եւ մանաւանդ պատկառելի եւ մեծ քան զնա գոլով: Բայց քանզի ամենայն ուրեք ի հասարակաց աւգուտն հայէին, եւ ոչ յանձանց մեծարանս, տեղի տային միմեանց:

Եւ ընդէ՞ր յոտն յառնէր Պաւղոս, զի սովորութիւն էր այսպէս առնել: «Շարժեաց, ասէ, զձեռն» (ԺԳ. 16): Նոյնպէս եւ շարժել ձեռինն ի լսելն յորդորելով: Եւ տես, թէ ո՞րպէս բանին ճանապարհ հորդէ. նախ գովութեամբ ասացեալ, թէ «Արք իսրայելացիք» (ԺԳ. 16): Յուցանելով նոցա անուամբս այսու՝ զբազում մատակարարութիւնն² Աստուծոյ, զի հասարակաց փրկութեան, որ Քրիստոսիւ՝ զնահապետս նոցա հաճեցաւ լինել սկզբունս: Իսկ ասելովն «Եւ ոյք երկնսիք յԱստուծոյ» (ԺԳ. 16), թուի թէ զեկամուտսն ի հեթանոսաց ասէ: Այլ ոչ ասաց, թէ՛ եւ որ ի ձեզ եկք են, զի մի՛ թուիցի աւտարացուցանել

¹ ԱԲ ատելութեան

² ԱԲ մատակարարութիւն

զնոսա յԻսրայէլէ, այլ ասէ՝ «Ոյք երկնչիք յԱստուծոյ» (ԺԳ. 16), կամ թէ՛ զնոյն ինքն զերկիւղն Աստուծոյ ասէ:

Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր (ԺԳ. 17):

Տե՛ս զիմաստութիւնն նորին եւ զդիր բանին, թէ՛ զիա՞րդ կամ ուստի՞ սկսանի. զԱստուած կարդալով, որ է հասարակաց ամենայն մարդկան արարիչ, եւ ի սկիզբն բանին ցուցանէ ի վերուստ ի նահապետացն զերախտիսն նորուն մեծամեծս առ նոսա գոլով, որպէս եւ Ստեփաննոս առնէր:

Եւ զժողովուրդն բարձրացոյց, ասէ, ի պանդխտութենէ երկրին եգիպտացոց, եւ ի բազուկ բարձր եհան զնոսա անտի (ԺԳ. 17):

Ահաւասիկ զառաջին ուղղութիւնն /79ա/ ոչ նոցին ինչ զնէ, այլ երախտեացն Աստուծոյ: Նա, ասէ, ընտրեաց եւ բարձրացոյց եւ յաղթութիւն զգեցոյց: Եւ այսորիկ ոչ եթէ նոցունց ինչ էր գովութիւնն, զի ոչ եթէ հայցեցին նա ետ: Եւ յորժամ ի բազմութիւնն աճեցին յեգիպտոս, ասէ, յայնժամ զսքանչելիսն առաւել արար վասն նոցա: Զսոյն եւ մարգարէքն¹ յիշեն միշտ՝ որ ինչ յեգիպտոս եղեն իրքն: Եւ տես, թէ՛ ո՞րպէս զժամանակաւք² պատահարացն զանց առնէ, եւ զնոցանէ զամբաստանութիւնն ի մէջ ոչ ածէ, այլ նոցին թողացուցանէ խորհել: Եւ միայն զԱստուծոյ մարդասիրութիւնն³ յիշեցուցանէ:

Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապարին, ասէ (ԺԳ. 18):

Ապա եւ զբնակութիւնն երկրին, որ տուաւ ցեղիցն վիճակաւ, ասէ. «Եւ քակեաց զազգս եւթն յերկրին Քանանու, եւ ժառանգեցոյց նոցա զերկիրն նոցա» (ԺԳ. 19): Ապա եւ զյոլովութիւնն ժամանակացն ասէ. «Իբրեւ ամս չորեքհարիւր եւ յիսուն» (ԺԳ. 20): Եւ յետ այնորիկ ետ նոցա զատաւորս: Զկնի անապատին եւ Յեսուայ ասէ. «Մինչև ի Սամուէլ մարգարէ» (ԺԳ. 20): Աստանաւր զզանազան տնաւրիներալ իրքն՝ որ ըստ նոցա էր՝ յայտնէ, զի ի ձեռն յիշելոյ զիրսն, որ յեգիպտոսէ⁴ եւ այսր՝ բաւա-

¹ Բ զմարգարէքն

² Գ զժամանակ

³ Բ մարդասիրութիւն

⁴ ԱԲ յեգիպտոս

կան լիցին լսաւղքն ի միտ առնուլ զառ ինքեանս զբարեմտութիւնս¹ սոցա:

Եւ անպի յառաջ խնդրեցին, ասէ, թագաւոր (ԺԳ. 21):

Եւ ոչ ասէ զանգիտութիւն եւ զանաւրէն յանդգնութիւն նոցա, այլ յամենայնի զԱստուծոյ մարդասիրութիւնն²: «Եւ եր, ասէ, նոցա զՍաւուդ որդի Կիսեայ, այր յազգէ Բենիամնի, ամս քառասուն: Իրրն փոխեաց զնա³, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր, որում եւ ասաց վկայութեամբ՝ յայր է, թէ առ Սամուէլ, գրի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրբի իմում, որ արասցէ զամենայն կամս իմ» (ԺԳ. 21-23): Յոյժ վայելչապէս զԴաւիթ միայն գովեստիւ զնէ, եւ ասացելովքս ցուցանէ՝ «Ձի ի նմանէ Լր Քրիստոս», որ ոչ էր փոքր վկայութիւնս այս՝ առ ի հաւատալ ի նմանէ լինել Քրիստոսի: «Ի սորա գաւակէ, ասէ, ըստ աւերեացն յարոյց Աստուած Իսրայելի գիրկիցն Յիսուս» (ԺԳ. 23): Արդ, վերագոյն ասացելովքս յայտ արար նոցա, թէ եւ այժմ ըստ առաջին սովորութեանն⁴ զՈրդին իւր առաքեաց Աստուած առ մշակսն յայգին, որպէս եւ զծառայսն յառաջագոյն: Իսկ ըստ⁵ աւերեացն զայն ասէ, զոր առ Դաւիթ եւ Աբրահամ եւ մարգարէիւքն կանխաձայնեալ:

Ըստ յառաջագոյն քարոզութեանն⁶ Յովհաննու առաջի երեսաց մտի նորա, մկրտութիւն ապաշխարութեան ամենայն⁷ ժողովրդեանն Իսրայելի: Եւ իրրն լնոյր Յովհաննես զընթացսն⁸, ասէր. Չո՞ք կարծէք զինէն, թէ իցեմ, չեմ⁹ ես այն, այլ ահա զայ զկնի իմ, որում չեմ արժանի զկառչիկս ոտիցն լուծանել (ԺԳ. 24-25):

Բերէ ի մէջ զՅովհաննէս հանդերձ մեծամեծ վկայութեամբքն, զոր քարոզէր: Սոյնպէս եւ Յովհաննէս աւետարանիչ գրելով զսկիզբն Աւետարանին՝ փութալով¹⁰ առ նա ապաւինի, քանզի մեծ էր անուն նորա յամենայն տիեզերս: Եւ ոչ ասէ զիրսն յինքենէ, այլ զնորին վկայութիւնս յառաջ բերէ: Յովհաննէս վկայէ զնմա/79բ/նէ, ասէ, եւ

¹ ԱԲ զբարեմտութիւն

² ԱԲ մարդասիրութիւն

³ Բ նա

⁴ ԱԲ սովորութեան

⁵ ԱԲ > ըստ

⁶ Բ քարոզութեան

⁷ Բ զամենայն

⁸ ԱԲ զընթացսն

⁹ Ա չէմ

¹⁰ Բ փութով

ոչ վայրապար, այլ զի ամենեքեան նմա ընձայէին¹ զփառան, թէ «Նա է Քրիստոսն»: Եւ նա զայն ի բաց² ընկենոյր յիւրմէ, որ ոչ փոքր ինչ էր առնելն զայս. զի եւ ոչ իսկ է հաւասար զպատիւ փառաց, զոր ոչ ոք տայ եւ զայն, զոր զմենեքեան շնորհեն՝ ի բաց վարել յինքենէ, եւ ոչ զայն միայն, այլ եւ այնչափ ամփոփմամբ՝ զինքն ի խոնարհ մատուցանել:

Արք եղրարք՝ որդիք արբահամեան փոհմին, եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ (ԺԳ. 26):

Դարձեալ ի Հաւրէ անտի կոչէ զնոսա, զի որդիքն հաւրն նմանեսցին: «Ձեզ, ասէ, բանս այս փրկութեան³ առաքեցաւ»: Յամենայնի զայն ձեպի ցուցանել, թէ ընտանի է նոցա բարին, զի մի՛ իբրեւ աւտարի ումեմն հայեցաւ զք եղեալ փախչիցեն⁴: Աստանաւր զձեզդ՝ ոչ հրէիցն տայ, այլ ասելով՝ «Ձեզ բանս այս» (ԺԳ. 26), այնոցիկ ասէ՝ որ ի բաց լինին պատառեալ յայնցանէ, որ սպանանել զՔրիստոս յանդէնեցան: Եւ յայտ առնէ զասացեալս միւս բանն, զոր ի վերայ բերէ. «Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ հանդերձ իշխանաւորն նոցա անձանաւոր եղևն ի նմանէ, եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, զոր յամենայն շարաթս ընթեռնուին, դարեալ կապարեցին» (ԺԳ. 27): Ո՛չ գիտացին զնա, ասէ, եւ ո՞րպէս կամ զիա՞րդ ոչ գիտացին՝ Յովհաննու այնչափ քարոզելով: «Նա եւ մարգարէքն, ասէ, աղաղակելին»: Ապա զնէ եւ այլ ամբաստանութիւնս:

Եւ ոչ մի ինչ պարճառս մահու գրեալ՝ խնդրեցին, ասէ, ի Պիղատոսէ սպանանել զնա (ԺԳ. 28):

Որ ոչ էր այս անգիտութեան. քանզի զիցուք, թէ իբրեւ զՔրիստոս ոչ ընդունէին զնա, սպանանէին ընդէ՞ր, եւ զայն յայլազգոյն⁵ խնդրելով: Տեսանե՞ս ո՞րչափ փոյթէ էին ի սպանանել: Ասէ եւ զյեղանակ մահուն. զի յայտ լիցի, թէ առ ի դատելոյն զնա անիրաւաբար՝ դատել կատարեցին ասէ: Այն է, զի ամենեքեան դատապարտեցին զնա, թէ մահապարտ է: Միանգամայն եւ զնոցանէ ամբաստանէ մեծապէս⁶, զի առն այլազգւոյ մատնեցին զնա, զի ոչ ասէ, թէ հանդիպեցան իրացն, այլ «խնդրեցին», «եւ ոչ մի ինչ պարճառս մահու գրեալ»

¹ ԱԲ ընծանէին

² Ա բ զայն ի բաց] ի բաց

³ Բ փրկութեանն

⁴ ԱԲ փախչիցին

⁵ Բ այլազգւոյն

⁶ ԱԲ մեծապէս ամբաստանէ] ամբաստանէ մեծապէս

սպանին զնա, զոր եւ Պետրոս ասաց, թէ «Ի դարելն նորա արձակել» (ԺԳ. 13): Արդ՝ անգիտութեան էր այս սխալանք՝ քաւ լիցի:

Այլ քանզի յոյժ սիրէր զնոսա Պաւղոս եւ կամէր զփրկութիւն նոցա, տե՛ս թէ ո՞րպէս եւ յաղագս նոցա պատասխանատրէ հանդարտաւրէն, թէ ոչ գիտացին զնա, եւ ոչ զայս միայն, այլ եւ ցուցանել փութայ՝ թէ այսպէս պարտ էր լինել, տնաւրէնութիւն զնէ զիրան գոլ ասելով. «Եւ իրրեւ կարարեցին զամենայն, որ վասն նորա գրեալ էր» (ԺԳ. 29): Քան զոր զի՞նչ¹ մեծագոյն ժպրհութեան նշանակ, զի ձաղեցին՝ թքին, կատակեցին եւ հաւանեցուցին զՊիղատոս ի խաչ հանել զնա: «Եւ իջուցեալ ի փայտէն՝ եղին ի գերեզմանի» (ԺԳ. 29): Տե՛ս, զի ի նոցանէ թաղեցաւ, որոց խոստացեալ էր լինել փրկութիւն:

Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց (ԺԳ. 30):

Տեսանե՞ս եւ զսա ի նմին Հոգւոյ շարժեալ որպէս /80ա/ Պետրոս, այնպէս ի վեր եւ ի խոնարհ, զչարհարանսն, զգերեզմանն եւ զյարուութիւնն² քարոզելով: Այլ ուստի՞ է յայտ, թէ յարեաւ, կամ ո՞վ են վկայք: Զայս դարձեալ ցուցանէ ի նոցունց իսկ ի վկայիցն, եւ ապա ի բրոյց: «Երևեցաւ, ասէ, աուրրք բազմաւր այնոցիկ՝ որ ելեալ էին ընդ նմա յերուսաղէմ, այսինքն՝ ի Գալիլէ³ ի Նրեաստան, որք եւ արդ իսկ վկայք են նորա առ ժողովորդն» (ԺԳ. 31-32), առ այն, որ սպան զնա: Արդ, եթէ ոչ աստուածային զաւրութեամբն հաստատեալ էին եւ ստուգեալ, թէ Աստուած է Քրիստոս, ոչ տային այսպիսի վկայութիւնն առ սպանաւորսն եւ արիւնահեղս:

Ապա եւ ի գիրս ապաւինի ուժգին առնելով⁴ զվկայութիւնն: «Եւ մեր ձեզ աւերարանեմք զխոստումն, որ առ հարսն եղեալ էր: Զի գնոյնս կարարեաց Աստուած առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս⁵» (ԺԳ. 32-33): «Զխոստումն⁶, ասէ, հարքն ընկալան, իսկ զկատարումն⁷ դուք: Ապա զԴաւիթ եւ զԵսայի ածէ վկայս ասացելոցն՝ զհաւատարիման եւ զյայտնիս: «Որպէս եւ ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում, Որդի իմ ես դու, ես այսաւր ծնայ գրեզ» (Սաղմ. Բ. 7): Այսու յայտ առնէ, թէ Որդի է Աստուծոյ, որոյ եւ այլ վկայութիւնքն ի Սաղմոսի անդ հետեւին:

¹ Ա ինչ

² Բ գյարութիւն

³ Ա ի գաղիղիէ, Բ ի գալիլիէ

⁴ ԱԲ առնել զվկայութիւն

⁵ ԱԲ գքրիստոս] գիստու

⁶ ԱԲ զխոստումն

⁷ Բ զկատարումն

Եւ զի յարոյց զնա ի մեռելոց, եւ ոչ եւս դառնալոց Է յապականութիւն, այսպէս ասէ Եսայնաւ՝ թէ փաց քեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւաքարիմսն (ԺԳ. 34):

Աստ՝ ի զգուշութեամբ պիտոյ է հայել յասացեալս, նախ յիշեացուք զասելն Ամասիայ քրմի Բեթելայ առ աստուածայինն Ամովս, թէ «Երթ զնայ եւ մի՛ աստ մարգարէանար, զի սրբութիւն թագաւորի է» (Ամովս Է. 12-13): Ուստի իմանամք ապա սրբութիւն Դաւթի ասել՝ կամ զվայելչութիւն խորանին, զոր պատրաստեաց կանգնեաց Դաւիթ, եւ հանգոյց անդ զտապանակն, յորում կարգեաց եւ զսաղմոսանուագան, կամ զիշխանութիւն ավթոռոյն ասէ սրբութիւն եւ զփառս թագաւորութեան Դաւթի, որ յարութեամբն Քրիստոսի հաստատեցաւ, ըստ այնմ, թէ «Յաթոն Դաւթի նաբցի» (Ես. Թ. 7), եւ նա ինքն է եկեղեցի Աստուծոյ, յորոյ վերայ թագաւորեաց Քրիստոս, սրբեալ զնա մշտնջենական, զոր հաւատարիմ ասելովն նշանակէ: Յայս հայի եւ այն, թէ «Տաց քեզ զհեթանոսս» (Սաղմ. Բ. 8): Իսկ ի կէս ավրինակս՝ «Տաց ձեզ, ասէ, զսրբութիւնս Դաւթի» (ԺԳ. 34): Յայտ է՝ զՔրիստոս, որ իւրով յաւիտենական նոր ուխտիւն, այսինքն՝ իւրով արեամբն ոչ միայն տանն Դաւթի, այլ եւ ամենայն աշխարհի եղեւ սրբութիւն:

Քանզի եւ ի միւսումն ասէ. Ոչ փացես սրբոյ քում փեսանել զապականութիւն (ԺԳ. 35):

Այսու զհաւասարազաւր փրկագործութիւնն¹ Հաւր եւ Որդւոյ յայտնէ՝ «ոչ փացես» ասելն: Բայց ի միտ առ յասացելոցս՝ անապական քարոզեալ զնա եւ նախ քան զղնանիլն² ի գերեզմանի, որ է տեղի ապականութեան, զի ոչ ասէ, թէ վեր առցես զնա յապականութենէ, այլ «ոչ փացես» բնաւ տեսանել կամ զփորձ առնուլ, զի կարկեսցէ զասացաւզսն այլայլելի գոլ զնա:

Եւ տես, թէ զիւր³ ոլորէ զբանն մանուածով ի նահապետացն, ի մարգարէիցն, ի զաւակէն, որ ը/80ը/ստ աւետեացն, ապա զՅովհաննէս ի մէջ ածէ ընդ այլ մարգարէսն, զորոց եւ ասէ դատելով³ լցին զամենայն գրեալսն: Ապա վկայս յարութեանն⁴ զառաքեալսն ածէ, ապա զԴաւթի վկայութիւնն⁵ շարամանելով զհինն եւ զնորս,

¹ ԱԲ փրկագործութիւն

² Ա զղնիելն, Բ զղմիլն

³ ԱԲ դատելովն

⁴ ԱԲ յարութեան

⁵ ԱԲ վկայութիւն

որպէս զի ի ձեռն երկաքանչիւրոցն հաւատարմացուցէ զբանն քաղցրութեամբ: Քանզի թէ ասացեալ էր, թէ «Ըմբոնեցէք գնա դուր եւ սպանէք», ի միտս իւրեանց աւտարացուցանէր զնոսա: Սմին վասն, ոչ իբր Քրիստոս ասպանից խաւսի, եւ ոչ որպէս աւտար¹ բարուծիւնս ընձեռելով նոցա, այլ ընտանի եւ հաղորդ: Քանզի յոյժ փափաքելի էր նոցա անունն Դաւթի. ապաքէն ի ձեռն որդւոյ նորա, եւ ընդ թագաւորութեամբ նորա զնոսա լինել ասէ: Եւ տես, թէ զիա՞րդ գովեստիւ յիշէ զԴաւիթ եւ զմեծ վկայութիւնն² Աստուծոյ ածէ ի մէջ վասն նորա, թէ «Գրի գԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրբի իմում» (ԺԳ. 22):

Այլ զի մի՛ այսոքիւք նախասացեալքն զԴաւթէ գով կարծիցին³ ածէ վկայ. «Այլ Դաւիթ յազգի անդ իրում պաշտեաց գԱստուծոյ, եւ կամս Աստուծոյ քաղաքավարեալ ննջեաց» (ԺԳ. 36): Որպէս Պետրոս յառաջագոյն խաւսի զնմանէ իբր զսկզբնաւոր զիրէ, առ որ աւետիքն Աստուծոյ եղեն: «Պարտ է, ասէ, համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի» (Բ. 29): Եւ աստ ոչ ասէ Պաւղոս, թէ վախճանեցաւ, այլ թէ «Յաւելաւ առ հարս իւր եւ երես գապականութիւն» (ԺԳ. 36): Տեսանե՞ս, թէ ո՞րպէս սա ուժգին բանիւք բարբառի: Զայս իսկ ոչ ուրեք ասաց Պետրոս այսպէս:

Եւ իբրեւ ամբացոյց զբանն, որ վասն յարութեանն⁴ Քրիստոսի, համարձակապէս եւ աւետեալքն⁵ յորդորէ. «Յայտնի լիցի ձեզ եղարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց Անտարանի: Եւ յամենայնէ, յորմէ ոչ կարացէք արինաւրն Մովսէսի արդարանալ, սովաւ ամենայն, որ հաւաքայ՝ արդարանայ» (ԺԳ. 38-39): Եւ ընդէ՞ր ոչ ածէ զվկայութիւնն⁶ ի ձեռն, որոյ հաւատալի էր՝ «Եթէ թողութիւն մեղաց սովաւ փունալ լինի»: Քանզի այս էր մեծագոյն փոյթն՝ ցուցանել, եթէ յարեաւ, եւ այսմիկ խոստովանելի եղեալ, ապա եւ այն իսկ աներկբայելի լինէր ի ձեռն այսմ: Եւ այլազգքանզի կամէր զնոսա ի փափաքումն ածել մեծագունիս⁷ այս մահու, որով «թողութիւն մեղաց Անտարանի», ապա ուրեմն ոչ ի բաց լքեցելոյ էր մահն նորա, այլ մարգարէութեանց լրումն: Նա եւ սքանչելի, զի թաղեալն ի գերեզմանի թողու զմեղս առաւել քան զաւրէնսն: Եւ ոչ ասաց, թէ յորմէ ոչ կամեցաք⁸, այլ թէ «Զոր ոչ կարացէք արինաւրն

¹ Ա աւտար

² ԱԲ վկայութիւն

³ ԱԲ կարծիցեն

⁴ Բ յարութեան

⁵ Գ աւետօքն

⁶ ԱԲ զվկայութիւն

⁷ ԱԲ մեծագունի

⁸ ԱԲ կամեցայք

Մովսէսի արդարանալ» (ԺԳ. 38), սովաւ ամենայն որ հաւատայ, ո եւ իցէ՝ արդարանայ՝ յաւրինացն ոչ ինչ շահելով: Արդ, այս ո՛ր քան երախտիք ոչ իցէ. վասն այսորիկ յետոյ եղ զթողութիւնն¹ եւ մեծագոյն զսա ցուցանէ, յորժամ անհնար էր աւրինաւքն լինել այսմիկ:

Ապա փոխաբերեալ լինի բանիւն, ի վերայ նոցա հասուցանելով զերկիւղն եւ զսպառնալիսն. նախ ցուցեալ զփափաքելին նոցա գաւրէնսն արտաքս ելեալ, զի ո՛չ կարացին նովաւ արդարանալ, եւ ի պատ/ՏՂա/չաճին դեգերի², թէ «Որ հաւարայ՝ արդարանայ» (ԺԳ. 39): Եւ եթէ մեծամեծ եղեն բարութիւնք նոցա հաւատովքն՝ ցուցանէ ի հպատակ լինելն, եւ դժնդակ³ չարիք յոչ լսելոյն: Իսկ Ստեփանոս վայելչապէս զայս ոչ առնէր, զի ի սպառնալիսն միայն եւ ի նոցա չարութիւնն⁴ զբանն հանդուցանէր⁵: Քանզի հանդերձեալ էր մեռանել, տեսեալ զնոսա ի սպանանել եւ ոչ յուսանել պատրաստ, այլ եւ ցուցանէր, թէ վայելչապէս աւրէնքն քակեալ լինի:

Իսկ սա ոչ եւս այսպէս, այլ սպառնայ եւ երկեցուցանէ միայն, եւ ի հեշտականս զբանն⁶ հասուցեալ՝ յիշեցուցանէ ապա մարգարէութիւնս պատմութեամբ, առ որս բազում կրեցին չարիս, եւ զայս ի կատարման բանին շարադրէ ասելով. «Զգոյշ լնրուք, գուցէ եկեսցէ ի վերայ ձեր սպառնալիք մարգարէին, քնսէք արհամարհաւոր եւ զարմացարուք եւ եղծարուք» (ԺԳ. 40-41): Տե՛ս, թէ ո՞րպէս խոշորագոյն գոլով բանին համառատեալ լինի: Մի՛ հասցէ ի վերայ ձեր առ այլս ասացեալն, թէ «Գործ մի գործնս եւս, որում ոչ հաւարայք, եթէ որ պատմեսցէ ձեզ» (ԺԳ. 41): Արդ, մի՛ սքանչանայք, ասէ, եթէ⁷ անհաւատալի ձեզ թուի գոլ իրքս այս, զի այսմ այսպէս լինել յառաջագոյն ի վերուստ⁸ առ հարբքն⁹ ասացեալ է: Եւ զի խիտ եւ բազմիմաստ էր դիտողութիւն բանիցս, եւ թէ նոքա բովանդակապէս լսելով ի միտ ոչ առին, այլ աղաչէին դարձեալ զնոյն լսել, ոչ ինչ էր սքանչելի:

¹ Աբ գթողութիւն

² Ա դեգերի

³ Բ դժընդակ

⁴ Աբ չարութիւն

⁵ Աբ յանկուցանէր

⁶ Աբ բանն

⁷ Աբ թէ] եթէ

⁸ Աբ ի վեր] ի վերուստ

⁹ Բ հարբն

ՅՈՐՔՈՐԱԿ

Այլ զարհուրեսցուք, գուցէ եւ առ մեզ Հանդիպեսցի ասացեալս, թէ «Զգոյշ լերուք արհամարհաւոր» (Խմմոր. ԺԳ. 40), քանզի բազմատեսակ չարիք ի մեզ Հաստատեալ են, թէպէտ եւ մեզ թուի, թէ ի խաղաղութեան եմք: Եւ քան զբոլորսն այս իսկ է դժնդակագոյն, զի ոչ ճանաչեմք, թէ ի չարիս եմք: Եւ մի՛ ինձ զլոկ¹ գալն յեկեղեցիս ի կատարելութեան սակի դիցես, այլ թէ զի՞նչ շահիցի² ոք գալովն աստ, զի յիւրաքանչիւր յաստուածային գրոց դեղ առցէ ի վերա ոգւոյ³ իւրոյ, թէ⁴ եւ ոչ զամենայն ի միում աւուր, այլ մասն ինչ այսաւր եւ մասն ինչ վաղիւ⁵: Եւ մի՛ ասիցես, թէ ոչ պոռնկիմ, զի ահաւասիկ ընչասիր ես: Տե՛ս, զճնճղուկ⁶ թէպէտ ոչ ամենայն մարմնովն, այլ միով ոտամբ ըմբռնի՝ ի⁷ կորուստ երթայ, ապա եւ մեզ ամենայն խիտից զգուշանալ պարտ է ոգէկանաց, շնչականաց եւ մարմնականաց, զի կատարեալ լիցուք փրկեալք ի փառս Քրիստոսի. ամէն⁸:

[ԳՂՈՒԽ Լ.]

Իբրև ելին անտի, աղաչէին ի միում⁹ շարաթուն խաւսել նոցա գնոյն բանս (ԺԳ. 42):

Տեսե՞ր զՀանճար բանիցն Պաւղոսի. ընդ որ ոչ միայն այնմ ժամու սքանչացան, այլ եւ ցանկութիւն արկ նոցա երկրորդ լսողութեան: Քանզի ասացեալքն՝ իբրեւ զսերմանիս ոմանս ի խոր անկեալ, եւ զի ոչ ելոյժ զամենայն¹⁰ եւ ոչ պատմեաց բանիւ ընդ երկար, որպէս զի կակղացուցէ դեռ եւս զմիտս նոցա եւ ընտանեցուցէ ինքեան, եւ մի՛ տարտամս եւ հեղգս գործեսցէ զնոսս՝ յանկարծակի զամենայն ի լսելիս նոցա հեղլով: Ասաց, թէ «Թո/ՏԼբ/դուրսին մեղաց ի ձեռն սորա Անտարանի մեզ» (ԺԳ. 38), բայց թէ ո՞րպէս՝ ոչ արար յայտ, զոր եւ խնդրէին իսկ ուսանել: Եւ տես, զի յետ այսորիկ զՊաւղոս քան զԲառնաբաս յառաջագոյն դնէ Ղուկաս:

¹ ԱԲ լոկ

² ԱԲ շահիցի

³ ԱԲ յոգւոյ

⁴ ԱԲ թեպէտ] թե

⁵ ԱԲ վաղի

⁶ ԱԲ ճնճղուկ

⁷ Բ > ի

⁸ ԱԲ > ամէն

⁹ ԱԲ ի միւսում] ի միում

¹⁰ ԱԲ զամենայն

Իբրև արձակեցաւ ժողովուրդն, *ասէ*, զհետ երթային բազումք ի հրէից անտի եւ ի պաշտօնաւորացն եկամտից հեթանոսաց Պաւղոսի եւ զԲառնարայ, որք խաւսէին ընդ նոսա եւ հաւանեցուցանէին կալ մնալ ի շնորհսն Աստուծոյ (ԺԳ. 43):

Տեսանե՞ս գյաւթարուծիւն լսողացն, զի ի ձեռն բանից, ո՛չ միայն ընդ նոսա կապակցեցաւ ամբոխն, այլ եւ աղաչէին զնոյն լսել, իսկ ի ձեռն գործոց՝ զփոյթն ցուցանէին զհետ զնալով նոցա: Իսկ նոքա ոչ միայն ընդունէին զնոցին հնազանդութիւնն¹, եւ ոչ խաբէութիւն զնոցա իրսն համարէին, այլ ամենայնիւ աղաչէին զնոսա մնալ ի շնորհսն Աստուծոյ: Եւ ընդէ՞ր ոչ վաղվաղակի մկրտեցին զնոսա: Զի տակաւին ոչ էր ժամ, այլ հաւանեցուցանել պարտ էր, որպէս զի հաստատութեամբ ի հաւատս կացցեն եւ մնասցեն:

Եւ ի գալ միւսոյ շարաթուն գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ: Իբրև փեսին հրեայքն զամբոխն, լցան նախանձու, եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն ի Պաւղոսէ՝ հայիռլէին (ԺԳ. 44-45):

Իսկ նախ քան զայս ընդէ՞ր հակառակէին²: Զի չեւ եւս էին շարժեալ նախանձու, քանզի ի ձեռն ախտիս այսորիկ ամենայն ուրեք³ կորնչէին⁴ հրեայքն, որք իբրեւ տեսին, զի կրկին խաւսելն պայծառագոյն արար զնոսա, խոցեալք նախանձու եւ զայս խոցոտել կամէին, եւ որք յառաջագոյն աղաչէին կրկին խաւսել նոցա, այժմ ոչ միայն ընդդէմ կալով հակառակին, այլ եւ հայհոյեն եւս, զի չարութիւն, ոչ երբեք, իրաւք⁵ իւրիք լինի դադարեալ:

Նամարձակեալ Պաւղոսի եւ Բառնարայ ասեն. Առ ձեզ նախ պարտ էր խաւսել զբանն Աստուծոյ. եւ քանզի դուք մերժեցէք զնա եւ անարժան⁶ համարեցայք զձեզ կենացն յաւիտեանականաց՝ ահաւասիկ դառնամք ի հեթանոսս (ԺԳ. 46):

Տե՛ս արժանի եւ ի չափու ի լեալ⁷ զհամարձակութիւն առաքելոցն, եւ զգեղեցկութիւն բանիցն իմաստութեան, զի ի վիճաբանել հրէիցն

¹ Բ հնազանդութիւն

² Ա ոչ հակառակէին

³ Ա ուրեք

⁴ Ա կորոնչէին

⁵ ԱԲ իրաւք

⁶ ԱԲ անարժանս

⁷ ԱԲ ի չափ լիեալ] ի չափու ի լեալ

ո՛չ անարգեցիին ինչ զնոսա, եւ ո՛չ ընդարձակեալ ի բացեայ զնալով տարածեցին վաղվաղակի զքարոզութիւնն¹, մինչեւ պատասխանի արարեալ նոցա, եւ անպարտս յամբաստանութենէ զինքեանս առ իւրեանցսն ցուցեալ, եւ ապա մանաւանդ ետուն զանձինս ի հեթանոսս: Զի թէ Պետրոս պատասխանելոյ կարաւտանայր առ կատակաւդսն, յոյժ մանաւանդ սոքա:

Եւ ասելովն, թէ «ձեզ նախ²», եցոյց, թէ յառաջագոյն նոցա պարտ էր խաւսել զբանն քան հեթանոսաց, եւ ասելովն, թէ «պարտ էր», զնոյն յայտ արար, թէ հարկաւոր էր իրքն: Իսկ նոքա, զոր ինչ առ մարգարէսն առնէին՝ ասելով «Մի՛ խաւսիք ընդ մեզ յանուն Տեառն», զնոյն առնեն եւ աստ, զոր ասելովն, թէ «Դուք մերժեցէք գնա» (ԺԳ. 46), զայս ինչ յայտ առնէ, թէ ոչ մեզ, ասէ, մերժեցէք, այլ զբանն Տեառն, զի /82ա/ ոչ եթէ առ մեզ է ամբարտաւանութիւնդ առ ի ձէնջ, այլ ընդ Աստուծոյ: Եւ զի մի՛ ոք բարեացն հաղորդս գոլ կարծեսցէ զնոսա յասելն, թէ ո՛չ արժանիս դատին զինքեանս կենացն յաւիտենից, սմին վասն ասաց, թէ «Դուք մերժեցէք գնա»: Եւ ոչ ասաց, թէ անարժանք էք, եւ տանջանք եւ վայ կայ եւ մնայ ձեզ, այլ թէ դուք համարիք զանձինս: Բազում հեղութեամբ եւ համարձակութեամբ լի է բանս: Եւ քանզի անպատասխանիս արար զնոսա, ապա ասէ. «Յայսմ յեպտէ դասնամբ ի հերթանոսս» (ԺԳ. 46): Տե՛ս եւ աստ զառաւել գուլթն: Ոչ ասաց, թէ ի բաց թողումք զձեզ, այլ որպէս թէ հնար է մեզ դարձեալ աստանաւր դառնալ: Եւ զի ասաց՝ «Դասնամբ ի հերթանոսս», զայս վկայութեամբ ի մարգարէէն հաստատէ, ցուցանելով, թէ այսմ լինել առ հեթանոսս, ոչ ի ձերոյդ եղեւ ամբարտաւանութենէ:

Այլ քանզի այսպէս պապուիրեաց մեզ ՏԷր (ԺԳ. 47):

Եւ ձեզ ի բաց ելանել եւ նոցա ի ներքս մտանել՝ ոչ առ ի մէնջ, այլ առ ի ձէնջ եղեւ, որ եւ յառաջ էր քան զձեզ յԱստուծոյ կարգեալ: «Եղի, ասէ՞³, գրեզ ի լոյս հերթանոսաց՝ լինել քեզ փրկութիւն» (ԺԳ. 47): «Լոյս»՝ աստ զհաւատոցն ասէ, իսկ «փրկութիւն»՝ զգիրտութիւնն, որ եւ է իսկ փրկութիւն մեծ՝ գիրտելն յո հաւատայ, որ կարաւորն է փրկել: Եւ զի մի՛ զայս լսելով հեթանոսացն կարծիցեն, թէ ինքեանց փրկելովն ոչ ամենեքեան հանդիպեսցին բարութեանցն, ի վերայ ածէ զմարգա-

¹ Աբ զքարոզութիւն

² Բ > նախ

³ Աբ > աստ

բէութիւնն¹ ասելով. «Մինչևի ի ծագս երկրի» (ԺԳ. 47): Տե՛ս զաւետիսն եւ զխոստումնն, եւ լոյս, եւ փրկութիւն: Զայս ասէր, զի ի² հեթանոսացն լսելով յաւժարագոյնք լինիցին, տեսանելով զի հրէիցն պարտ էր լսել յառաջագոյն, եւ ահա ինքեանք խոստամբքն վայելեն, որ զի այս մանաւանդ զհրեայսն զկծեցուցէ:

Զայս լուեալ հերթանոսացն՝ ուրախ լինէին եւ փառաւոր առնէին գրանն Տեառն³, եւ հաւաքացին որք էին կարգեալ ի կեանսն յաւիտեանք⁴ (ԺԳ. 47):

Այսինքն՝ որոշեալ յԱստուած՝ ընտրութեամբ եւ հոգևով: Տե՛ս, ո՞րպէս եցոյց մեզ Ղուկաս զյառաջահրաւէր կանխատես աւգոստակարութիւնն⁵. ոչ ասաց պարզաբար, թէ ի հեթանոսացն հաւատացին, այլ թէ ամենեքեան, «որք էին կարգեալ ի կեանսն յաւիտեանք»: Եւ այս իսկ է նշանակ, թէ ըստ կամացն Աստուծոյ եղեւ ընտրութիւն նոցա՝ կարգաւ եւ ոչ հարկաւ, զորս յառաջագոյն գիտէր, ասէ, եւ նախասահմանեալ էր: Զայս, ասէ, լսելով՝ որք ի հեթանոսացն էին, ուրախ լինէին,⁶ որք եւ յետ սակաւուց մատուցեալ եղեն ի հաւատս:

Եւ շրջեր բանն Աստուծոյ բնդ ամենայն գաւառն (ԺԳ. 49):

Վոխանակ ասելոյ, թէ քարոզութեամբն կրեալ լինէր եւ ընկալեալ ի նոցանէ: Եւ յայտ առնէ այսու, թէ ոչ դադարեալ զանգիտեցին ինչ առաքեալքն վասն նախանձու նոցա, այլ ի գործն քարոզութեան յաւելուին, զի եւ մեզ ուսուցեն, թէ վասն այլոց նախանձու եւ հակառակութեան զբարին ոչ է պարտ խափանել: Եւ տե՛ս դարձեալ, թէ որպէս զբանն Աստուծոյ առաքելովքն հալածելով հրեայքն յինքեանց՝ այլոց մեծամեծ բարութիւնս կազմեն. զի ահա ոչ ի քաղաքին միայն, այլ եւ ի գաւառսն սփռեցին զքարոզութիւնն⁷:

/82բ/ Բայց հրեայքն զրգոցեցին զպաշտաւնեայ կանայս զգաստս եւ զգլխաւորս քաղաքին, եւ յարուցին հալածանս ի վերայ Պաղոսսի եւ Բարնարայ եւ հանին զնոսա ի սահմանաց իւրեանց (ԺԳ. 50):

¹ ԱԲ զմարգարտութիւն

² Բ > ի

³ Ա զաստուծոյ] տեառն

⁴ Բ յաւիտեանիս

⁵ ԱԲ օգտակարութիւն

⁶ ԱԲ > ուրախ լինէին

⁷ ԱԲ զքարոզութիւն

Տեսանե՞ս, թէ որչափ իրս վճարեցին հակառակորդքն քարոզութեանն¹, եւ թէ յորպիսի յանդգնութիւնս եւ ի չարութիւնս, զոր ինքեանք ոչ գաւրեցին, ետուն հաւանութիւնս գլխաւորաց եւ կանանց զգաստից տիկնանց, եւ մեծամեծաց քաղաքին, եւ զնոսա ի մարտ յարուցեալ արարին նեղութիւնս Պաւղոսի եւ Բառնաբայ, եւ հալածեցին զնոսա ի սահմանաց անտի իւրեանց:

Եւ նոցա թաւթափեալ գփոշի ուրիցն ի վերայ նոցա՝ եկին յԷկոնինոն² (ԺԳ. 51):

Աստանաւր ահագին իրաւքն, զոր արարին, երկիւղ արկանէին նոցա. զի այնպէս այնուհետեւ հրամայեաց Քրիստոս, թէ «Որ ոչ ընկայցին զձեզ, գփոշի ուրից ձերոց թաւթափեսջիբ ի վկայութիւն նոցա» (Մրկ. Թ. 5): Եւ նոքա ոչ թէ վայրապար զայն ինչ արարին, այլ յորժամ ի նոցանէ հալածեալ եղեն: Այլ այս՝ աշակերտացն ոչ ինչ արար վնաս, այլ առաւել կային եւ մնային ի բանին Տեառն, զորոց եւ ասէ, թէ «Աշակերտքն լնուին խնդութեամբ եւ հոգով Սրբով» (ԺԳ. 52), թէպէտ հալածեալս տեսին զվարդապետան, զի կարիք նեղութեան ոչ ի բաց բառնայ զհամարձակութիւն վարդապետաց եւ ոչ զփոյթ աշակերտաց: Կամ թէ զնոցանէ առ որս չոգանն՝ ասէ, թէ «լնուին խնդութեամբ եւ հոգով Սրբով», զի եկին հասին վարդապետքն նոցա, զի բազում է բնութեամբ զաւրութիւն Աւետարանին:



¹ Բ քարոզութեան

² ԱԲ յիկոնինոն

Եւ եղև յԵկոնիոն¹ ի միասին մտանել նոցա ի ժողովուրդն հրէից եւ խաւսել նոյնպէս (ԺԴ. 1):

Զի՞նչ է «ի միասին մտանելն»: Յայտ է՝ զերկոցունցն² նշանակել, զՊաւղոսէ եւ զԲառնաբայ ի մտանելն ի ժողովսն եւ քարոզել զբանն, նոյնպէս որպէս յԱնտիոքա: «Մինչև հաւաքալ հրէից եւ յունաց բազմաց յոյժ» (ԺԴ. 1): Դարձեալ ի հրէից ժողովսն մտանեն: Տե՛ս, թէ ո՞րպէս ոչ ինչ զանգիտէին ի նոցանէ. այլ եւ ասացեալ բազում սեպհականութեամբ, թէ «դառնամք ի հեթանոսս», սակայն ի բաց բառնան դարձեալ առ նոսա մտանելովն՝ զպատճառս եւ զպատասխանիս նոցա: Իսկ յոյնս աստ՝ զայնոսիկ թերեւս ասէ, որ յունարէն խաւսէին ի նոցանէ, վասն զի ի միջի նոցա բնակեալ էին:

Բայց անհաւան հրեայքն, ասէ, որք ո՛չ հաւանեցան, յայտ է՝ յարուցին եւ չարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց (ԺԴ. 2):

Դարձեալ զհեթանոսս յարուցանեն ի վերայ, իբրեւ թէ ինքեամբք ոչ շատանալով ի չարիսն: Զի՞նչ է «յարուցին» եւ «չարացուցին», այսինքն՝ դաւաճանեցին զառաքեալսն՝ բազումս չարախաւսելով զնոցանէ, եւ զի անամբոյք էին հեթանոսքն, փոխադրեցին զնոսա չարութեամբ: Եւ զիա՞րդ արդեւք ոչ զնացին անտի, զի ոչ եղեն հաւածեալք, այլ մարտուցեալք միայն հակառակելով, եւ զամենայն ինչ յԱստուած ապաստան արարեալ:

Բազում ժամանակս շրջին՝ համարձակեալք Տեառն վկայութեամբ եւ բանի շնորհաց իւրոց, փալով նշանս եւ արուեստս լինելոյ ի ձեռս նոցա (ԺԴ. 3):

/ՅՅա/ Արդ, մի նուագութիւն³ իրս կարծիցես զասելն Պաւղոսի զՀովհաննեսէ, «Որ վկայեացն առաջի պոնտացոյ Պիղապոսի» (Ա. Տմբ. Զ. 13), քանզի այն իսկ վկայութիւն յայնժամ յորդորէր եւ գործէր զհամարձակութիւն առաքելոցն: «Նանդերձ բանի շնորհացն» եւս, այսինքն՝ որով բազում ժամանակս շրջելով՝ նշանս եւ արուեստս առնելով, համարձակեալք լինէին: Բայց հանդերձ սոքիմբք՝ առաւել եւս համարձագոյնս առնէր զնոսա յաւժարութիւնն իւրեանց:

¹ ԱԲ յիկոնիոն

² ԱԲ զերկուցն] զերկոցունցն

³ ԱԲ նուագութեան

Եւ եղեն հերձուածք ի բազմութեան¹ քաղաքին. ոմանք Էին ի հրեայսն եւ ոմանք յառաքեալսն (ԺՂ. 4):

Ոչ փոքր ինչ էր հերձանիլն ի միմեանց. եւ այս է, զոր ասաց Քրիստոս. «Ոչ եկի փալ խաղաղութիւն, այլ սուր» (Մտթ. Ժ. 34): «Իբրևս եղև դիմն² հերթանոսացն եւ հրէիցն իշխանաւրն³ իւրեանց ի թշնամանել եւ ի քարկոծել գնոսա, ազդ եղևալ նոցա փախեան ի քաղաքս լիկոնացոց եւ ի Լիսպրոս եւ ի Դերբէ եւ շորջ զգաւառան, եւ անդ աւեփարանէին» (ԺՂ. 5-6): Հայեաց դարձեալ, թէ ո՞րպէս ի ճահ տարածանել կամելով զքարոզութիւնն⁴ յամենեսեան, եւ յետ տարածանելոյն աճամբ՝ դարձեալ զնոսա արտաքս հանեն: Այլ իբրեւ արշաւելն նոցա դառն ցասմամբ ազդ եղև առաքելոցն, ոչ կացին մնացին անդէն, այլ խնամ արկեալ հաւատացելոցն՝ զի մի՛ առաւել բորբոքեսցեն ի նոսա զցասումն դիմելոցն ի վերայ ինքեանց, փախեան ոչ միայն ի քաղաքէն, այլ եւ ի դաւառէն եւս:

Սակայն հալածումնն յամենայնի մեծամեծս գործէր բարութիւնս, զի հալածիչքն լինէին պարտեալք եւ ամաչեցեալք, եւ հալածեալքն⁵ պայծառք եւ ընտիրք երեւեալք: Որպէս ահա «Այր ոմն լիսպրացի⁶ փկար յոփից, նսփեր կաղ յորովայնէ մար իւրոյ, որոյ երբեք չէր գնացեալ: Սա լուա զխաւսելն Պաւղոսի, որ հայեցեալ ի նա եւ փեսեալ, թէ ունի հաւաքս փրկութեան՝ ասէ մեծաձայն. Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յոքն կաց ի վերայ ուրից քոց ուղիղ՝ եւ վազվազէր եւ գնայր» (ԺՂ. 9): Տե՛ս զնորա իմաստութիւնն. լսէր, ասէ, զասացեալսն ի Պաւղոսէ, զի ոչ ինչ վնասէր կաղութիւնն⁷ զփոյթ լսողութեանն⁸, առ որ հայեցեալ Պաւղոսի ծանեալ զհաւատս նորա, թէ արժանի է կենաց, քանզի փութով ընկալաւ զբանն յաւժարութեամբ. իսկ առ այլոցն նորին հակառակն լինէր, քանզի յառաջագոյն զմարմինսն բժշկէին եւ ապա զհոգիսն⁹: Այլ սոքա¹⁰ ոչ այնպէս, այլ նախ ի հոգին նորա հայեցաւ Պաւղոս եւ ասաց ձայնիւ մեծաւ: Ընդէ՞ր ձայնիւ մեծաւ. առ ի հաւատալ բազմութեան ամբոխին: Իսկ նա վազվազէր¹¹ ընդէ՞ր. զի այն էր ստուգա-

¹ ԱԲ ի բազմութիւն

² ԱԲ դիմեալ

³ Ա եւ իշխանօքն

⁴ ԱԲ զքարոզութիւն

⁵ ԱԲ հալածեալք

⁶ ԱԲ լիստրացի

⁷ ԱԲ կաղութիւն

⁸ ԱԲ լսողութեան

⁹ Ա հանապազ հոգիսն, Բ ապա զհոգիսն] եւ ապա զհոգիսն

¹⁰ ԱԲ սա] սոքա

¹¹ Բ վազէր վազէր] վազվազէր

գոյն նշան¹ առողջութեան, կամ զի անփորձ իսկ էր գնալոյ:

Եւ ժողովուրդն² փեսեալ, զոր արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իրեանց լիկոներէն եւ ասեն. Աստուածք³ նմանեալ մարդկան իջին առ մեզ, եւ կոչէին զԲառնարաս Դիոս⁴, որ է Զեւս, եւ զՊաւղոս Ներմէս, քանզի նա էր առաջնորդ բանին (ԺԴ. 9-10):

Արդ, զայսոսիկ զբանս յիւրեանց բարբառն լիկոներէն խաւսէին, թէ աստուածք⁵ նմանեալ մարդկան: Բայց ոչ եւս յայտնէին զայս առաքելոցն, սմին վասն եւ նոքա ոչ ինչ նախ ցնոսա ասէին, իսկ յորժամ տես/ՅՅբ/ին զզոհս եւ զպսակն, յայնժամ եւ զհանդերձս պատառեցին: Իսկ զի կոչէին զԲառնարաս Արամազդ եւ զՊաւղոս Հերմէս, որ համբաւեալն⁶ էր առ նոսա շահից վերատեսուչ, ինձ թուի վասն յերեսաց արժանատես եւ պայծառափայլ գոլոյ զԲառնարաս. իսկ Պաւղոս ի բանն զարմանալի, որով եւ անուամբք նմանեցուցանէին՝ Հերմէս կոչէին վասն քաջաբան ճարտարախաւսութեան, զի «Պաւղոս էր, ասէ, առաջնորդ բանին»⁷ (ԺԴ. 11), եւ իբրեւ աստուածոց զոհել կամէին: «Զի քուրմնն եւ Դիոսի, որ կայր առաջի⁸ քաղաքին, ցուլս եւ պսակս հասուցեալ ի դուռն փանն, ուր էին առաքելայքն հանդերձ բազմութեամբն՝ կամէր զոհել» (ԺԴ. 12): Ահաւասիկ միւս եւս փորձութիւնն ոչ փոքր, ի բազում անչափութեան կարծեաց զնոցանէ: Բայց եւ աստանաւր առաքելոցն առաքիւնութիւնն⁹ երեւի, թէ զիա՞րդ զամենայն յԱստուած վերադէին: Բայց դու տես՝ զհեթանոսաց պարզամտութիւնն եւ զհրէիցն չարագործութիւնն. զի հեթանոսքն ի ձեռն գործոց ցուցանէին, թէ լսելոյ արժանի են՝ հրամանք առքելոցն եւ հնազանդութեան, եւ այնպէս պատուէին զնոսա ի նշանացն միայն: Իսկ հրէայքն՝ ոչ միայն գայթակղէին¹⁰ ի քարոզութենէն¹¹, այլ եւ հայհոյէին եւ իբրեւ զմահապարտս հալածէին: Այլ սոքա ո՛չ մայն ո՛չ

¹ ԱԲ նշանակ] նշան

² ԱԲ ժողովրդոցն] ժողովուրդն

³ ԱԲ աստուածք

⁴ ԱԲ տիոս

⁵ ԱԲ աստուածքս

⁶ ԱԲ համաւեալն

⁷ ԱԲ > հերմէս կոչէին վասն քաջաբան ճարտարախաւսութեան, զի «պօղոս էր, ասէ, առաջնորդ բանին»

⁸ Ա առաջին

⁹ Բ առաքիւնութիւն

¹⁰ ԱԲ գայթակղէին

¹¹ Ա ի քարոզութենէն

գայթազդէին, այլ եւ բերկրեալ խնդային, եւ իբրեւ զաստուածս պատուէին եւ ընծայս նուիրէին: Այլ թէպէտ բարեմտութեամբ էր ի նոցունց, սակայն անգիտութեան էր գործն եւ վնաս մեծ: Սմին վասն ոչ ներեցին առաքեալքն իրացն, այլ փութացան ի փառս Աստուծոյ զիրողութիւնն¹ յեղափոխել, եւ ոչ անձանց:

ՅՈՐԴՈՐԱԿ

Սոցին եւ մեք նմանեսցուք, ամենայն ուրեք զխոնարհութիւն ողջունելով՝ փախիցուք ի փառասիրութենէ: Թէպէտ եւ թուիցիմք ուղղել ինչ, մի՛ մեզ, այլ Աստուծոյ գրեսցուք, որպէս եւ էն² իսկ. զի զի՞նչ ունիմք, զոր ոչ իցէ յԱստուծոյ առեալ, եւ զնոյն ինքն զհաւատս, զոր մատուցանեմք ընծայ: Եւ թէ ունիցիմք բան եւ շնորհք վարդապետութեան, մի շփասցուք այնուիկ, եւ մի՛ փանդունահարաց նմանեսցուք հրճուեցուցանողս եւեթ ցրտաբանելով, զի գովեստս շահեսցուք: Այլ զի զլսաւզսն շահեսցուք: Մի՛ զհետ շարադրութեան եւ գեղեցկութեան բառից գնալով, այլ զաւրաւորս³ բարբառել, որովք զլսաւզսն կարիցեմք նկարել ի պատկերն Աստուծոյ:

[ԳԼՈՒԽ ԼԱ.]

Եւ լուեալ առաքելոցն Բառնարայ եւ Պաղոսի՝ պապառեալ զհանդերձս իւրեանց արքաքս վազեցին յամբոխէն, աղաղակեցին եւ ասնն. Արք, զի՞նչ գործէք գայդ. մեր ձեզ նմանաւոր կարեաւր մարդիկ եմք (ԺԳ. 13-14):

Տե՛ս զամենայն ինչ ուժգնութեամբ առնելով առաքելոցն, պատառեցին զհանդերձս, վազեցին արտաքս, աղաղակեցին ուժգին, զամենայն իսկ զայսոսիկ հաստատուն ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ գործելով, որ եւ ատեայր⁴ իսկ զլեալսն զայնոսիկ՝ եւ սգայր, քանզի սուգ էր ճշմարտապէս եւ սուգ անմխիթար, եթէ հանդերձեալ էին աստո/ՏԳա/լաձք կարծիլ՝ եւ կռապաշտութիւն ի ներքս մոլծանել, զոր ի քակել եկին: Այլ զի այս իսկ գործ եւ կազմուած բանսարկուին էր, սմին վասն եւ⁵ ոչ նոքա իրացն հանդարտեցին, այլ նախ առա-

¹ ԱԲ զիրողութիւն

² ԱԲ եւ

³ ԱԲ գաւուրս] գաւրաւորս

⁴ Բ ատեայր

⁵ ԱԲ > եւ

ջին տեսուլթեամբն զարհուրեցուցին զնոսա զհանդերձսն պատառելով: Զայս իսկ եւ Յեսու Նաւեայ առնէր ի պարտել ժողովրդեանն: Եւ դու մի՛ կարծիցես զայս ինչ անարժան գոլ բարեկարգութեան¹ նոցա. առնէին զայս, զի թերեւս այլ ազգ ոչ լինէին խափանեալ զայնչափ արշաւանս չարին, կամ զայնպիսի հրդեհն շիջուցանել: Այլ այսուիկ ուսանիմք, զի յորժամ ի պատշաճիցն իմիք պարտ իցէ լինել, մի՛ եւ մի՛ ինչ յիրաց հրաժարեսցուք:

Այլ տե՛ս եւ զբանն չափաւորեալ առ զարհուրմանն: «Մեր ձեզ նմանեալ կարեար մարդիկ եմք» (ԺԴ. 14): Վաղվաղակի յառաջին բանիցն դրդուեցուցին զչարն. ոչ ասացին պարզաբար մարդիկ, այլ «ձեզ նմանեալ», եւ ոչ այսու շատացան, այլ յաւելին, թէ՛ «ընդ կարեաւք անկեալ»: Տե՛ս զնոսա ի փառասիրութեան կարեաց մաքուրս. ո՛չ միայն զի ոչ ցանկային փառաց, այլ եւ զտուեալսն ի բաց բախէին: Որպէս Պետրոս ասէր. «Ընդ մեզ զի՛ էք պշուցեալ» (Գ. 12), եւ Յովսէփ՝ «Ո՛չ ապարէն Աստուծով էր մեկնութիւն սոցա» (Ծն. Խ 8), եւ Դանիէլ՝ «Ինձ ոչ առ իմաստութիւն², որ յիս՝ յայտնեցաւ այս» (Դան. Բ. 30), եւ Պաւղոս այլուր՝ «Ոչ եմք անձամբ բաւական խորհել» (Կրնթ. Բ, Գ. 5), եւ աստ, թէ՛ «Կարեար մարդիկ եմք» (ԺԴ. 14): Բայց այսպէս ասելս յայտնի արարին, թէ՛ «Քան զդոսա մեծագոյն եմք, զոր դուք աստուծոս անուանէք». զի դոքա մեռեալք են եւ ոչ են կենդանիք, թող թէ աստուածք: Սմին վասն զի մի՛ թուիցին պատուել զկուռսն³ յոչ թողացուցանելն զոհել ինքեանց՝ հանդերձ ուսուցանելովն եւ սպառնալիս եւս խառնէ լի սքանչացմամբ:

Աւերարաննք ձեզ, ասէ, յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի՝ որ արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն, որ ի նոսա (ԺԴ. 14):

Եւ այս իսկ մանաւանդ զնոսա խափանեաց չգոհել, յասելն, թէ «յայդպիսի⁴ ունայնութեանց⁵ դառնալ յԱստուած»: Եւ ոչ ինչ յաղագս աներեւութից իմանալեացն բարբառին, այլ եւ ոչ ուրեք զմարգարէսն յիշեն առ սոսա, զի ոչ էին գիտակ. այլ յերեւելի արարածոցս կազմեն ճանաչել նոցա զճշմարիտն Աստուած, որ արար զամենայն եւ նախախնամէ, եւ վկայք՝ նոքին իսկ՝ արարեալքն եւ նախախնամեալք:

¹ ԱԲ բարեկարգութեան

² Բ իմաստութեան

³ ԱԲ > զկուռսն

⁴ ԱԲ այդպիսի

⁵ ԱԲ ունայնութեանցոյ

Եւ եթէ¹ ամենեցուն գոյացուցիչ է խնամիչ², ընդէ՞ր ոչ եւ զմարդիկ նախախանամէ: Ահա հետագա բանիւս եւ զայն եւս յայտ առնէ:

Որ յանցեալ ազգսն թոյլ եր ամենայն հեթանոսաց գնալ զճանապարհս իւրեանց (ԺԳ. 15):

Եփր. Այսինքն՝ զի թողին զպաշտելն զնա՝ «թոյլ եր», այսինքն՝ անփոյթ արար: Զի մի՛ կարծիցեն³, թէ կարաւտուծիւն նորա, որ ապաստանն էր ի նոսա, ստիպեաց զնա, զի ի սկզբան անդ հաստատեսցէ զնոսա:

Յոհ. Բայց աւասիկ զայս ոչ ասաց, քանզի առ փութացեալն ճեպի, այսինքն՝ ցուցանել, թէ Աստուած գոյ: Եւ ոչ աստանաւր յիշէ զանունն Քրիստոսի, այլ զի՞նչ. «Սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող, ասէ, բարերարութեամբն /84բ/ փալով յերկնից անձրևս եւ ժամանակս պողարերս՝ լնուլ կերակրովք եւ ուրախութեամբ զսիրտս ձեր» (ԺԳ. 16):

Եփր. Այսինքն՝ զի թէպէտ անփոյթ արար զնոցանէ, սակայն երկիր պագանել կռոցն՝ նա ո՛չ կամէր: Սմին վասն՝ եւ ոչ եթող զանձն իւր առանց յայտնի վկայութեան, բարերարութեամբքն՝ տալով անձրևս յերկնից, զի բարեաւքն, որ յերկնից՝ ճանաչել եւ աւրհնել զՏէրն յերկնից պարտ էին նորա: Այսու՝ որքան զկուռսն մեծամեծ էին, ի ձեռն սոցունց կարէին ճանաչել զտէրն: Զի թէպէտ ոչ առաքեաց մարգարէս ի մէջ հեթանոսաց, այլ ծառայքն իւր, որ են տարերք՝ հանապազորդ զտեղի մարգարէութեան լնուին:

Յոհ. Արդ, թէպէտ զայսպիսի միտս յայտնեն⁴ ասացեալքն, թէ ոչ եթող զինքն⁵ առանց վկայութեան, սակայն ոչ կամեցաւ յայտնի բանիւ զամբաստանութիւնն⁶ զնոցանէ աճեցուցանել, այլ մանաւանդ առ Աստուած ամենեւին փութայ ածել զնոսա ինքեամբ: Եւ զի իմասցին, թէ զնոսա ինքեանս ոչ է պարտ զոհիւք փառաւորել, քանզի մարդիկ էին, այլ մանաւանդ արժանի⁷ Աստուծոյ մատուցանել պաշտան, որ արար զամենայն եւ խնամէ մարդասիրութեամբ:

Եւ ոչ կարի յաճախ յամէ ի բանսն, որ յաղագս Աստուծոյ, այլ զիջանէ ի նորին խնամսն՝ ըստ լսողացն շահու եւ աւգտութեան: Եւ

¹ Բ թէ] եթէ

² Ա եւ խնամիչ

³ Ա կարծիցեն

⁴ ԱԲ յայտնեսցեն

⁵ ԱԲ ինքն

⁶ ԱԲ զամբաստանութիւն

⁷ ԱԲ արժան է] արժանի

տես, թէ ո՞րպէս զանխլաբար¹ զհարախոսութիւնն եդ, նոցա այն-
 չափ բարութիւնք ի նմանէ վայելելով, եւ ոչ իբրեւ զերախտաւոր
 եւ զսնուցաւղ ճանաչելով զնա: Եւ նորա մանաւանդ զայս ամենայն
 արարեալ նոցա, ոչ էր պարտ թողացուցանել, այլ տանջել զնոսա
 արժան էր: Բայց ոչ ասէ զայս յայտնապէս, այլ զխնաման ցուցանէ
 զնորա. «Տալով, ասէ, անձրեւս եւ ժամանակս պտղարերս» (ԺԴ. 16): Այսպէս
 եւ Դաւիթ ասէր. «Ի պտղոյ ցորենոյ եւ գինոյ եւ ձիթոյ իւրեանց լցեալք եղեն»
 (Սաղմ. Դ. 8), եւ ի բազում տեղիս ի սաղմոսս² անդ³ յաղագս գոյա-
 ցուցանելոյ զամենայն Աստուծոյ պատմէ: Զայսոսիկ բերէ ի մէջ եւ
 Երեմիաս. «Տէր, ասէ, արար գերկիբ գարութեամբ, եւ խորհրդով իւրով ձգեաց
 գերկինս, եւ ի փալոյ զձայն իւր լնու գրագմութիւն քորք յերկինս» (հմմտ. Երեմ.
 Ա. 5): Արդ, Պաւղոս նախ զարարչութիւնն եւ ապա զնախախնամու-
 թիւնն, զոր ի ձեռն անձրեւաց եւ պտղաբերութեան՝ ասաց, որպէս
 զի այնպիսի բարերարութեամբ խրատեսցէ զնոսա. «Լնուլ, ասէ, կե-
 րակրովք եւ ուրախութեամբ գսիրպս ձեր» (ԺԴ. 16): Տեսանե՞ս զբարերարու-
 թիւնն⁴. զի ոչ միայն ըստ բաւականի պիտոյից⁵ տայ զկերակուրն,
 այլ բազում պատուասէր առատութեամբ:

Եւ զայս ասացեալ՝ հազիւ լոնցուցին գժողովուրդն առ ի չզոհե-
 լոյ նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր փեղիս (ԺԴ. 17):

Արդ, եթէ զհանդերձս պատառեցին, եւ այսպիսի բանիւք հա-
 զիւ լոնցուցին, եթէ զայս ոչ էին գործեալ, զի՞նչ արդեաւք⁶ լինէր:
 Յայտ է, զի թէ ոչ էին արարեալ զայս, կարծեցեալ լինէին թերեւս
 այլ ինչ գոհիւք եւ նուիրաւք խոնարհել եւ ցանկալ պատուոյն այն-
 միկ յինքեանս: Յիրաւի ապա առ այս իսկ ընդդիմ⁷/85ա/ացեալ կա-
 ցին⁷ առաքեալքն, զի ի բաց դարձուցեն զմոլորութիւնն⁸ զայն: Եւ
 այսոքիւք⁹ առաւել սքանչելիք եղեն:

Եւ ի շրջելն նոցա եւ յուսուցանել՝ եկին հասին յԱնփոքի եւ յԻկո-
 նիոնէ հրեայք, եւ ի վիճել նոցա համարձակութեամբ՝ պատրեցին

¹ Աբ զանխլաբար] զանխլաբար
² Բ ի սաղմոսս
³ Աբ > անդ
⁴ Աբ զբարերարութիւն
⁵ Աբ եւ պիտոյից
⁶ Աբ արդեւք
⁷ Աբ կայիւն
⁸ Աբ զմոլորութիւն
⁹ Աբ այսոքիւք] այսոքիւք

զժողովուրդն ի բաց կալ ի նոցանէ, եւ ասէին¹, թէ ոչ ինչ ճշմարտութեամբ ասեն, այլ զամենայն ստեն: Եւ քարկոծեալ զՊաւղոս քարշէին արտաքս քան զքաղաքն, եւ համարցեան զնա մեռեալ (ԺԴ. 18):

Ո՛վ հրէական յանդուգն եւ լիրբ չարութեանն², որք ճշմարտապէս որդիք էին սատանայի: Ոչ միայ առ իւրեանց քաղաքաւքն, այլ եւ արտաքոյ հեռի յինքեանց ի հանդէսն՝ որ այնպէս պատուէր զնոսա, յանդգնեցան մտանել եւ այնպիսի ինչ առնել, ոչ³ զարհուրելով յորոց պատուէինն զնոսա. եւ այնչափ փութային խափանել զքարոզութիւնն⁴ եւ կործանել զհաւատս ժողովրդոցն, որչափ առաքեալքն կանխել փութային: «Պատրեցին, ասէ, զժողովուրդն ի բաց կալ ի նոցանէ» (ԺԴ. 18), այնչափ՝ մինչ զի քաղաքն, որ ի ձեռն բժշկութեան կաղուն՝ պատարագաւք աստուածս կարդային⁵ զնոսա, ի ձեռն չարախաւսութեան մարդոց հրէից քարամբք քարկոծեցին զՊաւղոս եւ քարշեցին ընկեցին արտաքս: Աստանաւր լցեալ լինէր ասացեալն առ նա, թէ «Շար են քեզ շնորհք իմ, զի զարութիւն իմ ի փկարութեան⁶ կարարի» (Բ.Կրնթ. ԺԲ. 9): Այս իսկ մեծ էր քան զկաղն յարուցանել:

Արդ, հեթանոսականքն իբրեւ զաստուածս կարծէին, իսկ սոքա հաւանեցուցանէին քարկոծ առնել: Բարևք այս ինչ լինէր, քանզի ոչ իսկ էր յաւգուտ ամենեցուն սքանչալ ընդ նոսա, այլ ի նոյն քաղաքին, յորում այնպէս սքանչելիք երեւեցան, կրէին դժուարինսն: Նա եւ այս իսկ զտեսաւղսն շահեցուցանէր, զոր եւ ինքն ասէր, թէ «Գուցէ որ աւելի համարեսցի յիս, քան զոր փեսանիցէ յիս կամ լուիցէ յինէն» (Բ. Կրնթ. ԺԲ. 6):

Եւ ի պատել, ասէ, գնովաւ, աշակերտացն՝ յարեաւ եմուր ի քաղաքն (ԺԴ. 19):

Եփր. Իբրեւ աւրն տարածամեցաւ եւ աղտամուղտ եղեն, զաղտուկ մուծին զնա աշակերտքն ի քաղաքն:

Յոհ.⁷ Տեսանե՞ս զնա եռացեալ ոմն եւ հրացեալ, դարձեալ ի նոյն քաղաքն մտանէ, յայտ է ահա, զի թէպէտ եւ երբեմն տեղի տայր, այն վասն սփռելոյ բանին էր. եւ դարձեալ, զի ոչ էր պարտ զնոցայն բորբոքել զցասումն: Այսոքիկ քան զիրս նշանացն ո՛չ էին նուա-

¹ Բ ասեն

² Բ չարութեան

³ ԱԲ զի ոչ] ոչ

⁴ ԱԲ զքարոզութիւն

⁵ ԱԲ կարդացին

⁶ ԱԲ տկարութիւն

⁷ ԱԲ > յոհ.

զագոյն: Բայց եւ զնոսին իսկ այս գործէր պայծառագոյնս, եւ առաւել եւս պատրաստէր առ ի խնդալ, զի ոչ ուրեք ասէ, թէ դարձան խնդալով, զի նշանս արարին, այլ զի արժանի եղեն վասն անուանն անարգելոյ: Եւ զայս իսկ ի Քրիստոսէ լինէին ուսեալ, թէ «Ընդ այն մի՛ խնդայք, թէ այսք հնագանդին ձեզ» (Ղուկ. Ժ. 20), զի ճշմարիտ եւ զուտ խնդութիւն է կրելն ինչ նեղութիւնս վասն Քրիստոսի: Ապա ընդ ամենայն քաղաքսն անցեալ լինէին, որպէս ասէ.

Եւ ի վաղիւ անդր ել Բառնարաւ հանդերձ ի Դերբէ, աւերարանեալ¹ ի քաղաքին յայնմիկ եւ աշակերպեալ գրագումս, դարձան ի Լիւսորա եւ յԻկոնիոն /85բ/ եւ յԱնտիոքիա՝ հաստատել զանձինս աշակերպացն եւ մխիթարել կալ հաստատուն ի հաւարսն. եւ² եթէ բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւնս³ Աստուծոյ (ԺԴ. 19-21):

Եփր. Արդ, նովին հարուածովքն իբրեւ զինու մտանէին ի վերայ հալածչացն ի Լիստրէ եւ յԻկոնիոն եւ յԱնտիոքա, ուր հալածեցին զնոսա, ոչ եթէ ամել զվէրսն ի վերայ հալածչացն, այլ զի հաստատեցեն զաշակերտս Աւետարանին, որ անդէն նեղեալն էին, թէ ի նեղութեանդ, յորում դուք էք, եւ մեք ի նմին եմք, որով պարտ է մեզ⁴ մտանել յարքայութիւն Աստուծոյ, որ ի ձեռն մեր քարոզի ձեզ:

Յոհ. Եւ տես, զի յառաջագոյն ի Դերբէ լինին ելեալ⁵ հանգիստ տալով հալածչացն ի բարկութենէն, եւ յայնժամ դարձեալ ի Լիստրիա⁶ եւ յԻկոնիոն եւ յԱնտիոքա, զի ի սրտմտելն նոցա՝ հպատակէին տեղի տալով, եւ դադարելով նոցա ի չարէն՝ դարձեալ ի վերայ հասանէին քարոզել: Արդ, հայեայ, զի ոչ զամենայն շնորհիւ, այլ եւ իւրական փութով մատակարարէին. «Տաստարելով, ասէ, զանձինս աշակերպացն» (ԺԴ. 21), որպէս զի հաստատեալ էին⁷ նախ քան զայս, բայց զնոյն մանաւանդ յաւելուին անշարժս յաւրինելով զնոսա, նախ⁸ ասէին զնեղութիւնսն, զի յորժամ հասանիցէ՝ մի՛ եղիցին գայթակղեալք՝ զայսպիսի բանս ասէին եւ զայսպիսի գործս ցուցանէին: Եւ այս իսկ ի ճահ լինէր ի ձեռն առաքելոցն, ոչ վասն առա-

¹ Բ աւետարանել

² Բ > եւ

³ ԱԲ յարքայութիւն

⁴ Բ ձեզ] մեզ

⁵ ԱԲ եղեալ

⁶ ԱԲ ի Լիստրա

⁷ ԱԲ էին

⁸ ԱԲ > նախ

քելոցն միայն, այլ եւ վասն աշակերտացն. զի իմասցին անդստին ի սկզբանն վաղվաղակի եւ զքարոզութեանն¹ զաւրութիւն, եւ եթէ ինքեանց եւս պարտ է այնպիսի կիրս կրել, զի արիապէս կացցեն, եւ մի՛ միայն ի նշանսն հայեսցեն, այլ յոյժ մանաւանդ եւ առ փորձութիւնն²: Վասն որոյ եւ ինքն Պաւղոս ասէր, թէ «Զնոյն փոյթ կալարուք³ ասններեան, զոր ուսարուքն եւ լուայք եւ փեսէք յիս» (Փիլ. Գ. 9): Բայց տես, զի հալածանք զհալածանս յաջորդէր փոխարկելով, մարտք, պատերազմունք, քարկոծութիւնք. եւ թէ որպիսի⁴ էր յորդորումնն ի բազմանալ աշակերտացն, կամ որպէս լինէին հաւանեցուցեալ զանրնդել մարդիկն, առ սկիզբն՝ առաջին զնեղութիւնսն քարոզելով, ապա յաւելին եւ այլ միսիթարութիւն:

Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյն երիցունս, եւ աղաւթս արարեալ հանդերձ պահաւք յանձն արարին գնոսա Տեառն՝ յոր հաւարացեալն էին (ԺԳ. 22):

Եփր. Տեսանե՞ս զզաւրութիւն Աւետարանին, զի ի քաղաքս յայտոսիկ ուստի հալածեցին զնոսա հանդերձ աւետարանութեամբն, զոր քարոզէին, ահաւասիկ երիցունս եւ սարկաւազունս աներկիւղ վստահութեամբ առնէին ի նոսա:

Յոհ.⁵ Եւ ընդէ՞ր ի Կիպրոս ոչ ձեռնադրեցին երիցունս եւ ոչ ի Սամարիա: Զի Սամարիա հուպ իսկ էր յառաքեալսն եւ Երուսաղէմ, եւ Կիպրոս յԱնտիոք, ուստի բանն զաւրացեալ լինէր: Բայց եւ աստանաւր բազում միսիթարութեան կարաւտանային, որք ի հեթանոսացն էին, որոց պարտ էր բազում ինչ ուսանել, զորս եւ պահս կատարելով ուսուցանէին ժուժկալ առ փորձութիւնսն լինել, եւ աղաւթս /ՏՃա/ առնելով եւ հանդերձ պահաւք դարձեալ ձեռնադրութիւնքն լինէին: Ահաւասիկ դարձեալ պահք, որով է իսկ մաքրութիւն անձանց մերոց: Եւ տե՛ս զՂերմութիւնն⁶ Պաւղոսի. «Աղաւթիւք, ասէ, Տեառն յանձն արարին գնոսա» (ԺԳ. 22):

Եւ շրջեալ ընդ Պիսիդեա՝ եկին ի Պանփիլա, եւ խաւսեցեալ ի Պերգէ գրանն Տեառն՝ իջին յԱրալիա (ԺԳ. 23):

¹ ԱԲ գքարոզութեան

² ԱԲ փորձութիւնսն

³ Ա կալացուք, Բ կալցուք] կալարուք

⁴ Ա որպիսիս

⁵ Գ > յոհ.

⁶ ԱԲ զջերմութիւն

Վայելչապէս. շրջէին ընդ գաւառսն ամենայն, զի մի՛ լիցի կործանեալ երկբայելով խորհուրդ աշակերտացն, թէ կարծեցեալ աստուածքն այնպիսիս ախտանան սաստիկ նեղութեամբք. եկին առ նոսա եւ պատմեցին զկամսն Աստուծոյ ի նեղութիւնս, որով եւ մխիթարեցան իսկ: «Եւ անդուսր, ասէ, նաւեալ գնացին յԱնտիոք¹ ուսրի էին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ ի գործն, զոր կարարեցին» (ԺԴ. 25): Տե՛ս գաստուածութիւն Հոգւոյն եւ զհաւասարութիւնն² ընդ Հաւր, զի ի Հոգւոյն առաքեալ ի գործն՝ «Շնորհացն Աստուծոյ, ասէ, արարեալ գայն» (ԺԴ. 25):

Այլ ընդէ՞ր դարձեալ յԱնտիոք³ եկեալ լինէին: Զի անդանաւր⁴ պատմեսցեն զամենայն զլիեալսն: Նա եւ այլազգ⁵ եւս. մեծ իրս լինի տնաւրինեալ, զի պարտ էր այնուհետեւ համարձակութեամբ քարոզել հեթանոսաց: Արդ, եկեալ եղեն զայսոսիկ պատմելով, որպէս զի գիտասցեն⁶ գայն⁷: Եւ տնաւրինեալ եղեւ ի Հոգւոյն յայնժամ իջեանել յԵրուսաղէմէ այնոցիկ, որք արգելուին զհաղորդին միաբանութեամբ ընդ հեթանոսաց. զի այնուհետեւ բազում ունելով վատահութիւն՝ համարձակութեամբ յԵրուսաղէմէ գնասցեն առ հեթանոսս. եւ զի պաւղոսեանք յԵրուսաղէմ ելանիցեն վասն խնդրոյն, եւ ընդհանրական աւրէնս սահմանեսցեն⁸: Զայսոսիկ յարդարեալ՝ գալովն յԱնտիոք կամի ցուցանել յասելն. «Եկեալ եւ ժողովեալ գեկեղեցին՝ պարմեցին որչափ արար ընդ նոսա Աստուած. եւ զի երաց հեթանոսաց դուռն հաւարոց» (ԺԴ. 26): Տեսանե՞ս, զի ոչ պարզաբար եկին, այլ⁹ տնաւրինապէս, իբրեւ ի Հոգւոյն առաջնորդեալք, որպէս զի քարոզութիւնն¹⁰ ընկալեալ ի հեթանոսաց հաստատեսցի: «Պարմեցին որչափ արար ընդ նոսա Աստուած» (ԺԴ. 26). եւ ոչ եթէ որչափ ինքեանք արարին, կամ թէ որչափ ջանացին: Ինձ թուի, թէ զփորձութիւնսն ասէին՝ յորոց փրկէր զնոսա Աստուած:

Եկին դարձեալ առ նոսա յԱնտիոք ուսուցանելով, զի վայելչապէս ձեռնադրեալ եղեն ի Հոգւոյն: Նա եւ այլազգ աստանաւր գայն

¹ Ա յԱնտիոք

² ԱԲ գիւսասարութիւն

³ Ա յԱնտիոք

⁴ Բ անտանօր

⁵ Ա այլազգ

⁶ Ա գիտասցին

⁷ ԱԲ գայն] գայն

⁸ ԱԲ սահմանեսցին

⁹ Ա այլ

¹⁰ ԱԲ քարոզութիւն

կազմէ, ցուցանելով զբարս նոցա, թէ յանձնահաճութենէ ազատք էին, զի եկեալ ցուցանեն զհամարձակութիւնն¹, զի առանց նոցա հեթանոսաց քարոզեցին: Դարձեալ զհպատակութիւնն. զի զոր ինչ արարին, եկեալ արդ նոցունց զնոյն վերաբերիցեն: Եւ զի այնչափ ուղղութիւնս արարեալ՝ ոչ եղեն բարձրամտեալք: Եւ տե՛ս զեռանդոտ հոգին Պաւղոսի. զի ոչ հարցանէ զոք իբր ուսանել ինչ՝ ճակատամարտելով վասն հեթանոսաց, այլ վաղվաղակի, զոր պարտն էր խաւսել առ հեթանոսս՝ խաւսի, վասն որոյ ասէ, թէ «Ո՛չ զգացուցի մարմնոյ եւ արեան, եւ ո՛չ ելի առ, որ յառաջ քան զիսին առաքեալքն» (հմմտ. Գողթ. Ա. 16-17), քանզի անչափ էր ջան նորա եւ յաւժարութիւն, մինչ զի ոչ ոք այնպէս փայլեաց:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

[86բ] Այսպիսւոյ եւ մեք պէտս ունիմք յաւժարութեան² եւ ջերմութեան³ հոգւոյն ընդ մեղս ճակատամարտելով, զի այլազգ ոչ կարեմք հանդիպել արքայութեանն⁴, բայց թէ խաչիւ: Մի՛ ապա հեղգասցուք, զի պատերազմ սաստիկ կայ առաջի ոչ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, եւ դժնդակ⁵ քարկոծանք քան թէ առ Պաւղոսիւ, այսինքն՝ նախատանաց բանիւք, այլ արասցուք, զոր ինչ նա արար: Եւ զի՞նչ. զի քարկոծեալ դարձեալ⁶ եմուտ ի քաղաքն բարեբանելով զքարչիչսն: Եւ դու ապա մի՛ բարկանար ընդ նախատինս, այլ յաղթեա չարին բարեբանելով եւ շիջոյ զհուր ցասմանն⁷, եւ մի՛ աչակերտեսցիս չարին, որ քեզ ի ցասումն չարժելով բանիւք ինչ՝ կամի զի փոխեսցես⁸ զգարչելիս⁹ բարբառեալ¹⁰ քան զարբեալսն: Այլ պարուրեա զքեզ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ, եւ խոնարհ մտածութեամբ իբր եւ ի մոխիր թաղեալ¹¹ զհուրն բարկութեան, զի պսակն առցես յաղթութեան:



¹ ԱԲ զհամարձակութիւն

² ԱԲ յոժարութիւն

³ ԱԲ ջերմութիւն

⁴ ԱԲ արքայութեան

⁵ ԱԲ դժընդակ

⁶ ԱԲ > դարձեալ

⁷ Ա ցասման

⁸ ԱԲ փոխարկեսցես] փոխեսցես

⁹ Ա գարչելիս

¹⁰ Բ բարբառել

¹¹ Բ թաղեալ

[ԳԼՈՒԽ ԼԲ.]

Շրջէին ժամանակս ո՛չ սակաւս ընդ աշակերտսն (ԺԴ. 27):

Զի մեծ գոլով քաղաքն Անտիոք՝ կարաւտանայր վարդապետացն: «Եւ ոմանք իջեալ ի Նրեաստանէ ուսուցանէին զեղբարս, եթէ ոչ թլփապիք ըսպ արինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրել» (ԺԵ. 1): Էին սոքա ի Հրէից անտի աշակերտեալք ի պետրոսեանց: Այլ զի թէպէտ եւ ի Քրիստոս հաւատացեալք էին, զթլփատութիւնն¹ եւ զաւրէնսն Մովսէսի պահէին սոքա, եւ իբրեւ տեսին, թէ հեթանոսք առանց այսորիկ հաւատացին ի Քրիստոս, իջին նոքա յերուսաղէմէ յԱնտիոք, տակաւին ունելով եւ զցաւս արծաթասիրութեան, կամէին յայլմէ յայլս փոխադրել զայնոսիկ, որք ի հեթանոսացն էին: Սկսանել, թէ ըստ քարոզութեանն² Պետրոսի եւ ընկերացն նորա ոչ հաւատայք դուք, ոչ կարէք ապրել: Եւ ահա Պաւղոս աւրէնսգէտ էր մանաւանդ քան զնոսա, բայց զայս ինչ³ որ⁴ կրէր յինքեան:

Այլ քանզի անդուստ իջին նոքա, եւ աւանդն, զոր ուսուցանէին՝ ոչ էր ստուգագոյն: Զի որ⁵ յերուսաղէմն էին, այնպիսի ինչ ոչ հրամայէին ի վերայ հեթանոսաց, թէպէտ եւ իրաւապէս իբր յԱստուծոյ գոլով ուսեալ առաքեալքն՝ վասն շահելոյ զհրեայսն, առժամայն ոչ հրամայէին խափանել զսովորականսն, այլ ի հեթանոսաց ոչ այնպիսի ինչ պահանջէին, եւ պաւղոսեանքն առաւել համարձակապէս խափանէին զհրէականսն⁶, եւ այս իսկ ի նախանձ էած, զորս ի հրէիցն էին: Եւ ոչ ասէին, թէ թլփատութիւն պարտ է առնել լոկ, այլ յոյժ ստիպով, զի թէ ոչ արասցեն, ասեն, կեալ ոչ կարեն, որոյ ներհակն մանաւանդ լինել պարտ էր, զի թլփատելովն իսկ ոչ կրէին կեալ: Տեսանե՞ս զփորձութիւն ստէպ ի վերայ հասեալ ներքուստ եւ արտաքուստ: Այլ բարւոք տնաւրինեալ լինէր ի Հոգւոյն՝ Պաւղոսի մաւտ լինելով:

¹ ԱԲ գթլփատութիւն

² Ա քարոզութեան

³ Բ ոչ ինչ

⁴ ԱԲ > որ

⁵ ԱԲ զոր

⁶ ԱԲ > այլ ի հեթանոսաց ոչ այնպիսի ինչ պահանջէին, եւ պաւղոսեանքն առաւել համարձակապէս խափանէին զհրէականսն

Եփր. Որ եւ կացոյց իսկ մաքառումն ընդդէմ նոցա, եւ ասաց ոչ խափանել զաւրէնսն եւ զթլփատութիւն ի հրէից¹, զի ցայդ եւս առ առաքեալսն զաւրէնսն եւ զթլփատութիւնն² պահէին նոքա: Այլ արժան է, ասէ, զի |87ա| ամենայն մարդ յորում էր, յորժամ հաւատաց, ի նոյնն կացցէ, այսինքն՝ զի հրեայքն կացցեն մնասցեն ի թլփատութեանն³ որոց պետրոսեանք քարոզէին, եւ հեթանոսք մնասցեն առանց թլփատութեան որպէս ի մէնջ հրամայեցաւ: Իսկ իբրեւ սոքա լուծանել զաւրէնսն ոչ կամէին, եւ կողմնն Պաւղոսի պահել ոչ հաւանէին, գազանացան կացին ընդդէմ իջեալքն յԵրուսաղէմէ, եւ կամէին զզատաստանն ասել առաջի առաքելոցն եւ ծերոցն ի Հրեաստան:

Իսկ պաւղոսեանք, զի մի՛ լուծցեն առանց առաքելոցն, զոր ինչ առաքեալքն վասն տկարութեան հրէիցն պահէին, անցանեն գնան նոքա յԵրուսաղէմ, զի անդ դէմ յանդիման առաքելոցն խափանեսցեն զաւրէնսն եւ զթլփատութիւն, զոր ոչ առանց նոցա խափանել կամեցան: Զոր եւ յայտ իսկ առնէ յասելս, թէ «Թէ ի լինել ոչ սակաւ հակառակութեան եւ խնդրոյ Պաւղոսի եւ Բառնարայ ընդ նոսա, եղին ելանել Պաւղոսի եւ Բառնարայ եւ ոմանց ի նոցանէ առ առաքեալսն եւ երիցունսն յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ» (ԺԵ. 2):

Յոհ⁴. Եւ տես, ոչ ասաց Պաւղոս, թէ զիա՞րդ ոչ իցեմ հաւատարիմ աւրէնսդրութեամբս յայսչափ նշանացս⁵ վկայեալ, այլ վասն նոցին, որք զայսն ասէին, եւ վասն հեթանոսաց հաւատացելոց հաւանեալ եղեւ ելանել հանդերձ Բառնարաւ ընդ նոսին յԵրուսաղէմ:

Եւ տես՝ս աստանաւր զառաքինութիւն նոցա: Զի ոչ գնացին դաւաճանել զայնոսիկ, որ յԱնտիոքն իջին, մինչեւ նոքին հարկեցին գնալ, որք եւ այնպէս իսկ խոկային զպատուասիրութիւն, զի ոչ գիտելով առաքելոցն եկին յայնպիսի իրս յանդգնեալք⁶: Այլ պաւղոսեանք ոչ ինչ գնոցանէ յառաջ հասուցին կանխաւ առ առաքեալսն յԵրուսաղէմ, իսկ յորժամ ի նոցունց հարկեալ գնոցին բանսն ցուցին, յայնժամ ուժգնագոյնս գրեցին առաքեալքն՝ յանդիմանելով գնոսա իբրեւ զխռովիչս:

¹ Բ հրէիցն

² ԱԲ գթլփատութիւն

³ ԱԲ ի թլփատութեան

⁴ ԱԲ > յոհ.

⁵ ԱԲ նշանացն

⁶ ԱԲ յանդգնեալ

Արդ, յերթալն¹ իւրեանց պաւղոսեանքն պատմեցին թլփատելոցն, զոր ինչ արար Աստուած ի ձեռն նոցա անթլփատիցն, ըստ որում ասէ. «Նորա յուղարկելալք յեկեղեցոյն շրջեցան ընդ Փիւնիկէ եւ ընդ Սամարիա, պապմէին գդարձն հեթանոսաց, եւ անէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարցն» (ԺԵ. 3): *Զի յորժամ իմացան ամենեքեան զլիեալսն ի հեթանոսս եւ առ սամարացիսն, խնդացին յոյժ: «Եւ հասնալք յերուսաղէմ եւ ընկալելալք յեկեղեցոյն եւ յառաքելոցն եւ յերիցանցն՝ պապմեցին² որչափ ինչ արար ընդ նոսա նորալք Ասպուած»* (ԺԵ. 4): *Պատմութիւնս այս ոչ էր պատուասիրութիւն³, եւ ոչ վերստին ցուցանելոյ զանձինս կամ լրումն առնելոյ թերութեան իրիք, զի ոչ էին պատուասէրք, այլ եւ ոչ թերիք⁴. այլ էր պատասխանատրութիւն վասն քարոզութեանն⁵ առ հեթանոսս, որով խնդային նոքա ընդ դարձն հեթանոսաց:*

Յարեան ոմանք ի հերձուածոյն փարիսեցոց հաւաքացելալք, եւ ասնն, թէ պարտ է թլփալել գդոսա եւ պապուիրել⁶ պահել⁷ գարլնսն Մովսէսի (ԺԵ. 5):

Եփր⁸. Տե՛ս, զի որք տարան զպաւղոսեանսն ի դատաստան, թէպէտ եւ այսոցիկ, զոր ինչ պատմեցին պաւղոսեանք՝ ի ձեռն երիցանցն կամէին ճշմարտել, այլ յիւրեանց անտի, որ ինչ ինքեանք կամէին՝ ոչ կամեցան լռել: |87բ| Վասն զի յանդիման երիցանցն իսկ ասացին, թէ պարտ եւ պատշաճ է ձեզ թլփատել զհեթանոսս եւ պահել գարլէնսն Մովսէսի:

Յոհ. Բազում էր հրէիցն յուզախնդիր լինելն եւ յետ հաւատոյն⁹ տակաւին աւրինադրելով անձանց, եւ ոչ հաւանելով առաքելոցն եւ զայնպիսի իրս ի նոսա թողլով:

Եփր¹⁰. Եւ վասն զի դատաստան մեծ էր ընդ ժողովուրդն եւ ընդ հեթանոսս, եւ ընդ առաքեալսն, եւ ընդ ընկերս իւրեանց, եկին ժողովեցան առաքեալքն եւ քահանայքն հանդերձ ժողովրդեամբն, զի

¹ Աբ երթալն

² Աբ պատմէին] պատմեցին

³ Աբ պատուասիրութեան

⁴ Աբ թերիք ինչ

⁵ Աբ քարոզութեան

⁶ Աբ պատուասիրել] պատուիրել

⁷ Բ > պահել

⁸ Աբ > եփր.

⁹ Աբ հաւատոցն] հաւատոյն

¹⁰ Աբ > եփր.

տեսցեն զինչ վճիռ ելցէ վասն բանիս այսորիկ: «Եւ յեք բազում խնդիր լինելոյ յորս եկաց Պետրոս եւ ասէ ցնոսա» (ԺԵ. 7): *Վասն զի յառաջ եկաց Պաւղոս յԵրուսաղէմ, ասել յանդիման Շմաւոնի եւ ընկերաց նորա ընդդէմ աւրինացն, որպէս եւ ասացն իսկ յԱնտիոք յանդիման նորին ընդդէմ պահպանութեան աւրինացն: Իսկ Շմաւոն՝ այն որ յԱնտիոք լռեալ կայր, իբրեւ յառաջ մատուցեալ Պաւղոս ասէր ընդդէմ աւրինացն յԵրուսաղէմ, բնակեցաւ ի նա Հոգին Սուրբ, եւ սկսաւ ասել ընդդէմ աւրէնսհաստչացն¹ այսպէս.*

Արք, եղբարք, դուք ինքնին գիպէք, զի յաւուրցն առաջնոց ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանի Աւերաբանին եւ հաւարալ (ԺԵ. 7):

Յոհ.² Տե՛ս զՊետրոս՝ ի վերուստ ի սկզբանէ անտի մեկնեալ զատեալ ի հրէական իրողութեանց, այլ վասն նոցին տկարութեան մինչեւ ցայժմ ըստ հրէից եւ աւրինացն վարելով: Սակս որոյ եւ տեղի տայ յառաջագոյն լինել խնդրոյն յեկեղեցւոջն, եւ յայնժամ ապա ինքն խաւսի: «Դուք ինքնին գիպէք» (ԺԵ. 7) ասէ: Թերեւս մաւտ էին ամբաստանաւորքն զնմանէ երբեմն յաւուրսն Կոռնելիոս եւ ի ներքս մտաւորքն ընդ նմա ի տուն նորա: Սմին վասն զնոսին ածէ վկայս. «Ձի յաւուրցն առաջնոց, ասէ, ընտրեաց Աստուած» (ԺԵ. 7): Կանխաւ ասէ, յառաջին աւուրսն, եւ ոչ այժմ: Ի միջի ձերում, այսինքն՝ ի Պաղեստին, կամ թէ ձեր իսկ մաւտ լինելով «ընտրեաց Աստուած»: Ոչ ասէ, թէ կամեցաւ, այլ «Ընտրեաց Աստուած, ասէ, բերանով իմով» (ԺԵ. 7): Տե՛ս, թէ որպէս ցուցանէ զԱստուած ի ձեռն ինքեան բարբառեալ: Եւ ոչ մարդկային ինչ ասէ, եւ ոչ ասէ, թէ լսել այնոցիկ, որ ի թլփատութենէն, այլ հեթանոսաց, զի ոչ փոքր ինչ եւ այս զաւրաւոր առնէր զիրս հեթանոսաց բերանովն Պետրոսի լսել բանին Աւետարանի եւ հաւատալ:

Նա եւ այսօրիկ ոչ էին փոքր առ ի խրատ հրէիցն հաւատալ եւ ոչ ընդդէմ դառնալ, տեսնելով զհաստատութիւն իրացն հեթանոսաց ի կանոնի ժամանակէն, ի տեղոյն՝ ուստի Աստուած խաւսէր, յընտրութենէն, թէ զոր Աստուած սրբեաց, ի Հոգւոյն՝ որ վկայեաց լեզուաւքն զընտրութիւն, զոր³ եւ ցուցանէ, ոչ շնորհացն պարզաբար, այլ առաքիչութեան նոցա վկայութիւն զայսօրիկ լինել, այսինքն՝

¹ ԱԲ օրէնսհաստատչացն

² Գ > յոհ.

³ Բ որ

զի ոչ նուազագույն ինչ շնորհեաց հայելով յուղղութիւն սրտից նոցա, զի յամենայնի սիրտ ուղիղ խնդրէ, որպէս յաղաւթան ասէին՝ «Դու Տէր, սրբազէր ամենայնի» (Ա. 24), /ՅՏա/ ըստ որում եւ ի վերայ ածէ, թէ «Սրբազէրն Աստուած վկայեաց նոցա» (ԺԵ. 8): Աստ ի Հոգւոյն վկայութիւնն¹ տարաւ եհան զնոսա, տալով նոցա, ասէ, զՀոգին Սուրբ որպէս եւ մեզ: Զի յառաջ քան զիմ ասելն ցնոսա պահել զաւրէնս կամ թլփատել, ետ նոցա Աստուած զՀոգին Սուրբ խաւսելով նոցա յամենայն լեզուս, որպէս եւ մեզ առաքելոցս:

Եւ զի ամենայնիւ հաւասարէ զհեթանոսս: Տե՛ս զի ածէ ի վերայ, թէ «Ոչ ինչ ընտրութիւն արար ի մէջ նոցա եւ մեր» (ԺԵ. 9): Յորժամ եցոյց, թէ վկայեաց նոցա, յայնժամ համարձակ զմեծս զայս բարբառեցաւ բան, զոր եւ Պաւղոս ասէ, թէ «Ոչ թլփատութիւն ինչ է եւ ոչ անթլփատութիւն» (Գղղ. Ե. 6), զի զերկոսեանն շինեսցէ յինքեան: Եւ տես՝ ոչ ասաց, թէ ոչ արար Աստուած² ընտրութիւն ի մէջ նոցա եւ այնոցիկ, որ ի թլփատութենէն, այլ «ի մէջ մեր», այսինքն՝ առաքելոցս, եւ թէ լաւագույն էք մեք քան զնոսա պահանութեամբ ակրինացն³, սակայն հաւատովքն ոչ ինչ արար ընդ մեզ եւ ընդ նոսա խտրոց:

Եւ զի մի՛ անարգանս ակրինացն զիրան գոլ կարծիցեն, զնէ անդէն զհաւատսն. «Նաւարովք, ասէ, սրբեալ գսիրպս նոցա» (ԺԵ. 9): Ի հաւատոց միայն ասէ այսպիսեացս հանդիպիլ, եւ այսոքիկ առ ի խրատ հրէիցն էր, եւ կարաւղ յուսուցանել, թէ «Նաւարոց միայն պէտք են, եւ ոչ գործոց եւ ոչ թլփատութեան» (Յակ. Բ. 24): Այսոցիկ ամենեցուն սերմանիս ի Պետրոսի հանդիսաբանութեանս կայ, զի ոչ միայն վասն հեթանոսաց պատասխանատրելով զայսոսիկ ասէ, այլ եւ զնոսա խրատելով ի բաց կալ յակրինացն, զի յայսմ հետէ ոչ եւս ինչ՝ ըստ ակրինացն կատարումն:

Արդ, ընդէ՛ր փորձէք զԱստուած դնել լուծ ի վերայ պարանոցի աշակերպացն, զոր ոչ հարքն մեր եւ ոչ մեր կարացար բառնալ, այլ շնորհաւքն Աստուծոյ հաւատամք ապրել որպէս եւ նորա (ԺԵ. 10-11):

Տե՛ս, թէ ո՛րպէս յահագինսն⁴ տարաւ եհան՝ ցուցանելով զնոսա ի տագնապի, որք յաւրէնսն էին, իսկ զսոսա ազատս: Զի զոր ինչ ոչ կարացին ակրէնքն, այսինքն՝ ապրեցուցանել, զայն կարաց հա-

¹ ԱԲ վկայութիւն

² ԱԲ > աստուած

³ ԱԲ օրինաց

⁴ Ա ահագինսն

ւատան: Եւ յայսմանէ արտաքս արկանելով ցուցանէ զնոսա ի կորստեան: Եւ ոչ ասաց, թէ ի թերահաւատութեան էք դուք, քանզի ծանր էր այս, այլ գտոյն իսկ յայտնէ այլովք բանիւք յասելն:

Եփր. Արդ, զի՞ դատիք զխորհուրդս Աստուծոյ, զի այսինքն է փորձել զԱստուած, զի զոր ինչ ետ մեզ Աստուած հաւատովքն եւ աւրինաւքն, ետ զնոյն եւ հեթանոսաց հաւատովք առանց պահպանութեան աւրինաց:

Յոհ. Եւ այլ եւս. փորձել է զԱստուած ասելդ, թէ «Ոչ են կարաւղ կեցուցանել հաւատք», եւ զի յաւելուլ կամիք դնել «ի վերայ պարանոցի աշակերպացն», եւ ոչ ասէ, թէ հեթանոսաց, թէպէտ զնոցանէ խաւսի զլուծն թլփատութեան եւ զաւրինաց: Ապա ուրեմն անհաւատութեան իրք է զաւրէնսն ի ներքս բերել, յորմէ ցուցանէ եւ զնոսա ոչ ինչ շահել. եւ զամենայն ինչ առ աւրէնսն դարձուցանէ՝ ասելով ծանր եւ դժուարին, եւ ոչ առ նոսա, այլ ի նոցանէ զչարախոսութիւն ի բաց հատանէ բանիւն, «Ձոր ոչ մեր, ասէ, եւ ոչ հարքն մեր կարացար բառնալ» (ԺԵ. 10):

Եւ¹ յորժամ ի բաց մաքրեաց յառաջագոյն զխոշորութիւն բանին, ապա յայնժամ |88բ| ցուցանէ ոչ զաւրէնսն չար, այլ զնոսա տկարս: Սմին վասն եւ ի վերայ ածէ. «Այլ շնորհաւրն Աստուծոյ հաւաքամք ապրել որպէս եւ նորս» (ԺԵ. 11): Որչափ զաւրութեամբ լի են բանքս այսոքիկ. զոր եւ Պաւղոս ի ձեռն բազմաց առ հռովմայեցիսն ասէ, զայնոսիկ Պետրոս ի ձեռն սակաւուց աստ: «Ձի թէ Արրահամո գործով էր արդարացեալ, ասէ, ունել ունէր պարճանս, այլ ոչ առ Աստուած» (Տոմ. Գ. 2): Տեսանէ՞ս, զի այսոքիկ բանք՝ նոցա մանաւանդ էր ի խրատ, թէպէտ եւ պատասխանիս վասն հեթանոսաց էր: Եւ եթէ առանց պատճառանաց զայսոսիկ էր ասացեալ, կասկածէր ի նոցանէ² զի մի՛ ասիցեն, թէ զիշխանութենէ բռնն հարեալ առանց երկիւղի լինի բարբառեալ:

Տե՛ս, յամենայնի զառ ի թշնամեացն իրս առ նոսա լինելով պատճառ փրկութեան հասարակաց. զի թէ հրեայքն ոչ լինէին շարժեալ, թերեւս ոչ լինէին այսոքիկ ասացեալ, եւ ոչ որ յետ այսոցիկ: Այլ թէ եւ կամէին հեթանոսք յառաջադէմ լինել, ոչ ինչ իմանային եթէ պարտ է նոցա զաւրինացն անտես առնել: Այլ դու տես, զի ո՛չ ի մարգարէից արար ընդ նոսա վարդապետութիւն, այլ ի հասեալ իրողութեանցն, որոց նոքին իսկ վկայք էին, որով եւ վաղվազակի ի

¹ Աբ > եւ

² Բ ի նոցանէ] զնոցանէ

հաւանութիւն զային լռելով ի խնդրոյն. զի հաճեցան երիցունքն ի բանս¹ Շմաւոնի, եւ առանց մաքառման խափանեցաւ մաքառումնն ի ձեռն հաւանութեան Հոգւոյն:

Լոնաց, ասէ, ամենայն ժողովուրդն, եւ լսէին Բառնարայ եւ Պաղոսի պապմելոյն որչափ արար Աստուած նշանս եւ արուեստս ի ձեռն նոցա (ԺԵ. 12):

Վայելչապէս եւ նոքա այնուհետեւ վկայեն եւ զբանն զաւրացուցանեն ասացելովքն: Եւ տես՝ ոչ ինչ ասեն, զոր ի հրէից² ընդ դիմադարձութիւնքն, այլ զոր ինչ արար նոքաւք Աստուած: Ահաւասիկ ոչ լոկ բանից վերացումն³, այլ որ ինչ ի ձեռն իրաց եւ արդեանց վճարմունք էին ի ձեռն Հոգւոյն: Այլ սակայն եւ այնպիսի⁴ նշանս ունելով տակաւին հեզաբար լինէին բարբառեալ:

ՅՈՐԴՈՐԱՎ⁵

Զի մեծ բարի է հեզութիւնն⁶ յամենայնի, մանաւանդ յայսմիկ, զի սովաւ յաղթել կարասցուք բարկութեան: Եւ թէպէտ երեկ տրամաբանեցաք վասն բարկութեան, դարձեալ զնոյն երկրորդեմք, զի եւ դեղոյ ինչ, որ ունի զաւրութիւն ողջացուցիչ վիրի, բազում անգամ պիտոյանամք նմա: Այսպէս եւ վասն հոգւոց փրկութեան մի՛ ձանձրասցուք զնոյն ինչ լսել, այլ բժշկել կամելով զողբիս ի ցասմանէ՝ խլեսցուք նախ զհպարտութիւն: Եւ զայս ո՞րպէս. մի՛ յաւտար իրս, այլ ի մեզ ինքեանս հայեսցուք: Գիտասցուք, զի թէ կամիմք՝ հրեշտակս ի մարմնի լինիմք յաւժարութեամբ՝ ուղղելով զառաքինութիւնս, եւ եթէ կամիմք՝ աւճս եւ ծնունդս իժից: Զանասցուք ապա լաւագունին ժամանել պատուոյ⁷:

[ԳԼՈՒԽ ԼԳ.]

Եւ յեր լռելոյ նոցա պապասխանի ետ Յակոբոս եւ ասէ. արք եղբարք, լուարուք ինձ (ԺԵ. 13):

¹ Բ ի բանսն

² ԱԲ հրէիցն

³ Բ վերացուցումն] վերացումն

⁴ ԱԲ այնպէս] այնպիսի

⁵ ԱԲ բարոյական] յորդորակ

⁶ ԱԲ հեզութիւն

⁷ Ա պատուոյ

է սա՛ եղբայրն Տեառն մերոյ, որ եւ առաջին եպիսկոպոս յառաքելոցն եկաց յԵրուսաղէմ: Եւ զի եպիսկոպոս էր տեղւոյն, սմին վասն եւ յետ/89ա/ոյ խաւսեցաւ, եւ այն իսկ, եթէ «Ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեցի ամենայն բան» (Բ. Կրնթ. ԺԳ. 1), աստանաւր լցեալ լինի: Այլ տե՛ս զմիաբանութիւն¹ եկեղեցւոյն, զի ոչ ինչ բարձրամտութիւն երեւի աստանաւր. յետ Պետրոսի Պաւղոս լինի բարբառեալ, եւ ոչ ոք զնա լռեցուցանէ: Նա եւ Յակոբոս² թէպէտ ի վեր ելանէ բանիւ յատենին, այլ ո՛չ յափշտակէ³ զբանն, քանզի բազում էր բարեկարգութիւնն⁴: Ո՛չ ինչ Յովհաննէս⁵ աստանաւր խաւսի, եւ ոչ այլ ոք յառաքելոցն, այլ լռեն, քանզի նմա էին ընձեռեալ զիշխանութիւնն⁶: Եւ ոչ ցասնուն ինչ կամ տրտնջեն, զի այնպէս մաքուր էր ի կարեաց անձինք նոցա:

Բայց տե՛ս եւ զսորա հանճարէղ իմաստութիւնն⁷, զի անդէն ի հնոյն ստուգէ զբանն ի մարգարէիցն: Եւ զի ոչ ունէր ինչ յայտնութեամբ իրս ցուցանել՝ որպէս Պետրոս եւ Պաւղոս, եւ բարւոք տնաւրինեալ լինի ի Հոգւոյն, զի ի ձեռն նոցա⁸ լինին այնոքիկ, որ ոչ էին հանդեարձեալ բնակել յԵրուսաղէմ: Իսկ սա զի ոչ այսպէս ուսուցանէր զհրեայսն, այսինքն՝ լուծանել զսովորական աւրինացն պահպանութիւն, ոչ լինէր ինչ վասն այսորիկ պարտապան, քանզի իբրեւ զտկարս կամէր շահել զնոսա, եւ ոչ ի բաց պատառել:

Բայց տե՛ս եւ աստ զհամաձայն միակամութիւնն⁹. «Շմաւոն, ասէ, պարմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց արար առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց անուան իւրոյ» (ԺԵ. 14): Բազում աստանաւր երեւի հեզութիւն սորա: Եւ զի նախ ի սկզբանն ուժգնագոյնս խաւսեցաւ Պետրոս, իսկ սա հանդարտագոյն, զի այսպէս պարտ է այնմ, որ ի մեծի զաւրութեան եւ ի պատուի իցէ՝ ի ծանրագոյնսն այլոց տալ տեղի եւ ինքն ի հանդարտագունիցն երեւիլ: Եւ բարւոք¹⁰ ասաց, թէ «Շմաւոն պարմեաց» (ԺԵ. 14), զի ցուցցէ՝ թէ եւ ինքն ըստ նորա կամացն համաձայնել կամի, զի Շմաւոն ոչ եթէ ի մտաց իւրոց գուշակեաց, այլ

¹ ԱԲ զմիաբանութիւնն

² ԱԲ Յակոբոս

³ Ա հափշտակէ

⁴ ԱԲ բարեկարգութիւնն

⁵ ԱԲ Յովհաննէս

⁶ ԱԲ զիշխանութիւնն

⁷ ԱԲ իմաստութիւնն

⁸ ԱԲ սոցա

⁹ ԱԲ միակամութիւնն

¹⁰ ԱԲ բարիոք

մարգարէական տեսութեամբ, որպէս Աստուած Հոգւովն եցոյց նմա. «Ձի յառաջագոյն Աստուած այց արար ի սկզբանն առնուլ ժողովորդ» (Խմբ. ԺԵ. 14): Նա եւ ցուցանէ կանուխ գոլ զիրան, այսինքն՝ զի հեթանոսք յանուն Յիսուսի հանդերձեալ էին, զի խոստովանեցին, որպէս զի կատարեցին բանք մարգարէիցն՝ որ կանխեցին քարոզեցին «առնուլ ժողովորդ ի հեթանոսաց» (ԺԵ. 14), այսինքն՝ ընտրել, ոչ վայրապար, այլ անուան իւրոյ, որ է ի փառս իւր: Եւ ոչ միայն ոչ լինի ամաչացեալ¹ յանուն իւր ընտրել զհեթանոսս, այլ մեծագոյն փառս համարի:

Եւ տե՛ս զկատարեալ հանդիսաբանութիւն սորա, որով ի² կատարումն իրացն ի վերայ հասուցանէ ասելով. «Այսմ, ասէ, միարանին բանք մարգարէիցն» (ԺԵ. 15): Աստանաւր մեծ իսկ նշանակեալ լինի ի մարգարէիցն, թէ՛ նախ քան զամենեսեան էին ընտրութեամբ կոչեցեալ հեթանոսք: Եւ քանզի Պետրոս ժամանակաւ յայտնէր զընտրութիւնն³, բայց հաւատարմութիւն յառաջնոցն ո՛չ ունէր, զի ո՛չ եբեր ի մէջ զկանխասաց մարգարէութիւնն⁴, վասն որոյ եւ սա զյառաջասաց վկայութիւն ի մէջ բերէ. «Յեր այսորիկ, ասէ, դարձայց եւ շինեցից զյարկսն Դաւթի, զանկեալն եւ զկործանեալն նորա վերստին շինեցից» (ԺԵ. 16): /89բ/ Եւ զիա՞րդ շինեցաւ եւ ոչ մանաւանդ⁵ կործանեցաւ, թէ յետ Բաբելոնի⁶ եւեթ իմասցուք զխոստումնս: Այլ ստուգագոյն քննութեամբ թագաւորութիւնն⁷ Դաւթի այժմ եղեւ հաստատեալ, յորժամ⁸ ծնեալ որդի նորա թագաւորէ ամենայնի, որ կանգնեաց⁹ զորդիս մարդկան՝ որ մեղաւք էին գլորեալ, զի եղեն բնակարան որդւոյն Դաւթի, զի զի՞նչ շահ էր տանց քաղաքին Դաւթի եւ անշունչ յարկացն շինութիւն, եւ ոչ ինչ: Եւ զի՞նչ վնաս ի կործանմանէ նոցին, յորժամ ամենեքին Հոգւոյն շնորհաց¹⁰ արժանի եղեն, եւ զհոգիս իւրեանց ախորժելով ի ձեռս նորա աւանդեն: Քանզի Դաւթի պայծառագոյն այժմ եղեւ, յորժամ ամենայն տիեզերք¹¹ երգէ զերգս ակրհնութեան¹²:

¹ Բ ամաչեցեալ

² Բ եւ] ի

³ ԱԲ զընտրութիւն

⁴ ԱԲ մարգարէութիւն

⁵ ԱԲ > մանաւանդ

⁶ ԱԲ Բաբելոնի

⁷ ԱԲ թագաւորութիւն

⁸ Բ յոր] յորժամ

⁹ Ա կանկնեաց

¹⁰ ԱԲ շնորհացն

¹¹ Բ տիեզերս

¹² Բ ակրհնութեան

Արդ, այն զգալի շինուածն կատարեցաւ, ապաքէն եւ այսմիկ կատարել¹ պարտ է, վասն է՞ր. «Զի խնդրեսցն մնացորդ մարդկան զտէր» (ԺԵ. 17): Զի անշնչիցն շինուածով ոչ խնդրեցին հեթանոսք զտէր, յայտ է՝ այլ այսու իսկ կանգնեցաւ քաղաքս այս ի ձեռն առ ի Դաւթայ ծնիցելոյն, որով խնդրեցին մնացորդք մարդկան զտէր, այսինքն՝ ի հրէից հաւատացեալքն:

Եւ ամենայն հերթանոսք, յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր (ԺԵ. 17):

Յուցանէ, թէ քաղաքին շինութեան պատճառ եղեւ կոչումն հեթանոսաց, զորս եւ ըստ մարգարէութեան կարգի երկրորդս ըստ դասու ի ներքս մոլծանէ, յորոց վերայ կոչեցեալ է անունն Քրիստոսի: «Ասէ Տէր՝ որ ասնէ զայս² ամենայն» (ԺԵ. 17): Ոչ միայն «ասէ», այլ եւ «ասնէ»: Ապա ուրեմն այս Աստուծոյ է գործ: Եւ ապա յաւելու զհաւատարմութիւն եղելոցն, թէ ոչ ինչ է նոր, այլ ի սկզբանէ ամենայն յաւրինեալ էր: Ասէ «Յայտնի է ի յաիպեանց» (ԺԵ. 18): Այսինքն՝ յայտնի եւ գիտելի էր միշտ Աստուծոյ՝ գործն, զոր ի ձեռն մարգարէից լցեալ եղեւ յաւուրս մեր:

Արդ, քանզի ոչ զայս ասէին ընդդիմախաւսքն, թէ՛ ոչ է պարտ զնոսա ընդունել հաւատովք, այլ թէ եւ հանդերձ թլփատութեամբն եւ աւրինաւքն է պարտ, որոց ընդդէմ աւրինադրեաց Պետրոս հաւաստեաւ, թէ ոչ է պարտ զերկոսեան, ընդէ՞ր սա այնուհետեւ հրապարակաբանէ կրկին: Այո եւ յոյժ վայելչապէս. զի զոր ինչ աւրինադրել պարտ էր՝ Պետրոս ի ներքս եմոյժ, իսկ զկանուխ ընտրութիւնն³ մեր անդուստ ի վերուստ, զոր ոչ գիտէին, զայն սա ասաց, զի այս իսկ առաւել քան զամենայն զարհուրեցուցանէր զլսաւղսն: Ապա ի դէպ ժամու զարժանն առնելոյ ի ներքս մոլծանէ ասելով. «Վասն որոյ եւ ես իրաւունս համարիմ» (ԺԵ. 19): Բարևոք ասէ իշխանութեամբ, թէ «ես իրաւունս համարիմ»: Այսինքն՝ թէ յայսպէս ասեմ բարի գոյ, եւ որչափ կայ ի կարի իմում, հաստատեմ զբանս Շմաւոնի: Եւ քանզի հեթանոսք ոչ էին լուեալ զաւրինացն, վայելչապէս զայսուսիկ հրամայէ առ յաւրինացն, զի մի՛ թուիցի ապախտ արարեալ զնա:

¹ Բ կատարեալ

² Բ > զայս

³ ԱԲ ընտրութիւն

Բայց տես, թէ ո՞րպէս ոչ թողացուցանէ զնոսա առ յաւրինացն զայսոսիկ ուսանել եւ լսել, այլ նախ քան զաւրինացն զիւրն ասելով: Ո՛չ ասէ յաւրինացն զայսոսիկ լուարուք, այլ զի՞նչ. «Մեք, ասէ, դաւրեցար եւ իրաւունս համարիմք մի՛ նեղել զայնոս/90ա/իկ՝ որ ի հեթանոսաց դատնան առ Աստուած» (ԺԵ. 19): Այսինքն՝ մի՛ յետս դարձուցանել, զորս Աստուած կոչեաց առ ինքն. եւ այդոքիկ խտրութիւնք՝ դարձուցանեն յԱստուծոյ, ապա ուրեմն զայդ ասելով ընդ Աստուծոյ մարտնչիք: Եւ ոչ ասաց, թէ մի՛ գայթաղեցուցանել զնոսա կամ յետս դարձուցանել, զոր Պաւղոս յայտնի առ Գաղատացիսն ասէ, այլ «մի՛ նեղել», այսինքն՝ մի՛ թախանձեցուցանել եւ ստիպել զնոսա ի պահպանութիւն աւրինացն: Յուցանէ այսու զպահպանութիւն աւրինացն ոչինչ գոլ ուղղութիւն, այլ միայն թախանձութիւն: «Այլ փալ, ասէ, թուողք առ նոսա՝ խորշել ի կերակրոց կրոց, եւ ի պոռնկութենէ՞¹, եւ ի մեղսկորոյ, եւ յարենէ» (ԺԵ. 20): Հարկաւորապէս նախ ի զոհեալ կերակրոց խորշել հրամայէ, զի զոր զոհեն հեթանոսք, դիւաց զոհեն, ուստի ի բաց կամի զատուցանել զհաւատացեալսն ի հաղորդս լինելոյ դիւաց:

Կիր. Եմ. ի կոչմանէն Զի բազումք ի կերակուրդ մեղանչեն, ոմանք ի զոհեալ անդը² անխտիր մատչին: Ոմանք ի մսոյ պահել պահեն, բայց դատեն զայնոսիկ, որ ուտենն, եւ պէսպէս իմն ի կերակրոց բանի անդ՝ բազմաց ոգիքն պղծին ի տգիտութեամբ ուտելոյ անտի, եւ յաւգտել պատճառանաց: Պահեմք ի մսոյ եւ ի գինւոյ՝ ոչ իբրեւ պիղծ համարելով, այլ զի վարձուց ակն ունիմք. զի զանցաւոր կերակուրս արհամարհեալք՝ զնշտնջենաւոր սեղանն վայելեցուք. սերմանեալք արտասուաւք, զի ցնծութեամբ հնձեցուք: Արդ, մի՛ դատիր, զորս ուտենն ինչ վնաս տկարութեան մարմնոյ կամ ըմպեն փոքր մի գինի վասն ստամոքսի: Մի՛ աւտար համարիր զմիս, զի գիտէ զայնպիսիսն Առաքեալ եւ ասէ. «Արգելուն ասնել կանայս, եւ մեկնեն ի կերակրոց, զոր Աստուած հաստատեաց վայելել հաւատացելոց» (Դ. 3): Եւ թէ մեկնեալ իցես ի սոցունց, մի՛ իբրեւ ի պղծութենէ, այլ վասն երկնաւոր բարութեանցն, որ պահին քեզ: Զգոյշ լեր, մի՛ ուտիցես յայնմանէ, որ կոոց առաջի եղեալ են, զի վասն կերակրոց եւ Յակոբայ³, որ այսր եկեղեցւոյ առաջնորդէր, փոյթ եղեւ գրել առաքելովքն եւ երիցամբքն ամենայն հեթանոսաց գլխաւոր թուղթ մի: «Նախ, ասէ, խորշել ձեզ ի գոհելոյ կրոց կերակրոց, եւ ապա ի հեղձուցելոյ եւ յարենէ» (ԺԵ. 29):

¹ Ա պոռնկութենէ

² ԱԲ > ամդր

³ ԱԲ յակովբայ

Զի բազումք այն են ի մարդկանէ՝ որ իբրեւ չար գազանք ինչ աւրինակ կեանս կեան, պիղծ գազանաց աւրինակ¹ զարիւնն խորովեն, եւ զհեղձուցիկն ուտեն անխտիր: Այլ դու, որ Քրիստոսի ծառայդ ես, կարգ դիր երկիւղածութեամբ զհրամայեալսն ուտել, եւ անխտիր զոչ հրամայեալսն չուտել: Զոր ոչ աստ միայն, այլ եւ Պաւղոս հրամայէ՝ «Թէ որ ասիցէ, թէ այդ գոհեալ է, մի՛ ուփոցես»² (Կրնք. Ժ. 28): «Եւ ի պոռնկութենէ, ասէ, խորշի» (ԺԵ. 20), զի այս իսկ պղծութիւնէ հոգւոյ եւ մարմնոյ: «Եւ ի մեռելութոյ» (ԺԵ. 20), ասէ՝ որ է հեղձուցիկ: Զոր ոչ միայն աւրէնքն պիղծ ասեն, այլ եւ ց Պետրոս «զեն եւ կեր ասաց հոգին», զոր ետես ի կտաւ անդր. եւ ոչ ասաց խեղդեա եւ կեր: Զի թէպէտ եւ անդր առ բարս մարդկան հայէր խորհուրդ կենդանեացն, այլ եւ ուտելոյ եւս /90բ/ աւրէնք կայ³ առաջի, զի վասն այնր իսկ եւ հրեայքն խղճէին ի Պետրոսէ, թէ «Կերար ընդ անթափարս» (ԺԱ. 3): «Արդ, զի զեն, ասաց, եւ կեր», սմին վասն եւ աստ չուտել գրէ զմեռելոտի:

Այլ որք անխտիր կամին ուտել զհեղձուցիկ, ծիծաղելի իմն ասեն. ոչ թէ զմեռելոտի ուտելն հրաժեշտ տայ՝ ասեն, այլ չհեղձուցանել զմարդ ծեր կամ զհիւանդ, որպէս առնեն, ասեն, դեռ եւս հեթանոսք: Նա եւ ջատագով առնուն այսմ, թէ ահա եւ զձուկն ոչ զենումք՝ որ է մեծ կենդանի, այլ առանց զենման ուտեմք, եւ չեն⁴ ինչ մեղք, այսպէս եւ ոչ մեռելոտի: Առ որս ասելի է, թէ «Ով վեհք», այդպէս ասելդ յոյժ հեռի է ի կարգէ զբերոցս աստ. զի աստ հրամանք առաքելոցն յաւրինացն Մովսէսի, վասն որոյ եւ մերձակայ վէճն⁵ էր հրէիցն, զայսոսիկ միայն պահել հրամայեն հեթանոսացն, եւ զայլսն ոչ պահել: Եւ զի ոչ թէ յայնժամ վասն մարդ հեղձուցանելոյ հաւատացեալ հեթանոսացն վիճէին հրեայքն խափանել զայն ի հեթանոսացն, այլ կամէին, զի հաւատացեալ հեթանոսքն թլփատեսցին, եւ զամենայն կերակրոց խտրութիւնսն, որ յաւրէնսն էր, պահեսցեն: Այլ ոչ կամեցաւ Հոգին Սուրբ զլուծ աւրինացն, որ վասն կերակրոց խտրութեան դնել ի վերայ նորրնձայ հեթանոսացն, բայց միայն զկարեւորս⁶ զհարկաւորս զայսոսիկ: Տե՛ս եւ զկարգ բանին. «ի հեղձուցելոյ» ասէ, որ է ի մեռելոտոյ⁷. եւ ոչ ասէ ի հեղձուցանելոյ, զի

¹ Աբ > աւրինակ

² Ա ուտիցես

³ Աբ կային

⁴ Ա չէն

⁵ Բ վեճն

⁶ Բ զկարեւոր

⁷ Բ ի մեռելոտոյ

զբո անհաճ կարծիսդ՝ բառդ իսկ յանդիմանէ. զի «զհեղձուցելոյն»՝ «մեռելուտոյ»¹» (ԺԵ. 29) ասէ: Տեսանե՞ս², ոչ ասէ ներգործական հեղձուցանելոյ, որ է մեռուցանելոյ ըստ քեզ, այլ թէ «ի հեղձուցելոյ», որ է միջակ կամ կրաւորական, աւտար ի քոց կարծեաց: Նա եւ ձուկն թէպէտ եւ ոչ զենուձք, չէ մեռելուտի, եւ թէ զիս³՝ ող, ես ասեմ: Մեզ աւրէնք հրամանն Աստուծոյ է, եւ Աստուած, որ³ զձուկն մեզ ի յուտել ետ, ո՛չ ուրեք հրամայեաց զենուլ զնա, զի յաւրէնսն Մովսէսի ոչ հրամայեաց, եւ ի նորումս Պետրոսի՝ վասն չորքոտանեաց եւ սողնոց եւ թռչնոց ասաց «զէն եւ կեր», եւ ոչ վասն ձկանց, թէպէտ եւ տիրապէս բանն առ մարդիկ հայի: Այլ մի՛ ինձ ընդդէմ ասիցես, թէ՛ ուրեմն եւ զծովու թռչն⁴նա ոչ է պարտ զենուլ: Երկակենցաղք են այնք, ո՛վ դու. եւ ընդ այլսն⁴ եւս թռչունք երկնից ասին, ուստի եւ զենուլ զնոսա հարկ է, այլ զձկունս ոչ ուրեք ասաց զենուլ: Տինա՛ եւ ինքն Աստուած եկեր զձուկն առանց զենման, եւ ոչ խոտեաց մեռելուտի: Արդ, զոր Աստուած ոչ ասաց մեռելուտի, մարդ մի՛ ասիցէ. միթէ աւրէ՞նս իշխեմք դնել Աստուծոյ. ոչ ապաքէն զորս զենուլ հրամայէ՛ զենուլ պարտիմք, եւ վասն որոց ոչ հրամայէ, ո՞վ իշխեսցէ քննիչ լինել: «Եւ յարնէ» ասէ:

Եփր. Կիրոզ. Զի մի՛ կերիցեն հանդերձ արեամբ: Զի բազումք իբրեւ զպիղծ գազանս զարիւն⁵ խորովեն եւ ուտեն:

Եւ զի յաւրէնսն բազում ուրեք զրեցաւ չուտել զարիւն, եւ կարեւոր համարեցաւ Հոգին ի նորումս զայս աւրինադրել՝ չուտել զարիւն: |91ա| Այլ զի, որք կամին եւ զարիւն անխտիր ուտել, զայս աստ, թէ «խորշել եւ յարենէ, չսպանանել» (ԺԵ. 20) ասեն: Այլ ոչ կամին երթալ զհետ բանիս: Զի այն ինչ ի Քրիստոս հաւատացեալ հեթանոսքն ոչ եթէ սպանութիւնս գործելով որոշէին ի հրէիցն, այլ չխտրելովն զկերակուրս եւ անթլփատութեամբն: Որով⁶ հրեայքն խտրութեամբ կերակրոց ըստ աւրինացն եւ թլփատութեամբն պարկեշտս գոլ թուէին, եւ զհեթանոսս եւս ընդ սոքաւք մուծանել կամէին: Վասն որոյ առաքեալքն, յաւրինացն Մովսէսի, մի զհարկաւորս զայսոսիկ պահել հրամայեն հեթանոսաց, այսինքն՝ չուտել

¹ Բ մեռելուտոյ

² ԱԲ տես] տեսանես

³ ԱԲ որ եւ

⁴ ԱԲ այլս

⁵ Բ զարիւնն

⁶ Բ որովք

մեռելուտի եւ ոչ զարիւն, եւ ոչ զոհեալ կերակուր, եւ չպոռնկել եւ զայլսն, որ ինչ յաւրէնսն խտրութեամբք կերակրոց մանրաքննին եւ շաբաթուց պահպանութիւնք եւ լուացմունք մարմնականք հանդերձ թլփատութեամբն անփոյթ առնել: Զի զայլսն, զորս պարտ է¹ յաւրինացն, լրմամբ եւս Աւետարանն ունի: Եւ թէ ասիցես, միթէ եւ զպոռնկելն չդատի՞ Աւետարանն, ընդէ՞ր եւ աստ եղաւ, ասեմ, թէ այո, այլ վասն յոյժ հարկաւոր գոլոյն եւ աստ եղաւ: Որպէս եւ Պաւղոս բազում ուրեք սաստէ պոռնկութեան: Եւ դարձեալ. անեցողցանել կամելով զաւրինադրութիւնս, եղին աստ. վասն զի եւ առընթեր վէճն² հրէից, որոյ պատճառաւ այսոքիկ աւրինադրեցան հեթանոսաց, ոչ վասն պոռնկելոյ հեթանոսացն էր, այլ զի թլփատեսցին հեթանոսք եւ զաւրէնսն պահեսցեն խտրելով զկերակուրս, որոց ոչ անսալով առաքեալքն³ զայսոսիկ միայն հարկաւոր համարեցան գրով աւրինադրել հեթանոսաց. «Տալ, ասէ, առ նոսա թուղթ՝ խորշի ի գոնելոյ կոոց, եւ յարնել ի հեղձուցելոյ, եւ ի պոռնկելոյ» (ԺԵ. 20):

Յոհ. Եւ ընդէ՞ր արդեւք եւ վասն⁴ հրէիցն ոչ⁵ գնոյնս գրեսցուք: Այլ վասն զի ոչ գրեմք, ոչ եթէ վասն զի պարտ է նոցա աւելի ինչ քան զայս պահել, այլ քանզի Մովսէս ընդ նոսա խաւսի: «Զի Մովսէս, ասէ, յազգացն առաջնոց, վասն այսոցիկ⁶, որ ազոյ ազոյ փեղիքս են, գրարուգիսս իւր ունի ըստ ամենայն շարաթոց ընթերցեալս» (ԺԵ. 21): Տե՛ս ո՛րչափ զիջանէ ըստ աւրինացն, ուր վնաս ինչ չէր: Արդ, ի վերայ կացոյց զՄովսէս վարդապետ աւրինաւքն, եւ շնորհեաց նմա պատիւ, որ ոչ ինչ ի հաւատոց խափանէր զհրեայսն՝ յորդորելով լսել նմա ըստ այնոցիկ, եւ ի բաց տանելով յաւրինացն, զորս ի հեթանոսաց էին: Տեսանե՞ս զմեծիմաստ հանճարեղութիւն⁷ նորա ի ձեռն, որոյ թուեցաւ զաւրէնսն պատուել, ի վերայ կացուցանելով զնա իւրոցն, ի ձեռն այնորիկ⁸ ի բաց տարաւ զհեթանոսս ի նմանէ: Ապա այնուհետեւ հասարակաբար լինի աւանդութիւնն⁹:

¹ Ա պահել պարտ է] պարտ է

² Բ վեճն

³ ԱԲ առաքեալսն

⁴ Ա ոչ վասն] վասն

⁵ ԱԲ > ոչ

⁶ ԱԲ այսորիկ

⁷ Ա հանճարեղութեան

⁸ Բ այնոցիկ

⁹ Ա աւանդութիւն

Յայնժամ, *ասէ*, հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երիցանցն ամննայն եկեղեցւան արս ընտրեալս ի նոցանէ առաքեալ յԱնդիոք ընդ Պաւղոսի եւ ընդ Բատնաբայ, զՅուդա գկոչեցեալն Բարսաբա, եւ զՇիդա, արս գլխաւորս գրեալ առ եղբարս ի ձեռն նոցա զայս ինչ (ԺԵ. 22-23):

*Վայելչապէս խորհին զայսոսիկ. եւ կամելով զի հա/91բ/ւատարմագոյն իրքն լինիցին, առաքեն զառ ի յինքեանց արձակեալսն, զի առանց կասկածանաց լինիցին, որ ընդ Պաւղոսին էին. եւ ապա ոչ¹ պարզաբար բանիւ լոկով, այլ հաստատութեամբ ի ձեռն գրոյ ակրինազրեն զայս ինչ. «Առաքեալք եւ երիցունք եւ եղբարք յԱնտիոք եւ ի Սիրիա եւ ի Կիլիկիա, եղբարք, որ ի հեթանոսաց Լք՝ ողջոյն» (ԺԵ. 23): Բարիոք² ըստ պատուոյ դնեն զկարգ դասու երեսացն ի սկիզբն թղթոյս՝ պահելով զվայելչականն, եւ զայն ոչ չփացութեամբ ինչ, այլ առանց պաճուճանաց պարզաբար վասն հարկի յայտնելոյ զգէմսն յորոց բանն: «Բնակելոց, *ասէ*, յԱնտիոք եւ ի Սիրիա³ եւ ի Կիլիկիա», ուր ցաւն ծնեալ եղեւ եւ սկիզբն առ, անդ եւ զգեղն առաքեն վաղվաղակի՝ ի դեմս ածելով առ որս բանն: «Եղբարք, որ ի հեթանոսաց Լք» (ԺԵ. 23), զորս եւ ընտանիս եւ եղբարս արար հաւատալն ի Քրիստոս, առ որս նախ ինքն մտեալ հանգչի ողջունիւն, զոր պատուիրեաց տալ արժանաւորացն:*

Այլ տես, թէ որպէս ծանրաբար գրեն յաղագս նոցա, որ դաւաճանաւորքն էին: «Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրևս ի մէնջ խոտվեցուցին զձեզ բանիսք խախտել զանձինս ձեր՝ ասնն թլփափել եւ պահել զաւրէնսն, որոց ոչ հրամայեցար» (ԺԵ. 24): Շատ եւ բաւական է չարախաւսութիւնս⁴ ի վերայ անձնահաճութեան նոցա եւ յանդգնութեան, եւ այսպիսի բանք արժանի իսկ է առաքելոցն հեզութեան, ոչ ինչ առաւել քան զայս ասելով զնոցանէ⁵ դժուարագոյնս, այլ միայն ի մին հայելով դարձուցանել յայնմանէ, որ ինչ եղեալն էր. զի այս իսկ⁶ եւ զնոսս, որ անդանաւր խազմարարքն⁷ էին, ի խոստովանութիւն ածէր: Ո՛չ ասացին, թէ խաբեբայք, պատրաւղք, խռովարարք, այլ լոկ, թէ «ոմանք իբրևս ի մէնջ»: Եւ զի մանաւանդ ուր պարտն էր ասել զայս, եւ որ այսպիսիք են, զայսն Պաւղոս առնէ, որպէս յորժամ *ասէ*. «Ով լի ամենայն նենգու-

¹ Բ > ոչ

² Բ բարուոք

³ ԱԲ սիրիա

⁴ Բ չարախոսութիւն

⁵ ԱԲ զնոցա

⁶ Բ > իսկ

⁷ Բ խազմարարք

թեամբ եւ խորամանկութեամբ» (ԺԳ. 10), եւ «Զգոյշ լերուք ի շանց անփի» (Փիլ. Գ. 2): Բայց աստանաւր¹ ուղղութեանն² հաստատուն լինելով³՝ այսմ տակաւին ոչ էր պէտք:

Եւ տես՝ զի ոչ գրեցին, թէ ոմանք իբրեւ ի մէջ Նրամայեցին ձեզ գաւրէնսն պահել, այլ թէ «Խոովեցուցին բանիս խախտելու գանձինս⁴» (ԺԵ. 24), այսինքն՝ անպատրաստ առնելով: Ոչ է իսկազոյն այլազգ քան զայս բան, ոչ եւ մի որ⁵ ուրեք այսպէս ասաց, յառաջագոյն հաստատեալ զհոգիսն ասէ «խախտել», որպէս ի շինուածի ուրեք, զառ ի նոցանէ լիեալսն փոխաբերելով եւ խախտելով, ասեն թլփատել, զոր ո՛չ հրամայեցաք, եւ ո՛չ արարաք այդպիսի իրաց խտրութիւն:

Նաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս արս ընտրեալս յղել առ ձեզ սիրելիս մեր ընդ Բառնարայ եւ Պաւղոսի⁶, արք, որք մաքունցին գանձինս իրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (ԺԵ. 25-26):

Արդ, զի ամենեցուն այս յայտնի լիցի, թէ քննութեամբ ի միասին դատաստանաւ եւ իրաւամբք գրեցին զայսոսիկ եւ ոչ հարեւանցի բռնաբարոյ⁷, միաբան ժող/ԶԶա/ովոյս ասէ: Իսկ ասելովն, թէ «արս ընտրեալս առաքեալ առ ձեզ»՝ ոչ զորս հանդիպեցան ասեն, այլ զառաջինսն ի շնորհս Հոգւոյն: Եւ զի մի՛ թուիցի կարծիք ինչ կամ դաւաճան գոլ Պաւղոսի եւ Բառնարայ առաքելն զնոսա, բառնան զխճբիծս զայս յասելն՝ «ընդ սիրելիս մեր ընդ Բառնարայ եւ Պաւղոսի»: Եւ եթէ սիրելիք են, ապա ոչ արհամարհեն զնոսա: Եւ ապա ցուցանեն գովութեամբ զփոյթն պաւղոսեանց վասն անուանն Տեառն, որով վկայեալ լինին հաւատարիմք գոլ յամենայնի: Եւ տես՝ զմեծ վկայութիւնն⁸ ի վերայ Պաւղոսի եւ Բառնարայ. «Արք, ասէ, որք մաքունցին գանձինս իրեանց վասն անուանն⁹ Տեառն Յիսուսի Քրիստոսի» (ԺԵ. 26): Եւ եթէ¹⁰ մատնեցին զանձինս վասն Տեառն, ապա եւ նոքա արժանի են հաւատարմութեան:

¹ ԱԲ աստանօր

² ԱԲ ուղղութիւնն

³ Բ հաստատունելով] հաստատուն լինելով

⁴ Ա գանձինս ձեր

⁵ Բ > որ

⁶ ԱԲ ընդ պօղոսի

⁷ ԱԲ բռնաբարոյ

⁸ ԱԲ վկայութիւն

⁹ ԱԲ անուան

¹⁰ ԱԲ թէ

Արդ, առաքեցաք զՅուդա եւ զՇիդա, եւ նոցա ի բանից գնոյն պատմել. Զի հաճոյ թուեցաւ Նոգոյն Սրբոյ եւ մեզ, մի՛ ինչ աւելի բնոն դնել ձեզ (ԺԵ. 27-28):

Զի եւ ի բանից գնոյն պատմեսցեն, ասէ: Զի պարտ էր ո՛չ միայն թղթին լինել, այլ եւ բանից: Զի մի՛ ասիեն, թէ յափշտակեալ եղեւ թուղթն եւ չէ ճշմարիտ, կամ այլ ինչ փոխանակ այլոյ գրեցան, վասն այսորիկ գովութիւնն, որ յազագս Պաւղոսի էր, եւսից զբերանս նոցա: Վասն որոյ եւ ոչ միայն Պաւղոս եւ Բառնաբաս լինին եկեալ, այլ եւ այլք առաջինք յեկեղեցւոյն, զի մի՛ կասկածանաւք լիցի գալուստ նոցա, քանզի նոքա ի թիկունս հասեալ լինին աւանդութեանն. ոչ միայն զի յերուսաղէմ էին, այլ զի եւ հաւատարիմք էին, որպէս ասաց զնոսա արս ընտրեալս զՅուդա եւ զՇիդա, զի մի՛ հաւասար գնոսին համարեսցին այնոցիկ՝ որ այնպէսն մոլեալ էին, ըստ որում եւ յաւել, թէ վասն էր առաքեցան. «Զի ի բանից գնոյն պատմեսցեն» (ԺԵ. 27) ասէ:

Զի հաճոյ թուեցաւ Նոգոյն Սրբոյ եւ մեզ, մի՛ ինչ աւելի բնոն դնել ձեզ (ԺԵ. 28):

Ընդէ՞ր ասելով, թէ «հաճոյ թուեցաւ Նոգոյն Սրբոյ», յաւելին, թէ «եւ մեզ», զի մանաւանդ շատ էր ասելն, թէ «Նոգոյն Սրբոյ»: Արդ, «Նոգոյն» ասեն, զի մի՛ կարծիցեն մարդկային ինչ զգրեալսն, այլ աստուածային, զի մարդկային խորհրդով ոչ էր հնար զայս ինչ իմանալ եւ ուղղել դիւրաւ զթերութիւն սխալանացն, այլ Հոգւովն միայն կարաւտանայր իրքս այս: Իսկ եւ մեզ զի ուսանիցին, թէ եւ նոքա ընդունաւորք են այնոցիկ¹, եւ մանաւանդ ի թլփատութեան գովով: Նա զի եւ առ մարդկան, որ տակաւին տկարագոյնք էին՝ էր բանն. երկուցեալք լինէին սոքա, թէ գուցէ խախտիցին տկարքն, սմին վասն յաւելին, թէ եւ մեզ, առ ի հաստատութիւն նոցին:

Մի՛ ինչ աւելի բնոն դնել ձեզ, ասեն (ԺԵ. 28):

Դարձեալ «բնոն» եւ ծանրութիւն զաւրէնսն կոչեն: Այլ ցուցանէ ոչ ըստ զիջանելոյ գոլ բանն, եւ ոչ զի խնայէին ինչ ի նոսա, եւ ոչ իբրեւ առ տկարաց, այլ զնոցին հակառակն, ասելովն, թէ «Մի՛ ինչ աւելի բնոն դնել ձեզ», զի այլքն քան զայս այժմ աւելորդք են: Քանզի բազում էր ծերոց եւ վարդապետացն հրէից պատուիրանք եւ զգու-

¹ Բ այնոցիկ

շուրթիւն, այլ այն աւելորդ ծանրութիւն էր: Եւ տես, զի ի վեր եւ ի խոնարհ զաւրէնսն ծանրագոյն կոչեն:

Քայց միայն ի կարեւորացս յայսցանէ, ասէ. Ի րաց կալ ի գոհելոյ /92բ/ կոոց եւ յարենէ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ, յորոց պահեալ զանձինս՝ րարոք ասնէք, ողջ լերուք (ԺԵ. 28-29):

Արդ, զայսոսիկ ի նորումս ոչ հրամայէ յաւետարանին, եւ ոչ ուրեք յաղագս այսոցիկ խաւսեցաւ Քրիստոս, այլ յաւրինացն զայսոսիկ առնելով այլովքն ամենայնիւ խափանեն զաւրէնսն անգործ թողեալ, զի ըստ Աւետարանիս հետեւեալ աւելորդ էր այլն ամենայն թլփատութեամբն հանդերձ: Եւ զի մի՛ ասիցեն, թէ ընդէր ոչ յաւրինաց անտի ուսանիցին վասն խափանելոյ անպատշաճ գործոցս այսոցիկ, եցոյց ասելովն, թէ «Բաց ի կարեւորացս¹ յայսցանէ», զի ցուցցէ, թէ եւ ոչ հրէից աւելի ինչ քան զայս պարտ է պահել ի Մովսիսէ². եւ այսպէս ի բաց ելոյժ զամենայն աւրէնսն: Եւ որով թուէր զաւրէնսն պատուել առ ի նմանէ առնելով զայսոսիկ, նովիմք զնա լուծանէ զայսոսիկ միայն առնելովն, իսկ զայլսն անգործ թողեալ:

Եւ զի մանաւանդ բազում անգամ ընդ թղթոյն³ Յուդա եւ Շիրղա ընդ նոսա յաղագս պահելոյ զայսոսիկ խաւսեցան, բայց զի երեւեսցին եւ զաւրէնսն պատուել՝ ասէ զաւրինացն պատուիրանսն. եւ զայս ոչ որպէս առ ի Մովսիսէ⁴ ասելով, այլ իբրեւ յառաքելոցն: Եւ զի բազում պատուիրանս յայտ արասցէ, զմին բաժանեաց յերկուս, զայն թէ «յարենէ եւ ի հեղձուցելոյ ի րաց լինել, եւ ասպա ի գոհելոյ եւ ի պոռնկութենէ» (հմմտ. ԻԱ. 25): Զի այսոքիկ թէպէտ եւ մարմնականք են, սակայն հարկաւորք են առ ի պահել հաւատացելոց. զոր եւ Նոյի պատուիրեաց Աստուած, քանզի մեծամեծ չարիք յայսց իրաց անուանին եւ գործին, ցուցանէ, թէ այլքն յաւրինացն ոչ են կարեւորք այժմ յաւետարանիս, այլ աւելորդք են, իսկ սոքա հարկաւորք են առ ի պահել, յորոց պահեալ, ասէ, զանձինս բարիոք առնէք: Եցոյց այսու, թէ ոչ ինչ հեթանոսացն պակասէ, այլ թէ այս իսկ շատ է, եւ ամենայն աւրէնքն կատարեցաւ:

Եփր. Զի իբրեւ զայս ամենայն պահեսձիք, ասէ, առանց թլփատութեան եւ պահպանութեան աւրինացն, ընկալչիկ զՀոգին Սուրբ

¹ ԱԲ կարեւորաց

² ԱԲ ի մովսէտս

³ ԱԲ թղթոցն

⁴ Բ մովսէտս

խաւսել զամենայն լեզուս, որպէս ընկալան ընկերքն ձեր կուռնէ-
լեանք, որ ընտրեցան յառաջ քան ձեզ:

Յոհ. Կարող էին ասել զայս եւ առանց գրոյ. այլ որպէս զի նորա-
գիր աւրէնք լիցին, վասն այնորիկ գրով: Եւ դարձեալ ցուցանեն, թէ
հաւանեալ լինին աւրինացն, եւ ի նոցանէն առնուն ասել զայսոսիկ:
Այլ տես՝ յամենայնի հարկաւորապէս զհեթանոսաց ուղղութեան
սկիզբն¹ ի պատճառէ² հրէից ի ներքս մտեալ. զի նախ քան զայս
խսկ ամբաստանեալ ի նոցանէ վասն առ Կուռնելիոս մտանելոյն,
տայր պատասխանի Պետրոս, եւ կարգաւ պատասխանատուութեան
զամենայն ինչ ասացեալ նոցա դիւրընկալ առնէր զբանն: Ապա
հրէիցն ընդդէմ դառնալով Պաւղոսի եւ հայհոյելով՝ այնպէս եկն ի
հեթանոսս: Աստանաւր դարձեալ, այլ անչափութիւն տեսանելով ի
հրէից ոմանց ի ներքս մուծեալ, այնպէս դադարեցոյց զաւրէնսն. զի
/93ա/ ընդդիմաբանութիւնն, որ եղեւ՝ թէ պարտ է թլփատել զգոսա,
տնաւրինաբար էր, զի յետ ընդդիմաբանութեան աւանդն հաստա-
տուն եղեւ, զի զՊաւղոսի կաման հաստատեցին, ստուգեալ զնոյնն
գովեցին զնորա առաջարկութիւնն³, եւ սքանչացան ընդ շնորհն, եւ
այսպէս հանգուցին զհեթանոսս յաւրինացն ծանրութենէ⁴:

Եւ նորա արձակեալք իջին յԱնտիոք, եւ ժողովեալ զժողովուրդն
եպրուն զթուղթն, եւ ընթերցեալ ուրախ եղեն ի վերայ մխիթարու-
թեանն⁵ (ԺԵ. 30-31):

Տե՛ս սող ինչ թուղթ՝ ոչ ինչ յաճախ բանս ունելով, ոչ կազմ
ճարտասանութեան⁶ բանից եւ ոչ համադրութիւնք⁷ ինչ, եւ ոչ հրա-
մանք ահագինք, եւ զտիեզերս բաւական եղեւ կրաւնից ի կրաւնս
փոփոխել, եւ յիրաւի, քանզի Հոգւոյն էր աւրինադրութիւն, որով
եւ ուրախ եղեն մխիթարեալք: Վայելչապէս ուրախ եղեն. զի աւրի-
նակ իմն դրդուեալք էին ի բանից խռովեցուցչացն: Եւս զի ոչ եղեւ
զրաւ մաքառմանն պաւղոսեանց ընդ նոսա յԱնտիոք, այլ իբրեւ
ընդ դատախազս ոմանս դիմեալ ելին⁸ յԵրուսաղէմ, անդ առնուլ

¹ Բ սկիզբն

² Բ պատճառ

³ ԱԲ առաջարկութիւն

⁴ Ա ծանրութենէ

⁵ ԱԲ մխիթարութեան

⁶ ԱԲ ճարտասանութիւն

⁷ Բ համադրութիւնք

⁸ Բ էին] ելին

զվճիռ վիճմանն. եւ սոքա կային մնային դեռ եւս ի կասկածի, գուցէ համաձայնեալ գտցի խռովչացն աւրէնքն¹ առաքելոցն: Իսկ իբրեւ լուան զգրեալսն ի նոցանէ, ըստ վերասացեալ աւրինակիդ ցուցման, ուրախ եղեն, զի հանգուցին զնոսա յաւելորդ կասկածանաց:

Յուդա եւ Շիդա, քանզի եւ նոքա մարգարէք էին, բանիւք բազմաւք մխիթարէին գեղրարս եւ հաստատելին (ԺԵ. 32):

Բարևոք վճարելով յոր ինչ եկեալն էին. յետ ընթեռնլոյ թղթին, ապա եւ ինքեանք մխիթարեն բանիւ, որպէս զի յամենայն կասկածանաց ազատ լիցին, զի եւ ինքեանք, ասէ, մարգարէք էին եւ ո՛չ վարդապետք: Զնոցին հաւատարմութիւն աստանաւր ցուցանէ, քանզի կարող² էր մանաւանդ³ Պաւղոս մխիթարել զնոսա բանիւ, բայց սոցա էր պարտ, սմին վասն եւ ի խաղաղութիւն հաստատեն զնոսա: Քանզի ընդ⁴ Պաւղոսի վիճելով յառաջագոյն էին տրամակայեալք, այնպէս ի մի՛ հաւաքեալ զեկեղեցին, եւ անձնապատրաստ զգուշութեամբ հաստատեալ եւ ուսուցեալ՝ դարձան խաղաղութեամբ: «Եւ եղեալ, ասէ, անդ ժամանակ⁵ արձակեցան խաղաղութեամբ յեղրարցն առ առաքեալսն» (ԺԵ. 33): Եւ ոչ եւս էր խռովութիւն յայնմհետէ: «Եւ հաճոյ եղև Շիդայի մնալ անդէն» (ԺԵ. 34): Սա է Սիղուանոս, որ չրջէր ընդ Պաւղոսի:

Ապա այսուհետեւ եւ մեք մի՛ գայթակղեսցուք⁶ վասն հերձուածողացն: Զի տե՛ս ահա՝ առ սկիզբն քարոզութեանն⁷, թէ՛ ո՞րչափ էին գայթակղութիւնք, ոչ ասեմ զառ ի յարտաքնոցն եւեթ, զի այնոքիկ եւ ոչ իսկ էին գայթակղութիւնք, այլ զառ ի ներքնոցն, որպէս նախ եղև Անանիային, երկրորդ՝ տրտունջ յունաց առ հերբայեցիս, երրորդ՝ Սիմոնի կախարդին, չորրորդ՝ ամբաստանաւդքն զՊետրոսէ վասն Կուռնելիոու, ապա սովն, ապա գլուխն չարեաց Հերովդէս: Իսկ այժմ՝ խռովեցուցիչքն, որք ի թլփատութեան⁸ չրջել ջանային զնորընծայսն ի հեթանոսաց, բայց ոչ ոք վնասեցաւ, զի ոչ գոյ բարևոյ երբեք լինել, եւ չար ընդ նմա ոչ բաղկանալ:

¹ ԱԲ օրէնք

² ԱԲ կարօղ

³ Ա մանաւանդ եւ

⁴ ԱԲ > ընդ

⁵ Բ ժամանակ ամ մի

⁶ ԱԲ գայթակղեսցուք

⁷ ԱԲ քարոզութեան

⁸ ԱԲ ի թլփատութիւն

/93բ/ ՅՈՐԴՈՐԱԿ

Մի՛ զարհուրեացուք, ապա թէ ոմանք յազգի ազգի հերձուածս զառածանին, այլ պինդ կացցուք ի ճշմարիտ կրաւնս, զի այս իսկ դիպուած մանաւանդ պսակէ զմեզ, որպէս չարչարիչքն պսակաց առիթ լինէին վկայիցն: Զի ոչ եւ միոյ հակառակողի գոլով, ո՞ւր երեւեսցի մեր առ Աստուած ջերմութիւնն¹, այլ ընդ գայթազղութիւնս անվնաս անցանել՝ մեծաց գովեստից արժանաւոր: Արդ, այնուհետեւ ուսուցանէր Պաւղոս, եւ ոչ լինէր խռովութիւն եւ ոչ մարտ, որպէս ունի պատմութեանս կարգ, ըստ որում ասէ.

[ԳԼՈՒԽ ԼԴ.]

Բայց Պաւղոս² եւ Բառնարաս շրջէին յԱնտիոք ուսուցանէին եւ այլովք բազմաւք գրանն Տեառն (ԺԵ. 35):

Ո՛չ վայրապար դեգերէին անդ, այլ ուսուցանէին եւ աւետարանէին: Եւ զի՞նչ արդեաւք³ ուսուցանէին: Զայն ինչ հաւատացեալսն հաստատէին՝ յայտ է, եւ որ ոչն էին հաւատացեալ՝ դարձուցանէին, զբազումս ունելով արբանեակս ի գործն: «Իսկ յեր ատուրց ինչ, յայտ է ոչ բազմաց: Ասէ Պաւղոս ցԲառնարաս. Դարձցուք եւ շրջեսցուք զեղբարրք ըստ ամենայն քաղաքաց, յորս քարոզեսցաք գրանն Տեառն, թէ՛ ո՞րպէս ունիցին (Ե. 36): Տե՛ս զբազում խնամակալութիւնն⁴, եւ մանաւանդ զՊաւղոսի, զի հարկ առնէր Բառնարայ առ ի տեսչութիւնն⁵ բացազնացութեան, զի եւ այլոց քաղաքաց լիցին ընձեռել զբանն: Քանզի բազում էին յայնժամ գայթազղութիւնքն, ըստ որում կարաւտանային նոցա գալստեանն⁶, որ ինչ խնդիրք էին առ ի լուծանել:

Բարիոք⁷ թուեցաւ իրապս այս յականջս Բառնարայ: Եւ կամեցաւ փանել ընդ իւր գՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս: Բայց Պաւղոս աղաչէր, թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիլա եւ գչեկեալն ընդ նոսա ի գործն, մի՛ առնուլ ընդ ինքեանս: Եւ եղև զժպութիւն մինչև մեկնել նոցա ի միմեանց, Բառնարայ առնուլ զՄարկոս նա-

¹ Ա ջերմութիւն, սիրոյն ջերմութիւն

² Ա պաւղոս

³ Գ արդելք

⁴ ԱԲ խնամակալութիւն

⁵ Բ ի տեսչութեան

⁶ Բ գալըստեան

⁷ ԱԲ բարւոք

ւել ի Կիպրոս, եւ Պաւղոսի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անփի (հմմտ. ԺԵ. 37-40):

Զայլոց առաքելոցն զբարս յառաջագոյն նշանակեաց մեզ Ղուկաս, որպէս ցուցաք ի նախկին քննեալսդ վասն Հեզուլթեան, անախտութեան եւ բոլորովին առաքինութեան նոցա: Արդ, այժմ եւ զսոցանէ յայտ առնէ, թէ ոմն քաղցր էր, եւ մանաւանդ ներողական, այսինքն՝ Բառնաբաս, եւ ոմն ստուգագոյն եւ խիստ՝ Պաւղոս, քանզի զանազան են շնորհքն, զի եւ այն շնորհք եւ այս՝ յայտ է: Բայց մին այլ բարուց մարդկան պատշաճի եւ միւսն ըստ այլ, որպէս զարժանն գիտէ հոգին. եւ եթէ փոփոխեալ լինին այսոքիկ, այնուհետեւ բոլորն անպիտան լինի:

Գտանեմք¹ եւ առ մարգարէսն այսպիսի ինչ զանազան կամս եւ զանազան բարս: Որպէս Հեղիաս խիստ էր, եւ Մովսէս հեզ, նոյնպէս եւ աստանաւր, զի Բառնաբաս կակղագոյն եւ ներողական գոլով կամէր առնուլ եւ զՅովհաննէս Մարկոս, բայց Պաւղոս աղաչէր մի՛ առնուլ: Տե՛ս ընդ զստուգութեանն եւ զբազում Հեզուլթիւնն² Պաւղոսի. |94ա| զի մանաւանդ ո՛չ էր հարկ աղաչել, առ ձեռն ունելով զիրաւացի ամբաստանութիւնն³, զի զմեկնեալն ի նոցանէ մի՛ առցեն ընդ ինքեանս: Որպէս զաւրավար ոք ոչ կամեսցի զայն, որ զկահ զինուցն բերէ, ունել հանապազ հեշտ եւ կրակասէր, նոյնպէս եւ ոչ առաքեալն: Սակայն աղաչէր, զի պատկառէր ի Բառնաբայ բազում խոնարհութեամբ՝ իբրեւ հաղորդ գոլով նորա ընդ այնքան իրս, եւ ընդ նմա շրջելով զայնքան ժամանակս: Բայց Բառնաբաս եւ ոչ այնպէս անսայր կամ անտես առնէր, զոր Պաւղոս իբրեւ ստոյգ ոչ կամէր:

Այսպիսի ինչ լիեալ երեւի եւ առ Աստուծոյ եւ մարդկան: Զի ոմն աղաչէ եւ ոմն բարկացեալ լինի, որպէս յորժամ վասն Մարիամու Մովսէս աղաչէ, եւ Աստուած պատասխանէ. «Թէ հար իւրոյ թքեալ էր ընդ երեսս նորա, ո՛չ ամաչէր» (Թիւր ԺԲ. 14): Եւ դարձեալ վասն Ժողովրդեանն⁴ աղաչէ Մովսէս, եւ լսէ. «Թոյլ քուր ինձ ցնջիլ զոսս» (Թիւր ԺԴ. 12), եւ առ Սամուէլ. «Մի՛նչնս յե՛րբ սուգ ասնուցոս»: Եւ ի ձեռն երկաքանչիւրոցն մեծ բարութիւնք վճարէին:

¹ ԱԲ գիտեմք

² ԱԲ հեզութիւն

³ ԱԲ ամբաստանութիւն

⁴ ԱԲ Ժողովրդեան

Նոյնպէս եւ աստանաւր Պաւղոս բարկացեալ լինի, եւ Բառնաբաս՝ ոչ եւս: Բայց թէպէտ բարկութիւն գոլ թուի, այլ մանաւանդ է տնաւրէնութիւն, զի պատշաճն իւր տեղի քարոզելոյ առցէ իւրաքանչիւր ոք: Առ որս աւգտակարապէս եւ գժտութիւնն¹ եղեւ, զի եւ նա խրատեսցի, վասն որոյ այն եղեւ, եւ մի թուեսցի գոլ իրքն խաբէութիւն: Նա զի թէ ո՛չ էր հանդերձեալ իրքն ուղղութիւն լինել, թերեւս եւ ոչ իսկ բարկանային, զի Պաւղոս, որ հրամայէր, թէ «Արեգակն ի վերայ րարկութեան ձերոյ մի՛ մտցլ.» (Եփս. Գ. 26), որ եւ յամենայնի ինքն անսացեալ լինէր, աստանաւր ոչ եղեւ անսացեալ: Եւ Բառնաբաս դարձեալ, որ այնպէս սիրէր զՊաւղոս, որպէս զի նախ քան զայս ինչ՝ տանել զնա առ առաքեալսն, եւ գալ խնդրել զնա ի Տարսոն, եւ զողորմութիւնն² հասարակաց ի միասին տանել յԵրուսաղէմ, եւ զիրսն, որ ըստ աւանդութեանն էր վասն ոչ թլփատելոյ՝ հասարակաբար յանձն առնուլ, ոչ թերեւս վասն այսպիսի իրաց անաստեալ եւ բարկացեալ լինէր: Այլ զի՞նչ, ուրոյն առնեն զանձինս ի միմեանց, զի խրատեսցեն եւ աւանդեսցեն ի ձեռն բաժանմանն զայնոսիկ, որ կարաւտեալն էին նոցա վարդապետութեանն³: Զի

Եղև, ասէ, գժտութիւն՝ մինչև մեկնել նոցա ի միմեանց (ԺԵ. 39):

Արդ, զի հանապազ ներգործութիւն Հոգւոյն ածէր զնոսա յայնչափ յառաջադիմութիւն՝ յայտ է, որով կարեմք իմանալ, թէ «Մեկնելն⁴ նոցա ըստ միմեանց»՝ ոչ էր մարդկային, եւ ոչ գժտութիւն նոցա ըստ մարդկային իրաց նշանակ էր: Եւ մանաւանդ՝ զի ոչ ասէ, թէ բարկացաւ Բառնաբաս ընդ աղաչանսն Պաւղոսի, այլ թէ «Գժտութիւն եղև ի մէջ նոցա» (ԺԵ. 39): Եւ եթէ նա ոչ եղեւ բարկացեալ՝ եւ ոչ սա, զայսոսիկ զիտելով մի՛ ապա վայրապար զնոյնս ընթերցուք, այլ բազում ընտրութեամբ. զի զամենայն ինչ ի գրոց ուսանիմք եւ խրատիմք, զի ոչ եթէ սնոտի է գրեալ, զի մի՛ յորոց շահել պարտ է, տգիտութեամբ ի նոցանէ վնասեալք լիցուք, որպէս բժշկական դեղք /94բ/ եւ զէնք զինուորականք ոչ զիտելով ի կիր արկանողացն վնասեն եւ կորուսանեն: Արդ, ո՛չ եղեն կամաւք տարբերեալք, այլ զի ոչ զիջեալ եղեն ըստ իրերաց: Եւ զի մեծ բարի էր մեկնիլն նոցա,

¹ ԱԲ գժտութիւն

² ԱԲ զողորմութիւն

³ ԱԲ վարդապետութեան

⁴ ԱԲ մեկնել

եւ պատճառ իրողութեան, այսինքն՝ մեկնելոյ նոցա, յայսմանէ էառ ի բարւոյն: Եւ զի ոչ թշնամութեամբ եղեն ի միմեանց զնացեալ, քաւ լիցի, զի տեսանես զկնի այնորիկ զԲառնաբաս բազում գովութեամբ¹ հանդիպեալ ի Պաւղոսէ ի թուղթսն գրելով:

Գժպութիւն, ասէ, նղև (ԺԵ. 39):

Ո՛չ թշնամութիւն եւ ո՛չ վիճաբանութիւն, այնչափ միայն կարաց առնել գժտութիւնն² իբրեւ մեկնել զնոսա ի միմեանց. զի զոր իւրաքանչիւր ոք կարծէր պատշաճ գոլ, զայն իրս յետ գժտութեանն³ միւսն ոչ եղեւ յանձն առեալ վասն առ ընկերն հաղորդութեան: Ինձ թուի եւ խորհրդաբար լինել մեկնութեանն, եւ սիրով ցմիմեանս ասել, թէ «Քանզի ես ոչ կամիմ, եւ դու ախորժես, զի մի՛ եղիցի մարտ կամ խէթ⁴ ի միջի մերում, բաժանեսցուք զտեղիսն քարոզութեան»: Իբրեւ յոյժ հպատակելով միմեանց զայս առնէին. քանզի կամէր Բառնաբաս, զի հաստատեսցի իրքն Պաւղոսի, վասն այնորիկ զնաց: Ո՛հ, թէ մեք այսպիսի բաժանմանք⁵ լինեաք⁶ բաժանեալ, որիչ որիչ գնալով քարոզութիւն:

Բառնարաս առեալ զՄարկոս նաւել ի Կիպրոս (ԺԵ. 39):

Ո՞չ ապաքէն, ասեն, չար արար Բառնաբաս, եւ զիա՞րդ ոչ էր անտեղի վասն այնպիսի⁷ իրաց փոքու այնչափ ընդդիմանալ կամ յառնել ընդդէմ Պաւղոսի: Ասեմք, թէ յառաջանալով իրին ոչ ինչ եղեւ չար. զի թէ ի միասին գոլով բոլորովին⁸ ազգաց շատացեալ լինէին, ապա ի բաց մեկնելովն ի միմեանց առաւել մեծ եղեւ բարեացն⁹ տարածումն:

Եփր. Նա եւ այլազգ. զի դիւրաբար ոչ թողուին զմիմեանս, ըստ որում այնպէս տնաւրինեցաւ, զի մի՛ երթիցեն կողմանքն երկոքեան ի միում գաւառի, լինի պատճառ՝ զի անջրպետեսցին ուրոյն ուրոյն երթալ եւ քարոզել ի գաւառս գաւառս ըստ նմանութեան՝ զի անջր-

¹ Բ գովութեան

² Աբ գժտութիւն

³ Աբ գժտութիւնն

⁴ Բ խէթ

⁵ Աբ բաժանմամբ

⁶ Աբ լինեաք

⁷ Աբ այսպիսի

⁸ Աբ բոլորովին] բոլորովին

⁹ Աբ > բարեացն

պետեցաւ Աբրահամ յ Ղովտայ, զի Աբրահամ եղիցի ուսուցիչ ի մէջ քանանացւոցն, եւ Ղովտ ի մէջ սողոմայեցւոցն¹:

Յոհ. Այլ դու սքանչացիր ընդ աշակերտին ճշմարտախաւսութիւնն², զիա՞րդ ոչ զայսպիսի իրս թաքուցանէ³, զի մարթ էր նմա ասել⁴, թէ «մեկնեցան ի միմեանց» (ԺԵ. 39): Այլ եւ պարտ էր, ասեն, մեկնել ի միմեանց առանց բարկանալոյ: Ասեմք՝ թէ մանաւանդ այսու ցուցանէին մարդիկ գոյ. զի թէ վասն Քրիստոսի այսպիսի ինչ, այսինքն մարդկային՝ պարտ էր լինել առ ի հաւատարմութիւն տնաւրէնութեանն⁵, յոյժ մանաւանդ առ սոքաւք, զի մի՛ ոք աւելի քան զմարդկային բնութիւնս համարեսցի զնոսա: Նա եւ այլազգ. ուսանիմք այսու՝ թէ բարկանալն ոչ է յոռի, յորժամ վասն այսպիսի իրաց իւրաքանչիւր ոք խորհեսցի մեկուսանալ, եւ հանդերձ իրաւացի բանիւ զընտրութիւնն առնել: |95ա| Արդ, եթէ զիւր ոք⁶ խնդրելով իրս եւ զառ ինքն պատիւ⁷ բարկացեալ լինի, բարւոք ասես չար. ապա թէ խրատել եւ ուսուցանել իւրաքանչիւրքն կամելով զմարդիկ, ոմն զայս ճանապարհ զնալով եւ ոմն զայն, որպիսի⁸ ամբաստանութիւն է այս: Քանզի բազում ինչ եւ մարդկային տրամախոհութեամբ առնէին, զի ոչ էին իբրեւ զքարինս անշարժք:

Արդ, տես՝ զի յոլով շահեցուցանէ զՄարկոս մարտս այս, զի Պաւղոսի⁸ զահագին խրատն եւ զահն դարձոյց ի վերայ նորա, եւ ի Բառնաբայ քաղցրութենէն տակաւին ի բացեայ մնալ ոչ ետ՝ որպէս յառաջն: Սակս որոյ թէպէտ եւ մարտ վասն այնր իսկ եկեալ լինին, բայց առ մի կատարած շահն հանդիպի: Քանզի զՊաւղոս տեսանելով Մարկոսի յաւժարեալ ի բաց կալ զնա յինքենէ, երկեաւ յոյժ եւ ըստ գտաւ զանձն իւր, եւ զԲառնաբաս տեսանելով այնպէս նմա փոյթ արարեալ, յոյժ սիրեաց զնա, եւ ուղղեալ լինէր աշակերտն ի ձեռն մարտի վարդապետացն: Այնչափ եւ նայ⁹ հեռի էր ի գայթազդելոյ: Զի եթէ վասն անձանց իւրեանց պատուոյ զայն ինչ առնէին, յիրաւի լինէր գայթազդութիւն, իսկ եթէ վասն փրկութեան

¹ Աբ սողովմայեցւոց

² Բ ճշմարտախօսութեան

³ Աբ թագուցանէ

⁴ Ա ասել խառնիխուռն] ասել

⁵ Աբ տնօրէնութեան

⁶ Բ զիր ոք] զիւր ոք

⁷ Բ պատիւս

⁸ Աբ զպօղոսի

⁹ Աբ նա

միոյ աշակերտի ծուլացելոյ վիճաբանէին, իբրեւ առ ի ցուցանել¹ զայն իրս՝ որ զնա պատուական եւ մեծարգոյ գործէր, բարւոք եւ նա խորհեցեալ եւ ընկեցեալ զհեղգուծիւնն² իբրեւ զանտեղի իրս՝ փոյթ լինէր ի բարին, զոր ընդ իւր առեալ Բառնաբայ նաւէր ի Կիպրոս:

Արդ, ո՞ք լաւագոյն խորհեցաւ, ասեն. որ էառն ընդ իւր զնա³, թէ որ եթող: Ասեմք, թէ ըստ Հոգւոյն կամաց եղեւ երկոքին, եւ մեզ չէ քննել: Սակայն զի մեծ եղեւ տնաւրէնութիւն բանին, ասեմք՝ զի ուր Պաւղոս երթալոց էր, հանդերձեալ էին երկիցս արժանանալ տեսչութեան, պարտ էր, զի եւ նոքա արժանասցին, առ որս գնալոց էր Բառնաբաս: Նա եւ այս իսկ տնաւրինական էր Բառնաբայ երթալ անդր⁴, քանզի կիպրացիք ոչ այնպիսի իրս ընդդիմակս ցուցին, որպէս որք յԱնտիոքն էին եւ այլքն, ըստ որում եւ նոքա մանաւանդ կարաւտանային բարուցն կակղագունի⁵ բաւականացեալ նովաւ: Իսկ սոքա այնմիկ պէտս ունէին, որ ստուգագոյնն⁶ էր Պաւղոս. որ եւ ոմանց սաստէ եւ զայլս յորդորէ, եւ հրամայէ զբարին առնել առ ամենեսեան առանց ձանձրանալոյ, ըստ որում եւ ինքն զամենայն ինչ առնէ եւ ուղղէ եւ խրատէ, զոմանս միամիտս եւ յաւժարս առեալ յարբանեկութիւն, որպէս ասէ, թէ «Պաղոսի ընտրեալ գճիղա» (ԺԵ. 40), վասն զի սքանչելի էր այս⁷ եւ յոյժ մեծագոյն ի շնորհս Հոգւոյն:

Իսկ զի՞նչ այն, թէ «Յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անոր» (ԺԵ. 40): Յայտ է՝ աղաւթս արարին, աղաչեցին զԱստուած: Եւ տե՛ս յամենայնի մեծ բարութեանց պատճառ եւ կարաւղ լիեալ զաղաւթս եղբարցն: Եւ հայեաց ընդ իմաստութիւնն⁸ Պաւղոսի, զի ոչ յառաջագոյն յայլ քաղաքս եկեալ լինի, այլ նախ ընդունողաց բանին այց առնէ տեսչութեամբ:

Շրջլր, ասէ, ի կողմանս Ասորոց⁹ եւ կիլիկեցոց¹⁰, հասարարէր զեկեղեցիսն (ԺԵ. 41):

¹ ԱԲ ի ցուցանելոյ

² ԱԲ զհեղգուծիւն

³ Ա զնայ

⁴ Բ անդ

⁵ ԱԲ կակղագոյնի

⁶ Բ ըստուգագոյնն

⁷ ԱԲ այրս] այս

⁸ ԱԲ իմաստութիւն

⁹ ԱԲ ասորոց

¹⁰ Ա կիլիկեցոց

/95բ/ Ահաւաստիկ առ որս զթուղթն յառաքելոց անտի ունէին, զի տարցին առ նոսա, նախ առ այնոսիկ շրջի. զի ոչ համարէր իմաստութեան գործ զանաւգուտ ընթացսն զնոքաւք զանց առնելով: Զոր եւ մեր իսկ սովորութիւն է առնել, զի նախ զառաջինսն խրատեմք, զի մի՛ նոքա խափանիչք այլոցն¹ լինիցին: Արդ, տե՛ս զնա յարուցեալ հանապազ եւ հոգացեալ, եւ երբեք նստել եւ հանգչել յանձն ոչ առեալ, մանաւանդ բիւրուց վշտաց համբերելով: Տեսանե՞ս, զի ոչ էր ի զանգիտութենէ յառաջագոյն դառնալն յԱնտիոք. եւ այժմ առանձնանալն ոչ էր զանգիտեալ² ինչ, այլ դառնայր ի տեսութիւն, որպէս եւ բժիշկք առ հիւանդացն առնեն: Եւ զկարիս իրացն այց առնելոյ յայտնեաց նախ ասելով ցԲառնաբաս, «Դարձցուք առ որս պարմնցար գրանն, թէ ո՞րպէս ունիցին»: Քանզի յիրաւի յայսմ անգիտանայր եւ շրջէր տեսանել: Բայց եւ զայս իմասցուք, թէ ո՞րպէս այնուհետեւ հետիոտն ընդ ցամաք ճանապարհորդէին, շրջելով առ ամենեսեան, զի այնու³ շահեցուցեն զբազումս: Իսկ յորժամ փութոյ պէտք լինէին, յայնժամ նաւու ընթանային, բայց այժմ ոչ եւս:



¹ Աբ յետ այլոցն] այլոցն

² Բ զանգիտելի

³ Աբ այնպէս] այնու

Եկն եհաս ի Դերբլ եւ ի Լիւսփրա, եւ ահա աշակերփ ոմն էր անդ անուն Տիմոթեոս¹, որդի կնոջ հրէի հաւափացելոց եւ հաւր հեթանոսի, որ վկայեալ էր ի լիւսփրացոց եւ յիկոնացոց եղբարց: Չսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր փանել, եւ առեալ թլփափեաց գնա վասն հրէիցն, որ էին ի փեղոջն² յայնմիկ (ԺԶ. 1-3):

Աշակերտս³ գըրիսոնեայսն ասէ տակաւին, որպէս նախ քան զայս ասաց, թէ «Ընդդէր դնէք լուծ ի վերայ պարանոցի աշակերփացն» (ԺԵ. 10): Եւ էր սա կիսակատար իմն ի հրէութեան, զի հաւր հեթանոսի էր որդի: «Որ վկայեալ էր, ասէ, ի լիւսփրացոց⁴ եւ յիկոնացոցն եղբարց» (ԺԶ. 2): Տե՛ս աւասիկ⁵, զի մեծ⁶ էր շնորհքն, որ առ Տիմոթէոս, եւ մանաւանդ առաքինութիւն նորա: Վասն զի յորժամ ի բաց եկաց Բառնաբաս, զայլ ոմն հաւասարորդ նորա գտանէ Պաւղոս, յաղագս որոյ ասէ առ նա գրելով. «Զմփրա ածեմ զարքասուսն քո եւ զանխիղճ հաւաքն⁷, որ են ի քեզ, որ յառաջագոյն բնակեցաւ ի հանոյ քում Լովիդեայ⁸ եւ մար քո Ենիկեայ, հասփափեալ եմ, թէ եւ ի քեզ իցէ» (Տմթ. Ա. 5): Եւ քանզի հեթանոսս գոյով հաւր նորա, վասն որոյ եւ թլփատեաց զնա, զայն որ մայրն իւր ոչ թլփատեաց: Տեսանե՞ս աւասիկ լուծեալ զաւրէնան, զի անթլփաթ էր նա, թէպէտ եւ մեծ էր, կամ վասն ընդ⁹ հաւրն, զի հեթանոս էր, կամ զի յետ քարոզութեանն եւ հաւատոցն եղեւ ծնեալ սա: Եւ թէ չէր այսպէս, թերեւս ոչ գրէր առ նա, թէ «Ի մանկութենէ զգիրս սուրբս գիփես» (Տիմ. Գ. 15):

Եփր¹⁰. Արդ, առեալ թլփատեաց զնա ոչ թէ առանց ընտրութեան գործելով զայս, այն որ զամենայն ինչ ընտրող իմաստութեամբ գործէր, այլ քանզի հանդերձեալ էր աւետարանել Տիմոթէոս զաւետարանութիւնն¹¹ հրէից ընդ ամենայն տեղիս, զի մի՛ վասն անթլփատութեանն անարգեսցեն զքարոզութիւն նորա, |96ա| զմտաւ ած խոր-

¹ ԱԲ Տիմոթեոս

² ԱԲ ի տեղոջս

³ ԱԲ աշակերտ

⁴ ԱԲ ի լիւսփրացոց

⁵ Բ ահաւասիկ

⁶ ԱԲ մեծ] մեծ

⁷ ԱԲ հաւատսն

⁸ ԱԲ Ղովիդեայ

⁹ Բ > ընդ

¹⁰ Գ > եփր.

¹¹ ԱԲ զաւետարանութիւն

հեցաւ թլփատել զնա, ոչ թէ զի զթլփատութիւնն¹ հաստատեցէ նովաւ՝ խափանիչն թլփատութեան, այլ զի աւետարանութիւն ի պատճառս անթլփատութեան նորա մի՛ ճեղքեալ գտանիցի նովաւ: Այնր աղազաւ² վասն հեթանոսացն՝ այնորիկ փոյթ ո՛չ առնէր:

Յոհ. Քանզի բանին պարտ էր սերմանել, այն էր մեծագոյն, վասն այնորիկ եւ թլփատեաց զնա, զի մեծ էր ուղղութիւնն³, որ լինելոց էր յայնմ իրաց: Տեսանե՞ս ի հակառակէն մեծ բարի լեալ, ըստ որում եւ զպատճառն յայտնէ մեզ Ղուկաս. «Ասսն հրէիցն, ասէ, որ էին ի փղիսն յայնոսիկ» (ԺԶ. 3). զի թերեւս ոչ լինէին յանձն առեալ հրեայքն յանթլփատէ լսել զբանն: Եւ տե՛ս զուղղութիւնն՝ թլփատեաց, զի զթլփատութիւնն⁴ խափանեցէ: Եւ ոչ այս միայն, այլ եւ զաւանդութիւնն քարոզէր զառաքելոցն, որ ընդդէմ թլփատութեան ահա մարտ եւ ի ձեռն մարտին շինութիւն, ոչ առ ի յայլոց մարտուցեալ լինելով, այլ ինքեամբ զներհակս ոմանս առնելով այնպէս զեկեղեցին շինէ հաւատովք. աւանդութիւն ի ներքս մուծանէ ո՛չ թլփատել՝ եւ ինքն թլփատէ հանդերձ հաւատովք:

Ծշմարտապէս զարմանալ պարտ է ընդ հանճար իմաստութեանն⁵ Պաւղոսի, զի նա, որ այնչափ մարտ եւ խնդիր արար ընդդէմ թլփատութեանն⁶, եւ զամենայն ինչ շարժեաց ի վերայ, եւ ոչ նախ ի բաց եկաց մինչեւ ուղղեաց զամենայն: Եւ յորժամ աւանդն ամենայն առաքելոցն հաստատեցաւ, յայնժամ առեալ զաշակերտն թլփատէ: Ոչ միայն զայլս ոչ խափանէ, այլ եւ ինքն զնոյն գործէ, քանզի զամենայն ինչ ըստ պատշաճի տեսանէր: Ո՛չ վայրապար եւ յանկարծադէպ ինչ առնէր, այլ յառաջահոգ նախատեսութեամբ, նա եւ որ ինչ սքանչելին է, զի զհետ իւր առեալ տանէր զնա: Ապա այնուհետեւ ոչ դեգերի առ տեղաւքն⁷ այնոքիւք իբրու վասն այցարարութեան հասարակաց եկեալ, այլ հեռաւորացն տեսչութեամբ յառաջեալ լինի:

Իբրև անցանէին ընդ քաղաքսն, աւանդէին նոցա պահել պապուիրանս հրամայեալսն յառաքելոցն եւ յերիցանցն, որք յերու-

¹ ԱԲ զթլփատութիւն

² ԱԲ յաղազաւ

³ ԱԲ ուղղութիւն

⁴ ԱԲ զթլփատութիւն

⁵ ԱԲ իմաստութիւն

⁶ ԱԲ թլփատութեան

⁷ ԱԲ տեսողքն] տեղօքն

սաղևմ: Եւ եկեղեցիքն հաստատուի ի հաւաքս, եւ ի ձեռն նշանացն, որ լինէին՝ յառուելուին ի թիւ¹ հանապազաւր (ԺՁ. 4-5):

Տեսե՞ր զթլփատութեանն շահն. վասն այնորիկ թլփատէր զաշակերտն², զի ոչ միայն վնաս չարար³ թլփատութիւնն⁴, այլ եւ մեծամեծս շահեցոյց: «Եւ շրջեցան ընդ Փոքիգիա⁵ ընդ կողմանս գաղափարացոց, արգելալք ի Նոգոյն Սրբոյ խաւսել զրանն յԱսիա» (ԺՁ. 6): Արդ, զՓռիւզիա ի Հարաւ կողմ⁶ եւ զԳաղատիա ի Հիւսւս կողմ թողլով՝ ի մէջերկրեայսն փութային. քանզի է իսկ Փռիւզիա ի Հիւսւսոյ⁷ կուսէ սահմանակից ծովուն կիպրացոց, իսկ Գաղատիա ի Հարաւոյ կուսէ սահմանակից ծովեզերեացն Պոնտոսի:

Բայց եկեալ առ Միսւնաւ, թեւակոխէին երթալ ի Բիւթանիա, եւ ոչ համարձակեաց նոցա Նոգին (ԺՁ. 7):

Արդ, զի արգելեալ եղեն, զի մի՛ ումեք խաւսեսցին զբանն Աստուծոյ ի գաւառին ասիացոց, ասէ: Բայց թէ ընդէ՞ր արգելան, ո՛չ յաւելլ. խրատելով զմեզ հաւանութեամբ հնազանդել միայն Աստուծոյ, եւ ոչ զհանգամանս /96բ/ իրաց ինչ խնդրել: Նա եւ զայս եւս ուսուցանէ, թէ բազում ինչ մարդկապէս խորհէին եւ առնէին:

Եւ անցեալք ընդ Միսիա՝ իջին ի Տրովադա: Եւ տեսիլ երեւացաւ ի գիշերին Պաւղոսի. այր ոմն մակեդոնացի⁸ կայր, աղաչէր զնա եւ ասէր՝ անցեալ ի Մակիդոնիա աւզնեսցես մեզ (ԺՁ. 8-9):

Ընդէ՞ր տեսիլ երեւի եւ ոչ Հոգին Սուրբ խաւսի ընդ նոսա: Վայելչապէս այս լինի. զի նախ ի յասիացոցն նա արգել եւ խափանեաց զնոսա, եւ այժմ տեսիլ երեւեցուցանէ, քանզի կամէր առ մակեդոնացիսն ձգել զնոսա քարոզութեամբ⁹, վասն որոյ եւ յանուրջս որպէս բազմաց ի սրբոցն երեւեալ կոչէ զնոսա: Նա եւ ի սկզբանն սա տեսիլ ետես. այր ոմն մտեալ եւ եղեալ ի վերայ նորա ձեռս, եւ յետոյ ի ձեռն հրեշտակի խաւսի ընդ նմա Քրիստոս ի գիշերի.

¹ ԱԲ ի թիւն

² Գ > վասն այնորիկ թլփատեր զաշակերտն

³ Ա չարչար, Բ չարաչար

⁴ Բ թլփատութեան

⁵ Բ Փոքիգիայ

⁶ ԱԲ կողմն

⁷ Բ ի հիւսիսոյ

⁸ Ա մակեդոնացի

⁹ Բ քարոզութեամբն

«Մի երկնհիր, *ասելով*, Պառլե. կայսեր եւս պարտ է քեզ յանդիման լինել» (ԺԷ. 24): Արդ, վասն այնորիկ զնա անդանաւր ձգէ Հոգին, զի ի հեռաւորս տարածեալ լիցի քարոզութիւնն¹: Սմին վասն եւ խափանեալ եղեւ ղեզերել² առ այլովք քաղաքաւքն, անդ զնա³ փութացուցանելով Քրիստոսի, թերեւս վասն զի ասիացիք հանդերձեալ էին վայելել վարդապետութեամբ Յովհաննու աւետարանչի բազում ժամանակս: Նա թերեւս եւ առժամայն ոչ յոյժ կարաւտացեալ լինէին լսել զբանն, եւ անշահ լինէր զնալն առ նոսա. այլ անդ զնալ պարտ էր, ուր հաւատոյն բացեալ էր դուռն վաղվաղակի: Այլ տես, զի ոչ ի ձեռն հրեշտակի, որպէս Փիլիպպոսի կամ Կուռնելիոս⁴, այլ ի ձեռն տեսլեան յայտնեալ լինի նմա մարդկեղէն⁵ իրաւք եւ ոչ աստուածային, քանզի ուր դիւրագոյն է հաւանելն մարդկաւրէն երեւի, իսկ ուր բազում է բռնութիւնն⁶ աստուածային լինի յայտնութիւնն⁷: Եւ քանզի Պաւղոս միայն ի քարոզելն իսկ լինէր փութացեալ, ըստ որում բաւական էր առ այն իրս անուրջ միայն երեւել նմա, իսկ զոչ քարոզելն՝ ոչ առնոյր յանձն եւ ոչ լինէր նմա դիւրընկալ, վասն որոյ զայն իրս Հոգին Սուրբ յայտնէ եւ արգելու: Այսպէս եւ անդանաւր Պետրոսի Հոգին տայր հրաման երթալ ընդ նոսա եւ մի՛ խղճել. զի ոչ արդեաւք⁸ զդիւրագոյնսն լինէր գործեալ Հոգին, այլ շատ եւ բաւական էր անուրջն միայն: Այսպէս Յովսէփայ, զի դիւրաբար հաւանէր անուրջ լինէր երեւեալ վասն կուսին, իսկ այլոց արթնութեամբ, որպէս Կուռնելիոս, եւ նորին իսկ սմա այժմ: Նա եւ երեւելն⁹ ոչ պարզաբար հրամայելով էր, այլ աղաչելով եւ զկարիսն յայտնելով՝ իբրեւ ի մեծ վտանգէ զերծանել. «Օգնեսցես մնգ» (ԺԶ. 9) ասէ:

Եփր.¹⁰ Արդ, զի մի՛ խափանեսցին նոքա ի մէջ այնոցիկ, որ ոչ լսէին նոցա, յայտնեցաւ նոցա երթալ ի Մակեդոնիա¹¹, զի ղէտ ակն ունէին նոցա եւ բիւթանացիք, որպէս զի արգելան նոքա յասիացոց: Արդ,

¹ ԱԲ քարոզութիւն

² Ա դէգերել

³ ԱԲ ցա

⁴ Բ կուռնելիոս

⁵ Ա մարդկեղէն

⁶ ԱԲ բռնութիւն

⁷ ԱԲ յայտնութիւն

⁸ Գ արդելք

⁹ Բ երեւեալն

¹⁰ Գ > Եփր.

¹¹ ԱԲ ի մակեդոնիա

զի փուլթասցին նոքա երթալ ի Մակեդոնիա¹, ուր պատրաստեցաւ նոցա, երեւեցաւ Պաւղոսի իբրեւ այր մակեդոնացի², զի մատուցեալ աղաչէր եւ խնդրէր ի նմանէ, զի երթիցէ աւզնեսցէ ի Մակեդոնիա: «Եւ իբրև գրեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցար ելանն ի Մակեդոնիա, փղեկացեալք եթէ հր/97ա/աւիրեաց գմնգ Տէր Անտարանն նոցա: Եւ ելեալ ի Տրովադա դէպ ուղիդ գնացար ի Սամոթրակէ: Եւ ի վաղի անդր ի նոր քաղաք, եւ անտի ի Փիլիպուպալիս՝ որ է առաջին վիճակ մակեդոնացոց³ քաղաք Կողոնիայ⁴, եւ անդ ի քաղաքին դադարեալ մեր⁵ աուրս ինչ» (ԺՁ. 10-12):

Յոհ. Արդ, ասէ յանուանէ զգլխաւոր տեղիսն իբրու կերպագրութեամբ, եւ ցուցանէ, թէ առ մեծագունաւքն զտեղի առեալ դադարէին, զայլովքն զանց առնելով ասել մի ըստ միտջէ: Արդ, երթեալ նորա առ այնոսիկ, որ կարաւտէին բժշկութեան, տեղեկացեալ ասէ, թէ «Կոչեաց գմնգ Տէր», այսինքն՝ ուր պարտն է եւ արժան: Նա եւ Պաւղոսի տեսանելն եւ ոչ այլոյ ուրուք, եւ արգելուլն ի ձեռն Հոգւոյն, եւ առ սահմանաւքն լինելովն, յայսցանէ յամենեցունց հաստատեալ՝ անդ դիմէին յաւժարութեամբ, զի փուլթով նաւարկութիւնն⁶ զայս երեւեցուցանէ՝ եթէ բռնութեամբ էր արգելեալ: Տե՛ս, զի ոչ եղեւ արգելեալ, յորժամ ծանեաւ, այլ փուլթով ի սկիզբն եւ յարմատն մակեդոնացոց⁷ ի Փիլիպէք մտեալ եւ անտի սկսանէր: Իսկ Կողոնիայն իշխանութեան⁸ ինչ անուն է⁹. որպէս թէ ասել՝ քաղաք իշխանութեան:

ՅՈՐԴՈՐԱԿ

Արդ, որպէս վերագոյն ասացի՝ զգուշութեամբ հայեցուք ի գիրս, զի մի՛ վնասիցիմք, յորոց շահելն է պատշաճ. զի բազումք իսկ վնասին վեր ի վերոյ ի գրեալսն մատչելով: Եւ այս է պատճառն, զի ոչ որ ինչ մեզ յաւգուտն է, յայն փուլթամբ, այլ յաւտարոտիսն ի կազմածս տանց եւ ի շահս ստացուածոց, զորս փուլթամբ յարդարել, եւ զհոգիս մեր խարխալեալ տեսանելով անտես առնեմք. զշունսն եւ զբազէսն իմաստասիրել կրթեմք յորսոցն իրս, զի զորսն ընբու-

¹ Ա ի մակեդոնիա

² Ա մակեդոնացի

³ Ա մակեդոնացոց

⁴ Բ կողոնիա

⁵ ԱԲ մեք] մեր

⁶ ԱԲ նաւարկութիւն

⁷ ԱԲ յարմատ մակեդոնացոց

⁸ ԱԲ իշխանութիւն

⁹ ԱԲ անուն է քաղաքին

նեալ եւ ի քաղցոյ¹ ստիպեալ՝ Տեառնն մնան եւ ոչ ուտեն, զի մի՛ ի գովեստիցն եւ յառատ վայելմանցն վրիպեալ գանս եւս առցեն: Զառիւծուց ցասումնն² նահանջել կրթեն, եւ զանձինս իւրեանց քան զնոսին անասնագոյնս եւ զազանայինս առնեն: Առ որս ասելի է՝ թէ «Ով դուք, թէ ի սրբոց ուրուք ոչ ախորժէք առնուլ աւրինակ ուղղութեան», ասելով, թէ նոքա մեծք էին Պետրոս եւ Պաւղոս, գոնէ ի շանցդ եւ ի բազէիցդ խրատեցարուք արհամարհելով զմերձակայսս վասն հանդերձելոցն մեծամեծ խոստմանց, որոց լիցի մեզ հասանել ի Քրիստոս Յիսուս:

[ԳԼՈՒԽ ԼԵ.]

Եւ յաւոր շարաթու ելաք արփարոյ քաղաքին առ գեպափն³, ուր համարէր աղալթս մարուցանել, եւ նստեալ խաւսւաք⁴ ընդ ժողովեալ կանայսն (ԺԶ. 13):

Տե՛ս դարձեալ զՊաւղոս ըստ հրէիցն արարեալ, եւ ի ժամանակէն եւ ի տեղւոյն: «Յաւոր շարաթու», ասէ, քանզի յայնմ աւուր դատարկացեալ ի միասին ժողովէին բազմութիւն հրէիցն արտաքո քաղաքին, զի առ լսողութիւն յոյժ ի ճահ էր տեղին այն, ազա՛տ գուրով ի խուճապից եւ ի բազմանց: «Ի փնդի, ասէ, ուր արւն էր լինել ուխտի աղալթից»: Զի ո՛չ միայն ի ներքս ի քաղաքն ժողով լինէր հրէից, այլ եւ արտաքոյ աղալթիւք ուխտ կատարէին, որպէս տեղի ինչ որոշելով. զի եւ էին /97բ/ իսկ մարմնականագոյն հրեայքն: Եւ տե՛ս զխոնարհութիւն առաքելոցն. զի ոչ մեծագոյն թուէր նոցա քաղաքն այն մեծ Փիլիպոլպաւլիս, այլ արտաքոյ ելեալ նստեալ խաւսէին ընդ ժողովեալ կանայս՝: Ահաւասիկ եւ որ գրեացն զպատմութիւնս, ոչ լինի ամաչեցեալ վասն ի ճահ առ կանայսն խաւսելոյ. որպէս զի առ պարապութեան լինելով առաւել հուպ լինէին յասացեալսն կանայքն: Այլ ընդէ՞ր միայն ընդ կանայսն: Քանզի գիտէր որոց արժան էր խաւսել զբանն. որ եւ անդէն իսկ արդիւնք քարոզութեանն⁶ երեւեցաւ:

¹ Բ ի քաղաքացոյ] ի քաղցոյ

² Բ ցասումն

³ ԱԲ գետափանն] գետափն

⁴ Գ խօսեաք

⁵ ԱԲ կանայսն

⁶ ԱԲ քարոզութեան

Զի կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ ի Թիւափիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ, գորոյ Տէր իսկ երաց զսիրտն անսալ բանիցն Պաղոսի (ԺՁ. 14):

Հայեաց զխոնարհութիւնն¹ Պաղոսի, թէ զիա՞րդ ընդ ամենեսեան զիջանէր: Տնս եւ զիմաստասէր կինն, թէ ո՞րպէս փութով հաւատաց, եւ ոչ ինչ խափանեաց զնա մեծութիւնն². եւ զի մեծարգոյ էր, յարուեստէն իւրմէ յայտնի էր: Բայց զի առանց բարձրամտութեան էր եւ խոնարհ, եւ Ղուկաս վկայէ, թէ «Երկիւղած էր յԱստուծոյ», եւ թէ յառաջագոյն Աստուած կոչեաց զնա եւ եբաց զսիրտ նորա, ապա ուրեմն Աստուծոյ կարաւտանամբ բանալ զսիրտ³ մեր: Այլ Աստուած բանայ զսիրտն ախորժողաց. զի է տեսանել զսիրտս հեռացեալս, որք ոչ կամիցին, արդ բանալն Աստուծոյ էր, իսկ հուպ լինելն ի բարիսն կնոջն, որպէս զի աստուածայինն եւ մարդկայինն ի միասին գալ պէտս ունին⁴:

Եւ իբրև մկրտեցաւ, ասէ, ինքն եւ իւրքն ամենայն, աղաչէր եւ ասէր. Եթէ համարիմք զիս հաւաքացեալ Տեսոն, մրեալ ի փուն իմ արգերոք, եւ բռնադափեաց փարաւ զմեզ (ԺՁ. 15):

Աքանչելի էր հաւատք կնոջն: Զի տես, թէ ո՞րպէս հաւանեցոյց զամենեսեան, որ ընդ իւրն էին, ապա հայեաց եւ ընդ իմաստութիւն նորա, թէ զիա՞րդ աղաչէր զառաքեալսն, կամ թէ ո՞րպէս խոնարհութեամբ եւ իմաստութեամբ լի՛ են բանք նորա, զի ոչ այլ ինչ նշան տա աղաչանացն, բայց զայն միայն, որով ապրեցաւն: Ոչ ասաց, թէ ընտրեցէք զիս մանաւանդ քան զմեծագոյն կանայսն, այլ թէ «համարիք զիս հաւաքացեալ Տեսոն», յոյժ մանաւանդ եւ ձեզ. եւ եթէ ո՛չ իցէք ընդ երկուացեալ եւ համարիցիք զիս՝ ասէ, այսինքն՝ եթէ ընտրեցէք զիս ընձեռելով ինչ այսպիսի խորհուրդ, ապա կատարեցէք գալովդ ձերով:

Ոչ ինչ զաղաչանս զայս է պատկառելի. զի՞ ոք արդեաւք⁵ ոչ կակղացուցանէին բանքս այսոքիկ: Ո՛չ հայեաց, ո՛չ աղաչեաց պարզաբար, այլ զնոսս թողացոյց ընտրոյ տեսարս լինել, այնպէս հարկեաց ուժգնաբար եւ բռնադատեաց բանիւքս այսոքիւք, մինչեւ

¹ ԱԲ գիտնարիտութիւն

² Բ մեծութիւն

³ ԱԲ զսիրտս

⁴ ԱԲ ունէից

⁵ Գ արդեւք

հաւանեցոյց զառաքեալսն: Եւ ոչ ասաց՝ առ իս, այլ առ բազում խոնարհութեանն՝ «ի փուն իմ ազերոյ» (ԺԶ. 15) ասէ: Այնպիսի յաւժարութեամբ ճշմարտապէս հաւատարիմ էր կինն, զի այնպէս վաղվաղակի պտղաբերեաց¹ շահ մեծ զհաւատն վարկանելով եւ զմտանելն նոցա ի տուն իւր: Եւ ոչ համարձակեցաւ նախ քան զլուսաւորութիւն խնդրել, այլ իբրեւ մկրտեցաւ, ընկալաւ զառաքեալսն այնչափ աղաչանաւք, բազմա/98ա/պատիկ յոլովագոյն սա քան զԱբրահամ:

Եւ ընդէ՞ր լինէին կամեցեալ, որք ընդ Պաւղոսին էին: Որպէս զի բռնադատելովն՝ զանձինս երեւեցուցեն ազատս յերախտիս պահանջելոյ, եւ զկինն կոչեսցեն այնու ի մեծագոյն յաւժարութիւն: Կամ դարձեալ. զի զպատուիրեալսն ի Քրիստոսէ կատարեսցեն, թէ «Յոր քաղաք մփանիցէք, նախ հարցանիցէք, թէ ո՞ր ի նմա արժանի է, եւ անդ լինիցիք» (Մարթ. Ժ. 11): Եւ այսպէս զամենայն ինչ վասն տնաւրէնութեան Աւետարանին արարեալ լինէին: Արդ, եւ մեք զայսոսիկ ուսանելով մի՛ ամաչեսցուք ընդ աղքատութիւնս եւ անպատուութիւն: Առ մշակի լինէր ազեալ Պետրոս, առ ծիրանավաճառի եւ աւտար կնոջ Պաւղոս, յամաւթ եղեւ անդանաւր մեծամտութիւն:

Եւ եղև մինչ երթայաք մեր յաղաւթս, պապահեաց մեզ աղախին մի, գոր ունէր այս հարցուկ, որ շահս բազումս² փայր փերանց իւրոց մոլելովն: Նա զհետ եղեալ Պաւղոսի եւ մեր՝ աղաղակէր եւ ասէր. Արքս այս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պարմենն ձեզ զճանապարհս փրկութեան, եւ զայս առնէր ի բազում աւուրս (ԺԶ. 16-18):

Դեւն այն էր, զոր Ապողոնն³ անուանէին, որ եւ զհարցուկութիւնս⁴ առնէր, զոր եւ ի տեղւոջն յայնմիկ Պիւթիոն աստուածս⁵ անուանէին հեթանոսք:

Եփր. Եւ զիա՞րդ կամ ո՞րպէս դեւն այն զայսոսիկ բարբառէր: Յայտ է՝ զի կամ կաշառս վարկանէր⁶ զայն առաքելոցն՝ զի մի՛ հանցեն զնա յաղջկանէն, կամ որպէս խաբէր զիւթութեամբքն իւրովք եւ տայր կարծիս, թէ ճշմարիտն ասիցէ, զի եւ վասն անհաւաստի

¹ ԱԲ պտղաբերութիւն] պտղաբերեաց

² ԱԲ բազում

³ ԱԲ ապողոնն

⁴ Բ զհարցուկութիւնսն

⁵ Բ աստուած

⁶ ԱԲ վարէր] վարկանէր

հրամանատուութեան շեղիչ¹ եւ պատրիչ կոչէին զնա: Կամեցաւ խաբել եւ այսու, որ ճշմարիտս էր. զի վկայ առ ճշմարտութիւն անդ՝ ընդ որդւոցն ճշմարտութեան կեղծաւորէր գոյ:

Յո՛ւ. Բայց ոչ եղեւ ընդունելի առաքելոցն յարգելն եւ գովել նորա, զոր աւրինակ եւ ոչ առ Տէրն նոցա դեւն այն, որ գտեառնէն նոցա ի մէջ հրէիցն քարոզէր: Նմանապէս եւ Պաւղոս արգելու զնա, քանզի նենգութեամբ եւ չարաբանութեամբ զայն իրս առնէր: Իսկ Պաւղոս մեծ հանճարեղութեամբ խորհեալ, զի մի՛ հաւատալի արասցէ զբան նորա, զի թէ ընկալեալ էր զվկայութիւն նորա Պաւղոս², զբազումս ի հաւատացելոցն պարտէր խաբելով իբրեւ ընկալեալ ի Պաւղոսէ որպէս ճշմարիտ: Վասն այնորիկ ոչ առնուն յանձն լսել զգիւակաւան ասացեալսն, զի դադարեցուցէ զնա վասն իւր ասել ինչ, զոր եւ Քրիստոս զնոյնս բազում անգամ առնէր:

Եւ տես, զի նախ զիջանելով այսն՝ ի կիր արկանէր զբանն, իբրեւ թէ այնու պատրել կարասցէ զմիտս նորա՝ երկուցեալ առ իւրոյ կորստեանն³: Նա եւ Պաւղոս յառաջագոյն ոչ ընդունեցաւ զբանն, այլ մերժեաց զնա ի բաց, ոչ կամելով արկանել պարզաբար զանձն իւր ի նշանս, այլ յորժամ կարի ստիպեաց այսն առնելով զայն, եւ զգործն եւս զնոցա ցուցանէր. «Պապմնն ձեզ, ասէ, զճանապարհս փրկութեան» (ԺՁ. 17): Այլ ով պիղծ եւ ամենապիղծ, եթէ գիտես այսուհետեւ, եթէ ճանապարհ փրկութեան պատմեն, ընդէ՞ր ոչ կամաւ յաղկանէդ արտաքս ելանես: Այլ զոր ինչ Սիմոն կամեցեալ լինէր ասելով՝ «Տուր ինչ գիշխանութիւնդ գայդ, զի /98բ/ յորոյ վերայ դնիցնս ձեռս, առցէ Նոզի Սուրբ» (հմմտ. Ը. 18), զայս իսկ եւ սա առնէր, քանզի ետես զնոսս քաջընտիրս⁴ լիեալ քան զինքն, ըստ որում եւ այսու կեղծաւորեալ զինքն իբրեւ զճշմարիտ երեւեցուցանէր, եւ այսպէս ակն ունէր թողեալ լինել յաղախինն, իբրու թէ զնոյն զնոցայն քարոզէ այնուհետեւ: Այլ եթէ աւրհնութիւն մարդոյ⁵ մեղաւորի ոչ է գեղեցիկ կամ ընդունելի Աստուծոյ, յոյժ մանաւանդ առ ի դիւէն ասացեալն, սմին վասն յայնժամ եւ Պաւղոս սաստեաց նմա ելանել յաղկանէն:

¹ ԱԲ շեղիչս

² ԱԲ > պաւղոս

³ Ա կորրստեան

⁴ ԱԲ քաջընդիր

⁵ ԱԲ բերանոյ մարդոյ] մարդոյ

Զայրացեալ, *ասէ*, Պաւղոս դարձաւ եւ ասէ ցայսն. Պապուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի, ել ի դմանէ. եւ ել ի նմին ժամու: Իրբն քեանին քեարք նորա, թէ հապաւ յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս եւ զՇիղա ձգեցին ի հրապարակսն առ իշխանսն, եւ ածեալ զնոսա առ զաւրագլուխսն ասեն. Արքս այս խոռվեցուցանեն զքաղաքս մեր: Ինքեանք հրեայք են, եւ պապուիրեն մեզ աւրէնս, զոր ոչ է արժան մեզ բնդունել եւ ոչ առնել, զի հոռվմայեցիք եմք (ԺԶ. 18-21):

Զի՞նչ է այն, թէ զայրացաւ Պաւղոս: Այսինքն՝ զչարագործութիւն տեսեալ զղիւղին, ըստ որում գրէ, թէ «Չենք անտեղեկ խորհրդոց նորա» (Բ. Կրնթ. Բ. 11), վասն որոյ եւ արտաքս վարէ զնա:

Եփր. Եւ փոխանակ վարձուց բժշկութեան, զոր պարտէին Պաւղոս ի տեարք աղջկանն, խռովեցուցին¹ զքաղաքն ի վերայ նորա. եւ յաւէնս հրէից, զոր ոչն քարոզեաց նոցա, զրպարտէին զնա:

*Յոհ. Բայց տե՛ս զգլխեղութիւն զղիւղին. զի յորժամ կեղծավորութեամբն ոչ կարաց ընդ միտ մտանել Պաւղոսի, ապա կամեցաւ զնոսա ի բարկութիւն արկանել, որով եւ զայսն ի բարկութիւն դրդեալ՝ շարժեաց ի վերայ նոցա, որք եւ սուտ բանիւք, որ ամենայն ուրեք պատճառ է շարեաց, զրպարտէին զնոսա: Ո՛վ հեթանոսական կարծրութեանն, խորթէին զիւսահարել աղջկանն, զի այնու ինքեանք այնու շահս շահեսցին: Եւ տե՛ս զխռովարարութեանն զփոյթ. ոչ ասացին, զոր ինչ էրն՝ եթէ զգլխեղ հանին կամ յաստուածս² ամբարշտեցան, զի այս նուագագոյն երեւէր առ նոսա՝ որ զիշխանութիւն ունէին, այլ ի խազմարարութիւն ելանեն, որպէս հրեայքն, թէ «Ամենայն, որ թագաւոր անուանէ զանձն, հակառակ է կայսեր³» (Ղովի. ԺԹ. 12): Այսպէս եւ սորք. «Արքս այս, *ասեն*, խոռվեցուցանեն զքաղաքս մեր⁴» (ԺԶ. 20), եւ ամբարհաւաճաբար գոչէին, աղաղակաւն⁵ զլսաւղսն զարհուրեցուցանե՞լ խորհելով:*

Խոռվեցուցանեն, *ասեն*, զքաղաքս մեր (ԺԶ. 20):

Զի՞նչ առնելով չար, ով դուք, կամ որպիսի՞ գործովք: Եւ ընդէ՞ր ոչ նախ քան զայդ ձգեցէք զգոսա յատեան, մանաւանդ որ յամե-

¹ ԱԲ խռովեցին] խռովեցուցին

² Բ յաստուածսն

³ Ա կայսեր

⁴ Բ > մեր

⁵ Բ մեր աղաղակաւն] աղաղակաւն

նայնի անսայք դիւին¹, ընդէ՞ր եւ ոչ աստանաւր: Նա ասէ, թէ «Ծառայք Աստուծոյ բարձրելոյ են» (ԺՁ. 17), եւ դուք ասէք, թէ «Խոտովեցուցանեն գրադարս»: Նա ասէ, թէ «Պարմեն ձեզ գնանապարհս փրկութեան» (ԺՁ. 21), եւ դուք ասէք, թէ «Պարմեն մեզ արէնս, գոր ոչ է արժան ընդունել» (ԺՁ. 17): Տեսանե՞ս, ոչ եւ դիւին զնոսա անսացեալս, այլ առ մի ինչ հայեցեալս՝ յարժաթոյն շահս: Հրեայք են ասէ, անուամբն դաւաճանէին իբրու ատելի իրաւք: Զոր «Զէ արժան ընդունել, ասեն, զի ի/99ա/տովմայեցիր եմք» (ԺՁ. 17), վաղվաղակի զիրան յամբաստանութիւն ածեն: Ո՛վ անմտութեան բանիցն. ո՛չ քննեցին, ո՛չ ետուն բանից տեղի, մանաւանդ այնպիսի նշանս տեսեալ, որով պարտ էր երկիր պագանել եւ իբրեւ զփրկիչս եւ զերախտաւորս ընդունել: Քանզի թէ ինչս կամէիք հաւաքել, ընդէ՞ր այսպիսի փարթամութիւն գտանելով ոչ ի վերայ ընթացեալ եղէք. այսմիկ պայծառագոյն առնել հնար էր զձեզ, որ զգեւան հալածէիք, քան թէ նոցին դիւացն հաւանել: Ահաւասիկ եւ նշանք տեսին, այլ ընչասիրութիւնն² յաճախեաց զաւրութեամբ:

Եւ կուրեցաւ, ասէ, ամբոխն ի վերայ նոցա (ԺՁ. 22):

Զի առ այսպիսի իրս վաղվաղակի ընթանան մարդիկ: Բայց ի կուտել ամբոխին ի վերայ նոցա, տե՛ս զնոսա ոչ տալով պատասխանիս, եւ ոչ ընդդիմադրելով, որով³ եւ մեծապէս այնու արժանիք սքանչանալոյ լինին, ըստ որում ինքն ասէ. «Յորժամ փկարանամ, յայնժամ գաւրաւորեմ» (Բ. Կրնթ. ԺԲ. 10), եւ թէ «Շապ են քեզ շնորհք իմ, զի գաւրութիւն իմ ի փկարութեան կապարի» (Բ. Կրնթ. ԺԲ. 9), քանզի եւ ի հեզութենէն սքանչելիք երեւին:

Եւ գաւրագլուխքն պապառեցին զհանդերձս իւրեանց, եւ հրամայեցին զան հարկանել գնոսա, եւ բազում վէրս եղեալ ի վերայ նոցա արկին ի բանս⁴, եւ պապուիւրեցին բանապարհին զգուշութեամբ պահել գնոսա (ԺՁ. 22-23):

Յոհ. Եփր. Արդ, քաղաքապետն պատառելով զգեստուցն իւրեանց՝ զխռովութիւն ամբոխին հանդարտեցուցանել կամելով. զի մի՛ եղիցի, խափանէին նոքա: Եւ քանզի տեսին զամբոխն զայրագինս ի

¹ ԱԲ դիւիդ

² ԱԲ ընչասիրութիւն

³ Բ > որով

⁴ Բ ի բանտիս

վերայ հասեալ, զանիւքն զսրտմտութիւնն¹ հանդարտեցուցանել կամէին: Եւ առ ի հաճել զկամս ժողովրդեանն, որ ժաղովեալ էր, պրկեցին զպաւղոսեանսն եւ տարան եղին զնոսա ի տան բանդին², եւ պատուէր ետուն զգուշութեամբ պահել զնոսա՝ կամելով դեռ եւս լսել յաղագս նոցին իրաց:

Յոհ. Արդ, զամենայն զգործսն Պաւղոս առնէր եւ զսքանչելիսն եւ զվարդապետութիւնն³, իսկ վշտացն եւ Շիրլաս⁴ հաղորդէր:

Որոյ առեալ զայնպիսի պապուէր, արկ զնոսա ի ներքին բանփն (ԺԶ. 24):

Բագուժ էր սրտմտութիւնն⁵, որով եւ նա իսկ դարձեալ ի ներքսագոյն բանտն արկ զնոսա: Որ եւ այս իսկ տնաւրինաբար լինէր վասն մեծամեծ սքանչելեացն՝ որ հանդերձեալ էր լինել. զի որչափ զգուշագոյն էր բանտն, նոյնչափ եւ սքանչելիքն պայծառագոյն: Եւ ոչ միայն այսու, այլ զի եւ զոտս նոցա պնդեաց ի կոճեղ, ի փայտն, զոր ներքոն անուանէին:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ, եւ մեք զայս ստէպ յիշեսցուք⁶ անձանց որչափ նեղութիւն⁷ կրեցին նոքա զԱստուծոյ գործն գործելով, եւ մի՛ զգիջային եւ շփոթեալ զբաղմամբ կեանս խնդրեսցուք եւ զվնասակար խրախճանութիւնս, զի ոչ ինչ է անպիտանագոյն քան թէ մարդ յար հանգստեամբ⁸ եւ խրատութեամբ փափկացեալ: Զի ոչ միայն առաքինութեամբ հոգւոյ է այնպիսին աղկաղկ ի խոհեմութենէ եւ յարիւթենէ⁹, այլ եւ մարմնով եւս թոյլ եւ ցաւագին, իսկ աշխատեալն մարմնով պնդակազմ եւ առողջական: Որպէս ջուր ոչ դադ/99բ/արեալն՝ այլ ընթացեալն է յստակագոյն, եւ երկաթ՝ ոչ խափանեալն, որ ի ժանգոյ¹⁰ ծախի, այլ շարժեալն ի գործ իբրեւ զարծաթ փայլէ: Հեղ-

¹ ԱԲ զսրտմտութիւն

² ԱԲ բանտին

³ ԱԲ զվարդապետութիւն

⁴ Ա շիրլաս] շիրլաս

⁵ ԱԲ սրտմտութիւն

⁶ Բ յիշեսցուցուք

⁷ ԱԲ նեղութիւնս

⁸ ԱԲ հանգրստեամբ

⁹ Բ յարութենէ

¹⁰ Բ ի ժանգոյ] ի ժանգոյ

գասցուք եւ կարի յամրագոյն¹ ի չարիս լիցուք, զի են, որ հսկեն ի չարիս, որոց լաւ էր ննջելն լոկ քան ի չարիս հսկել ի գիշերի: Այլ մանաւանդ յաղաւթս եւ ի բարի գործս յարուցեալք² թաւթափեսցուք զկրկին թմրութիւնս՝ հայելով յաւրինակս³ ուղղութեան, զոր ունի կարգ բանիս:

[ԳԼՈՒԽ ԼԶ.]

Եւ ի մէջ գիշերին Պաւղոս եւ Շիղա կային յաղաւթս եւ արինէին զԱստուած, եւ ունկն դնէին նոցա կալանաւորքն (ԺԶ. 25):

Զի՞նչ երբեք հաւասար լիցի անձանցս այսոցիկ. քանզի հարեալ եւ գանս բազումս առեալ՝ անարգեցան չարչարեցան, զվերջին վտանգսն կրեցին, ի կոճեղ պնդեցան զգուշութեամբ, եւ այն ի ներքնում բանտի, սակայն եւ այնպէս ի քուն կալ ո՛չ յանձն առնուին, այլ ամենայն գիշեր աւրհնութեամբ հսկէին: Տեսանե՞ս, թէ ո՞րչափ բարի են նեղութիւնք առ աստուածասէր անձինս:

Արդ, քննեսցուք զգիշերքս զայսոսիկ⁴, որ առ մեզ՝ այլ այնմ գիշերոյ, զի նոքա ըստ գամենայն գիշերս անդադար աւրհնէին զԱստուած, իսկ առ մեզ զի՞նչ. դայլայլիկք, արբեցութիւնք, պակշտութիւնք, կակուղ անկողինք եւ քուն խոր գամենայն գիշերն՝ ի մահուանէ ոչինչ գանազանեալ, յումեքէ ոչ երկնչելով, կամ արթնութիւն քան զքուն դժուարագոյն: Զի ոմանք ննջեն անզգայաբար, եւ ոմանք արթունք եղկելի կայիւք նենգութիւնս կարկատելով, յաղագս ընչից ցնորելով, թէ ո՞րպէս չարիս հատուցեն զրկողացն⁵ փութալով, թշնամութիւնս խոկալով՝ պատգամս անարգողականս եւ խորհուրդս չարաբարոյս ըստ իւրաքանչիւր աւուր ի միտս ընտրելով, այսպէս ի գիշերի զհոլըն բարկութեան բորբոքեն զանտեղիսն գործելով: Այլ նոքա վասն այնորիկ թերեւս հսկեն ի կապանսն եւ ի չարչարանսն⁶, զի զմեր լուծեալ դանդաղութիւնս, եւ այս առանց կապանաց՝ ուսուցեն զգաստանալ, քանզի յայնպիսի⁷ նեղութեան էին, եւ ոչ բռնութիւն քնոյ ըմբռնեաց զնոսա. ոչ վէրքն ցածուցին,

¹ ԱԲ յարմարագոյն] յամրագոյն

² ԱԲ յորացեալք] յարուցեալք

³ ԱԲ յօրինակս

⁴ ԱԲ գայս] զայսոսիկ

⁵ ԱԲ զրկողաց

⁶ Բ > եւ ի չարչարանսն

⁷ ԱԲ այնպիսի

ոչ երկիրդն ի տարակուսանս արկ. զի մանաւանդ այնոքիկ էին, որ յարուցանէին զնոսա, եւ բազում հեշտութեամբ լի առնէին, որով ուրախացեալ արհնէին զԱստուած: Եւ դիտեա՛, թէ ո՞րպէս ի բանդին¹ Պետրոս ի քուն կայր, տնաւրինաբար եւ այն իսկ եղեւ, եւ հրեշտակն եկեալ երեւեալ լինէր նմա միայնոյ, եւ այլ ումեք ոչ էր պարտ տեսանել, զոր ինչ եղեւն: Իսկ աստ՝ Պաւղոս արթուն էր եւ բարձրաձայն յաւրհնութիւնս², եւ սքանչելիքն³ եղեալ ամենեցուն յայտնի, զի հաւատասցեն:

Եւ եղև յանկարծակի, ասէ, շարժումն մեծ մինչև շարժել հիմանց բանդին⁴, եւ բացան անդէն դրունքն ամենայն, եւ ամենեցուն կապանք⁵ լուծան (ԺԶ. 26):

Վասն է՞ր եղեւ «շարժումն»: Զի զբանտապետն զարթուցէ: Իսկ «դրունքն բացան», զի տեսեալ սքանչացին ընդ եղեալսն: Այլ կալանաւորքն զբանալ դրանցն ոչ տեսանէ/100ա/ին. ընդէ՞ր, զի թերեւս ամենեքեան փախուցեալ լինէին, եւ յայնժամ հանդերձեալ լինէր զանձն իւր սպանանել բանտապետն: Եւ ընդէ՞ր ոչ այլ ինչ նշան հաւատալոյ եղեւ նորա, զի այս իսկ բաւական եղեւ հաւանեցուցանել զնա, մանաւանդ ի փոյթ ձգելով, որ եւ ինքն իսկ տագնապեցաւ յահէն: Զի ոչ այնպէս պարզաբար եղեալ սքանչելիք զմեզ վերացուցանեն, որպէս այնք, որ ի մեր փրկութիւն յարմարին: Եւ զի մի՛ թուիցի ինքնին լինել շարժմանն, եւ այլքն զարմանք, ընդ նմին հետեւեցաւ վկայելով նմին: Իսկ ի՞նչ զիչերի լինի երեւեալ, զի ոչ առ ի ցոյցս, այլ առ ի փրկութիւն առնէին զամենայն:

Եփր.⁷ Արդ, եղեւ դղրդումն ի քաղաքի անդ, եւ դրունք բանտին բացան, եւ կապանք արգելոցն թափեցան⁸ ի նոցանէ: Եւ զի մի՛ եղիցի տրտմութիւն բանտապետին, որ հաւատալոցն էր՝ ոք⁹ ի նոցանէ ոչ խուսեաց, զի վասն այսորիկ բանտապետն արժանի եղեւ մկրտութեան աւագանին ընտանեալք¹⁰ իւրովք որպէս ասէ. «Իբրև գարթևաւ

¹ ԱԲ ի բանտին

² Ա օրհնութիւնս

³ ԱԲ սքանչելիք

⁴ ԱԲ բանտին

⁵ Բ կապանքն

⁶ ԱԲ > իսկ ի

⁷ ԱԲ > Եփր.

⁸ Բ թափեացն] թափեցան

⁹ ԱԲ որք] ոք

¹⁰ Գ ընտանիւք

բանաբաններն և երես բացեալ գործուն բանաբան, ձգեաց զսուսերն և կամէր երթալ զիրովին, կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կոչեաց¹ ի ձայն մեծ Պաւղոս և ասէ. Մի՛ ինչ գործէր ընդ անձն քո չար, քանզի ամենեքեան ասար ենք: Խնդրեաց լոյս և դիմեաց ի ներքս, և գահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի, և ածեալ զնոսա արքաքս ասէ. Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել, զի ապրեցայց» (ԺԶ. 27-30): *Տեսե՞ր, թէ ո՞րպէս սքանչելիքն ըմբռնեաց զնա, եւ զի զարմացաւ մանաւանդ ընդ մարդասիրութիւնն² Պաւղոսի, զարհուրեցաւ ընդ արիութիւնն³, զի կարելով փախչել եւ⁴ ո՛չ փախեաւ. եւ զի արգել զնա ի սպանմանէն: Եւ զայն վայելչաբար առնէր Պաւղոս. զի բանտապետն այր բարէբարոյ էր եւ ոչ չարաբարոյ: Զի թէպէտ ի ներքսագոյն բանտն եարկ⁵ զնոսա, այլ զայն ոչ յինքենէ արար, այլ պատուէր այնպիսի ընկալաւ ի զաւրագլխացն, իսկ ինքն զարհուրանաւք եւ խռովութեամբ լի էր ընդ իրսն:*

Եւ ընդէ՞ր ոչ նախ քան զձգելն զսուսերն կոչեաց զնա Պաւղոս, վասն զի զարհուրումնն առաւել զնա⁶ ի հաւանութիւն ածէր: Նմին վասն լուռ եկաց Պաւղոս մինչեւ ետես զչարիսն, եւ ապա աճապարեալ ասաց. «Մի՛, զի ամենեքեան ասար ենք» (ԺԶ. 28): Իսկ նա փութացեալ ի ներքս անկաւ առ ոտս կապելոցն կապանապահն եւ ասէ. «Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել, զի կեցցեմ»: Հայեաց իջան նորա, զի ոչ այնու իսկ, զի փրկեալ ի սրոյն եղեւ՝ հաստատեցաւ ի կեանս, այլ ընդ զաւրութիւնն⁷ եւ ընդ մարդասիրութիւնն⁸ զարհուրեալ՝ այլ իմն կեանս խնդրէր: Տեսե՞ր, թէ զի՞նչ անդանաւր եղեւ մինչ չեւ էին ի բանտն եւ ի կապանս, եւ զի՞նչ աստանաւր կապեալ. անդ՝ ուր նշանաւք աղախինն ազատեցաւ ի դիւէն, ի բանտ արկին զնոսա, զի բժշկեցին զնա յայսոյն, իսկ աստանաւր միայն զդուրս բանտին բացեալ ցուցին, եւ բացեալ զդրունս սրտի նորա, եւ լուծին զնորա կապանսն ներքինս⁹, իսկ լոյսն լուցեալ զլոյսն, որ ի սրտի նորա էր, փայլեցոյց եւ զխաւարն հալածեաց: Անկաւ առաջի, բայց ոչ հար-

¹ Բ գոչեաց] կոչեաց

² ԱԲ մարդասիրութիւն

³ ԱԲ արիութիւն, Բ արութիւն] արիութիւն

⁴ ԱԲ > եւ

⁵ ԱԲ էած] եարկ

⁶ Ա զնայ

⁷ ԱԲ զօրութիւն

⁸ ԱԲ մարդասիրութիւն

⁹ Բ ներքին

ցանէր, թէ ո՞րպէս եղեւ այս կամ գիտ՞րդ, /100բ/ այլ վաղվաղակի ասէ. «Զի՞նչ արարից, զի կեցցեմ»:

Իսկ նորա ասեն. Նաւաբա ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ ապրեսցիս դու եւ ամենայն րուն քո: Եւ խաւսեցան նմա զբանն Տեսոն եւ ամենեցուն, որ ի քան նորա (ԺԶ. 31-32):

Տե՛ս, զի վաղվաղակի քարոզեցին զբանն, եւ ցուցին զլինեալն¹ առ նա մարդասիրութիւն, զի մանաւանդ այն իսկ զնա եւ զայլսն ձգէր ի հաւատս, զի անվնաս պահեցին զնա. եւ զի ո՛չ միայն զնա, այլ եւ զամենայն տունն նորա կենաց արժանի առնեն եւ² փրկութեան:

Եւ ածեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն լուաց ի վիրաց անրի, եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան վաղվաղակի, եւ ածեալ զնոսա ի րուն իւր՝ եղ առաջի նոցա սեղան եւ ուրախ եղև ամենայն քամբն, հաւաքացեալ յԱստուած (ԺԶ. 33-34):

Հայեաց ի ջերմ հաւատսն, լուաց զնոսա, եւ մկրտեցաւ ինքն եւ տունն իւր, լուաց զնոսա եւ լուացեալ եղեւ, զնոսա ի գանիցն լուաց, եւ ինքն ի մեղաց լուացեալ եղեւ³, կերակրեաց, եւ կերակրեցաւ զհացն երկնաւոր եւ ուրախ եղեւ: Եւ զի մանաւանդ ոչ ինչ երեւեալ եղեւ, բայց բանք միայն եւ յոյսք քաղցունք, եւ այն իսկ նշան էր սերտ հաւատոց նորա, եւ զի զամենայն հոգս երկրաւոր եւ զերկիւղ մարդկային ի բաց եթող վաղվաղակի: Զի՞նչ վատթարագոյն քան զբանտի կապանապահ⁴, կամ զի՞նչ քան զնա⁵ կարծր եւ խիստ է գտանել կամ զարհուրեցուցիչ. այլ սակայն յայսցանէ փոխեալ ի ձեռն հաւատոցն սքանչելի լիեալ, որով եւ բազում պատուով ընկալաւ զնոսա: Եւ տես՝ ո՛չ զի ի մահուանէ փրկեցաւ՝ ուրախացաւ, այլ զի հաւատացեալ եղեւ յԱստուած:

Եւ իրրև այգ եղև, առաքեցին զաւրագլուխքն զնուիրական եւ ասեն. Արձակեա զարսդ զայդոսիկ (ԺԶ. 35):

¹ Աբ զլինեալն

² Աբ ի] եւ

³ Աբ > զնոսա ի գանիցն լուաց, եւ ինքն ի մեղաց լուացեալ եղև

⁴ Աբ կապանապահս

⁵ Աբ > զնա

Թերեւս զաւրավարքն գիտացին, զոր ինչ եղեւն՝ զմեծամեծ սքանչելիսն¹: Եւ այնպէս ոչ համարձակէին յինքեանց թողուլ զնոսա, այլ ի բանտապետն առաքէին իբրեւ գաղտագողի իմն հանել զնոսա:

Եփր. Զահի հարան եւ երկեան աստարիտայքն ճոխք քաղաքին ի շարժմանէ անտի, եւ ճշմարտեալ գիտացին՝ թէ արդարեւ ի պատճառս նոցա եղեւ շարժումնն այն, բայց խոստովան լինել ի նա ոչ կալան յանձին, առաքեցին ծածուկ հանել զնոսա: Եւ պատմեաց բանտապետն զբանս Պաւղոսի, թէ «Առաքեցին զարագութիւնս, զի արձակիցիք, արդ ելք եւ երթայք խաղաղութեամբ» (ԺՁ. 36): Այսինքն՝ զգուշութեամբ, ո՛չ երկնչելով: Եւ այլազգ եւս. քանզի արտաքոյ տագնապի խորթէր զնոսա լինել, զի մի՛ կարծիցեն յետոյ դարձեալ յայնցանէ ամբաստանեալ լինել՝ յաւել թէ «խաղաղութեամբ»: «Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. «Գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս հոովմայեցիս արկին ի բանս, եւ արդ լոկեա՛յն հանեն զմեզ: Ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք հանցեն զմեզ» (ԺՁ. 37): Արդ, քանզի յաւրէնս հրէութեան զրպարտեցան² ի նոցանէ աւուրբք³ յառաջ, ասեն հռովմայեցի⁴ եմք, հեռի եւ ազատ յաւրինաց հրէից եւ ի տանջանաց քաղաքապետացն, ոչ եթէ հանցեն զմեզ գաղտուկ իբրեւ երախտաւորք ինչ լինելով առ մեզ, |101ա| այլ զի նոքա իսկ եկեսցեն հանցեն զմեզ:

Յոհ. Արդ, զաւրագլխացն համարձակելով ելանել, Պաւղոս ոչ ելանէր այնու, այլ երկեցուցանէր⁵ զնոսա, զի մի՛ կարծեալ լիցին աղաչելով արձակիլ, եւ զի զայլսն եւս հաւատացեալսն ի համարձակութիւն հաստատեցէ: Բայց տե՛ս, ով սիրելի, զիմաստութիւն բանից նորա, զի կրկին եւ երեք կին էր ամբաստանութիւնն⁶, «զի հոռմանցիք⁷ եմք» (ԺՁ. 21), ասէ, եւ անմեղ առանց դատապարտութեան, եւ գանահարեալք ի հրապարակի⁸: Եւ ոչ ասաց, թէ «գան հարեալ զմեզ», որ զնշանսն գործեցաք, զի նոքա ոչ ինչ այսոցիկ փոյթ առնէին, այլ որ ինչ մանաւանդ շարժէր զտրամախոհութիւն նոցա երկիւղիւ՝ զայն ասէ. «Չարս անմեղս հոովմայեցիս» ասէ: Տեսանե՛ս, զի մարդկային իրս բազումս կազմէին: Արդ, զի մի՛ թուեսցի ումեք իբրեւ դատապարտ

¹ ԱԲ սքանչելիս

² Բ գոր պարտեցան] զրպարտեցան

³ ԱԲ աւուրք

⁴ ԱԲ հռովմայեցիք

⁵ Ա երկեցուցանէ, Բ երկեցուցանէ

⁶ Ա բ ամբաստանութիւն

⁷ ԱԲ հռովմայեցիք

⁸ ԱԲ հրապարակաւ] ի հրապարակի

ոք եւ մեղաւոր արձակել զնոսա, վասն այսորիկ ասաց Պաւղոս, եթէ «Գան հարեալ գմեզ՝ արս անմեղս եղին ի րանսի, արդ ոչ ելանեմք, այլ եկեսցն ինքեանք հանցն գմեզ» (ԺՁ. 37). *զի մի՛ իբրեւ շնորհս ինչ նոցա զիրսն համարեսցին*: «Եւ պարմնցին զաւրազլխացն նուիրակքն զրանսն. զահի հարան իբրև լուան, թէ հոռմայեցիք¹ են» (ԺՁ. 38): *Երկեան իբրեւ գիտացին, թէ հռոմայեցիք² են, այլ ոչ զի տարապարտուց արարին ընդ նոսա զայն*:

Եւ եկեալ աղաչեցին զնոսա, եւ իբրև հանին, աղաչեցին³ գնալ ի քաղաքէն (ԺՁ. 40):

Եփր. Արդ, *զի եղիցի ի նոսա շնորհս այս, եկին եւ խնդրեցին ի նոցանէ, թէ «Ոչ գիտացաք, թէ արդար էիք դուք»*, որպէս զի շարժումն⁴ իսկ գուշակեաց վասն ձեր՝ արդ շնորհս ի ձէնջ հայցեմք զայս, ելէք զնացէք ի քաղաքէ աստի. գուցէ թէ յետ շարժմանս ժողովեցին ի վերայ ձեր նոյն մարդիկ՝ որ յառաջ քան զշարժումնն ժողովեալ էին:

Եւ ելեալ ի րանսն՝ մտին առ Լիդիա, եւ տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա եւ զնացին (ԺՁ. 40):

Յոհ. Վայելչապէս. *զի ոչ էր պարտ զհիւրընկալն՝ զնախկի հաւատացեալսն, զտուն⁵ նորա թողուլ յաշխատութիւն եւ ի հոգս, այլ պարտ էր մխիթարել զնոսա*: Այլ տե՛ս զզանազանապէս տնաւրինեալ⁶ շնորհացն, թէ որպէս Պետրոս ել ի բանտէն յառաջագոյն կամ ո՛րպէս սա. մանաւանդ⁷ երկաքանչիւրքն առաքեալք հոգևով⁸: Արդ, ելին ի քաղաքէն՝ ոչ նոցա ինչ հաւանելով, այլ ի քարոզութիւնն⁹ փութալով, եւ քաղաքին ի ձեռն նշանացն բաւականապէս շահս գործելով: Եւ զի պարտ էր այնուհետեւ ոչ մաւտ լինել նոցա, զի սքանչելիքն մեծագոյն երեւեսցին՝ գործողացն ի բաց գնալով, յայն-

¹ ԱԲ հռովմայեցիք

² ԱԲ հռովմայեցիք

³ Բ աղաչէին

⁴ Բ շարժումնն

⁵ Ա եւ գտուն

⁶ Բ տնօրինել

⁷ ԱԲ եւ մանաւանդ

⁸ ԱԲ գոլով] հոգևով

⁹ ԱԲ ի քարոզութիւնն

ժամ ինքնին մանաւանդ սքանչելիցն գոչելով, զի բանտապետին հաւատքն փոխանակ ձայնի հնչէր յամենեցունց լսելիս:

Զի՞նչ այսոցիկ հանգոյն լիցի¹, յորժամ կապեալն զայս լուծանէ, ի բանտի գոլով զայս արձակէ, եւ ի ձեռն ինքեան մեկին կապեալ լինելոյն՝ զկապաւղն իւր ի կրկին կապանաց արձակէ: Այսոքիկ ճշմարտապէս շնորհաց են գործք: Այլ մի՛ զքանչելիսն միայն, որ ի շնորհացն՝ այլ եւ զայսոսիկ զկապանս յամենայն ժամ յիշեսցուք, որ կապեալ գոլով՝ զկապանապահն հաւանեցոյց:

Այլ թերեւս առ այս ծիծաղելով |101թ| ելլենացիք² զո՞վ, ասեն, հաւանեցուցին կամ ո՞ւմ յաղթեցին. ոչ ապաքէն վատթար մարդոյ տառապելոյ եւ միտս ոչ ունողի, նա եւ բազում չարեաւք լցելոյ, որով եւ դիւրաւ ըմբռնեալ եղեւ ի նոցանէ, եւ այլքն³, որ իբրեւ զսա, ներքինին, բանտապետն, ծառայք, կանայք եւ նոյնպիսիք: Զայսոսիկ նորա:

Այլ զի՞նչ կարիցեն ասել, յորժամ յառաջ բերեմք զայսոսիկ, որք յիշխանութեան էին, զհարիւրապետն, զբղեշխն նա եւ զբոլոր տիեզերս եւ զնոսին իսկ զթագաւորս եւ զիմաստասէրս ըմբռնեալ ի նոցանէ: Եւ կերպարանք հաւանութեան եւս սքանչելի, զի ոչ հանգիստ ինչ կամ շահս մարմնոյ խոստանային, այլ զնոցին հակառակսն, այսինքն՝ թէ պարտ է հաւանելոցն բազում չարչարանս կրել եւ մեռանել: Այս իսկ սքանչելի ցուցանէ զգաւրութիւն Աւետարանին:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այսոցիկ վիճակեալ մեր, մի՛ աղաւաղեսցուք ծուլութեամբ եւ դանդաղանաւք զմեծութիւն կրանիցս: Յարիցուք յաղաւթս, թէպէտ եւ ոչ բազումս, գոնէ մի եւ երկու աղաւթս կատարեսցուք. բացցուք աղաւթիւք ոչ զբանդն⁴, այլ զերկինս. լուծցուք աղաւթիւք⁵ զկապանս մեղաց մերոց:



¹ ԱԲ լիցիցի] լիցի

² ԱԲ եղղենացիք

³ ԱԲ այլք

⁴ ԱԲ զբանտն

⁵ Ա աղաւթիւք

[ԳԼՈՒԽ ԼԷ.]

Եւ շրջեալ ընդ Ամփիպաւիս¹ եւ ընդ Ապողոնիա, եկին ի Թեսաղոնիկէ՝ ուր էր ժողովուրդն հրէից (ԺԷ. 1):

Դարձեալ զփոքրագոյն քաղաքաւքն զանց առնէին² առ մեծագոյնսն փութալով, որպէս զի ի նոցունց իբրեւ յաղբերէ իմն հանդերձեալ էր բանն հոսել մերձաւորսն: «Եւ ըստ սովորութեանն³ Պաւղոս եմուր առ նոսա» (ԺԷ. 2): Եւ զի վերագոյն ասաց, թէ «Դասնամք ի հերանոս» (ԺԳ. 46), արդ ընդէ՞ր առ նոսա մտանէ: Վայելչապէս. քանզի ոչ թողոյր զնոսա բնաւին ի բաց, զի բազում սէր առ նոսա ունէր. եւ լուր նմին իսկ. «Եղարք, ասէ, իմ հաճութիւն սրբի եւ աղաւթք առ Աստուած վասն նոցա է ի փրկութիւն» (Տոմ. Ժ. 1), եւ «Խնդրեմ նզով լինել վասն եղարք իմոց՝ որ են իսրայելացիք» (հմմտ. Տոմ. Թ. 2): Այլ զայս ինչ առնէր վասն խոստմանն Աստուծոյ եւ փառացն, եւ զի մի՛ ի նոցայն բնաւին վերջոտնիլ՝ գայթազողութիւն լինիցի հեթահոսաց ի հաւատս անդր, ըստ որում եւ աստանաւր վասն նորին իրաց փութայր:

Եւ ի շարաթս երիս խաւսեցաւ ընդ նոսա ի գրոց (ԺԷ. 2):

Ձի ի շաբաթս իսկ դատարկացեալ այնմիկ պարապէին, իսկ ի գրոց, քանզի զայս եւ Քրիստոս առնէր, ի վեր եւ ի խոնարհ ի գրոց վարդապետելով, եւ ոչ ամենայն իրաւք ուրեք ի նշանացն կամէր հաւատալի լինել, քանզի եւ առ այն իսկ հակառակաբար կային իբրեւ մոլորեցուցիչս եւ կախարդս դաւաճանելով, իսկ ի գրոց հաւանեցուցանելով՝ ոչ ունի տեղի այնպիսի չար կարծեաց: Եւ ի բազում տեղիս գտանեմք զՊաւղոս վարդապետութեամբ հաւանեցուցանելով զնոսա, որպէս եւ յԱնտիոք⁴ Պիսիդեայ նախ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ: Այսպէս մեծ է առ ի գրոց |102ա/ վկայութենէ հաստատութիւն:

Բանայր եւ դներ առաջի, թէ պարտ էր չարչարել Քրիստոսի եւ յառնել ի մեռելոց, եւ թէ նա է Քրիստոսն Յիսուս, զոր ես պարմեմ ձեզ (ԺԷ. 3):

¹ ԱԲ Ամփիպաւիս

² ԱԲ առնեն

³ ԱԲ սովորութեան

⁴ Ա յԱնդիոք

Տեսանե՞ս, զի յառաջ քան զամենայն զհարչարանսն քարոզեն: Այսպէս պարծէին նովաւ եւ ոչ լինէին ամաչացեալք, քանզի գիտէին զայն իսկ փրկիչ աշխարհի, եւ եթէ պարտ էր չարչարել ճշմարտապէս եւ յառնել, քանզի յոյժ իսկ այս քան զայն սքանչելի է եւ մեծ: Զի եթէ որ ոչն ինչ մեղաւ, ի մահ ետ Հայր զնա, զի զայս նշանակէ պարտ էր ասելն, ապա յոյժ մանաւանդ եւ յարոյց զնա: Եւ զի մի՛ կարծիցեն նոքա, թէ ինքեամբք¹ զաւրացան առ այն, այսինքն՝ սպանանել զՔրիստոս, այլ զի Աստուած թոյլ ետ, պարտ էր չարչարել Քրիստոսի՝ ասէ, որով ցուցանէ, զի երկու իրք մատակարարեցաւ լինել: Նախ զի մի՛ իբրեւ վրէժխնդիրք աւրինացն մեծամտեսցեն հրեայք ի սպանանելն զնա, զի² ինքեանք իսկ լուծանէին զաւրէնսն: Եւ դարձեալ զի մի՛ սոքա զանգիտեսցեն իբրեւ սուտք եւ պարտապանք դատապարտութեան: Սմին վասն յաւել, թէ «Որ չարչարեցան եւ յարեաւ, նա է Քրիստոս Յիսուս, գոր ես պարմնմ» (հմմտ. ԺԷ. 3):

Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան եւ վիճակեցան Պաւղոսի եւ Շիղայի, յայտ է՛ ի հրեայից անտի: Բայց պաշտանէիցն հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, եւ ի կանանց³ գլխաւորաց ոչ սակաւք (ԺԷ. 4):

Պաշտանեայս կոչել զհաւատացեալսն ի հեթանոսաց՝ յաղագս հաւատոցն եւ գործոցն բարեպաշտութեանն⁴ հանդերձ մեծամեծ տիկնամբք, զորոց բազմութիւնն մի ըստ միոջէ ոչ աճեցուցանէ ըստ թուոյ կարգաւ, այլ համառաւտ զամենայն, ըստ որում եւ ոչ զնորին Պաւղոսի հանդիսաբանութիւնն⁵ յամենայնի զգրի հարկանէ: Եւ նոքա այսպէս. իսկ հրեայքն զնորին հակառակն գործէին, յամենայնի նախանձոտք եւ չարք գոլով:

Նախանձեցան, ասէ, հրեայք, եւ առեալ արս ոմանս գոնհիկս անաւրէնս՝ ամբոխ արարեալ խոովեցուցին զքաղաքն (ԺԷ. 5):

Տեսանե՞ս, զի թէպէտ եւ բազում էին հեթանոսք, բայց ոչ կարծէին զինքեանս շատանալ ի խազմարարութիւն առանց հրէից, քանզի եւ ոչ ունէին իսկ պատճառս իրաւացի զայլս վրդովելոյ: Իսկ հրեայքն հանապազ զայնպիսի անաւրէնութիւն ի կիր արկանէին ժողովեալ առ ինքեանս արս չարախաւսս: «Եւ կուրեալ առ ապարանսն

¹ ԱԲ ինքեամբ

² Բ զի եւ

³ Բ կանանցն

⁴ Բ բարեպաշտութեան է

⁵ ԱԲ հանդիսաբանութիւն

Յասոնի՝ խնդրելին ամել գնոսա ի հրապարակն: Եւ իբրև ոչ գրին գնոսա ի փանն Յասոնայ, քարշիւն գՅասոն եւ զոմանս եղբարս առ քաղաքապետսն» (ԺԷ. 5-6): *Ո՛վ ամբարիշտ¹ բռնութեանն². Ի տանցն քարշէին զնոսա վայրապար ի հրապարակն: «Բողոք բարձեալ՝ թէ որք գաշխա: Եւ սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործն. թագաւոր զոմն ասնն գՅիսուս» (ԺԷ. 6-7): «Նակառակ կայսեր» (ԺԷ. 7) ասեն, զի նոր արքայ ընդ կայսեր քարոզեն: Տեսանե՞ս զամբարիշտ ամբաստանութիւնն³, յապստամբութիւնն⁴ այսու զնոսա դաւաճանէին, ոչ ինչ վասն աւանդել/102բ/ոցն հակառակ ունել ասէին ընդ աւրինացն: Քանզի այնու ոչ կարէին խռովեցուցանել զքազաքն, յաղագս որոյ առ այլ ինչ ամբաստանութիւն զրպարտէին զնոսա, զոր եւ Քրիստոսի առնէին:*

Եւ խռովեցուցին⁵ զԺողովսն եւ զքաղաքապետսն՝ որ լսէին զայս, քանզի զահի հարան եւ երկեան զաւրագլուխքն յայսմ համբաւոյ: Եւ առեալ երաշխաւորութիւն առ Յասոնայ եւ յայլոցն՝ արձակեցին գնոսա (ԺԷ. 8-9):

Ջայս արարին ճոխք քաղաքին, զի ցածուսցեն զամբոխն, որ կուտեցաւ ի վերայ նոցա: Այլ հայեաց ընդ սքանչելի եւ մեծ սէրն Յասոնի, որ ի վիշտս եւ ի մահ տուեալ զանձն իւր՝ զինքն բաւական յերաշխաւորութիւն տալով, զՊաւղոս ի բաց արձակեաց, զանձն իւր մատնեալ յաղագս նորա:

Բայց եղբարքն, ասէ, վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊաւղոս եւ զՇիղա ի Բերիայ⁶. որք իբրև հասին անդ, ի ժողովորդն հրէից գնացին, զի սոքա էին ազնուականագոյնք քան որ ի Թեսաղոնիկն էին, որք ընկալան զբանն ամենայն յաւժարութեամբ հանապագ քննէին զգիրս, թէ իցէ այս այսպէս (ԺԷ. 10-11):

Արդ, զիւր՞րդ գրէ Պաւղոս, թէ «Մեր ի հեթանոսս, եւ պերոսեանք ի թլփապրութեանն⁷ անդ» (Գղտ. Բ. 9), եւ ինքն ընդ հրէիցն առնէր վարդապետութիւնն: Այլ ըստ առաւելութեան առնէր զայն: Եւ զի պարտ էր նմա ընդ հրէիցն խաւսել, որպէս եւ պետրոսեանք ի հեթանոսս,

¹ Ա ամպարիշտ

² ԱԲ բռնութեան

³ ԱԲ ամբաստանութիւն

⁴ Ա յապրստամբութիւն

⁵ Բ խռովեցին

⁶ ԱԲ ի Բերիա

⁷ ԱԲ թլփատութեան

գոր եւ ասէին իսկ զարմացեալք՝ «Եթէ եր Աստուած ի հերանոսս ապաշխարութիւն կենաց» (ԺԱ. 18): Եւ այսպէս նոքա ընդ Հեթանոսացն միաբանեցան, թէպէտ եւ մանաւանդ էին ի թլփատութեանն¹ քարոզութիւն անդ որոշեալ գոլով: Այսպէս եւ սա զյոլովագոյն փոյթն առ նոսա ցուցանէր, սակայն եւ առ նոսա ոչ պղերգանայր, զի մի՛ կարծիցեն զինքեանս ի բաց ճեղքեալս:

Եւ զիս² ըրդ ասէ, թէ «Նախ ի ժողովս հրէիցն մտանէր»: Այո, քանզի զհեթանոսս ի ձեռն հրէիցն հաւանեցուցանէր, որովք ընդ նոսայն լինէր խաւսեցեալ: Քանզի գիտէր, եթէ այս իսկ մանաւանդ հեթանոսաց է պատշաճաւոր առ ի հաւատոյ ներածութիւն, ըստ ասելոյ նորին «Արչափ եմ հերանոսաց առաքեալ, զպաշտանն իմ փառաւոր առնեմ, թերեւս նախանձ արկից հրէիցն մարմնով իմով եւ ապրեցուցից գոմանս ի նոցանէ» (Նոոմ. ԺԱ. 13-14): Նա եւ ամենայն իսկ թողղթք նորա ընդ հրէիցն լինի մարտոցեալ: «Սորա, ասէ որք ի Բերիա ագնուականագոյնք էին» (հմմտ. ԺԷ. 11): Այսինքն՝ հեզք եւ խոնարհք եւ բարեբարոյք, ոչ ինչ չար գործելով², զի ոմանք հաւանեցան, եւ այլք ոչ ինչ ի չարագործութիւն եկին: Եւ զի ազնուականք էին, ըստ առաքինութեան բարետոհմք³ գոլով, ուստի եւ ոչ վայրապար ըստ սովորութեան իրիք, այլ մեծաւ ստուգութեամբ քննէին զգիրս առ ի յաւրինաց եւ ի մարգարէից ուսանել զճշմարտութիւնն⁴:

Եւ բազումք ի նոցանէ հաւաքացին (ԺԷ. 12):

Այսինքն ի հրէից: Տե՛ս հաւատարմացեալ զասելն զնոցանէ ազնուականս գոլ, զի «բազումք հաւաքացին»: «Եւ ի յունաց կանանց զգաստից մնամնձաց եւ յարանց ոչ /103ա/ սակարք⁵» (ԺԷ. 12): Դարձեալ եւ աստանաւր բազմութիւն ի հեթանոսաց ընծայէր: Իսկ հրեայքն չարաբարոյք իջին եւ անդ, զի իւրեանց հակառակութեամբն զՊաւղոս ի հեռաւոր տեղիս առաքեսցեն, որով առաւել բանն զաւրանայր: Ձի որովք հալածելն կարծէին, յամենայնի տարածեալ լինէր քարոզութիւնն:

Ձի իրրեւ գիպացին, ասէ, որ ի Թեսաղոնիկն հրեայք էին՝ թէ ի⁶

¹ ԱԲ թլփատութեան

² ԱԲ չարագործելով] չար գործելով

³ ԱԲ բարետոհմք

⁴ ԱԲ զճշմարտութիւն

⁵ ԱԲ սակաւ

⁶ ԱԲ եւ] ի

**Բերիա պապմեցաւ ի Պաւղոսէ բանն Աստուծոյ, եկին եւ անդ շար-
ժել եւ խոռովեցուցանել զժողովուրդն (ԺԷ. 13):**

*Տե՛ս զյանդգնութիւնն¹ վայրապար, վրդովելով եւ նախանձելով ի վերայ դիմեալ լինէին, քանզի արք վաճառականք էին եւ յանի-
րաւութիւն սովորեալք, եւ մանաւանդ զի քաղաքն մեծագոյն էր: Եւ այս ոչ ինչ է սքանչելի, ի մեծագոյն քաղաքի լինել արս վատթարա-
գոյնս, զի մանաւանդ յայնպիսումն լինին վատթարագոյնքն, ուր եւ խռովութեան պատճառքն² բազում են, որպէս եւ ի մարմնի ցաւք դժնդակագոյն³ այնեն, որ յորովագոյն ունին զնիւթն եւ զկերակուրն, նոյնպէս եւ աստանաւր: Որպէս եւ որք յիկոնիոն եւ յԱնտիոքն էին հրեայքն արարին: Որով դատապարտեալք ոչ միայն զանձանց, այլ եւ զայլոց կորստեան հատուցեն զիրաւունս: Զայսոսիկ եւ Պաւղոս ասէ. «Որք արգելուին զմեզ խաւսել հեթանոսաց զի ապրեսցին, զի կապարես-
ցին զմեզս իւրեանց յամենայն ժամ» (Ա. Թ-սդկ. Բ. 16):*

**Յայնժամ վաղվաղակի զՊաւղոս առաքեցին եղբարքն գնալ
մինչև ի ծովեզրն, եւ մնացին Շիղա⁴ եւ Տիմոթէոս անդէն (ԺԷ. 14):**

*Տեսանե՞ս ամենայն ուրեք զնա՝ եւ տեղի տալով եւ դադարելով, եւ բազում ինչ մարդկային իմաստութեամբ յաւրինելով: Եւ այժմ տնաւրինաբար փախուցեալ լինի, եւ ոչ զանգիտելոյ վասն: Զի թէ չէր տնաւրինաբար, ապա դադարեալ լինէր ի քարոզութենէն, եւ նոքա ոչ առաւել լինէին զայրացեալ: Բայց յայսմանէ երկուս իրս տնաւրինիւր. զի եւ նոցա ցասումն շիջանէր, եւ քարոզութիւնն առաւել աճէր: Այլ եւ եղբարքն եւս յարժան եւ իմաստաբար⁵ զայս առնէին. զի յորժամ նոցին անկարգ յանդգնութիւնն⁶ ի վերայ եհաս ամբոխել եւ խռովեցուցանել զքաղաքն, յայնժամ զՊաւղոս միայն արձակէին, քանզի յաղազս նորա առաւել լինէին երկուցեալ, զի մի՛ դաւ ինչ կրեսցէ, իբրեւ գլուխ եւ վարդապետ գոյով նոցա: Այսպէս ոչ յամենայն ժամ շնորհքն ներգործեալ լինէին, այլ թողացուցանէր զնոսա եւ մարդկային ինչ առնել յարուցանելով զնոսա եւ զարթու-
ցանելով եւ ի հոգս արկանելով:*

¹ Ա զհանդգնութիւն, Բ զանդգնութիւն] զյանդգնութիւնն

² Բ պատճառք

³ Ա դժընդակագոյն

⁴ ԱԲ շիղայ

⁵ Ա յիմաստաբար

⁶ Բ յանդգնութիւն

Եւ տե՛ս արդ, զի մինչեւ ցփիլիպեցւոց քաղաքն միայն հասոյց զնոսա, յայլոցն արգելլով, եւ անդ ի Փիլիպէք ի ձեռն տեսլեան փութացուցանելով ածէր զնա. վասն որոյ եւ վաղվաղակի հասին անդ, այսինքն՝ ի Փիլիպէք, բայց անդուստ¹ եւ յառաջ ի ձեռն տեսլեան ոչ եւս: Իսկ Պաւղոս զսէրն եւ զփոյթ եւ յայսմ առաւել ցուցանէր, յամենայնի զառաւելն խորհելով եւ առնելով, որպէս ի բազում իրաց յայտ է: «Զի ահա Քրիստոս հրամայեաց, ասէ, որոց զԱնտարանն աւերարանեն, յԱնտարանն² կեալ» (Ա. Կրնթ. Թ. 14), այլ ինքն ոչ առնէր այնպէս: Ոչ առաքեաց զնա Քրիստոս մկրտել, այլ աւետարանել միայն, այլ եւ զայն առնէր: Եւ տես, թէ ո՛րպէս հասարակակշիռ էր ամ/103բ/ենեցուն եւ առաւել եւս, զի «Պնտրոս, ասէ, ի թլփատութեանն³, եւ ես, ասէ, ի հեթանոսս ի յոլովագոյն մասինն» (հմմտ. Գղտ. Բ. 7):

Այլ ընդէ՞ր ոչ տեւեաց աստանաւր ի Բերիա, կամ ընդէ՞ր ոչ նշանս արար: Զի թէ անդանաւր⁴ ի Լիւստրոս յորժամ քարկոծ արարին զնա՝ բազում ժամանակս տեւէր, ապա մանաւանդ եւ աստանաւր պարտ էր, ընդէ՞ր ոչ արար այնպէս: Քանզի ոչ հանապազ կամեցեալ լինէր Պաւղոս, զի նշանք լինիցին. զի քան զնշանս առնել ոչ նուազ սքանչելիք էին հալածելովն յաղթել առանց նշանաց: Եւ Քրիստոս իսկ զնոյն կամէր, զի առանց նշանաց յաղթեսցեն, որպէս եւ ինքն Քրիստոս յայնժամ ի շրջելն յերկրի ի բազում տեղիս կամեցեալ լինէր յաղթել ճշմարտութեամբն: Սմին վասն եւ ոչ առաքեալքն հանապազ ընթանային նշանաւք, որպէս եւ Պաւղոս ասէ, թէ «Նրեայք նշան հայցեն եւ հեթանոսք զիմաստութիւն խնդրեն⁵, այլ մեր քարոզեմք զՔրիստոս ի խաչ կրեալ» (Ա. Կրնթ. Ա. 22-23): Զայսոսիկ տամք ի յաղթութիւն, զոր եւ ոչ նշանքն կարեն հաւանեցուցանել, իսկ մեք զայս քարոզելով, ասէ, հաւանեցուցանեմք: Որպէս զի մեծ նշանք այս իսկ էր՝ խաչիւ եւ մահու հաղթել աշխարհի: Եւ տե՛ս ահա. առաւելութեամբ քարոզութեանն⁶ իբրու սքանչելի նշանաւք ընթացեալ, զի պարտ էր այնուհետեւ վասն⁷ զբազմութիւն հաւատացելոցն մեծագոյն լինել նշան, քան թէ զայլ ինչ: Եւ զայնոսիկ առնէին ի բազմութիւն զաւրանալ հաւատացելոցն, տեղի տալովն եւ ի վերայ հա-

¹ Բ անդուստի

² ԱԲ յաւետարանեն

³ ԱԲ ի թլփատութեան

⁴ Բ անտանօր

⁵ Բ հայցեն] խնդրեն

⁶ ԱԲ քարոզութեան

⁷ Բ > վասն

սանելովն: Արդ, յուղարկեցին զնա մինչեւ ի ծովեզրն, զի մի՛ լիցի նենգողացն դիւրաւ հասանել նմա, զի առժամայն զնա յափշտակել կամէին, եւ զայս ըստ ինքեանց: Սոքա բերիացիքս մեծ իրս գործեցին¹, եւ հանդերձ նովաւ վճարեցին եւ ուղղեցին:

Եփր. Արդ, եհաս մինչեւ ի ծովեզրն տեղի տալով, բայց արգել զնա Հոգին Սուրբ ի քարոզելոյ, զի գուցէ սպանանիցեն զնա: «Եւ որք փանէին զՊաղոս, ամեն գնա մինչև յԱթէնս. եւ առեալ ի Պաղոսս պապուէր առ Շիդա եւ Տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ նա յԱթէնս. եւ նորա գնացին առ նա իրրև ընկալան զպապուէրն» (հմմտ. ԺԷ. 15):

ՅՈՐԴՈՐԱԿ²

Հայեաց եւ տե՛ս յասացելոցս, թէ՛ ո՛րքան սիրով աշակերտքն հոգային զվարդապետէն եւ փութային զերծուցանել զնա եւ ապրեցուցանել: Այլ այժմ ոչ այսպէս, այլ ճեղքեալք ի միմեանց, մեծքն շփանան եւ փոքունքն նախանձին: Արդ, մի՛ այսպէս. այլ փութասցուք ի սէր միաբանութեան, զի վայելեսցուք աւգնականութեամբք միմեանց ի հոգեւոր իրս եւ ի մարմնաւոր³: Զի վասն այսորիկ եւ աղաւթեմք վասն ամենայն աշխարհի խաղաղութեան եւ վասն առաջնորդաց, զի մեծ է զաւրութիւն միաբանութեան, որպէս յայտ է յաւրինակէ մարմնոյ, զի անդամքն զմիմեանց հոգալով՝ ամենայն ինչ ըստ պատշաճի կազմի: Այլ ի չար միաբանութենէն փախիցուք եւ բարւոյն հաղորդեսցուք:

[ԳԼՈՒԽ ԼԸ.]

Եւ յԱթէնս ի մնալ նոցա Պաղոսի, զայրանայր հոգի նորա ի նմա, զի փեսանէր ի կռապաշտութեան զքաղաքն (ԺԷ. 16):

Յոհ⁴. Յիրաւի զայրանայր, զի նոքա առաւել քան զամենեսեան պատուէին զկուռսն, մինչ զի ոչ էր այլ ուրեք այնչափ կ/104ա/ուպաշտութիւն տեսանել: Բայց զայրանալ աստանաւր ոչ զբարկանալ⁵ ինչ ասէ, եւ ոչ թէ կազ ինչ կուռոյ կամ վիճաբանութեան շարժէր ընդ նոսա: Նա եւ տնաւրինեալ լինի ի Հոգւոյն եւ ակամայ իսկ

¹ Բ իրագործեցին] իրս գործեցին

² ԱԲ բարոյական] յորդորակ

³ ԱԲ ի մարմնաւորս

⁴ Բ > յոհ.

⁵ Բ բարկանալ

կալ եւ մնալ նմա անդանաւր¹ սպասելով աշակերտացն: Այլ զինչ է զայրացեալն լինել, այսինքն՝ եռանդոտ սրտիւ յարուցեալ իմն եւ ի նախանձ վասն փառացն Աստուծոյ շարժեալ: Քանզի ի բարկութենէ եւ ի վիճմանէ հեռի են շնորհքն. ոչ կարէր ասէ հանդուրժել նոցին մոլորութեանն², այլ մաշէր զայն զմենայն տեսանելով:

Աստուծոյ. Եւ այլազգ. Հոգին Սուրբ յերանելումն զայրանայր ի Պաւղոսի, իբրեւ հոսանք ինչ զեղեալ յառաքելական յոգւոջն նեղէր, ո՛չ գտանելով յանարժանսն տեղի յառաջելոյ ինքեան: Եւ յաղագս այնորիկ ընդ ճեմականս եւ ընդ եպիկուրեանսն մարտնչէր:

Եւ խաւեր ի ժողովրդեանն ընդ հրեայսն եւ ընդ պաշտաւնեայսն, եւ ի հրապարակս զամենայն ար, որոյ³ եւ պապահէին (ԺԷ. 17):

Յոհ. Տե՛ս դարձեալ զնա ընդ հրեայսն եւ ընդ պաշտաւնեայսն, որ էին եկք զրուցատրելով, զի ընդ ամենայն տեղիս հրեայք բնակէին: Քանզի ցրուեցան նախ քան զգալուստն Քրիստոսի, համանգամայն եւ աւրինացն լուծանելով: Արդ, ամենեցուն քարոզէր Պաւղոս՝ միանգամայն ուսուցանելով մարդկան զբարեպաշտութիւն: Այլ սքանչելի է, թէ զի՞արդ ոչ ծիծաղեցան զնովաւ իմաստասէրքն վաղվաղակի, ընդ անարգանսն ընդ նուազունսն խաւսելով նորա: Քանզի հեռի էր այն վարդապետութիւն յիմաստասիրութենէն, ոչ եւ մի ինչ ունելով բարձրավզութիւն եւ հպարտութիւն, բայց ոչ իմանային զասացեալսն ի Պաւղոսէ: Զի ո՞րպէս արդեաւք⁴ իմանալ կարէին, ուր ստոյիկեանք զմարմինս ասէին Աստուծոյ, եւ եպիկուրեանք երանութիւն զհեշտութիւն համարէին, ուստի եւ ոչ կարացին ի բարձրագոյնսն եւ ի մեծամեծսն ելանել, ամենեւին տկարք գոլով ի հաւատս. բայց միայն վկայութիւն ընկալան ի Պաւղոսէ իւրեանց պատահարացն եւ անգատութեանն:

Ոմանք յեպիկուրեանցն եւ ի սրոյիկեանց փիլիսոփայիցն հակառակէին ընդ նմա, եւ ոմանք ասէին՝ զի՞նչ կամիցի սերմանաբաղս այս խաւսել, իսկ այլք, թէ աւարտոյի իմն դից թուի պապմիչ լինել, քանզի զՅիսուս եւ զյարութիւն աւերարանէր (ԺԷ. 18):

¹ Բ անտանօր

² ԱԲ մոլորութեան

³ ԱԲ որոց

⁴ ԱԲ արդեւք

Արդ, քանզի աթենացիքն ո՛չ եւս իւրեանց աւրինաւքն լինէին վարեալ, զի եւ նոքա ստորանկեալ եղեն ընդ հռովմայեցոյքն¹: Ուստի կամեցան բանս ապստամբութեան² արկանել ի վերայ Պաւղոսի, քանզի զայլ իրս տեսանէին, զի խաւսէր նա, եւ կարծեաւք առ նա վարանէին, եւ անդէն վաղվաղակի ի նախատինս արկանէին՝ սերմնաքաղ զնա կոչելով: Քանզի շնչաւոր մարդ ո՛չ ընդունի զվարդապետութիւն Հոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա: Ուստի եւ ասէին, թէ «Օտարոսի իմն դից թուի պարմիչ լինել» (ԺԷ. 18): «Դիս»՝ զաստուածսն կոչէին, քանզի էր իսկ քաղաքն նոցա լի պատկերաւք եւ կռովք դիւայ: Քանզի զՅիսուս եւ զյարութիւնն³ աւետարանէր, նոքա եւ զյարութիւնն⁴ աստուած ոմն գոլ կարծէին. իբրու սովորեալք արուս ոմանս աստուածս եւ էզս աստուածուհիս պաշտել:

Եւ առեալ ածին գնա յԱրիսպագ/104բ/ոսն եւ ասէին. Կարասցո՛ւր իմանալ, թէ զինչ է նոր վարդապետութիւնդ՝ որ ի քն պարմի, աւարացուցիչս իմն բերես ի լսիս⁵ մեր, կամիմք գիտել՝ թէ զինչ կամիցի այս լինել (ԺԷ. 19):

Արդ, ածին զնա յԱրիսպագոսն երկեցուցանել կամելով, եւ ոչ որպէս զի իմասցին միայն զբանսն⁶, այլ զի եւ տանջեսցեն եւս, զի անդանաւր⁷ զսպանանելոյ⁸ դատակնիքն սովոր էին քննել: Տե՛ս արդ, զի եւ ուսանելոյն յուսովն յամենայնի զնորաձեւութիւնն⁹ ամբաստանէին: Եւ քանզի խաւսողաց եւ բանինուն արանց էր քաղաքն նոցա, ասէ. «Աթենացիքն ամենեքեան եւ եկքն աւարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս» (ԺԷ. 21): Աստանաւր զայն ինչ նշանակէ, թէ ամենեւին յայն իսկ պարապէին¹⁰ հանապազ ի խաւսս եւ ի լուրլ. սակայն զայնոսիկ աւտարոտիս գոլով կարծէին, զոր ոչ երբեք¹¹ էին լուեալ:

¹ ԱԲ հռովմայեցուովքն

² ԱԲ ապրստամբութեան

³ ԱԲ զյարութիւն

⁴ ԱԲ զյարութիւն

⁵ ԱԲ ի լսելիս] ի լսիս

⁶ Բ զբանս

⁷ Բ անտանօր

⁸ ԱԲ զսպանանելոյ

⁹ ԱԲ զնորաձեւութիւն

¹⁰ Բ պարապեալ էին] պարապէին

¹¹ Բ երբեք

Եկաց Պաղոսս ի մէջ Արիսպագին¹ եւ ասէ. Արք աթենացիք, ըստ ամենայնի իրրեւ պաշտանասէրս փեսանեմ զձեզ (ԺԷ. 22):

Հայեաց աստ զբարձրացեալ Հոգին Պաղոսսի զիա՞րդ հորդէ ճանապարհ բանին, եւ զիա՞րդ զիջանէ ըստ նոցա, իբրեւ ներբողելով իմն գնոսա թուի: Բայց ոչ իբր փաղաքշականս ինչ կամ սուտակասպասս, այլ թէ առ դիցն պաշտան երկիւղածագոյնս տեսանեմ զձեզ, այսինքն՝ բարեընկալք² եւ յաւժարք: Ապա ի բագնէն առեալ պատճառ՝ բարբառէր ձայնիւ ի մէջ նոցա. «Քանզի շրջեալ, ասէ, եւ փեսեալ գապաշտանունս ձեր, գրի բագին մի, յորում գրեալ էր անձանաւթի Աստուծոյ. գոր դուք յանձանաւթս պաշտէք, եւ գնոյն պարմեմ ձեզ» (ԺԷ. 23):

Զի՞նչ է «անձանաւթի Աստուծոյ»: Քանզի աթենացիք ըստ ժամանակս ժամանակս բազում աստուածս ընկալեալ եղեն եւ ի բացարձակ սահմանաց եւ ի գերագոյն դրից, որպէս եւ³ զտաճարն Աթենայ եւ զայլս այլ ուստեք: Ապա երկուցեալք, թէ գուցէ երբեք այլ ոմն իցէ՝ որ նոցա ոչ է ծանաւթ, եւ այլք այլ ուրեք պաշտեն, յաղագս յուրվագոյն թերեւս զգուշութեան եւ նմա բազին կանգնեցին. եւ քանզի աստուածն ոչ էր յայտնի, մակագրեալ⁴ եղեւ ի նոցանէ՝ «անձանաւթ Աստուծոյ»: Անդի⁵ առնու սկիզբն եւ պատճառ Պաղոսս եւ ասէ, թէ «Չայն իսկ պարտ է գոյ Յիսուսի, եւ մանաւանդ ամենեցունց ամենակալ Աստուծոյն, գնա եւ պարմեմ ձեզ», ասէ: Տե՛ս, թէ որպէս ցուցանէ նոցա նախ ընկալեալ զնա. «եւ ո՛չ ինչ աւտար կամ նորաձեւ ձեզ մատուցանեմ» ասէ: Քանզի ի վեր եւ ի խոնարհ զայս ինչ ասէին, թէ՛ աւտարոտի իմն պատմէ, եւ թէ զի՞նչ է նորաձեւը այդ վարդապետութիւն, զոր արկանես ի լսելիս մեր, ահա վաղվաղակի զկասկած մտաց նոցա ի բաց խլէ, զԱստուած կարդալով արարիչ ամենայնի, ի ձեռն որոյ կործանեաց զամենայն իրս իմաստասիրացն:

Աստուած, ասէ, որ արար գաշխարհս եւ զամենայն, որ ի նմա, նա երկնից եւ երկրի փեր է (ԺԷ. 24):

Քանզի եպիկուրեանքն⁶ ինքնին ասէին լիեալ զարարածս, եւ յանհատից ի հիւղէ⁷ զմարդն, իսկ ստոյիկեանքն⁸ մարմին եւ հուր

¹ Բ արիսպագոսին

² ԱԲ բարեընկալք

³ Բ > եւ

⁴ ԱԲ մակագրեալ] մակագրեալ

⁵ ԱԲ անտի

⁶ Բ եպիկուրեանք

⁷ ԱԲ ի հիւղէ

⁸ ԱԲ ստոյիկանքն

ասացին ամենայնի պատճառ, յորոց եւ զոգիս մարդկան. իսկ սացուցանէ, թէ «Գործ նորա է աշխարհ եւ ամենայն, որ ի նմա»: Տե՛ս համառաւտ վարդապետութիւն եւ հաւաստի: Նա եւ զայս եւս /105ա/ հայեա՛, թէ զի՞նչ էր, որ նոցա աւտար թուէր: Թէ Աստուած զաշխարհս արար. եւ զոր ինչ այժմ ի հանդիպմանէ կարգաց աշխարհի բազումք գիտեն եւ յիրաց եղելոց հանապազ, զայսոսիկ աթենացիքն իմաստունք համարեալք ոչ գիտէին, եւ ոչ զլիաւորք փիլիսոփայքն: Արդ, եթէ արար զաշխարհս՝ յայտ է, թէ եւ Տէր է սորա:

Տեսանե՞ս որպիսի՞ ինչ ասաց աստուածութեանն¹ ծանաւթութիւն. զգոյացուցանելն յոչէից զամենայն, որ եւ Որդւոյ սեպհական ասի: Նա եւ մարգարէքն յամենայնի զայսոսիկ ասէին, Աստուծոյ իւրական առանձինն գոլ զգոյացուցանելն, եւ ոչ որպէս նոքա՝ որ զայլ ոմն գոլ ասէին արարիչ, եւ ոչ զնոյն Տէր. եւ նիւթ անեղ համբաւէին աստանաւր: Հայեա՛² ընդ իմաստութիւնն Պաւղոսի, թէ ո՞րպէս զիջեալ ըստ նոսա՝ առասպելաբար ի բազնէն սկսանելով զիւրսն, եւ անտի այնուհետեւ հաստատէ զճշմարտութիւնն³, եւ զնոցայն զամենայն ի բաց բառնայ: «Նա է, ասէ, երկնից և երկրի Տէր» (ԺԷ. 24): Եւ զոր աստ յաղագս Հաւր՝ այլուր յաղագս Որդւոյ գտանեմք⁴ ասացեալ «երկնից և երկրի Տէր» գոլ, զորս նոքա աստուածս գոլ կարծէին զերկին եւ զերկիր:

Այլ զի մի՛ կարծեսցեն որպէս մի ի բազմաց գոլ զնա, ուղղէ բանիւն, զոր ի վերայ ածէ. «Ո՛չ ի ձեռագործ փաճարս բնակէ, ասէ, և ո՛չ ի ձեռաց մարդկան պաշտի իր կարաւր իմիր» (ԺԷ. 24-25): Տեսանե՞ս, թէ որպէս ըստ փոքում ի ներքս մուծանէ զիմաստասիրութիւնն կատարեալ, եւ որպէս ծիծաղի զելլենական⁵ իմաստութեամբն:

Եփր. «Ո՛չ ի ձեռագործ փաճարս բնակէ» (ԺԷ. 24) ասէ իբրեւ զկուռս ձուլածոյս ձեր, եւ զոհիւք, որովք⁶ դեւքն պաշտին, նա ոչ պաշտի. եւ յինչ ո՛չ է կարաւտ ամենեցուն տուիչն:

Յոհ. Նա զի թէպէտ ի տաճարս բնակէ, ոչ յայնպիսիս, որ ի մարդկանէ շինին, այլ ի մարդկային ոգիս⁷: Եւ այսու զմարմնական պաշտաւնն զամենայն ի բաց եբարձ: Եւ զիս՞րդ. ո՞չ բնակեալ

¹ Աբ աստուածութեան

² Բ հայեայ

³ Աբ զճշմարտութիւն

⁴ Աբ գտանեմ

⁵ Աբ զեղղենական

⁶ Աբ որով

⁷ Աբ յոգիս] ոգիս

էր ի տաճարն, որ յԵրուսաղէմ էր: Ոչ արդեւք, այլ անտի¹ ներգործելով զաւրութիւնս՝ կարծեցաւ հրէիցն, թէ արդ ի ձեռագործի բնակէ: Իսկ սա ցուցանէ, թէ ոչ ի ձեռաց մարդկան պաշտի Աստուած, այլ յառաքինութենէ, քանզի անկարաւտ գոլով նա՝ զայսոսիկ ոչ երբեք խնդրէ: «Ոչ ուրեմ ես գմիս գուարակաց քոց, ասէ, եւ ոչ գարիս նոխագաց քոց ըմպեմ» (հմմտ. Թ. 12):

Ապա ի վեր հանեալ զնոսա ի գետնաքարշիցս՝ զեւս մեծագոյնս դնէ պատասխանելով: Ոչ է, ասէ, շատ եւ բաւական այս զԱստուծոյ իմանալ, թէ անկարաւտ է, թէպէտ եւ մեծ² եւ աստուածային է այս, բայց պարտ է հանդերձ այսու եւ զայս եւս գիտել: «Ձի նա փայ, ասէ, ամենեցուն շունչ եւ կեանք եւ զամենայն ինչ» (հմմտ. ԺԷ. 25): Ըստ ամենայնի երկու նշանակք են յատուկ³ աստուածութեան. ինքեան ո՛չ⁴ եւ միո՛յ իրիք կարաւտանալն, եւ ամենեցուն զամենայն ինչ շնորհել: Արդ, ած աստանաւր զՊղատոն՝ ո՞րչափ յաղագս Աստուծոյ իմաստասիրեաց, ո՞րչափ Եպիկուրոս, եւ ամենայն շաղփաղփութիւն է առ այսորիկ. «Նա՛ փայ, ասէ, շունչ եւ կեանք»: Ահաւասիկ եւ հոգւոյ գոյացուցիչ ասէ զնա⁵ եւ ոչ ծնաւդ:

Դարձեալ հայեաց, թէ ո՞րպէս ի բաց բառնայ յաղագս նիւթոյ ճառս. «Արար, ասէ, ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան բնակեալ ի վերայ երկրի» (ԺԷ. 26): /105բ/ Այսոքիկ յոյժ լաւագոյն եւ մեծ են առ ի գիտել քան զնոցայն, եւ ո՞րչափ ստորոգութիւն արարին նոքա անհատիցն եւ նիւթոյն: Իսկ սա ցուցանէ, թէ ո՛չ է մասնական տէրութիւն նորա, եւ ո՛չ հոգի մարդոյ ի նորին բնութենէ է, այլ որպէս ամենեցուն, նոյնպէս եւ սորա էացուցիչ է: Եւ ինքն ոչ մարմին⁶ եւ ոչ մարմնաւոր բնութեան կարաւտանայ, այլ ի սուրբ միտս եւ ի պատշաճ իմաստութեան հանգչի, եւ ոչ առասպելաբանեալ մասնական դիքն, ոմն հրոյ համբաւեալ եւ ոմն ջրոյ եւ միւսն այլոյ վերատեսուչք, այլ ամենայնի ինքն է, ասէ, արարիչ:

Նախ որպէս զմարդոյ խաւսեցաւ, թէ զոր դուք յանձանաւթս պաշտէք, ապա եցոյց, թէ ոչ ի տեղւոջ բնակէ, եւ յայնժամ ասաց՝ «բայ՝ Աստուած է», եւ յայտ աստի է, զի զամենայն արար. իսկ որ ոչ արար զամենայն, եւ ոչ է Աստուած: «Ձի աստուածք, որ գերկինս եւ գեր-

¹ Ա անդի

² ԱԲ մեծ է] մեծ

³ Բ > հատուկ

⁴ Ա եւ ոչ

⁵ ԱԲ գնա ասէ] ասէ գնա

⁶ ԱԲ մարմին է

կիր ոչ արարին, կորիցեն ի ներքոյ երկնից»։ Յոյժ մեծագոյն աւանդութիւն ի ներքս մոլծանէ, թէպէտ եւ մանաւանդ զայլ բարձրագոյնսն ո՛չ ասաց, քանզի որպէս տակաւին ընդ մանկունս խաւսէր ընդ կարծեալ իմաստունսն։ Նա եւ այսոքիկ յոյժ մեծագոյն էին առ այնոսիկ, զոր նոքայն գիտէին։

Արդ, զարարչութիւնն¹, զտէրութիւնն², զանկարատութիւնն³, զպատճառն ամենայն բարութեանց յայտնի արարեր։ Իսկ ասա մեզ զիս՞րդ ապա բնակէ Աստուած։ «Այլ չէ, ասէ, ժամանակ»։ Այլ հայեաց ընդ սքանչելի բարերարութիւնն⁴։ «Ի միոյ արենէ», ասէ, այսինքն՝ ի միոջէ առնէ այսչափ անհամար բեւրս մարդկան ընդ տիեզերս առնելով եւ արարեալ ինքն զնոյնսն շարունակէ, տուեալ շունչ եւ կեանս ամենեցուն։ Ապա եւ զայսոսիկ ցուցանէ, թէ ճանաչելն զնա ոչ դժուարին էր եւ ծանր։ Զի եւ ոչ իսկ էր հարկ շրջել եւ խնդրել զաստուած, այլ ըստ սահանադրութեան էիցս ի նմանէ զիւրին էր այս։

Զի հաստատեաց, ասէ, կարգեալ ժամանակս եւ սահմանադրութիւնս բնակութեան նոցա ինդրել զԱստուած, զի թերեւս զննիցեն զնա եւ զբանիցեն (ԺԷ. 26-27)։

Զայս ինչ կամի յայտնել ասացելովքս՝ եթէ սահմանեաց Աստուած⁵ խնդրել զինքն։ Բայց ոչ հանապազ եւ յամենայն ժամ զայս սահմանեաց, այլ առ կարգեալ ժամանակս. ցուցեալ այսու, թէ այժմիկ ոչ խնդրելով գտին, այլ յիմարացան։ Իսկ նա էր յայտնի եւ որպէս ի միջի ամենեցուն կալուն⁶ կալով առ ի զննել զնա եւ շաւշափել։ Նա զի եւ թէ կոյրք էին, կարէին շաւշափել, զի ոչ թէ սմա էր յայտնի եւ նմա ոչ, կամ աստ երեւէր եւ այլուր ոչ, կամ յայսմ ժամանակի էր եւ յայլուսմ ոչ։ Զի ըստ ամենայն ժամանակս եւ ըստ ամենայն սահմանադրութիւնս յայտնի էր, զի ոչ տեղով փակի եւ ոչ ժամանակաւ, այսպէս տնաւրինեաց լինել եւ զարարածս։

Եփր. Քանզի սոքա իսկ մանաւանդ ընձեռէին մարդկան զգիտութիւն, յամենայն տեղուոջ գուն երկնից զորդուն իւրով, յամենայն

¹ ԱԲ զարարչութիւն

² ԱԲ զտէրութիւն

³ ԱԲ զանկարատութիւն

⁴ ԱԲ բարերարութիւն

⁵ Բ > աստուած

⁶ ԱԲ > կալուն

ժամանակի հաստատուն կալ յերկրի: Եւ զի մեկնեաց զժամանակս ամարայնոյ եւ ձմերայնոյ, եւ կարգեաց սահմանս ծովու եւ ցամաքի եւ որդւոց Նոյի, զի խնդրեսցեն յայտնեալքս զծածուկն, այն որ ինքն է պատճառ ամենայնի:

Նա եւ ոչ հետի իսկ է յիւրաքանչիւր ումնքէ ի մէնջ. զի նովաւ կեամք եւ շա/106ա/րժիմք եւ եմք (ԺԷ. 27-28):

Յոհ. Տե՛ս դարձեալ Աստուծոյ արժանի, զոր ասէ, թէ ո՛չ միայն զկեանս ետ եւ զշունչ եւ զամենայն ինչ, այլ եւ զգլուխն ամենայն բարութեան¹, այսինքն՝ զի ի գիտութիւն ինքեան էած զմարդիկ տալով զայսոսիկ ի ձեռն, որոց կարէիք գտանել զնա եւ հասանել բարւոյն, այլ ո՛չ կամեցարուք խնդրել, եւ մանաւանդ հուպ գորով նորա եւ ոչ հեռի եւ ոչ ի միտջ ումեք է ի մէնջ: Բաբէ, ամենեցուն հուպ է, որ ընդ ամենայն տեղիս տիեզերաց: Զի՞նչ իցէ քան զայս մեծագոյն: Տե՛ս, ո՞րպէս ի բաց բառայ զմասնականսն: Եւ զի՞ սսեմ, թէ «ո՛չ հետի է», ասէ, զի այսպէս հուպ է, որպէս զի առանց նորա ո՛չ է հնար կեալ ումեք. «Զի նովաւ, ասէ, կեամք եւ շարժիմք եւ եմք» (ԺԷ. 28): Որպէս առ մարմնաւոր յարացուցի է տեսանել, զի որպէս անգայտութիւն աւդոյ յամենայն տեղւոջ հեղլով՝ եւ ոչ հեռի յումեք գորով, այլ մանաւանդ ներքոյ եւ վերոյ մեր շուրջ եւ ամենայն ուրեք, առանց որոյ անհնար է կեալ շնչաւորի, նոյնպէս եւ զԱստուծոյ ասէ: Տե՛ս, ո՞րպէս զնախախնամութիւն նորա ասէ եւ զամենակալութիւն շարունակութիւն, զգոլն ամենայնի առ ի նմանէ, զներգործելն, զոչ կորուսանելն: Եւ ոչ ասաց «ի ձեռն նորա կեամք», այլ որ առաւել հուպ էր՝ «նովաւ», ասէ: Եւ յաւելու, թէ

Որպէս ոմանք եւ ի ձերոց ճարտարացն ասացին, թէ նորա եւ ազգ իսկ եմք (ԺԷ. 28):

Զայս իսկ թեմգիանոս եւ Արպտոս քերթաւղք ասացին: Արդ, ո՛չ առ ի հաւասարութիւն բնութեան Աստուծոյ եւ մարդկան ասաց զբանս քերթողացն, թէ «նորա ազգ եմք»: Զի նոքա զայս բան զԶեւսայ ասացին, իսկ սա յաղագս ճշմարիտ գոյացուցչին առնու: Ոչ զնոյն զնոցայն ըստ նոցա ասելով, քաւ լիցի, այլ որ ինչ իսկապէս յաղագս Աստուծոյ ասել վայել էր՝ առնու զբանս նոցա: Քանզի եւ բազին նմա ասաց, բայց ոչ հանգոյն այնոցիկ, զոր² նոքայն պաշտէին, զի բացում

¹ Բ բարութեանց

² ԱԲ գորս

ինչ նախ ասէին եւ գործէին, ոմանք վասն Աստուծոյ, թէպէտ եւ ո՛չ գիտէին, թէ վասն ոյր էր: Զի ասա ինձ, յաղագս ո՞յր որուք¹ ասէին եւ գործէին իսկապէս անծանալթի Աստուծոյ. յաղագս գոյացուցչի՞ն արարածոց, թէ յաղագս դիւին. յայտ է, թէ յաղագս գոյացուցչին. գոր եւ առնու իսկ զգիր բագնին եւ ուղղէ զմոլորեալ կարծիս նոցա. զի զԱստուած ոչ ճանաչէին, բայց զդիւացն զհետ երթային եւ գիտէին: Արդ, ասէ, թէ ամենայն լի է Աստուծով եւ ոչ Զեւսով պղծով ումեմն մարդով եւ թքալից եղելով եւ կախարդով²:

Եւ զայն, թէ «Նմա եւ ազգ եմք», ոչ նմանապէս ըստ նոցին կարծեաց ասաց Պաւղոս, քաւ լիցի, այլ այլովք մտաւք: Զի ազգ³ գոլ Աստուծոյ զմեզ ասաց, այսինքն՝ նովաւ եղեալք եւ խնամեալք եւ ընտանիք գոլով եւ հուպք առ նմա, իբրեւ թէ մաւտակացք եւ դրացիք: Նա եւ զայսոսիկ ասէ զքերթողացն բանս. զի մի՛ դարձեալ ասիցեն, թէ «Օտարութիս մուծանես ի լսելիս մեր» (ԺԷ. 20): Եւ այսպէս ո՛չ ընդ նոսա ինչ հակառակի, այլ առ ի նոցունց եղելոյ բագնէն⁴ եւ յասացելոցն զապացոյցն տուեալ՝ ի վերայ ածէ. «Եւ արդ որովհետեւ ազգ եմք Աստուծոյ, ո՛չ պարտիմք համարել⁵ ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ ի ճարտարութենէ եւ ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ, զաստուծականն լինել նմանապէս» (ԺԷ. 29): Ահաւասիկ ածէ ի մէջ զարարիչն, եւ ոչ ասէ, թէ ձեզ ոչ է պարտ համարել ոսկւոյ կամ արծաթոյ ձեւացելոյ գոլ զաստուծայինն նման՝ որ չէ նման, այլ պի/106բ/դծ եւ ամենապիղծ: Այլ որ ինչ խոնարհագոյնն էր, զայն ասէ, եթէ մեզ ոչ էր պարտ կարծել այսպէս. «ո՛չ պարտիմք համարել⁶ ասէ, քանզի յոյժ գերագոյն եւ ի վեր քան զայսոսիկ է Աստուած: Իսկ այսոքիկ ժամանակաւորք են եւ մարմինք, որոց չէ պարտ ասել զաստուծայինն գոլ նման. զի ո՞ ոք⁷ իցէ մարմին եւ ժամանակ եւ որք ի ժամանակի, ասա ինձ: Տեսանե՞ս, թէ որպէս զանմարմին բնութիւն ի ներքս եմոյծ. քանզի մարդկեղէն տրամախոհութիւնն⁸, յորժամ ի կարծիս մտանէ, մարմին եւ միջոց ժամանակի գմտաւ ածէ: Արդ, «ո՛չ պարտիմք», ասէ, որոց ի մարդկեղէն մտաց քանդակեալ իցէ, զաստուծականն գոլ համարել գոլ նմանաւղ:

¹ ԱԲ ուրուք

² ԱԲ կախարդելով] կախարդով

³ ԱԲ > ազգ

⁴ Ա բագնեն

⁵ Բ համարեալ

⁶ Բ համարեալ

⁷ Բ որք] ո ոք

⁸ ԱԲ տրամախոհութիւն

Այլ թերեւս ասիցէ ոք, ոչ այսպիսի ինչ կարծեմք, այլ առ բազում յոյժ տկարս¹ են բանք սորա, քանզի թէ եմք նման Աստուծոյ մեք, ըստ հոգւոյ միայն եւ ոչ ըստ մարմնոյ, իսկ զգալեացս ոչ եմք նման ըստ հոգւոյ մեք, ապա յոյժ մանաւանդ եւ ո՛չ Աստուած: Բայց ոչ ասէ զայս, այլ առժամայն ի թանճրամտութենէն ի բաց տանի զնոսա: Նա եւ ոչ ընդ այլ իրիք մարդկային մտածութեամբ արկեալ լինի, ասէ. զի զոր արուեստ կամ մտածութիւն եգիտ, զիա՞րդ այն ինչ Աստուած իցէ: Իսկ եթէ² այնք աստուած են, ապա եւ ի քարի գոյացութիւն Աստուծոյ իցէ, ո՛վ անտեղութեանս: Բայց տե՛ս եւ զմեղադրութիւնն³. «Զի նովաւ կեցեալ լինիմք, ասէ, եւ ոչ գտանեմք զնա»: Այս կրկին է ամբաստանութիւն. զի զնա զճշմարիտն զյայտնին՝ ոչ գտին, եւ զայսպիսի սուտս գտին. որ ո՛չ այնմիկ, զոր կարծեցին՝ տրամախոհութիւն նոցա ճշմարիտ է ըստ իրին:

Եւ քանզի սասանեցոյց զհոգիս նոցա, ցուցեալ՝ զի պատասխանի անգամ ո՛չ ունէին, դառնայ⁴ ցուցանել, թէ զի՞նչ դարձեալ այժմ իցէ խնդրելի: «Բայց գժամանակս անգիտութեանն անտես արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ուրեք ապաշխարել» (ԺԷ. 30): Ապա զիա՞րդ ոչ եւ մի ոք տանջեալ լինի յոչ կամողացն զղձանալ: Արդ, զայս ո՛չ յաղագս անցելոցն կամ այժմու յանդգնելոցս ասէ, այլ բարեհաւանիցն⁵, յաղագս, որոյ պատուէր տա, ասէ, եւ ո՛չ պահանջէ ի ձէնջ դատաստան: Ոչ ասաց, թէ ո՛չ ետես եւ ոչ ասաց, թէ թողացոյց, այլ զանգիտութեան մոլորութիւնն⁶ որ հաճոյ եղեւ աշխարհի խոտորել յԱստուծոյ՝ «անտես արար», ասէ, այսինքն՝ ոչ կամեցաւ ստիպել եւ նեղել ինչ զնոսա, եւ ոչ պահանջեաց դատաստանս իբրու յարժանեաց գոլով տանջանաց: Անգիտացայք, ասէ, եւ ոչ կամաւ չար գործեցէք: Բայց ի ձեռն վերագոյն ասացելոցն յայտ արար, եթէ կամաւ գործեցէք: «Արդ, պատուիրէ, ասէ, ամենայն ումեր ընդ ամենայն փղիս զղձանալ»: «Ամենայն ումեր» (ԺԷ. 30) ընդհանուր ասելովս՝ ի բաց տանի զմասնական կարծիս յաղագս Աստուծոյ, որպէս հեթանոսք զոմն հրոյ արարիչ ասեն ի դիցն, եւ զայլ ոմն երկնի, այլ Աստուած բոլորից⁷ է Տէր, ասէ:

¹ ԱԲ տկար

² ԱԲ թէ] եթէ

³ ԱԲ զմեղադրութիւն

⁴ Բ դառնա

⁵ ԱԲ բարեհաւանիցն

⁶ ԱԲ մոլորութիւն

⁷ ԱԲ բոլորիցս

Քանզի հաստատարաց ար, յորում պարտ է դարել զաշխարհս արդարութեամբ ի ձեռն առնն, որով սահմանեաց փալ հաւարս ամենեցուն, յարուցեալ զնա ի մեռելոց (ԺԷ. 31):

Նախ զազագին աւրէն յիշէ եւ զարդար դատաստանէն, եւ այսու երկեցուցանէ զնոսա եւ շարժէ ահիւ զտրամախո/107ա/հոլթիւնս նոցա, եւ ապա զչարչարանսն Քրիստոսի յայտ առնէ, եւ յայնժամ ի վերայ ածէ զյարուցիւն նորա ի Հաւրէ, զի յայնմանէ եւ հանդերձելոցն հաւատասցեն լինել ամենեցուն յարուցիւն: Եւ ընդ որ հակառակէին¹ եւ դժուարէին ընդ յարուցիւնն², հաստատուն ցուցանէ գոլ: Զի թէ ճշմարիտ է դատաստանն, յայտ ի յարուցեանն է. զի ընդ նմին ընդ յարուցեանն ամենայն կազմեալ լինի իրք դատաստանին: Եւ զի զամենայն ճշմարտութեամբ ասաց Քրիստոս, յայտ է, յորմէ յարեալ, զի ի ձեռն նորա Հայր դատելոց է զաշխարհ, յայտ է, որով սահմանեաց նովալ տալ հաւատս ամենեցուն, որ եւ կամաւք Հաւր չարչարեցաւ եւ յարեալ: Այլ զի իբրեւ զմարդոյ զՔրիստոսէ խաւսի, եւ այս մեծ իմն հանճարով, զի ըստ տկարութեան ընդունողացն կռնէ զբանն: Արդ, զի ամենեցուն շնորհեաց հաւատս, ի յառնելոյ նորա ի մեռելոց յայտ է: Այլ տես, զի եւ դատաւոր զնա ի ներքս մուծանէ, զի ճշմարտապէս դատել պարտ է: Զի թէ ոչ յարեալ Քրիստոս, ոչ լինիմք դատեալ, ապա թէ յարեալ, ստուգապէս դատելոց եմք, զի վասն այնորիկ մեռաւ եւ յարեալ ի մեռելոց, զի կենդանեաց եւ մեռելոց տիրեսցէ:

Արդ, պատուիրէ ամենեցուն զղջանալ. զի ամենեքեան կալոց եմք առաջի բեմին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնովն, զոր ինչ գործեաց, եթէ բարի եւ եթէ չար: Զի ահաւասիկ եւ յաղագս ամենեցուն յարուցեան բան ի ներքս եմոյժ, զի ոչ այլազգ դատեալ լինի զտիեզերս: Իսկ «յարուցեալ զնա ի մեռելոց» (ԺԷ. 30) յաղագս մարմնոյն ասէ, զոր եւ այր իսկ կոչէ, զի նա մեռաւ եւ եղաւ ի գերեզմանի: Եւ քանզի առ³ ելլենացիսն⁴, որպէս արարչութեանն⁵ եւ յոչէից զաշխարհս գոյացուցանելոյն իրք, նոյնպէս եւ դատաստանին բան մանկանց գիւտք են եւ խաղ, եւ արբեցութեամբ ցնորեալ մարդկան:

¹ Ա հակառակէին

² ԱԲ յարութիւն

³ Բ առաւել] առ

⁴ Ա ելլենացիսն, Բ գեմացիսն

⁵ ԱԲ արարչութեան

ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ եւ մեք լուիցուք զասացեալս, թէ պատուիրէ Աստուած ամենեցուն զղջանալ: Եւ զոր ինչ յանգէտ աթենացւոցն պահանջեաց, առաւել եւս մեք, որ յաղագս այսոցիկ ստուգապէս գիտեմք, գործեսցուք զայն ինչ որ մեզ աւգտակար է: Ընտանասցուք¹ Աստուծոյ, եւ մի՛ կացցուք ընդ նմա թշնամութեամբ, այլ հաստատեսցուք ի սէր նորա: Եւ թէ ո՞րպէս ուղղեսցուք առ նա² զսէրն, այս է աւրինակն եւ արուեստ, որով մարթասցուք ուղղել զսէրն: Զի հանապազ զմտաւ ածցուք ընդ հասարակաց բարեգործութեան³, եւ զայն ինչ, զոր մեզ յատուկ իւրաքանչիւր ուրուք բարեգործեաց⁴, թէ քանիցս անգամ ի դժնդակ պատահարաց եւ ի հիւանդութեանց եւ ի մահու կասկածելի վշտաց եհան: Յիշեսցուք, թէ զինչ եւ քանիս մեղաք նմա, եւ ի նմանէ քանիս բարեգործեցաք⁵. եւ սիրեսցուք զնա⁶, ոչ միայն վասն բարեգործելոյն⁷, այլ եւ վասն ներող երկայնամտութեանն⁸, զի մի՛ խստութեամբ սրտից զանձեսցուք զբարկութիւն մեզ յաւուր արդար դատողութեանն Աստուծոյ⁹:

[ԳՒՈՒԻՆ ԼԹ.]

Իբրև լուան գյարութիւն մեռելոց¹⁰, ոմանք ծաղր առնելին, կէսքն¹¹ ասելին՝ լուիցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ, եւ ապա Պաւղոս ել գնաց ի միջոյ նոցա (ԺԷ. 32-33):

Տե՛ս, զի նախ մեծագոյն կրէր փորձութիւնս: Իսկ յԱթէնս /107բ/ ոչ կրէ այնպիսի ինչ, այլ միայն մինչեւ ցծաղր առնել ամենայն ինչ վճարեալ լինէր: Իսկ առ հրեայսն բազում էր դժուարութիւնն¹², զի յոյժ խստագոյն էին ընդ նմա եւ ընդ կրաւնսն¹³ թշնամեցեալք: Արդ,

¹ ԱԲ ընդանասցուք

² ԱԲ նայ

³ ԱԲ բարեգործութեան

⁴ ԱԲ բարեգործեաց

⁵ ԱԲ բարեգործեցաք

⁶ Ա գնայ

⁷ ԱԲ բարեգործելոյն

⁸ ԱԲ երկայնամտութեան

⁹ Բ + մեղայ Աստուծոյ

¹⁰ ԱԲ մեռելոցն

¹¹ ԱԲ կէսք

¹² ԱԲ դժուարութիւն

¹³ ԱԲ կրօնս

ընդէ՞ր արդեւք մինչ չեւ եւս էր հաւանեցուցանել զնոսա, եւ զի բանիցն ասացելոցն ի նմանէ ունկնդիր եղեալք, եւ դարձեալ լսել նմին հանդերձեալ լինէին, եւ վշտաց եւ հալածանաց ոչ գոլով՝ այնպէս փութացեալ լինի զԱթէնս թողուլ Պաւղոս:

Եփր. Յիրաւի: Քանզի աթենացիք, որ մինչ ցայս վայր լուան նմա¹, վասն յարութեանն² լսել նմա ո՛չ հանդուրժէին³, եւ յաղթահարեցան եւ ասացին, թէ «վասն այդորիկ յայլում ժամու լուիցուք քեզ»:

Յոռ. Եւ զի գիտէր թերեւս, եթէ ընդ երկար կալով առ նոսա ոչ ինչ մեծ զնոսա շահեցուցանել էր⁴ հնար: Եւ տե՛ս զնոցա թանճրամտութիւնն⁵, թէ ո՛րչափ մեծամեծս եւ թանճրագոյնս լուեալ ոչ առին ի միտ, այլ լսելով զյարութիւն մեռելոց խաղ առնէին: Զի շնչաւոր մարդ ո՛չ ընդունի զիրս հոգւոյն: Զի մանաւանդ աւտար լրոյ ցանկացաւք գոլով՝ սակս այնր⁶ ի միտ ոչ առնուին, եւ ոչ յայն ինչ փութային: Այլ որպէս զի միշտ ունիցի նորագոյն ինչ ասել, որ եւ ի բաց կալ ետ նմա ի նոցանէ, որոյ վասն⁷ ել եւ գնաց ի միջոյ նոցա: Զի այս իսկ էր նոցա սովորութիւն որպէս ամբաստէին⁸ իսկ եթէ աւտար զից թուի պատմիչ գոլ, որ եւ այն իսկ յոյժ էր տարակուսելի, զի իբրեւ զմի յանուանեալ զիցն համարէին գ՛րրիստոս: Բայց սակայն եւ այնպէս հաւանեցոյց զԴիոնէսիոս Արիսպագացին զգլխաւորն աթենացւոց եւ զայլս յոլովս, զորոց ասէ. «Եւ ոմանք արք անկեալք ի նա հաւաքացին, յորս էր եւ Դիոնէսիոս Արիսպագացի, եւ կին մի անուն Դամարիս, եւ այլք ընդ նոսա» (ԺԷ. 34): Զի թէպէտ եւ ամենեքեան ոչ հաւատացին, այլ ոմանք հասու լինելով քարոզութեանն եւ վարուցն հոգեւորաց՝ վաղվաղակի ընկալան զբանն, իսկ այլքն ոչ եւս, բաւական թուեցաւ Պաւղոսի արկանել⁹ միայն անդ զսերմանիսն հաւատոյ:



¹ Աբ Գման

² Աբ յարութեան

³ Աբ հանդուրժեցին

⁴ Բ շահեցուցանէր] շահեցուցանել էր

⁵ Աբ թանճրամտութիւն

⁶ Աբ սակայն] սասկ այնր

⁷ Ա վաս

⁸ Աբ ամբաստանէին

⁹ Բ արկանել

Յեք այսորիկ մեկնեալ Պաւղոս յաթենացոց անփի եկն ի Կորնթոս¹ (ԺԸ. 1):

Արդ, ի Կորնթոս² ի ձեռն Հոգւոյն ածեալ լինի, ուր զտեղի առնուլ եւ դադարել առ նոսա պարտ էր, քանզի բազում ժողովուրդ հաւատալոց էր անդ, զի ոչ էին զբախնդիրք որպէս աթենացիքն: «Եւ եգիպ գոմն հրեայ, անուն Ակիւղաս՝ յազգէ պոնդացի³, այն ինչ եկեալ յԷփսայ⁴, եւ Պրիսկիլա⁵ կին նորա, վասն հրամանին Կղաւղեայ որոշել զամենայն հրեայս ի Տոմմէ» (ԺԸ. 2): Տե՛ս, թէ որպէս ի ձեռն հալածանացն հրէից ի Կղաւղեայ քաջ եւս այնուհետեւ քակեալ աւրէնքն լինէր: Այլ զԿղաւղիոս կայսր յիշէ աստ, զի ընդ երկարումն կենացն Պաւղոսի յաւուրս նորա՝ յառաջեալ լինէր քարոզութեամբ ամենայն ուրեք. իսկ զկնի նորա յաւուրս Ներոնի կատարեցաւ:

Արդ, յայնմհետէ ի հրամանէն Կղաւղեայ բորբոքեալ լինէր առ հրեայսն⁶ պատերազմ վասն յամառութեան իւրեանց. եւ ի Հռոմայ իբրեւ վնասապարտք եւ արժանիք հարուածոց եւ դատապարտութեան արտաքսեալ լինէին, զի ողջախոհ ասցին եւ զղջասցեն ի չարեաց իւրեանց: Թերեւս |108ա| վասն այնորիկ տնաւրինեալ լինի ի Հոգւոյն, զի զՊաւղոս իբրեւ զկալանաւոր կապանաւք տարցին անդ՝ ամբաստանել ի հրէից, զի մի՛ իբրեւ հրեայ անդուստ հալածեսցի, այլ որպէս աւտարացեալ ի հրէից, եւ ընդ կարգաւ դատաստանի գործառնութիւն ունելով անդանաւր⁷ պահեալ լիցի:

Այլ իբրեւ եկն ի Կորնթոս, եգիպ, ասէ, Ակիւղաս⁸ պոնդացի⁹ յազգէ, եւ յարեցաւ ի նոսա: Եւ վասն զի համարուեսպ էր, եղև առ նոսա եւ գործէր, քանզի էին խորանակարք արուեսպի (ԺԸ. 2-3):

Արդ, պոնտացի գոլով սա, ոչ յԵրուսաղէմ եւ ոչ մերձ ի նա¹⁰ փութայ¹¹ գալ, այլ հեռագոյն ընտրէր բնակել: Առ սմա ագանի Պաւ-

¹ ԱԲ կորնթոս

² ԱԲ կորնթոս

³ ԱԲ պոնտացի

⁴ ԱԲ յիտալոյ

⁵ ԱԲ պրիսկիւղա

⁶ ԱԲ հրեայս

⁷ Ա անդօր, Բ անտանօր

⁸ ԱԲ գոմն ակիւղաս

⁹ ԱԲ պոնտացի

¹⁰ Ա ի նայ

¹¹ ԱԲ փութայր

ղոս, եւ հանապազորդեալ յամելով անդ՝ ո՛չ ամաչէ: Բաբէ, որպիսի արժանս եւ իրաւունս առ նոսա եզիտ յարակցելով առ նոսա: Վա-
յելչապէս. քանզի պարտ էր գործել, որպէս զի անդանաւր¹ ի Կորն-
թոս առաւել պարտ էր նմա ոչ առնուլ ինչ վասն սուտ առաքելոցն,
որպէս ասաց թղթելով առ նոսա, թէ «Յորում պարծին, եւ նորա իրրւ գմեզ
գրանիցին» (Բ. Կրնթ. ԺԱ. 12), եւ թէ «Ոչ արգելցին պարծանքս իմ ի կողմանս
արայեցոց» (Բ. Կրնթ. ԺԱ. 10), եւ թէ «Ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս
գայս» (Ա. Կրնթ. Թ. 12): Ըստ որում տնաւրինեալ եղեւ, զի անդանաւր²
յարեսցի ի նոսա իբրեւ ի ճահ պատրաստ³ գոլով զաւթէվանն⁴, եւ
ընտիր առ գործակցութիւնն⁵. զի քան զարքունական ապարանսն
այն յոյժ նմա ի ճահ եւ վայելուչ էր: Եւ դու, ով սիրելի, մի՛ ծաղր
համարեսցիս զայնպիսի խոնարհութիւնս. զի որպէս մրցականին
մայտանն դիւր ի դէպ է, եւ հիւանդի կակղագոյնքն ի դեղոց, եւ
պատերազմողի սուսերն երկաթի եւ ոչ ոսկի, նոյնպէս եւ այն նմա:

Եւ խաւսէր ի ժողովրդեանն ըստ ամենայն շարաթուց, եւ հաւա-
նեցուցանէր զհրեայսն եւ զհեթանոսս (ԺԸ. 4):

Գործեալ լինէր, ասէ, քարոզելով: Ամաչեսցուք ապա մեք, որք եւ
առանց քարոզելոյ դատարկութեամբ կենցաղավարիմք: «Իրրւ իջին
ի Մակեդոնիա Շիդա եւ Տիմոթէոս, սրիպէր հոգուվն Պաւղոս դնել վկայութիւն
հրէիցն⁶, թէ Յիսուսն է Քրիստոս» (ԺԸ. 5): Զիա՞րդ Պաւղոս ոչ ի բաց կա-
ցեալ լինի ի նոցանէ բազում ըստգտանաւք եւ երկիրղիւ. քանզի
նախ յայտնեաց զպատճառն՝ ասելով. «Ձեզ նախ պարտ է խաւսել գրանն»,
ըստ որում եւ ամենայն ուրեք զնոյն առնէր, նախ ի նոցանէ սկսեալ
զքարոզութիւնն: Իսկ աստ վկայութիւն դնէր նոցա Հոգւովն շար-
ժեալ, զի մի՛ ունիցին այնուհետեւ ինչ պատասխանի, եւ ի բաց կա-
լովն նշանակ տայր եւ առաւել զնոսա զկծեցուցանէր: «Եւ յընդդէմ
դառնալ նոցա եւ հայիոյն թաւափեաց զձորձս իւր եւ ասէ գնոսա. Արիւն ձեր
ի գլուխ ձեր, քաւեալ եմ ես, յայսմհերէ ի հեթանոսս երթամ: Եւ գնացեալ անրի
եմուր ի փուն, որումն որոյ անուն էր Տիպոս Յուստոս⁷ պաշտամեայ Աստուծոյ,
որոյ ապարանքն էին մերձ ի ժողովկարդն » (ԺԸ. 6-7):

¹ Բ անտանօր

² Բ անտանօր

³ ԱԲ պատրաստք

⁴ ԱԲ զօթեւանն

⁵ ԱԲ գործակցութիւն

⁶ ԱԲ հրէից

⁷ ԱԲ յուստոս] յուստոս

Եփր¹. Արդ, յընդդէմ դառնալն նոցա, իբրեւ ետես, թէ հրեայք թշնամանելով թշնամանեն զնա², թաւթափեաց զգեստս³ իւր, որպէս ուսաւ ի Տեառնէ իւրմէ եւ ասէ. «Մի՛ եկեսցէ արիւն ձեր զկնի քարոզչացս, որ զաւր հանապազ ի նեղութիւնս պէսպէս վշտաւք զաւետարանութիւն Տեառն ձերոյ աւետարանեն ձեզ»: Այլ եկեսցէ զկնի ձեր բարբառն որ /108բ/ ասաց, թէ ոչ կամեցան լսել ինձ, որպէս եւ դուք զի ոչ կալարուք յանձին լսել ինձ: Արդ, երթամ ես ի հեթանոսս, որք պատրաստեալ են ոչ մեռանել մեւք իբրեւ զձեզ, այլ զի կեցցեն մեւք, զոր դուք ոչ կամեցարուք:

Յոհ. Եւ ի բաց եկաց ի նոցանէ, այնու մանաւանդ ակն ունելով ձգել զնոսա առ ինքն: Քանզի ընդէ՞ր իսկ ապա թողոյր զտունն յորում էր, եւ գայր մերձ ի ժողովետոյն եւ ի տունն ժողովրդապետին⁴, ո՞չ ապաքէն վասն այսորիկ, զոր ասացիս, զի եւ ոչ վիշտս ինչ ետես անդանաւր: Եւ քանզի նախ վկայութիւն դնէր նոցա վասն Քրիստոսի եւ ուսուցանէր, իսկ ի չհաւանել նոցա թաւթափէր զձորձս, եւ կրկին վկայութիւն դնէր նոցա եւ առաւել երկիրդ, որպէս զի ո՛չ բանիւ միայն, այլ եւ իրաւք զնոսա զարհուրեցուցէ, զոր եւ մարգարէքն առնէին յաճախ: Նա եւ ուժգին խաւսելով ընդ նոսա. «Արիւն ձեր ի գլուխ ձեր քաւեալ եմ ես, ի հեթանոսս երթամ» (ԺԸ. 6), այս իսկ զբազումս ի նոցանէ հաւանեցոյց: Ապա ուրեմն եւ մեք պարտապան լինիմք արեանց⁵ բազմաց, թէ⁶ ո՛չ հանապազ նոցա զնոյն վկայութիւն տացուք զկենացն, որ առ Աստուած: Իսկ նա⁷ զայս ասէ որպէս եւ այլուր. «Այսուհետեւ աշխարհ որ զիս մի՛ արասցէ!»՝ երկիրդ առաւել արկանելով նոցա: Զի ոչ այնպէս զարհուրեցուցանէր զնոսա սպառնալիք պատուհասին, որպէս այս զկծեցուցանէր: Զի եւ զնոսա կամէր հաւանեցուցանել, վասն որոյ եւ առ հեթանոսս փութացեալ լինի:

Բայց եւ յետ ասելոյն, թէ «ի հեթանոսս երթամ» (ԺԸ. 6), առ սոսա խաւսել ոչ լինի հեղգացեալ. զի ծանիցուք, թէ ոչ հրաժարելոյ աղաքաւ գայն ասէր, այլ սակս յարուցանելոյ զնոսա եւ ի նախանձ յորդորելոյ: Վասն որոյ եւ ոչ հեռի ուրեք, այլ ի տանն, որ մերձ ի տունն Կրիստոսի ժողովրդապետին մտանէր, որպէս զի նախանձ արկցէ

¹ ԱԳ > Եփր.

² Ա գնայ

³ ԱԲ զգեստ

⁴ Ա ժողովրդապետին

⁵ ԱԲ արանց

⁶ ԱԲ եթէ

⁷ Ա Գայ

նմա մերձաւորութեամբ¹: Իսկ Տիտոս Յոստոս աստ զաշակերտէն ասէ, եւ վկայէ եւս զլաւութենէ նորա, առ որ մտեալ աշակերտեաց զժողովրդապետն, որպէս ասէ. «Կրիսպոս ժողովրդապետն հաւաքաց ի Տէր ամենայն քամր իւրով, եւ բազմաց ի կորնթացոցն լուեալ մկրտիին» (ԺԸ. 8): Տե՛ս՝ անդէն վաղվաղակի զժողովրդապետն հրէից հաւանեալ ամենայն տամբ իւրով: Եւ այս իսկ բաւական էր ի փոյթ վասն² հրէիցն ածել զՊաւղոս, զի ահա յետ ասելոյն, թէ յայսմհետէ «ի հեթանոսս երթամ» աշակերտեաց զժողովրդապետն:

Եփր. Արդ, թէպէտ եւ ի հրէից մի ոմն միայն ի ծերոց ժողովրդեանն հաւատաց, այլ հեթանոսք կորնթացիք միանգամայն ժողովուրդ բազում մկրտեալ լինէին:

Յոհ. Իսկ Կրիսպոսս այս է, վասն որոյ գրէ, թէ «Ոչ գոք ի ձեռք մկրտեցի, բայց միայն զԿրիսպոս» (Ա. Կորնթ. Ա. 14): Սա ինձ թուի երկանուէն գոյ, որ եւ Սոսթենէս կոչեցեալ լինէր, այր հաւատարիմ յաւետարանն, վասն որոյ եւ գան հարեալ լինէր ի հրէիցն, որ եւ հանապազ մաւտ գոլով Պաւղոսի, զոր եւ եղբայր անուանէ ի սկիզբն նոցին թղթին:

Եւ ասէ Տէր ի գիշերի րեսլեամբ ցՊաւղոս, մի՛ երկնչիր, այլ խաւսեաց եւ մի՛ լոէր, զի ես ընդ քեզ եմ. եւ ոչ որ ընդդէմ դարձցի քեզ ի չարչարել զքեզ, զի ժողովուրդ բազում է իմ ի քաղաքիս յայսմիկ (ԺԸ. 9-10):

[109ա] Տե՛ս ի ձեռն որքա՛ն իրաց հաւանեցուցանէ զնա³ կալ ի տեղուոջն յերկար եւ խաւսել զբանն անդադար՝ երեւմամբն եւ առաւել ընտրութեամբ⁴ խնամոցն, եւ զի ոչ մեծագոյն վիշտք ի վերայ նորա լինելոց է այնուհետեւ, եւ բազմութեան հաւատալն եւ ժողովրդապետին՝ բաւական է⁵ ի փոյթ զարթուցանել զնա⁶: Իսկ ասելովն, թէ «Մի՛ երկնչիր»՝ հանէ զերկիւղն ի մտաց նորա, զի ոչ ի չարչարանացն զանգիտէր, այլ ի հակառակութենէ հրէիցն, զի չարչարանքն եւ անհաւանութիւնն⁷ ոչ այնպէս տրտմեցուցանէր զՊաւղոս, որպէս հակառակութիւնքն, զի այս իսկ եւ քան զվիշտս դժուարագոյն էր: Վասն որոյ յայնժամ երեւի նմա Քրիստոս, յորժամ հակառակ հայ-

¹ Աբ մերձաւորութեամբն

² Բ > վասն

³ Ա զնայ

⁴ Բ ընտանութեամբ] ընտրութեամբ

⁵ Աբ էր] է

⁶ Ա զնորայ] զնա

⁷ Ա անհաւանութիւն, Բ անհաւատութիւն] զանհաւանութիւնն

հոյուլթիւնքն եղեն, եւ ասէ «Խաւսեաց եւ մի՛ լռեր», զի ոչ ոք ընդդէմ դարձցի քո ի չարչարել զքեզ: Զի ոչ հանապազ թողացուցանէր զնոսա կրել զչարչարանսն, զի մի՛ լիցին տկարագոյնք:

Այլ թէ ասիցէ ոք, թէ զիա՞րդ յետ այսց բանից միաբան հրեայքն հասին ի վերայ նորա, սակայն ի միտ առցէ, զի ոչ ինչ կարացին առնել, բայց միայն ածին զնա առ անթհիպատն: Եւ որ ինչ մանաւանդ ուրախ առնէր եւ համբառնայր զանձն նորա, զայն յետոյ ասէ ցնա Տէր, թէ «Ժողովուրդ բազում է ի քաղաքիս յայսմիկ» (ԺԸ. 10), զի իբրեւ ոչ ոք մեղանչէ քեզ, զբազումս աշակերտս դու աստ:

Եւ նստաւ անդ փարի մի եւ ամիսս վեց. եւ ուսուցանէր նոցա զբանն Տեառն (ԺԸ. 11):

Եւ իբրեւ յաճախեաց լինել անդ, ոչ համբերեցին հրեայքն, իբրեւ տեսին, թէ աշակերտաց նա զհեթանոսս: «Առ Գաղիոնա փոխանակաւ բղնջիին արայեցոց յարեան միարան հրեայքն ի վերայ Պաւղոսի եւ ածին զնա յաբեանն եւ ասին, թէ՛ արտաքոյ արինաց պարբ. սա զմարդիկ պաշտել զԱստուած» (ԺԸ. 12-13): Յամենայնի հակառակելով հրեայքն ընդ ճշմարտութիւնն¹, յետ տարւոյ միոյ եւ վեց ամսոյ միաբան ի վերայ հասեալ լինէին, եւ յորժամ ոչ կարէին աւրինաւք իրաւանց վարել, բռնութեամբ² վարէին, եւ զայն, որ հանապազ աւր ըստ աւրէ ուսուցանէր նոցա յաւրինաց անտի, զրպարտեցին առաջի հոգեմոնին եւ ասեն, թէ արտաքոյ քան զաւրէնսն ուսուցանէ սա որդւոց մարդկան երկնչել յԱստուծոյ: Իսկ նա ոչ ինչ անսայր նոցա, ուստի եւ ոչ ինչ կարաւ եղեւ Պաւղոս վասն այսորիկ տալ պատասխանի: Զի

Իբրեւ մերձ էր, ասէ, Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղիոն ցիրեայսն, եթէ էր ինչ անիրաւութիւն (ԺԸ. 14):

Այսինքն՝ թէ զիրաց քաղաքիս էր բռնն հարեալ Պաւղոս «անիրաւութեամբ, կամ խարդախութիւն չարեաց, ով հրեայք, ի դէպ էր ինձ անսալ ձեզ: Ապա թէ խնդիրք ինչ են վասն բանի եւ անուանց եւ արինաց ձերոց, քնսէք ձեզէն, զի դաբաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել. եւ մերժեաց զնոսա յաբենէ անփի (ԺԸ. 14-15):

Տե՛ս, թէ որպէս հանճարեղ էր այրն, զի ոչ ասաց վաղվաղակի թէ չէ ինձ փոյթ այդպիսի իրք, այլ թէ «էր, ասէ, անիրաւութիւն բռնութեան, ով հրեայք, ի դէպ էր ինձ անսալ ձեզ» (ԺԸ. 14):

¹ ԱԲ ճշմարտութիւն

² Ա բնութեամբ] բռնութեամբ

Եփր. Ապա թէ չար ինչ գործեաց ըստ աւրինաց ձերոց, կամ թէ բանք անարժանք կայցեն ի վարդապետութեան¹ |109բ| դորա, կամ թէ զոր ինչ դուք ասէք՝ դա ոչ առնու ձեզ յանձն, կամ թէ արատ ինչ ունիցիք դուք վասն վարդապետութեան դորա, կամ ի վերայ անուանց եւ աւրինաց ձերոց, այսինքն՝ վասն արքային Քրիստոսի, որ գրեալ է յաւրէնսն, զայն դուք գիտէք, որ ինչ ի միջի ձերում է ձեզոյն առանձինն: Բայց ես ոչ առաքեցայ դատել զայնոսիկ, որ խափանեն զպահպանութիւն աւրինացն:

Յոհ. Այսու առանց պատասպարանի արար զդատաստանն, եւ պայծառ եղեւ յաղթութիւնն²: Եւ այս իսկ մանաւանդ բարձրացոյց հպարտութեամբ զԿորնթացիսն եւ անհաւանս³ արար: Զի ոչ եցոյց զինքն նոցա իրաւամբք դատաստանի իշխանն, եւ ոչ ցածոյց զանդգնութիւն նոցա, զի ոչ էր հաւասար դիմադրութեամբ յաղթեղն եւ իմանալն, թէ չէր փոյթ Գալիոնի⁴ յաղագս իրին: «Եւ առեալ ամենեցուն յունացն զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի արեւնին, եւ ոչ ինչ զայնմանէ փոյթ լինէր Գալիոնի⁵» (ԺԸ. 17): «Յոյսն»՝ աստանաւր զայնոսիկ զհրեայսն ասէ, որ յունաց բարբառովն խաւսէին:

Եփր. Յոյնքն⁶ հաւատացեալք հարկանէին զՍոսթենէս զլուխ ժողովրդեանն:

Յոհ. Ո՛վ անամաւթութեանն⁷. զի յետ մերժելոյ յատենէն եւ յամաւթ լինելոյ, ի յանդգնութենէն ոչ դադարէին: Իսկ դատաւարին ոչ ինչ փոյթ էր զայնմանէ. թէպէտ որ լինէրն, մանաւանդ անարգանք էր նմա. բայց իբրեւ զանիրաւս եւ զյանդգնեալս թողոյր զնոսա:

Եփր. Եւ զի մի՛ իբրեւ տեսանիցէ հոգեմտնն, խնդրիցէ վրէժ անարգանաց նորա, այսինքն՝ Սոսթենեա⁸, եղեւ իբրեւ չտեսեալ, զի առաւել եւս յաճախեսցին հարուածք նորա:

Յոհ. Բայց տե՛ս զհեզութիւն նորա, զի գան հարեալ ոչ ինչ ասէր, այլ իշխանութիւն ունելով ոչ ինքն զնոսա հարկանէր, զի ինքն իսկ ունէր զիշխանութիւն ժողովրդեանն: Այլ քանզի խրատեալ լինէր ի ձեռն հաւատոցն, որպէս զի եւ դատաւորն իմանայր, թէ ով ոք էր

¹ Աբ վարդապետութիւն

² Աբ յաղթութիւն

³ Աբ անհաւան

⁴ Աբ Գալիոնի

⁵ Աբ Գալիոնի

⁶ Աբ յոյնք

⁷ Աբ անամօթութեան

⁸ Աբ զսոսթենեայ

հեզ կամ որքան էր նա հանդարտ. եւ ոչ փոքր ինչ շահ արար աշակերտացն Գալիոնի¹ մաւտ պատահելն: Ուստի յայտնի եղեւ սոցա հեզութիւնն² եւ նոցա յանդգնութիւնն³, զի յատեան ածելովն յայտ արարին, թէ դատաւորական հրամանի կարաւտանան այնպիսի իրողութիւնք: Եւ թէպէտ նա⁴ այնպիսի վճիռ ետ, զի մի՛ դարձեալ աշխատ առնիցեն զնա, թէ՛ ոչ կամիմ՝ զայդպիսի իրս դատել, տեսէք ձեզէն⁵, որպէս Պիղատոս, թէ «Ըստ ձերոց արինաց⁶ դապեցարոս» (ԺԸ. 31), իսկ նոքա յամենայնի անիրաւք գոլով իբրեւ արբեալք եւ մոլիք՝ այնպէս ի չարիսն յամառեալք լինէին, զորոց արբեցութիւնն⁷ իմաստասիրական հեզութեամբ տանէր Սոսթենէս:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Սմին հեզութեան եւ մեք նմանեցուք երկայնամիտ լինելով առ այնոսիկ, որ հարկանեն զմեզ թշնամանաւք, անյիշաչարութեամբ իբրեւ խաղաղական աւգով անխռով պահելով զնաւ խորհրդոց մերոց. զի խաւար է ցասումն եւ մրրիկ բարկութիւն: Եւ որպէս նաւակոծեալքն ոչ գիտեն, զոր ինչ ի նաւէն արտաքս ընկենուն, նոյնպէս բարկացեալքն ոչ գիտեն կալ ի բարեկարգութեան⁸: Արդ, ստացուք պարծանս յաղթութեան յայնպիսի մարտի անցասումն մնալով, զի /110ա/ ոչ անարգեալն, այլ անարգաւղն մանաւանդ յամենեցունց պախարակի:

[ԳԼՈՒԽ Խ.]

Բայց Պաւղոս փակաւին մնայր աւուրս բագումն առ եղբարս (ԺԸ. 18):

Վայելչապէս յետ խռովութեանն⁹ եւ հարուածս ընդունելոյ Սոսթենեայ, ոչ փութով մեկնի Պաւղոս ի նոցանէ, զի պարտ էր նմա տակաւին կալ սպասել, զի միսիթարեսցէ զնոսա եւ հաստատեսցէ

¹ ԱԲ գաղիոնի

² ԱԲ հեզութիւն

³ ԱԲ յանդգնութիւն

⁴ Ա նայ

⁵ ԱԲ ձեզէն

⁶ ԱԲ օրինացն

⁷ ԱԲ արբեցութիւն

⁸ ԱԲ բարեկարգութեան

⁹ ԱԲ խռովութեան

մի՛ ձանձրանալ ի նեղուլթիւնս: «Եւ հրաժարէր նաւեր յԱսորիս» (ԺԸ. 18): *Ջի ցանկայ հասանել դարձեալ յԱսորիս: Քանզի անդանաւը հրաման առ զաշակերտեալսն կոչել քրիստոնեայս, անդանաւը աւանդեալ եղեւ ի Հոգւոյն ի պաշտաւն առաքելութեանն, տուեալ նմա զշնորհսն Աստուծոյ, ըստ որում պարտ էր¹ զիրսն ըստ աւանդելոյն նմա անդէն վճարել:* «Եւ ընդ նմա Պրիսկիդա եւ Ակիդաս² փոքրեալ գգուիսն ի Կենքրէք³, քանզի ուխտադիր էր» (ԺԸ. 18): *Տե՛ս, յորժամ աւրէնքն քակեալ եղեն, թէ որպիսի՞ մտաւք տակաւին սոքա ըմբռնեալ էին. զի այն իսկ հրէական էր, խուզել զգլուխն ըստ ուխտի: Արդ, եկն ընդ Պաւղոսի ի Կենքրոն, ի նաւահանգիստն կորնթացւոց, զի անդ եղեալ էր ուխտ Ակիդաս⁴ խուզել զհերս իւր, պարտ էր⁵ ապա եւ պատարագ մատուցանել ի ձեռն քահանային, յոր ինչ եղեւ լիեալ ի յանցանս՝ քաւել ի ձեռն այնորիկ:*

Բայց իբրև եհաս յԵփեսոս, գնոսա եթող անդ, եւ ինքն մտնալ առ Ժողովորդն խաւսէր ընդ հրեայսն: Եւ աղաչեցին գնա բազում Ժամանակս լինել անդ եւ ոչ առ յանձն, այլ հրաժարեալ ի նոցանէ, *ասէ, պարտ է ինձ գամենեսեան տեսանել եւ գնալ յԵրուսաղէմ՝⁶ դարձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամաւք* (ԺԸ. 19-21):

Եփր.⁷ *Արդ, եկն եհաս Պաւղոս յԵփեսոս եւ ընդ նմա ակիղասեանք⁸, եւ խաւսեցաւ ի Ժողովրդեան⁹ անդ, եւ խնդրեցին ի նմանէ, զի մնասցէ առ նոսա, եւ ո՛չ առ յանձն ընդ երկարել առ նոսա, վասն զի ուր փութացեալն էր, պարտ էր գնալ:*

Յոհ.¹⁰ *Սակայն ոչ պարզաբար եթող զնոսա, այլ հանդերձ խոստմամբք միւսանգամ ակն ունել զալստեան նորա կամաւքն Աստուծոյ: Ջայս ասէ, զի եւ զԱստուած աղաչեացեն վասն գալոյ նորա, զի կամեսցի: Թող նա¹¹ զակիղասեանս¹² յԵփեսոս, յիրաւի իբրեւ զու-*

¹ Բ պարտ էր որ

² Ա Ակիդաս

³ Բ ի Կենքրէք

⁴ Բ Ակիդաս

⁵ ԱԲ է] էր

⁶ ԱԲ > պարտ է ինձ գամենեսեան տեսանել եւ գնալ յԵրուսաղէմ

⁷ Գ > եփր.

⁸ ԱԲ ակիղասեանք

⁹ Բ Ժողովրդեանն] ի Ժողովրդեան

¹⁰ ԱԲ > յոհ.

¹¹ Ա նայ

¹² Բ զակիղասեանս

սուցիչս, քանզի այնչափ ժամանակս ընդ նմա լինելով, բազում ինչ ուսեալ լինէին: Եւ սակայն ի հրէական սովորութենէն դեռ եւս ոչ լինէր զնոսա հեռացուցեալ: Ահաւասիկ եւ կին սուրբ եւ պարկեշտ Պրիսկիղա ուսուցիչ յաւետարանն: Եւ քանզի ոչ կամեցաւ զնոսա ընդ իւր շրջեցուցանել, այլ թողուլ զնոսա յԵփեսոս, բայց նոքա յետ այնորիկ ի Կորնթոս բնակեցան: Այլ եւ մեծամեծ իրս վկայէ զնոցանէ ի բազում տեղիս, եւ առ հռովմայեցիսն գրելով ողջունէ զնոսա: Ուստի ինձ թուի, թէ յետ այնորիկ չոգան ի Հռոմ իբրեւ թէ¹ գաւառասիրելով զտեղիսն զայնոսիկ, ուստի արտաքս անգեալ² եղեն յաւուրս Կղաղեայ: Եւ որպէս ինձ թուի, թէ եւ այլ հաւատացեալքն անտի էին ի Հռոմայ, եւ դարձեալ անդ էին ժողովեալ յաւուրս Ներոնի, զի ոչ վաղվաղակի ի բաց խլեալ լինէին բնաւին ի հայրենի տեղեացն:

Ամբարձեալ յԵփեսեայ եւ իջեալ ի Կեսարիա, ել եւ ետ ողջոյն եկեղեցոյն յԵրուսաղէմ (ԺԸ. 21-22):

Ո՛չ եթէ /110բ/ վայրապար փութացեալ լինի զգնալն³ ի Կեսարիա, եւ միւսանգամ եւ յայլ գաւառսն, այլ զի իւրով գալստեամբն հաստատեսցէ զնոսա: «Էջ յԱնտիոք⁴ եւ եղեալ անդ ժամանակ⁵, ել շրջել կարգաւ ընդ գաղափացոց յաշխարհն եւ ընդ Փոնիգիա, հաստատել զամենայն աշակերտեալսն» (ԺԸ. 22-23): Յայն տեղիսն հասանէր՝ յորս նախ ժամանակաւ ինքն եկեալ էր:

Տրեայ ոմն Ապաղոս⁶ Աղէքսանդրացի⁷, այր ճարտարարան, եկն եհաս յԵփեսոս եւ էր զաւրաւոր գրովք (ԺԸ. 24):

Ահաւասիկ բանաւորք այնուհետեւ փութացեալ լինէին եւ յաշակերտութիւն յաւժարեալ: Տեսանե՞ս զաճումն քարոզութեանն: «Սա էր տեղեկացեալ ճանապարհին Տեառն եւ ետայր հոգով, խաւսէր եւ ուսուցանէր վասն Յիսուսի, զիպէր միայն գմկրտութիւնն⁸ Յովհաննու: Սա սկսաւ համար-

¹ Բ ետ] թէ

² ԱԲ անկեալ

³ Բ գգալն] զգնալն

⁴ Ա յԱնտիոք

⁵ Բ ժամանակ ինչ

⁶ ԱԲ ապոլոս անուն

⁷ Ա աղէքսանդրացի յագգէ] աղէքսանդրացի

⁸ Բ գմկրտութիւն

ձակել յանուն Տեառն ի ժողովրդեանն: Լուեալ ի նմանէ Ակիղայ¹ եւ Պրիսկիղայ առին զնա առ իրեանս, եւ ճշմարտագոյնս պարմեցին նմա զբանն Տեառն» (ԺԸ. 25-26): Արդ, զիա՞րդ, եթէ զմկրտութիւնն² Յովհաննու միայն գիտէր նա, ո՞րպէս եռացեալ լինէր հոգւով, զի Հոգին այնպէս ոչ լինէր տուեալ: Եւ եթէ որ յետ նորա էին, զորոց զկնի սորա պատմէ Ղուկաս՝ կարաւտացան մկրտութեանն³ Քրիստոսի, յոյժ մանաւանդ եւ սա եւս կարաւտացեալ լինէր: Արդ, զի՞նչ պարտ է ասել. զի ո՛չ եթէ վայրապար եղ զերկաքանչիւրսն ըստ կարգի, այլ զի ուսցուք զճշմարիտն: Արդ՝ կամ էր սա ի հարիւր եւ քսանիցն մկրտելոց Հոգւովն ընդ առաքեալսն, կամ թէ ոչ այսպէս, ասեմք, թէ որ ինչ եղեւ առ Կուռնէլիոս, եղեւ առ⁴ սմա: Բայց ինձ թուի, թէ ոչ ինչ գիտէր ստուգապէս, եթէ մկրտել նմա ոչ է պարտ: Զի թէ որք ի Յովհաննէ էին մկրտեալք եւ յետ այնորիկ դարձեալ մկրտեալ լինէին, ապա եւ աշակերտացն Յովհաննու ոչ էր պարտ զնոյն առնել: Այլ տես. զնա ստուգապէս խաւսէր յաղագս Քրիստոսի, բայց կարաւտ էր այլում ստուգութեան վարդապետութեան⁵, վասն բազում յաւժարութեան լցաւ Հոգւով Սրբով որպէս կուռնելիեանք⁶: Ուրեմն սմին վասն տնաւրինեաց Հոգին թողուլ Պաւղոսի զակիղասեանս⁷ յԵփեսոս, որպէս զի սորա ի նոցանէ ծանուցեալ զուղիղն, այնպէս զաւրացեալ մտցէ ի Կորնթոս: Եւ տե՛ս զամենայն ինչ նոցա հաւատով եւ սիրով ուղղեալ, եւ ո՛չ ուրեք մախանք կամ յաչաղանք. Ակիղաս ուսուցանէ, եւ մանաւանդ ինքն ուսանի, խորհեցաւ Պաւղոս զնալ, եւ գրով յուղարկեն:

Իբրև կամեցաւ, *ասէ*, նա զնալ յԱքայիայ⁸, որ է Ելլադայ⁹ բնաշխարհն կորնթացոց, յաւժարեալ եղրարց գրեցին առ աշակերտսն ընդունել զնա¹⁰: Իբրև¹¹ եհաս անդր, բազում նպաստ լինէր հաւա-

¹ ԱԲ ակիղայ

² ԱԲ զմկրտութիւն

³ Բ մկրտութեան

⁴ ԱԲ եւ առ

⁵ ԱԲ վարդապետութեան + եւ այսպէս ոչ գիտելով զամենայն

⁶ ԱԲ կորնելիեանք

⁷ ԱԲ զակիղասեանս

⁸ ԱԲ յաքայիա

⁹ ԱԲ եղլադա

¹⁰ Ա զնայ

¹¹ Բ որ իբրեւ

փացելոցն, քանզի պնդագոյն զհրեայսն յանդիմանէր հրապարակաւ, ցուցանելով գրովք, թէ Քրիստոսն է Յիսուս (ԺԸ. 27-28):

Արդ, ակիրդասեանք ստուգագոյն պատմեցին Ապաւղոսի, այլ եւ յորդորեցին եւս զնալ յԱքայիա, զոր եւ ինքն փուլթայր, եւ ետուն նմա զիր վկայութեան, զի անծանալթ էր այրն: Իսկ նորա զնացեալ բազում աւգուտ գործէր, զի յոյժ հմուտ էր գիտութեան գրոց, որպէս վկայեաց: Եւ զի հաստատուն էր հաւատովք, |111ա| եւ այնպէս զզնացսն կատարէր քարոզելով, զի վասն սորա գրէ Պօղոս. «Ես րնկեցի, Ապօղոս ջոր եր» (Ա. Կրնթ. Գ. 6): Զի յետ մեկնելոյն Պօղոսի եհաս ի Կորնթոս. զոր եւ դարձեալ եղբայր իւր անուանէ ասելով. «Այլ վասն Ապաւղոսի¹ եղբար յոյժ աղաչեցի» (Ա. Կրնթ. ԺԶ. 12): Արդ, սա ի հանդիսի յանդիմանելով զհրեայս՝ զհամարձակութիւնն² զիւր ցուցեալ լինէր, եւ համարձակութեամբն զաւրութիւն նորա, զոր ունէր ի գրոց՝ լինէր յայտնի. իսկ հաւաստեալ ի գրոց ցուցանելովն հմտութիւնն³ երեւիւր իմաստութեան նորա: Քանզի ոչ համարձակութիւնն⁴ միայն ըստ ինքեան կատարէ ինչ՝ ոչ գոլով զաւրութիւն⁵, եւ ոչ զաւրութիւնն վճարէ ինչ՝ ոչ գոլով համարձակութեան, որով եւ նա յանդիմանէր զհրեայսն, ասէ: Իսկ զիա՞րդ է, զի ոչ երբեք ուրեք սոցա ինչ առնէին, այլ ի վերայ Պաւղոսի հանապազ լինէին հասեալ: Ճահողակի այս ինչ լինէր, վասն զի գիտէին, զի նա էր գլուխ ամենեցուն, եւ զի մեծ էր անուն եւ գործքն Պաւղոսի:

Եփր. Կամեցաւ Պաւղոս ի կամս անձին իւրոյ զնալ յԵրուսաղէմ, եւ դարձոյց զնա հոգին յԱսիա, զոր եւ պատմէ: «Եղև, ասէ, մինչդեռ Ապաւղոսն⁶ ի Կորնթոս էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբն, եւ իջեալ յԵփեսոս եւ գրեալ գոմանս յաշակերպացն՝ ասէ ցնոսա, եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւր ի հաւաքայն: Եւ նորա ասեն. Այլ եւ ոչ եթէ Հոգի Սուրբ գուցե՞ լուեալ է մեր: Եւ ասէ. Իսկ յի՞նչ մկրտեցարուք: Եւ նորա ասեն. Ի Յովհաննու մկրտութիւնն: Եւ ասէ Պաւղոս. Յովաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն եւ ասէր, զի որ գալոցն է յեր նորա, ի նա մկրտեցին, այսինքն՝ ի Քրիստոս Յիսուս: Իրրեւ լուան մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի: Եւ ի դնելն ի

¹ ԱԲ պօղոսի] ապաւղոսի

² ԱԲ զհամարձակութիւն

³ ԱԲ հմտութիւն

⁴ ԱԲ համարձակութիւն

⁵ ԱԲ գորութեան

⁶ ԱԲ ապօղոս

վերայ նոցա Պաւղոսի գծեալ¹ եկն Նոզին Սուրբ ի վերայ նոցա. խաւսէին լեզուս եւ մարգարեանային, եւ Էին ամենեքեան արք իրրև երկոքասան» (ԺԹ. 1-7):

Յոհ. Վերին կողմանս զնախկի յիշեցեալսն ասէ զգաղատացւոց աշխարհն, զորս ըստ Կեսարիա Կապադոկիոյ եւ զայլսն՝ ընդ որս շրջեալ այնպէս եկն յԵփեսոս: Եւ գտեալ զոմանս յաշակերտացն՝ ոչ ասաց նոցա, թէ՛ հաւատա՞յք ի Քրիստոս, այլ թէ չոգի Սուրբ ընկալա՞յք, զի գիտէր, թէ չունէին: Բայց կամեցաւ ցնոսա հարցանել՝ յորդորելով զմիտս նոցա, զի իմացեալ զիւրեանց պակասութիւնն², զկատարեալն խնդրեսցեն³: Եւ տես, զի բազում իրաւք սոքա հեռագոյն էին յԱպաւղոսէ, որք եւ ոչ գիտէին, եթէ է իսկ չոգի Սուրբ. եւ ո՛չ միայն վասն չոգւոյն չէին լուեալ, այլ եւ զՔրիստոս ո՛չ գիտէին: «Իսկ յի՞նչ, ասէ, մկրտեցայք. ի Յովհաննու, ասեն⁴, մկրտութիւնն⁵» (ԺԹ. 3):

Արդ, սոքա յԵփեսոս գոլով ուստի՞ արդեաւք⁶ ունէին զՅովաննու⁷ մկրտութիւնն⁸: Թերեւս զնացեալ եղեն յայնժամ յԵրուսաղէմ, յորժամ մկրտէրն չովաննէս⁹, որ եւ ստոյգ իսկ այսպես է¹⁰: Եւ զիա՞րդ ասա նոքա որպէս զԱպաւղոս չոգի ոչ ունէին: Զի ոչ էին եռացեալ այնպէս, եւ ոչ յաւժարաբար մտադիր եղեալ զըոց ամենայնի որպէս նա: Զիա՞րդ եւ սոքա ոչ առնէին մկրտութիւն: Այլ նորայն ինձ թուի, թէ այս իսկ է, զի բազում էր համարձակութիւն¹¹ նորա: Բայց Պաւղոս ոչ ասաց ցնոսա, թէ չէ ինչ մկրտութիւնն Յովհաննու, այլ թէ անկատար է. նա եւ ոչ զայս յաւել: /111բ/ Այլ միայն ուսուցանէր, թէ Յովհաննէս յապաշխարութիւն մկրտեաց, զի հաւատասցեն յայն՝ որ եկն զկնի նորա Քրիստոս: Տեսանե՞ս, զի եւ ի Քրիստոս ոչ հաւատային նոքա տակաւին, յայտ է յասելոյն, թէ ի նա, որ գալոցն է յետ նորա, մկրտեսցին, վասն որոյ եւ մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի:

Այլ ընդէ՞ր ջրոյ պետք էին կրկին, զի ի ջուր մկրտեալ էին: Հարկաւորապէս. զի զկատարեալ խորհուրդն աւանդեց նոցա, եւ զաւրի-

¹ ԱԲ ծեռս

² ԱԲ պակասութիւն

³ Ա խնդրեսցին

⁴ ԱԲ ասէ

⁵ ԱԲ մկրտութիւն

⁶ Գ արդեւք

⁷ Բ գյովհաննու

⁸ ԱԲ մկրտութիւն

⁹ Բ յովհաննէս

¹⁰ Ա իսկ այսպէս է] այսպիսի է

¹¹ ԱԲ համարձակութիւն

նակն ի բաց բառնայր. զի այն Յովաննուն¹ յայսպիսի բիւրապատիկ պարգեւաց լոկ էր, զի ջուր միայն էր եւ ապաշխարութիւն, ուստի եւ անկատար էր, եւ ոչ Հոգի եւ մեղաց թողութիւն: Որով եւ ի նոյն իսկ ի նորոգ մկրտութենէն մարգարէանան, զորս եւ Յովհաննու քարոզութեամբն ի նոյն իսկ Քրիստոսին ածէ զնոսա, եւ ցուցանէ, թէ մկրտութիւնն² Յովհաննու զայս ուսուցանէ, յասելն՝ «Ես մկրտեմ զձեզ քրով, այլ որ զկնի իմ գալոցն է, նա մկրտեսցէ զձեզ Նոգով³ եւ հրով» (հմմտ. Մարթ.Գ. 11):

Եւ ի դնելն Պաւղոսի ի վերայ նոցա ձեռս, առին Նոգի Սուրբ, խաւսէին լեզուս եւ թարգմանէին անձամբ անձանց (ԺԹ. 6):

Բայց տե՛ս զհաւատս նոցա եւ դիւրահաւան բարս, որով եւ յայտնապէս զՀոգին Սուրբ ընկալան նման առաքելոցն, եւ զչնորհացն եւս առաւելութիւն, զի բազում նշանաւք, լեզուաւք եւ մարգարէութեամբ զՀոգին առնուին, եւ յայնժամ մարգարէութիւն յաճախ տայր Հոգին: Բայց բազումք լինէին եւ սուտ մարգարէք ընդդէմ ճշմարտութեան: Իսկ որ⁴ ի Հոգւոյն Սրբոյ ընկալեալք էին, յոյժ երեւելիք լինէին: Այլ զայս ասասցուք, թէ նշանք ոչ ինչ են աւգուտ առ ի կատարումն. զի որպէս որք ոչն տեսին զՔրիստոս եւ հաւատացին՝ երանելիք են, նոյնպէս եւ որք առանց նշանաց հաւատացին, իսկ նշանախնդիրքն յանդիմանին եւս, «Թէ ոչ նշանս ինչ տեսանէք, ասէ, ո՛չ հաւապայք» (Յովհ. Գ. 48): Արդ, զի զգլուխն ամենայն բարութեանց առաք մկրտութեամբն, այսինքն՝ զթողութիւն մեղաց, զսրբութիւն, զհաղորդութիւն ընդ Հոգւոյն, զորդէգրութիւն, զկեանս⁵ յաւիտենական⁶, զի՞նչ քան զայս աւելի նշանս կամիցիմք: Եւ զի նշանք խափանեցան, այլ ունիմք հաւատս, յոյս, սէր, որ կան եւ մնան:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զայսոսիկ խնդրեսցուք, յաւէտ գսէր՝ որ մեծն⁷ է քան զամենայն: Որոյ առ մեւք անունն է մնացեալ միայն, իսկ գործ եւ ո՛չ ուրեք, այլ աւցտեալք ի միմեանց: Եւ մի ասիցես, թէ մի եկեղեցի ունիմք

¹ ԱԲ յովհաննուն

² ԱԲ մկրտութիւն

³ ԱԲ Յոգւով Սրբով] Յոգւով

⁴ ԱԲ > որ

⁵ Բ զկեանսն

⁶ Բ յաւիտենականս

⁷ ԱԲ մեծ

եւ մի աւանդութիւն, եւ յիւրաքանչիւրում աւուր ընդ միմեանս ոչ մարտնչիմք, այլ զի ոչ սէր հարազատ եւ անսասանելի ունիմք՝ պատանաց եւ սպեղանեաց պէտս ունիմք: Արդ, ո՞րպէս ուղղեսցուք զսէրն: Զբաց բարձականսն սիրոյ ի բաց խլեսցուք. նախ զմախանս եւ զյաչաղանս եւ զայլս: Եւ չէ այս բաւական՝ ոչ լինել ումեք թշնամի, այլ պարտ է եւ սիրել: Եւ այս զիա՞րդ ուղղի ասա: Զի՞նչ առնէ տուփումն մարմնոց. ո՞չ ապաքէն գեղեցկութիւն մարմնոյ. ապաքէն եւ հոգիս գեղեցիկս կալցուք, եւ իցեմք իրերաց սիրելիք¹: Զի ոչ միայն սիրել պարտ է, այլ եւ սիրեցեալ լինել: Նախ քան զամենայն ինչ զայս ուղղեսցուք՝ զի սիրեցեալք լիցուք, եւ այնպէս ուղղի եւ² սիրելն եւս:

[ԳԼՈՒԽ ԽԱ.]

/112ա/ Եւ մտնալ ի ժողովուրդն համարձակէր ամիսս երիս, խաւսէր եւ ուսուցանէր վասն արքայութեանն³ Աստուծոյ (ԺԹ. 8):

Տեսանե՞ս, յամենայնի զանձն իւր նախ ի ներքոյ ժողովրդոցն հրէիցն մրցեալ, եւ այնպէս արտաքս ելանել. քանզի յամենայնի, որպէս ասացի, նախ ի նոցանէ կամի առնուլ բանի պատճառ, զի հեթանոսք նախանձեսցին եւ դիւրաւ զնա ընկալցին, եւ հեթանոսացն ընդունելով՝ հրեայք զղջացեալ լիցին: Իսկ զի՞նչ համարձակելն իցէ. ոչ խոշորութիւն ինչ կամ խստութիւն, այլ զի առ վիշտսն⁴ ճակամարտեալ՝ յայտ յանդիման լինէր բարբառեալ, ո՛չ թագուցանելով⁵ զաւանդն, զի յաղազս քաղցրագոյն իրաց⁶ լինէր խաւսեցեալ: Ով ոք յաղազս թագաւորութեանն⁷ երկնից լսելով ոչ լինէր յաւժարացեալ: Սակայն անհաւան հրեայքն ոչ, վասն որոյ ասէ. «Իբրև ամենեքեան⁸ խստանային եւ ընդդմ դատնային բամբասել զճանապարհն առաջի բազմութեանն⁹, մեկնեալ ի նոցանէ որոշեաց զաշակերտսն¹⁰. հանապազար խաւսէր

¹ Աբ > եւ իցեմք իրերաց սիրելիք

² Աբ > եւ

³ Աբ արքայութեան

⁴ Աբ վիշտն

⁵ Ա թաքուցանելով, Բ թաքուցանելով] թագուցանելով

⁶ Աբ իրողութիւն] իրաց

⁷ Աբ թագաւորութեան

⁸ Աբ ամենեքին] ամենեքեան

⁹ Աբ բազմութեան

¹⁰ Աբ զաշակերտն

ի դարապասին¹ Տիրեննայ ուրումն» (ԺԹ. 9): Յիրաւի զքրիստոնէութիւնն² ճանապարհ կոչէին, զի նա է ճանապարհ, որ տանի յարքայութիւնն³ երկնից:

Մեկնեալ, ասէ, որոշեաց զաշակերտսն (ԺԹ. 9):

Եհատ զչարաբանութիւն նոցա, եւ ոչ կամեցաւ բորբոքել զնախանձն, եւ ոչ ի հեռ յալափագոյն արկանել: Եւ զի պարտ էր ի նոցունց ի բաց կացուցանել զաշակերտսն, ի նոցանէ կամէր առնուլ սկիզբն՝ զի արժան էր ոչ ընդ նոսա ժողովել նոցա, եւ ոչ վայրապար առնել⁴ զայն, վասն որոյ եւ ստէպ թախանձեցուցանէր զնոսա փոխել յանհաւանութենէն: Եւ զի բամբասել ասէ նոցա զճանապարհն, յայտ առնէ, զի հրեայք⁵ ոմանք չարաչար բանիւք զրպարտէին զՊաւղոս, որոց ոչ ինչ չար ասէր ընդդէմ նոցա չարաչար ի նոցունց լսելով: Զի աստուստ եւ մեք ուսցուք մի՛ ընդդիմադրել չարաբանողացն: Եւ զի խաւսէր ինքն ըստ իւրաքանչիւր աւուր, եւ այնու ընտանեցուցանէր զբազումս, եւ չարաչար կրելովն ոչ ի բաց վագեաց ի նոցանէ եւ ոչ բաժանեալ եղեւ:

Նանապագ խաւսէր ի դիւանին⁶ Տիրանայ (ԺԹ. 9):

Տե՛ս զլաւութիւն առնն, զիարդ լինէր վերակացու եւ տեղի քարոզութեան զերկեամ մի, թերեւս ի զլիսաւորացն գոլով սա եւ իւրքն, քանզի հաւատացեալք էին եւ յոյժ հաւատացեալք, վասն որոյ իբրեւ զմեծ արանց պատմէ մեզ զնոցանէ, թէ «Նանապագ խաւսէր ի դարապասին Տիրանայ»: Հայեաց դարձեալ, զի բամբասողացն զվարդապետութիւնն⁷ աստանաւր ոչ տա⁸ պատասխանի Պաւղոս, որպէս եւ այլուր, իբրու զի ի հեթանոսացն հաւատալով բազմանային, այլ եւ ի հրէիցն ոչ սակաւք: Վասն որոյ եւ գտեղի վարդապետութեանն⁹ ոչ վայրապար ուրեք, այլ ուր էր պարապումն ի խռովութեանց՝ խնդրեցին յապարանսն Տիւրենայ¹⁰: Որով եւ զաշակերտսն խրատե-

¹ ԱԲ դարապասին

² ԱԲ գքրիստոնէութիւն

³ ԱԲ արքայութիւն

⁴ ԱԲ առնէր] առնել

⁵ ԱԲ հրեայքն

⁶ Բ տիւանին

⁷ ԱԲ զվարդապետութիւն

⁸ ԱԲ տայ

⁹ ԱԲ վարդապետութեան

¹⁰ ԱԲ յապարան Տիրանայ] յապարանսն Տիրենայ

ցին ոչ յառնել ի սրտամտութիւն ընդդէմ բամբասողացն, այլ տեղի տալով եւ մեկնելով զաշակերտան ի ժողովրդենէն հրէից, եւ ոչ գնալով ի քաղաքէ անտի՝ ցուցանէին յամենայնի վասնել զչարութիւնն վասն փրկութեան նոցա:

Եւ այս եղև զերկեամ մի, մինչև ամ/112բ/ենեցուն ասիացոցն լսել զբանն Տեառն հրէից եւ հեթանոսաց (ԺԹ. 10):

Տե՛ս որչափ ինչ ի գլուխ եհան վերակացութիւն բանին եւ դադարելն անդանաւր Պաւղոսի. զի յերկարեցաւ քարոզութիւնն¹, մինչ զի ամենեցուն լսելի եղև բանն, որք միանգամ բնակեալ էին յԱսիայ²:

Եւ զաւրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն Պաւղոսի. մինչ զի ի հիւանդս փանել ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարշամակս, եւ մերժել ի նոցանէ ախտիցն եւ այսոց չարաց ելանել (ԺԹ. 12):

Տեսանե՞ս զգաւրութիւն մարմնոյն, զիա՞րդ զգեցեալ էր զՔրիստոս, եւ որպէս Պետրոս յերուսաղէմ, սա աստ գործէր զբժշկութիւն ամենեցուն. ոչ ինքեամբ միայն եւ ձեռն ղնելով, այլ եւ ի ձեռն հանդերձիցն բացէ ի բաց ոչ զգենլով եւեթ նոցա, այլ եւ առեալ ի վերայ ինքեանց ղնէին զզուեարն³ կամ զգաւտին, եւ անդէն ողջանային ի ցաւոց, եւ չար ղեւքն ելանէին: Եւ վասն այնորիկ ոչ թողացուցանէր նմա երբեմն Հոգին գնալ յԱսիա, այսմ ժամանակի սպասելով՝ որպէս կարծեմ:

Արդ, որք յելլենացւոցն⁴ թերահաւատեն վասն յարութեանն⁵ զմոխիրն տեսանելով ի գերեզմանս՝ զայսպիսի գործս տեսեալ հաւատասցեն Աստուծոյ զաւրութեանն⁶: Ուստի եւ այսպիսի իրք գործէին, զի չարաբանքն պարտեալ յամաւթ լիցին, որք զնոյն իսկ զաւանդութիւնն⁷ դաւաճանէին բամբասելով: Բայց դու մի՛տ դիր, քանզի արտաքնոցն փորձութիւնքն դադարեալ եղեն առ ժամանակս մի, իսկ որ առ ի դիւացն՝ սկսեալ եղև: Զի

¹ Աբ քարոզութիւն

² Աբ յԱսիա

³ Բ դաստառակն] զզուեարն

⁴ Աբ յեղդենացւոցն

⁵ Աբ յարութեան

⁶ Աբ զօրութեան

⁷ Աբ զաւանդութիւն

Յանդգնեցան ոմանք եւ ի շրջաւոյ հրէիցն՝ որ երդմնացուցիչքն էին, անուանել ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս՝ զանուն Տեառն Յիսուսի, եւ ասէին. երդմնացուցանեմ զքեզ ի Յիսուս, զոր Պաւղոսն քարոզէ, ելանել ի դմանէ (ԺԹ. 13):

Տե՛ս զհրէական հեղգութիւնն¹ ի հաւատս, եւ գտրտմութիւնն²: Տեսանէին զհանդերձան Պաւղոսի ներգործելով զմեծամեծս, եւ ի միտ ո՛չ առնուին, զի զի՞նչ մեծ քան զայսպիսի իրս լինիցի: Իսկ նոքա փոխանակ հաւանելոյ եւ զղջանալոյ՝ ի հակառակն եւս դառնային: Բաբէ, թէ³ ո՞րչափ էր հաւատոցն զաւրութիւն եւ որչափ անունն Պաւղոսի, որով եւ նոքա ի նախանձ գրգռեալք ի փառասիրութենէ, որպէս եւ Սիմոն մոգ սակս հաւատարիմ եւ իրաւ զինքն երեւեցուցանելոյ խնդրէր զչնորհս Հոգւոյն Սրբոյ, նոյնպէս եւ սոքա յաղազս նորին իրաց զայն ինչ առնէին սակս իրաւացուցանելով⁴ զինքեանս, յոր ինչ կամէին: Տե՛ս, հաւատալ ոչ կամէին, այլ ի ձեռն անուանն կամէին հանել զդէս: Ո՛վ բազում տարտամութեան նոցա եւ անհաւանութեան, զի եղկելիքն եւ թշուառականք ոչ ասացին դիւին, թէ հաւատամք ի Յիսուս, զոր Պաւղոսն քարոզէ, զի ասելով զայս առաւել պայծառագոյնք լինէին եւ յաղթէին նմա, եւ այնու ընտանացեալ լինէին տերութեանն⁵ Յիսուսի⁶. այլ թէ երդմնեցուցանեմք եւ հրամայեմք քեզ յանունն⁷ Յիսուսի, «եւ ի դմանէ»:

Արդ, ասաց Ղուկաս եւ զբանս անմտութեան նոցա, ցուցեալ թէ որպէս առանց ծանրութեան պատմէ զամենայն, եւ ոչ դաւաճանէ ինչ կամ պարսաւէ |113ա| զնոսա, զի այս իսկ առնէր զառաքեալսն սքանչելիս, հեղութիւն եւ անյիշաչարութիւն նոցա: Զի այն ինչ որ առ փիլիպեցիսն եղեւ, զխուճապն ասեմ, զոր հասոյց Պաւղոս հարցկին դիւի՝ որ էր յաղախինն, եւ զսոսա հերիք էր ողջախոհ առնել, բայց ոչ առնուին ի միտ: Եւ ընդէ՞ր արդեւք շրջէին երդմնեցուցիչքն այն: Սակս փարթամութեան ընչից ժողովելոյ, ըստ որում եւ ոչ պատմէին զիրսն, այլ իբրեւ շուրջ ընթացեալ լինէին այնուհետեւ քարոզելով, որով եւ վտանգեալ լինէին:

¹ ԱԲ հեղգութիւն

² ԱԲ գտրտմութիւն

³ Բ թէ եւ

⁴ ԱԲ իրաւացուցանելոյ

⁵ ԱԲ տերութեան

⁶ Բ յիսուս

⁷ Բ յանուն

Էին ուրումն Սկեւեայ¹ քահանայապետի եւթն որդի, որ գայս առնէին (ԺԹ. 14):

Ասէ եւ զանունն հաւրն նոցա եւ զթիւնն նոցա, տալով այնոցիկ, որ յայնժամ էին՝ նշան հաւատարմութեան գրելոցն ամենայնի: «Ջայս առնէին»՝ ասէ: Եւ զիս² ըզ արդեւք Պաւղոս ո՛չ երբեք սաստէր նոցա: Կարծեմ թերեւս անտես գոլ իրացն եւ ոչ յայտնի, զի զանխաբար գայս առնէին, մինչեւ յանդիմանեալ եղեւ տկարութիւնն նոցա, վասն որոյ այնպէս տնաւրինեալ եղեւ, զի ամենեցուն իրքն յայտնեցան: Եւ դու միտ դիր հրէական պիղծ մտացն, զիարդ մոլեալ լինէին տակաւին յետ այնչափ ներգործութեանց, յանուանէ անտի² Յիսուսի իրաւանալ կամելով. զամենայն ինչ վասն փառաց եւ ընչից առնէին, զՅիսուս ասէին եւ զՊաւղոս յաւելուին, իբրեւ մեծ զոմն կարծելով զնա: Իսկ զՅիսուս ոչ այնպէս կարծէին:

Պապասխանի եր այսն չար եւ ասէ ցնոսա. ՉՅիսուս գիպեմ եւ զՊաւղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք (ԺԹ. 15):

Եփր. Դուք, ասէ, խզեալք, ողնաբեկեալք դիւաց, ո՞վ էք, որ դիւաց ելանել հրամայէք. եւ կարճատեաց զնոսա դեւն յաջ եւ յահեակ եւ եհան ի տանէ³ անտի:

Զի վագեաց, ասէ, այրն՝ յորում էր այսն չար, եւ ըմբռնեալ գերկոսին յաղթահարեաց զնոսա, մինչեւ մերկս եւ վիրաւորս փախսել ի քանտ անտի (ԺԹ. 16):

Յոհ. Ապա ուրեմն անունն Քրիստոսի ոչ ինչ առնէ, եթէ ոչ լինի հաւատով կարգացեալ: «Որ հաւաքայն յիս, ասէ, մեծագոյնս առնէ գործս քան գոր եւ գործեմ»: Այս իսկ կատարեցաւ ի ստուեր մարմնոց առաքելոցն, եւ որ առ ի հանդերձիցն Պաւղոսի լինէին սքանչելիք⁴:

Բայց դու տե՛ս եւ զարմացիր զիս² ըզ իւրովք գործեալքն զիւրսն ակամայ կաքէր սատանայ, եւ զիս² ըզ զէնք նորա ի հակառակութիւն նմա ի կիր արկեալ եղեն. զի արժան է աստանաւր սքանչանալ, թէ «Ընդէ՞ր դեւն ոչ լինէր գործակից երդմնեցողցացն մոլորութեան, այլ կշտամբէր զնոսա եւ զխաբէութիւնն նոցա յայտնի առ-

¹ Բ սկեւայ

² Ա անդի

³ Բ ի տանի

⁴ ԱԲ սքանչելիքն

նէր»։ Ինձ թուի, թէ յոյժ սրտմտեալ. որպէս թէ մի ոք¹, որ յաղագս չարութեան եւ վատթարութեան իւրոյ ի վերջին տազնապ անկեալ եւ ի թշնամւոյ ումեմնէ տառապելոյ կշտամբեալ լինի, ոչ կարէ հանդարտել, այլ զամենայն իսկ զցասումնն ի նա կամի թափել, այնպէս լինէր անդ։

Եւ զի մի՛ թուիցի արհամարհիլ եւ դատարկանալ անունն Յիսուսի, նախ խոստովանեալ դիւին՝ ասէ. «գՅիսուս գիպեմ» (ԺԹ. 15), եւ ապա հառ իշխանութիւն ի վերայ նոցա ցուցանելով, թէ ոչ էր անուանն տկարութիւն, այլ նոցունց պատրանացն էր ամենայն. զի թէ ոչ էր այնպէս, առ Պաւղոսիւ ընդէ՞ր ոչ այսպէս /113բ/ լինէր, զոր եւ ասէր դեւն, թէ «գՊաւղոս ճանաչեմ, դուք ո՞վ էք» (ԺԹ. 15)։ Վասն որոյ կռփեաց խստագոյնս զգլուխս նոցա եւ պատառեաց զհանդերձս նոցա։ Աստ ցուցեալ լինի դիւացն զաւրութիւն մեծ իմն գոլով, յորժամ ընդ անհաւատից ունիցի կռիւ։

Եւ վասն էր ոչ ասաց, թէ ո՞վ է Յիսուս։ Քանզի երկուցեալ լինէր, զի մի եւ ինքն խստիւ տանջեսցի, այլ եւ կեղծաւորէր, իբրու զի թողութիւն լիցի նմա եւ մի մատնեսցի ի տաջանս յառաջ քան զժամանակն տանջանաց, եւ նոքա փոխարէն վրէժս գտեալ լիցին առեալ, որք խաղային ի վերայ նորա. «ԶՅիսուս գիպեմ, ասէր, եւ գՊաւղոսի ձայնն ճանաչեմ, գոր քարոզեմ» (ԺԹ. 15)։ Արդ, պարտ էր ասել, թէ զփրկիչն տիեզերաց զյարուցեալն ի մեռելոց, այլ ոչ կամին նոքա խոստովանել զփառս նորա, ըստ որում յաղթահարեալք էին ի նմանէ։ Այլ առ մոլիսն ասէին, զի դուք ոչ հաւատայք, այլ միայն անուամբն շատանայք ասել զայդ, իմք էք ահա եւ ո՛չ Քրիստոսի, դիւրայաղթք էք եւ տկարք։ Բազում էր առ նոսա ցասումն դիւին. «գՅիսուս գիպեմ» (ԺԹ. 15), ասէ, ապա դուք յամալթ լերուք ոչ գիտացեալքդ. «գՊաւղոս ճանաչեմ» (ԺԹ. 15). մի՛ կարծէք, թէ արհամարհելով ինչ զնոսա ոչ առնեմք² զասացեալդ ի ձէնջ։ Բազում էր երկիւղ դիւին, զոր ունէր յանուանէն Յիսուսի, եւ ոչ իշխէր այլ ազգ ասել կամ առնել։ Ընդէ՞ր առանց բանիցս այսոսիկ ոչ պատառեաց զհանդերձս նոցա, եւ այնպէս ելից զցասումն իւր։ Այլ քանզի երկնէր եւ գողայր յանատոյց զաւրութենէն, թերեւս եւ ոչ այնչափ զաւրացեալ լինէր, եթէ ոչ նախ ասացեալ էր զայն։

¹ ԱԲ ոք մի] մի ոք

² ԱԲ առնեմ

Արդ, տե՛ս յամենայնի զդեւան բարեմտագոյնս¹, եւ ոչ հանդգնելով հակառակախաւս եղեալ եւ ոչ ամբաստանեալ զառաքեալսն եւ² զՔրիստոս: Զի անդ ասէին «Գիտեմք զքեզ, սուրբոյ Աստուծոյ» (Մրկ. Ա. 24), եւ դարձեալ «Դո՛ւ ես Որդի Աստուծոյ» (Մրկ. Գ. 12), իսկ աստ՝ «Արքայս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են», եւ «ԶՅիսուս զիտեմ եւ զՊաւղոս ճանաչեմ» (ԺԹ. 15): Զի յոյժ երկնչելով դողային եւ ի սրբոցն եւս, զի անչափ ունէին զաւրութիւնս, ըստ որում յիշէ զՊաւղոս, զի մի՛ կրեսցէ զայն, ինչ զոր կրեսց հարցուկն, որ յաղախին: Արդ, զայնպիսի վիշտս կարէին եւ առաքեալքն հասուցանել խաբեբայիցն³: Զի թէ գործողացն զայնպիսի հարուածս, այսինքն՝ դիւացն յաղթողք⁴ էին, յոյժ մանաւանդ եւ նոցա, բայց առ ժամայն ոչ արարին. ուստի ցուցեալ լինի նոցին հեզուլթիւնն⁵, զի հալածեալք գոլով ի նոցունց՝ այնպիսի իրս չառնէին. եւ հաճեցուցեալ նոցա դեւքն՝ զնորին հակառակ ընդ նոսա գործէին:

Արդ, այս ինչ եւ⁶ առ Քրիստոսիւ եղեւ, զի անուամբ նորա եւ աւտարքն դեւս հանէին: Բայց յայնժամ ոչ եղեւ արգելեալ պատուհասիւ, զի դեռ սկիզբն էր իրացն: Նա եւ Յուդա գողացեալ ոչ լինէր պատուհասեալ, իսկ Անանիա եւ Սափիրա եւ սպանան եւս: Բազումք ի հրէիցն հակառակելով ընդ Աւետարանին՝ ոչ կրեցին չար, իսկ Ելիմաս կուրացեալ եղեւ, զի ոչ ամենեքեան աստէն դատին: Սակայն այլովք փորձուլթեամբքն, եւ այս իսկ եղեւ պիտանացու եւ յաւգուտ բազմաց:

/114ա/ Զի այս յայտնի եղեւ, ասէ, ամենայն հրէից եւ հեթանոսաց, որ բնակեալ էին յԵփեսոս, եւ անկաւ երկիրոյ յամենեսեան նոսա, զի այլ զայս մի՛ արասցեն (ԺԹ. 17):

Տե՛ս ամենայն ուրեք զմարդիկ ոչ այնպէս քաղցրագունիւք⁷ դարձուցեալ, որպէս ահագին իրաւքն⁸ եւ երկիւղիւն: Զի յորժամ Անանիա եւ Սափիրա պատուհասեցան, եղեւ երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն, եւ յայլոցն ոչ ոք իշխէր մերձենալ ի նոսա.

¹ ԱԲ բարեմագոյնս

² Բ եւ ոչ

³ ԱԲ խաբեբայիցն

⁴ ԱԲ յաղթողք

⁵ ԱԲ հեզուլթիւն

⁶ Բ > եւ

⁷ ԱԲ քաղցրագունիւքն

⁸ ԱԲ իրօք

եւ աստանաւը յորժամ վարչամակաւ եւ այլովք կտաւովք զամենայն ցաւս բժշկէին եւ զդեւան հանէին, ոչ այնպէս զգաստանային, եւ յետ այնորիկ, յորժամ դեւն զայն գործէր, յայնժամ վարչամակաւ եւ այլովք կտաւովք զամենայն ցաւս բժշկէին եւ զդեւս հանէին, ոչ այնպէս զգաստանային, եւ յետ այնորիկ, յորժամ դեւն զայն գործէր, յայնժամ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ լինէին: Եւ մեծանայր անուոնն Տեառն Յիսուսի, մինչ զի զայն, որ իբր ընդ խաղ իմն արկանելով վայրապար յիշէին, յայնմհետէ եւ ոչ միոյ ուրուք համարձակել յայն, եւ ոչ ըստ հանդիպման անգամ զանուոնն իշխէին անուանել, այնպէս անկաւ երկիւղ մեծ ի վերայ ամենեցուն:

Եւ ոչ այս միայն: «Այլ եւ բազումք ի հաւաքացելոցն գային եւ խոստովան լինէին եւ պապմէին զգործս իւրեանց» (ԺԹ. 18): Տեսանե՞ս, զի երկիւղն եւ ի խոստովանութիւն արկ զնոսա. քանզի յայտնի երեւեցոյց նոցա, թէ ամենագէտ է Աստուած, եւ նորին յառաջգիտութեան մեծագոյն իսկ նշանս այս եղեւ. յորմէ զարհուրեալ իւրաքանչիւր¹, ի խոստովանութիւն փութային նախ քան թէ առ ի դիւացն յանդիմանել, եւ անձամբ զանձինս քննէին՝ երկնչելով զի² զնոյն կրեսցեն: Զի յորժամ աւգնական եւ մարտակիրց նոցա դեւքն այսմ ամբաստանաւք իցեն, որպիսի՛ այնուհետեւ յոյս կայցէ նոցա, բայց միայն գործեցելոցն խոստովանութիւն: Զի այնչափ հաստատեալ զաւրացան ի հաւատս, զի երկնչէ³ ինչ թաքուցանել ի Պաւղոսէ, զփորձ առեալ զնորա եւ ի ձեռն դիւացն եւս առնել այնպիսի կշտամբուութիւնս: Վայելչապէս եկեալք լինէին յայն, զի խոստովանէին, եւ բովանդակ այնորիկ, որ գործէին զխարդախութիւնսն, զղջանային:

Եւ բազումք ի կախարդասարացն, որք հաւաքացին, բերէին զգիրսն, այլէին առաջի ամենեցուն, եւ համարեցան զգինս նոցա, եւ գրանէին արծաթոյ բիրս⁴ հինգ, եւ այնպէս բանն Աստուծոյ անէր եւ զաւրանայր (ԺԹ. 18-19):

Արդ, զայն ինչ առնէին, գիտելով այնուհետեւ, զի ոչ ինչ շահ էր ի նոցունց⁵, յորժամ եւ ինքեանք իսկ դեւքն զայնպիսի իրս առնէին:

¹ ԱԲ իւրաքանչիւր ոք

² ԱԲ զի մի] զի

³ ԱԲ երկնչէին

⁴ Բ բելրս] բիւրս

⁵ Բ երիցունց] եր ի ցոցունց

Արդ, այս ինչ բաւական էր զամենեսեան դարձուցանել: Բայց մի՛ սքանչանար, զի զչար եւ զանհնազանդ բարս ոչ ոք հաւանեցուցանէ: Եւ ի նոյն իսկ յերդմնեցուցչացն տեսցուք, թէ ո՞րպէս կարծր է չարութիւն, զի զայնպիսի անցս կրեալ չեղեն լաւագոյն¹: Եւ տես, այսպիսի նշանաց լինելով, թէ որպիսի չարիք յետ սակաւ ժամանակի լիեալ լինի. զի այնպէս մարդկային բնութիւնս իսկոյն ի մոռացաւանսն² դայ բարւոյն, ոչ ի հարկէ, այլ ազատ կամաւք, որովք եւ կարող է ապա եւ ողջախոհ լինել:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ մի՛ սքանչասցուք³, թէ այնպիսի նշանաց⁴ լինելով ո՛չ ամենեքեան դարձեալ եղեն. զի եւ առ մերովք ժամանակաւք յոլով ինչ այնպիսի լինի: Ո՞չ հերու թաւթափեաց Աստուած զքաղաքս ամենայն, եւ քանի ապարանք կործանեցան: /114բ/ Ուստի զարհուրեալք ամենայն չարագործք զգաստացեալք եղեն, եւ յետ երից աւուրց դարձեալ յիւրեանց⁵ չարիս վերստին դարձան: Եւ քանի՛ք ոմանք ի վտանկս⁶ եղեալք իսկոյն ի զղջումն եկին, եւ դարձեալ նոյնք եղեն: Այս իսկ մանաւանդ զկամաւ չարանայն մարդկան յայտնէ, զի թէ բնական էր, ապա եւ ոչ բնաւ իսկ փոփոխեալ լինէր ի բարին: Այլ զի քան զդեւս չար են մեղք, մի՛ խնդրեսցուք զդեւս հանել, այլ մանաւանդ ի մեղաց զանձինս եւ զայս ազատել: Յաղթեսցուք բարկութեան, տարցուք անարգանաց, եւ մեծ է քան զդեւս հանել:

[ԳԼՈՒԽ ԽԲ.]

Եւ իբրև եղև այս, եղ Պաւղոս ի մտի հոգւովն շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ Աքայիա եւ գալ յԵրուսաղէմ (ԺԹ. 21):

Ոչ եւս մարդկապէս աստանաւր անաւզուտս⁷ բարբառեալ լինի: Զի թէ պայմանաւ հաստատեալ⁸ էր անցանել անդանաւր, ոչ եւս գտեղի առեալ յամէր յԵփեսոս, եւ զաշակերտան միայն առաքէր ի Մակեդոնիա:

¹ ԱԲ լաւագոյնք

² Գ մոռացոմս

³ ԱԲ սքանչացարուք] սքանչասցուք

⁴ Բ ի նշանաց

⁵ Բ յիւրեանցն

⁶ ԱԲ ի վտանգս

⁷ Ա անօքուտ, Բ անօգուտ] անօգուտս

⁸ Ա հատատեալ

Ասէր, թէ յեպ երթալոյն իմոյ անդր, պարտ է ինձ եւ զՆոոմ փեսանել (ԺԹ. 21):

Եփր. Այսինքն զի իբրեւ տեսցէ նա զՄակեդոնիա եւ զԱքայիա, որ է Ելլադա¹, ապա դարձցի եւ եկեսցէ Երուսաղէմ. զի ոչ թողուին նմա տեսանել² զգաւառս զայսոսիկ հրեայքն՝ որ ի Հրէաստանին բնակէին:

Յոհ. Դէտ ակն ունէր նա, զի յետ այսորիկ եւ ի Հոոմ քաղաք երթիցէ եւ ուսուսցէ, զոր ահաւասիկ եւ մարգարէանայ³ ասելով. «Պարտ է ինձ եւ զՆոոմ փեսանել» (ԺԹ. 21): Թերեւս մխիթարելով զնոսա, որք յեփեսոսն էին, իբրեւ ոչ ամայի մնացեալք ի նմանէ, այլ որպէս զի դարձեալ հուպ լինելոց իցէ⁴ առ նոսա. եւ թէ պարտ է զթագաւորական քաղաքէն բուռն հարկանել, զի եւ այս եւս առ ի մխիթարութիւն էր: Այլ եւ յարուցանէ մարգարէութեամբ զանձինս աշակերտացն:

Առաքէ երկուս ի պաշտանէից իւրոց, զՏիմոթէոս եւ զԵրաստրոս ի Մակեդոնիա⁵, եւ ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա (ԺԹ. 22):

Արձակէ զաշակերտսն ի Մակեդոնիա⁶, եւ ինքն մնաց յեփեսոս, բաւականապէս դեգերելով եւ յամելով անդ, ապա փոխեալ լինի անտի: Եւ որպէս ի սկզբանէ յանձն առեալ էր յԱսորիս զնալ, նոյնպէս դարձեալ ի Մակեդոնիա դառնայ՝ ցուցեալ աստ, թէ ոչ միայն ինչ իւրով զաւրութեամբ լիեալ լինի, այլ ըստ Հոգւոյն կամաց եւ զաւրութեան: Սմին վասն յառաջ ասէր զերթն իւր ի Մակեդոնիայ վասն աշակերտացն, զի ոչ եւս ընդ երկար տեւէին մեկուսանալ ի նմանէ, ըստ որում յորդորէ զնոսա յասելն կանխաւ. «Ձի թէ յԱթէնս, ասէ, նախ փնեցար մնալ վասն ձեր, ապա եւ այժմ կանխեսցուք զգալն ի Մակեդոնիա⁷ առ ձեզ»: Եւ դարձեալ. քանզի ոչ ընդ երկար էր կալոց ի կողմանս Մակեդոնիոյ, աշակերտաւքն յառաջ առաքմամբ անդ⁸ տայ քաջալերս ակն ունել նմա: Երկուս միայն առաքէ անդ, եւ զգալուստն իւր խոստանալով՝ յաւժարագոյնս քան զամենեսեան առնէ զնոսա, եւ

¹ ԱԲ Եղլադա

² Բ տեսեալ նմա] նմա տեսանել

³ Բ մարգարէն] մարգարեանայ

⁴ Բ է] իցէ

⁵ Ա Մագեդոնիա

⁶ Ա մակեդոնիա

⁷ Ա Մակեդոնիա

⁸ Ա > եւ անդ

ինքն տակալին մնայ յԱսիա: Վայելչապէս եւ յիրաւի, զի անդ էր¹ գոռոզութիւն² իմաստասիրացն. եւ կալով լինի դարձեալ ընդ նոսա տրամաբանեալ, քանզի բազում էր երկիրդ դիցապաշտութեան նոցա, զոր եւ ընդ/115ա/երկարելով անդ՝ լուծանէր:

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ խոովութիւն, որ սակաւ վասն ճանապարհին (ԺԹ. 23):

«Ճանապարհ»՝ զգնացս Աւետարանին ասէ, իսկ «խոովութիւն»՝ զհալածանսն մեծ, որ եղև ի ձեռն Դեմետրի ոսկերչի: Զի վասն այսորիկ իսկ գրէր առ Կորնթացիսն, թէ «Ոչ կամիմ գծեզ քզէքս լինել վասն նեղութեան մերոյ եղելոյ յԱսիա» (Բ. Կրնթ. Ա. 8). քանզի խոստացեալ լինէր ի Կորնթոս զնալ եւ ո՛չ ժամանեաց փութով, պատասխանի տայ իբրեւ ոչ հեղգացեալ, այլ ի նեղութենէն խափանեալ: Եւ ասէ զփորձութիւնսն զիրսն Դեմետրի՝ որով ընդդիմաբանեալ լինէին³: Եւ այսպէս ամենայն ուրեք շարամանեալ լինէին իրողութիւնքն ի նեղութենէ եւ յանդորրու:

Իսկ Դեմետրիոս ոմն՝ անուանեալ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթի⁴ Արտեմեայ⁵ դիցն էւ քայր ճարտարացն լինել ո՛չ սակաւ շահս. որ էւ ժողովեաց իսկ գծեազէքս արուեստին էւ ասէ. Արք դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ⁶ գործոյ էր շահ մեզ: Եւ քնսանէք էւ լսէք, զի ոչ միայն զեփեսացոցս, այլ գրեթէ զամենայն իսկ Ասիա Պաւղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս, ասել թէ ոչ են աստուածք ձեռագործք (ԺԹ. 24-26):

Ո՞րպէս հնար էր մեհենատաճարս արծաթիս առնել: Թերեւս իբրեւ տապանակս փոքունս լինէր, որպէս ասի եւ տաճարս փղոսկրեայ: Արդ, բազում էր պատիւն Արտեմեայ յեփեսոսս, ուր եւ տաճար նորին երբեմն հրդեհեալ այնպէս տրտմեցոյց զնոսա, զի եւ զանուն անգամ այրեցմանն չկամէին յիշել, այլ որպէս թէ իւր կամաւք եղև այն ասէին:

¹ ԱԲ է] էր

² ԱԲ գոռոզութիւն] գոռոզութիւն

³ ԱԲ լինէին + զի թէպէտ էւ եղև նշան կրկին, այլ դարձեալ վիշտք ի վերա յառնէին:

⁴ ԱԲ արծաթիս

⁵ Բ արտեմայ

⁶ ԱԲ այսմ

Այլ տե՛ս ամենայն ուրեք զընչասիրութիւնն¹ պատճառ կռապաշտութեան, եւ նոքա որոց աղախինն վասն ընչից, եւ սոքա վասն ընչից գրգռէին² զաղմուկն: Ոչ որպէս թէ զբարեպաշտութենէ³ նոցա փոյթ ունէին տազնապել, այլ իբրու ինքեանք շահիցն⁴ առաջարկութիւն ոչ ունելով: Եւ հայեաց զչարութիւն առնն, քանզի ինքն փարթամ էր յոյժ, եւ ոչ էր նմա այնչափ վնաս եւ տուգանս անգործ մնալն, իսկ այլոցն բազում էր իբրեւ տնանգաց⁵ գոլով եւ յաւր ըստ աւրէ գործաւորութենէն կերակրելով, բայց նոքա ինչ ո՛չ ասնն, այլ ինքն՝ տես⁶, նախ զնոսա հաղորդս առնելով, ապա զվիրտս կարեացն առաջի դնէ եւ խղովէ զքաղաքն ամենայն:

Եփր. Իբրու ասէր, թէ այսուհետեւ ոչ գոյ մեզ վարձ վաճառոյ, զի գտանեաք⁷ մեք ի կոնքաց անտի, զոր առնեաք⁸: Զի ուսոյց եւ աշակերտաց Պաւղոս զԱսիա, զի հաւատասցեն, թէ ո՛չ են աստուածք, որ ի ձեռն որդւոց մարդկան իցեն արուեստագործեալ⁹: Եւ զի յայսմ արուեստէ էր մեզ կեալ, առանց այսր ահա տազնապիմք ի սով անգանել¹⁰:

Յոռ. Եւ արդ. սոյն իսկ ասացեալքս ի նմանէ բաւական էր զնոսա ի բարեպաշտութիւն ածել: Ո՞րպէս: Զի թէ մի մարդ այսպէս եւ այսչափ զաւրէ իբրու փոփոխել զամենեսեան, եւ ի տազնապի կացուցանել զիրս աստուածոցն, յայսմանէ պարտ էր զմտաւ ածել, թէ ո՞րպէս հզաւր է նորին աստուածն, եւ զի յոյժ մանաւանդ նա տացէ ձեզ զայն ինչ, յորմէ կասկածէքն, այսինքն՝ զպէտս կարեացն: Այլ նոքա տառապեալք եւ ցուրտք ոմա/115բ/նք ոչ զայս ինչ զմտաւ ածէին, այլ զայն ինչ առնէին, զոր արարին: «Տեսանէք, ասէ, եւ լսէք» (ԺԹ. 26): Զի այնպէս յայտնի էր ամենեցուն, որ ինչ եղեալ լինէր ի ձեռն Պաւղոսի: Այսպէս Պաւղոս զամենայն Ասիա հաւանեցուցեալ փոխեաց, ասէ: Այսպէս յառաջագոյն ըմբռնեաց զանձինս նոցա: Ո՛չ բռնութեամբ արար, ասէ, այլ հաւանեցոյց: Սակայն ասելն, թէ չեն աստուածք ի մարդկանէ ձեռակերտեալքն՝ կործանէ, ասէ,

¹ ԱԲ զընչասիրութիւն

² Բ գրգռեցին] գրգռէին

³ Ա բարեպաշտութենէ

⁴ Բ գշահիցն

⁵ Բ տնանկաց

⁶ Բ եւ տես

⁷ ԱԲ գտանէաք

⁸ ԱԲ առնէաք

⁹ Բ արուեստագործել

¹⁰ ԱԲ անկանել

զարուեստս մեր: Եւ ոչ զմտաւ ածէին, թէ՛ որ այնչափ կարացեալ լինի առնել, նմա պարտ է հաւանել: Այլ տե՛ս վասն որո՛յ իրի տրտնջեն հեթանոսք. «Ասաց, ասէ, թէ ի մարդկանէ եղեալքն չեն աստուածք» (հմմտ. Երմ. ԺԶ. 20): Յամենայնի յարուեստն մերձ դնէ զբանն, զի խռովեցուցէ զճարտարսն: Եւ ապա որ ինչ մանաւանդ տրտմեցուցանէր զնոսա, զայն յետոյ դնէ:

Եւ ո՛չ այս միայն, ասէ, ճգնէ զմեր կողմնս զալ ի յանդիմանութիւն, այլ եւ զմեծի աստուածոյն Արարեմեայ զմեհեանն յոչ ինչ համարեալ¹, նա եւ քակելոց եւս իցէ մեծութիւն նորա, զոր Ասիա եւ² ամենայն փրեզերք պաշտեն (ԺԹ. 27):

Այլոցն ամենայնի, ասէ, ոչ առնեմ փոյթ, այլ զի մեծի Աստուծոյ Արարեմեայ տաճարն ի տազնապի կայ կործանել: Ապա զի մի՛ թուրքի սակս իրացն վճարման ասել զայս, տե՛ս թէ զինչ յաւելլու. «Չոր բոլոր փրեզերք պաշտեն» (ԺԹ. 27) ասէ: Ի միտ առ, թէ ո՞րպէս եցոյց մեծագոյն զզաւրութիւնն³ Պաւղոսի, զամենեսեան եղկելիս, անզաւրս եւ տառապեալս երեւեցուցանելով, եւ եթէ այր մի հալածեալ խորանակար՝ այնչափ զաւրացեալ լինի: Տե՛ս առ ի թշնամեացն զմեծ վկայութիւնն զՊաւղոսէ եւ զայլոց առաքելոցն, զի կործանէին զպաշտամուսնս նոցա: Ուստի լիստրացիք անդ զուարակս եւ պսակս մատուցանէին, եւ աստ ասեն, թէ տազնապէ զմեր կողմնս զալ ի յանդիմանութիւն, զոր եւ հրեայքն ասէին, թէ «Ացէ՛ք զամենայն փրեզիս ուսմամբ ձերով» (Ե. 28), եւ զՔրիստոսէ, թէ «Աշխարհս ամենայն գկնի նորա գնաց» (Նովհ. ԺԲ. 19), եւ դարձեալ, թէ «Որք զաշխարհս խռովեցուցին, նորա եւ այսր հասին» (ԺԷ. 6):

Զայս իբրեւ լուան, լի եղնն բարկութեամբ (ԺԹ. 28):

Յորժամ յաղագս Արարեմեայ⁴ լուան եւ վասն արուեստին իւրեանց վատթարելոյ, զի այսպիսի է վաճառականաց սովորութիւն, ի հանդիպմանէ ուրեք⁵ յափշտակեալ՝ լինին բորբոքեալ, վասն որոյ եւ նա քննութեամբ բորբոքէր զնոսա, զոր պարտ էր նոցա ուղիղ քննութեամբ ի վերայ հասանել իրացն: Բայց տե՛ս եւ զնոսա դիւր-

¹ ԱԲ համարել

² ԱԲ > եւ

³ ԱԲ զգօրութիւն

⁴ ԱԲ արարեմեա

⁵ ԱԲ ուրուք] ուրեք

հալանս ոմանս եւ արհամարհելիս, որպէս զի հաճելի եղեւ կալ ամենեցուն նոցա առաջի նորայ:

Բարկութեամբ¹, ասէ, աղաղակէին եւ ասէին. Մեծ է Արփեմիս եփեսացոց: Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ (ԺԹ. 28-29):

Արդ, ձայնիւն իւրեանց կարծէին պարսպել զմոլորութիւնն² եւ ընդդէմ կալ աստուածեղէն Հոգւոյն զաւրութեան: Ճմարտապէս ըստ բանի ումեմն մանկունք անմիտք են ելլենացիք³: Փարթամութիւն մեր, ասէ, յայսմ գործոյ է, զոր Պաւղոս անվաւեր առնէ: Արդ, ո՛վ տարամիտք, ո՞րպէս հաւանեցոյց այր մի նուաստ, ո՞րպէս այնչափ յաղթեաց սովորութեանն, զի՞նչ արարեալ կամ զի՞նչ ասացեալ. զի ահա ոչ է այսչափ գործ առն միոյ: |116ա| Զի ասելն Պաւղոսի միայն՝ շատ եղեւ ճշմարտել բազում ժողովրդոց, թէ չեն «աստուածք ձեռագործք»: Արդ, եթէ այնպէս⁴ դիւրըմբռնելի է աստուածոցդ իրքն ի ձեռն բարեպաշտութեան, պարտ էր կանխաւ եւս ըստ գտեալ լինել ի ձէնջ. ապա թէ զաւրաւոր՝ ոչ այդպէս վաղվաղակի կործանել: Բայց զի յայտնի լիցի ձեզ, ո՛վ անհանճարք, թէ աստուածեղէն զաւրութիւն էր, որ ներգործէր: Տե՛ս զանիմաստան, զի որպէս մեծագոյն ինչ ասելով եւ լսելով, լի եղեն սրտմտութեամբ եւ ասէին. «Մեծ է Արփեմիս եփեսացոց» (ԺԹ. 28), քանզի ըստ քաղաքին նախնի աստուածք էին նոցունց Արտեմիսն եւ Դիոպետայն, վասն որոյ եւ այնպէս մտածեալ լինէին, զի ի ձեռն ձայնին մարթասցեն վերստին ստանալ զպաշտաւն նոցա, եւ զեղեալ հաւատան յԱստուած՝ ի բաց լուծանել:

Եւ լցաւ, ասէ, քաղաքն խռովութեամբ (ԺԹ. 29):

Տեսանե՞ս անկարգ բազմութիւն. վայրապար աստ խռովին հեթանոսք, ընդ որս խռովեցան աստ եւ հրեայք՝ որք եւ յամենայն տեղւոջ նոցունց յանդգնեցելոցն առաջի կացեալ լինէին հաւանութեամբ. այնպէս⁵ ոչ ունէին իրաւունս պատճառանաց եւ ոչ լրումն ինչ պարծանաց կամ փառաց: «Դիմեցին առ հասարակ ի թւարրոնս, յափշտա-

¹ ԱԲ բայց բարկութեմբ] բարկութեամբ

² ԱԲ զմոլորութիւն

³ ԱԲ եղդենացիք

⁴ ԱԲ այսպէս

⁵ ԱԲ > այնպէս

կնցին զԳայիոս եւ զԱրիստարքոս մակեդոնացի՝ զուղղեկիցսն¹ Պաւղոսի» (ԺԹ. 29), եւ քարչեցին զնոսս ի թէատրոն անդր, որպէս զԱստուծոս² հրեայքն:

Բայց Պաւղոս իրրեւ կամեցաւ մտնել յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն (ԺԹ. 30):

Կամէր զի մտցէ անդ հանդիսաբանել եւ զհալածանսն առնուլ ի խաւսս վարդապետութեան ի դէպ, զի լռեցուսցէ զդիւական մոլորութիւնն, որ ի կուռսն էր: Բայց աշակերտքն դիտեա, թէ որչափ յաղազս նորա նախախնամութիւն ի կիր արկանէին յամենայնի, եւ յառաջմէ իսկ հետէ տեսցես զխնամս նոցին, որպէս եւ աստ: Ի սկզբանն արտաքս հանին³ զնա⁴ ուրեք ուրեք, զի մի՛ վասն նորա խստագոյն վէրս առցեն: Այլ այժմ եւ տնաւրինաբար եւ հոգած կամաւք զիմէր Պաւղոս յաւժարութեամբ ի թէատրոնն մտանել, զի մի՛ աշակերտքն ընդ եղեալ խռովութիւնն⁵ զարհուրեսցին. որք եւ ո՛չ նմա ինչ կրել տանջանս կամեցեալ լինէին:

Ոմանք եւ⁶ յասիապեփացն, որ էին⁷ նորա⁸ բարեկամք⁹, յղէին առ նա եւ աղաչէին մի՛ փալ զանձն ի թեատրոնն¹⁰ (ԺԹ. 31):

Այսինքն՝ յանկարգ հանդիսին հոսումն, աղաչէին՝ զիտելով զյաւժարութիւնն նորա, եւ այնպէս ամենայն հաւատացեալքն սիրէին զնա, եւ Պաւղոս հաւանեալ լինէր, զի ոչ էր սնափառ եւ ոչ պատուասէր: «Այլք այլ իմն աղաղակէին. զի էր ժողովն նոցա խռովեալ» (ԺԹ. 32): Քանզի բազմութիւնն¹¹ այնպիսի¹² է, վայրապար իրացն հետեւեալ լինի, որպէս նիւթ ի հուր արկեալ զբոց խռովութեանն բորբոքէ:

Եւ ոմանք ի նոցանէ ո՛չ զիտէին, թէ վասն ոյր ժողովեալ իցեն: Եւ յամբոխն բազմութենէ յառաջ կալան զԱղէքսանդրոս (ԺԹ. 32-33):

¹ ԱԲ զուղեկիցսն

² ԱԲ զՅաստոնն

³ Ա հանէին

⁴ Ա զնայ

⁵ ԱԲ խռովութիւնն

⁶ Բ ի] եւ

⁷ Բ է] էին

⁸ Բ ի նորա

⁹ Բ բարեկամք

¹⁰ ԱԲ ի թեատրոնն

¹¹ ԱԲ բազմութիւնն

¹² Ա այնպիսի

Յառաջ ածէին զԱղէքսանդրոս հրեայքն տնաւրինաբար վասն ինքեանց, չարաբանել զՊաւղոսէ, այլ ոչ ժամանէր բարբառել ինչ: «Զի իբրև ածին, ասէ, գնա յառաջ հրեայքն, Աղէքսանդրոս շարժեաց գծնոն, կաւմէր պապասխանի առն/116բ/ել ամրոխին» (ԺԹ. 33): Եւ վասն որո՞յ իրի արդեւք կամէր Աղէքսանդրոս դարբին տալ պատասխանի, միթէ նա՞ լինէր ամբաստանեալ: Ո՛չ, զի ոչ էր նա ի գործակցացն Պաւղոսի, այլ ի ներհակացն, այլ իբրեւ ժամանակ գտեալ իւրոյ չարութեանն¹ զամենայն ինչ յետս դարձուցանել խորհէր զհաւատոցն իրս եւ առաւել բորբոքել զցասուամն հանդիսին կամէր, ըստ որում եւ նորին բանքն տնաւրինաբար խափանեալ եղեւ:

Իբրև գիպացին, ասէ, թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ ամենեցունց իբրև ժամս երկուս՝ աղաղակէին, թէ մեծ է Արքեմիս եփեսացոց (ԺԹ. 34):

Մանկական անմտութիւն² էր ճշմարտապէս տրամախոհութիւնն. իբրեւ երկնչելով, զի մի՛ շիջանիցի պաշտաւն նոցա, ստէպ գոչէին: Զամս երկուս անդ նստաւ Պաւղոս, եւ տես, թէ ո՛րքան տակաւին հեթանոսացն էր մոլութիւն եւ չարութիւն եւ ցասուամն առանց կարգի:

Բայց բարւոք եւ դպրապետն սաստկապէս յառաջ կալով լռեցոյց զամբոխն՝ տուեալ³ զհաւանութիւն քաղաքացւոցն եւ ասէ. «Արք եփեսացիք, իսկ ով է ի մարդկանէ, որ ոչ գիպէ զեփեսացոց⁴ քաղաքս քուրմս մեհենագարդս մեծին Արքեմեայ⁵ դիցն եւ Դիոպուեայ» (ԺԹ. 35), եւ կալ ումեք ընդդէմ նորա եւ խափանել ոչ ոք կարէ: Իբրեւ ոչ գոլով յայտնի վնասուց ինչ առ դիսն, յայսմիկ⁶ յառաջագոյն շիջուցին զսրտմտութիւն նոցա: Իսկ ո՞վ է Արտեմիսն: Կոյս համբաւեալ աստուածուհին, որ եւ ի տաւրացւոց եւ ի լակոնացւոց⁷ պատուիւր հիւրասպանութեամբ: Իսկ Դիոպետեայն միւս տաճարի անուն կոչեցեալ լինէր: «Ո՞վ որ, ասէ, ո՛չ ճանաչէ զեփեսացոց քաղաքս» (ԺԹ. 35): Զայն ինչ ասէր յաղագս որոյ երկուացեալն էին: «Զայնիւ ձերով ոչ ինչ աւելի աճեցուցանէք. կամ հաճելի ցուցանէք զդիսն»: Եւ ոչ ասաց, թէ ո՞

¹ Աբ չարութեան

² Աբ անմտութեան

³ Բ առեալ] տուեալ

⁴ Աբ զեփեսացւոցն

⁵ Աբ արտեմեա

⁶ Աբ յայնմ իսկ] յայսմիկ

⁷ Աբ ի ղակոնացւոց

որ է, որ ոչ ճանաչէ զԱրտեմիս, այլ թէ «գնփեսացոց քաղաքս», քանզի այն իսկ հանդարտեցոյց եւ հանճեցոյց զնոսա: Արդ, ընդէ՞ր խնդրէք զայդ իրս, ասէ, որ ամենեցուն յայտնի է: Իսկ նոքա իբրեւ բարեպաշտութիւն¹ ձեւացուցանելով ո՛չ կամէին առնել ըստ հրամանի դպրապետին²: Այլ նա ոչ եթէ հանդարտապէս բուռն հարկանէ զնոցանէ:

Եւ զի այդ այդպէս է անշուշտ, ասէ, պարտ է ձեզ հանդարտել եւ մի՛ ինչ յանդգնութիւն գործել (ԺԹ. 36):

Յուցանէ, թէ անբանապէս եկին ի միասին: «ԱՅ՛՛ք մարտուք զարտ զայդոսիկ այսր, ոչ մեհնակապուրս եւ ոչ հայիոյիս ասպուածոց մերոց» (ԺԹ. 37): Զայսոսիկ սուտ առ հանդէսն ասէ, որպէս զի նոքա լուսեցեն եւ հեզագոյնք լինիցին. զի հնարէր դադարեցուցանել զխռովութիւնն³: Զի եթէ Դեմետրիոս եւ որք ընդ նմա ճարտարքն, ասէ, ունիցին ինչ ընդ ումեք բանք, յատեան երթիցեն, եւ դատաւորք գոն, եւ ամբաստան լինիցին զմիմեանց: Իսկ եթէ վասն այլ իրիք խնդիրք իցէ, յաւրինաւոր ժողովն վճարեսցեն:

Եփր. Այս Դեմետրիոս անարգ եւ լկտի, ասէ, նա եւ մանկունք ճարտարութեան իւրոյ, թէ դատ ինչ ունիցին ընդ միմեանս՝ յառաջ կացցեն եւ ցցուցեն հողէմոնին, եւ թէ այլ ինչ խնդիր իցէ, յաւր/117ա/ինաւոր ժողովն վճարիցի:

Յոհ. Քանզի երիս ժողովս լինէր, որք ըստ ակրինացն նոցա էին յիւրաքանչիւրում ամսեան. իսկ այն առանց ակրինաց էր: Ասէ⁴, թէ ոչ էր պարտ սակս յատկական⁵ եւ չնչին ամբաստանութեանց⁶ հասարակաց ժողով առնել: Եւ այսու ապա եւս զարհուրեցոյց արհամարհեաց եւ տարակուսեցոյց զնոսա ասելով. «Քանզի եւ մեզ վիշտ վտանգի է» (ԺԹ. 40): Ի մեծ իմն աղմկի եմք, ասէ, եւ ի ծանր աշխատութիւն անկեալ: «Ընդ կոռոյս այսր աւուր առանց իրիք յանցանաց լինելոյ, գորմն ոչ կարասցուք պարասխանի փալ վասն ժողովոյս այսորիկ» (ԺԹ. 40): Ոչ միոյ իրիք պատճառի գոլով⁷ մրրկիդ այդմիկ, յազագս որոյ ոչ կարասցուք բան պատասխանելոյ հատուցանել: Տե՛ս, զիս՞րդ՝ թէ-

¹ Բ բարեպաշտութիւն

² Ա դպրապետին

³ ԱԲ զխռովութիւն

⁴ ԱԲ ասէր

⁵ Բ շինական] հատկական

⁶ ԱԲ ամբաստանութեան

⁷ ԱԲ գոլոյ

պէտ եւ անհաւատ էր տակաւին, ո՞րպէս հանճարեղ էր եւ զարժանն քննէր, որով եւ այնպէս իսկ շիջոյց զցասումնն, զի որպէս դիւրաւ բորբոքեալ եղեւ, նոյնպէս եւ դիւրաւ շիջուցեալ:

Չայս ասացեալ արձակեաց զժողովն (ԺԹ. 40):

Տեսանե՞ս զիարդ Աստուած՝ տեղի տալով փորձութեանցն գալ ի վերայ, առ ի յարուցանել արիս, եւ հմուտս գործել զաշակերտսն եւ ուժգնագոյնս առնելով ի նոյնն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի եւ մեք մի ի վայր անկցուք ի փորձութեանցն հասանել, զի նա տացէ զաւրութիւն հանդուրժելոյ: Ոչ ինչ այնպէս սիրելիք առնէ եւ ի միասին կապէ եւ ջղջէ զանձինս հաւատացելոց որպէս նեղութիւն: Նա եւ դիւրալուրս կազմէ զվշտացեալսն ի լսողութիւն աստուածային բանին. զի ի հանգսի գոլով տաղտկանան ի լսել, իսկ ի նեղութեան՝ բազում յաւժարութեամբ լսեն: Եւ թէ ասես, թէ «Հրեայքն զիս՞րդ ոչ լսէին»՝ ի կարճամտութենէ: Նախ՝ զի տկարք էին, երկրորդ՝ զի բազում էր վիշտն: Այլ աստ՝ զչափաւորէ է բանս. զի նեղութիւն յիմաստասիրութիւն յարուցանէ զնեղեալն, իսկ հանգիստ ի խայտառակութիւն գրգռէ: Նկարեա՞ տունս երկուս՝ մին սգոյ եւ միւսն հարսանեաց, եւ դարձեալ բանտ եւ տեսարանք, եւ գտցես զմին լի ամենայն համեստութեամբ, եւ զմիւսն լի ամենայն անկարգութեամբ:



¹ Գ եւ արդ] երկրորդ

² ԱԲ Ակարես] Ակարես

[ԳԼՈՒԽ ԽԳ.]

Եւ հետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պաւղոս գաշակերտսն¹ եւ մխիթարեաց (Ի. 1):

Պարտ իսկ էր լինել բազում մխիթարութեան ի խռովութենէն յայնմանէ, զոր եւ բաւականապէս արարեալ Պաւղոս եւ այնպէս արծարծեալ զհոգիս նոցա, ողջոյն ետ եւ ել գնաց ի Մակեդոնիա: «Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ եւ ընդ երկար բանի վարդապետութեան մխիթարեալ² գնոսա՝ եկն յԵլլադա³» (Ի. 2): Տե՛ս, յամենայնի ի ձեռն բանին զամենայն ինչ ուղղեալ քան թէ ի ձեռն նշանաց:

Իբրև արար անդ ամիսս երիս, եղև նմա դաւ ի հրէից, մինչդեռ կամէր ելանել յԱսորիս, խորհուրդ կալաւ դառնալ ի Մակեդոնիա (Ի. 3): Եփր. Քանզի նենգեցին հրեայքն ի վերայ նորա, կամեցաւ գնալ յԱսորիս, եւ դարձոյց գնա հոգին ի Մակեդոնիա:

Յո՛ւ Այլ զի ցուցանէ մեզ ստէպ ստէպ գնա փութացեալ յԱսորիս, որոյ պատճառն եկեղեցին էր, մեծ որ անդ եւ յԵրուսաղէմ մաւտ գոլով, բայց սակայն արգելոյր գնա փափաքն, որ վասն ուղղութեան այլոց: Բայց ահա դարձեալ հալածեալ |117թ| ի հրէիցն, որ յԵլլադա⁴ եկեալ լինի ի Մակեդոնիա: «Եւ երթային ընդ նմա մինչև յԱսիա Սոսիպատրոս Պիտիա⁵ րերիացի, եւ ի թեսաղոնեկեցոց Արիստարքոս եւ Սենկունդոս⁶ եւ Գայիոս դերբացի եւ Տիմոթէոս⁷, եւ ասիացիք՝ Տիմիկոս եւ Տրոփիմոս. սորա յառաջեալ մնային մեզ ի Տրովադա» (Ի. 4-5): Յառաջագոյն երթեալ պատրաստէին զճանապարհս նորա, այսինքն՝ զգուշացուցանէին զեկեղեցիսն կազմել, զոր ինչ միանգամ պարտ էր ուղղել զբարեկարգութիւնս⁸ նախ քան զգալ նորա: Զի ոչ փոքր ինչ էր երկիրդն ի համբաւոյ գալստեան նորա, որ ընդոստուցանէր զայնոսիկ՝ որ հանդերձեալն էին ընդունել զգալուստ նորա: Լուր նմին իսկ. «Գուցէ, ասէ, եկեալ

¹ Աբ աշակերտն

² Բ մխիթարել

³ Ա յելլադա

⁴ Աբ յելլադա

⁵ Բ պիրա

⁶ Աբ սենկունդոս

⁷ Բ տիմոթոս

⁸ Աբ զբարեկարգութիւնս

գրանիցն՝ գնեց որպէս ոչ կամիմ, եւ գրանիցն՝ ձեզ որպէս դուք ոչ կամիցիք» (Բ. Կրնթ. ԺԲ. 20):

Եւ մեր նաւեցաք յեր աուորցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ, եւ եկար առ նոսա ի Տրովադա մինչև աուորս հինգ. անդ դադարեցաք աուորս եւթն (Ի. 6):

Քանզի զտաւնսն թուի ինձ, եթէ փութայր առնել ի մեծագոյն քաղաքն փիլիպպեաց, ուր սքանչելեացն իրք, որ ըստ բանտին էր՝ եղև: Այս երրորդ անգամ գալուստ նորա ի Մակեդոնիա: Եւ քանզի բազում լաւութիւն վկայէ զփիլիպպեացն, վասն որոյ եւ անդանաւր գաւուրս ոմանս դեգերեալ լինի, իսկ հասեալ ի Տրովադա՝ դադարէ գաւուրս եւթն:

Եւ յաուր միաշարաթու մինչդեռ ժողովեալ էար բեկանել զհացն, Պաղոս խաւսէր ընդ նոսա, զի գնալոց էր ի վաղիւ անդր, եւ յերկարեաց¹ գրանսն մինչև ի մէջ գիշերին (Ի. 7):

Արդ, զի աւուրք Պենդակոստէից² էին յայնժամ, յայտ է, բայց տե՛ս³ ո՞րպէս ամենայն ինչ վարկպարազի է համարեալ առ քարոզութեամբն: Եւ քանզի կիւրակէ⁴ էր, «մինչև ի մէջ գիշերին», ասէ, խաւսեցաւ, այլ եւ զգիշերն իսկ զամենայն ի վարդապետութիւն ծախեալ, քանզի խնդիր ինչ բանի ի մէջ անկեալ՝ յերկարածգեաց զվարդապետութիւնն: Զի այնպէս եւ ո՛չ գիշերի դադարէր երբեք, այլ յայնժամ մանաւանդ վարդապետէր եւ առ նոյն իսկ ընթրեացն ժամու: Եւ տե՛ս թէ ո՞րպէս եւ սեղանոյն Պաւղոսի ամենեքեան հաղորդք էին: Ուստի թուի ինձ՝ եւ առ սեղանովն նստեալ եւ առնէր զվարդապետութիւնն⁵: Ո՛վ երանելի ընթրեացն եւ մեծի ուրախութեանն⁶, զմտաւ ածէք ինձ, ի՞մ իմիք⁷ նման էր տունն այն, ուր էին լապտերքն եւ բազմութիւն ժողովոյն, յորում եւ Պաւղոս ի մէջ նոցա գոլով՝ խաւսէր եւ վարդապետէր, յորում եւ առ պատուհանսն իսկ բազումք հասեալ լինէին, զի տեսանիցեն զեղեալսն եւ լսիցեն

¹ Բ երկարեաց

² Բ պենտակոստից

³ Բ տես թէ

⁴ Բ կիրակէ

⁵ ԱԲ զվարդապետութիւն

⁶ Բ ուրախութեան

⁷ Բ եմիք] իմիք

զձայն երկնաւոր փողոյն, եւ հայեսցին զգուարթ¹ եւ զուրախարար, զխնդալի եւ զհրեշտականման զերեսն զայն: Եւ ընդէ՞ր ի գիշերին զբանն խաւսէր: Զի հանդերձեալ էր ի վաղիւն² ելանել անտի³, եւ այնուհետեւ այլ ոչ լինէին տեսանել զնա, զորս որպէս տկարագոյնս գոլով հաստատէր: Եւ զի բազում էր հեշտութիւն լսողացն առ ի լուրն, եւ յորժամ հատուած տայր բանին՝ նոքա պատճառս տային յերկարելոյ յաւժարութեամբն, եւ պղերգացելոցն սաստէին՝ մանաւանդ զի |118ա| լուիցեն զձայնն Պաւղոսի: Վասն այնորիկ եւ ոմն մեռեալ իսկ եղեւ, քանզի հնարեցաւ բանսարկուն տրտմեցուցանել զնոսա ի տաւնին, սակայն ոչ կարաց:

Եփր. Քանզի խաւսելով Պաւղոս յառաւաւտէ մինչեւ ի մէջ գիշերի, ննջեաց պատանեակն եւ անկաւ յերից աստիճանաց⁴ զի նստէր նա անդ, եւ աւանդեաց զոգին: Եւ էջ անկաւ Պաւղոս ի վերայ նորա, եւ առկեցոյց զնա, ըստ որում պատմէ. «Էին⁵, ասէ, լապտերք բազումք ի վերնաբանն՝ ուր էար ժողովեալ, եւ նստէր ոմն երիտասարդ Եփրիոս անուն ի վերայ պարուհանին, նիրիւր ի քուն թանձրութեան: Եւ ի խաւսելն Պաւղոսի յաճախ՝ ընկղմեալ ի քնոյ անփի անկաւ յերրորդ դստիկունն ի վայր եւ բարձաւ մեռեալ: Եւ իջեալ Պաւղոս անկանէր գնովաւ, առնոյր զնա ընդ գիրկս եւ ասէր. Մի՛ խոսովիք, զի ոգի սորա ի սմին է: Եւ ել երեկ զհացն եւ ճաշակեաց, եւ բազումս եւս խաւսեցաւ մինչև ցառաւարն⁶» (Ի. 8-11):

Յոռ. Արդ, տե՛ս ինձ զտեսարանն եւ զժողովն, թէ ո՞րպէս էր ի միասին ելեալ, եւ զնշանն, թէ որպիսի⁷: Ի պատուհանի էր նստել ի տարածամ գիշերին, այնչափ էր փափաք լսողութեանն. արդ, ամաչեսցուք զայստիկ լսելով: Այլ Պաւղոս, ասեն, յայնժամ խաւսէր: Ասասցուք, թէ մանաւանդ ոչ յայնժամ եւ ոչ այժմ Պաւղոս, այլ Քրիստոս որպէս անդ՝ նոյնպէս եւ աստ. բայց ոչ ոք լսէ եւ կամ ի միտ առնու: Ոչ պատուհան այժմ, ոչ քաղց, ոչ քուն թախանձէ, այլ սակայն ոչ փափաքանաւք եւ ջերմութեամբ լսեմք, ոչ անձկութիւն տեղւոյ, եւ ոչ այլ ինչ այսպիսեաց եւ ո՛չ մի: Եւ այս իսկ է սքանչելի, զի համբակ գոլով՝ ոչ լինէր⁷ պղերգացեալ եւ ի քնոյ տազնապեալ, բայց ոչ թողեալ եւ ի բաց կացեալ, նա եւ ոչ զարհուրեցաւ ի վշտէն,

¹ Բ զգարդ] զգուարթ

² Բ վաղիւ

³ Ա անդի

⁴ ԱԲ աշտիճանաց

⁵ Բ եին] էին

⁶ ԱԲ ցառաւար

⁷ ԱԲ ցերեր] լինէր

զի մի՛ անկանիցի, ուր եւ ոչ ի պղերգութենէ ինչ նիրհեաց, այլ ի ձեռն բնական կարեացն: Եւ դու միտ դի՛ր, զի այնպէս ամենեքեան եռացեալք էին յաւժարութեամբ, յոր եւ յեռաձեղուանն էին խտացեալք թանձրութեամբ, եւ զի դեռ եկեղեցի ոչ էր անդ:

Մի գարիուրիք, ասէ, զի ոզի սորա ի սմա Է (Ի. 10):

Ոչ ասաց, թէ մեռալ՝ բայց յառնէ, զի ես յարուցանեմ զդա, այլ միայն զմխիթարական զբանն ասաց, թէ հոգի սորա ի սմին է: Ո՛վ մեծի խոնարհութեանն¹ եւ առանց հպարտութեան հոգւոյն, զի միանգամայն ընդ մխիթարական բանին զնշանսն, որ եղեւ յայնմ երեկոյի՝ ամենեւին յիշելիք առնելով նոցա, այնուհետեւ եբեկ² զհացն ճաշակեաց, եւ այլ ինչ հատուած ոչ ետ բանին եւ ոչ խափանեաց: Տե՛ս զընթրիսն առանց յաւելուածոյ³, վասն որոյ եւ խաւսէր մինչեւ յառաւատ, եւ ապա ել գնաց: Միտ դիր, թէ ո՞րպէս զցայգն արթնութեամբ անցուցանէին⁴, զի այնպիսի էին սեղանքն՝ պարկեշտութեամբ եւ լոկ, որպէս զի ճաշակեալ դարձեալ ի բաց յառնել⁵ լսողացն, եւ ի նոյն իսկ ի սեղանն յաւէտ առ լսողութիւնն⁶ ի ճահ գալ: Ի՞նչ զանազանիմք⁷ ի շանց եւ ի խոզից, ասա ինձ, տեսանէ՞ք որպիսի՞նք եւ որչափ է տարբերութիւն մեր ի նոցանէ:

Եւ ածին զպարանին կենդանի, եւ մխիթարեցան⁸ ո՛չ սակաւ (Ի. 12):

Վայելչապէս. զի կենդանի զհամբալն ընկալան եւ զյարութիւն տեսին, եւ այնպիսի նշա/118բ/ն եղեւ: Արդ. ի բազում տեղիս Պաւղոս յաշակերտացն մեկնեալ լինի, զի աւասիկ դարձեալ նա ընդ ցամաք հետի գնացեալ լինի: «Իսկ Ղուկաս եւ որ ընդ իս մտեալ ի նաւ, ամբարձար յԱսոն, եւ անտի ակն ունեար միսանգամ առնուլ զՊաւղոս, զի այնպէս պարուիրեալ էր, մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր: Եւ իբրեւ դիպեցաւ մեզ յԱսոն լի Թասոն, առեալ գնա եկար ի Միտիլինէ» (Ի. 13-14): Արդ, ի թեթեւագոյնսն զնոսա յորդորելով, եւ զխստագոյն աշխատութիւն ինքն ընդունելով՝

¹ Աբ խոնարհութեան

² Բ բեկեալ] եբեկ

³ Բ յաւելածու] յաւելուածոյ

⁴ Բ անցանէին

⁵ Բ առնել

⁶ Աբ լսողութիւն

⁷ Աբ զանազանիմք մեք

⁸ Բ մխիթարեացն

Հետի գնացեալ լինէր համանգամայն եւ բազում ինչ տնաւրիներով, կրթելով զաշակերտսն եւ խրատելով զնոսա մեկնելովն յիւրմէ:

Եւ անորի նաւեալ, *ասէ*, ի վաղի անոր հասար հանդէպ Քիայ: Եւ միւս արն հասար ի Սամոն, եւ անորի ի Տրոգիլոն, եւ ի վաղի անոր եկաք ի Միլիփոն, զի ի մորի եղեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսաւ, *այսինքն՝ նաւելով զանց առնել ընդ Եփեսոս*, որպէս զի մի՛ լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա, այլ փութայր, զի թէ հնար ինչ իցէ նմա, գաւրն պենպէկոսպէից երթալ յԵրուսաղէմ (Ի. 15-16):

Ընդէ՞ր կարգէ աստ Ղուկաս, թէ ո՛ւր եկին կամ ո՛ւր գնացին: Վայելչապէս. զի ցուցցէ մեզ զՋանն Պաւղոսի եւ զփոյթ, եթէ ո՞ւր գտեղի առեալ յամէր, եւ կամ ընդ որ կողմամբ նաւելով զանց առնէր: Եւ զպատճառս չմտանելոյն յԵփեսոս յայտնէ. զի մի՛ լիցի նմա, *ասէ*, յամել յԱսիա: Քանզի եթէ անդանաւր հասեալ էր, ոչ էր հնար զանց առնել որպէս խորհեալն էր. զի ոչ կամէր տրտմեցուցանել զայնոսիկ՝ որ աղաչէին զնա:

Եւ փութայր, *ասէ*, գաւրն պենպէկոսպէից առնել յԵրուսաղէմ (Ի. 16):

Եւ զի՞նչ էր փոյթ եւ վերացութիւն դիտմանն այնորիկ: Ոչ¹ վասն տաւնին ինչ, այլ վասն բազմութեանն² անդր ժողովելոյ համանգամայն, զի եւ այսու զհրեայն հաւատացեալս զիւրեաւ ածէր եւ ի փոյթ յորդորէր իբրեւ պատուելով իմն գտաւնան, իսկ զթշնամիսն ըմբերանելով³ յամալթ առնէր: Տեսանե՞ս եւ մարդկապէս զնա շարժեալ. «Փութայր, *ասէ*, թէ հնար ինչ իցէ.» (Ի. 16): Զի մի՛ կարծիցեն զնա ի վեր գոլ քան զբնութիւն մարդկան, տեսանելով զնա եւ փութացեալ եւ ոչ հանդիպեալ բազում անգամ: Զի սուրբքն եւ սքանչելի արքն այնորիկ նոյն բնութեանս մերոյ հաղորդք էին, բայց կամացս ոչ եւս, վասն որոյ եւ բազում շնորհս յԱստուծոյ յանձինս իւրեանց բարձեալ բերէին:

Տե՛ս ահա զՊաւղոս, թէ ո՞րչափ եւ յանձնէ իւրմէ տնաւրինէ: Զի մի՛, *ասէ*, տացուք հատուած կամեցողացն տեսանել եւ աւգտիլ ի մէնջ, եւ մի՛ յամելովն բիծ ընկալցի պաշտաւնս եւ փոյթս մեր: Ահա կենցաղ անհասանելի, եւ դարձեալ զիջութիւն ըստ ամենայնի.

¹ ԱԲ > ոչ

² ԱԲ բազմութեան

³ ԱԲ ըմբռնելով] ըմբերանելով

զայս ինչ տնաւրէնութեամբ լինի ասացեալ, որով է իսկ ի ծայրագոյն բարձրութիւն հասանել, այսինքն՝ բազում գլխով զիջմամբն: Զինա որ գերազանցեաց զամենեքումբք զպատուիրանսն Քրիստոսի լնլով, այսպէս դարձեալ ամենացունց խոնարհագոյն էր՝ ընդ ամենայնի ամենայն լինելով, զի շահեսցի զամենայն, եւ ի բազմապատիկ վիշտս տալով զանձն /119ա/ համբերութեամբ բազմաւ ի նեղութիւնս եւ այլսն: Եւ այսու ամենայնիւ բազում է փափաք նորա առ Քրիստոս. զի թէ այս ոչ իցէ, այլն ամենայն աւելորդ է: Նա եւ տնաւրէնութեանն¹ իրք պիտոյ է յառաքինութիւն եւ անհաս կենցաղոյ. եւ այսպէս ընդ ամենեցուն վշտագնել, ըստ որում ասէ. «Ո՞րք տկարանայ եւ ես ոչ տագնապիմ»:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ջանասցուք զի զայսպիսի բանս եւ մեք համարձակեսցուք գոչել, ի վիշտս ընկեսցուք զանձինս վասն եղբարց, թէպէտ հուր իցէ կամ երկաթ, ընկեա ի ներքս զանձն քո, սիրելի, զի թափեսցես զանդամն² Քրիստոսի: Աշակերտակից լեր Պաւղոսի՝ որ բազում չարչարանս յանձն առ վասն թշնամեաց: Նմանեաց Մովսէսի՝ որ ետես զրկեալ զեղբայրն եւ վրէժխնդիր եղեւ, եւ ի մեծ վիշտս զինքն արկ եւ ո՛չ ինչ զԱստուծոյ տրտնջեաց: Վշտասջիր եւ դու, հեծեա, ցաւեա, թէպէտ եւ յիրաւի զոք յԱստուծոյ տանջեալ տեսցես, զի զայս սիրէ Աստուած, զայս ուղղեցին սուրբքն՝ ցաւելով ընդ բեկումն Իսրայէլի: Եւ տե՛ս զխնամոտ սէրն Պաւղոսի ո՛րքան հնարի շահեցուցանել զամենեսեան. զի թէպէտ զնալով ոչ զնաց յԵփոսոս, վասն վերոյ ասացեալ³ պատճառին, ապա այլ ազգ տնաւրինէ զիրս նոցա, եւ ոչ վասն նոցին աւագտի պղերգանայ ինչ:

[ԳԼՈՒԽ ԽԴ.]

Ի Միլիպեայ⁴ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց զերիցունս եկեղեցւոյն, եւ իրրեւ առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիպէք (Ի 17-18):

Հայեաց ընդ մեծութիւն գլխոց նորա, զի ոչ վասն առաջիկայ փութոյն զնոսա անտես առնէ, այլ կոչելով զիշխանս եկեղեցւոյն՝ ի ձեռն

¹ ԱԲ տնօրէնութիւն

² ԱԲ գաղամն] զանդամն

³ Բ վեր ասացեալ] վերոյ ասացեալ

⁴ Ա մելիտեա

նոցա ընդ եկեղեցւոյն խաւսի: «Դուր ձեզէն գիտէք, ասէ, յարե յառաջնմէ, յորմէ եկի¹ յԱսիա ո՛րպէս զամենայն ժամանակս եղէ ընդ ձեզ ծառայել Տեառն ամենայն խոհարհուրեանք» (Ի 18-19): Արժան է զարմանալ, թէ որպէս Պաւղոս ի կարիս հարկի անկեալ զմեծամեծս ասէ յաղագս անձին իւրում: Որպէս Սամուէլ յորժամ աւանդէր Սաւուղայ զիշխանութիւնն², առաջի նորա ասէր³ զժողովուրդն. «Միթէ արի՛ ինչ ի ձէնք, դուր վկայ էք եւ Աստուած», եւ Դաւիթ ի թերահաւատայն Սաւուղայ ասէր. «Արածելով իմ զիաշինս հար իմոյ, յորժամ գայր արջ կամ առնձ⁴, ձեռամբ կալեալ բեկանէի գնոսս» (հմմտ. Սաղմ, ճԾ1, եւ ինքն իսկ Պաւղոս այլուր. «Եղէ անզգամ, զի դո՛ւր ստիպեցէք» (Բ. Կրնթ. ԺԲ. 11): Այլ եւ Աստուած իսկ զսոյն առնէ, զմեծամեծս յաղագս իւր ասելով ոչ պարզաբար, այլ յորժամ յոմանց թերահաւատեալ լինիցի. եւ զայս գտցես ընդ բազում տեղիս, որպէս զայն, թէ «Ես եմ, որ հաստատեցի զերկիր եւ արկի հիմունս երկրի» (Ես. ԾԱ. 16): Այսպէս եւ աստանաւր առնէ Պաւղոս, յառաջագոյն զնոսս ածէ ի վկայութիւն, զի մի՛ կասկածիցես, թէ «Պաճուճանաց քանք եւ երթիցեն»:

Դուր ինքնին գիտէք, ասէ (Ի 18)

զնոսին իսկ զլսաւղսն կոչէ վկայս ասացելոցն, իբրեւ ոչ⁵ արդեւք ստեալ առաջի նոցա⁶: Այս է քաջութիւն վարդապետի, յորժամ իւրոց ուղղութեանցն վկայս զաշակերտեալսն ունիցի: Եւ որ ինչ սքանչելի է, ոչ զմի աւր, ասէ, կամ զերկուս զայս առնելով կատարեցի, այլ զամենայն ժամանակս, որ եղէ ի միջի ձերում՝ ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ: Միտ դիր, թէ զի՞նչ առա/119բ/ւել պատշաճ գոյ ցուցանէ իշխանաց, ատել զամբարտաւանութիւն, վասն զի հարկ է առաջորդացն առանց բարձրամտութեան գոյ: Զի խոնարհութիւն է հիմն եւ արմատ ամենայն⁷ բարեաց, որպէս եւ Քրիստոս ասէ. «Երանի աղքատաց հոգւով» (Մտթ. Ե. 3): Եւ ոչ ասէ պարզաբար խոնարհութեամբ, այլ ամենայն խոնարհութեամբ, քանզի բազում տեսակք են խոնարհութեան, բանիւ, գործով, առ իշխանս, առ իշխեցեալս, եւ այլ բազում յեղանակս ասացէ ոք խոնարհութեան: Արդ,

¹ ԱԲ > յորմէ եկի

² ԱԲ զիշխանութիւն

³ ԱԲ ասէ

⁴ ԱԲ առիւծ

⁵ ԱԲ > ոչ

⁶ Բ նորա

⁷ ԱԲ ամէն] ամենայն

են ոմանք, որ ոչ են այսպիսիք, եւ զի մի՛ թուիցին բարձրամտեալք, յառաջ արկանեն Հիմն խոնարհութեան զլսողացն կարծիս լուծանելով միայն: Իսկ սա ամենայն խոնարհութեամբ եղէ, ասէ, եւ այժմ ոչ ի բարձրամտութենէ ասեմ, զոր ինչ ասեմ: Եւ որ եւս հանդարտագոյնն է՝ յաւելու. յամենայնի հաղորդութեամբ բազմաւ եղէ ընդ ձեզ, ասէ, ծառայելով Տեառն: Հասարակաց առնէ զուղղութիւնն¹ եւ ոչ ինքեան առանձինն:

Եւ զի՞նչ, ասեն, ունէր առ Աստուած բարձրամտեալ: Ասեմ, զի բազումք են ի մարդկանէ, որ հպարտացեալ բարձրամտեն առ նմա, իսկ նա եւ ոչ առ աշակերտսն եղեւ բարձրամտեալ: Այս իսկ է ուղղութիւն վարդապետի, զի իւրոց ուղղութեանցն զաշակերտսն համեմատս առնիցէ: Ապա եւ յարիութենէն ասէ, ոչ փաղաքշելով ինչ, այլ ի նոյն զնոսա յորդորելով:

Բագում արքայաւոր, ասէ, եւ պէսպէս փորձութեամբք, որ դիպեցան ինձ ի նենգութեանց հրէից (Ի 19):

Տեսանե՞ս, զի վշտանայ եւ ցաւագնի վասն եղելոցն՝ տեսանելով զանհաւատութիւնն նոցա: Բայց աստ եւ զանյիշազարութիւնն թուի յայտ առնել, քանզի յոյժ ախտացեալ լինէր վասն կորուսելոցն՝ որ նենգութիւնս առնէին առ նմա: Նա եւ խնդայր եւս, զի յայնմ դասէ էր՝ որ խնդային, զի վասն անուանն Քրիստոսի արժանի եղեն անարգելոյ, զոր եւ ինքն ասէ. «Այժմ խնդամ ի չարչարանս իմ, որ վասն ձեր է» (Վոց. Ա. 24): Եւ դարձեալ, թէ «Առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ ի յաւիտենական առաւելութիւնն² գմեծութիւն փառացն գործէ ի մեզ» (Բ. Կրնթ. Գ. 17): Այլ զայսոսիկ թեթեւ նեղութիւն ասէ խոնարհելով, եւ աստ ցուցանէ զարիութիւնն³ իւր, եւ ոչ այնչափ զարիութիւնն, որչափ զհամբերութիւնն⁴: Չարաչար ախտացեալ լինէի, ասէ, այլ ձեւք հանդերձ, եւ որ դժուարին էր, ի ձեռն հրէից՝ ասէ: Այսու զսէրն իւր եզ եւ զարիութիւնն:

Տե՛ս աստանաւր պատկեր, նկարագիր վարդապետութեան, եւ զի՞նչ այն. «Որպէս ոչ ինչ գանգիտեցի, ասէ, յազարկարացն չպարմել ձեզ» (Ի 20): Յուցանելով այսու, թէ առանց մախանաց էր եւ առանց դանդաղութեան եւ լի պատշաճաւորաւքն: Քանզի է ինչ որ ոչ է պարտ՝ եւ

¹ ԱԲ ուղղութիւն

² ԱԲ առաւելութիւն

³ ԱԲ զարութիւն] զարիութիւն

⁴ ԱԲ զհամբերութիւն

ոչ կարաւտանայր ուսուցանել: Զի որպէս թաքուցանելն¹ զպիտանացուսն իրս մախանաց է, նոյնպէս եւ զամենայն ասել տարտամութեան է, սմին վասն յաւել զաւգտակարսն: Եւ ոչ ասացի միայն, ասէ, այլ եւ ուսուցի, զի եւ ոչ զնոյնս զայսոսիկ յանձնէ ի բաց եզի: Եւ զի զայս իսկ ցուցանէ, տե՛ս զինչ ասէ. «Պարմնի ձեզ եւ ուսուց/120ա/անել ձեզ հրապարակաւ եւ առօրին» (Ի 20): Այսու զբազում տառապանսն իւր եւ զյոյրով փոյթն եւ զյաւժարութիւնն² ցուցանէ:

Տալ վկայութիւն, ասէ, հրէից եւ հեթանոսաց (Ի 21):

Յայսմանէ ուսցուք եւ մեք, զի թէպէտ եւ ոչ ինչ շահեցուցանեմք, սակայն ասել պարտ է. զի վկայութիւն տալն այս իսկ է, յորժամ առ այնոսիկ խաւսեսցուք՝ որ ոչ առնուն ի միտ: «Վկայեցուցանեմ, ասէ Մովսէս, զերկինս եւ զերկիր», եւ աստ Պաւղոս, թէ «Վկայութիւն փայլով հրէից եւ հեթանոսաց գապաշխարութիւնն³, որ առ Աստուած» (Ի 21): Զի՞նչ է արդեւք, զոր վկայեցուցանես: Որպէս զի կենաց⁴ ուղղութեան եւ բարեաց գործոց փոյթ առնիցեն, եւ զղջացեալ ի գործս իւրեանց եկեսցեն առ Աստուած: Զի եւ ոչ հրեայքն իսկ գիտէին զԱստուած որպէս պարտն էր գիտել, վասն գործոցն իսկ իւրեանց վատթարաց, եւ վասն զՈրդին Աստուծոյ ոչ գիտելոյ, որով է եւ զՀայր գիտել, զոր եւ ասէ առ նմին, եւ զհաւատսն, որ ի Տէր Յիսուս Քրիստոս: Արդ, վասն այսորիկ ասեմ զայսոսիկ⁵, վասն ոչ հաւանելոցն ունիմ մեծապէս ամբաստանել:

Եւ քանզի յառաջագոյն ասաբեկեաց զնոսա ասացելովքս, ապա ի վերայ էած. «Եւ արդ աւասիկ եւ կապեալ հոգւովն երթամ յերուսաղեմ, եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ, չգիտեմ» (Ի 22): Վասն էր ասէ զայս: Զի կամի զնոսա պատրաստ գոլ հանապազ ի նոյն, այսինքն՝ վշտաց ակն ունել հանապազ եւ հոգւոյն հպատակ կալ: Ապաքէն ա՛յպէս գնաս անդ իբրեւ անգէ՞օ, քաւ լիցի, այլ գիտեմ, զի առ մեծամեծ նեղութիւնս ածեալ լինիմ:

Քանզի հոգին Սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ եւ ասէ, թէ որպիսի դժուարին կապանք եւ նեղութիւնք մնան քեզ (հմմտ. Ի 23):

¹ ԱԲ թագուցանելն

² ԱԲ գյօժարութիւն

³ ԱԲ գապաշխարութիւն

⁴ Ա զկենաց] զի կենաց

⁵ ԱԲ + զի գոյն իսկ զայսոսիկ

Բայց զայս ասեմ, զի եւ դուք միշտ նեղութեան սպասել ակն ունիցիր, թէպէտ եւ առ ձեռն ոչ իցէ: Եւ զի մի՛ կարծիցէք ողբալով իմ գայտոսիկ ասել, «Զի ո՛չ իւրք համարիմ գանձն իմ պարուական որպէս կապարել զընթացս իմ ուրախութեամբ եւ զպաշտանն, զոր առի ի Տեառնէ Յիսուսէ» (Ի 24): Տեսանե՞ս, զի ո՛չ պարծանաց եւ ո՛չ ողբոց են բանքս այսոքիկ, այլ խոնարհութեան եւ խրատելոյ զնոսա եւ իւր չարչարակցելոյ նոցա յայնոսիկ՝ որ ինչ լինելոց էին, այսինքն՝ ի գալոյ ծանունցն՝ գալոց եւ զթիւրն՝ խաւսողաց: Եւ ոչ ասաց, թէ նեղեմք¹ եւ վշտանամք³, բայց պարտ է համբերել: Եւ ոչ մեծարելով ինչ զանձն իւր խաւսի, այլ ուսուցանելով զնոսա ի ձեռն առաջնոց բանիցն⁴ զխոնարհութիւնն⁵ իւր եւ զարիւտութիւնն եւ զհամարձակութիւնն⁶: Այսինքն ոչ սիրեմ զանձն իմ եւ ոչ նախապատուեմ, քան թէ կատարել⁷ զընթացս իմ ուրախութեամբ եւ զպաշտանն Յիսուսի: Զայսոսիկ ասելով յարուցանէ զանձինս նոցա, եւ հաւանեցուցանէ մի՛ միայն ոչ լինել փախստական, այլ եւ արիաբար կրել զամենայն, վասն որոյ եւ ընթացս «զպաշտանն» կոչէ, միովն ցուցեալ զպայծառութիւն եւ զփոյթ ընթացիցն, վասն որոյ եւ ընթացս ասէ, եւ միւսովն զպարտս պաշտամանն: Պաշտանեայ եմ, ասէ, եւ զայսոսիկ ճեպիմ կատարել⁸, եւ ոչ ինչ առաւել քան զայս խնդրեմ:

Եփր. Զի իբրեւ սկսաւ ասել՝ ճշմարտիւ զինչ անցք անց/120բ/անելոց էին ընդ նա յԵրուսաղէմ ի քահանայից եւ ի դպրաց, բայց նա վասն սրբոցն⁹, որ էին յԵրուսաղէմ՝ երթայր մխիթարել զնոսա, եւ դարձեալ զի ցուցցէ, թէ՛ չարչարանք ոչ երկեցուցանեն ինչ զնա, զի ահա անխիղճ յաներկիւղ առանց զանգիտելոյ ընդ առաջ փութացեալ երթայր ընդդէմ նեղութեանց: Բայց սակայն յաւել եւ ասէ, թէ «չէ համարեալ ինձ անձն իմ պատուական քան զվաստակս Աւետարանին կենաց եւ քան զպաշտանն Աւետարանին բանի, որ ի Տեառնէ մերմէ ընկալայ», այսինքն՝ զի վկայեցից հրէից եւ հեթանոսաց:

¹ ԱԲ գթելրն

² ԱԲ նեղիմք

³ ԱԲ > եւ վշտանամք

⁴ ԱԲ բանից

⁵ ԱԲ զխոնարհութիւն

⁶ Ա զհամարձակութիւն

⁷ Բ կատարեալ

⁸ Բ կատարեալ

⁹ ԱԲ սրբոց

Յոհ. Եւ տես՝ ո՛չ ասաց քարոզել կամ ուսուցանել, այլ վկայ լինել Աւետարանի շնորհացն Աստուծոյ: Եւ այսու մխիթարէ զնոսա, զի մի՛ ինչ ցաւագնեալ լիցին ի վիշտս չարչարանաց անկանելով:

Եփր. Եւ քանզի հանդերձեալ էր ծանրագոյն ինչ ասել, թէ «Սուրբ եմ եւ յարեմ ձեր ամենեցուն» (Ի 26), զի ոչ ինչ յիմոցն պակասեցուցի խրատուց, եւ զի զամենայն նեղութիւնս համբերեցի փոխանակ Աւետարանին, զոր աւետարանեմ ձեզ», զի ոչ եկի յայլ խորհուրդ, այլ յայս միայն, զի մրցելով իմ ընդ մահ եւ ընդ կեանս զաւգուտն ձեր գուշակեցի ձեզ:

Յոհ.¹ Եւ զի հանդերձեալ էր այսու ի վերայ նոցա ընկենու զամենայն ծանրութիւն եւ զբեռն, վասն որոյ յառաջագոյն կակղէ զմիտս նոցա ասելով. «Եւ արդ աւասիկ գիտեմ եւ, թէ ոչ եւս փեսանեցոց էք զերեսս իմ դուր ամենեքեան, յորս շրջեացայ քարոզել զարքայութիւնն² Աստուծոյ» (Ի 25): Կրկին է մխիթարութիւնս. զի զորս ոչ զիտէին, յայտնէ նոցա, թէ «Ոչ եւս փեսանեք զերեսս իմ» (Ի 25): Եւ «զերեսսն» ասելով ոչ տեսանել նոցա, յայտ առնէ, թէ հոգևով եւ մտաւք ընդ ձեզ եմ: Եւ վայելչապէս վկայութիւն դնել ձեզ ասացի, ասէ, զի ոչ եւս եմ հանդերձեալ գալ առ ձեզ:

Վասն որոյ վկայութիւն դնեմ յաւուրս յայսմիկ, զի սուրբ եմ եւ յարեմ ամենեցուն ձեր, քանզի ոչ խորշեալ վեհերեցայ ինչ պարմել ձեզ զամենայն կամս Աստուծոյ (Ի 26-27):

Տեսանե՞ս, թէ ո՞րպէս երկեցուցանէ, եւ մանաւանդ զբաւէ զնոսա ի հարկ, յաշխատութիւն³ տալ զանձինս եւ ի նեղութիւն⁴, եւ ամփոփս լինել յամենայն զբաղմանց: Այլ ցուցանէ եւ հարկս⁵ զիրսն համարել, այսինքն՝ խրատել եւ ոչ երբեք լռել յասելոյ: Ապա ուրեմն, որ ոչ խրատէ հանապազ՝ յայտ է, թէ պարտական գտանի արեան նոցա, այսինքն՝ մահու նոցա: Զսոյն իսկ զայս եւ ցմարգարէն ասէր Աստուած, թէ «Թէ զարիւնս ի քոց խնդրեցից ձեռաց», ցուցանէ այսոքիւք⁶, զի թէ զոր ինքն արար եւ նորա զայն ոչ առնիցեն, պարտապան⁷

¹ Գ > յոհ.

² ԱԲ զարքայութիւն

³ ԱԲ յաշխատութիւնս

⁴ ԱԲ ի նեղութիւնս

⁵ Բ հարկ

⁶ Ա այսոքիք

⁷ ԱԲ պարտական] պարտապան

արեան ինքեանք¹ գտանիցին: Եւ թուի պատասխանի նոցա տալ զասելն, թէ «Ո՛չ երբեք հեղզացայ կամ դանդաղեցայ չպարմել² ձեզ զամենայն կամս Աստուծոյ» (Ի 27), յայտ է, զոր յաղագս հասեալ իրացս, որ գան ի վերայ մեր կամաւքն Աստուծոյ, որովք հնարի ուղղել զմեզ առ ի փրկութիւն նեղութեամբ կամ ընդարձակութեամբք, որ թէպէտ մի են կամքն ըստ դիտողութեան, այսինքն՝ փրկութիւն մեր, այլ զանազնեալ են ըստ տեսակի, վասն որոյ եւ զամենայն կամս, ասէ, զԱստուծոյ պատմեցի ձեզ, եւ վասն ճշմարիտ առաքինութեան, զոր պարտ է ուղղել մեզ ըստ կամացն Աստուծոյ:

Եփր. Բայց ա/121ա/պա եւ առաւել զարհուրեցուցանէ զնոսա եւ ի զգուշութիւն ածէ: Զի առ փորձութիւնսն հանդերձեալս, որ յետ մեկնելոյ նորա էր գալոց, արիաբար զամենայն զնորայսն յանձին բարիցեն զքաջութիւն: Սմին վասն եւ ասէ անդէն. «Զգոյ՛ լերուք անձանց եւ ամենայն հաւրիդ, յորում եղ զձեզ հոգին Սուրբ փեսուսս հովել³ զժողովորդ Տեսոն, զոր ապրեցոյց արեամբն իւրով» (Ի 28):

Յոհ. Երկուս իրս հրամայէ նոցա, այսինքն՝ եւ անձանց հոգ տանել առ ի փրկութիւն, եւ ժողովրդեանն, զի վարդապետի ոչ զայլս միայն ուղղել շահ ինչ ունի: «Երկնչիմ, ասէ, գուցէ որ այլոց քարոզեցի, եւ ինքն անպիտան գրանիցիմ» (Ա. Կրնթ. Թ. 27): Այլ եւ ոչ անձին իւրում միայն փոյթ առնելն ունի ինչ փրկութիւն, զի ինքնասէր է այնպիսին, զանձին միայն խնդրէ զաւգուտ, նմանեալ այնմ, որ զքանքարն յերկրի թաքոյց⁴: Քանզի ոչ նախապատուելի է մերս փրկութիւն քան զհաւտին. այլ յորժամ մեզ ինքեան հոգասցուք, յայնժամ եւ զհաւտին փրկութիւն խնդրեսցուք:

Յորում եղ, ասէ, զձեզ հոգին Սուրբ (Ի 28):

Տեսանե՞ս՝ առ ի Հոգւոյն ունել զձեռնադրութիւն. հովել ասէ զեկեղեցի Տեսոն: Ահաւասիկ եւ այլ իմն կարեւոր եւ մեծ, զի «Տեսոն է եկեղեցին» ասէ: Եւ երրորդ⁵ փութոյ կարիս. «Զոր ապրեցոյց արեամբն իւրով» (Ի 28) ասէ, ցուցանէ յոյժ մեծ եւ պատուական զիրսն, զի ոչ եթէ յաղագս փոքու իմն է տագնապս, այլ վասն այնմիկ՝ յաղագս որոյ Տէրն եւ զարիւնն իւր ոչ խնայեաց: Բայց այսու եւ մեծապէս

¹ Բ ինքեան

² ԱԲ պատմել] չպատմել

³ Ա հովել, Բ հովուել] հովուել

⁴ ԱԲ թաքոյց

⁵ ԱԲ երկրորդ] երրորդ

մխիթարէ զնոսա, զի թէ իւրով արեամբն ապրեցոյց զմեզ, ասէ, ապա եւ պաշտպան եւ փրկիչ մեզ լիցի առանց պատճառի: Եւ արդ՝ նա զի զթշնամիսն հաշտեցուցէ զարիւնն եհեղ, դու եւ ոչ զբարեկա՞ման¹ լիեալս կամիս հոգալ եւ պահել:

Եփր. Եւ զի հովիւս կարգեալս ի Հոգւոյն ասաց զնոսա, որպէս Տէրն զՊետրոս, վասն որոյ թէպէտ զստութեան առաքելոցն մարգարէանայ², որ³ հանդերձեալ էին աստանդել զճանապարհ⁴ կենացն, սակայն զկարգ ասացելոցն պահելով ճահողակի գհետ բերէ. «Քանզի զիպեմ, ասէ, թէ յեր իմոյ ելանելոյս գայցեն գայլը յափշտակաւոր՝ որ ոչ խնայեսցեն ի հաւոր» (Ի 29): Դարձեալ յայլ կողմ աւասիկ⁵ դարձուցանէ, եւ հրամայէ արթուն եւ պատրաստ կալ եւ երկնչել յիրացն, որ լինելոց են, որպէս յորժամ ասէ, թէ «Ոչ է մեզ կուր ընդ արիւն եւ ընդ մարմին, այլ ընդ այս ինչ եւ ընդ այս»: «Եկեսցեն, ասէ, գայլը ծանունը յեր իմոյ գնալոյս» (հմմտ. Ի 29):

Յոհ. Ո՛վ մեծ վտանգիս, զի աւասիկ կրկին են չարիքդ, զի դու մաւտ ոչ լինիցիս, եւ գայլքն ի վերայ հասանիցեն: Արդ, ընդէ՞ր զնայցես՝ զայս յառաջագոյն գիտելով: «Զի Հոգին, ասէ, ձգէ զիս», «Կապեալ հոգովն երթամ» (Ի 22), ասէ: Եւ արդ զի՞նչ այնչափ վարկանիս զանձն քո, զի թէ զնայցես՝ մեռանիցի՞մք: Ոչ զայս ինչ ասեմ, ասէ, թէ հեռանալս իմ զայս գործէ: Այլ զի՞նչ. «Յարիցեն ի վերայ գայլը յափշտակաւոր», եւ ոչ ասաց, թէ վասն իմոյ հեռանալոյն, այլ յետ իմոյ հեռանալոյն, այսինքն՝ յետ իմոյ գնալոյն: Եւ մանաւանդ եւ յայնժամ եղեւ այս մինչդեռ ինքն ընդ |121բ| նոսա էր, բայց յետ այնորիկ կարի յոյժ:

Եւ ապա որ ինչ դժուարագոյնն էր, յաւելու, եւ որպէս որ ինչ յետ Մովսէսի եւ Յեսուայ ասացաւ խոտորել ժողովրդեանն, նոյնպէս եւ անդ ցուցանէ: «Եւ ի ձևն, ասէ, յարիցեն արք՝ որ խաւսիցին թիրս» (Ի 30): Ո՛րքան ծանր եւ դժուարին են իրքն⁶, յորժամ ազգական իցէ մարտն, որում մեծ ջան եւ առաւել արթնութիւն պիտոյ է յիրար: Քանզի եկեղեցի է, որով մեծ իսկ է տազնապս, եւ զի արեամբ իւրով Տէրն փրկեաց զնա, վասն որոյ ուժգին պարտ⁷ է մարտնչել ընդդէմ յափշ-

¹ ԱԲ բարեկամս

² Բ մարգարէն] մարգարեանայ

³ Բ յոր

⁴ Բ զճանապարհս

⁵ ԱԲ ահաւասիկ] աւասիկ

⁶ ԱԲ իրքս

⁷ Բ մարտ] պարտ

տակողացն եւ գայլոց: Նա եւ կրկին իսկ է լինելոց մարտ, արտաքուստ ի գայլոցն եւ ներքուստ ի ձէնջ:

Ապա եւ զպատճառն իսկ յաւելու. «Ձգել, ասէ, զաշակերպսն զկնի իրեանց» (Ի 30): Քանզի ոչ եթէ վասն այլոյ իրիք եղեն ոմանք հերձուածք, այլ միայն վասն այսոցիկ¹, որով ի փառասիրութիւն եւ ի հպարտութիւն գային: Եւ ոչ ի Կորնթոս միայն զայս առնէին, զի զաշակերտսն բաժանէին, այլեւ յԱսիա: Բայց զեփեսացիս ոչ այնպէս նախատէ գրելով առ նոսա, զի ոչ երբեք եղեւ հարկ եւ կարիս գրել ինչ: Իսկ Կորնթացւոցն ասէր, թէ «Ոչ արգելան պարծանքս իմ ի կողմանս արայցուոց» (Բ. Կրնթ. Ա. 10): Այլ զի աւցտեն գայլքն, զի՞նչ իցէ այսմիկ մխիթարութիւն՝ ասա մեզ:

Վասն այսորիկ արթուն կացէք եւ յիշեցէք, զի գամս երկուս ոչ դադարեցի արքասուաւք խրապել գմի մի իրաքանչիւր որ ի ձէնջ (հմմտ. Ի 31):

Տե՛ս, թէ ո՞րքան գերագանցութեամբ են եղեալքդ. արտասուաւք, զցայգ եւ զցերեկ, եւ զիւրաքանչիւր ոք: Ո՛վ մեծութեան հոգւոյն, զի ոչ թէ յորժամ զբազուամս ոչ տեսանէր, յայնժամ խնայէր յիրս առնելոյ եւ ասելոյ, այլ հանդերձ բազմաւքն՝ գիտէր եւ յաղագս միոյ անձին զամենայն ինչ առնել: Արդ, այսպէս զնոսա ի միասին եւ հաւաքեաց եւ արար մի՛ եկեղեցի: Շատ եւ բաւական են, ասէ, այսոքիկ յինչն ձեզ աւրինակ լինել, զի զերկամեայ ժամանակ կացի մնացի ի միջի ձերում, որով բաւականապէս հաստատեցայք, ասէ, եւ հզաւրապէս արմատցայք: Տեսանե՞՞ս, զի արտասուքն վասն այնորիկ էին: Զի յորժամ զղջանայցէ եւ ցաւագնի չարն, ցաւագնեա եւ արտասուեա դու, թերեւս բեկեալ խոնարհի եւ ի միտ առնուցու եւ նա: Որպէս եւ հիւանդք, յորժամ բժիշկս² հաղորդեալ ի կերակուրս դեղոցն՝ եւ ինքեանք յորդորեցին: Սոյնպէս եւ աստ, յորժամ տապացեալն չարութեամբ տեսանիցէ զքեզ հառաչելով, կակղանայ, զիջանէ, քաղցրանայ եւ ի մեծ առողջութիւն գայ հոգին:

Ի փուլ եւ ի գիշերի, ասէ, ոչ դադարեցի արքասուաւք խրապել գիրաքանչիւր որ (հմմտ. Ի 31):

¹ Աբ այսորիկ

² Աբ տեսանիցեն զբժիշկս] բժիշկս

Այսօրիկ թերեւս վասն մեր վայելչապէս ասացեալ եղեն. եւ թուի իսկ յատկապէս վասն վարդապետաց գոլ զբանս: Բայց է¹ հասարակաբար եւ առ աշակերտան, քանզի զի²նչ այլ ասէ, քան թէ այսպէս, զոր այժմ յիսս տեսանէք առնել: Ապա թէ ոք ասիցէ, թէ ես ասեմ իսկ եւ աղաչեմ, եւ արտասուեմ ի տուէ եւ ի գիշերի, այլ աշակերտն ոչ հա/122ա/ւանի: Այլ վասն այսօրիկ ասէ, թէ «Ակայութիւն դնեմ յաւուրս յայսմիկ, զի դու ուսանիցիս²» (Ի 26), զոր եւ ինքն ասէ, թէ «Սուրբ եմ ես յարնել ամենեցուն, զի ոչ դանդաղեցայ պարսնի ձեզ զկամս Աստուծոյ» (Ի 27): Զի այս իսկ է վարդապետի, քարոզել եւ ուսուցանել, ոչ դադարել զցայգ եւ զցերեկ, իսկ յոչ հաւանիլ լսողաց զհետ գայ այն, թէ «Սուրբ եմ ես յարնել ամենեցուն (Ի 27), զոր պարտն էր առնել՝ արարի:

ՅՈՐԴՈՐԱԿ

Արդ, Պաւղոսի, որ զամենայն ինչ վասն փրկութեան աշակերտելոցն համբերէր, պատշաճ էր զայս ասել³, թէ «Սուրբ եմ ես յարնել ամենեցուն»: Այլ մեք զի բիւրս⁴ գիտեմք զանձանց, զայս ոչ համարձակիմք ասել, այլ զՄովսէսին, թէ «Ինձ բարկացաւ Տէր վասն ձեր» (Բ. Օրին. Ա. 37): Զի ահաւասիկ զաւր հանապազ պատառեալ լինիմ գոչելով. Ի բաց կացէ՛ք ի տեսարանաց, յերզնլոյ, յազահելոյ, եւ ոչ լսեն, կամ ծիծաղին զմեւք⁵: Եւ հաւատացէք ինձ, զի վասն իմոյ փրկութեան թողեալ՝ զձերն ողբամ, զի զի⁶նչ յոյս իցէ վարդապետի, յորժամ հաւտն ապականեալ իցէ, զիա՞րդ⁶ կացցէ առաջի Աստուծոյ: Նա, թէ եւ մաքուր իցէ յարնել ամենեցուն, այլ եւ այնպէս զանբոյժ սրտմտութիւնն⁷ կրիցէ. զի եւ հարք յաղազս մանկանց զանբժշկականն ախտացելոց՝ խռովին եւ զկծին, թէպէտ եւ ինքեանք ոչ լինին⁸ մեղադրեալք. այսպէս ամենայն ինչ դուք իմ էք⁹: Եղիցի ձեզ ապրել, եւ ինձ հատուցանել վասն ձեր պատասխանի, զի եւ առ բազում սիրոյն, որ առ ձեզ, ոչ հոգամ, զի ի ձեռն իմ կեցէք, այլ զի կեցէք՝ ի ձեռն ում եւ իցէ:

¹ Աբ > է

² Աբ ուսուցանիցիս] ուսանիցիս

³ Բ գասել] գայս ասել

⁴ Բ բելր

⁵ Գ գմեղօք] գմելք

⁶ Բ եւ զիարդ

⁷ Աբ տրտմութիւն] սրտմտութիւնն

⁸ Բ լիմի

⁹ Աբ էք իմ] իմ էք

[ԳՆՈՒԽ ԽԵ.]

Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա, որ կարաւոյն է շինել եւ քալ ժառանգութիւն ընդ սուրբս ամենայն (Ի 32):

Զոր ինչ ի թուղթսն գրելով առնէր Պաւղոս, նոյնպէս եւ խորհրդակցելով զողոքական յորդորումնն յաղաւթս¹ կատարէ, քանզի յոյժ երկիրդ էարկ նոցա ասելովն, թէ «Գայցն գայլք յափշտակաւոր» (Ի 29), զի մի՛ առաւել զարհուրեցուցէ զնոսա՝ ածէ ի վերայ զմխիթարութիւնն², «Եւ այժմ, ասէ, որպէս եւ հանապազ, յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա»: Շնորհքն, ասէ, կեցուցանէ զձեզ: Ստէպ յիշեցուցանէ նոցա զշնորհսն, որով հասին ազատութեան եւ կենաց. փութագոյնս այսու առնելով զնոսա իբրեւ պարտապանս, եւ հաւանեցուցանելով վստահանեալ յայն՝ որ կարաւոյն է վերստին շինել, ցուցանելով, թէ շինեալ եղեն Աստուծով: Եւ ապա վերստին զհանդերձելոցն յոյսն յիշեցուցանէ. «Տալ ձեզ, ասէ, ժառանգութիւն ընդ սուրբս ամենայն» (Ի 32), որով եւ ուսուցանէ եւս, թէ պարտ է այնմ յուսով չարչարակից լինել սրբոցն:

Ապա դարձեալ ի յորդորումն ածէ զբանն՝ ասելով. «Արձաթոյ կամ³ ոսկոյ կամ հանդերձից ո՛չ ուրուք ի ձեռք ցանկացայ» (Ի 33): Զարմատն ամենայն չարեաց ի բաց խլէ զարծաթսիրութիւնն⁴: Եւ ոչ ասաց, թէ ո՛չ առի, այլ թէ «ո՛չ ցանկացայ» (Ի 33): Եւ ոչ ասաց⁵, թէ՛ ո՛չ ետուք, այլ թէ բնաւ իսկ «ո՛չ ցանկացայ»⁶, զի մի թուկիցի ի չտալոյ նոցա գոլ չառնուլն: Եւ ոչ ասաց, թէ ոչ եւ միոյ իրաց ցանկացայ ի հարկաւորացն, զի մի՛ |122բ| դարձեալ համարիցին, թէ չարախաւսէ զնոցանէ: Բայց զսոյն իսկ լինի նշանակեալ ի վերայ ածելովն զայն, որ յոյժ մեծն է քան զայսոսիկ չառնուլն, այսինքն՝ զայլս ոմանս կերակրելն, եւ զայն յիւրական երկոց, զոր «Դուք ինքնին գիտք, ասէ, զի զպէսս իմ եւ որոց ընդ իս էին՝ պաշտնցին ձեռքս այս, եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է վաստակել եւ դարմանել զհիւանդս» (Ի 34-35): Տե՛ս զնա, զգործն ի կիր

¹ Բ յաղօթ

² ԱԲ զմխիթարութիւն

³ Բ եւ] կամ

⁴ ԱԲ զարծաթսիրութիւն

⁵ ԱԲ դարձեալ ասաց] ասաց

⁶ ԱԲ ցանկացայ

արկեալ ոչ պարզաբար, այլ բազում աշխատութեամբ, զի ոչ միայն զիմն, ասէ, եւ զորոց ընդ իսն էին զպէտան լցի:

Այսպիսի փութով վաստակէր այր՝ որ ի տուէ եւ ի գիշերի քարոզէր, վարդապետէր, ուսուցանէր՝ արտասուաւք զիւրաքանչիւր ոք խրատելով: Այլ եւ երկիւղ եւս արկանէ նոցա, «զամնայն ինչ, ասէ, ցուցի ձեզ» (Ի 35), եւ ոչ ունիք ապավինել յանգիտութիւն, զի ի ձեռն գործոց տեսէք յիս եւ ծանեայք, թէ այսպիսի աշխատութեամբ պարտ է գործել: Եւ ոչ ասաց յամենայն ընչից գերագոյն լինել եւ թափուր, զի ոչ զաւրէին առ այն. այլ զի՞նչ. ի դարման եւ յաւգուտ հասանել տկարաց, ասէ, եւ ոչ պարզաբար ամենեցուն:

Եւ քանզի եցոյց համարձակութիւն առ վիշտան, որ ի գայլոցն, զախտակցութիւն առ հիւանդան, զվարդապետութիւնն համարձակութեամբ, զխոնարհութիւն, զանստացուածութիւն, բայց այս իսկ քան զանստացուածն լինել մեծագոյն է, ի չքաւորութենէ իւրական երկաւք դարմանել զհիւանդս, քանզի առ այնոսիկ, որ ունէին ինչս, ասաց Քրիստոս, թէ «Անճառեա զինչս քո եւ փոր աղբարաց» (Մարթ. Ժ. 21): Իսկ յորժամ աղքատ գոլով զնոյն առնիցէ, քան զամենայն այս իսկ է վերագոյն՝ յորժամ ոչ ինչ յուժեքէ առնլով եւ զայս եւս կերակրիցէ, զի՞նչ այնմ հաւասար լինիցի: Արդ, միտ դիր առաքիտութեանցն կարգի: Առաջին աստիճան է ի բաց ընկենուլ զիւրան, երկրորդ՝ ինքեամբ բաւական լինել անձին իւրում, երրորդ՝ եւ այլոց եւս մատակարարել, չորրորդ՝ քարոզողին եւ իշխանութիւնն¹ ունողին առնուլ, եւ ոչ առնուլ, որպէս զի յոյժ քան զստացուածն² գոլ սա լաւագոյն է: Այսպիսի իրաւք, ասէ, աւգնեսլիք տկարաց. ի գործոց ձեռաց, քանզի յաւտարաց³ ընչից տալ դիւրին է: Սմին վասն յաւելու. «Յիշել, ասէ, զրանն Տեառն Յիսուսի, զոր ասաց. երանելի է մանաւանդ փալն քան զառնուլն» (Ի 35): Եւ զի մի՛ ոք կարծեսցէ զվերագոյն ասացեալն⁴ առ նոսա զբանն որպէս յինքենէ աւրէնս տալով նոցա, զոր եւ⁵ յայլում տեղուջ ասէր, թէ «Որպէս ունիք զմեզ ձեզ արինակ» (Փղա. Գ. 17), սմին վասն զառ ի Քրիստոսէ ասացեալն եբեր⁶ ի վերայ: Իսկ եթէ աւտարանիչքն զայս չգրեցին, չեն ինչ զարմանք. քանզի բազում այն

¹ ԱԲ իշխանութիւն
² Բ զանստացուածն] զստացուածն
³ Բ օտարաց
⁴ Բ ասացեալ
⁵ ԱԲ որպէս] զոր եւ
⁶ ԱԲ բերե] եբեր

ինչ է, զոր թողին եւ ոչ գրեցին, որպէս եւ ասէ իսկ Յովհաննէս: Իսկ Պաւղոս համարձակ առնոյր ի վկայութիւն զասացեալսն ի Տեառնէ, զոր եւ գիտէր իսկ ի ձեռն Հոգւոյն զամենայն եղեալսն եւ զասացեալս: Կամ թերեւս ի բազմապատիկ գրելոց բանիցն այս յայտ իցէ: Եւ ոչ ասաց, թէ չար ինչ է առնուլն, այլ թէ լաւագոյն ինչ է ոչ առնո/123ա/ւլն:

Եւ քանզի աղաւթս առնէր վասն նոցա եւ ողորէր յորդորական բանիւ, ցուցանէ զնոյն եւ գործով: Եւ տես. «Չայս իբրև ասաց, ասէ, եղևալ ծունր առ ծովեզերրն ամենեքումրք՝ եկաց յաղաթս» (Ի 36): Ոչ հարեւանցի զայս առնելով, այլ ընդերկարելով բազում զղջմամբ, եւ զայն առնէր առ ի մխիթարութիւն նոցա, նա եւ ասելն, թէ «Յանձն առնեմ զձեզ Աստուծոյ» (Ի 32), բազում մխիթարութիւն էր: «Եւ բազում լալիւն եղև ամենեցուն, եւ անկեալ զպարանոցան Պաւղոսի համբուրիւն, մորմոքիւն մանաւանդ ի վերայ բանին, զոր ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա» (Ի 37-38): Ասաց, թէ «զայցեն գայլք» ծանուկք ի ձեզ: Ասաց, թէ մաքուր եմ ես յարենէ ամենեցուն ձեր: Բայց յաւէտ քան զամենայն այս իսկ ի տագնապի կացոյց զնոսա՝ ոչ եւս տեսանելն զնա, քանզի եւ այս իսկ առնէր զմարտն դժուարին: Տե՛ս, զի այնպէս սիրէին զնա եւ այնպէս հիմնացեալք եւ հաստատեալք էին ի նա, զի ոչ տեւէին ի գլխոյ նորա ժամանակաւ:

Եւ անկեալ զպարանոցաւ նորա լալիւն, ասէ (Ի 37):

«Լալն»՝ յայտնէ զտրամադրութիւն գլխոցն առ նա, եւ զհաստատուն սէրն ցուցանէ, որպէս յարտասուելն Յիսուսի ասէին՝ «Տեսէ՛ք որչափ սիրէր զՂազար», իսկ «զպարանոցան անկանելն»՝ իբրու թէ զյետին զուգախառն միաւորութիւն հրաժարական ողջունիւն խանդաղատելով փարել զնովաւ, եւ ի բազում հրապարակաբանութենէն առաւել առնելով զսէրն եւ զփափաք նորա: Զի թէ մեք ըստ ժամանակի ինչ ի միմեանց մեկնելով հեծեմք եւ յոգւոց հանեմք եւ մանաւանդ գիտելով, թէ դարձեալ ընկալցուք զմիմեանս, որչափ նոքա զվերջինն ի միմեանց անջատելով. եւ կարծեմ իսկ, թէ Պաւղոս ուժգին լացեալ լինէր: «Եւ յուղարկեցին զնա ի նաւ անդր» (Ի 38): Ի ծովեզերին ի բաց կալովն ցուցանէին զբռնադատութիւն գլխոյն եւ զիրացն անհնարութիւն, իբրու բռնի ի նմանէ մնալով, եւ յոյժ վայելչապէս, զի ի ծովն մտանել նոցա չէր հնար:

Եւ իբրեւ եղև մեզ, *ասէ*, ելանել եւ մեկնել ի նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ի Կով, եւ ի վաղիւ անդր ի Տոողոն, եւ անդի¹ ի Պա-
տարա, եւ գտաք նաւ մի, զի երթայր ի Փիւնիկէ, ելեալ ի նա գնա-
ցաք, եւ յայտ եղեալ Կիպրեայ, թողեալ գնա ի ձախակողմն, նա-
ւեցաք յԱսորիս եւ իջաք ի Տիրոս, քանզի անդ էր նաւն թափելոց
գրեոհնսն, եւ գտեալ զաշակերփսն կացաք անդ զաւուրս եւթն, որք
ասէին ցՊաւղոս ի ձեռն Տոողոյն՝ մի՛ ելանել յԵրուսաղէմ² (ԻԱ. 1-4):

*Զի՞նչ այն, թէ՛ «հանդէպ գնացեալ եկաք ի Կով», փոխոնակ ասելոյ, թէ՛՝
ոչ պատ առնելով եկաք եւ ոչ դեգերեցաք յայլ տեղիս, եւ ապա եկաք
ի Հռոդոն եւ անտի ի Պատարա: Տե՛ս զնա յոյժ փութացեալ եւ գտեալ
նաւ մի, զի երթայր ի Փիւնիկէ, թերեւս զի, յորում էինն՝ գտեղի
առնոյր անդէն ի Պատարա: Սմին վասն յայլ նաւ փոխադրեալ լի-
նէին. եւ ոչ գտանելով նաւ ի Կեսարիա գնալով, յոր փութայր, այլ ի
Փիւնիկէ եւ ի Կիպրոս եւ յԱսորիս: Իսկ թողուլն զԿիպրոս ի ձ/123բ-
/ախակողմն³՝ ոչ վայրապար է ասացեալ, այլ յայտ առնելով, թէ՛ եւ
ոչ հոռւ լինել կամէր յԱսորիս այնպէս փութայր: Ապա կացեալ ի
Տիրոս զաւուրս⁴ եւթն առ եղբարսն, զի այնուհետեւ յորժամ հոռւ
եղեն յԵրուսաղէմ, ոչ պնդաբար ընթանայր. «Որք ասէին ցՊաւղոս ի
ձեռն Տոողոյն՝ մի՛ ելանել յԵրուսաղէմ» (ԻԱ. 4): Արդ, մարգարէացան եւ նո-
քա յաղագս նեղութեան նորա եւ չարչարանաց. եւ այս ի Հոգւոյն
տնաւրինեալ եղեւ ասել ի ձեռն նոցա, զի մի՛ վայրապար կարծիցեն
ասել Պաւղոսի զայնոսիկ իբրու բարուրք եւ յաւրինուած բանի հա-
մարելով:*

Եւ իբրեւ եղև մեզ կապարել⁵ զաւուրսն, ելեալ⁶ գնացաք (ԻԱ. 5):

*Տե՛ս զՊաւղոս երբեմն հաւանեալ, յորժամ Հոգին ոչ խափանէր,
զի յորժամ ասացին «Մի՛ փար գանձն քո ի թեափրոնն⁷» (ԺԹ. 31), ոչ ետ,
բազում անգամ արտաքս հանին զնա եւ հաւանեցաւ. եւ դարձեալ
ի ձեռն պատուհանի իջեալ վանդակաւ փախչէր: Իսկ յորժամ բա-*

¹ ԱԲ անտի

² Ա գերուսաղեմէ, Բ յերուսաղեմէ

³ Բ ձախակողմ

⁴ Բ աւուրս

⁵ Բ կատարեալ

⁶ Բ եղեալ

⁷ ԱԲ թեատրոնն

զուսմք աղաչէին զնա այնոքիկ, որք ի Տիւրոս եւ ի Կեսարիա եւ կապելով եւս բիւր դժուարինս նմա կրել յԵրուսաղէմ, նախ ասէին, եւ յանձն ոչ առնոյր. եւ մանաւանդ ոչ զդժուարինսն յանձանց ինչ ասէին, այլ զոր ինչ Հոգին ասէր յառաջագոյն: Արդ, եթէ Հոգին հրամայէր, ասեն՝ նա ընդէ՞ր հակառակէր: Քանզի եւ ինքն եւս ի ձեռն Հոգւոյն գիտէր զամենայն: Իսկ նոքա ոչ յոր ինչ Հոգին յորդորէր զայն առնէին, այլ լոկ զդժուարինսն նմա ասէին, եւ եթէ յԵրուսաղէմ ելանել ոչ է պարտ: Իսկ Հոգին զնա փութացուցանէր եւ կանխաւ նոցա յայտ առնէր զլինելոցն, զի մի՛ անգիտութեամբ զնա ի փորձութիւնս անկեալ համարեսցին:

Յուդարկեալ զմեզ, ասէ, ամենեցուն հանդերձ կանամբք եւ որդւովք մինչև արպարոյ քաղաքին (ԻԱ. 5):

Տե՛ս ո՛րչափ էր անձկալի սէր նորա առ նոսա եւ մխիթարութիւնն¹: «Եղեալ ծունր առ ծովեզերն՝ կացար յաղաութս եւ հրաժարեցար ի միմեանց, եւ ելար ի նաւն, եւ նորա դարձան յիւրաքանչիւր քեղիս, եւ մեր գնաւն առ խթելի² ի Տիրոս: Կասար ի Պարոմիդա» (ԻԱ. 5-7): Զի՞նչ է «առ խթելի³», այսինքն՝ զնաւարկութիւնն⁴ ճեպելով⁵, վճարելով ի Տիւրոսէ հասաք ի Պտղոմիդա, այլ ստուգաբանաւրէն յեղանակաւ «առդ»՝ նախդիր, իսկ «խթելի⁶ գնաւն»՝ որ խթանաւ ինչ զգրաստ ընդոստուցանելով առ ճէպփութոյն⁷, զի վաղ իսկ ցուցանէ հասեալ ի Պտղոմիդա:

Եւ ողջոյն քուեալ, ասէ, եղբարց՝ եղաք առ նոսա ար մի, եւ վաղիւ անդր եկաք ի Կեսարիա, եւ մտնալ յապարանսն Փիլիպոսի աւերարանչի՝ որ էր մի յեւթանց անտի, ագաք առ նմա: Նորա էին դստերք չորք կոյսք եւ մարգարէք (ԻԱ. 7-9):

Եւ զի թէպէտ եւ մարգարէք էին, այլ ոչ սոքա նախ ասացին Պաւղոսի մինչեւ եկն Ագաբոս: «Եւ ի լինելն մեր անդ աուրս բազումս» (ԻԱ. 10): Արդ, ի Պտղոմիդա մնաց աւր մի, եւ ի Կեսարիա յոլովս կայր: «Էջ ոմն ի հրէաստանէ մարգարէ անուն Ագաբոս, եւ եկեալ առ մեզ՝ առեալ զգաւրին Պաւղոսի կապեաց զօրս եւ զձեռս իւր եւ ասէ. Ա/124ա/յապէս ասէ հոգին

¹ ԱԲ մխիթարութիւն

² ԱԲ խեթեալ

³ ԱԲ խեթելն

⁴ ԱԲ նաւարկութիւն

⁵ ԱԲ ճեպով] ճեպելով

⁶ ԱԲ խեթեալ

⁷ ԱԲ ճեպփութոյն

Մուրթ, գայրն, գորոյ¹ գաւրիս այս է, այսպէս կապեսցն յԵրուսաղէմ հրեայրն եւ մարնեսցնն ի ձեռն² հեթանոսաց» (ԻԱ. 10-11): *Որ կանխաւ վասն սովոյն ազգեաց, նա ասէ զայսոսիկ: Եւ տես, զոր ինչ մարգարէքն առնէին աչաց տեսութեամբ զլինելոցն պատկերազրելով, յորժամ յաղագս գերութեանն³ խաւսէին, որպէս Եսայի եւ Եզեկիէլ, զնոյն եւ սա արար: Նա եւ, որ դժուարինն⁴ էր՝ յաւել, թէ «Ի ձեռն⁵ հեթանոսաց մարնեսցնն» (ԻԱ. 11): Եւ ոչ ասաց, թէ՛ զՊաւղոս կապեսցեն, զի մի՛ թուեսցի պայմանաւ ասել, այլ թէ՛ «Զայրն, որոյ գոպիս այս է» (ԻԱ. 11), ապա ուրեմն եւ գաւտի ունէր:*

Իբրև լուաք գայս, աղաչեաք⁶ մեր եւ որ ի րեղուօջն էին, չելանել յԵրուսաղէմ (ԻԱ. 12):

Եւ վասն զի ո՛չ կարէին հաւանեցուցանել զնա, վասն այնորիկ եւ զլալ հարկանէին, զի գէթ այնու ածցեն զնա ի հաւանութիւն: «Յայնժամ պարասխանի եր Պաւղոս. Զի՞նչ գործէք, զի՞ լայրոյ⁷ եւ ճմլեցուցանէք զիմ սիրտս, քանզի եւ ոչ միայն կապելոյ, այլ եւ մեռանելոյ յԵրուսաղէմ պարասար եմ վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (ԻԱ. 13-14): Տեսանե՞ս զվիոյթն. զի մի՛ լուեալ կարծիցես ի հարկէ գոլ, զոր ասէրն⁸, թէ «Կապեալ Նոգուովն երթամ յԵրուսաղէմ» (Ի 22), այլ եւ ոչ անգիտութեամբ ի վիշտս անկեալ համարիցիս զնա, վասն այնորիկ նախ ասացեալ եղեն այնոքիկ: «Զի՞, ասէ, լայր եւ ճմլէք գսիրտ իմ» (ԻԱ. 13): Ոչ ինչ գորովագուծ սէր քան զայս է տեսանել: Տեսանէր զնոսա արտասուեալ, եւ ցաւագին վշտաւք լինէր վասն նոցա, այն որ ոչ ախտանայր յիւր փորձութիւնսն: Յիս, ասէ, անիրաւիք զայդ առնելով, զի ես ընդ չարչարանս ուրախ եմ եւ խնդամ եւ ոչ վշտանամ, ի վերայ ձեր, ասէ, լամ եւ ոչ ի չարչարանս իմ, վասն որոյ եւ կամաւք մեռանել յաւժար եմ: Իբրեւ տեսին, թէ ոչ խոնարհի յայն, ապա հանդարտեցին, յորժամ ասաց, թէ՛ «ճմլէք գսիրտ իմ» (ԻԱ. 13): «Եւ ի չանսալն նորա լոնցար եւ ասեմք. Տեառն կամք լիցին» (ԻԱ. 14): Տեսանե՞ս զիմաստասիրութիւն մեծ, տեսանե՞ս զգորովագուծ սէրն. զամենայն ինչ յԱստուած

¹ Բ որոյ

² ԱԲ ի ձեռն

³ ԱԲ գերութեան

⁴ ԱԲ դժուարին

⁵ Բ ի ձեռն

⁶ Բ աղաչեաք

⁷ ԱԲ լայրք

⁸ Բ ասերն

ապաստան առնէին, զի նորա կամաւք մնասցէ¹ նա² ի մահուանէ. զի ծանեան այնուհետեւ ի նմանէ գոլ զայն³:

Եւ յեւր աուրցն այնոցիկ հանդերձեալ ելանեաք⁴ յերուսաղէմ (ԻԱ. 15):

Զի՞նչ է «հանդերձեալն»: Այսինքն՝ զիրս ճանապարհորդութեանն եւ զպէտս առեալք: «Եկին ընդ մեզ եւ յաշակերպաց անորի կեսարացոց⁵» (ԻԱ. 16): Սոցա զկնի Պաւղոսի ելանելն զՋերմեռանդ⁶ գուլթն առ Պաւղոս եւ զբազում յաւթարութիւնն⁷ ցուցանէ: «Եւ փանէին գմեզ առ որում վանս ունելոց էաք՝ Մնաստնի ումնն կիպրացոյ⁸ առաջին աշակերպի» (ԻԱ. 16): Իսկ ընդէ՞ր առ Մնաստնի ունէին վանս եւ ոչ յեկեղեցւոջն, քանզի այնպէս ոչ կամէին ծանրանալ եկեղեցւոյն, այլոյ ումեմն գոլով հիւրընկալ նոցա ասպնջականութեամբ, այլ եւ ոչ զարժանս ինչ հիւրոյթս պահանջէին: Իսկ յորժամ յաղագս աւանդութեանցն ելանէին, յեկեղեցւոջն իջաւանէին, իսկ այժմ առ⁹ աշակերտի ումեմն առաջնոյ: Յուցանէ այնուհետեւ բազում ժամանակս քարոզութեանն¹⁰, ուստի եւ թուի ինձ զհետ բազում ամաց լինել |124բ| այժմ գալուստն¹¹ նորա յերուսաղէմ¹²:

Եւ ի մտանելն մեր յերուսաղէմ, խնդութեամբ ընկալան գմեզ եղարարք (ԻԱ. 17):

Վայելչապէս. զի տակաւին խաղաղութեամբ լինէին իրքն, եւ իրողութիւնք նորա առ հրեայան ոչ այնպէս մարտնչելով էր: Բայց տե՛ս ըստ կարգի զաւուրսն զամենայն: Յետ բաղարջակերացն նաւեալ ի Փիլիպպէէ ի Տրովաղա եկին զկնի հինգ աւուր, եւ անդ արարին աւուրս եւթն, որ միահամուռ լինի երկոտասան, ապա Թասոն¹³

¹ ԱԲ մնասցեն

² ԱԲ > նա

³ ԱԲ > զայն

⁴ ԱԲ ելանէաք

⁵ Բ ի կեսարացոց

⁶ ԱԲ զՋերմեռանդն

⁷ ԱԲ յօժարութիւն

⁸ ԱԲ կիպրացոյ

⁹ ԱԲ > առ

¹⁰ ԱԲ քարոզութեան

¹¹ ԱԲ գալուստ

¹² ԱԲ > յերուսաղէմ

¹³ ԱԲ յասոն] թասոն

եւ ի Միլիտինէ¹ եւ ի Տրոգիլոն² եւ հանդէպ Քրիստոսի եւ ի Սամոս եւ ի Մելիտոն, որ լինի աւուրք տասն եւ ութ³: Եւ ի տեղւոջն, ուր խաւսեցաւ ընդ երիցունսն հինգ աւր, որ լինի քսաներորդ երրորդ: Ապա անտի ի Կով եւ ի Հռոդոն եւ ի Պատարա, որ լինի քսան եւ վեց, եւ ի Տիւրոս աւուրս եւթն, եւ ի Պտղոմիդա աւր մի, միանգամայն մինչեւ ի Կեսարիա բուանդակին աւուրք⁴ երեսուն եւ չորք, եւ անդ կացեալ զաւուրս բազումս, այնուհետեւ անդուստ ի վերա ածէ զնոսա մարգարէն Ագաբոս, եւ այնպէս պենտեկոստէն լցեալ լինէր, զոր եւ անդ յԵրուսաղէմ զայն առնէին, որում եւ ըղձայր Պաւղոս զաւրն պենտակոստէ առնել յԵրուսաղէմ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Արդ, Պաւղոս հիւրընկալէին յայնժամ: Այլ թերեւս ասիցէ ոք ի ձէնջ, թէ եւ ինձ տայր ոք զՊաւղոս հիւրընկալել, բազում յաւժարութեամբ ընդունէի⁵: Ասեմ՝ թէ ահա⁶ զտէրն Պաւղոսի ունիս հիւրընկալել եւ ո՛չ խնորժես. «Ձի որ ընդունի զմի որ ի փոքրկանցս⁷, ասէ, զիս ընդունի»: Տե՛ս, զի որչափ փոքր իցէ եղբայրն, Քրիստոս մանաւանդ ի ձեռն նորա կերակրի: Ձի որ զմեծն ընդունի, բազում անգամ եւ սնափառութեամբ առնէ, իսկ որ զփոքրն, մաքրապէս վասն Քրիստոսի է, եւ որ զՔրիստոս ընդունի⁸, զվարձս զՔրիստոս հիւրընկալողի առցէ: Եւ ոչ ընդունողն՝ զպատուհաս, արդ ինքն է պատուեալն եւ ի ձեռն փոքունց եւ անարգեալն: Փութասցուք ընդունել զնա, զի ընկալցի զմեզ յարքայութեան իւրում, տացուք նմա հաց, զի տացէ մեզ արքայութիւն, տեսցուք զնա կապեալ, զի տեսցէ զմեզ լուծեալ, փութասցուք ընդ առաջ աւտարացն ըստ աւրինակին Աբրահամու, զի նորին արժանասցուք վարձուց:

[ԳԼՈՒԽ ԽԶ.]

Ի վաղիս անդր եմուր Պաւղոս ընդ մեզ առ Յակոբոս⁹, եւ եկին

¹ ԱԲ միտիլիոն

² ԱԲ խորոգիլոն] Տրոգիլոն

³ ԱԲ > որ լինի աւուրք տասն եւ ութ

⁴ ԱԲ աւուրքք

⁵ Ա ընդունէին

⁶ ԱԲ ահ] ահա

⁷ Բ փոքրականցս

⁸ Բ > ընդունի

⁹ ԱԲ յակովբոս

ամենայն երիցունքն, և ողջոյն փուեալ նոցա պապմէր մի ըստ միոջէ, զոր արար Աստուած ի հերթանոսս ի ձեռն պաշտաման նորա (ԻԱ. 18-19):

Այս Յակոբոս¹ առաջին եպիսկոպոս էր յԵրուսաղէմ, և յառաջ իսկ քան զայս Պաղղոս առ սա լինէր առաքեալ յԱնտիոքայ Ասոր-լոց. և այժմ նախ առ սա մտանէ տալ ողջոյն և լսել զամենայն ինչ ի նմանէ և պատմել, զոր ինչ ինքն արար: Սա էր եղբայր Տեառն այր մեծ և սքանչելի, և առ հրեայսն իսկ զարմանալի երեւեալ: «Յմութ, ասէ, առ նա մեր հանդերձ»: Տե՛ս ձեւ աւրինակի առանց մեծամտութեան: Եկին և այլքն, յորժամ լուան: Դարձեալ նոցա զիրան հեթանոսաց պատմէ, ոչ սնափառելով, քաւ լիցի, այլ զԱստուծոյ մարդասիրութիւնն² ցուցանելով և զնոսա բազում խնդութեամբ լնլով:

/125ա/ Եւ նոցա լուեալ փառաւոր առնէին զԱստուած (ԻԱ. 20):

Ո՛չ զնա գովէին և սքանչանային, զի և ո՛չ նա այնպիսի ձեւով պատմէր, որպէս թէ յինքն վերաբերեալ զամենայն ինչ: «Եւ ասն ցնա³. Տեսանե՛ս, եղբայր, թէ քանի բիրք են հաւաքացելոց հրէից, և ամենեքեանքն նախանձաւորք արինացն են: Բայց իրագնկ եղն վասն քո, թէ՛ ապստամբութիւն ուսուցանես ի Մովսիսէ, որոց ի հեթնոսս հրեայք են, ասես մի՛ թլփաբկ նոցա զորդիս և մի՛ ըստ կրանիցն գնալ» (ԻԱ. 20-21): Տե՛ս գոտսա, թէ որչափ զարհուրանաւք և երկիւղիւ խաւսին վասն նոցա: Հայեա՛ և զայն, զի ոչ որպէս եպիսկոպոս հակառակելով ընդդէմ նորա զրուցատրէ, այլ զնա ինքն առնուն կցորդ կամացն, որպէս թէ վաղվադակի առաջաբանութիւն⁴ պատասխանատրելով՝ եթէ և մեք գոյն, զոր առնեն, ո՛չ ախորժեաք⁵: Տեսանե՛ս զիրացն հարկ և զկարիս պիտոյիցն վասն հրէից: Որքան բեւրք են, ասէ⁶, հրէից հաւատացելոց և ի՛ միասին եկելոց: Եւ զայս խոնարհութեամբ, զի ոչ ասաց⁸ տե՛ս ո՛րքան բեւրս⁹ դարձուցեալ ածաք ի հաւատս, այլ թէ «են», և սորա ամենեքեան նախանձաւորք աւրինացն են: Կրկին պատճառք,

¹ Աբ յակովբոս

² Աբ մարդասիրութիւն

³ Բ գնա

⁴ Բ առաջաբանիւն] առաջաբանութիւն

⁵ Աբ ախորժեաք

⁶ Աբ ասեն

⁷ Բ > ի

⁸ Ա ասաց, թէ

⁹ Ա բիւրս] բեւրս

եւ բազմութիւնն¹ եւ կամքն, զի թէ սակաւք էին, եւ արհամարհել հասանէր զնոցին խնդիրն, եւ այն իսկ ծանր էր, թող թէ բազումք եւ ամենեքեան վրէժխնդիրք ի կողմ աւրինացն: Ապա եւ երրորդ պատճառ. «Ամբաստան եղեն վասն քո» (ԻԱ. 21), ասէ: Եւ ոչ ասաց, թէ լուան, այլ թէ այսպէս իրացն հաւատացին եւ ուսան, մինչեւ տրտնջեցին² եւս վասն քո, թէ ապստամբութիւն ուսուցանես յաւրինացն եւ ի Մովսիսէ³:

Արդ, զի՞նչ լինիցի, ասէ (ԻԱ. 22):

Պարտ է այսուհետեւ զբազմութեանն⁴ ի միասին ժողովել վասն քո: «Արդ, գայս արայ⁵, գոր ասեմք քեզ» (ԻԱ. 23), այսինքն՝ իբրեւ խորհրդակցելով եւ ոչ հրամայելով: Եւ զի՞նչ արդեւք այն իցէ: «Են, ասէ, ի մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց, զնոսա առեալ սրբեցիս ընդ նոսա, եւ ծախեա ինչս⁶ ինչ ի նոսա» (ԻԱ. 23-24): Այսինքն ի քո կողմանէ զաւրինացն արարեալ միաբանեցիս ընդ նոսա, զի գերծցեն զգլուխան: Քանզի այսպէս աւրէնքն հրաման⁷ տային զկնի ուխտին կատարման գերծուլ, զի եւ այն իսկ է ուխտաւորացն առանձին յուխտին գոլով⁸ թողուլ զհերսն:

Եւ զփրացեն, ասէ, ամենեքեան, թէ որոց իրազեկն եղեն զքէն՝ ոչ ինչ է, այլ միարանիս եւ դու պահել զաւրէնսն (ԻԱ. 24):

Զի լինիցի գործով առնել զպատասխանին եւ ոչ բանիւ. որով ծանիցեն, թէ ոչ ինչ է, զոր զքէն⁹ լուան, եւ առաւելութեամբ դու իսկ պահես զաւրէնսն: Զի ոչ այս միայն էր փութալի, այսինքն՝ ոչ ուսուցանել զայս ոչ պահել, այլ զի եւ ինքն եւս պահեսցէ զաւրէնսն: Եւ զիա՞րդ ասէ, թէ հեթանոսք իմասցին, զոր առնեմն¹⁰, եւ գործովս իմով այսու վնասեցի՞ց զնոսա: Ոչ, ասէ, զի յորժամ եւ մեք իսկ հրէից վարդապետքս գրեցաք առ նոսա մի՛ ինչ զաւրինացն փոյթ առնել բաց ի սակաւուց, ապա եւ վասն քո ոչինչ վասն այսր ածեն

¹ ԱԲ բազմութիւն

² Բ տրտնջեցիս

³ ԱԲ ի Մովսէսէ

⁴ ԱԲ զբազմութեան

⁵ ԱԲ արա

⁶ Բ ինչ

⁷ ԱԲ հրամանք

⁸ Բ գոլով

⁹ Բ ի քէն] զքէն

¹⁰ ԱԲ առնեմ

զմտաւ: Սմին վասն յաւելու եւ ասէ. «Քայց վասն հաւ/125բ/արացելոցն հեթանոսաց մեր առարեցար որպէս եւ ընտրեցար եւ մի՛ ինչ այնպիսի պահել նոցա. բայց զգուշանալ նոցա ի կոոց գոհելոյ եւ յարննէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ» (ԲԱ. 25): Աստանաւր պատկառեցուցանելով իմն ասէ. որպէս մեք նոցա հրամայեցաք, եւ մանաւանդ հրէից քարոզք¹ մեք, գործակից լեր մեզ եւ դու ինքն յայտոսիկ:

Մի՛տ դիր, թէ որպիսի իրաւք հաւանեցուցանէին զՊաւղոս ցուցանելով, թէ այն տնաւրէնութիւն եւ զիջանել էր, եւ ոչ հատուած քարոզութեանն, ուր եւ նոքա իսկ աւրէնսդիրք խափանման նորա լինէին առ հեթանոսս: Տե՛ս եւ զՊաւղոսի հեզուլթիւնն²: Ոչ ասաց, թէ՛ կարող եմ եւ զՏիմոթէոս ածել վկայ, զոր թլփատեցին, եւ առաւել հնար է ինձ հաւանեցուցանել զնոսա բանիւ, այլ հաւանեցաւ նոցա, եւ զամենայն, զոր ասացին³՝ արար: Եւ այն ամենայն յոյժ պատշաճի եղեւ. զի ոչ էր հաւասար՝ բանիւ պատասխանի առնել, նա զի եւ ոչ միոյ ուրուք էր գիտելի իրքն Տիմոթեայ, եւ ինչս ծախել եւ գործով զկատարումն աւրինացն ցուցանել. զի այս իսկ անկասկած ի Պաւղոսէ առնէր զամենեսեան:

Այլ եւ ոչ ասաց դարձեալ՝ թէ զի՞նչ է, զոր ասէքդ, ո՞չ է պարտ, զոր հեթանոսս⁴ են հաւատացեալք՝ ուսուցանել ոչ թլփատել, եւ ո՞չ շատ է աստանաւր զնոյնս ոչ քարոզել: Այլ զոր ասէին՝ յանձն առնոյր, զոր եւ գրէր իսկ այլուր, թէ «Եղէ ընդ հրեայսն ի ներքոյ արինաց⁵, զի գորս ընդ արինաւրն⁶ իցեն՝ շահեցայց» (Ա. Կրնթ. Թ. 21): Արդ, տե՛ս զինչ ասէին. պարտ է քեզ, ասեն, բազում ինչ առնել, զի հաւանեցին նոքա՝ թէ եւ դու իսկ զաւրէնսն պահես. մի՛⁷ ինչ յայտմանէ երկիցեն⁸, քանզի զիջութիւն է իրողութիւնս: Եւ ոչ յառաջագոյն յայն իրս յորդորեսցին զնա, մինչեւ չեւ⁹ նախ ասացեալ էր զտնաւրէնութիւն բանին եւ զշահ, ցուցանելով եւ առաջի դնելով զբազմութիւնն¹⁰, որ յերուսաղէմ էր, զի եւ այն իսկ առնէր Պաւղոսի հան-

¹ ԱԲ գոլով քարոզք

² ԱԲ հեզութիւն

³ ԱԲ ասացին նոցա

⁴ Բ ի հեթանոսս

⁵ Բ օրինացն

⁶ Բ օրինօքն

⁷ Ա եւ մի՛

⁸ ԱԲ երկիցես

⁹ Բ > չեւ

¹⁰ ԱԲ զբազմութիւն

դուրժեղ¹ այնպիսի իրաց, զոր ասէին, եւ ոչ ընդդէմ յառնել նոցին կամացն: Արդ, արա, ասեն, զոր ասեմք քեզ՝ միայն աստանաւր, զի արտաքոյ Երուսաղէմի ոչ է պատշաճ զայսոսիկ առնել քեզ:

Յայնժամ Պաւղոսի առեալ զարսն՝ ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ եմուր ի փաճարն յայր առնել զկափարումն աւուրց սրբութեան մինչև մարեաւ ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ պափարագ (ԻԱ. 26):

Եւ արդ քանզի վայել էր նոցա ըստ աւրինացն, զաւուրս ոմանս ընդ ի տաճարին դեգերիլ, այլ նա ոչ վերստին սկիզբն առնէր աւուրց, զի յորժամ իրքն տնաւրէնութիւն էր, ոչ ինչ պիտոյանայր այնպիսի ինչ իրաց, այլ ի վաղիւ անդր իսկ եւ իսկ առեալ զարսն՝ ընդ նոսա սրբեալ եմուր ի տաճարն, յայտ առնելով, այսինքն՝ խոստովանել զկատարումն աւուրցն սրբութեան: Զի ինքն էր, որ յայտնի առնէր զանձն իւր զիջանելով ըստ աւրինացն, ըստ որում Պետրոս յամբաստանելն ոչ լռեաց, պարզաբար հաստատելով զիւրն աւանդութիւն, այլ զիջեալ /126ա/ ընդ նոսա արար պատասխանի, թէ «Ես ոչ կամէի, եւ Նոզին կամեցաւ»: Եւ զոր ինչ սա աստանաւր արար, զնոյն եւ Պետրոս յառաջագոյն. իսկ հրեայքն նոյնպէս եւ առ նմա զչարէին:

Եւ իբրեւ մերձ էին եւթն աւուրքն ի կափարել, փեսեալ զնա ի փաճարն ասիացուց հրէիցն, ընդ որս մանաւանդ յերկար ժամանակս շրջեալ եղև Պաւղոս: Զնդուին զնովաւ զամենայն ամբոխն, եւ արկեալ ի նա ձեռս՝ աղաղակէին. Արք իսրայելացիք, աւզնեցէք: Այս այր է, որ հակառակ ժողովրդեանն² եւ արինացն ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ, մինչև հեթանոսս եւս եմոյժ ի փաճարս եւ պղծեաց գտորք փեղիս: Քանզի էր յառաջագոյն փեսեալ զՏրոփիմոս զեփեսացի ի քաղաքի անդ ընդ նմա, զոր կարծէին, թէ ի փաճար անդր եմոյժ Պաւղոս (ԻԱ. 27-29):

Տե՛ս աստ յոյժ տնաւրէնութիւն եղեալ զիրսն: Զի յետ հաւանելոյ հրէիցն հաւատացելոց վասն կարծեացն զՊաւղոսէ ոչ ինչ գոլ յայնժամ, ապա³ անհաւատքն ի վերայ հասեալ եղեն, զի մի՛ եւ սոքա հաւատացեալք⁴ ընդ նոսին լիցին միաբանեալ ի չարչարել զՊաւղոս:

¹ Բ հանդուրժեալ

² ԱԲ ժողովրդեան

³ ԱԲ > ապա

⁴ Բ հաւատացեալքս

Եւ զիտեա զխռովարար բարս նոցա ամենայն ուրեք, եւ թէ որպէս վայրապար աղաղակէին ի միջի կալով առ ի զարթուցանել զցասուամն ամենեցուն: «Արք իսրայելացիք, աւգնեցէք» (ԻԱ. 28) ասեն, որպէս ումեմն դժուարակալի եւ անըմբռնելոյ անկանելով ի ձեռս նոցա: Եւ ոչ այնու միայն, թէ «Նակառակ ժողովրդեանն ամենայն ուրեք ուսուցանէ» (ԻԱ. 28) մեծ առնէին զչարութիւնն¹, այլ որ ինչ մանաւանդ զարհուրեցուցանէր զնոսա եւ առաւել ի բարկութիւն ածէր՝ տաճարն եւ աւրէնքն, զայն ի մէջ բերէին. զոր եւ վասն Ստեփանոսի ասէին: «Ներանոսս, ասեն, եմոյժ ի փաճարն եւ պղծեաց գտորք փեղիս» (ԻԱ. 28): Եւ զի մանաւանդ յաւուրսն Քրիստոսի իսկ ելին ոմանք անդ², զի երկիր պագանիցեն, եւ ոչ ինչ այնպէս զչարէին, քանզի այնոքիկ, որ յաւժարէին արդեւք ի հեթանոսաց երկիր պագանել ի տաճարին, ոչ եւս աւրինաց կարաւտանային եւ ոչ դատաստանաց: Հայեաց եւ ընդ Պաւղոս՝ ոչ եւ մի ինչ ամբաստան եղեալ զառաքելոցն, թէ նոքա նախ եղեն պատճառ այսպիսի վշտացս:

Շարժեցաւ, ասէ, քաղաքն ամենայն, եւ կուրեցաւ ժողովուրդն, եւ առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ փաճարին, եւ փակեցան դրուերն, եւ խնդրէին սպանանել³ զնա (ԻԱ. 30-31):

Վասն այսորիկ ձգէին զնա արտաքս, զի փութով կամէին սպանանել⁴ զնա, եւ ոչ յովովագոյն ներողութեամբ առնել զայն: Եւ հարկանէին զնա անդադար: Իսկ նա յայնժամ ոչ ինչ տայր պատասխանի, զի թերեւս ոչ լսէին նմա ի խիստ դառնութենէն որպէս ի չար զիւէ իմն շարժեալք. բայց յետոյ յոյժ իրաւապէս առնէր զպատասխանին:

Եհաս զրոյցն ի հազարապետ գնդին՝ եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ, որոյ անդէն առեալ զաւրականսն եւ հարիւրապետս դիմեաց ի վերայ նոցա: Եւ նոցա փնտել զհազարապետն եւ զգաւրականսն՝ դադարեցին ի հարկանելոյ զՊաւղոս: Յայնժամ մաքուրեցաւ հազարապետն կալաւ զնա եւ հրամայեաց կապել կրկին շղթայիւք (ԻԱ. 31-33):

/126բ/ Որպէս թէ այնու մխիթարել զնոսա եւ ցածուցանելով զսրտամտութիւն ամբոխին, այլ եւ զիտել կամելով զստոյգն: «Նարցա-

¹ ԱԲ զչարութիւն

² Ա անդ ի հեթանոսաց, Բ անտ ի հեթանոսաց] անդ

³ ԱԲ սպանել

⁴ Բ սպանել

նէր, թէ ո՞վ իցէ եւ զի՞նչ իցէ արարեալ. այլք այլ իմն աղաղակէին զնմանէ յամրոխին» (ԻԱ. 33): *Յայտ է, անկարգ բազմութիւն¹ խռովութեամբ² լցեալք ոչ ակն ածէին զանդէպսն եւ զանիրաւսն ժայթքել:*

Իրրեւ ոչ կարաց զիպել զստոյզն վասն ամրոխին (ԻԱ. 34):

յայտ է վասն աննմանսն միմեանց ամբաստանելոյն զնմանէ ժխորելոցն: «Նրամայեաց ածել զնա ի բանակն: Իրրեւ եհաս յաստիճանսն³, դէպ եղև բառնալ բերել զնա զաւրականացն⁴ վերամբարձ, յայր է վասն բռնութեան ամրոխին, բանգի գեղար երթայր բազմութիւն ժողովրդեանն եւ ասէին. Բարձ գղա» (ԻԱ. 34-36): *Զի՞նչ է «բարձ գղա», այսինքն՝ որպէս եւ առ մեզ ասի, թէ ըստ սովորութեան հռովմայեցւոց ի պատուհաս տանջանաց արկ զդա, կամ թէ սպան իսկ. զի զահի հարեալ էին եւ երկնչէին, զի մի փախիցէ:*

Մինչդեռ մտանելոց էր Պաւղոս ի բանակն, այսինքն՝ ուր դատողական կայանքն էր, ասէ ցհագարապետն. Եթէ արժա՞ն իցէ ինձ խաւսել ընդ քեզ (ԻԱ. 37):

*Յորժամ առ աստիճանսն եհաս բերեալ, թերեւս զի չէին այնուհետեւ ամբոխն ձեռնհաս ի նա, յայնժամ աղաչեաց զհագարապետն խաւսել ինչ եւ պատասխանի տալ ժողովրդեանն: Բայց տե՛ս ո՞րպիսի հեղութեամբ եւ հանդարտապէս խաւսի. «Եթէ արժա՞ն իցէ ինձ խաւսել» (ԻԱ. 37), ասէ: «Եւ նա ասէ. Յունարէն զիպել՞ս. մի՞ արդևք դու իցես եզիպտացին՝ որ յառջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր⁵ եւ հաներ յանապարն ջորս հագարս արս սիկարեանս⁶» (ԻԱ. 37-38): *Զկարծիս անաւրիւնացն հագարապետն ի մէջ բերեալ հարցանէր, մի՞ արդեւք սա՞ նա իցէ: Զի էր նա այր ոմն պատրիչ եւ խաբեբայ, յանդուգն, չարագործ եւ ապստամբեցուցիչ⁷: Քանզի կարծեաց բանասարկուն թաքուցանել ի ձեռն նոցա զճշմարտութիւնն⁸ եւ հաղորդս առնել նոցա ամբաստանութեանն⁹ զՔրիստոս եւ զառաքեալսն, այլ ոչ զաւրեաց: Քանզի**

¹ Բ բազմաւ] բազմութիւն

² Բ ի խռովութեամբ

³ ԱԲ յաշտիճանսն

⁴ ԱԲ զօրականաց

⁵ ԱԲ ապրստամբեցուցի

⁶ ԱԲ իսկարեանս

⁷ ԱԲ ապրստամբեցուցիչ

⁸ ԱԲ զճշմարտութիւն

⁹ ԱԲ ամբաստանութեան

նոքիմբք պայծառագոյն երեւեցաւ ճշմարտութիւնն¹՝ ոչ ինչ վնասեալ ի հնարից բանսարկուին, այլ մանաւանդ պայծառապէս ծագեալ: Զի եթէ ոչ էին երեւեալ կախարդքն եւ մաւգքն, եւ ոչ սոքա յաղթողք² լինէին բազմաց, թերեւս ոք չար կարծեաւք ի վերայ սոցա հասեալ լինէր: Իսկ յորժամ եւ նոքա այնպիսիք երեւեցան եւ հակառակաւդք, այսինքն՝ կախարդքն եւ խաբբբայքն, այն իսկ արար զսոսա սքանչելիս, զի ասէ. «Ներձուած³ լինելոց նն, զի որ ի ձեզ ընփիրքն⁴ իցեն, երևեսցին» (Ա. Կրնք. ԺԱ. 19), եւ Գամաղիէլ ասէր, թէ «Յառաջ քան գաւուրս⁵ գայտոսիկ յարեաւ Թելդաս⁶ ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն» (Ե. 36):

ՅՈՐԴՈՐԱԿ

Այսուհետեւ մեք մի՛ ցաւագնեսցուք, զի եւ այժմ հերձուածք են, յորժամ եւ սուտ քրիստոսք ի վերայ յառնել խորհեցան եւ յառաջ քան զգալուստն Քրիստոսի եւ յետ այնորիկ, որպէս զի թաքուցեն⁷ զճշմարտութիւնն⁸ ի մարդկանէ. |127ա| այլ ճշմարտութիւնն⁹ փայլեաց եւ յամենայնի յայտնեցաւ: Այս իսկ եւ յաւուրս մարգարէիցն եղեւ, եւ գտան հակառակ սուտ մարգարէք, այլ ի նոցին համեմատութենէն մանաւանդ փայլեցին ճշմարիտքն, զի զառողջութիւնն¹⁰, ցաւքն յայտնեն, եւ զլոյսն խաւարն, եւ զպարզն մրրիկն, այժմ ոչ գոյ ասել հեթանոսաց, թէ «մոլորեցուցիչք էին», քանզի ինքեանք յանդիմանեալք եղեն: Այս եւ յաւուրան Մովսէսի եղեւ, տեղի ետ Աստուած մոգացն¹¹, զի Մովսէս մի՛ եղիցի համարեալ մոգ, թողացոյց զնոսա ապշեցուցանել զամենեսեան, մինչեւ ցոր վայր ափշեցուցանել հնար էր, այլ ընդ երկար ոչ կարացին պատրել, այլ ինքեանք զպարտութիւն խոստովանեցան, եւ հանապազ նոյն լինի:

¹ ԱԲ ճշմարտութիւն

² ԱԲ յաղթողք

³ ԱԲ հերձուածք

⁴ ԱԲ ընդիրքն

⁵ Բ գաւուրսս

⁶ ԱԲ դելդաս] թելդաս

⁷ ԱԲ թագուցեն

⁸ ԱԲ զճշմարտութիւն

⁹ ԱԲ > ի մարդկանէ. այլ ճշմարտութիւնն

¹⁰ ԱԲ զառողջութիւն

¹¹ Բ մոգուցն

[ԳԼՈՒԽ ԽԷ.]

Ասէ Պաւղոս. Ես եմ այր հրեայ ի Տարսուսն Կիլիկեցոց, ո՛չ աննշան քաղաքի քաղաքացի (ԻԱ. 39):

Տեսանե՞ս, զի յորժամ ընդ արտաքինսն խաւսի¹, ոչ հրաժարէ զառ ի յաւրինացն աւգնականութիւն ի կիր առնուլ, որպէս եւ այժմ հրեայ զինքն ասելով: Այլ եւ քաղաքաւն եւս զնա ամաչեցուցանէր. որպէս եւ յայլու՞մ տեղու՞ղ դարձեալ այսպէս ասէր ի հանդիսի, թէ «Զարս անմեղս հռոմայեցիս գոյով՝ արկին ի բանօ» (ԺԶ. 37): Եւ զի ասաց, թէ դո՞ւ իցես ի եգիպտացին, վաղվաղակի անուամբն զնա յայնպիսի կարծեաց ի բաց եհան, յայտ արարեալ, թէ սա ոչ էր նա եւ ոչ յայնպիսեաց երբեք: Ապա զի մի՛ կարծիցի զանունն միայն ունել հրեայ, յառաջ բերէ եւ զպաշտաւնն: Եւ քանզի յայլու՞մ տեղու՞ղ աւրինաւոր ըստ Քրիստոսի կոչէ զանձն իւր, արդ զիա՞րդ այժմ ասէ զայս, ընդէ՞ր ոչ ուրացաւ զհրէութիւնն²: Քաւ լիցի, զի հրեայ էր եւ քրիստոնեայ, որչափ պարտ էր պահելով զաւրէնսն³, քանզի եւ աւրինացն մանաւանդ քան զայլս նա լինէր անսացեալ, որ ի Քրիստոս հաւատայր: Որպէս եւ ցՊետրոս ասէր. «Մեր բուն հրեայք եմք, եւ ոչ ի հեթանոսաց մեղաւորք» (Գղղ. Բ. 15):

Աղաչեմ զքեզ, ասէ, հրամայեա ինձ խաւսել առ ժողովուրդն (ԻԱ. 39):

Եւ այսու նշանակէր, թէ ստեալ ոչ լինի, եւ ոչ է իրաց ինչ պարտապան՝ որ այնպէս պատրաստն գոյր առ ի տալ պատասխանի եւ կամելն համարձակ խաւսել ի մէջ հանդիսի հրէիցն զկնի ամբոխելոյ նոցա⁴: Տե՛ս այր կարգաւոր, տե՛ս տնաւրէնութիւն բարւոք յաւրինեալ. զի եթէ հազարապետն ոչ էր եկեալ եւ ոչ էր զնա կապեալ, թերեւս ոչ լինէր զհազարապետն աղաչեցեալ, եւ ոչ ինքն իսկ կարաւտացեալ բանի պատասխանելոյ⁵, եւ ոչ թերեւս այնչափ լռութեան հանդիպեալ:

¹ Ա խաւսի

² ԱԲ զհրէութիւն

³ Ա զաւրէնսն

⁴ ԱԲ > նոցա

⁵ Բ պատասխանելոյ

Եւ ի հրամայելն նորա Պաւղոս կացեալ ի վերայ աշտիճանացն՝ շարժեաց զձեռնն ժողովրդեանն (ԻԱ. 40):

Մի՛տ դէր, զի եւ ի տեղւոյ անտի եղեւ նմա դիւրութիւն, որպէս զի բարձրագոյն կալով կապանաւքն հրապարակաբանել: Զի՞նչ այսմ հաւասար իցէ զարմանալի՞. կրկին երկաթի կապանաւք կապեալ տեսանելով զՊաւղոս հրապարակաբանելով, զիա՞րդ ոչ խռովեցաւ այնքան² հանդէս թշնամեաց տեսանելով եւ իշխանին ի վերայ հասանելով: |127բ| Արդ, նախ առաջին ի բաց արար զնոսա ի ցասմանէ շարժելով ձեռինն, ապա տե՛ս, թէ որպիսի՞ խոնարհութեամբ սկսանի ի բանն, եւ զոր ինչ ի հերբայեցւոց թղթին ի հարցն եւ ի մարգարէիցն արար սկիզբն զնոյն եւ աստանաւր, յառաջագոյն ազգակցութեան ձայնիւ զնոսա առ ինքն ձգելով:



¹ Բ գարմանալ

² ԱԲ այսքան

Եւ իրրն բազում լծութիւն լինէր, *ասէ*, սկսաւ բարբառել հերբայնցոց¹ բարբառովն եւ ասէ. Արք եղբարք եւ հարք, լուարուք ինձ այժմ առ ձեզ պապասխանապարտեանս (ԻԱ. 40- ԻԲ. 1):

Տե՛ս ի մարդահաճութենէ եւ առ երեսս խաւսելոյ ազատեալ զբանն եւ բազում հեզութիւն ունելով. զի ոչ ասաց, թէ տեարք, եւ ոչ ասաց կատարեալք աւագութեամբ, այլ «եղբարք», զոր ինչ մանաւանդ փափաքէին լսել: Զի ոչ եմ աւտար, ասէ, ես ի ձէնջ եւ ոչ հակառակորդ ձեր, այլ եղբայր ձեր եւ որդի: Այս իսկ պատուոյ է՝ «հարս» ասելն, իսկ «եղբարս»՝ հարազատութեան: Լուարուք, ասաց ոչ վարդապետութեանս եւ ոչ հրապարակաբանութեանս, այլ պատասխանատութեանս. ի կարգի աղաչողի զանձն իւր կացուցեալ:

Իրրն լուան, թէ հերբայնցոց լեզուան բարբառեցաւ նոցա, առաւել եւս դադարեցին ի լծութեան (ԻԲ. 2):

Տեսանե՞ս, թէ որպէս ըմբռնեաց զնոսա համաձայնութիւնն². զի ունէին իսկ հրեայքն պատկառումն առ լեզուն այն: Եւ դու միտ դիր՝ թէ ո՞րպէս նախ ճանապարհ հորդէ՞³ բանին, եւ այնպէս ապա սկսանի եւ ասէ. «Ես եմ այր հրեայ, ծնեալ ի Տարսոն կիլիկեցոց, սնեալ ի քաղաքիս յայսմիկ, առ որս Գամաղիլի խրապեալ» (ԻԲ. 3): Նախ զայն դնէ, զոր ինչ մանաւանդ փափաքէին լսել քան զամենայն ինչ, «հրեայ» զինքն կոչելով: Իսկ վասն «ի Տարսոն» զինքն ծնեալ ասելոյն, զի մի՛ դարձեալ կարծիցեն զագգն նորա, այլ գոյ, զպաշտաւնն ի վերայ էած, թէ «սնեալ ի քաղաքիս յայսմիկ» (ԻԲ. 3), եւ այսու զբազում փոյթն ցուցանէ զծնողացն իւրոց, զոր ունէին յաղագս պաշտմանն: Որոյ վասն զայնպիսի հայրենիս թողեալ եւ այնչափ անտի հեռացեալ, անդանաւր հաճեցաւ սնուցանել զՊաւղոս վասն աւերինացն: Տեսանե՞ս, թէ ո՞րպէս ի բնէ ի վերուստ զաւրէնսն պահէր:

Եւ զայսոսիկ առ նոսա ոչ պատասխանատրէ միայն, այլ եւ ցուցանէ, թէ ոչ մարդկային ղիտողութեամբ ածեալ եղեւ ի քարոզութիւնն⁴, այլ աստուածեղէն զաւրութեամբն⁵: Զի ոչ արդեաւք⁶ այս-

¹ Բ հերբայնցուցն

² ԱԲ համաձայնութիւն

³ Բ ճանապարհորդէ

⁴ ԱԲ ի քարոզութիւն

⁵ ԱԲ զօրութեամբ

⁶ ԱԲ արդեւք

պէս ընդ երկար խրատեալ գոլով աւրինաւքն՝ վաղվաղակի փոփոխեալ լինէր: Եւ եթէ ի բազմաց ոք էր, յիրաւի էր զայն ինչ կասկածել, իսկ եթէ յայնցանէ էր, որ մանաւանդ յաւրինացն ըմբռնեալ էին, ոչ էր մարթ վայրապար փոփոխել առանց զաւրաւոր եւ մեծ պատճառի իրիք:

Այլ զի թերեւս ասէր ոք արդեւք, եթէ ոչ ինչ առնէ այդ՝ զի աստանաւր սնար, զի կամ վաճառականութեամբ կամ ըստ այլ իրիք պատճառի եղեւ կեալը¹ քո աստանաւր: Սմին վասն ասէ. «առ որս Գամաղիւի»: Եւ ոչ ասաց լոկ առ նմա, այլ «առ որսն», զի այսու զժողովալութիւն ունէր եւ զՀա/128ա/մբերութիւն եւ զփոյթն, զոր առ լսողութիւնն² ունէր, եւ զբազում³ առնն զպատկառումն եցոյց: Եւ ոչ ասաց խրատեալ աւրինաւքն, այլ «ըստ ճշմարտութեան հայրենի արինացն նախանձայոյզ էի Աստուծոյ»⁴ (ԻԲ. 3): Յուցանէ այսու, թէ «ի բնէ ի վերուստ այնպիսի ոմն էր, եւ ոչ միայն պարզաբար գիտաւղ աւրինացն: Այսոքիկ թուին յաղագս նոցա վկայութեան ասացեալ, բայց յոյժ հակառակ էր նոցա, եթէ այնպէս քաջ գիտելով զաւրէնսն ի բաց եթող զնա:

Ապա զի մի՛ ասիցեն, թէ զիա՞րդ ոչ վրէժխնդիր լինիս նմա եւ սիրեն զնա՝ եթէ ստուգապէս գիտաւղ ես աւրինացն: Սմին վասն յաւելու. «Նախանձայոյզ էի Աստուծոյ» (ԻԲ. 3): Ոչ վայրապար «նախանձայոյզ», այլ յոյժ սաստիկ: Եւ քանզի մեծամեծս յաղագս ինքեան գովութիւնս ասաց, ապա հասարակաց առնէ զբանն, ի վերայ ածելով, թէ «Որպէս ամենեքեան դուք այսար» (ԻԲ. 3): Եւ ցուցանէ զնոսա ոչ մարդկային դիտողութեամբն առնել զայն, այլ աստուածային նախանձն ի կիր արկանելով: Եւ այսոքիւք յառաջահաս լինելով ի միտս նոցա, եւ ըմբռնելով զնոսա⁵ իրաւքն՝ որ ոչ ինչ էր վնաս: Ապա եւ զնշանսն, որ յաղագս ինքեան է, ի մէջ բերէ ասելով. «Որ գնոյն ճանապարհ վարի»⁶ մինչև ի մահ, կապլն եւ մարմնն ի բանս արս եւ կանայս» (ԻԲ. 4): Եւ այս ուստի՞ արդեւք յայտ իցէ, ի ձերոց վկայութեանցդ, ըստ որում եւ զնոյն քահանայապետն իսկ եւ զամենայն ծերակոյտն կացուցանէր վկայս ասելով. «Որպէս եւ քահանայապետդ վկայէ ինձ եւ ամենայն ծերակոյտդ» (ԻԲ.

¹ ԱԲ կալիքդ] կեալդ

² ԱԲ լսողութիւն

³ Բ բազում առ

⁴ Բ յաստուծոյ

⁵ Բ գսա] գնոսա

⁶ Բ վարի

5): Եւ քանզի ասաց, թէ նախանձայոյզ էի իբրեւ զձեզ, աստ ցուցանէ ի ձեռն գործոցն, թէ առաւել էր քան զնոսա: Զի ոչ եթէ միայն այսպէս էի, ասէ, զի ըմբռնեցից ի տանջանս զաշակերտսն¹ Յիսուսի, այլ եւ զքահանայապետն իսկ ի նոյն յարուցանէի: Եւ ոչ աստ ի քաղաքիս միայն, այլ եւ ի բաց արձակ տեղիս լինէի զնացեալ, եւ ոչ առ արսն միայն լինէի թափանցեալ, որպէս եւ դուք, այլ եւ առ կանայսն՝ կապելով եւ ի բանտ արկանալով:

Անընդերկուանալի էր վկայութիւնս, անպատասխանելի էր հրէիցն: Տե՛ս, թէ որքան վկայս էած, զծերակոյտն եւ զքահանայապետն եւ զայնոսիկ, որ ի քաղաքին էին: Հայեաց ի նորա պատասխանիսն ո՛րպէս ոչ հուպ եղեալ ի զանգիտութիւն, այլ մանաւանդ ի վարդապետութիւն եւ ի յորդորումն եւ յողոքանս, զի եթէ ոչ քարեղէնք էին լսաւղքն, նայեցեալք հաւանէին ասացելոցն: Արդ, մինչեւ ցայս վայր զնոսա իսկ ունէր վկայս, իսկ այն զոր զկնի այսր ասէ, առանց նոցին վկայութեան էր:

Յորոց, ասէ, եւ թուղթ առեալ առ եղրարս, որ ի Դամասկոս երթալի ամել եւ անտի կապեալս յերուսաղէմ, զի պարծեսցին: Եւ եղև ինձ ի գնալն եւ մերձենալ ի Դամասկոս, գմիջաւորքն² յանկարծակի յերկնից փայլաբանեաց լոյս սաստիկ զինել, եւ անկայ յերկիր եւ լուայ բարբառ, որ ասէր ցիս. Մաւուղ Մաւուղ, զի՞ հալածես զիս: Եւ ես ետու պարասխանի եւ ասեմ, թե՛ Ո՞վ ես դու Տէր (ԻԲ. 5-8):

Այդ եւ այսոցիկ /128թ/ հաւատարիմ պարտ էր լինել ի յառաջագունիցն նորա զնացից, ի յիրացն ընտրողութենէ³: Զի ո՞րպէս պարծի, կամ զիա՞րդ յետս կացեալ եղեւ անդէն ձեպելով⁴ յայնց իրաց, յոր փութայրն: Արդ, ընդէ՞ր զայնչափ նախանձն ի բաց ընկէց⁵ յանկարծակի, ասա ինձ. միթէ պատուո՞յ ակնկալութիւն ունելով, եւ սակայն զնորին հակառակն հանդուրժէր: Այլ հանգստեա՞ն արդեւք, եւ այս իսկ ոչ եղեւ նմա: Իսկ զի՞նչ էր, որ զնա հաւանեցոյց: Ոչ է հնար մարդկային մտածութեամբ գտանել, այլ միայն աստուածեղէն զաւրութեանն⁶ էր, որ զիրսն առնէր: Արդ, զայսոսիկ

¹ ԱԲ զաշակերտս

² Բ գմիջաւորքն

³ Բ ընտրութենէ

⁴ ԱԲ ճեպով] ճեպելով

⁵ ԱԲ ընկեց

⁶ ԱԲ զօրութեան

ի նոսա թողեալ՝ ընտրութիւն իրողութեանցն առնել, ինքն միայն պատմէ զեղեալն:

Զմէջաւորքն, ասէ, փայլաբանեաց զինու լոյս սաստիկ, եւ անկայ յերկիր (ԻԲ. 6):

Տե՛ս ո՛րչափ էր գերազանցութիւն լուսոյն՝ յայտ է ահա: Ոչ միայն զի յաղթէր արեգականն, այլ եւ որով կուրացոյցն իսկ զնա, եւ զի ընկէց եւս յերկիր. այլ զի վերածողական եւ ոչ սոսկ պատուհասողական էր եղեալն առ նա, «Լուայ, ասէ, ձայն, որ խաւսէր ընդ իս. Սաւուդ Սաւուդ, զի՛ հալածես զիս» (ԻԲ. 7), յայտ առնելով ձայնին այսու բանիւ զպատճառ զարկուցանելոյն զնա յերկիր եւ կուրացանելոյն զչարս նորա. եւ զի թէպէտ յաչսն տանջեցաւ կուրութեամբ, այլ եւ ոչ ի միտսն: Ուստի յուշի կալով իմ, ասէ, եւ գիտելով, զոր ինչ անցին ընդ իս անցքն, ետող պատասխանի, թէ «Ո՞վ ես դու, Տէր, որ զայսպիսի անցս ընդ իս զաւրեղապէս գործես, ամբաստանելով եւս հալածեալ լինել քո յինէն»: «Եւ ասէ ցիս. Ես եմ Յիսուս Նազարացի¹, գոր դու հալածես» (ԻԲ. 8): Բարւոք եւ զքաղաքն յիշեաց, որ նոցա յայտնի էր, որպէս զի ծանիցեն նոքա: Այսպէս եւ Պետրոս եւ այլ առաքեալքն ասէին՝ «Յիսուս Նազարացի»: Եւ ինքն իսկ Քրիստոս վկայէր, թէ «Այնու հալածեալ լինէր, մարմնաւորութեան իրօք»՝ յայտ է:

Բայց որք ընդ իսն էին, զլոյսն փեսանէին, այլ զձայնն ոչ լուան, որ խաւսէրն ընդ իս: Եւ ասեմ. Զինչ արարից, Տէր: Եւ ասէ ցիս. Յարուցեալ երթիցես ի Դամասկոս, եւ անդ պապմեցից քեզ վասն ամենայնի, գոր հրամայեալ է քեզ առնել: Իբրեւ ոչ փեսանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ ի նոցանէ, որ ընդ իսն էին՝ մտի ի Դամասկոս (ԻԲ. 9-11):

Արդ, միթէ պարծելո՞վ ինչ ստեղծաբանէ՞ իմն զայսոսիկ, եւ ոչ երբեք, քանզի որ ընդ նմայն էին վկայք են, որք եւ զձեռանէ նորա առեալ մուծին ի Դամասկոս, որք եւ զլոյսն տեսին, թէպէտ զձայնն ոչ լուան: Այլ զի ի միւսուամ տեղուջ ասէ, թէ «Որ ընդ նմայն էին՝ զձայնն միայն լսէին, բայց փեսանէին եւ³ ոչ ինչ» (Թ. 7), եւ աստ, թէ «Զլոյսն փեսին, եւ զձայնն ոչ լուան» (ԻԲ. 9): Ոչ են այսոքիկ միմեանց հակառակք. զի ձայնք երկու էին՝ Պաւղոսին եւ Տեառն: Եւ անդ ձայն զՊաւղոսին

¹ Ա ճայգօրացի

² Բ ստեղծաբանիցէ

³ Բ տեսանից] տեսանէին եւ

ասէ, զոր լսէին, թէ «Ո՛վ ես Տէր», իսկ զայն, որ խաւսէրն ընդ նա, թէ «Զի հալածես զիս», ոչ տեսանէին, բայց զլոյսն միայն: Իսկ աստ ձայն զ/129ա/Տեառնն ասէ. «Զի զայնորիկ, որ խաւսէրն, ասէ, ընդ իս՝ զձայնն ոչ լուան»: Եւ ոչ ասէ, թէ ոչ ինչ տեսին, այլ թէ «զլոյսն փնսին»¹:

Արդ, ընդէ՞ր եւ նոքա ոչ կուրացան: Ինձ այսպէս թուի՝ թէ եւ նոցա ոչ երեւեցոյց նոյնպէս եւ զսաստիկ լոյսն, կամ զի ոչ կամեցաւ, զի վկայք իրացն լինիցին, որ վասն Պաւղոսի, կամ զի չէին ինչ աւգտելոց յայնմանէ, բայց միայն Պաւղոս: «Ոչ ոք, ասէ, լուա զձայնն» (հմմտ. ԻՔ. 9): Յոյժ վայելչապէս եղեւ այն, զի նմա միայն պարտ էր ձայնին այնմիկ արժանանալ, իսկ թէ եւ նոքա լուեալ էին, թերեւս ոչ նոյնչափ լինէր սքանչելի, քանզի թանձրամիտքն տեսութեան առաւել հաւանին: «Զլոյսն տեսին» նոքա, եւ ոչ այնչափ զարհուրեալք եղեն, զի առ նոքաւք լոյսն ոչ այնչափ ներգործեաց², որչափ առ նմա, կուրացոյց զնորա զջարսն վասն այնց իրաց՝ որ պատահելոց էին նմա: Բայց եւ նոցա իսկ ետ վերստին տեսանել զսաստուածային լոյսն եւ հաւատալ, թէ կամեցեալ լինէին: Բայց ինձ թուի, թէ տնաւրինաբար նոքա ոչ հաւատացին անդէն իսկոյն, որպէս զի իցեն վկայք հաւատարմագոյնք:

Եւ ասեմ. Զի՞նչ արարից, Տէր (ԻՔ. 10):

Տե՛ս զնա իբրեւ ի գանից իմն կշտամբանաց իմաստնացեալ, վայելչապէս ուսանել, հայցելով հետեւել կամաց խրատողին: «Եւ ասէ ցիս. յարուցեալ երթ ի Դամասկոս, եւ անդ պարմնցից քեզ զարժանն» (ԻՔ. 10): Տե՛ս, զի որ զարկոյցն, նա կանգնէ, զի որպէս ոչ պարզաբար անկաւ, եւ ոչ իւրովի յառնէ, եւ ոչ ինչ թողու առանց վկայութեան, այլ ածէ բոլորովին զքաղաքն ի վկայութիւն, որք եւ տեսին զնա կուրացեալ եւ զձեռանէ նորա առեալ այլոց:

Անանիա ոմն այր երկիւղած, ասէ, ըստ արինացն վկայեալ յամենայն բնակչացն՝ որ ի Դամասկոս հրեայքն էին, եկն եկաց առ իս եւ ասէ. Մաւուդ եղբայր, ի վեր հայեաց: Եւ ես նոյնժամայն ի վեր հայեաց ի նա (ԻՔ. 12-14):

¹ ԱԲ > այլ թէ զլոյսն տեսին

² Բ Երգործութեանց

Ահաւաստիկ դարձեալ այլ վկայ ածէ ի մէջ. եւ տե՛ս որպէս զնա հաւատարիմ առնէ. «Այր, *ասէ*, երկիւղած ըստ արինացն»: Այսպէս ոչ էր աւտար, այլ բուն իսկ եւ վկայեալ յամենայն հրէից¹, որք անդ էին: Ապա ի ձեռն իրաց² եղելոց հաստատէ զվկայութիւնն³, թէ «Նոյն ժամայն ի վեր հայեաց⁴ ի նա եւ փեսի» (ԻՔ. 14): Տեսանե՞ս ի ձեռն զիմաց եւ իրաց խառնեալ զվկայութիւնն⁵: Ըստ զիմաց՝ յընտանեաց իսկ եւ յաւտարաց, որք են քահանայքն եւ երիցունք եւ այնոքիկ, որ ճանապարհորդակիցք էին նորա, իսկ ըստ իրաց՝ այն իսկ, զոր ինչ առնէրն եւ զոր ինչ կրէր, եւ իրքն իրացն վկայէին եւ ոչ միայն դէմքն, ապա ոչ աւտար զիմաց վկայութիւն էր Անանիային, ապա նոյն իսկ իրքն, այսինքն՝ վերստին տեսանելն, ապա եւ մարգարէութիւնն⁶ մեծ, զոր Անանիա *ասէր*. «Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա եւ փեսանել զարդարն» (ԻՔ. 14): Բարւոք *ասաց* «հարցն մերոց», զի ցուցցէ զնոսա ո՛չ գոլով հրեայս եւ ո՛չ որդիս հարցն, այլ աւտարս յաւրինացն եւ թշնամիս⁷ եւ ոչ նախանձախնդիրս աւրինացն: «Ճանաչել, *ասէ*, զկամս նորա» (ԻՔ. 14), ապա այն իսկ էր կամք նորա, եւ ոչ զոր նոքայն առնէին: |128բ| Տեսանե՞ս, թէ որպէս ի կարգի պատմութեան վարդապետութիւն յաւրինէ: «Եւ փեսանել, *ասէ*, զարդարն» (ԻՔ. 14): Առ ժամայն *ասէ* այսպէս եւ ցուցանէ, թէ⁸ սա արդար էր, նոքա պարտապանք էին եւ դատապարտք, եւ ոչ արդարք:

Եւ լսել, *ասէ*, բարբառ ի բերանոյ նորա, զի եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ՝ որոց փեսերն լուար (ԻՔ. 14-15):

Տեսանե՞ս, թէ ո՛րպէս զիրան վերացուցանէ. «վկայ» *ասէ*, վասն այսոցիկ, զոր տեսեր եւ լուար՝ եղիցես, եւ ոչ մատնիչ: «Առ ամենայն մարդիկ» (ԻՔ. 15), *ասէ*⁹, ոչ միայն առ համազգիս, այլ եւ առ աւտարս եւ անհաւատս: Զի վկայ այն իսկ է, որ ոչ զգիտաւղան եւեթ, այլ եւ զանգէտան հաւանեցուցանէ, եւ ի ձեռն երկաքանչիւր զգայութեանց հաւատարմացուցանէ, «որոց փեսերն եւ լուար¹⁰» (ԻՔ. 15):

¹ Բ հրէիցն

² Բ իրացն

³ ԱԲ զվկայութիւն

⁴ Ա հայեցա

⁵ ԱԲ զվկայութիւն

⁶ ԱԲ մարգարէութիւն

⁷ ԱԲ թշնամիսս

⁸ Բ զի, թէ

⁹ ԱԲ եւ ասէ] ասէ

¹⁰ ԱԲ լուար, ասէ

Եւ արդ զի՞ հեղգաս, *ասէ*, արի մկրտեաց եւ լուս գմեղս քո ի կարդալ զանուն նորա (ԻՔ. 16):

Աստանաւր մեծ իսկ բարբառեցաւ, զի ոչ ասաց, թէ յանուն նորա մկրտեսջիր, այլ թէ կարդասցես «զանուն նորա», այսինքն՝ զՔրիստոս: Եւ եցոյց զնա Աաստուած գոլ. զի ոչ է պարտ զայլ ոք կարդալ, բայց միայն զԱստուած. զի եւ զմեղս թողուլ՝ նորա միայն է իշխանութիւն: Առ այս ամենայն ասաց զընտրութիւնն¹ նորա յԱստուծոյ. ոչ այժմէն² եւեթ, այլ անդուստ ի վերուստ յառաջագոյն, ըստ որում գրէ զնոյն եւ ինքն իսկ առ եփեսացիսն: Եւ եցոյց եւս, թէ զոր քարոզէրն՝ յԱստուծոյ լուսաւ զամենայն: Եւ յայտ արար զանձնէ իւրմէ ոչ ի հարկէ եկեալ յայն, այլ դիւրաւ ի կամաց իւրոց հետեւեալ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այսպիսի վկայս եւ մեզ է պարտ լինել, եւ ոչ մատնել զայն, ինչ յոր հաւատարմացաքն: Ոչ միայն յաղագս հաւատոյն ասեմ, այլ եւ յաղագս վարուց առաքինութեան: Արդ, զիա՞րդ վկայեսցուք աստուածայնոցն, թէ բանիւ քարոզեմք³, եւ գործովք զհակառակ նորին առնիցեմք: Զի թէ ոք ասիցէ գոլ զինքն քրիստոնեայ, եւ այլով ամենայնիւ հրէարէն⁴ վարի, բաւակա՞ն իցեն լոկ բանքն առ ի ցուցումն հաւատոյն՝ եւ ոչ երբեք: Այսպէս եւ մեք բանիւ խոստովանելով, թէ յարութիւն է եւ բազում բարութիւնք, արհամարհեսցուք զաստի իրս՝ զի յուսացեալ բարեացն հասցուք:

[ԳԼՈՒԽ ԽԸ.]

Եւ եղև ինձ ի դառնալն յԵրուսաղէմ եւ կալ յաղաւթս ի փաճարին արեացն հացուք⁵, լինել ի զարմացման եւ փեսանել զնա, զի ասէր ցիս. Փութա ել յԵրուսաղէմ վաղվաղակի, զի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ (ԻՔ. 17-18):

Տե՛ս, թէ որպէս անդէն ի ներքս ի հանդէսն ի վկայութիւնս մրցէ զանձն իւր: Զկնի առաջնոյ տեսլեանն եկի⁶ յԵրուսաղէմ, եւ զարձեալ տեսի այլ տեսիլ ահագին, զոր եւ զարմացումն եւ թմբբութիւն կո-

¹ ԱԲ զընտրութիւն

² ԱԲ այժմէն

³ ԱԲ քարոզիցեմք] քարոզեմք

⁴ ԱԲ հրէարեմ

⁵ ԱԲ > արեացն հացուք

⁶ ԱԲ եկի ասէ

չէ՝ առ ի նշանակել զանբաւելի երեւոյմն: «Կալով, ասէ, յաղաթս եղի ի զարմացման» (ԻԲ. 17): Յայտ առնէ, թէ ոչ լոկ տեսիլ էր, այլ սոսկալի վասն որոյ եւ յաղաւթս կալով նորա երեւեցաւ: Եւ զի ոչ բաւեաց առնուլ զհանգամանս երեւմանն, զարմացումն կոչէ: Եւ զի առանց վկայութեան էր այս տեսիլ, յելից իրացն առնուլ զսորայն հաւատարմութիւն, զի ասաց, թէ «Ձնն ընդունելոց զքո վկայութիւնդ, եւ չընդունեցան» (ԻԲ. 18): Յայտն/130ա/է եւ զայս, թէ ոչ երկնչելով ի վշտաց նոցա փախեալ, այլ զի ոչ էին ընդունելոց զվկայութիւնն նորա: Ապա եւ զիւրն պատասխանի ի մէջ բերէ եւ ուսուցանէ զնոսա, թէ մանաւանդ ի մտածութենէ պարտ էր նոցա զայս ճանաչել եւ ամենեւին ընդունել զնորա քարոզութիւնն¹:

Եւ ասեմ, ասէ, Տէր՝ ինքեանք իսկ գիտեն, զի ես էի, որ ի բանսն քայի եւ զան հարկանէի ըստ ժողովրդոց գիտարացեալսն ի քեզ (ԻԲ. 19):

Ո՛չ ընդգիծմախաւսելով Քրիստոսի ասաց զայս, քաւ լիցի, այլ կամեցաւ իմանալ զիրացն զպատճառ, որ այնպէս հրաշափառ թուէր: Ընդէ՞ր² հրեայքն ոչ են ընդունելոց զնորա վկայութիւնն³ վասն Յիսուսի: Բայց զայն ոչ ասաց նմա Քրիստոս, այլ միայն ասաց նմա զնալ, վասն որոյ յաւել, թէ «Եւ յորժամ հեղոյր արինն Սքեփանոսի վկայի քո, եւ ինքն էի, որ ի վերայ կայի եւ կամակից լինէի սպանմանս⁴» (ԻԲ. 20): Յայտ առնէ ամենայնիւ որպէս զի վասն այսորիկ պարտ էր նոցա ընդունել զնա:

Աստանաւր երկուս կազմէ իրս. մի՝ զի պատասխանի նոքա ոչ ունէին զՊաւղոս հալածելովն, զի ոչ վայելչապէս եւ ոչ ըստ իրաւանց հալածէին զնա: Եւ երկրորդ՝ ուսուցանէ, թէ Աստուած է Քրիստոս, զայն իսկ⁵ որ առանց ակնկալութեան էր՝ մարգարէանալով, եւ ոչ ի լիեալսն առ ժամայն հայելով միայն, այլ զհանդերձեալսն յառաջագոյն գիտելով՝ թէ չեն հրեայքն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ, թէ՞ պարտ է զնա քարոզել Աստուած: Այլ զիա՞րդ ապա նախ ասէր Քրիստոս, թէ «Կրեսցէ գանուն իմ առաջի ազգաց եւ թագաւորաց եւ

¹ ԱԲ քարոզութիւն

² ԱԲ թէ ընդէր

³ ԱԲ վկայութիւն

⁴ ԱԲ սպանման նորա

⁵ ԱԲ գայնոսիկ] գայն իսկ

⁶ ԱԲ եւ թէ

որդուցն Խորայլի» (Թ. 15): Այո, բայց զայս ոչ ասաց, թէ հաւատասցեն առանց պատճառի, կամ թէ հաւանեցուցէ: Նա եւ այլազգ. քանզի հրեայքն եւ յայլ տեղիս հաւանեալ լինէին, իսկ աստանաւր ոչ եւս, յորում մանաւանդ հաւանել պարտ էր՝ գիտելով զնորա զառաջին յաւժարութիւնն¹:

Զի տե՛ս դարձեալ, թէ ու՞ր կամ առ ո՞ր բանս վախճանի, ի զաւրաւոր գլուխ մոլորութեանն² եթէ սա ինքն էր, որ հալածէր³, եւ ոչ միայն հալածէր, այլ եւ բիւր⁴ ձեռաւք սպանանէր զՍտեփանոս⁵: Արդ, յիշեցոյց նոցա զչար սպանութիւնն⁶ եւ զդժուարին: Իսկ նոքա յայնժամ մանաւանդ ոչ հանդուրժեցին, քանզի յոյժ սովաւ կշտամբեաց զնոսա: Եւ մարգարէութիւնն⁷ Քրիստոսի լցեալ լինէր, թէ «Ձնն ընդունելոց գրո վկայութիւն» (ԻԲ. 18): Եւ չարախաւսութիւնն⁸ եւ ամբաստանելն յոյժ ճշմարիտ գոլ զնոցանէ ստուգէր եւ նախանձն նոցա չարաչար յայտնէր, եւ ի վկայութենէն, զոր վասն Քրիստոսի տագնապեալք՝ ոչ ներէին հրեայքն ամենայն հրապարակախաւսութեամբ⁹ նորա: Այլ ի լսելն, թէ «Ասաց ցիս. Գնա դու, զի ես ի հեթանոսս հեռաւորս առաքնցից գրեզ» (ԻԲ. 21), յոյժ լցեալք ցասամբ աղաղակէին որպէս առ Ստեփանոսիւ եւ ասէին. «Բարձ գղա» (ԻԲ. 22): Զոր եւ առ Քրիստոսիւ ի ժամ խաչին ասէին: Ո՛հ անհանճար¹⁰ մոլեգնութեանն¹¹, ընդէ՞ր արդեւք ստիպէք բառնալ զայրդ: Զի Աստուած խաւսեցաւ ընդ դմա, եւ զի հնազանդեցաւ դա լսե՞լ Աստուծոյ: Աստի ուսանիմք, թէ զիստ եւ զանհնազանդ հոգի ոչ ինչ կարէ կակղել:

Եւ ունկն դնէին նմա, ասէ, մինչեւ ցայս /130բ/ բան. ապա բարձին գձայնս իւրեանց եւ ասեն. Բարձ գղա յերկրէ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ (ԻԲ. 22):

Ո՛վ ամենադաժանք, դմա՞ ոչ է պարտ կեալ՝ յամենայնի հպատակելովմդ Աստուծոյ, եւ ձերոյ ամբարշտութեանդ պարտ է կեա՞լ,

¹ ԱԲ յօժարութիւն

² ԱԲ մոլորութեան

³ ԱԲ հալածէրն

⁴ ԱԲ բեր

⁵ ԱԲ Ստեփանոս

⁶ Ա բ սպանութիւն

⁷ ԱԲ մարգարէութիւն

⁸ ԱԲ չարախաւսութիւն

⁹ ԱԲ հրապարակախաւսութեան

¹⁰ ԱԲ ո՛հ անճար] ո՛հ անհանճար

¹¹ ԱԲ մոլորութեան

ով պիղծք եւ մարդասպանք: «Եւ յաղաղակելն նոցա եւ յընկենուլն¹ գհանդերծսն եւ զփոշին ցանել յաւդս՝ հրամայեաց հազարապետն մուծանել զնա ի բանակն, ասէր՝ զանի հարցանել զնա, զի գիտասցէ վասն որո՞յ յանցման այնպէս աղաղակելին զնմանն» (ԻՔ. 23-24): Տե՛ս զնոցա զանմիտ կատաղութիւնն², աղաղակելովն եւ զհանդերծսն³ ընկենլով եւ զփոշին յաւդս ցանելով, յայտ առնէին զդժընդակ բարկութիւնս իւրեանց իբրեւ ի դիւէ մոլեալք, եւ զի դժուարին լինիցի հակառակութիւնն, երկեցուցանել կամելով զիշխանն:

Եւ տե՛ս, ոչ ասեն զպատճառն, քանզի ոչ ինչ ունէին⁴ ասել, այլ միայն աղաղակելովն զարհուրեցուցանել կարծէին: Եւ յորժամ ասացին, թէ չէ պարտ դմա կեալ, յայնժամ հազարապետին պարտ էր քննել ի նոցունց ինքեանց եւ ի դատախազիցն իմանալ, եւ քան զնա հարցանել՝ զի ծանիցէ զպատճառն, ի նոցանէ, որ աղաղակէին՝ մանաւանդ պարտ էր հարցանել եւ իմանալ, թէ իրացն ասացելոց իրաւացեա՞լք լինիցին: Այլ վայրապար իշխանութեամբն⁵ շնորհուկս առնէ հրէիցն. զի ոչ զայն ինչ խնդրէր, զի իրաւամբ⁶ գործիցէ, այլ միայն զի դադարեցուցէ զանիրաւ ցասումն նոցա:

Եւ իբրեւ պրկեցին զնա փոկովք, ասէ Պաւղոս ցհարյուրապետն, որ ի վերայ կայր, եթէ զայր հոռմայեցի եւ անարար պարս իցէ զա՞ն հարկանել (ԻՔ. 25):

Արդ, միթէ ստիցէ՞ արդեւք զայս Պաւղոս. ա՛ւն անդր, քա՛ւ լիցի, քանզի հռոմայեցի էր ստոյգ ընդ իշխանութեամբ նոցին գոլով, վասն որոյ եւ ասէ զայս, զի խափանեսցէ զանիրաւ դատաստանն: Եւ եթէ ոչ այլ ինչ՝ երկնչէր արդեւք, զի մի՛ անիրաւ եւ սուտ ըմբռնեալ ի հռովմայեցի զինքն ասելն, մեծագոյն հատուցէ պատուհաս: Եւ տես, զի ոչ լոկ ասէ զայս, այլ յաւելու, թէ «զայր անարար» (ԻՔ. 25): Զայս ասելով՝ կրկին առնէ զամբաստանութիւնն⁷. մի՛ զանիրաւութիւն նոցա յայրն անարատ, եւ երկրորդ՝ զի հռովմայեցի էր ազատ գոլով, քանզի մեծ ունէին յայնժամ զգոլն հռովմայեցի: Եւ զի ասի,

¹ Բ յընկենուլ

² ԱԲ կատաղութիւն

³ Բ գհանդերծս

⁴ ԱԲ առնէին] ինչ ունէին

⁵ ԱԲ իշխանութեամբ

⁶ ԱԲ իրաւամբք

⁷ ԱԲ զամբաստանութիւն

Թէ յԱզրիանոս¹ թագաւորէ ամենեքեան, որ ընդ իշխանութեամբ հռովմայեցւոցն էին, հռոմք² ասէին: Այլ զի Ազրիանոս զկնի ժամանակացն Պաւղոսի էր, թերեւս այսպէս իցէ:

Կիր. սրբագր. Զի Պաւղոս ոչ էր պաղեստինացի, այլ կիլիկեցի, բուն իսկ ընդ հռովմայեցւոյք գոլով:

Յոռ. եւ քանզի դիւրին էր նմա արհամարհել զհարկանելն³ համբերութեամբ, բայց զի մի՛ արհամարհելի դիւրաւ երեւեսցի նոցա, վասն որոյ այժմ ի յոլովագոյն երկիւղ արկանէ զնոսա. զի գանս անիրաւաբար զնովաւ արկանէին, ըստ որում եւ վասն իրաւանց ոչ ինչ փոյթ առնէին եւ կամ բնաւ իսկ սպանանէին զնա, բայց յորժամ զայն ասաց, ոչ եւս համարձակէին: Տե՛ս, թէ ո՞րպէս տեղի տայ Աստուած լինել բազում |131ա| ինչ մարդկաւրէն, եւ առ սովաւ եւ առ այլոցն: Եւ միտ դիր, թէ որպէս ի կասկածի եղեն եւ յանձն առին պատճառ արձակելոյ գոլ զնա զասելն հռովմայեցի գոլ, որք զառաջինն ոչ կասկածէին իբրեւ ի տնանգէ⁴ ուրուք:

Այլ իբրև լուսի հարիւրապետն, մաքուցեալ առ հազարապետն պարմնաց եւ ասէ. Զի՞նչ կամիս առնել, քանզի այրն այն հռովմայեցի է: Մաքուցեալ հազարապետն ասէ ցնա. Ասա՛ դու ցիս՝ հռովմայեցի՞ ես. եւ նա ասէ՛ այր: Պապասխանի ետ հազարապետն. ես բազում գլխոց զգինուորութիւնս զայս ստացայ⁵: Ասէ Պաւղոս. Ես ծնեալ իսկ ի դմին եմ: Եւ վաղվաղակի ի բաց կացին, որ հարկանելոցն էին զնա, եւ հազարապետն իսկ երկեալ իբրև զիպաց, թէ հռովմայեցի է, եւ զի կապեալ եւս էր զնա⁶ (ԻԲ. 26-29):

Ապա ուրեմն ոչ էր սուտ հռովմայեցի ասելն, եւ հազարապետն յիրաւի երկնչէր: Ասելովն իւրով Պաւղոս, թէ «Ես ի դոյն ծնեալ եմ», յայտ արար, թէ հաւր հռովմայեցւոյ էր ծնունդ:

ԿԻՐ.⁷ Եւ ոչ աննշանի ուրուք, այլ պատուեցելոյ. զի եւ բազումք ի հրէից յայնժամ բնակէին ի Հռոմ: Իսկ ոմոնք ասեն, թէ զնոց իսկ ստացեալ էր հայրն նորա զհռովմայեցի գոլն ի հռովմայեցւոցն,

¹ Ա յԱնդրիանոս

² ԱԲ հռոմք

³ Բ հարկանելն

⁴ Բ տնանկէ

⁵ ԱԲ ստացա

⁶ ԱԲ > եւ զի կապեալ եւս էր զնա

⁷ ԱԲ > կիր.

որպէս հազարապետն ասէր, թէ «Ես բազում գլխով¹ սրացայ զիշխանութիւնս» (Խմմբ. ԻԲ. 28), զոր զգնոցն² ասեն նշակել³ գլխովքն: Այլ զի⁴ նչ արդեւք յայսմանէ լինի: Միտ դիր, արձակեալ անդէն ի կապանացն՝ իջոյց զնա առ հրեայսն:

Եւ ի վաղիւ անդր, *ասէ, կամէր զիտել զճշմարիտն, եթէ զինչ չարախաւսութիւն իցէ գնմանէ հրէիցն, արձակեաց զնա եւ հրամայեաց կոչել զբաւանայապետսն եւ զամենայն արեանն, եւ իջուցեալ զՊաւղոս կացոյց ի մէջ նոցա (ԻԲ. 30):*

Արդ, հազարապետն, զի առեալ նախ զնա ի բաց եհան ի նոցանէ, եւ ինքն ի բաց գնաց՝ տեսեալ զյանդգնութիւնն նոցա, եւ եթէ ոչ՝ թերեւս ի ձեռս տուեալ էր զնա նոցա, եւ եցոյց այնու, զի կամաւ եւ ոչ ըստ իւրեանց կրէր Պաւղոս, զոր ինչ կրէրն ի նոցանէ: Եւ այնպէս իրաւքն պատասխանի արար նոցա, այսինքն՝ ի բաց առնլովն զնա ի նոցանէ բանիւ եւ ոչ կամելով տալ նոցա պատասխանի, քանզի յոյժ մեղադրէր նոցա: Բայց զայն՝ զի դարձեալ հանդէս եղիցի, վայելչապէս արար, քանզի եցոյց նոցա՝ եթէ զոչ ինչ անիրաւեալն սպանանեն, եւ մանաւանդ անբիծ գոյով նորա, իրքն անիրաւութիւն⁴ էր. եւ զի լուծեալ զնա իջոյց յատեանն, զայս ի սկզբանն իսկ պարտ էր առնել, վասն որոյ մանաւանդ տարակուսէին հրեայքն, եւ ինքն ոչ ընդ բազմութեանն⁵ եւ ոչ ընդ հանդիսին խաւսի:



¹ ԱԲ գլխովք

² ԱԲ գնոցն

³ ԱԲ նշանակելն

⁴ ԱԲ անիրաւութեան

⁵ ԱԲ բազմութեան

Իսկ Պաւղոս հայեցեալ յարեանն ասէ. Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտաւք գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչև զայսար (ԻԳ. 1):

Այսինքն՝ ոչ գիտեմ զանձն իմ անիրաւ ինչ եղեալ առ ձեզ, եւ ոչ արժանի կապանացս այսոցիկ գործեալ ինչ. զի եւ ոչ ի մարդիկ հայէի, այլ առաջի Աստուծոյ ցուցանէի զուղղութիւնս, որում սուտ եւ թիւր լինել Աստուծոյ անհնար է: «Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զրեքան նորա: Յայնժամ Պաւղոս ասէ ցնա. հարկանելոց է զ/131բ/քեզ Աստուած, որմ բռեալ, եւ դու նստիս դարե՞լ զիս ըստ արինացն, եւ առանց արինաց հրամայես զիս հարկանել: Եւ որ շուրջն կային ասնն, զքահանայապետ Աստուծոյ հայհոյեալս: Եւ ասէ Պաւղոս. Ոչ գիտի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ, գրեալ իսկ է՝ զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես» (ԻԳ. 2-5): Ընդէ՞ր պատասխանատրէ Պաւղոս ի հարկանելն զինքն իբրեւ չարախաւսելով իմն, եւ ապա ի վերայ ածէ, թէ «զիշխան ժողովրդեան քո՝ ոչ հայհոյեսցես» (ԻԳ. 5). քանզի թէ չէր իշխան, զայլ ոք վայրապար պարտ էր անարգե՞լ: Եւ զիա՞րդ ինքն ասէ՝ «Բամբաստին գմեզ՝ արինեալ» (Ա. Կրնթ. Դ. 12), իսկ աստանաւր զներհակն առնէ, ոչ անարգէ միայն, այլ եւ անիծանէ, կամ զիա՞րդ ոչ գիտէր, թէ քահանայապետ էր: Տեսցուք վասն զայսոցիկ:

Արդ, ասեմք, թէ համաձակութեան մանաւանդ են բանքս քան թէ ցասման, ոչ կամէր դիւրաւ արհամարհելի լինել, եւ անիրաւ գործոյն յառաջ գալ: Զի թէ հազարապետն արձակէր զնա եւ խնայէր ինքն հարկանել ի մտանել² զնա նմա հրէիցն, ապա զիա՞րդ նոքա զայն առնէին, եւ քահանայապետին պաշտանէիցն տալ հրաման հարկանել զնա՝ մանաւանդ յանդգնութեան էր գործ: Վասն որոյ եւ նա ո՛չ առ սպասաւորին տարածանէր զբանն, որ եհար, այլ առ այն, որ հրամայեաց: «Նարկանելոց է զքեզ զԱստուած» ասէ (ԻԳ. 3): Ոչ բարկութեան է բանս, այլ մարգարէութեան, որպէս դիպելոց էր նոցա չարիքն, զոր եւ Քրիստոս գուշակեաց յառաջագոյն: Իսկ «Որմ բռեալ» (ԻԳ. 3)՝ զմարմնաւոր փոյթն ասէ, զոր եւ ինքն իսկ Քրիստոս գերեզմանս բռեալս ասաց ցնոսա, զի «Զարքաքինն, ասէ, սրբք, եւ ներքինն ձեր լի է չարութեամբ» (Խմնք. ԺԱ. 39): Արդ, ոչ էր անարգանաց այսպէս ասելն որպէս կանխաւ ասացի, ապա թէ ոչ՝ եւ զառ ի Քրիստոսէ ասա-

¹ Աբ քոյ

² Բ ի մատնել

ցեալն թերեւս անարգանս ասացէ ոք, թէ «Վայ ձեզ, զի նման էք գերեզմանաց բոկոց» (Մտրթ. ԻԳ. 27), եւ «Դուք ի հարկ սաբանայլ էք» (Յովհ. Ը. 44):

Այո, ասէ, թէ նախ քան զհարկանելն էր ասացեալ՝ ոչ էր բանն ցասման, այլ համարձակութեան: Այլ ես նախ ասացի զպատճառն, թէ զի յանդգնութեան նոցա էր գործն: Եւ մանաւանդ Քրիստոս ի բազում տեղիս անարգեաց զհրեայսն՝ ինքն ի նոցանէ անարգեալ լինելով, որպէս յորժամ ասէ. «Զիա՞րդ կարէք դուք հաւաքալ» (Յովհ. Ե. 44), եւ «Մի՛ կարծէք, թէ ես չարախաւս եմ գձէնք առ Նաւր, գոյ որ չարախաւս գձէնք» (Յովհ. Ե. 45), արդ ոչ էր այն անարգանք, քաւ լիցի: «Դու նաքիս, ասէ, դարե՛ւր զիս ըստ արինացն» (ԻԳ. 3), փոխանակ ասելոյ, թէ դու պարտական գոլով եւ բազում տանջանաց արժանի ըստ աւրինացն, իսկ զիս անաւրէնութեամբ դատես: Տե՛ս արդ, թէ ո՞րպէս զարհուրեցաւ քահանայապետն ի նորին համարձակութենէն: Զի գոր ի դէպ էր անդրէն դարձուցանել զամենայն¹, զհարցումն² եւ զկսկծելի բանսն, ողորքեն մանաւանդ, թէ «գրահանայապետ Ասպուծոյ հայհոյե՛ս»: Ապա յետոյ կամեցաւ եւ³ նա ցուցանել, թէ ոչ վասն երկիւղի, եւ ոչ թէ զի չէր արժանի Անանիայն այն լսել զայնոսիկ՝ ասաց այսպէս, թէ գրեալ է, այլ աւրինացն հաւանելով աստան/132ա/աւր, որով եւ նոքա յոյժ հաւանեալ՝ լուռ լինէին:

Իսկ ընդէ՞ր ոչ գիտէր, թէ քահանայապետ էր նա: Վայելչապէս. քանզի փութով փոփոխէին, եւ կարգ աւրինացն եղծեալ էր, եւ նա ընդ երկար ժամանակաւ հեռացեալ էր ի հրէիցն, այլ եւ տեսանելով զնա ի միջի հանդերձ այլովք բազմաւք, ոչ կարէր գիտել յայտնապէս, թէ քահանայապետ իցէ, բազմաց գոլով նոցա եւ զանազանից: Իսկ զայս բան առ նոսա տարածանելով եւ պատասխանատրելով, թուի ինձ, թէ աւրինացն լինի հպատակեալ: Եւ ընդէր արդեւք ինքն հրեայ գոլով, անդանաւր սնեալ եւ խրատեալ՝ ոչ բնակէր ընդ նոսա դեգերելով: Վայելչապէս. քանզի կամէր խափանել զաւրինացն իրս, եւ Աւետարանին քարոզութեամբն բազում իրս հակառակ նոցա կազմել, սմին վասն յամենայն տեղիս հալածական եղեալ փախուցեալ լինէր:

Բայց եւ տե՛ս որչափ հեզութեամբ ընդ նոսա խաւսի. «Ոչ գիպէի, ասէ, եղարք թէ իցէ քահանայապետ» (ԻԳ. 5): Եւ զի ոչ հեզնելով ասաց, ի վերայ ածէ զճշմարիտ աւրէնսն. «Գրեալ է, ասէ, զիշխան ժողովրդեան քո՜»

¹ Բ զամենայնն

² Բ գիարումն

³ ԱԲ ի] եւ

⁴ ԱԲ քոյ

ո՛չ հայտնուցես» (ԻԳ. 5): Եւ իշխան տակաւին խոստովանի զնա: Արդ, զի մի՛ ասիցեն, թէ ճշմարիտ է, զոր ինչ լուան զնմանէ վասն աւրինացն արհամարհելոյ, զի ահա եւ զքահանայն առաւել քան զաւրէնսն անարգեաց¹ նա: Ընթանայր նա յաւրէնսն բանին, զոր ասաց, եւ յաւրինացն, զոր երկրորդեաց նա՝ յայտ արար, որոց նստեալ դատէին զնա՝ իբրեւ զաւրինազանց, եթէ պահէր նա զաւրէնսն եւ սիրէր զնա: Զի թէպէտ եւ փոքր փոքր ինչ խափանէր, զի զթլփատութիւն եւ զչաբաթս լուծանէր նա, այլ նոքա մեծամեծաւք եւս լուծանէին զնա: Զի ի հրեշտակս եւ ի հոգին եւ ի յարութիւնն², զոր քարոզէր աւրէնքն, նոքա ոչ խոստովանէին, առ որս³ զհամարձակութիւնն⁴ ի ճահ ցոլցանէր Պաւղոս:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ուսցուք եւ մեք զհեզամտութիւն եւ զհամարձակութիւն, զի երկոքումբքս իցեմք կատարեալք: Եւ բազում ստուգութեան պէտք են որոշել զսոսա ի ներհակացն, զի ընդդէմ է համարձակութեանն⁵ յանդգնութիւն, եւ հեզամտութեանն⁶ անարիութիւն: Արդ, տեսցուք՝ գուցէ զչարութիւնն⁷ իբրեւ զառաքինութիւն ողջունիցեմք: Եւ լինի այս ո՞րպէս, յորժամ զայլս զրկեալ եւ անիրաւեալ տեսանելով լուեմք, անարուութեան⁸ է: Իսկ յորժամ մեք զրկեալք հանդուրժեմք, հեզամտութիւն, եւ յորժամ անձանց վրէժխնդիր լինիցիմք, յանդգնութեան⁹ է, եւ յորժամ յաղագս այլոց աշխատիմք, համարձակութիւն, եւ ուղղեմք զայս, թէ յախտից ազատք իցեմք:

[ԳԼՈՒԽ ԽԹ.]

Յոհ. Իբրև գիպաց, ասէ, Պաւղոս, եթէ մի՛ կողմն¹⁰ սանդուկեցոց է եւ միսն փարիսեցոց, աղաղակէր ի մէջ արեւնին. Արք

¹ Ա անարգնեաց

² ԱԲ յարութիւն

³ ԱԲ աւուրս] առ որս

⁴ ԱԲ զհամարձակութիւն

⁵ ԱԲ համարձակութեան

⁶ ԱԲ հեզամտութեան

⁷ ԱԲ զչարութիւն

⁸ Ա անարութեան

⁹ ԱԲ յանդգնութիւն

¹⁰ ԱԲ կողմ

Եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ, այլ վասն յուսոյն եւ յարութեան մեռելոց աւասիկ դարիմ (ԻԳ. 6):

Դարձեալ մարդկապէս բարբառի, եւ ոչ յատուկ շնորհիւն վայելէ եւ յայսմիկ եւ յայն՝ որ յետս այսորիկ է: Եւ քանզի կամեցաւ հերձուլ յերկուս զբազմութիւնն¹ զայն՝ որ չարաչար միաբանեալ էին հակառակ նմա, եւ զոր ասաց՝ «Ճշմարիտ էր աստանաւր |132բ| եւ ո՛չ սուտ», քանզի փարիսեցի էր ի ծննդենէ եւ ի նոյն աւրինաւքն վարժեալ: Եւ զի մի՛ թուիցի սուտակասպաս լինել յասելն² փարիսեցի գոլ զինքն, ի վերայ էած, թէ «Վասն յուսոյ եւ յարութեան մեռելոց դարիմ ես» (ԻԳ. 6): Եւ քանզի նոքա ոչ ախորժէին ասել, թէ ընդէր դատին զնա, հարկի այնուհետեւ ինքն ասել: Եւ զայս ասելով, ի չարախաւսութենէ նոցա եւ ի դաւաճանութենէ ազատեաց զանձն իւր, որով եւ նոքա յամաւթ եղեն:

Եւ զայս իրրեւ ասաց, եղեն հերձուածք փարիսեցւոցն եւ սահուկեցւոց, եւ պապառեցաւ բազմութիւնն³, քանզի սահուկեցիքն ասէին՝ չիք յարութիւն եւ ոչ հրեշտակք, եւ ոչ հոգի. բայց փարիսեցիքն խոստովանին զերկոսեան, եւ եղև աղաղակ մեծ (ԻԳ. 7-9):

Տեսանե՞ս, զի ոչ ինչ անմարմին գիտեն սահուկեցիք, թերեւս եւ ոչ զԱստուած ասեն գոլ անմարմին, յոյժ թանձրամիտ⁴ գոլով եւ մարմնասէրք. վասն որոյ եւ ոչ զյարութիւնն⁵ ախորժեն գոլ կամ հաւատան լինել, թանձրամիտք եւ կոյրք մտաւք, անհաւատ⁶ գոլով եւ մարմինք եւեթ նմանք շնչաւորաց: Արդ, ի պատճառս յարութեանն⁷, որ հաւաստին է, ոմանք կալան յանձին, եւ կէսք⁸ ոչ հաւատացին. եւ այնոքիկ՝ որ զի ամենեքեան ընդդէմ նորա էին, եղեն ընդդէմ միմեանց մեծապէս վիճամամբ:

Եւ յոպն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոցն, հակառակէին եւ ասէին. Ոչ ինչ չարախաւսութիւն գրաննմք յառնս յայսմիկ, բայց եթէ հոգի խաւսեցաւ ի դմա կամ հրեշտակ (ԻԳ. 9):

¹ ԱԲ զբազմութիւն

² Բ հասել

³ ԱԲ բազմութիւն

⁴ Բ թանձրամիտք

⁵ ԱԲ զյարութիւն

⁶ ԱԲ անհաւատք

⁷ ԱԲ յարութեան

⁸ ԱԲ կէսքն

Ընդէ՞ր յառաջ քան զայս բան վասն նորա ոչ ետուն նոքա այսպիսի պատասխանի: Յորժամ ընդ նոսա եղեւ, յայնժամ զպատասխանին տան վասն նորա: Տեսանե՞ս յորժամ ակտքն տեղի տան, թէ ո՞րպէս գտեալ լինի ճշմարտութիւնն¹: Որպիսի՞ կամ զի՞նչ ամբաստանութիւն է վասն նորա, ասեն. «Բայց եթէ հրեշտակ կամ Նոզի խաւսեցաւ ի դմա» (ԻԳ. 9): Տե՛ս եւ զՀանճար իմաստութեանն² Պաւղոսի, ոչ ինչ տուեալ նոցա պատճառս առ ի կործանել³ անարգելոյ նմա զաւրէնսն:

Եւ ի բազմանալ ամբոխին, երկուցեալ հազարապետն, թէ զուցէ ճեղքիցի Պաւղոս ի նոցանէ, հրամայեաց զաւրականին իջանել յափշտակել զնա ի միջոյ նոցա եւ ամել ի բանակն (ԻԳ. 10):

Երկնչի այնուհետեւ Հազարապետն, զի մի՛ սպանցեն զնա, քանզի գիտաց, թէ Հռովմայեցի է, եւ ոչ էր իրքն առանց վշտի, այսինքն՝ սպանանիլն Պաւղոսի: Տեսանե՞ս, զի յիրաւի զանձն իւր խոստովանեցաւ Հռոմայեցի գոյ. զի եթէ ոչ էր ասացեալ զայն, թերեւս ոչ էր նա այժմ երկուցեալ, եւ ոչ զաւրականաւք մեծաւ բռնութեամբ ի միջոյ նոցա զնա յափշտակեալ: Տինա, քանզի եւ լուաւ իսկ Հազարապետն, զի ազատեցին զնա յամբաստանութենէ⁴ փարիսեցիքն, եւ դատ արարին⁵ վասն նորա, այնուհետեւ մեծաւ Համարձակութեամբ յափշտակէ զնա ի միջոյ նոցա. այլ եւ նոյն իսկ ասացեալքն ի նոցանէ զՊաւղոսէ⁶, թէ⁷ «հրեշտակ կամ Նոզի խաւսեցաւ ի նմա» (ԻԳ. 9), իմաստութեամբ լի են:

Եփր. Դարձեալ դասակն⁸ Հռոմովոց⁹ յափշտակեցին զնա, եւ տան¹⁰ բանտի վասն հրէիցն եւ |133ա| սպանողաց իւրոց թաքուցին զնա. եւ զի Հանդերձեալ էին փութով սպանանել, յայնչափ վշտաց եղեւ ճողոպրեալ:

¹ ԱԲ ճշմարտութիւն

² ԱԲ իմաստութիւն

³ Բ ի կարծել] ի կործանել

⁴ Ա յամբաստանութն

⁵ ԱԲ արար

⁶ Բ զպօղոս

⁷ Բ եթէ] թէ

⁸ ԱԲ դաստակն] դասակն

⁹ ԱԲ հռոմոց

¹⁰ ԱԲ ի տան

Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ. քաջալերեաց, Պաւղոսէ¹, զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, պարտ է քեզ եւ ի Նոռմ² վկայել (ԹԳ. 11):

Յոհ. Ի միտ առ եւ զերեւուամն Քրիստոսի, թէ ո՞րչափ լի է մխիթարութեամբ: Յառաջագոյն գովէ զնա, թէ «որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ», ապա եւ զանյայտն ոչ թողացոյց, այլ յայտնեաց նմա զգնալոյն ի Հոռմ³, որ եւ ահագին էր, զի անդ ոչ միայն զնասցես, ասէ, այլ եւ ի մեծագոյն պսակս հասանիցես վկայելով վասն իմ յայնմ մեծ քաղաքին:

Այլ ընդէ՞ր ոչ նախ քան զանկանելն ի վիշտսն երեւեցաւ նմա Քրիստոս: Վկայելչապէս. վասն զի հանապազ ի վիշտս մխիթարէ Աստուած, զի յայնժամ մեծ եւ փափաքելի երեւեալ լինի մխիթարիչն, եւ ի տագնապի նեղութեանն⁴ կրթելով զմեզ: Նա եւ այլազգ. քանզի յայնժամ նախ քան զայս վիշտս ի դիւրութեան էր, ներողութիւն գտեալ եւ արձակեալ ի կապանաց, բայց այժմ հանդերձեալ էր ընդուեւ զգժուարիսնսն ի նոցանէ, այսինքն՝ զբաւ մահու:

Զի իրրեւ այգ եղեւ, արարեալ ժողով հրէիցն՝ նգովեցին զանձինս իւրեանց ոչ ուրել եւ ոչ ըմպել⁵ մինչեւ սպանցեն ցՊաւղոս: Եւ էին աւելի քան զքառասուն, որոց զայս ընդ միմեանս երդումն արարեալ էր (ԹԳ. 12-13): Յորժամ⁶ տեսին պիղծքն այնոքիկ զամենայն, զոր կամէին խափանեալ եւ անվճար, ի ձեռն ինքեանց այնուհետեւ յանդգնին զամենայն ինչ առնել, կամեցեալ զնա սպանանել յառաջ քան զայս, եւ խափանեալք⁷, բայց ոչ երբեք դադարեն ի չարութենէ այնչափ վրիպեալ լինելով, եւ տակաւին լինին: Տե՛ս արդ. ո՞րչափ մանաւանդ տնաւրինեցաւ որպէս զի ի մոլեգնութենէն թուլացեալ լիցին նոքա, ուսանելով զայնոսիկ ի ձեռն, որոց հնար էր նոցա զղջանալ, բայց ոչ ինչ նուազ ի վերայ հասեալ լինին չարութեամբ: Եւ տես, թէ ո՞րպէս ուժգինք էին եւ յորդորք ի չարութիւն, եւ նգովեցին զանձինս: Ապա ուրեմն յամենայնի եւ հանապազ նգովեալք են նոքա, քանզի զանձինս փակեցին ի նզովս, եւ զՊաւղոս ոչ կա-

¹ ԱԲ պօղէ] պաղոստ

² Ա հռովմ

³ ԱԲ հռովմ

⁴ ԱԲ նեղութեան

⁵ ԱԲ ըմբել

⁶ Բ յայնժամ] յորժամ

⁷ Բ խափանել] խափանեալք

րացիին սպանանել: Եւ քառասուն այր համանգամայն, զի այնպիսի է ազգն այն, յորժամ յաղագս բարւոյ իմիք պարտ է միաբանել, եւ ոչ երկուս եկեալ լինին ի միասին: Իսկ յորժամ յաղագս չարի, հանդէսք խմբից եւ գունդք բոլորովին, նա եւ զիշխանսն եւս հաղորդս առնուն կատարել զչար:

Մաբեան, *ասէ*, առ քահանայապետսն եւ երիցունսն¹ եւ ասնն. Նգովիւք նգովեցար զանձինս ոչ ինչ ճաշակել մինչեւ սպանցուր զՊաւղոս (ԻԳ. 14):

Ընդէ՞ր, զի՞նչ չար արար ապաքէն, զի կեանս աւետարանեաց ձեզ, զի առ Աստուած կամեցաւ ածել զձեզ: Տե՛ս, ջան անչափ առ ի կատարելոյ զչար: «Բայց դուք զգացուցէք զհազարապետին հանդերձ արկնին, զի իջուցել զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիր ճշմարտագոյնս ինչ զիպել զնմանէ, եւ մեր յառաջ քան զմարտելն² նորա պատրաստեմք ի սպանանել զնա» (ԻԳ. 15):

/133բ/ Ահա բանք աւելորդք եւ լի անմտութեամբ: Ո՞չ երկիցս առ ձեզ հրապարակաբանեաց, ո՞չ փարիսեցի զինքն գոլ խոստովանեաց, եւ առաւելն քան զայս զի՞նչ առնէ: Այսպէս ոչ երկնչէին ի չարեաց, ոչ դատաստանք ի նոսա, ոչ աւրէնք: Այսպէս քան զամենայն մարդիկ էին յանդգունք եւ խիստք, եւ զկամսն խոստովանէին, եւ զգործն չարութեան պատմեն:

Եւ լուեալ քեռորդոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն³ եկն եմուր ի բանակ անդր, պատմեաց Պաւղոսի, եւ կոչեցեալ առ ինքն զմի ի հարիւրապետաց անրի եւ ասէ. Զպատանիս գայս քար առ հազարապետն, զի ունի⁴ ինչ պատմել նմա, եւ նորա առեալ զնա քարաւ առ հազարապետն (ԻԳ. 16-18):

Այս իսկ տնաւրէնութեանն⁵ Աստուծոյ էր, որ ո՛չ զմտաւ ածին նոքա, թէ լուիցէ պատանին զդաւաճանելն իւրեանց: Եւ զիարդ Պաւղոս ոչ զարհուրեցաւ, քանզի զմտաւ էած զլսելն զբանն պատանւոյն⁶, թէ «Աստուծոյ է գործս այս եւ նա կարաւ է փրկել, եւ զամենայն ինչ

¹ ԱԲ երիցունս

² Բ զմատչել

³ ԱԲ զդաւաճանութիւնն

⁴ Բ ունիցի

⁵ ԱԲ տնօրէնութեանն

⁶ ԱԲ պատանւոյ

ի նա ընկեց»։ Սակայն եւ ոչ այնպէս զանձն իւր թողացոյց, այլ ասաց հազարապետին զդարանագործութիւնն¹ հաւատոց Քրիստոսի եւ եկեաց։

Տե՛ս դարձեալ զի մարդկային նախախնամութեամբ լինի փրկեալ. զի հազարապետն ոչ թողացոյց իմանալ ումեք եւ ոչ հարիւրապետին, զի մի՛ լինիցի իրքն յայտնի։ Եւ նա տարաւ զպատանեակն առ հազարապետն եւ ասէ. «Կապեալն Պաւղոս կոչեաց զիս եւ աղաչեաց զպապանիս զայս ամկ առ քեզ, ունի ինչ պարմնի քեզ։ Եւ առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց մեկուսի. հարցանէր, թէ զի՞նչ ունիս խաւսել ընդ իս. եւ նա ասէ. Նրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վաղիս զՊաւղոս իջուցես յարեանն, իրրեւ թէ կամիցին ճշմարտագոյն ինչ հարցանել վասն նորա. արդ դու մի՛ անասացես նոցա, քանզի դարան գործեալ է նմա ի նոցանէ արանց աւելի քան զբառասուն, որք նգովեցին զանձինս ոչ ուրել եւ ոչ ըմպել² մինչեւ սպանցեն զՊաւղոս³, արդ պարտաստ եմ եւ սպասեն քում հրամանիդ։ Ապա հազարապետն արձակեաց զպապանին, պարուէր փուտեալ մի՛ ումեր ասել, թէ զայս զգացուցեր ինձ» (ԻԳ. 18-22)։

Արդ, երեւեցաւ նմա Տէր եւ քաջալերեաց զնա, եւ յետ երեւելոյն՝ դարձեալ թողլ ետ նմա մարդկապէս կեալ։ Եւ զիա՞րդ այս ոչ զարհուրեցոյց զնա եւ ոչ ասաց, թէ ուրեմն խաբեցա՞յ ի Քրիստոսէ, այլ հաւատաց Քրիստոսի։ Եւ թէպէտ եւ հաւատաց, սակայն եւ այնպէս ոչ յանհոգս եղեւ. այլ զոր ինչ առնել պարտ էր ի մարդկային իմաստասիրութենէ, ո՛չ մատնեաց։ Բայց դու տե՛ս զչարութիւն նոցա. հարկ եղին անձանց իւրեանց զնզովան։ Ահա պահք՝ սպանութեան մայր. որպէս հարքն⁴ նոցա պահեցին պահս եւ սպանին զՆաբովթ արդար, որպէս Հերովդէս զհարկն, որ յերդմանէն՝ եղ զանձամբ եւ սպան զՅովհաննէս, նոյնպէս եւ սոքա. զի այսպիսի է արուեստ բանասարկուին, ձեւով բարընկալութեան զնէ զորոգայթն։

Եւ զի մանաւանդ պարտ էր մատչել առ նա |134ա| եւ պարտաւորել զնա եւ պատճառս գտանել մահու եւ դարան⁵ ի միասին հաւաքել, այլ քանզի այսոքիւք ոչ ինչ կարացին գտանել, եւ ոչ ըստ մտաց իւրեանց, զոր սովոր էին ի սկզբանէ ի մարգարէիցն՝ վճարել ինչ, ապա յայս գան՝ որ ինչ ոչ է քահանայից, այլ աւազակաց. ոչ

¹ ԱԲ գղարանագործութիւն

² ԱԲ ըմբել

³ ԱԲ > զպաւղոս

⁴ Բ հարք

⁵ Բ դատաւորն] դարան

իշխանաց, այլ ապականչաց: Նա եւ զիշխանն իսկ հազարապետն՝ որ անիրաւս ինչ ոչ կամէր առնել, ապականել ի մտաց ձեռնարկէին: Բայց տնաւրինեցաւ, զի եւ նա իմանայցէ զնոցա դաւաճանութիւնն¹, զի ոչ միայն յոչ ունելոյն ինչ ասել, այլ եւ ի լռելեայն դաւաճանելոյն կշտամբեցին զանձինս ոչ երբեք ուղիղս գոյ: Քանզի իբրեւ լուաւ հազարապետն զերդումն քառասուն արանցն, որ երդուան սպանանել զՊաւղոս, գողացաւ զնա զիշերի եւ ի ձեռն հռոմոց ետ տանել զնա առ Փիլիքս² հոգէմոն³ ի Կեսարիա, յաղագս որոյ եւ յայնժամ ասաց զհարիւրապետսն, յորժամ զայն ինչ պարտ էր:

Կոչեցեալ, ասէ, երկուս ի հարիւրապետացն ասէ. Պապրասպեցլք զաւրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչև ի Կեսարիա, եւ հեծեալս եւթանասուն, եւ փիզաւորս յաջմէ եւ յահեկէ կողմնապահս երկերիւր՝ յերից ժամուց գիշերոյն, եւ գրաստ պապրասպական, յոր հեծուսցեն զՊաւղոս, որպէս զի իջուսցեն ապրեցուսցեն զնա (հմմտ. ԻԳ. 23-24):

Տեսանե՞ս զնոցին չարութիւնն⁴ որչափ հարկս հասուցին եւ հարիւրապետացն. զի թէ նոքա այնչափ փոյթ նգովիւք յանձինս առին եւ զամենայն տազնապ, յոյժ մանաւանդ եւ նմա պարտ իսկ էր զայս առնել, յիրաւի եւ զգուշանայր փութով: Եւ տես, թէ ո՛րպէս ի ձեռն դատաստանի արտաքնոցն Պաւղոս անբիծ⁵ գտանի, որպէս Քրիստոս առ Պիղատոս ասէ⁶: Տե՛ս եւ զչարութիւն նոցա անգործ ի բաց բարձեալ: Մատնեցին զնա, որպէս զի դատապարտեսցեն եւ սպանցեն, այլ նորին հակառակն լինէր, եւ կեցեալ նմա եւ անբիծ⁷ գտեալ: Նա զի թէ ոչ էր եղեալ այսպէս զգուշութիւն վասն նորա, ըմբռնեալ լինէր. եւ եթէ ոչ էր զգուշացեալ նմա այսպէս, եւ կորուսեալ ի հրէիցն լինէր, եթէ հասեալ էր ըստ իւրեանց մտացն դատապարտել:

Այլ իշխանն Լիւսիաս ո՛չ միայն յայնժամ անբարիշտ արչաւանաց հրէիցն ազատեաց զնա, այլ եւ յայլոց բազում իրաց: Եւ միտ դիւր, թէ ո՛րպէս պաշտանեայ նորա լինի երկիւղիւ, կամ որպէս նա ապրեալ

¹ ԱԲ դաւաճանութիւն

² ԱԲ Փեղիքս] Փիլիքս

³ Ա հոգեմոն, Բ հեգեմոն

⁴ ԱԲ չարութիւն

⁵ Բ անբիծ

⁶ ԱԲ Պիղատոս] Պիղատոս ասէ

⁷ Բ անբիծ

լինի առանց վշտաց հանդերձ այնչափ բանականաւ¹: Ի դէպ է եւ յետ առաքելոյն այսպէս² ի գիշերի ի վաղիւն մատչիլ³ քահանայապետիցն առ հազարապետն՝ հայցել զնա եւ յամաւթ լինել. քանզի ոչ կամեցեալ լինէր նա՝ գիտելով զնոցին նենգութիւնն⁴, եւ ոչ յանձն առնոյր զխնդիրն: Բայց եւ այն լինէր ի նոցանէ չարիքն⁵, որով առաւել հաւատաց եղելոց դաւաճանութեանցն ի նոցանէ: Ջի եւ զայն իսկ վայել էր նոցա չարութեանն⁶ առնել, եւ զաղտ իմն զՊաւղոս սպանանել: Իսկ նա այնչափ զգուշութեամբ առաքեալ գիշերի զՊաւղոս առ Փելիքս⁷ դատաւոր, գրեաց թուղթ՝ որ ունէր աւրինակ զայս: «Կղաղէոս⁸ Լուսի/134բ/աս առ քաջ դաբաւորդ Փելիքս⁹ ողջոյն: Ձայրս գայս կապեալ¹⁰ ի հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ՝ հասեալ ի վերայ գաւրականաւս ապրեցուցի իմացեալ, թէ հոռվմայեցի է, կամեցայ գիտել զվնասն, վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցեալ զդա յապեան նոցա, զոր գրի ամբաստանեալ զդմանէ վասն խնդրոյ իրիք¹¹ իրեանց արիւնացն, եւ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս: Իրրեւ ազդ եղև ինձ նենգութիւն յայրդ լինելոյ ի նոցանէ, յղեցի առ քեզ. հրաման արուեալ եւ չարախաւսացն խաւսել զդմանէ առաջի քո. Ողջ լեր» (ԻԳ. 26-30): Ահա թուղթ, որ պատասխանի ունի վասն նորա: «Ոչ ինչ գրի, ասէ, ի դմա¹² արժանի մահու կամ կապանաց» (ԻԳ. 29), եւ չարախաւսութիւն եղեւ վասն նոցա մանաւանդ՝ քան թէ վասն նորա, եւ այսպէս անիրաւք գտեալ՝ մահապարտք լինէին ի սկզբան անդ յառաջագոյն: Ապա եւ յատեան նոցա իջուցի զդա, եւ ոչ այնպէս գտի ամբաստանութիւն: Եւ զի պարտ էր նոցա վասն յառաջագունիցն անիրաւս ինքեանց երեւեցելոյ զարհուրել եւ յամաւթ լինել, նոքա եւ դարձեալ ձեռն արկեցին¹³ զնա սպանանել: Վասն որոյ առաքեցի առ քեզ, ասէ, զի դարձեալ պայծառագոյն լիցի բանն՝ որ յաղագս դորա, եւ զչարախաւսան¹⁴ եւս առաքեցի

¹ ԱԲ բանակաւ

² Բ այնպէս

³ Բ մատչել

⁴ ԱԲ նենգութիւն

⁵ ԱԲ չարիք

⁶ ԱԲ չարութեան

⁷ ԱԲ Փելիքս

⁸ ԱԲ կղոզիոս

⁹ ԱԲ փելիքս

¹⁰ ԱԲ կալեալ] կապեալ

¹¹ ԱԲ երիք

¹² ԱԲ ի դա] ի դմա

¹³ Բ արկեցին

¹⁴ ԱԲ չարախոսն

առ քեզ, զի ի քուժմ դատաստանիդ՝ ուր այնպիսի¹ իրք առաւել ստուգագոյն քննի, դա անբիծ գտանիցի: Արդ, եթէ ազատեալ էր զՊաւղոս ի պատճառէն, ընդէ՞ր զչարախաւսսն ընդ նմա առաքէր, դարձեալ իբրու ստուգագոյն լինել քննութիւն², վայելչապէս:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի այսպիսի են Աստուծոյ տնաւրէնութիւնքն, ի ձեռն³ իրաց. յորոց վնասել կարծեմք⁴, ի ձեռն նորին գտանեմք զաւգտութիւն: Այս ինչ եւ առ ամենայն սրբովքն եղեւ: Այսպէս Յովսէփ դաւաճանեալ ի կնոջէն⁵, ի զգուշութիւն լինէր հաստատեալ: Եւ Յակոբ⁶ յեղբաւրէն դաւաճանեալ՝ մեծապէս խնամաւք պարսպիւր: Այսպէս եւ սա արձակեալ լինի ի Կեսարիա, զի անդանաւր յանդիման չարախաւսացն խաւսեսցի՝ վկայելով առ մեծագոյն տեսարանի եւ պայծառ լսարանի⁷: Զի այսու ամենայնիւ անպատասխանի հրեայքն լինիցին, եւ ոչ եւս ունիցին ասել, եթէ տեսեալ էաք զՊաւղոս՝ հաւատացեալ էաք, եւ եթէ ի նմանէ լուեալ էաք ուսուցանելով վասն Քրիստոսի, յանձն առեալ էաք: Արդ, եւ այս պատասխանիս ի նոցանէ ի բաց հատեալ եղեւ:

[ԳԼՈՒԽ Ծ.]

Եւ զաւրականացն ըստ հրամանին առեալ զՊաւղոս ածին գիշերային յԱնթիպարիս⁸, եւ ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթեալս դարձան ի բանակն, եւ նորա մտին ի Կեսարիա, եւ փուեալ ցղափաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նմա եւ զՊաւղոս (ԻԳ. 31-33):

Որպէս թագաւորի մեծի զաւրք առաջի գնալով այնչափ բազմութեամբ, այնպէս ելանէր Պաւղոս ընդ դուռն Երուսաղէմի: Իսկ գիշերի վասն երկիւղի արշաւանաց անաւրէն հանդիսին մոլելոցն բարկութեամբ: Եւ քանզի ի քաղաքէն զգուշութեամբ հանին զնա,

¹ Աբ այսպիսի

² Աբ քննութեան

³ Աբ ձեռն] ի ձեռն

⁴ Աբ կարծիմք

⁵ Աբ ի տիմոցէն] ի կնոջէն

⁶ Աբ Յակովբ

⁷ Բ լուսարանի] լսարանի

⁸ Աբ յԱնթիպատրի

մինչեւ ի տեղին նշանաւոր /135ա/ Անթիպատրիս¹ կոչեցեալ յուղարկելով զնա, ապա յորժամ² բազմութիւնն³ անդրէն դարձեալ ի բաց կացին ի նմանէ: Թերեւս ոչ այնչափ զգուշութեամբ արձակէին զնա արտաքս, եթէ ոչ եւ ինքն իսկ հազարապետն զհետ հանդիպեալ էր⁴: Եւ զայս առնէր առ ի ցուցանել, թէ նոցին սպանութիւնն⁵ ուժգին էր, եւ զի մի՛ ինքն ընդ այնր մեղադրեսցի. զի եւ ահագին երեւէր նոցա մահն տարապարտուց, իսկ հրէիցն ո՛չ եւս:

Եւ իրրեւ ընթերցաւ, *ասէ*, եհարց, թէ յորմէ նահանգէ իցէ, եւ ստուգեալ, եթէ ի Կիլիկէ է⁶, լուայց քեզ, *ասէ*, յորժամ եւ չարախաւսքն քո եկեսցեն. եւ հրամայեաց յապարանսն Ներովդի պահել զնա (ԻԳ. 34-35):

Ահաւասիկ պատասխանի ետ յաղագս նորա Լիւսաս⁷ թղթովն կանխաւ, իսկ որ լուանն, աճապարէ դարձեալ ի կապանս արկանել զնա:



¹ Բ յԱնթիպատրիս

² Բ յայնժամ] յորժամ

³ ԱԲ բազմութիւն

⁴ ԱԲ հանդիպեալ էր անձամբ իւրով

⁵ ԱԲ սպանութիւն

⁶ ԱԲ > եւ ստուգեալ, եթէ ի կիլիկէ է

⁷ ԱԲ լիւսիաս

Եւ յևր հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ձերովք եւ ճարտարախաւս Տերտիլա¹ ոմամբ, որք եւ զգացուցին դարաւորին վասն Պաւղոսի (ԻԴ. 1):

Տե՛ս եւ զհանդգնութիւնն նոցա, թէ ո՞րքան էր, թէպէտ եւ բազում իրաւք յամաւթ եղեն եւ արգելիւք խափանեցան, սակայն ի չարէն ոչ ի բաց կացին, այլ եկեալ լինին, զի եւ անդ յամաւթ լիցին: Այլ զգացուցին առանձինն դատաւորին ամբաստանելով զՊաւղոսէ յուրովս նախ քան զհանդէս ատենին:

Եւ ի կոչելն, *ասէ, գնա՛ սկսաւ Տերտիլոսն*² ամբաստան լինել եւ ասել. Բազում խաղաղութիւն գրեալ ի քէն եւ իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամովդ, ամենեցուն ամենայն ուրեք շնորհակալ ենք, քաջդ Փելիքս³, ամենայն գոհութեամբ (ԻԴ. 2-3):

Եւ զի հռետորին ասել ինչ պարտ էր, տե՛ս ո՞րպէս վաղվաղակի յառաջաբանին իբրո՞ւ⁴ զխռովեցուցիչ եւ զյանդգնագործ խորհեցաւ մատնել զնա. «Եւ զի դու, ասէ, գայս ամենայն խնամս արարեր իրեկց»: Եւ այսպէս գովասանութեամբ անապարէ ըմբռնել զդատաւորն: Ապա՞⁵ ձեւանայ իբրեւ այն, թէ բազում ինչ ունելով ասել՝ զանց առնէ:

Բայց զի մի՛, *ասէ, առաւել աշխատարարարից գրեզ, աղաչեմ լսել մեզ*⁶ կարճ ի կարճոյ քոյին հեզութեամբդ (ԻԴ. 4):

Եւ քանզի յառաջագոյն քան զայստսիկ ընդ երկար բանիւք ամբաստանութեան ընդ դատաւորին առանձինն ի Պաւղոսէ հրապարակաբանեաց Տերտիլոս⁷ հակառակ Պաւղոսի, այժմ գիտացեալ, թէ աշխատեալ լինի, ոչ ասաց լոկ, թէ լուր զոր ասելոցս եմ, այլ թէ «աղաչեմ լուր մեզ ի կարճոյ քոյին հեզութեամբդ», զոր ոչ դարձեալ ընդ երկարեմք այժմ, եւ այս իսկ հեզութեան էր նշան իշխանին՝ բազում բանիցն ունկն դնել: Եւ դու տե՛ս զնորին ճարտարութիւնն⁸, յայտ

¹ ԱԲ տերտիլաւ

² ԱԲ տերտիլոսն

³ ԱԲ փելիքս

⁴ ԱԲ իբրեւ

⁵ Բ ապա եւ

⁶ ԱԲ մեզ ի

⁷ ԱԲ Տերտիլոս

⁸ ԱԲ ճարտարութիւն

առնել, թէ եւ յայնժամ յատենի անդ պատշաճ գոլով նմա բազում ինչ ասել զՊաւղոսէ, բայց վասն ոչ աշխատ առնելոյ զիշխանն՝ սակաւ ասէ. եւ թէ նախ քան զայս յաճախս ասաց՝ ոչ յիշէ, այլ յամբաստանելն փութայ:

Քանզի գտար, ասէ, զայրս զայս ապականիչ եւ խոռվիչ ամենայն հրէից՝ որք են ընդ փիեզերս (ԻԳ. 5):

Տե՛ս ո՛րպէս ի ցանկութիւն ածէ տանջանաց զդատաւորն, եթէ Հանդերձեալ էր տիեզերաց դղրդեցուցիչն ըմբռնել, եւ իբրեւ մեծի ուղղ/135բ/ութեան առիթ լինելով մեծամեծս խորհել: Ո՛վ ապերախտ բարուցն. «ամենայն հրէից», ասէ, խոռվութիւն շարժէ: Զոր պարտ էր այնուհետեւ իբրեւ զերախտաւոր եւ հասարակաց ազգին փրկիչ քարոզել՝ նոքա զայս ասէին: «Եւ առաջնորդ է, ասէ, Նազարացւոց¹ հերձուածոյն» (ԻԳ. 5): Քանզի թուէր այսպէս նախատելի գոլ իրք Նազաւրեցուցն, զի Նազարեթ նուաստ եւ աննշան էր ի մէջ նոցա: «Որ եւ գրաճարն կամեցաւ պղծել առաջի մեր» (ԻԳ. 6): Եւ թէ որո՞վ իրաւք՝ ոչ ասէ, զի ծանր զվնասն երեւեցուցէ. եւ զիւրեանց կողմն այսպէս բարձրացոյց. եւ տե՛ս զնոցայն ո՛րպէս նուագեցուցանէ²:

Զոր կալար, ասէ, եւ ըստ մերոց արինացն դափել կամեցար (ԻԳ. 6):

Տե՛ս զչարաբանութիւնն³. իբրեւ զմիշտ փախստական զոմն եւ դժւար ըմբռնելի դաւաճանէ զնա, եւ թէ հազիւ Հանդիպեցաք նմա: Եւ մանաւանդ նա ոչ էր փախստական, այլ եւթն աւուրս ունէր ի տաճարին: «Կամեցար, ասէ, ըստ մերոց արինացն դափել» (ԻԳ. 6): Տե՛ս ո՛րպէս անարգէ զաւրէնսն. միթէ աւրինա՞ցն էր հարկանելն. սպանանելն կամ դարան գործել անիրաւութեամբ:

Եկեալ Լիւսիաս հազարապետ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց եհան, հրամայեաց եւ չարախաւսաց նորա զալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լիցիս ի վերսփին դափել ամենայնի հասու լինել զորոց մերս ամրաստաններ զդմանէ (ԻԳ. 7-8):

Դիտեա, զի եւ Լիւսիաս չարախաւսութիւն հետեւի ի բանէս, զի զոր ոչ էր նմա պատշաճ, ասէ, բազում եւ մեծաւ բռնութեամբ հա-

¹ ԱԲ Աայգօրեցւոյ

² Բ Աուագ ցուցանէ] Աուագեցուցանէ

³ ԱԲ զչարաբարոյութիւն

մարձակեալ ի բաց եհան ի մէնջ: Յուցանէ այսու՝ եթէ դաւաճանեալ լինին ինքեանք ի դատաստանս, աւտարս գոլով դատաւորացն եւ ոչ հրեայս: Եւ եթէ ինքեանք ոչ թախանձեցուցանէին այժմ գնա, եթէ ոչ Լիւսիաս հարկէր¹, եւ եթէ ոչ էր նորայն իրաւունք, զի յափշտակեցին զայրն, եւ զի վնասակարութիւնքն Պաւղոսի առ մեզ էին, ապա եւ դատաստանին, որ վասն այնր՝ պարտ էր առ մեզ լինել: Եւ զի այսպէս է դիտողութիւն բանիս, տե՛ս զոր ի կարգին ասէ, նա բազում բռնութեամբ եհան ի մէնջ, դու վերստին քննեա: Եւ ոչ Լիւսիայ չարախաւսել համարձակի, թէպէտ եւ ներող էր այրն Փելիքս², բայց եւ ոչ լոկ զանց առնէ եւ հայցէ, թէ այժմ վերստին պարտ է ի սկզբանէ դատել զամենայն: Ապա զի մի՛ սուտ երեւեսցի, զնոյն իսկ զՊաւղոս կացոյց անձին իւրում չարախաւս ասելով. «Յորմէ հնար է քեզ վերստին դաբնելով՝ գիտել զամենայն» (ԻԳ. 8): «Միարանցին հրեայրն եւ ասեն. ա՜ն՛դ այդպէս է» (ԻԳ. 9): Եւ այսու բանիւ³ վկայք ասացելոցն եղեն միաբան չարախաւսքն: Իսկ Պաւղոս առ այն զի՞նչ տայ պատասխանի, մի՛տ դիցուք:

Եփր. Զի իբրեւ ասաց հռետորն վասն խաղաղութեան ժողովրդեան նոցա եւ վասն խռովութեանն⁴, որ յամենայն տեղիս յուզէր ի վերայ նոցա Պաւղոս, անդուստ հրաման եղեւ Պաւղոսի պատասխանի տալ վասն անձին իւրոյ: «Պարասխանի եր /136ա/ Պաւղոս յակնարկել⁵ նմա դարաւորին խաւսել. Ի բազում ամաց լինել քեզ դարաւոր ազգիս այսորիկ գիտնա»: Ապա ուրեմն ոչ աւտար է Պաւղոս եւ ոչ նորեկ ոք եւ ոչ յանդգնարար, թէ ի բազում ամաց գիտէ զդատաւորն:

Յաւժարութեամբ վասն իմոց իրաց պարասխանի առնեմ (ԻԳ. 10): Յոհ. Բարևոք ի վերայ բերէ զիւր իրաւունս⁶ միայն, եւ ոչ հայի առ քահանայապետն, եւ ոչ հակառակի ընդ հանդէսն եւ ընդ չարախաւսան: «Քանզի կարաւդ ես գիտել, զի ոչ ինչ աւելի է իմ քան զաւուրս երկուրասան, յորմէ հեպէ ելի երկիր պագանել յերուսաղէմ: Եւ ոչ ի քաճարին գրին զիս ընդ ումեր խաւսեցեալ եւ կամ ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժողովուրդսն, ոչ ի քաղաքի, եւ ոչ յանդիման կարեն առնել քեզ, վասն որոյ այժմ չարախաւսն

¹ Բ հարկանէր

² ԱԲ Փելիքս

³ ԱԲ բանիւք

⁴ ԱԲ խռովութեան

⁵ Բ յակնարկ

⁶ ԱԲ իրաւունսն

գինն» (ԻՂ. 11-13): Արդ, այսպիսի բանք ոչ են խռովեցուցչի կամ խաբեբայի՝ որ իւրոյ արդարութեանն¹ քննիչ եւ վկայ զդատաւորն կացուցանէ, այլ այն մանաւանդ էր խռովարարի, զորն այն ասաց, թէ «Կալաք եւ մեզէն դարել կամեցաք» (ԻՂ. 6):

Եփր. Իսկ սա յառաջ եկաց եւ ասէ՝ Համարեցան զիս մոլի եւ կատաղի եւ խռովիչ ժողովրդեանն, գիտակ լեր, հեզեմոն, զի ի քաղաքի դոցա սակաւ աւուրք են իմ եւ ոչ շատ ինչ, եւ ի տաճարի անդ իբրեւ երկիր պագանէի ես, եկին գտին զիս, եւ ոչ եթէ ժողովուրդ առանձինն ժողովեալ ուսուցանէի ես: Արդ, եթէ ի ժողովրդեանն իւրեանց արտաքս քան զքաղաքն կամ անդէն ի քաղաքին ոչ կարէին որսալ եւ գտանել զիս ժողովեալ ժողովուրդ զի ուսուցանէի, եւ զիս² յորում այս ամենայն յանցանք ոչ գտան՝ մատուցեալ ամբաստանեն իբրեւ զխաբեբայէ զինէն:

Յոհ. Եւ քանզի նոքա անիրաւաբար զսա խռովեցուցիչ ասէին, իսկ սա զիրաւունս խնդրէ, ըստ որում եւ յաւժարութեամբ վասն իւր ասաց տալ պատասխանի, ապա նախ ի ժամանակէն ցուցանէ, եւ զնոցա հակառակութիւնն² լուծանէ, զի բազում ամաց էր չարախաւսութիւն նոցա, ասաց թէ երկոտասան աւր է, յորմէ հետէ ելի յԵրուսաղէմ: Եւ այս զի³նչ առնէր, զի ոչ այսպէս վաղվաղակի ի սակաւ աւուրք³ առ ի հաստատութենէ շարժեալ կարէի զոք, կամ ես ինքն ի հաստատութիւն գալ կարէի: Եւ քանզի չարախաւսն ոչ ինչ ունէր ցուցանել յԵրուսաղէմ, տե՛ս զինչ ասէր. «Որ յամենայն փնկերս եւ հրեայք, խոսվէ դա» (հմմտ. ԻՂ. 10): Վասն այսորիկ Պաւղոս առ այն ձգէ զբանն աստանաւր ասելով, թէ «Եի երկիր պագանն» (ԻՂ. 11), այսչափ հեռի եմ, ասէ, ի խռովութիւնս շարժելոյ: Եւ յայտոցիկ իրաւունս դեզերի. որ եւ զաւրաւոր իսկ էր ընդդէմ նոցա, եթէ ոչ ի տաճարին եւ ոչ ի քաղաքին եւ ոչ ի ժողովրդեանն գտին զիս ընդ ումեք խաւսեցեալ, որ եւ ճշմարիտ իսկ էր:

Եփր. Բայց սկայն թէպէտ եւ քրիստոնեայ եւս իցեմ, որպէս ասենդ⁴, սակայն զԱստուած հարցն իմոց զաբրահամեանց՝ որ առանց աւրինացն պաշտեցին զԱստուած, պատմեմ⁵ ես, իբրու յաւրէնս եւ ի մարգարէս, որ ինչ զրեալ են, հաւատամ ես:

¹ Աբ արդարութեան

² Աբ հակառակութիւն

³ Աբ աւուր

⁴ Աբ ասէնդ

⁵ Բ պաշտեմ] պատմեմ

Յո՛հ. Եւ տե՛ս զՏերտելայն¹ բանսն յառաջագոյն որպէս ի մարտի կացեալ եւ /136բ/ խռովութիւնս յարուցանելով, իսկ սա, թէ՛ որպիսի հեզութեամբ տուեալ լինի պատասխանի: «Բայց զայս խոստանամ քեզ, ասէ, թէ ըստ ճանապարհին, գոր կոչեն հերձուած, այնպէս պաշտեմ գհայրենի Աստուածն, հաւարացեալ ամենայնի, որ ինչ յարէս եւ ի մարգարէս գրեալ է» (ԻԳ. 14): Նորա զսա ի բաց մեկնէին յաւրինացն սա ընդ նմին ածէ եւ ընտանեցուցանէ աւրինացն զանձն իւր: Եւ դու մի՛տ դիր, զիարդ ո՛չ յառաջ բերէ զբանն յանարգանս զնոցանէ, եւ մանաւանդ կարաւղ գողով զնոսս ամաչեցուցանել: Հաւատացեալ աւրինացն ամենայնի ասէ զինքն. եւ ոչ ասաց, թէ հաւատան, զի ինքն հաւատայր ամենայն գրելոցն եւ ոչ նորա: Իսկ թէ՛ որպէս հաւատայր ամենեցուն գրելոցն, կամ զի՞նչ գրեցաւ յաւրէնսն եւ ի մարգարէսն, յայտ է՝ վասն Հաւր, վասն Որդւոյ, վասն ժամանակի գալստեանն, վասն խաչին եւ յարութեանն² եւ վասն հրէիցն անհաւատութեանն³, գորս ոչ յաւելու, զի մի՛ զբանն յերկարեսցէ: Եւ ոչ ուրեք աստանաւր զՔրիստոս յիշէ, բայց զհաւատան յիշելով, եւ զիրսն, որ ըստ Քրիստոսի էր՝ ի ներքս եմոյծ: Այլ առ ժամայն ի յարութեանն⁴ բան դեգերի⁵, որ նոցա հասարակաց էր աւանդ, այսինքն՝ փարիսեցւոցն:

Ունիմ, ասէ, յոյս առ Աստուած՝ որում եւ դոքա ակն ունին, եթէ յարութիւն լինելոց է արդարոց եւ մեղաւորաց (ԻԳ. 15):

Այսոքիւք ցուցանէ զանբիծ զկեանս իւր, զի ապաքէն մարդ հաւատալով յարութեանն⁶ ոչ այնպիսի գործ, զոր դոքայդ ասեն՝ գործեսցէ: Եւ զի գյարութեանն⁷ ակնկալութիւն եւ նոցա ունել ասաց, զիւրն ապա առանձին ցուցանէ զառաքինութիւն ըստ յոսոյն ի ճահ: «Յորում եւ ես իսկ ճգնիմ, ասէ, անխիղճ միտս ունելով առ Աստուած եւ առ մարդիկ յամենայն ժամ» (ԻԳ. 16): Զի այս իսկ է կատարեալ առաքինութիւն, փութալն առ Աստուած առանց իրիք խղճի գոլ. եւ մարդկան չտալ պատճառս վնասու, այլ մանաւանդ սիրոյ եւ խնամոց, եւ զայն յերկար: Սմին վասն ասէ՝ «յամենայն ժամ», եւ ի վերայ ածէ զցոյցս այսոցիկ:

¹ ԱԲ գՏերտիղայն

² ԱԲ յարութեան

³ ԱԲ անհաւատութեան

⁴ ԱԲ յարութեան

⁵ Ա դէգերի

⁶ ԱԲ յարութեան

⁷ ԱԲ գյարութեան

Ոչ այժմ եւեթ սկսեալ, այլ «Ի բազում ամաց հեփեւ եկի, ասէ, ողորմութիւն առնել յազգո¹ իմ. եւ եփու պարարագիս, որով գրին զիս սրբեալ ի փաճարին, ոչ բազմաւք եւ ոչ ամբոխի» (ԻԳ. 17-18):

Զպատճառն յերուսաղէմ ելանելոյն իւրոյ ասէ, թէ զիա՞րդ կամ ընդէ՞ր էլ: «Ողորմութիւն, ասէ, եւ պարարագս եկի առնել յազգո² իմ» (ԻԳ. 17): Արդ, ո՞րպէս կամ զիա՞րդ խռովեցուցանէի զնոսա, որոց վասն ողորմութիւնս առնելոյ եկի յայն ճանապարհ. զի այսպիսի գործ ոչ է խռովարարի. եւ ի ստուգութիւն³ իրացն՝ զնոսին զգատախազան իսկ ածէ վկայս, «Որ գրին զիս, ասէ, սրբեալ ի փաճարին» (ԻԳ. 18): Տեսանե՞ս որչափ մատակարարութիւն վճարեաց խրատն Յակոբայ⁴. զի նոքա ամբաստանէին, թէ զտաճարն եւս պղծեաց, զոր սա ի դերեւ հանէ ասելով՝ «Գրին զիս սրբեալ ի փաճարին» (ԻԳ. 18): Արդ, ո՞րպէս պղծեաց, ով ամբարիշտ հրեայք, զի ոչ էր առն⁵ զայն առնել, եւ գործն, զոր արար՝ «սրբելն» եւ «երկիր պագաննելն» ցուցանէ, զի ոչ է նոյն վասն այսորիկ անդ գալ⁶, սրբիլ եւ երկիր պագանել եւ պղծել: Տես/137ա/անե՞ս, զի ոչ երբէք խաւսին ճշմարիտ, վասն որոյ եւ Քրիստոս ասէր, թէ «Դուք ի հարեւ սափանայէ էք, զի նա սուր ի սկզբանէ» (հմմտ. Յովհ. Ը. 44): Իսկ նորա ճշմարտութեան⁷ վկայ՝ գործն, որ հաւատալի առնէր զասացեալն. եւ ոչ յերկարութիւն ինչ անկանել բանից⁸, եւ ոչ շնորհուկս ինչ՝ որպէս Տերտելլոսն⁹ առնէր դատաւորին:

Ոչ բազմաւք եւ ոչ ամբոխի գրին զիս, ասէ (ԻԳ. 18):

Ամենայնիվ զհակառակութիւն ի բաց բառնայ յինքենէ եւ զկարծիս խռովարարութեան. զի միայնիկ առանձինն գտին զիս, ասէ, զի մի՛ ունիցին ասել, թէ ձեւով ողորմութեան զայնոսիկ առնէիր, այսինքն՝ խռովութիւնս: «Ո՛չ բազմաւք եւ ո՛չ ամբոխի» ասէ, որպէս զի եւ քննութիւն լինելով յաղագս այսորիկ՝ ոչ ինչ առաւել գտանել կարացին¹⁰: Տեսե՞ր զհեղութիւն մեծ ի վիշտս, տեսեր հոգի խոնարհ եւ լեզու բարեբանաւդ՝ թէ որպէս մի միայն խնդրէ զիւր իրան լու-

¹ Բ յազգ

² ԱԲ յազգ] յազգո

³ ԱԲ ստուգութեան

⁴ Ա Յակովբա

⁵ Բ այնպիսի առն

⁶ ԱԲ գալն

⁷ ԱԲ ճշմարտութեան

⁸ ԱԲ > եւ ոչ յերկարութիւն ինչ անկանել բանից

⁹ ԱԲ տերտիլոսն

¹⁰ Բ կարիցին

ծանել եւ ոչ զնոսա ընդ ամբաստանութեամբ արկանել, բայց թէ ուրեք հարկեալ յանիրաւութենէ ուրուք լինիցի: Որպէս եւ Քրիստոս ասէր. «Ես դեւ ոչ ունիմ, այլ պարունմ գ՛Նայր իմ, եւ դուք անարգէք զիս» (Յովհ. Ը. 49), նոյնպէս եւ սա յամենայնի զհակառակութիւնն ի բաց բառնայ, վասն որոյ բողոքէ եւ զասիացւոցն, զի լուծցէ զբնաւ կարծիս:

Ոմանք յասիացոց անքի հրեայք, ասէ, որոց պարտ էր գալ առաջի քո եւ ամբաստան լինել, թէ ունիցին ինչ զինէն, եւ կամ ինքեանք սորա ասացեն զի՞նչ գտին յիս անիրաւութիւն մինչ կայի յարեւին, բայց միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ, զոր աղաղակեցի մինչ կայի ի մէջ նոցա, թէ վասն յարութեան մեռելոց դարիմ ես այսար ի ձէնջ (ԻԳ. 19-21):

Այս իսկ սեպհական իրք է իրաւանց, ոչ խափանել ի հարախաւսացն, այլ պատրաստ լինել յամենայնի տալ պատասխանի:

Բայց տե՛ս զնորա զանչափ հեզութիւնն¹, զյարութիւն մեռելոց միայն բերէ ի մէջ, եւ այլ ինչ ոչ զնոցանէ յաւելու. քանզի ունէր ասել՝ եթէ դաւաճանեցին զնա, եթէ ըմբռնեցին տարապարտուց, եթէ դարան գործեցին սպանանել զնա: Զայսոսիկ եւ առաւել քան զսոյն յաղագս նոցա յիրաւի լինէր ասացեալ, վչտի իրիք տակաւին անդ ոչ գոլով. բայց ոչ ասէ, այլ լուէ. եւ միայն յաղագս իւր զարդարն պատասխանատրէ. եւ մանաւանդ բազում ինչ ունելով ասել եւ յանդիմանել² զնոցին սուտ ամբաստանութիւնն³: Այլ այս իսկ զնա յերոսաղէմ պայծառ արար, եւ ի Կեսարիա այնչափ բանակաւ գալ պատրաստեաց:

Բարւոք եւ զայս իսկ ոչ թողու, որ վասն նոցա էր, եթէ ինքեանք դոքա ասացեն, զի՞նչ վնաս գտին յիս: Յայտ առնէ, թէ վասն այնորիկ ի սկզբանէ ցաւագնեալք լինէին, զի զյարութիւնն⁴ քարոզէր: Արդ, զայս ցուցանելով եւ զյաղագս Քրիստոսի յարութեան եթէ յարեաւ ի մեռելոց՝ ի ներքս մուծանէր: Զի՞նչ վնաս գտին յիս, ասէ, յատենին: Ոչ յատուկ, այլ հանդերձ քննութեամբ ասացեն, եւ զի զոր ասեմս՝ ճշմարիտ ասեմ, վկայեն, որ ամբաստանաւորք են վասն նորին իրաց, զի վասն նոցին բռնութեանն⁵ աղաղակեցի մինչ կայի

¹ ԱԲ հեզութիւն

² ԱԲ > եւ յանդիմանել

³ ԱԲ ամբաստանութիւն

⁴ ԱԲ զյարութիւն

⁵ ԱԲ բռնութեան

ի մէջ ատ/137բ/ենին, թէ «Վասն յարութեան մեռելոց դարիմ եւ այսար ի ձէնք» (ԻԳ. 21), որով եւ հրեայքն չարախաւսք լռեալ յամաւթ լինէին: Բայց ինձ թուի, թէ եւ բան դատաւորին ամփոփեաց զնոցա պատասխանին. զի տեսանելով զանիրաւութիւն նոցա, ոչ եւս թոյլ ետ յաւելու¹ ի նոյն, զոր եւ յառաջիկայսդ պատմաբանէ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այլ նմանեսցուք նմա որպէս եւ նա Քրիստոսի, եւ առ այնոսիկ՝ որ մինչեւ ցմահ եւ զենուամն զմեզ վտարեն, մի՛ դժուարինս ինչ ասասցուք: Զի որո՞յ ներողութեան արժանի իցեմք, որ վասն չարախաւսութեան եւ անարգանաց դազանացեալք պիղծս եւ ամենապիղծս զթշնամանաւղսն կոչեմք: Եւ ո՞րպէս հնար է անարգեալ լինելով հանդուրժել, ասէ: Եւ ո՞րպէս ոչ է հնար, դու ասա. վէ՞րք ինչ ծնանին ի մեզ ի բանիցն, խոցոտի՞ն մարմինքս մեր: Այլ թէ կամիցիմք հանդուրժել, դիցուք մեզ աւրէնս ոչ ցաւագնիլ, եւ հանդուրժիցեմք. մի՛ թշնամանաց համարեսցուք զանարգանսն, այլ տկարութեան անարգողին: Ոչ ապաքէն դիւահարացն ներեմք, թէ եւ բազում ինչ ասիցեն, եւ թէ մեծագոյն ոք թշնամանէ՝ եւ այնմ, եւ թէ բարեկամ ոք՝ եւ այնմ: Այսպէս հանդուրժեսցուք եւ համապատուացն եւ նուազագունից, իմաստասիրելով ի փառս Քրիստոսի. ամեն:

[ԳՆՈՒԻՍ ԾԱ.]

Եւ յապաղեաց զնոսա Փելիքս², զի սպուգագոյնս գիպէր վասն ճանապարհին (ԻԳ. 22):

Տեսանե՞ս³, ո՞րչափ լինի քննութիւն ի բազում ժամանակս վասն նորա, որպէս զի մի՛ ունիցին ասել հրեայքն, թէ «յափշտակելով իմն եղեւ դատաստանն, եւ ոչ յայտնեցաւ վասն նորա ճշմարիտն»: Արդ, յապաղեաց զնոսա Փելիքս վասն խիստ յանդգնութեանն⁴ հրէիցն, պատճառս խնդրելով աստանաւր զյապաղելն, եւ ոչ եթէ իբրեւ տգէտ գոլով նոցին աւրինաւորութեանն⁵ յապաղեալ լինէր: Զի կա-

¹ ԱԲ յաւելու

² ԱԲ փեղիքս

³ Բ տեսանես, թէ

⁴ Ա յանդգնութեան, Բ հանդգնութեան

⁵ ԱԲ օրինաւորութեան

րի քաջ գիտէր, ասէ, վասն ճանապարհին. զդաւաճանողութիւն նոցա, ասէ, գիտէր քաջ, եւ ճահողութեամբ զանց արար զժամանակաւն, ոչ կարաւտ գոլով իմանալ, այլ այնու զհրեայսն պապանձեցուցանել եւ խափանել զմիաբանութիւն նոցա: Եւ քանզի յիշեաց հռետորն զԼիւսւաս¹ ասելով, թէ «Բոնութեամբ ի բաց եհան ի մէնջ² գայրն» (Իմմր. ԻԳ. 7), ըստ որում յապաղեաց զնոսս Փելիքս ասելով. «Յորժամ Լիւսւաս³ հագարապարն իջցլ ախր, րեղեկացայց վասն ձեր» (ԻԳ. 22):

Տրամայեաց հարիրապերին պահել զնա եւ ունել ընդարձակի⁴, եւ մի՛ զոք յիրոց անրի արգելուլ ի պաշտելոյ զնա (ԻԳ. 23):

Եփր. Արդ, հոգեմոռնն⁵ թէպէտ⁶ պարտաւորելով անիրաւութեամբ ոչ պարտաւորեաց զնա, այլ եւ ոչ արդարացուցանելով արդարացոյց զնա, եգ զնա ի պահ. թողուլ ոչ կամէր վասն նոցա, եւ տանջել ոչ էր հնար, զի գարշելի թուէր առանց վնասու գայն առնել:

Տրամայեաց ունել յընդարձակի (ԻԳ. 23):

Յոհ. Այսպէս զսա եւ նա ի բաց եթող յամբաստանութենէ. բայց նոցին շնորհ առնելով տակաւին պահեալ առ իւր ունէր: «Եւ յեր աւուրց ինչ, ասէ, եկն Փելիքս հանդերձ Դրուսիլա⁷ կնաւ իւրով, որ էր հրեայ, կոչեաց զՊաւղոս եւ լուա ի նմանէ վասն /138ա/ որ ի Քրիստոս հաւաքոցն» (ԻԳ. 24): Արդ, զայս ասեմք. եթէ մեղադիր էր նմա Փելիքս, ո՛չ երբեք առնէր զայն, ո՛չ բնաւ յանձն առնոյր լսել ինչ ի չար եւ ի դատապարտեալ առնէ: Նա եւ կինն եւս լսէ հանդերձ իշխանաւն, որ ինձ թուի բազում պատուոյ նշանակ գոլ: Զի եթէ ոչ մեծամեծս ինչ յաղագս նորա զմտաւ ածէր, ոչ եւս զկինն հաղորդե՞ առնէր լսողութեանն⁹: Որ թուի ինձ եւ կնոջն փափաքել յասոսիկ, այլ եւ հրեայ գոլով եւ ոչ աւտար ի Պաւղոսէ:

¹ Աբ Լիւսիաս

² Աբ > ի մէնջ

³ Աբ Լիւսիաս

⁴ Բ յընդարձակի

⁵ Աբ հոգեմոռնն

⁶ Աբ թէ] թէպէտ

⁷ Աբ Դրուսիլաւ

⁸ Բ հաղորդս

⁹ Աբ լսողութեան

Եւ ի խաւսելն նորա վասն արդարութեան եւ ժուժկալութեան եւ յարութեան¹, եւ հանդերձեալ դապաստանին, զահի հարաւ² Փելիքս, եւր պապասխանի. Դու առ այժմ երթ, եւ յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ: Միանգամայն եւ ակն ունէր, թէ քացի ինչ նմա ի Պաւղոսէ, զի արձակեսցէ զնա, վասն որոյ ստե՛լայ կոչեցեալ խաւսեր ընդ նմա (ԻԳ. 25-26):

Տե՛ս զհոգին Պաւղոսի, զի մանաւանդ ընդ իշխանին խաւսելով ոչ ինչ յայցանէ՞³ որ պատշաճ էր եւ վայելէր զնա թողուլ ասէր բնաւ: Այլ յաղագս հաւատոյ եւ թողութեան մեղաց, եւ ոչ միայն վասն այսոցիկ⁴, այլ վաղվաղակի եւ վասն յարութեան եւ հանդերձեալ դատաստանին խաւսէր, եւ յաղագս գործականաց վարուց եւ ժուժկալութեան, եւ այնչափ էր զաւրուժիւն բանին, մինչեւ զարհուրեցուցանել զիշխանն:

Մի՛տ դիր եւ հեռի աւտարութեան բարուց իշխանին ի քարոզութենէն Պաւղոսի. զի զայնպիսի զահագինս լսելով, ակն ունէր առնուլ ինչ ի նմանէ, եւ ո՛չ մի անգամ, այլ բազում անգամ խաւսելով ընդ նմա: Տեսանե՞ս, թէ ո՞րպէս ճշմարտութեամբ են գրեալքս. կոչէր զնա ստէպ, ասէ, ո՛չ սքանչանալով զնմանէ, եւ ո՛չ գովելով զասացեալսն, եւ ո՛չ հաւատալ կամելով, այլ զի՞նչ, ակն ունելով ինչս առնուլ: Եւ դու միտ դիր, թէ ո՞րպէս ոչ թաքուցանէ աստանաւր Ղուկաս զկամս դատաւորին: Արդ, զիա՞րդ կամ ո՞րպէս խնդրես ինչս, ով պիղծդ, ի յառնէ որ զներհակն այդոցիկ քարոզողէ, զի որ քեզ ուսուցանէ աղքատանալ, զիա՞րդ ի նմանէ ինչս խնդրես: Եւ քանզի ոչ էառ ինչ, աստուստ յայտ է, զի կապեալ եթող զնա, զի թէ առեալ էր, նա եւ արձակեալ իսկ էր:

Տեսե՞ր բարք ազահութեան. նա յաղագս ժուժկալութեան վարդապետէր, եւ սա մեծանալ փափաքէր առ ի նմանէ, որ զայն ինչ զոր քարոզէր, գործով յանձին իւրում ցուցանէր: Այսպիսի է արծաթսիրութիւն. յամենայնի կորուսանէ զընդունաւզս իւր: Եւ խնդրել ոչ համարձակէր, քանզի այսպիսի է առաքինութիւն, ուստի ակն ածէ եւ խորչի չարութիւն. սակայն յուսուցեալ ակն ունէր, եւ ըստ որում ոչ ինչ էառ, վայելչապէս հրէիցն շնորհս առնէր, եւ այնչափ

¹ ԱԲ > եւ յարութեան

² Բ հարեալ

³ ԱԲ յայնցանէ

⁴ Բ այսորիկ] այսոցիկ

ժամանակս իշխեցեալ՝ զնա պահէր ի կապանս, որ արդար գտաւ յամենայնի:

Եւ քանզի վախճան հասեալ նորին իշխանութեանն¹ թողու² զնա կապեալ, զի այնու հրէիցն շնորհս առնիցէ, քանզի ոչ միայն ընչից³, այլ եւ փառաց էր ցանկացաւ: «Ձի ի կարարեալ, ասէ, երկուց ամաց եկն փոխանակ Փելիքսի⁴ Փեսպոս Պորկիոս: Իրրև կամեցաւ շնորհս առնել հրէիցն /138բ/ Փելիքս, եթող զՊաւղոս կապեալ» (ԻԳ. 27): Քանզի ըստ մարգարէութեանն⁵ Յակոբայ եւ Դանիէլի՝ բարձեալ էր իշխանութիւնն հրէից, եւ փոխանորդելով զիրեարս ի հռոմայեցւոցն ի վերայ նոցա կացեալ լինէին իշխանք, ըստ որում եւ սա փոխանորդեալ՝ թողու եւ զՊաւղոս կապանաւոր⁶, թէպէտ եւ ոչ էր պարտ եւ արժան, քանզի վայել էր դատաստանին ի կատարումն ածել: Բայց շնորհս առնելով հրէիցն, ասէ, այնպէս եթող զնա, զի նոքա այնպէս լինէին հաստատեալ, յոյս ունելով դարձեալ հանդիպիլ նմա եւ տանջել զՊաւղոս կամ տալ ի ձեռս նորա⁷, զի սպանցեն: Եւ զի մանաւանդ այլոց առաքելոցն եւ ո՛չ միոյ ուրուք այնպէս լինէին ի վերայ հասեալ, եւ հասանելով իսկ փութով ի բաց կային, բայց սմա ոչ այնպէս, այլ խստաբար միշտ զնոյն խորհին, վասն այնորիկ⁸ եւ⁹ այնպէս տնաւորինացաւ հեռանալ նմա յԵրուսաղէմէ, եւ ընդ այնպիսի դազանաց ոչ ունել բնակութիւն:



¹ Աբ իշխանութիւն

² Աբ թողու

³ Ա Եչից] ընչից

⁴ Աբ Փելիքսի

⁵ Աբ սարգարտութեան

⁶ Ա կալանաւոր] կապանաւոր

⁷ Աբ ցոցա

⁸ Աբ այսորիկ

⁹ Աբ > եւ

Փեսպոս իրրև եհաս յիշխանութիւնն¹, յեպ երից աուրց ել յԵրուսաղէմ ի Կեսարոյ, եւ զգացուցին քահանայապետքն եւ գլխաւորք² հրէիցն զՊաւղոսէ, եւ աղաչէին՝ խնդրեալ շնորհս ի նմանէ, զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ, դարան գործեալ սպանանել զնա ի ճանապարհին (ԻԵ. 1-3):

Տե՛ս զանդանդաղ³ չարութիւնն⁴ հրէից, զի վավաղակի ի սկզբանն մատեան քահանայապետքն առ Փեստոս, ոչ արդեւք յապաղէին եւ ի Կեսարիա իջանել, եթէ ոչ վաղվաղակի հասեալ էր դատաւորին յԵրուսաղէմ ելանել, որ եւ փութանակի մատեան առ նա խնդրելով, զի ժամ լիցի ախորժողացն սպանանել զնա: Եւ քանզի եւ զնա եւս ապականել ի մտաց ջանային լիրբքն, եւ ոչ կարացին, զի այնպէս եւ նմա յայտ եղեւ խորհուրդն, թէ ընդէ՞ր շնորհս հայցեն, եթէ իրաւունք է, զի մեռանիցի այրն: Զի աղաչէին զնա, ասէ, ածել զՊաւղոս յԵրուսաղէմ, եւ յայնժամ տնաւրինեաց Աստուած ոչ ըստ կամաց նոցա յորդորելով զիշխանն, զի վայել էր եւ նմա նորոգ յիշխանութիւն կոխեալ՝ կամելով շնորհս առնել նոցա, բայց ոչ թողացոյց Աստուած:

Զի Փեսպոս արար պապասխանի՝ պահել զնա ի Կեսարիա, եւ թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց է: Եւ որ ի ձէնջ կարաւոր իցեն, ասէ, ընդ իս իջցեն, եւ եթէ իցէ ինչ յառն⁵ վնաս՝ ամբաստան լիցին (ԻԵ. 4-5):

Քանզի ոչ համարձակէին զՓեստոս հասանելի⁶ դատակնիք ինքեանց, այսինքն՝ զի չկամէին⁷ առաջի նորա լինել քննութիւն դատաստանի երկնչելով ի լեզուէն⁸ Պաւղոսի, այլ հնարէին միայն զնա ածել ի հաւանութիւն կամաց իւրեանց, զի ժամ գտցեն սպանանել զՊաւղոս: Իսկ նա ասէ՝ «Պահել զնա⁹ ի Կեսարիա» (ԻԴ. 4), գրեթէ

¹ ԱԲ յիշխանութիւն

² ԱԲ գլխաւորքն

³ ԱԲ զանդաղ] զանդանդաղ

⁴ ԱԲ չարութիւն

⁵ ԱԲ յառնն

⁶ ԱԲ հատանել] հասանելի

⁷ Բ չկամէին] կամէին

⁸ Բ ի լեզուոյն

⁹ Բ > զնա

զայս ասելով, զի՞ երկնչիք կամ զի՞ փուլթայք, պահեալ¹ գոլով նորա՝ որ ոչ կարիցէ փախչել. եւ որ ի ձէնջ կարաւղք իցեն, ընդ իս եկեալ՝ յատենի չարախաւսեսցեն զնմանէ:

Եւ լեալ անդ ատուրս ոչ աւելի քան գութ կամ գրասն, եկն էջ ի Կեսարիա, եւ ի վաղիս անդր նստեալ յապենի՝ հրամայեաց ածել զՊաւղոս (ԻԵ. 6):

Ո՛վ մեծի փուլթոյն, դարձեալ չարախաւսք, դարձեալ ի Կեսարիա, դարձեալ Պաւղոս արտաքս /139ա/ բերեալ լինի եւ յատենի կացեալ. անդէն ի վաղիւն դատաւորն նստեալ ի բեմի, այնչափ փուլթով, զի ոչ տային նմա դուլ հրեայքն, այնպէս բորբոքէին եւ վանեալ առնէին զնա, այնպէս փուլթացուցանէին զնա, մինչ չեւ եւս փորձ առեալ էր զնոցա՝ կասկածէին եւ զուղիղն ծածկել ջանային:

Եւ իբրեւ եկն Պաւղոս, կացին շուրջ գնովաւ, որ յԵրուսաղէմ իջեալ հրեայքն, բազում եւ ծանր վնաս դնէին, գոր ո՛չ կարէին ցուցանել, քանզի առնէր պապասխանի Պաւղոս՝ թէ ոչ յարէնս հրէիցն եւ ոչ ի փաճարն եւ ոչ ի կայսր ինչ վնասակար եմ (ԻԵ. 7-8):

Տե՛ս, զի մեծապէս անամաւթաբար առնէին զչարախաւսութիւնն², եւ բազում բանիւք դարձեալ զրպարտէին զնա, եւ մի ինչ ի նոցանէ ոչ կարացին ցուցանել եւ յայտնի առնել: Եւ իբրեւ ոչ կարացին աւրինականաւքն ըմբռնել զնա, դարձեալ սովորական բարուքն իւրեանց յիրան, որ յաղագս կայսեր էին՝ զնա վնասաբանէին, զոր եւ առ Քրիստոսիւ՝ զնոյն եւ աստ առնէին: Քանզի Պաւղոս տալովն պատասխանի, թէ «Ոչ ի կայսր ինչ վնասակար եմ», զայս նշանակէ: Այլ եւ պատուով զնոցանէ եւ ուղիղ առնէր պատասխանին, թէպէտ եւ նոքա լիրբք եւ յանդուգն³ էին:

Բայց Փեսարոս կամեցեալ հրէիցն շնորհս առնել, պապասխանի եր Պաւղոսի եւ ասէ. Կամի՞ս յԵրուսաղէմ ելանել եւ անդ վասն նոցին իրաց դատել առաջի իմ (ԻԵ. 9):

Տեսանե՞ս, զի եւ նա հրէիցն շնորհս առնէր, քանզի եղեւ յԵրուսաղէմ զաւուրս տասն, ակն առնոյր ի նոցանէ, բոլորովին ազգ եւ հանդէս եւ քաղաք գոլով միաբան, որոց շնորհս առնել ջանայ,

¹ Բ պահել

² ԱԲ զչարախաւսութիւն

³ Ա յանդուգունք, Բ յանդուգն] յանդուգն

եւ կամեցաւ, զի պատրեցցէ զնա: Կամի՞ս, ասէ, յԵրուսաղէմ դատել առաջի իմ. «Ոչ ի նոցա ձեռս տամ զքեզ», ասէ: Այսպէս Հնարեցաւ, եւ զինքն առնէ Տէր, զի պատուով¹ յաւժարացուցէ զնա. զի այնպէս կամէր զնա մատնել հրէիցն: Զի անդէն ոչ ինչ կշտամբեալ եւ ոչ վնաս ինչ գտեալ, վասն որոյ եւ ոչ կարէր պատուհասել, բայց յԵրուսաղէմ փութայր տանել, քանզի անդ էին դատակնիքն եւ ատեանն, եւ ամենեւին ամենայն² առանց³ ամաւթոյ էր: Վասն որոյ եւ Պաւղոս երկեցոյց զնա դարձեալ մարդկային ինչ զէն ի կիրարկեալ, զոր ոչ ոք էր ձեռնհաս լուծ լուծանել:

Եփր. Զի իբրեւ կամեցաւ Փետոս տալ զնա պարզեւ նոցուն մտաց, եւ զի յառաջ քան զժամն զայն եղեալ էր ի մտի իւրում Պաւղոս երթալ ի Հռոմ⁴ քաղաք եւ արգելաւ, ընդ մի՛տ ած եւ խորհեցաւ բողոք հարկանել ի կայսր, զի մինչդեռ երթեալ հասանիցէ նա ի Հռոմ⁵ առ կայսր, ուսուցէ եւ աշակերտեսցէ զտիէզերս⁶ ի վարդապետութենէն⁷ Քրիստոսի:

Եւ ասէ Պաւղոս. Յապենի կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դապել, հրէից ինչ չեմ վնասակար, որպէս եւ դու իսկ քաջ գիտես, ապա թէ վնասակար իցեմ եւ արժանի մահու ինչ գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ, իսկ եթէ ոչ ինչ է, գոր դոքա ամբաստանեն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, ի կայսր բողոքեմ (ԻԵ. 10-11):

Յոհ. Իբրեւ հարցաւ, թէ կամի՞ս յԵրուսաղէմ ելանել, ոչ ասաց, թէ ոչ կամիմ, գո/139բ/ւցէ ուժգնագոյն արասցէ զգատաւորն, այլ դարձեալ մեծաւ համարձակութեամբ խաւսի: Մի անգամ, ասէ, եւ երկրորդ ի նոցանէ ազատ եւ անվնաս գտայ եւ ի բաց ելի ի նոցանէ, ապա զի այսու կարծեն⁸ զիս դատապարտեալ՝ ցուցանելով, թէ յաղազս կայսեր վնասակար իցեմ, արդ առաջի նորա կամիմ կալ ի դատաստան, զհրեայսն ոչ ինչ անիրաւեցի, որպէս դու քաջ գիտես:

Այնուհետեւ բուռն եհար զնովաւ իբրեւ զշնորհաւորէ զինքն հրէից, ապա դարձեալ թուլացուցանէ զբանն ասելով. «Եթէ արժանի

¹ ԱԲ պատուովն

² Բ ամենայնն

³ ԱԲ առանց իւրեանց եւ

⁴ Բ ի հռովմ

⁵ Ա ի հռովմ

⁶ Բ գտիեզերս

⁷ ԱԲ ի վարդապետութենն

⁸ ԱԲ կարծիքն

մահու ինչ գործնցի, ոչ գանգիպենմ ի մեռանելոյ» (ԻԵ. 11), *ես ինձէն հատանեմ ի վերայ իմ դատակնիկ¹, քանզի ընդ համարձակութեանն² պարտ է եւ իրաւաբանութեանն³ գոլ, ապա թէ ոչ ինչ է, գոր դոքա զինէն ասեն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել, թէպէտ եւ կամեսցի: Եւ ոչ ասաց, թէ դու, այլ թէ «ոչ որ կարէ զիս դոցա շնորհել», զի մի՛ հանդէպ⁴ ի նա ձգեսցէ զանարգանսն, քանզի նա կամէր առնել զնա շնորհս⁵ հրէիցն: Եւ ոչ ասաց, թէ ոչ եմ արժանի մեռանելոյ, եւ ոչ թէ արժանի եմ արձակելոյ, այլ թէ պատրաստ եմ դատել առաջի կայսեր: Միանգամայն եւ զտեսիլն յիշեալ զՔրիստոսի, առաւել համարձակեցաւ ի կայսր բողոքել:*

Ասացէ՞ որ թերեւս՝ սակս որո՞յ իրաց առնէր զայսոսիկ, որովհետեւ լուաւ յԱստուծոյ եթէ ի Հռոմ պարտ է քեզ վկայել վասն իմ: Ասեմք՝ թէ ոչ իբրեւ թերահաւատ գոլով բանին, քաւ լիցի, այլ եւ յոյժ հաւատացեալ եւ մեզ աւրինակ եղեալ. քանզի փորձողի է քաջալերել եւ վստահանալ միայն ի բանն յայն, եւ ի բազում վիշտս եւ ի մէջ անաւրինաց արկանել զանձն իւր՝ ասելով. «Տեսից՝ կարէ՞ Աստուած եւ այսպէս փրկել զիս»: Իսկ Պաւղոս ոչ առնէ զայս, այլ զառ յինքենէ զամենայն ի ներքս բերէ, եւ ոչ զամենայն ինչ յԱստուած ապաստան առնէ եւ անհոգ նստի: Բայց տե՛ս զՊաւղոսի հանճարն զիս՞ ըզ ծածկաբար զիշխանէն բուռն եհար. զի ետես զնա ապականեալ զճշմարտութենէ, ասաց. «Ոչ որ կարէ զիս դոցա շնորհել, ի կայսր բողոքեմ», որով առաւել յերկիւղ արկ զնա ոչ կարաւ լինել առնել զայն, եւ առ հրեայսն ունել պատասխանի թողլոյն զնա:

Յայնժամ Փեսպոս խաւսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պապասխանի. Ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր (ԻԵ. 12):

Տե՛ս դարձեալ ընդարձակութեամբ տարածեալ⁶ զգատաստան նորա, եւ զդաւաճանութիւնն⁷ պատճառ լեալ⁸ քարոզութեանն⁹ անդ ի Հռոմ ի թագաւորական քաղաքին, որպէս զի դիւրութեամբ եւ պահ-

¹ Աբ դատակնիք

² Աբ համարձակութեան

³ Աբ իրաւաբանութեան

⁴ Ա հանդէպ

⁵ Աբ շնորհ

⁶ Բ տարածել

⁷ Աբ զդաւաճանութիւն

⁸ Աբ լիեալ

⁹ Աբ քարոզութեան

պանութեամբ ելցէ ի հրէիցն եւ տարեալ լիցի ի Հռոմ ոչ յուժեքէ դաւաճանեալ: Քանզի ոչ էր հաւասար պարզաբար գնալն, եւ այսպիսի պատճառաւն. զի այս իսկ եւ զհրեայսն արգել եւ ոչ ետ գնալ ի Հռոմ: Ապա դարձեալ ժամանակ լինի նմդ անգերելով ի կապանս ի Հռոմ: Զի իմասցիս, թէ եւ ժամանակի լինելով՝ ոչ ինչ դաւաճանութեան նոցա իրքն կարաց վճարել, Աստուծոյ թողացուցանելով ի նոյնն:

Եփր. Եկն էջ արքայն Ագրիպաս՝ որ կաց ի տեղւոջ /140ա/ իշխանութեան Հերովդի յողջոյն հոգէմոնին¹: Նա կաց պատմեաց առաջի նորա զդատաստանն Պաւղոսի: Եւ զի խնդրեցին ի նմանէ հրեայքն զՊաւղոս, եւ երկեալ նա յաւրինացն Հռոմոց տալ գնա ի ձեռս նոցա, քանզի ոչ գտաւ զկնի նորա յանցանք ինչ, բայց եթէ բամբասանք աւրինացն հրէից, ըստ որում պատմաբանէ² յառաջիկայսդ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Մի՛ ապա դժուարինս համարեսցուք զդաւաճանիլն: Զի եթէ մեք զանձինս մեր ոչ դաւաճանիցեմք, ո՛չ այլ ոք կարացէ նենգել մեզ, այլ ջանալովն նենգել՝ մեծապէս զմեզ շահեցուցանէ, զի մեք եմք տեարք անձանց կրելոյ ինչ չարաչար եւ ոչ կրելոյ, զի ոչ կարէ նենգել քրիստոնէին ոչ մարդ ոք եւ ոչ սատանայ, մինչ ինքն զինքն ոչ նենգիցէ, այլ որպէս հրեշտակի ոչ կարէ վնասել ոք, եւ ոչ քրիստոնէի: Եւ ո՛չ միայն ինքն յայլոց ոչ վնասել կարիցէ, այլ եւ ո՛չ զայլս վնասել կարիցէ³, եւ այսու Աստուծոյ եւ հրեշտակի նմանեալ է, այլ Աստուած բնութեամբ այսպիսի է, իսկ մարդ՝ յաւժարութեամբ. իսկ զանձն վնասէ ի կամելն⁴ զայլս վնասել, յորմէ զգուշալի է երկիւղիւ:

[ԳԼՈՒԽ ԾԲ.]

Իբրև անցին ատուրք ինչ, յայտ է ոչ բազումք, Ագրիպաս արքայ եւ Բերինիկէ եկին ի Կեսարիա՝ յողջոյն Փեսարոսի: Իբրև ատուրս բազումս հանէին անդ, Փեսարոս զեկոյց արքայի գՊաւղոսէ:

Ագրիպասս այս, որ եւ Հերովդէս, այլ ոմն էր զկնի այնորիկ, որ յաւուրսն Յակոբու, որ եւ գնայն նահատակեաց, որպէս զի չորրորդ

¹ ԱԲ հեգեմոնից

² Բ պատմէ] պատմաբանէ

³ Բ > այլ եւ ո՛չ զայլս վնասել կարիցէ

⁴ Բ կամել

յետ առաջնոյ¹ Հերովդէի² գոլով սորա: Զսա հաղորդ առնէ Փեստոս բանին՝ որ վասն Պաւղոսի. զի եւ այնպէս բազումք եղիցին լսաւք բանին. եւ ոչ խորհրդակցաւ միայն, այլ եւ թագաւորն եւ զաւրք եւ Բերինիկէ գիտելով, ապա արասցէ զպատասխանին՝ առաքելով զնա ի Հռոմ:

Այր մի, *ասէ*, է աստ, մնացեալ կապեալ ի Փելիքսէ, վասն որոյ իբրեւ չոգայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն եւ գլխաւորք հրէիցն, եւ խնդրէին յինէն առնել նմա պապուհաս, որոց ետու պապասխանի, թէ չէ արէն հռովմայեցոց շնորհել ումնք գոր մինչեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զղապախագն, եւ փեղի պապասխանոյ առնուցու վասն ամբաստանութեանն³ (ԻԵ. 14-16):

Տե՛ս աստանաւր չարախաւսութիւն զհրէիցն, ոչ առ ի Պաւղոսէ, այլ յիշխանէն. հայցէն⁴, ասէ, ածել ի վերայ նորա պատուհաս, առ որս ասացի յամալթ առնելով զնոսա՝ թէ ոչ է աւրէն հռովմայեցոց յառաջ քան զբանի հաղորդել՝ «չնորհել ումեք» զմարդ: Տե՛ս անդատին⁵ ի բնէ զիշխանսն հանապազ ի բաց մերժելով զհրէական ծանրութիւնն⁶, իբրու առանց իրաւանց բազում անգամ հարկողաց առնել եւ ամենայնիւ փոյթ գոլով ի սպանութիւն:

Եւ իբրեւ եկին այսր, *ասէ*, ո՛չ ինչ յապաղեցի, այլ վաղվաղակի նստեալ յափենի՝ հրամայեցի ածել գայրն, վասն որոյ մատուցեալ ամբաստանքն, եւ ոչ մի ինչ վնաս չարութեան ի մէջ բերէին, գորոց եւ կարծէի, այլ խնդիրս ինչ, որ վասն իւրեանց /140բ/ պաշտաման ունէին ընդ նմա, եւ վասն Յիսուսի, որումն⁷ մեռելոյ՝ գորմէ ասէր Պաւղոս, թէ կանդանի է (ԻԵ. 17-19):

Տե՛ս զպատասխանին յաղագս Պաւղոսի, զոր նոյն ինքն Փեստոս առնէ: Արարեալ, ասէ, յանդիման՝ ոչ ինչ գտի զնա պատճառաւոր, եւ խայտառակել⁸ լինի հրէական կարծրութիւնն⁹: Զի յորժամ իշ-

¹ ԱԲ առաջնոյն

² Բ Յերովդի

³ ԱԲ ամբաստանութեան

⁴ ԱԲ հայցէին

⁵ Ա անտրստին, Բ անդրստին

⁶ ԱԲ ծանրութիւն

⁷ ԱԲ ուրեմն] որումն

⁸ ԱԲ խայտառակեալ

⁹ ԱԲ կարծրութիւն

խանն ասէ զայսոսիկ, առանց կարծեաց լինի վկայութիւնն¹, որով եւ առ ի նմանէ մեղապարտ ցուցանին² հրեայքն:

Ապա յետ ամենեցուն հատանելով ի վերայ նոցա դատակնիք՝ անիրաւս եւ պատժապարտս գոլ, յայնժամ եւ³ նոցա հասոյց Աստուած գտանջանսն ըստ արժանի գործոց իւրեանց ի ձեռն հռոմոց⁴ բառնալով ի միջոյ: Մեղապարտ արար զնոսա Լիւսիաս, մեղապարտ արար Փիլիքս, մեղապարտ արար Փեստոս, որ եւ շնորհան կամէր առնել նոցա: Զկնի ամենեցուն մեղապարտ արար եւ զնոսա Ագրիպաս: Զինչ այնուհետեւ, մեղապարտ⁵ անձամբ զանձինս արարին փարիսեցիքն, ասելով՝ «Տոգի խաւսեցաւ ի դմա կամ հրեշտակ» (ԻԳ. 9):

Ոչ ինչ չարութիւն, ասէ, ի մէջ բերէին, յորոց ես կարծէի: Եւ սակայն յինքեանց հասուցանէին եւ ի մէջ բերէին, այլ ոչ կարէին յայտնի կացուցանել, քանզի դաւաճանութիւն նոցա եւ յանդգնութիւն զայս ինչ տայր կարծել, իսկ քննութիւն այսպիսի եւ ո՛չ ինչ, այլ «Յաղագս Յիսուսի ումեմն մեռելոյ ասէ Պաղոս, թէ կենդանի է» (ԻԵ. 19): Վայելչապէս յաղագս ումեմն ասէր իբրեւ զմարդոյ, մարդ գոլով ի սկզբանն ծանուցեալ: «Ոչ ինչ ես, ասէ, այսոցիկ փոյթ առնել⁶»:

Իբրեւ յանհնարս մտի ես յաղագս այսպիսի⁷ իրաց քննութեան, ասեմ ցՊաղոս. Եթէ կամիցի՞ս⁸ երթալ յԵրուսաղէմ եւ անդ դապել վասն դոցին իրաց (ԻԵ. 20):

Յիրաւի յանհնարս մտի ասէ. քանզի արդարեւ գերագոյն անցանէր քան զմիտս եւ զլսելիս դատաւորին, որ յաղագս այսոցիկ խնդիրն ասեմ, ասէ, կամիս ելանել յԵրուսաղէմ: Աստ թաքուցանէ եւ զիւր⁹ սխալանս: Արդ, եթէ տարակուսեալ ես, ընդէ՞ր ձգես յԵրուսաղէմ զնա: «Բայց ի Պաղոսի բողոքելն զի պահեսցի ի քաջի արանցն յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա մինչ¹⁰ փաց փանել զնա առ կայսր» (ԻԵ. 21): ՅԵրուսաղէմ, ասէ, ինքն ոչ արժանի համարեցաւ, այլ առ

¹ ԱԲ վկայութիւն

² ԱԲ ցուցանէին

³ ԱԲ > եւ

⁴ Բ հռոմոց

⁵ ԱԲ մեղապարտս

⁶ ԱԲ առնելով

⁷ ԱԲ այսպիսի

⁸ Բ կամիս

⁹ ԱԲ զիւրն

¹⁰ Բ մինչեւ

կայսեր¹ կալ յատենի, զի յաղազս այնորիկ զնա ամբաստանէին: Եւ քանզի լսելի եղեւ յաւժարութիւնն² հրէից յասացելոցս ի Փեստոսէ՝ դաւաճանութիւնքն եւ խռովութիւնքն, այսոքիկ ամենեքեան ածին³ զԱզրիպաս ի ցանկութիւն լսել Պաւղոսի:

Ազրիպաս ցՓեսպոս ասէ. Կամէի եւ ես լսել առնն: Եւ նա ասէ. Վաղի լուիցես (ԻԵ. 22):

Կամեցաւ Ազրիպաս տեսանել զՊաւղոս որպէս Հերովդէս, զի կամեցաւ տեսանել զտէր մեր. եւ տայ նմա Փեստոս զչնորհսն առ ի լսել՝ հրամայելով ածել զՊաւղոս զառաջեալ: Եւ լինի պայծառագոյն Պաւղոս, զի այսպիսի արարին զնա դաւաճանութիւնքն. եւ եթէ ոչ էին եղեալ այնոքիկ, թերեւս ոչ ոք յիշխանացն արժանացուցանէր զնա լսել այնչափ հանդարտութեամբ եւ հեզութեամբ:

Եւ ի վաղի անդր Ազրիպաս եւ Բերինիկէ/141ա/ իրրեւ եկին բազում եւ երեւելի սպասուր, եւ մտին յարեանն հանդերձ հազարապետարն եւ արամբք պափուաւորաւք քաղաքին, եւ հրամայեալ Փեսպոսի ածել զՊաւղոս (ԻԵ. 23):

Տե՛ս որպիսի⁴ հանդիսաւոր⁴ լսարան ժողովեալ եղեւ վասն Պաւղոսի: Թագաւորն իսկ հանդերձ զաւրաւքն եւ զլիսաւորաւք⁵ քաղաքին, իշխանաւքն եւ հազարապետաւք եւ դատաւորաւն մեծ երեւելութեամբ, ապա ածեալ եղեւ Պաւղոս: Եւ մի՛տ դիր ճշմարտութեանն⁶ յայտնութեան, թէ ո՞րպէս դատաւորն զնմանէ բողոքէ: Զի ինքն իսկ Փեստոս այսու բանիւք ազատեաց եւ թողացոյց զնա յամբաստանութենէ ասելով. «Արքայ Ազրիպայ⁷ եւ ամենայն արք, որ ընդ մեզ էք, փեսանէ՛ք զսա, վասն որոյ ամենայն ժողովքն իրէից ամբաստան եղեն ինձ յերուսաղէմ, եւ աստ աղաղակէին, թէ չէ պարտ դմա կեալ. Բայց ես ի վերայ հասի, թէ ոչ է դորա արժանի մահու գործ գործեալ» (ԻԵ. 24-25): Յորժամ ի բաց եղեն հրեայքն ի նմանէ յամաւթ եղեալք բազում անգամ, ապա այնուհետեւ դատաւորն զթողութիւն նորա ի կիր արկանէ, եւ յայնժամ պայծառ լիեալ լինի նմա տեսարանն:

¹ Ա կայսեր

² ԱԲ յօժարութիւն

³ Բ ածի

⁴ ԱԲ հանդիսարան] հանդիսավոր

⁵ ԱԲ զլիսաւորօքն

⁶ ԱԲ ճշմարտութեան

⁷ ԱԲ ազրիպայ

Եւ տե՛ս զինչ ասէր. «Ամենայն բազմութիւն հրէիցն ամբաստան եղեն» (ԻԵ. 24). ոչ ոմանք միայն եւ ոմանք ոչ, այլ ամենեքեան իսկ՝ յերուսաղէմ եւ աստանաւր, ամենեքեան զմահ ըղձային եւ ասէին՝ «Պարտ գոլ դմա մեռանել»։ Յուցանէ այսու, թէ յիրաւի Պաւղոս բողոքեաց ի կայսր. քանզի թէ ուր ոչ ինչ բնաւ դժուարին ունէին հրեայքն ասել զնմանէ եւ այնպէս մոլեալ լինէին, վայելչապէս ապա եւ ինքն դատաւորն զգուշանայր՝ զի մի՛ ի վերայ նորա լինիցին նոքա եկեալ մեղադրութեամբ։ Եւ տես, թէ որպէս զնոսա չարախաւսէ եւ զսա թողացուցանէ ի մեղադրութենէ։

Ես, ասէ, ի վերայ հասի դորին անմեղութեանն¹ (ԻԵ. 25):

Ո՛վ մեծի իրաւանցն սեպհականութեան, իշխանն ոչ գտանէ, թէ ո՛րպէս զնա դատապարտեսցէ՝ բազում քննութեան լինելով։ Այս իսկ վայել էր Պաւղոսի մաքրութեանն², ո՛չ ունել դատաւորին, թէ զի՞նչ վնասաբանեսցէ վասն նորա։ Իսկ հրեայքն զնա արժանի մահու գոլ ասէին, զի նոքին որք եւ զՔրիստոս սպանին։ Արդ, յորպիսի տարակուսանս զանձինս իւրեանց արկին հրեայք, զի վասն նոցա իսկ միանգամայն, զոր հանդերձեալ էին իմանալ եւ որ ի Հռոմն էին հրեայք, բազում անգամ կրկնէ Փեստոս զատեանն, թերեւս կարասցէ ինչ գտանել, եւ զթագաւորն եւ զայլսն աւգնականս առնու ի դատաստանին։

Զի դորա ինքնին բողոք կալեալ, ասէ³, առ քաջ արանցն՝ խորհեցայ յդել. վասն որոյ սպուգութեամբ ինչ գրել Տեսոն իմում, վասն այսորիկ ածի զդա առաջի ձեր, եւ մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպայ⁴, որպէս զի վերստին քննել մարթացից ինչ գրել, քանզի անպարտենն⁵ իմն թուի ինձ փալ փանել կապեալ մի, եւ ո՛չ ինչ վնաս զնմանէ նշանակել (ԻԵ. 25-27):

Տեսանե՞ս, թէ ո՞րպէս ակամայ քարոզք լինէին իւրեանց չարութեանն⁶. քանզի եւ կապանաւքն առ նոյն իսկ թագաւորն յոյժ պայծառագոյն տարեալ լինէր Պաւղոս, քան⁷ թէ առանց կապանաց։ Զի

¹ ԱԲ անմեղութեան

² ԱԲ մաքրութեան

³ ԱԲ > ասէ

⁴ Բ Ագրիպայայ

⁵ ԱԲ անպարտեհ

⁶ ԱԲ չարութեան եւ պողոսի առաքիճութեան

⁷ ԱԲ > քան

ոչ եւս տակաւին իբրեւ զմոլորեցուցիչ եւ կախ/141ա/արդ եւ խազմարար տարեալ լինէր, այնչափ դատաւորաց¹ զնա թողացուցանելով, այլ իբրեւ գյոյժ ազատ ի մեղադրութենէ գնայր հանդերձ գրով եւ բազում վկայիւք: Իսկ հրեայքն եւ յայնմիկ եւս դատապարտեալք եւ չարագործք² երեւեցան, որպէս եւ ըստ Քրիստոսի մահուն: Իսկ Պաւղոս այնուհետեւ զամենայն ի բաց եղեալ առ որս ծնեալ եւ սնեալ էր, եւ զայն ոչ վայրապար, այսպէս մաքուր ի կասկածանաց վերայ կոխէ ի Հռոմ:



¹ Աբ դատաւորացն

² Աբ չարագործ

Ագրիպաս ցՊաւղոս ասէ. Նրամայեալ է քեզ վասն քո խաւսել (ԻԶ. 1):

Բազում ցանկութեամբ, զոր ունէր առ ի լսել ինչ ի նմանէ, Նրամայէ նմա խաւսել թագաւորն: «Յայնժամ ձգեալ զձեռն Պաւղոս առնելր պատասխանի. Վասն ամենայն ամբաստանութեանս զինէն արքա Ագրիպաս¹, համարիմ զանձն իմ երանելի, զի քո առաջի այսաւր² փալոց եմ պատասխանի» (ԻԶ. 1-2): Այսուհետեւ Պաւղոս մեծաւ համարձակութեամբ լինի բարբառեալ, ո՛չ խաբէութեամբ ինչ, այլ զճշմարտութիւնն³ պատմելով, վասն որոյ եւ զանձն երանելի համարի, քանզի զամենայն ինչ գիտէր յառաջագոյն, որ ինչ լինելոց էր:

Եւ զի երկնէր առեւծն⁴ այն ահագին, եւ հուրն երկնային ելանել յայնմ կապանաց, զի ընթացի այրել զանտառս մեղաց տիեզերաց: Բայց մի՛տ դիր եւ այժմ հեզութեան նորա. զի ո՛չ ասաց, թէ ընդէ՞ր է այս, մի անգամ բողոք կալայ առ կայսր, եւ աստ բեր անգամ դատեալ եղէ, մինչեւ ցե՞րբ այս. այլ զի՞նչ: Դարձեալ պատրաստ եղել վճարել դատաստան առաջի Ագրիպայայ առաւել զիտողի զաւրէնսն⁵ եւ զիրս հրէից. եւ զայն բազում համարձակութեամբ իբրեւ ոչ գոլով նոցա տերանց կարողաց դատապարտել զնա, նա եւ ոչ իսկ գոլով տերանց⁶: Քանզի դատակնիքն այնքան զամենայն զաւրաւոր էր, թէ առ կայսր երթայցեմ եւ տայցեմ պատասխանի: «Յաղագս ամենայն ամբաստանութեանցս», ասէ: Ո՛չ յաղագս ոմանց ասեմ եւ յաղագս այլոցն ոչ, քանզի ամբաստանեն զինէն յաղագս խազմարարութեան, յաղագս հերձուածոց, եւ եթէ զտաճարն ապախտ արարի, յաղագս այսր ամենայնի տամ պատասխանի, եւ զի ոչ իմոյս յեղանակի եւ վարուց են իրքս այսոքիկ, այսինքն՝ խազմարար գոլ, նոքին իսկ վկայեն չարախաւսքդ:

Մանաւանդ զի զիպակ իսկ ես ամենայն կրանից եւ խնդրոց հրէից, վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ (ԻԶ. 3):

¹ ԱԲ ագրիպաս

² Ա այսաւր

³ ԱԲ զճշմարտութիւն

⁴ Բ առիւծն

⁵ Բ զգօրէնսն

⁶ Ա տէրանց

Միտ դիր ճշմարտութեանն¹ Պաւղոսի: Զի մանաւանդ թէ գիտէր ինչ զանձին իւրում երկնչել պարտ էր առ ի յԱզրիպպայ՝ զամենայն ինչ գիտողէ դատեալ լինելով, քանզի մաքուր մտաց է գայն խնդրել դատաւոր եւ քննիչ զգիտաւղն ստուգապէս խնդրոց ամենայնի եւ կրանէից հրէից իբրեւ որդի աւրինաց, զի մի՛ ասիցեն լիբբքն հրեայք՝ թէ նոքա ոչ գիտէին զաւրէնսն մեր: Ահաւասիկ սա զամենայն գիտէ, ըստ որում եւ Պաւղոս խնդայ եւ երանելի զանձն կոչէ: Եւ քանզի հանդերձեալ էր ընդ յերկար բանս տարածել յաղագս անձին իւրոյ, վասն այսորիկ յառաջելով աղաչէ² մի՛ ձանձրանալ: Եւ քանզի³ նախ քան զայս ասէր. «Նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն» (Գղտ. Ա. 14), եւ անդ յորժամ հանդէսն մերձ էր, յայնժամ կարդայ զվկայու/142ա/թիւն նոցա, որ առաջի հրէից դատարանին միայն, այլ առաջի Լիւսիա: Իսկ յերկրորդումն ոչ էին պէտք բազում պատասխանելոյ, գրոյն Լիւսիա⁴ ազատելով զնա եւ պատասխանելով ընդ նորա. դարձեալ աստանաւր յորժամ բազումքն մերձ էին, սկսանի առանց երկիւղի:

Զկենաց իմոց, ասէ, որ ի մանկութենէ եղեալ ի սկզբանէ յազգին իմում, փեղեակ են ամենայն հրեայք. Յառաջագոյն զիպեն ի վաղուց հնարէ, թէ կամիցին վկայել (Իգ 4-5):

Նախ ասէ ի վերուստ ճանաչելով զիս: Բայց ոչ ասէ, թէ որպիսի էին կեանք իւր, այլ զայս ի կամս նոցա թողացուցանէ: Եւ զամենայն ինչ եղ ըստ հաճութեան նոցա յարգելով եւ ոչ ինչ ի բաց դարձուցանելով զինքն անտի, յայտ է, զի թէ չար ոք էր եւ դժուարակենցաղ, ո՛չ յայս ինչ յաւժարէր՝ կոչել զնոսա վկայս զթշնամիսն: Արդ, զիա՞րդ խազմարար եղէ, ասէ, ի մանկութենէ վկայեալ գոլով յամենեցունց: «Եւ զի ըստ ճշմարտագոյն կրանից արինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի» (ԻԶ. 5), որ եւ առ նոսա իսկ խնդրելին է: Եւ զի՞ արդեւք, եթէ կրանքն եւ աւրէնքն սքանչելի են, եւ դու չա՞ր եղեր: Այսոցիկ, ասէ, վկայս կոչեմ զամենայն հրեայս իմոյ կենցաղոյս եւ վարժմանս, որպէս յառաջեցի ասացի:

¹ ԱԲ ճշմարտութեան

² Բ աղաչեմ

³ Բ զի] քանզի

⁴ Ա Լիւսւայ, Բ Լիւսիայ

Եւ արդ վասն յուսոյն առ հարսն եղելոյ աւերեացն Աստուծոյ դարեալ կամ յապրենի (ԻԶ. 6):

Եւ ապա գովութիւն զնելով հրէիցն ասէ. «Յոր երկոպասան ազգապոռնիս մերոյ անպակաս զցայց եւ զցերեկ պաշտելալ՝ ակն ունիմ հասանել» (ԻԶ. 7): Զի վասն յուսոյն Աստուծոյ, ասէ, եւ աւետեացն¹ հարցն փութան հանապազ եւ լինին զղջացեալ, եւ վասն նորին պաշտաւն կատարեալ, զի այնմ հանդիպեցին, զայն իսկ եւ ես պատմեմ² յայտնի ամենեցուն³ եւ ցանկամ հասանել այնմ բարեաց, եւ զամենայն ինչ առնել ջանամ, զի այնմ⁴ հանդիպեցայց: «Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ արքայ ի հրէից» (ԻԶ. 7): Արդեւք ա՞յս է գործ մոլորեցուցչի:

Զի՞նչ անհաւաք թուի ձեզ, եթէ Աստուծոյ զմեռեալս յարուցանէ (ԻԶ. 8):

Տե՛ս, զի թուի հանդիսաբանել եւ պատասխանատրել, բայց մանաւանդ ուսուցանէ իսկ զնոսա բազում բարեկարգութեամբ: Որում եւ Ազգրիպաս ի մեծ ցանգովութիւն⁵ անկեալ ի լսողութեանն⁶ ո՛չ վայրապար լսէ, այլ հանդերձ բազում կազմութեամբ: Արդ, երկուս խորհուրդս զնէ յաղագս յարութեանն⁷: Մի՛ զառ ի մարգարէիցն, եւ մարգարէ յառաջ ոչ ածէ, այլ զնոյն իսկ զկամս հրէիցն յասելն, թէ «Վասն յուսոյն Աստուծոյ զցայց եւ զցերեկ պաշտեն» (հմմտ. ԻԶ. 6-7): Երկրորդ՝ զառ ի յիրացն ընտրութենէ, որ եւ զաւրաւոր իսկ էր: Այսինքն՝ զոր ինչ ուսոյց եւ վարդապետաց նմա Քրիստոս, եւ կազմէ զայս ամենայն ի կողմանէն իւրմէ եւ յընտրութենէ՝ զյառաջագոյն մոլորութիւնն⁸ իւր պատմելով ստուգապէս:

Ես ինքն պապշահ համարէի, ասէ, բազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազարեցոյ գործել (ԻԶ. 9):

Այսինքն՝ դատեցայ զայս բազում հակառակութիւն գործել. ոչ էի ես յաշակերտացն Քրիստոսի, այլ ի հակառակ մարտուցելոցն ընդ նմա: «Զոր եւ արարի իսկ յերուսաղէմ, եւ զբազումս ի սրբոցն եւ բանաբար-

¹ Բ աւետեաց

² Բ պատուեն] պատմեն

³ Բ ամենեցունց

⁴ Բ այժմ] այնմ

⁵ ԱԲ ցանկութիւն

⁶ ԱԲ լսողութեան

⁷ ԱԲ յարութեան

⁸ ԱԲ մոլորութիւն

զել առնէի, ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն. եւ զսպաննուոցն նոցա բերէի զհամար: Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պարծեալ զնոսա¹ բռնադատելի հայոցել, առաւել եւս մո/142բ/լեալ ի վերայ նոցա՝ հալածելի մինչև յարտաքին քաղաքսն» (ԻԶ. 10-11): Աստուատ յոյժ հաւատարիմ լինի վկայութիւնն², զի որ բիւր իրս առնէր՝ մարտնչելով ընդ հաւատացելոցն եւ խափանելով զնոսա եւ հաւանեցուցանելով հայհոյել, եւ զամենայն ի վերայ շարժելով զքաղաքսն, զիշխանսն, ի ձեռն ինքեան զայսոսիկ առնելով, այնպիսին յանկարծ փոփոխեալ գտաւ, ապա չէր փոքր ինչ դիպուած, որ զնա վաղվաղակի յայնց բարուց շրջեաց: Ուրեմն ասելովն, թէ ո՞րպէս հալածէր զհաւատացեալսն՝ վկայ ածելով զքահանայապետսն եւ զարտաքոյ քաղաքսն, կազմողական հնարիւր եւ խորհրդով եւ մեծաւ փութով զայս ինչ ցուցանել կամի, զի թէ այնպիսի համարիչ³ ոչ էի եւ ոչ աւանդութեամբքն հայրենեաւք սնեալ՝ եւ այժմիկ յայսմ ի ներքս բերեալ լինէի, յիրաւի թերեւս ոչ ոք ընդունէր զբանս իմ: Իսկ եթէ այնչափ քան զբազումս էի նախանձայոյզ, որով զնացեալ երթայի ի Դամասկոս իշխանութեամբ եւ հրամանաւք քահանայապետիցն վասն սոցին իրաց, եւ ի ձեռն սքանչելի տեսեանն բռնադատեալ եղէ՝ ահաւոր զաւրութեանն⁴ հաւանել, զիա՞րդ եմ արժանի դատելոյ: Եւ թէ ո՞րպիսի հրաշից պատահեալ փոխեցաւ՝ ասէ:

Զմիջաւորքն⁵ փեսի արքայ, առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինն լոյս եւ զնորաւք, որ ընդ իսն էին, եւ ամենցուն մեր անկեալ յերկիր՝ լուայ ձայն, որ ասէր ցիս հերբայեցուց բարբառովն. Սաւուդ Սաւուդ, զի՞ հալածես զիս, խիստ է քեզ ընդդէմ խթանի արացել: Եւ ասն⁶. Ո՞վ ես, Տէր: Եւ Տէր ասէ. Ես եմ Յիսուս, զոր դուն հալածես. այլ արի եւ կաց ի վերայ ուրից քոց, զի վասն այսորիկ երեւեցայ քեզ առնուլ զքեզ ի ձեռն պաշտաւնեայ եւ վկայ, որոց փեսերդ զիս եւ որոց երեւեցայ քեզ փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ ի հերթանոսաց՝ յորս ես առաքեցիք զքեզ, բանալ զաչս կուրաց, դարձուցանել ի խաւարէ ի լոյս եւ յիշխանութենէ

¹ Բ գաա] զնոսա

² ԱԲ վկայութիւն

³ ԱԲ հալածիչ] համարիչ

⁴ ԱԲ զօրութեան

⁵ Բ զմիջի աւուրքն] զմիջաւորքն

⁶ ԱԲ ես ասեմ

սափանայի յԱսփուած, առնուլ նոցա թողութիւն մեղաց եւ վիճակ ընդ սուրբս հաւաքով նոցա, որ յիս (ԻԶ. 13-18):

Տեսանե՞ս որպիսի հեզուլթեամբ վարդապետէ եւ ուսուցանէ. «Ասփուած, ասէ, խաւսեցաւ ընդ իս, եւ վկայք արքն, որ ընդ իսն էին», որով ցուցանէ զինքն յիրաւի հաւանեալ նախ ի լուսոյն, ապա եւ ի կատարմանէ իրացն ասացելոց եւ այժմու եղելոցս: Յուցանէ եւ զհրեայսն դատապարտս, զի զնա՝ որ ճշմարիտ Աստուած էր՝ խաչեցին, եւ զի յետոյ ոչ զղջացան: Եւ զի՞նչ արդեւք ասաց «ցիս», թէ եղիցես ինձ վկայ, «որոց երեսնցայ քեզ», զի ոչ երեւեցայ, զի տանջեցից զքեզ, այլ զի առաքեալ¹ եւ պաշտաւնեայ արարից. որով եւ փրկել խոստացաւ ի հրէից եւ ի հեթանոսաց:

Եւ իբրեւ ասաց զտեսիլն, այնուհետեւ զներողական քաղցրութիւնն² ասէ՝ Հանդերձ ողորմութեամբքն, թէ կուրացեալ մարդկան յաստուածագիտութենէ բժիշկ առաքեցաւ եւ լուսատու խաւարելոց, որք եւ զնոյն սիրէին եւ ընդ նոյն գնային. յորոց վերայ խաւարաբնակ եւ չարասէրն սատանայ առեալ իշխանութիւն, արդ ի նորա մահաբեր³ իշխան/143ա/ութենէն ի կենդանարար Աւետարանն եւ յԱստուած դարձուցանել աւանդեցաւ. որով եւ ձրի մեղաց թողութիւն պարգեւեցաւ հաւատացելոց: Եւ ոչ միայն այս, այլ եւ սրբոցն լինել վիճակակից եւ կենացն յաւիտենից: Բարէ մեծի պարգեւացն եւ իշխանութեան, որոյ⁴ գտաւ նա պաշտաւնեայ եւ հաւատարիմ: Այսպիսի բարութեան հաւանեցայ, ասէ: Այսպիսի տեսլեամբ հաւաքեաց զիս առ ինքն, եւ այսչափ աւետեալք հաւանեցոյց զիս ո՛չ երբեք լինել ընդերկուացեալ:

Ուստի, արքայ Ագրիպա, ոչ եղէ⁵ անհաւան⁶ երկնաւոր փեսաւանն. այլ նախ որոց ի Դամասկոս եւ յԵրուսաղէմ էին եւ ընդ ամենայն գաւառս Տրէասփանի եւ ի հեթանոսս՝ պապմեցի զղջանալ եւ դառնալ յԱսփուած կենդանի, արժանի ապաշխարութեան գործս գործել (ԻԶ. 19-20):

Ո՛չ միայն հաւանեալ եղէ ինձէն, այլ եւ բազմաց առաքեցայ լինել խրատիչ, ասէ: Արդ, այժմիկ, որ զայլս խրատէ եւ ուսուցանէ

¹ Բ առաքելա

² ԱԲ քաղցրութիւն

³ ԱԲ համբեր] մահաբեր

⁴ Բ որոց

⁵ ԱԲ եղեն

⁶ ԱԲ հաւան] անհաւան

յաղագս գղջանալոյ ի չարեաց, եւ վասն յաստուածագիտութիւն¹ գալոյ, եւ առաքինութեան վարս սրբութեամբ յանձինս ցուցանելոյ, ո՞րպէս արդեւք ինքն խազմարարութեան եւ խռովութեան առաջնորդ կարիցէ լինել: Այլ տես, զի դարձեցելոցն², ոչ վայրապար ապաշխարութիւն խնդրէ, այլ վարս եւ կեանս սքանչելիս ցուցանել, եւ յամենայնի զհեթանոսս խառնէ ընդ բանին, քանզի պատահեալքն մաւտ ի հանդիսի անդ ի հեթանոսաց էին:

Եփր. Արդ, իբրեւ երկրորդեաց նա զառաջին բնակութիւն մանկութեան իւրոյ յԵրուսաղէմ, եւ թէ զի՞նչ անցս անցուցանէր նա ընդ այնոսիկ, որ կարդային զանունն Յիսուսի, պատմեաց նա եւ վասն տեսլեանն, զոր ետես ի ճանապարհին Դամասկեայ, եւ թէ յԵրուսաղէմ եւ ի հեթանոսս որպէս տուաւ նմա հրաման դարձուցանել՝ քարոզեաց նա: «Վասն այսորիկ, ասէ, կալեալ զիս հրէից ի փաճարին՝ կամէին սպանանել. աւգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ կացի վկայել մինչև ցայսար փորոս եւ մեծի» (ԻԶ. 21-22):

Յոհ. Տե՛ս գճմարտութիւն բանին. զամենայն ինչ Աստուծոյ վերադրէ, եւ զիւր փրկութիւնն³, ապա եւ զհամարձակութիւնն⁴. զոր այժմ ոչ ի բաց կացեալ լինի յայնմ քարոզութենէ: Վկայելով «մեծի եւ փորոս, ասէ, մինչև ցայսար», զայս իսկ առ զինուորսն ասէ, այսինքն՝ նշանաւորի քարոզեալ զՔրիստոս եւ աննշանի:

Ոչ ինչ արպարոյ ասացեալ քան զոր մարգարէքն եւ Մովսէս խաւսեցան զհանդերձելոցն՝ եթէ չարչարելոց է Քրիստոսն, եւ եթէ առաջին ի յարութենէ մեռելոց լոյս պապմելոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց (ԻԶ. 22-23):

Հայեաց ընդ զգուշութիւնն⁵, քանզի թողեալ զկարգ պատասխանատրութեանն⁶ զվարդապետել ի ձեռն էառ, զի մի զայս կարծից են իբրեւ յանձնէ վարդապետել, զմարգարէսն եւ զՄովսէս ի մէջ բերէ. ի նոցանէ, ասէ, հաստատեալ եմ եւ ամրացեալ, եթէ չարչարելոց էր Քրիստոս, եւ ապա յարութեամբն Քրիստոսի խոստումն կենաց ամենեցուն: Բայց միտ դիր բանից նորա, զի ոչ նմանապէս խաւսի

¹ Բ յաստուածագիտութեան

² Բ ի դարձեցելոցն

³ ԱԲ փրկութիւն

⁴ ԱԲ զհամարձակութիւն

⁵ ԱԲ զգուշութիւն

⁶ ԱԲ պատասխանատրութեան

յազազս Քրիստոսի ի դատարանին եւ յեկեղեցւոջն, քանզի անդ ասէ՝ «խնդրեալ ի Պիղատոս սպանին գնա» (Հմմտ. ԺԳ. 28), իսկ աստ ոչ այնպիսի ինչ, որպէս զի մի՛ յաճախ բորբոքիցէ զցասումն նոցա. բայց զնոյն միտս ցուցանէ ասելովն, թէ /143բ/ «չարչարելոց է Քրիստոսն», եւ թէ զայս մարգարէքն նախ ասացին: Եւ այնպէս ի մարգարէիցն եւ առ ի սոցունց նորոգ եղելոցս հաւանեցուցանէ զնոսա՝ միանգամայն թողացուցանելով զհրեայսն յամբաստանութենէ:

Եւ նորա զայս ասացեալ՝ Փեսարոս ի ձայն մեծ ասէ. Մոլիս, Պաւղէ¹, բազում դպրութիւնդ² զքեզ ի մոլութիւն դարձուցանեն (ԻԶ. 24):

Իբրեւ ետես Փեսարոս զհամարձակութիւն նորա, զի հանապազ ընդ թագաւորին լինէր վարդապետեալ, տե՛ս զիարդ ակտացեալ ի միտս ի ձայն մեծ ասաց, այսինքն՝ լի սրտմտութեամբ եւ բարկութեամբ, «մոլիս Պաւղէ», զի շնչաւոր մարդ գոլով յիմարութիւն կարծէր զվարդապետութիւն Հոգւոյն: Եւ Պաւղոս, տես, զիարդ հեզութեամբ տա նմա զպատասխանին. «Ո՛չ մոլիմ, քաջո Փեսարոս, այլ զցածութեան եւ զճնարարութեան բանս բարբառիմ» (ԻԶ. 25): Զայս ասելով ի բաց մղէ յինքենէ զկարծիս մոլութեան: «Այլ զցածութեան բանս, ասէ, խաւսիմ», այսինքն՝ զգաստութեան եւ խոնարհութեան, զգաստութեանն ընդդէմ խելայեղութեան կարծեաց³ ասելով, եւ զխոնարհութեանն ընդդէմ մեծամտութեան, քանզի ընդ առն թագաւորի տրամաբանեալ կաճառէր⁴, եւ զճշմարտութեան բանս ասէ ընդդէմ կարծեաց ստեղծաբանութեան: Ապա եւ զպատճառն ուսուցանէ, վասն որոյ առ թագաւորին զբանն դարձոյց իբրեւ ընդ գիտողի խաւսելով:

Գիպակ է, ասէ, այսոցիկ, արքայ, ընդ որում համարձակեալ⁵, քանզի ծածկել⁶ իմիք ի քէն ի սոցանէ չառնում յանձն, զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս (ԻԶ. 26):

Այսու ցուցանէ, թէ զամենայն ինչ գիտէր նա ստուգապէս, եւ բրեթէ ցնոսա ասէր, թէ պարտ է⁷ եւ ձեզ զամենայն ինչ գիտել զայսոսիկ. զի ի վերայ բերեալն, թէ ոչ յանկեան ուրեք եղեւ այս,

¹ Բ ապօղէ

² Բ դպրութիւնքդ

³ Բ կարծեացն

⁴ ԱԲ կարճառէր

⁵ Բ համարձակեալ խոսիմ

⁶ Բ ծածկեալք

⁷ ԱԲ էր] է

զայս նոցա ուսուցանէր: Եւ դարձեալ. ոչ ծածկեմ ի քէն, զի ո՛չ յանկեան ուրեք գործեցաւ այս, յաղագս խաչին եւ յարութեանն¹ Քրիստոսի ասէ, թէ «Յամենայն տիեզերս եղեւ հասեալ աւանդութիւն² հաւատոցս այսոցիկ»: «Նաւարա՛ս, արքայ Ագրիպպա» (ԻԶ. 27): Ո՛չ ասաց յարութեան, այլ մարգարէիցն: Եւ զի մի՛ յուրասս³ լիցի, ածէ ինքն ի վերայ եւ ասէ. «Գիտե՛մ, զի հաւարաս» (ԻԶ. 27): Զի այնպէս ճշմարիտ իրաւքն հարկ արասցէ նմա խոստովանել:

Եփր. իսկ արքայն, որ ի մարգարէսն հաւատայր, եւ միաբանեալ մարգարէութեան նոցա ոչ կամէր՝ աճապարելով առ այն ասաց. «Փոքրո իմն հաւանեցուցանես զիս իննի քրիստոնեայ» (ԻԶ. 28):

Յոհ. Այսինքն՝ պակաս եւ փոքր ինչ իրաց հաւանեցուցանես զիս: Իսկ Պաւղոս ոչ իմացաւ, թէ զինչ է «փոքուն», համարեցաւ, թէ առ⁴ փոքր մի, ասէ, հաւանեցուցանես զիս. վասն որոյ եւ առ այն սա պատասխանի այլ ազգ. զի թէպէտ եւ ռամիկ էր համարեալ յաչս նորա, բայց ոչ ասաց, թէ ոչ կամիմ զքեզ այսպէս: Այլ թէ «Խնդրի յԱստուծոյ եւ փոքրո եւ մեծաւ ոչ միայն գրեզ, այլ եւ զամենեսեան, որ լսեն ինձ այսաւր՝ իննի այսպիսի որպէս եւ ես եմ, բաց ի կապանաց աստի» (ԻԶ. 29): Զի՞նչ է «փոքուն», զոր խնդրէ յԱստուծոյ, այսինքն՝ սակաւ եւ թերի եւ սուղ ինչ հեռի կացեալ, այլ եւ «մեծաւ», ասէ: Եւ ոչ պարզաբար մեծաւ խնդրէի, այլ գերազանցութեամբ, այսինքն՝ յո/144ա/յԺ ըղձիւք, այժմէն⁵ իսկ եւ ոչ յամելով, ոչ միայն զքեզ, այլ զամենայն լսողքդ լինել իբրեւ զիս: Տե՛ս ի խաբեութենէ ազատեալ զբանն. «Խնդրի, ասէ, յԱստուծոյ իննի այսպէս որպէս եւ ես, բաց ի կապանաց աստի»:

Եփր. Կամ, թէ որք այսաւր լսեն ինձ լինել իբրեւ զիս, փոքունքն եւ մեծամեծքն: Կամ թէ յորժամ լիցին յիս զաւրութիւնք, կատարին յիս նեղութիւնք, այսինքն՝ ես փոքր համարիմ զկատարումն զաւրութեան⁶ առ մեծ բաղձանս նեղութեանց⁷, այլ այսպէս յաղաւթս, կամ թէ լսողք իմ իբրեւ զիս լիցին բաց ի կապանաց⁸, որով կապեալս կամ ի նեղութեան:

¹ Աբ յարութեան

² Աբ աւանդութիւնս

³ Աբ ուրաստ

⁴ Աբ > առ

⁵ Բ այժմեն

⁶ Ա զօրութեանց

⁷ Աբ > առ մեծ բաղձանս նեղութեանց

⁸ Բ կապանացս

Յոհ. Եւ զի մանաւանդ ի վեր քան զամենայն այն իսկ կապանքն վասն Քրիստոսի էր արժանի փառաց, ընդէ՞ր արդեւք զայս ասիցէ: Ո՛չ իբրեւ դժուարելով ընդ կապանսն, որով պարծէրն ամենայն ուրեք եւ յառաջ բերէր զնոսա իբրեւ զմանեակ ոսկի, ապա ոչ ի նմանէ արձակիլ ըղձայ, այլ քանզի տակաւին տկարապէս անկեալ կային նոքա եւ ոչ հանդարտէին լսել, ըստ որում առ նոցա միտսն եւ կարծիսն հայելով ինքն ըստ նոսա զիջանէ բանիւն, թէ «րաց ի կապանացս»: Եւ քանզի ոչ ինչ է լաւագոյն քան զկապանսն զայսոսիկ, զոր եւ հանապազ ի թուղթսն նախադրելով ասէր. «Ես, որ կապեալս եմ ի Տէր» (Եփս. Գ. 1), եւ «Պաղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի» (Եփսոս. Գ. 1): Եւ զարձեալ. վասն¹ զերկաթքս զայս շուրջ եմ առեալ եւ պատգամաւորիմ կապանաւքս իբրեւ զչարագործ, այլ բանն Աստուծոյ ոչ է կապեալ, արդ ասելովն կապեալ գոյ իբրեւ չարագործ՝ կրկին ցուցանէ պատուհասս եւ խիստ զնեղութիւնն²: Ոչ իբրեւ կապեալ միայն, այլ իբրեւ զչարագործ. զի թէ վասն բարւոյ իմիք լինէր կապանքն համարեալ՝ բերէր ինչ միւթարութիւն. բայց այժմ իբրեւ զչարագործ թուիմ նոցա: Յայսպիսի դժուարագոյն իրս ըմբռնեալ, բայց ոչ եւ միոյ առնէր փոյթ ի սոցանէ, զի անչափ էր սէր, որ առ Քրիստոս:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի հոգի եռացեալ սիրովն Քրիստոսի, եւ ի վեր թուուցեալ երկնային ցանկութեամբ՝ ոչ ինչ վարկանի, ոչ զփառսս եւ ոչ զանարգանս, միռման եւեթ սկելով հասանել ըղձից, որ է Քրիստոս: Զի թէ որ այսու գարշելի տուփանաւքս³ տուփեալք՝ ոչ ինչ վարկանին⁴ զփառաւոր ինչ կամ զանպատիւ, այլ միայն փութան, զի ցանկութեանն⁵ հասանիցեն: Յոյժ մանաւանդ, որ այնու⁶ աստուածային սիրովն⁷ իցեն արբեալք՝ ոչ ինչ վարկանին⁸ զսաստոս: Ապա թէ մեք ոչ իմանամք զասացեալս, ոչ են զարմանք, անհմուտք գոլով իմաստասիրութեանս այսմիկ, զի որ ըմբռնեալ լինի սիրովն Քրիստոսի, լինի

¹ ԱԲ վասն նորին

² ԱԲ զնեղութիւն

³ ԱԲ տուփանօք

⁴ ԱԲ վարկանէին

⁵ ԱԲ ցանկութեան

⁶ Բ այսու

⁷ ԱԲ սիրովս

⁸ ԱԲ վարկանէին

որպէս այր մի միայն բնակեալ յերկրի¹, որոյ եւ ոչ զմիոյ ուրուք փոյթ ինչ է նմա:

[ԳԼՈՒԲԻ ԾԳ.]

Յոփն եկաց արքայն եւ դափաւորն եւ Բերենեկէ² եւ որ ընդ նոսայն նստէին, եւ իբրեւ գնացին՝ խաւսէին ընդ միմեանս եւ ասէին. Ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագրիպաս ցՓեսպոս ասէ. Արձակել մարթ էր գայրս գայս, եթէ ոչ էր բողոքեալ ի կայսր (ԻԶ. 30-32):

Տե՛ս, թէ ո՞րպէս բազում անգամ յաղագս նորա դատ արարեալ լինին: Եւ աստ յետ ասելոյն, թէ «մոլեալ ես», սկսան ասել³ նոքա «ցմիմեանս», երկուք յերկուց, թէ մարթ էր, զի արձակեսցի. /144բ/ եւ թողին զնա ոչ միայն ի մահուանէ, այլ բնաւ իսկ ի կապանաց արձակեալ լինէր, եթէ ոչ էր բողոքեալ առ կայսր: Բայց եւ այս տնաւրինաբար եղեւ զնալ նմա կապանաւք անդր, զոր եւ ինքն երանելին խնդրէր, թէ «Կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս» (Փլպ. Ա. 13). զի թէ Տէրն նորա ընդ անաւրէնս համարեցաւ, ո՛րչափ մանաւանդ նա: Բայց որպէս նա այնմ կարծեաց ոչ կցորդեացաւ, նոյնպէս եւ սա, զի սքանչելի եւ չքնաղ յայնժամ երեւեալ լինի իրքն, յորժամ կարծեաւք⁴ վնասուց եւ խառնակմամբ ոչ ինչ յայնմանէ⁵ վնասեալ լինի:



¹ Բ ի յերկրի

² ԱԲ Բերիցիկէ

³ ԱԲ ասէ] ասել

⁴ Գ կարծեւք

⁵ ԱԲ յայսմանէ

Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԵփալիա¹, փային զՊաւղոս եւ զայլս ոմանս կապեալս ցհարիւրապեպ մի, որում անունն էր Յուլիոս² սերաստեան գնդին: Եւ ելեալ ի նաւ մի անդրամինփացի, որ երթալոց էր ի կողմանս ասիացոց՝ գնացաք. էր ընդ մեզ եւ Արիստարքոս Մակեդոն թէսաղոնիկեցի (ԻԷ. 1-2):

Տեսանե՞ս զգոլթ աշակերտին, զի այնչափ³ ժամանակս ժուժկալեաց ընդ նմա, մինչեւ ընդ նմին ի Հռոմ⁴ եկեալ լինէր ընդ Պաւղոսի: Եւ այս յոյժ բարեոք⁵ եւ կարեւոր, Արիստարքոսի անդ մաւտ պատահեալ ամենայն եղելոցն հանդերձեալ գոլով զամենայն⁶ պատմել ի Մակեդոնիա⁷:

Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սիդոն. եւ մարդասիրութիւն ցուցեալ Յուլեայ⁸ առ Պաւղոս, հրամայեաց առ բարեկամս երթալ եւ դարման գտանել (ԻԷ. 3):

Մարդասիրապէս, ասէ, յորդորեաց Յուլիոս⁹ զկարեւոր պէտսն առնուլ Պաւղոսի յաշակերտացն, քանզի զայս իրաւունս համարեցաւ նմա ի բազում չարչարանս գոլով նորա, ի կապանս, յերկիւղ տանելոյ իսկ եւ ածելոյն զնա հանապազորդ կապանաւք: Բայց տե՛ս եւ զճշմարտախաւս միտս պատմաւղ աշակերտին, զի եւ զայս¹⁰ իսկ ոչ թագուցանէ¹¹, թէ¹² կամեցաւ Պաւղոս երթալ եւ փութոյ հանդիպիլ եւ դարման գտանել կարեաց:

Եւ անփի ելեալ խոնարհագոյն նաւեցաք ի Կիպրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոյ (ԻԷ. 4):

¹ ԱԲ յիտալիա

² ԱԲ յուլիոս

³ Բ գայնչափ

⁴ ԱԲ հռովմ

⁵ ԱԲ բարիոք

⁶ Բ զամենայն

⁷ ԱԲ ի մակեդոնոյ

⁸ ԱԲ յուլեայ

⁹ Բ յուլիոս

¹⁰ Բ այս

¹¹ ԱԲ թաքուցանէ

¹² Բ եթէ

Դարձեալ հողմոյն սաստկութիւնք ընդդէմ հակառակին նմա: Եւ տե՛ս ի ձեռն այսոցիկ զկենցաղ սրբոյն շարամանեալ¹. նախ ի բաց զերծաւ ի դատափետ առնելոյն, եւ անկեալ եղեւ ի նաւակոծութիւն ձմերայնոյն: «Յայնժամ, ասէ, ընդ մէջ ծովուն Կիլիկեայ² եւ Պամփիլեայ նաւնալ՝ իջար ի Զմիտնիա լիկացոց³: Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղէքսանդրացի, որ երթայ յԲփալիա՝ և մոյծ գմեզ անդր» (ԻԷ. 5-6): Տե՛ս զպատահումն իրացն, զի վայել էր նոցա, որք յառաջնում նաւէին՝ պատմել յԱսիա եւ զիրսն Պաւղոսի, եւ զմիւսնացոցս ի Լիկիա⁴: Իսկ «նաւ մի, ասէ, աղէքսանդրացի, յոր մտին», զի եւ աղէքսանդրացիք ի Լիբիա պատմեսցեն զՊաւղոսէ: Տե՛ս զԱստուած ո՛չ ինչ նորաձեւեալ եւ ոչ փոփոխեալ⁵, այլ թողեալ զնա նաւել անհաճ հողմովք: Նա եւ այս սքանչելիք լիեալ լինէին, որպէս զի ամուր եւ անվնաս յաւազակաց նաւեսցէ, եւ ոչ եթող զնա ի խորն, այլ միշտ առ ցամաքան նաւէին:

Եւ ի բազում ատուրս ծանրանաւալք՝ հազիւ հասար առ Կնիդոն, եւ ի չթողացուցանել⁶ /145ա/ գմեզ հողմոյն, նաւեցար խոնարհագոյն ի Կրիպէ առ Սաղամինեաւ, հազիվ անցեալ առ նովա՝ եկար ի փեղի ինչ որ կոչէր գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր քաղաքն Լասեա⁷: Եւ իբրև բազում ժամանակք անցանէին եւ սխալ եւս լինէր նաւելոյն, եւ վասն այն ինչ⁸ պահոցն անցանելոյ փայր խրապ Պաւղոս եւ ասէր գնոսա. Արք փեսանեմ, զի թշնամանաւք եւ վնասիք ոչ միայն բեռինդ եւ նաւիդ՝ այլ եւ անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս: Իսկ հարիւրապետն նաւապետին եւ նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի (ԻԷ. 7-11):

Պահս աստանաւր զհրէիցն առաւել ասել վարկանիմ, թերեւս տասներորդում ամսեանն, յորում սպանաւ Գողգոթիա յետ առնելոյն Երուսաղէմի ի քաղղիացոցն⁹, զոր պատմէ Երեմիա եւ յիշէ Զաքարիա: Զի զկնի պենդակոստէին ելին ի Կեսարիոյ¹⁰, ապա յետ բազում ժամանակի իբրեւ ի նոյն իսկ ի ժամ ձմերայնոյ հասանել կեալ եղեւ

¹ ԱԲ խառնեալ] շարամանեալ

² ԱԲ Կիլիկեայ

³ Ա զիկացոց, Բ զիկիացոց

⁴ ԱԲ ի դիկիա

⁵ ԱԲ > եւ ոչ փոփոխեալ

⁶ ԱԲ ոչ թողացուցանել] ի չթողացուցանել

⁷ ԱԲ դասեա

⁸ Բ այնչափ] այն ինչ

⁹ ԱԲ ի քաղղեացոցն

¹⁰ ԱԲ ի կեսարիոյ

նոցա ի կողմանս կրետացւոց: Եւ այս իսկ ոչ էր փոքր սքանչելիք, ապրեալ լինել նաւորդացն ի ձեռն Պաւղոսի:

Արդ, Պաւղոս հրամայեաց կալ մնայ անդէն, եւ զհանդերձեալ իրսն, որ լինելոց էր, յառաջագոյն ասաց: Եւ դու տե՛ս զխոնարհութիւն նորա, զի մի՛ թուեսցի մարգարէանալ, այլ որպէս ի նկատելոյ ասէ. «տեսանեմ» ասէ, քանզի ոչ թերեւս յանձն առնուին վաղվաղակի, թէ եւ այնպէս իբրեւ մարգարէութեամբ ասէր: Եւ զի յայտ լիցի, թէ ոչ ի նկատելոյ իրացն զայն ասէր, թէ տեսանեմ լի թշնամանաւք զնաւարկեալս, նաւավարն զներհակն ասէր, եւ մանաւանդ հմուտ գոլով: Այսպէս յայտ եղեւ, զի ոչ էր ի նկատելոյ ասացեալն Պաւղոսի: Նա եւ տեղին իսկ ոչ զնոյն յորդորէր իմանալ անյաջող գոլով, բայց եւ յոլովից ոմանց մանաւանդ ի նկատելոյ երեւէր զնալ անտի, որով եւ վտանգեցան, ուստի ցուցանի նորայն յառաջտեսութիւն¹ ոչ մարդկեղէն² իրաւք ասացեալ: Այլ նոքա փութալով³ նաւել, եւ ի տեղուջն սխալեալ եւ խափանեալ լինելով ոչ դադրէին անդ, այլ կամէին ձմերել ի Փիւնիկէ:

Իբրև ղժպարեհ իմն թուէր նաւահանգիստն առ ի ձմերել, բազումք խորհեցան զնալ անտի, թերևս կարացեն հասանել ի Փիւնիկէ, ձմերել ի նաւահանգստին կրեպացոց, որ հայէր ընդ հարաւակողմն եւ ընդ աշխարհն: Եւ ի շնչել հարաւոյն համարեցան ուր դիմեալ⁴ էին՝ հասանել, եւ արկեալ՝ մաւր առ ցամաքաւն անցանէին առ Կրեպեաւ, եւ յետ ոչ բազում ինչ աւուրց անկաւ զնովա հողմ ուռուցիկ, որ կոչի իրակիկոն, ընդ յափշտակել նաւին եւ չհանդուրժել ընդդէմ հողմոյն՝ թոյլ փուտալ երթայաք եւ գայաք. ի կղզի ինչ դիմեալ՝ որ կաչէր Կղաւդիա⁵, հազիւ կարացաք ըմբոնել զմակոյկն, զոր առեալ յաւգնականութիւն կապէին ընդ նաւն, երկուցեալ, թէ գուցէ ի յորձանուտն անկանիցին, եւ իջուցեալ զառագաստն, այնպէս երթային եւ գային (ԻԷ. 12-17):

Արդ, տես⁶ տնաւը ինեալ զիրսն, յառաջագոյն ըմբոնէին զմակոյկն եւ կապէին, ապա իբրեւ բռնութիւն⁷ հողմոյն ի վերայ չնչեաց, /145բ/ տուեալ լինէին տարողի եւ բերողի, հազիւ ապրեալ լինէին:

¹ ԱԲ > յառաջտեսութիւն

² Ա մարդկեղեն

³ ԱԲ փութով

⁴ Բ դիմեալն էին

⁵ ԱԲ կղզոյիայ

⁶ Բ > տես

⁷ ԱԲ բռնութեամբ

Եւ ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ ի վաղիս անդր զկարասին¹ ընկեցիկ² առնէին, եւ յերիւր ատուր ընդ իւրեանց ձեռն, այս³ ինքնաձեռն, զգործի նաւին ընկեցին (ԻԷ. 19):

Եթէ Հաւատացեալ էին մարգարէութեանն⁴ Պաւղոսի, զոր զգուշացոյց վասն տարածամ նաւարկութեանն⁵ ոչ վտանգէին. վայել էր իսկ նոցա Հարցանել ց'Պաւղոս զպատշաճն, վասն որոյ նաւէին, եւ ի նմանէ իմանալ, եւ ոչ վայրապար փութալ եւ ընդերկար Համարել զնաւարկութիւնն:

Եփր. Արդ, իբրեւ ժամանեաց նոցա ձմեռն դառնաշունչ, եւ մրրկեցաւ ծովն ալեաւք իւրովք եւ յարեաւ ի վերայ նոցա զբաւասանք կուտակադէզ ալեաւք փրփրելոյ, ընկեցին զկարասին ի ծով անդր:

Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստղեր երևէին ի բազում ատուրս, եւ ձմեռն ոչ սակաւ կայր ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան մերոյ (ԻԷ. 20):

Յոռ. Տե՛ս արդ, դժուարին էր ձմեռնն, սաստիկ էր խաւարն, զի ի ձեռն այսր ամենայնի մի մոռացին զառ ի նմանէ ասացեալսն, բայց եւ նեղութիւնն⁶ իսկ շնորհեաց Պաւղոսի ժամանակ վարդապետութեան:

Եւ զի բազում ատուրս նաւթի էին, ասէ, յայնժամ Պաւղոս եկաց ի մէջ նոցա եւ ասէ. Պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ եւ ոչ ելանել ի Կրեւերա⁷ եւ շահել⁸ զվիշտս զայս եւ զվտանգ, եւ արդ խրապ քամ ձեզ քաջալերել, զի վնաս անձին եւ ոչ միում՝ ի ձեռն լինիցի բաց ի նաւէդ, քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ Աստուծոյ, որոյ եսն եմ եւ պաշտեմ զնա, եւ ասէ. Մի՛ երկնչիր Պաւղէ, կայսեր եւս պարտ է քեզ յանդիման լինել. եւ ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ⁹ ամենեսեան, որ են ընդ քեզ ի նաւիդ: Վասն այսորիկ քաջալերեցարուք, ով արք, զի հաւաքամ յԱստուած, թէ այսպէս լինիցի,

¹ ԱԲ զկարասիմն

² Ա ընեղեցիկ, Բ ընեզիցիկ

³ ԱԲ այս է

⁴ ԱԲ մարգարտութեան

⁵ ԱԲ նաւարկութեան

⁶ ԱԲ նեղութիւն

⁷ Ա ի կրտեայ, Բ ի կրտեայ

⁸ ԱԲ շնորհել] շահել

⁹ ԱԲ > յաստուծոյ

զոր արիւնակ խաւսեցաւ ընդ իս, բայց ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել (ԻԷ. 21-26):

Արդ, յետ այնչափ ձմերայնոյ՝ յայնժամ Պաւղոս ի վերայ հասանէր քաջալերել¹ զնոսա, յորժամ բարձեալ լինէր ամենայն ակնկալութիւն յուսոյ կենաց նոցա. եւ ոչ նախ ի վերայ նոցա յարուցեալ եղեւ բանիւ, այլ կամեցաւ յապառնի ժամու յեղելոցն հաւատարիմ գտանել, եւ զիրսն, որ լինելոց էր, առնու ի վկայութիւն բանին ճշմարտութեան, եւ զայն յեղելոց իրացն հաստատէ, եւ երկուս իրա ասէ յառաջագոյն, մանաւանդ երեք եւ չորք: Զի ի կղզի² անկանել հասանէ. եւ զի նաւն կորնչելոց է, բայց որ ի նմա են³ ապրեալ լինին, եւ այս ոչ էր ի նշանակէ իրացն, այլ մարգարէութիւն յառաջագոյն: Եւ զի առաջի կայսեր, ասէ, կալ պարտ է քեզ: Արդ, յառաջագոյն մարգարէացաւ⁴ զլինելոցն: Եւ երկրորդ անգամ զնոյն ասէ: «Աստուած, որոյ ես եմ եւ պաշտեմ զնա» (ԻԷ. 23), ներածելով զնոսա ի հաւատս, եւ զԱստուծոյ խնամսն եւ զզաւրութիւնն⁵ ցուցանելով, եւ առ ինքն ածելով զնոսա:

Իսկ այն, թէ «Շնորհեալ եղև քեզ յԱստուծոյ զամենեսեան, որ ընդ քեզ» (ԻԷ. 24), ո՛չ է պարծանաց, այլ կամելով առ ինքն ածել զնաւեալսն, ո՛չ զի շնորհ ունիցին նմա, այլ զի հաւատով⁶ հաւանեսցին ասացելոցն առ ի նմանէ, իբրեւ թէ արժանի էին մահու՝ բանիւն ցուցանէ, |146ա| քանզի ոչ լուան նմա, սակայն եւ այնպէս վասն նորա շնորհքն կեցուցին զամենեսեան: Զի այնպիսի բռնութիւն ձմերայնոյն ո՞րպէս ոչ եղեւ հանդերձ վնասուք անձանց նոցա, եթէ ոչ ի խնամոցն Աստուծոյ, քանզի լինէր վնաս նոցա եւ կարի յոյժ, եթէ ոչ Աստուած լինէր կեցուցեալ զնոսա. զի որչափ ըստ բնութեան իրացն էր, եւ նոքա կորուսեալ եղեն:

Եփր. Յայտնեաց Պաւղոս վասն հրեշտակին, որ երեւեցաւ նմա եւ ասաց, թէ առաջի կայսեր կալոց ես դու, եւ նաւդ բեկանի, եւ այր մի յեկերիւր եւ յիսուն⁷ մարդոյդ, որ են ի դմա՝ մի՛ կորիցէ: Իբրեւ

¹ ԱԲ քաջալերեալ

² ԱԲ կղզի] ի կղզի

³ ԱԲ նմանէն

⁴ ԱԲ մարգարէանայ] մարգարեացալ

⁵ ԱԲ զգորութիւն

⁶ ԱԲ հաւատալով] հաւատով

⁷ Բ իւթանասուն] յիսուն

չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչդեռ ծփեաք¹ ի Հազրիին² յանդունդս, ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն, թէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք, եւ ընկեցեալ զգունդսն³ գտին գիրկս քսան: Սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին եւ գտին գիրկս հինգետասան⁴: Ջահի հարեալ, թէ գուցէ ի խիստ ինչ տեղի անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարխիս չորս, ըզճանային այգոյն լինելոյ: «Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւ անփի, եւ իծուցեալ զկուրն ի ծով անդր՝ պարճառանաւ որպէս, թէ յառաջոյ կողմանէ խարխիս ձգելոց իցեն» (ԻԷ. 30): «Ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ ցգաւրականսն. Եթէ ոչ դորս մնան ի նաւիդ, դուք ապրել ոչ կարէք» (ԻԷ. 31): Յայնժամ զաւրականքն հատին զլարս մակուկին եւ ի բաց ընկեցին:

Յոռ. Հանդերձեալ էին նաւորդքն փախչել՝ թէրահաւատելով դեռ ասացելոցն ի Պաւղոսէ, իսկ հարիւրապետն հաւատաց Պաւղոսի: Եւ ընդէ՞ր ասաց Պաւղոս, թէ «Դորս փախչին, դուք ապրել ոչ կարէք» (ԻԷ. 31): Ոչ վասն այնորիկ, թէ զի սոքա ոչ ապրէին, այլ զի ըմբռնեսցէ զնոսս ի ներքս, եւ մարգարէութիւնն ոչ սխալեսցի: Եւ տե՛ս զիմաստութիւնն Պաւղոսի, թէ ո՛րպէս ի մէջ մահաբեր վշտացն կեցոյց զնոսս, եւ թէ զիարդ որպէս յեկեղեցւոջ խրատեալս զնոսս⁵ գործէր: Այլ տնաւրինաբար Պաւղոս նախկին ոչ լինէր հաւատացեալ ի նոցանէ, զի յետ իրացն հաւատասցեն, որ եղեւ իսկ: Բայց որ փոքր առ լսողութիւն գործակից լինէր ձմեռնն եւ խաւարն, մինչ զի հարիւրապետն ապա այնպէս հաւանեալ լինէր Պաւղոսի, որպէս զի զկուրն թողուլ, զի կորնչեցի: Իսկ նաւորդքն չեւ եւս հաւանեցան, զի եւ ազգաւ իսկ կարծ են նոքա. այլ յետոյ եւ նոքա լինին հաւանեալ: Նա եւ ոչ էր առժամայն դիւրաւ ընդունելի, ամբաստանելով իմն Պաւղոս զպատահարսն. իսկ յետ պատահարացն յորժամ այն լինէր, զոր ինչ կանխաւ ասաց Պաւղոս, յայնժամ դիւրաւ ընդունէին:

Եւ իբրեւ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. այս չորեքտասաներորդ ար Է, յորում ակն ունիմք նաւթի կապարել, եւ չէ ինչ ճաշակել (ԻԷ. 33):

¹ Բ ծփեաք

² Բ ի յանդիրն

³ ԱԲ զգունդս

⁴ Ա հինգետասան

⁵ Բ զպա յ զնոսս

Զի մի՛ որ ասիցէ, թէ ոչ ինչ վտանգաւոր եղեւ, երկիւղն վկայէ ահա եւ տեղին դժուարին աղբիական ծովուն խորոց եւ անսուաղութիւնն բազում, եւ զի էին ի մէջ մահու, չորեքտասան աւր անսուաղ կատարեալ եւ ոչ բնաւ իրաց հաղորդեալ: Արդ, զիա՞րդ հանդուրժէին զայնքան աւուրս: /146բ/ Քանզի երկիւղն մահու ըմբռնեալ զնոսս՝ ոչ թողացուցանէր ի ցանկութիւն կերակրոց հասանել. հանդերձեալք այնուհետեւ զվերջինն կրել վտանգ: Եւ զի որ ինչ եղեւ ի ժամանակէն եղեւ վիշտքն, բայց զի յայնպիսի ժամանակի ի միջոյ ահագին վշտացն ապրեալ եղեւ ինքն Պաւղոս եւ ի ձեռն նորա ամենեքեան այլքն, սքանչելիք մեծ էր: Եւ տե՛ս զվտանգն, զի բնաւ չէր նոցա փոյթ կերակրոց, այնչափ մեծ էր տագնապն ի վերայ: Զորս եւ ողորէր Պաւղոս հաղորդիլ կերակրոյ:

Վասն որոյ աղաչեմ զձեզ, *ասէ*, ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է, զի ոչ ուրուք ի ձէնջ մագ մի ի գլխոյ կորիցէ (ԻԷ. 34):

Տե՛ս, նախ վասն նաւթ ի լինելոյն յառաջաբանէ, զի այս, *ասէ*, վասն ձերոյ փրկութեան է՝ առնուլ կերակուր, զի մի՛ ի սովոյդ ապականիցիք: «Իբրև գայս ասաց, առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, երկ եւ սկսաւ ուրել, եւ քաջալերեցան ամենեքին, եւ նորա աօին կերակուր» (ԻԷ. 35): Ինքն յառաջագոյն հաղորդի ոչ բանիւ լոկով, այլ եւ գործով հաւանեցուցեալ զնոսս, եւ զայս ուրախութեամբ, իբրեւ թէ ոչ ինչ վնաս արար ձեռն, այլ մանաւանդ շահեցոյց զոգիս նոցա: Եւ գոհանալով նորա զԱստուծոյ, այսինքն՝ ի վերայ ամենայն նեղութեանցն, որ հասին նոցա, եւ սկսանելով ուտել՝ զաւրացոյց զանձինս նոցա յուտել: Զի այս իսկ հաստատուն հոգւոյ գործ է, զոր եւ նա առնէր, զի կեցցեն բազմութիւնքն ի յառնուլն զթոշակն կերակրոյն, վասն որոյ եւ հաւանեալ լինէին:

Եւ էին ի նաւին ոգիք երկերիւր իւթանասուն եւ վեց (ԻԷ. 37):

Զէր եւ այս փոքր, այնչափ բազմութեան անձանց լինել ընդ Պաւղոսի, որոց բանայր դուռն հաւատոյ ամենեցուն: «Եւ իբրև յագեցան կերակրովն, թերեւացոցին գնաւն թափեալ գցորեանն ի ծով» (ԻԷ. 38): Ոչ միայն ճաշակել կերակրոյն լինէր նոցա յաւգուտ խրատովն Պաւղոսի, այլ եւ զամենայն զիւրեանց աւգտակարս այնուհետեւ առ նա ընկեցին, որպէս զի եւ զցորեանն արտաքս արկանել, այնքան բազումք գոլով

նոցա: Եւ տես, եւ յետ այնորիկ զնոսա մարդկային առնելով՝ թափելով զցորեանն, եւ զՊաւղոս՝ ոչ խափանելով զնոսա:

Եւ իբրև այգ եղև, գերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոց մի նշմարէին, թէ ափն ծովուն իցէ, յոր խորիէին, թէ հնար ինչ իցէ՝ գերծանել¹ գնաւն, եւ գխարիսխն հափեալ ընկեցին ի ծովն, թողացուցին գխառնելիս գթեւոցն, եւ ի բաց ափն գառագաստն, եւ ետուն հողմոյն յափն կոյս ծովուն, անկեալ ի փնդի մի երկծով թիրեցին գնաւն, եւ առաջին կողմն նախն խրեալ անշարժ մնայր եւ յեփին կողմն քակէր ի բռնութենէն» (ԻԷ. 39-41): *Թողացուցին, ասէ, զլծորդութիւնս թեւոցն, քեղեացն վասն շնչելոյ հողմոյն ոչ ներելով նաւին, քանզի բազում անգամ այնպէս առնեն ի վայր իջուցանելով զառագաստն: Քանզի յորժամ ուժգին իցէ հողմնն, այս իսկ իւրովի լինի ի բաց հատանելով զլարսն բռնութեան հոսմանն, եւ այսոքիկ յաղբիականն: Ուստի եւ նաւն քակեալ լինի, եւ զցորեանն եւ զամենայն ինչ ի ծովն ընկեցեալ², զի մի՛ ունիցին յետ այնորիկ պատճառս ինչ անամաւթութեան. զի վասն այսորիկ նախ նաւն քակէր, եւ ապա փրծանէին անձինք նոցա:*

Եւ գաւրականացն խո/147ա/րիւորդ արարեալ, զի զկապեալսն սպանցեն, եւ մի՛ որ լուղեսցի³ եւ փախիցէ: Եւ հարիւրապետն քանգի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս, արգել գնոսա ի խորհրդոյն եւ հրամայեաց նոցա⁴, զի որ կարաւն իցէ լուղալ⁵՝ անկանիցին եւ ի ցամաքն ելանիցեն (ԻԷ. 42-43):

Դարձեալ փորձութիւն յարուցանէր բանսարկուն եւ ջանայր խափանել զմարգարէութիւնն⁶. Խորհուրդ արկանէ զինուորացն սպանանել զկապեալսն: Իսկ հարիւրապետն ո՛չ եթող զայն առնել վասն Պաւղոսի, քանզի այնպէս ընտանացեալ⁷ էր նմա եւ սիրէր զնա: Արդ, իբրու կամէր նա զՊաւղոս միայն ապրեցուցանել, զինուորքն կամեցան զայլսն սպանանել: Ինձ այսպէս թուի, թէ վասն զի նոքա,

¹ Բ գերծուցանել

² Ա ընգեցեալ

³ ԱԲ դուղեսցի] լուղեսցի] լուղեսցի

⁴ ԱԲ > նոցա

⁵ ԱԲ դուղալ

⁶ ԱԲ զմարգարէութիւն

⁷ Բ ընդամացեալ

զորս սպանանել խորհչէին, խոստովանեալք էին յայտնի չարք գոլ եւ արժանիք¹ մահու, բայց եւ այն խափանեցաւ վասն Պաւղոսի:

Եւ ոմանք լուղալով², եւ զայլսն զորս ի փախարակսն եւ զորս յայլ ինչ ի կահ ի նաւէ անփի, եւ այսպէս եղև ամենեցուն փրծանել յերկիր եւ ապրեալք (Խմմտ. ԻԷ. 43-44):

Եւ այսպէս մարգարէութիւնն³ Պաւղոսի առնոյր զկատարումն, թէպէտ եւ ոչ յոլով ժամանակաւ զաւրանալով, զի ոչ բազում ամաւք յառաջ ասաց, սակայն բնութեան իրացն հետեւելով, զի առանց յուսոյ կենաց էին ամենեքեան, եւ ի ձեռն իւրեանց փրկութեանն⁴ իմանային, թէ ով ոք արդեւք էր Պաւղոս: Տեսանե՞ս որչափ բարի եղև ի ձմերայնոյն: Ապա ուրեմն տնաւրէնութեան Աստուծոյ էր եւ ոչ ի ձեռաց թողոյ ձմեռնն այն: Այլ ասացէ ոք թերեւս՝ ընդէ՞ր⁵ եւ զնաւն ո՛չ փրկեաց: Վայելչապէս. զի իմասցին, թէ յորպիսի⁶ բռնագոյն վշտաց ճողոպրեալք եղեն. զի ոչ մարդկային աւգնականութիւն⁷ էր այն ամենայն, այլ ամենազաւր ձեռինն Աստուծոյ կարողին առանց նաւի կեցուցանել:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Զի արդարք թէպէտ ի ձմերայնի իցեն, թէպէտ ի ծովու՝ ոչ ինչ կրեն դժուարինս. այլ եւ զայլս հանդերձ ինքեամբք կեցուցանեն: Եւ թէ նաւ վշտագնեալ եւ նաւակոծութեան պատահեալ եւ կապանաւորք վասն Պաւղոսի ապրեցան, պարտ է ապա զի այր սուրբ կալցուք ի տունս մեր, զի բազում ձմերունք ի վերայ մեր հասեալ լինին, եւ նոքաւք կարաւղ⁸ է Աստուած փրկել զմեզ, եթէ հաւանիմք սրբոցն որպէս նոքա, որ ի նաւին էին: Զի թէ ի կապանս իցէ սուրբն, քան զարձակսն մեծագոյնս գործէ, զի արձակ հարիւրապետն աղաչէր զկապանաւորն Պաւղոս: Արդ, յամենայն ընթացս մեր լուիցուք եւ անսասցուք խրատուն Պաւղոսի, զի ապրեսցուք:

¹ ԱԲ արժանի

² ԱԲ դուղալով

³ ԱԲ մարգարէութիւն

⁴ ԱԲ փրկութեան

⁵ Բ թէ ընդէ՞ր

⁶ ԱԲ որպիսի

⁷ ԱԲ օգնականութեան

⁸ Բ կարող

ՃԱՌ-ՅԻՄՆԵՐՈՐԴ-ՉՈՐՐՈՐԴ՝ ԾԴ.

Յայնժամ գիտացաք, թէ Մելիտինէ¹ էր անուն² կղզւոյն:

Յայնժամ գիտացաք, թէ Մելիտինէ³ էր անուն⁴ կղզւոյն: Բայց բարբարոսն շնորհեցին ո՛չ սակաւ մարդասիրութիւն, քանզի լուցին խարոյկ եւ ընկալան գամենեսին զմեզ վասն անձրելին՝ որ ստիպէր եւ վասն ցրտոյն (ԻԸ. 1-2):

Տե՛ս արդ. հրեայքն այնչափ նշանս տեսեալ հալածէին, իսկ բարբարոսքն միայն զնոսա ի պատահարացն տեսանելով զերծեալս՝ մարդասէրք գտանին: «Շնորհեցին, ասէ, բարբարոսն ոչ սակաւ մարդասիրութիւն» (ԻԸ. 1): Քանզի ոչ էր շահ փրկիլն ի ծովէն, ձմերայնոյն⁵ հանդերձելով զամենեսեան մահացուցանել:

Եւ ի ժողովելն Պաւղոսի խօսի ինչ բազում եւ դնել ի վեր խար/147բ/ուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա (ԻԸ. 3):

Եփր. Վասն զի յելանելն իւրեանց ի ծովէն բերին բարբարոսքն խուժադուժք կրկուտ մանրախուիւ՝ դնել կրակ եւ ջեռուցանել զնոսա: Մատեալ Պաւղոս եւ քաղեաց, եւ ել ի նմանէ քարբ եւ պատեցաւ զձեռամբ նորա: Իբրեւ թուէր բնակչացն, թէ սպանանէ զնա, վրիժապարտ արեան կոչէին զնա, իբրեւ⁶ տեսին, զի ճաւճեցոյց զձեռնն եւ ընկէց սպանողն ի հուրն եւ ինչ ոչ վնասեաց՝ Աստուած⁷ կոչեցին զնա: Վասն զի բազում ողորմութիւն արար ի վերայ մեր, զի զսպանիչ սատակիչ բնակչաց գաւառացս այրեաց ի հուրն յանդիման մեր:

Յոհ. Տե՛ս զնայ ի գործն փութալով, տե՛ս զնա ոչ վայրապար սքանչելիս արարեալ, այլ ըստ պիտոյից: Եւ նախ վասն ձմերայնոյն⁸

¹ ԱԲ մեղիտին

² ԱԲ կղզաւուն] անուն

³ ԱԲ մեղիտին

⁴ ԱԲ կղզաւուն] անուն

⁵ Բ ձմերայնոյ

⁶ ԱԲ իսկ իբրեւ

⁷ ԱԲ Գմա Աստուած

⁸ ԱԲ ձմերայնուոյն

պատահարի մարզարէացաւ եւ ոչ պարզաբար, եւ աստ առժամայն խուր եղեալ ըստ հարկի՝ ոչ մեծամտելով ինչ ընդ ապրելն նոցա, այլ եւ խնամելով եւս: «Իբրև րեսին բարբարոսքն կախեալ զգագանն զձեռանէ նորա, ասեն, զմիմեանս, ուրեմն սպանաւդ է այրս այս, որ թէպէտ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն ոչ երուն կեալ» (ԻԸ, 4): Բարւոք եւ այսոցիկ տեղի տուաւ, որպէս զի տեսանիցեն նոքա եւ զայսոսիկ բարբառիցին, զի յորժամ սքանչելիքն լինիցին, մի՛ թերահաւատեսցեն: Եւ տե՛ս զնոսա՝ պատկառելով ընդ միմեանս ասէին, եւ ոչ վայրապար ըստգտանէին զնա:

Տե՛ս եւ զբնական դատաստանն յաւրաւորեալ¹ առ բարբարոսաց²: Ուրեմն մահապարտ է այրս այս, ասէին: Ոչ³ միայն պարզաբար դատէին, այլ հանդերձ ստուգութեամբ, եւ զայս անդուստ է տեսանել ի նոցին բանիցն: Իրաւունքն, ասէին, ոչ ետուն կեալ. ապա ուրեմն եւ⁴ վասն աշխարհիս զնախախնամութեանն⁵ Աստուծոյ բան ունէին նոքա. յոյժ քան զիմաստասէրն սոքա իմաստասիրագոյնքն հանդիպին, որք ոչ թողացուցանէին նախախնամութեան հանդիպել զի ներքոյ լուսաւորացդ: Իսկ յամենայն տեղու՞ զկարծէին սոքա գոլ զԱստուած եւ զդատաստան նորա, զի թէպէտ եւ բազում անգամ զերծի⁶ ոք, ասեն, այլ ի սպառ ոչ կարէ փախչել ի ճշմարիտ իրաւանցն: Եւ զայս ասելով իբրեւ ի կարծիմն, եւ ոչ ի վերայ հասեալ եղեն կատարելապէս, այլ պատկառելով իմն առժամայն ասացեալ վասն պատահարացն: Նա եւ ոչ արտայայտեն, այլ առ⁷ միմեանս ասեն, զի եւ կապանքն իսկ զայս կարծել ուսուցանէր: Յամաւթ լիցին այնոքիկ, որ ասեն, թէ «Չէ պարտ բարի առնել այնոցիկ, որ ի բանտի եւ ի կապանս իցեն», ամաչեսցեն գէթ ի բարբարոսացն, զի նոքա ոչ զիտէին, թէ ոյք ոմանց իցեն նոքա, այլ ի պատահարացն առժամայն տեսեալ զերծեալ՝ վաղվաղակի զգուցթ եւ զսէր ցուցանէին. քանզի տեսին, զի մարդիկ էին եւ ի վտանգի:

Եւ նորա թաւթափեալ, ասէ, զգագանն ի հուր՝ եղև նմա չար եւ ոչ ինչ: Եւ նոքա ակն ունէին նմա յայտնոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ: Իբրև շափ ակն կալեալ րեսանէին, թէ

¹ Բ յօդարարեալ

² Բ բարբարոսացն

³ Բ եւ ոչ

⁴ ԱԲ > եւ

⁵ ԱԲ զնախախնամութեան

⁶ Բ զերծցի

⁷ Բ > առ

ոչ ինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցին զբանս եւ ասեն՝ թէ Աստուած ոմն է (ԻԸ. 5-6):

/148ա/ Վասն այսր ապա յառաջագոյն ի կասկած մահու տեսին զնա, զի առաւել սքանչասցին: Բազում անգամ, ասէ, ակն ունէին, թէ մեռանի, եւ յորժամ թաւթափեաց զձեռնն եւ զգագանն ընկէց, յայնժամ տեսին եւ զարհուրեցան: Եւ զի ոչ եղև յանկարծակի նշանն, ըստ որում եւ ժամանակաւն տարակուսեալ դեզերեցան արքն, այնպէս ոչ էին իրքն պատրանք: Տե՛ս դարձեալ այլ ինչ յայնմանէ գարմանս եւ զաւրութիւնս, զոր արար ի կղզուջն, զի զհայր ասպնջականին իւրոյ¹ բժշկեաց, եւ բազում հիւանդաց, որ անդ էին, տուաւ ի ձեռն նորա բժշկութիւն:

Եւ շուրջ, ասէ, գրեղեան գայնուիկ² էին գեղք գլխաւորի կղզույն՝ որում անունն էր Պոպղիոս, որ առ գմեզ յերաշխի գերիս ատուրս եւ սիրով ընկալաւ (ԻԸ. 7):

Ահա դարձեալ այլ ոմն հիւրասէր Պոպղիոս փարթամ գոլով. եւ ոչ այլ ինչ տեսեալ բաց ի պատահարացն միայն, եւ այնչափ սիրով յանձն առ զնա աշակերտաւքն. բարեխորհ³ եւ աւտարասէր գոլով մեծաւ պատուով⁴ ընկալաւ զնոսա զերկերիւր եւ զեւթանասուն եւ վեց արսն: Զմտաւ ած զաւտարսիրութեանն⁵ շահ՝ թէ ո՞րչափ է. ո՛չ իբրեւ ի հարկէ գոլով, եւ ո՛չ ակամայ, այլ սիրով, ասէ, ընկալաւ գերիս աւուրս: Ապա այնուհետեւ փոխարինին հանդիպի յոյժ մեծագունի, եւ առաւել վայելչապէս. ոչ միայն նա, այլ եւ ամենայն կղզին զիւրաքանչիւր պէտս եւ զհաճոյս գտանելով:

Եւ⁶ եղև, ասէ, հարն Պոպղեայ ի քերմ եւ յախար թանջից հիւանդանալ դնել, առ որ մտեալ⁷ Պաւղոսի եւ կացեալ յաղաւթս՝ եղ ձեռն եւ բժշկեաց գնա: Իբրև այս եղև, եւ այլ հիւանդք, որ էին ի կղզուջն, գային եւ բժշկէին, որք եւ բազում պապուով պապուեցին գմեզ, եւ իբրև գնացար ետուն, որ ինչ պէտք էին (հմմտ. ԻԸ. 8-10):

¹ ԱԲ իւրոց

² Բ գայնուրիկ

³ Ա բարեխորի

⁴ ԱԲ > մեծաւ պատուով

⁵ ԱԲ զօտարասիրութեան

⁶ Բ > եւ

⁷ Բ մատուցեալ] մտաւ

Տե՛ս զառատութիւնն նոցա, զի ոչ ի ձմերանին միայն յանձան-
 ձէին գլթով, այլ եւ յետ ձմերայնոյն ոչ պղերգացեալ լինէին, նա եւ
 զընդունելութիւնն¹ պատուասիրելով առնէին, եւ զամենայն վասն
 Պաւղոսի: «Բազում պապուով պապուեցին գմեզ» (ԻԸ. 10), *ասէ: Արդ, ո՛չ*²
*վարձ բժշկութեանն*³ ընկալաւ զայն ինչ Պաւղոս, քաւ լիցի, այլ ըստ
 գրեցելումն, թէ «Արժանի է մշակն կերակրոյ իւրում» (Ժ. 7):

Եւ գնալով մեր, ասէ, երուն, որ ինչ պէտք էին (ԻԸ. 10):

Քաջայայտ է, թէ զբանն քարոզութեան ընկալան եւ հաւատա-
 ցին, որք այնպէս առատութեամբ եւ անձանձրոյթ՝ զնոցա զամենե-
 ցուն պէտս ընուին, զամիսս երիս անդանաւր⁴ կերակրելով⁵ զամենե-
 սեան: Զի թերեւս ոչ այնչափ ժամանակս անդ քարոզէր եւ ուսու-
 ցանէր Պաւղոս, եթէ ոչ նորա յոյժ հաւատացեալ լինէին եւ պտուղ
 ցուցեալ, նա եւ զայնչափ նշանս տեսանելով եղեալ, զի եւ նշանացն
 գործ զհաւատս նոցա ցուցանէր, իբրեւ թէ յայնմ ամենայնէ նշան
 մեծ է տեսանել անդ՝ զբազմութիւն հաւատացելոցն եղեալ:

**Եւ յեր երից ամսոց ելաք ի նաւ մի աղէքսանդրացի, որ ձմերեալ
 էր ի կղզւոջն, նշանաւորաւ դիոսկուրացոցն, եւ իջաք ի Սեռակու-
 սաս⁶, եղաք անդ ատուրս երիս, ուստի գնացեալ հասաք ի Տոեզեոն⁷
 (ԻԸ. 11-13):**

Ելաք, ասէ, ի նաւ մի նշանաւոր դիոսկուրիցն, թերեւս յայս ինչ
 էր վերագրեալ նա՝ Դիոսի, զի այնպէս կռամոլք էին, ձաւնեալ զնաւն
 ըստ այնմ անուան: «Տասեալ ի Տոեզեոն⁸, յեր ատուր միոյ ի 2/148բ/նչել հա-
 րաւոյն երկարեայք եկաք ի Պարիոդոս, ուր եւ գրեալ եղարս՝ աղաչեցեալք
 ի նոցանէ լինել առ նոսա ատուրս եւթն» (ԻԸ. 13-14): Տե՛ս զնոսա յամեալս ի
 կղզւոջն, եւ դարձեալ փութացեալս, քանզի այնուհետեւ պատկա-
 ուելի էր Պաւղոս, իբրեւ թողութիւն ի նոցանէ գտեալ գոլ նմա ըստ
 կամս ինքեան⁹: Զի թէ յառաջ քան զայս ամենայն մարդասիրու-

¹ ԱԲ զընդունելութիւն

² Ա ով] ոչ

³ ԱԲ բժշկութեան

⁴ ԲԳանտանօր

⁵ Բ կերակրով] կերակրելով

⁶ ԱԲ սեռակուսանս

⁷ ԱԲ Դոեզեոն

⁸ ԱԲ Դոեզեոն

⁹ Բ ինքեանս

Թեամբ առ նա վարեալ լինէին վերակացուքն, բազում առաւելութեամբ այժմ եւս. ի Պատիողուս¹ գտին զոմանս, ասէ, եւ աղաչեցեալք մնացին առ նոսա աւուրս եւթն:

Եւ ապա ելաք, ասէ, ի Տոմ, եւ անտի լուեալ եղբարց ելին ընդ առաջ մեր մինչև յորդոստայն Ափեայ եւ երից կրպակացն, զոր քեսեալ Պաղոսի գոհացաւ զԱստուծոյ եւ քաջալերեցաւ (ԻԸ. 14-15):

Վասն Պաւղոսի տե՛ս զամենայն ինչ լինելով. որպէս զի որք ընդ նմա էին կապեալքն², զինուորքն, հարիւրապետն, ամենեքեան հաւատացեալք եղեն, քանզի թէ եւ քարեղէնք³ էին զգաւնանալ պարտ էր: Ուստի չեն ինչ զարմանք, եթէ հաւատացին՝ այնչափ ժամանակս ընդ նմա կալով եւ այնչափ սքանչելիս տեսանելով, քանզի ի ձեռն բարւոյ խորհրդակցութեան նորա, որ լուան, եւ ի ձեռն ողջամբ մնալոյն, եւ վասն սքանչելագործութեանն⁴ եւ վասն կերակրելոյն, որով վայելեցին ի կղզւոջն⁵, մեծամեծս թերեւս խորհէին վասն նորա: Տե՛ս յորժամ ուղիղ դատաստան իցէ եւ ոչ յառաջագույն ըմբռնեալ իցէ ոք ախտիւ իւրիք, թէ ո՞րպէս վաղվաղակի առնու զընտրողութիւնսն ուղիղս, եւ գիտութեամբ եւ քննելով զդատ իրացն վճարէ, որպէս նոքայն, որ ընդ Պաւղոսի էին:

Ո՛վ սքանչելեացն, աստուածեղէն զաւրութեամբն Աւետարանն յանկարծակի իբրեւ զլոյս տարածեցաւ ընդ տիեզերս. զի ահաւասիկ մինչ ի Սիկիլիա⁶ մերձեցաւ: Տե՛ս որպիսի արագութեամբ ի Սպանիա եւ յԻտալիա ընթացեալ մխեցաւ: «Ի Տոմ, ասէ, լուեալ եղբարց»՝ եկին ընդ առաջ մեր մինչեւ ցերեւելի վաճառատունսն երիցն խանութից: Զի այնչափ էր յաւժարութիւն եղբարցն, զի ոչ զարհուրեցոյց զնոսա կապանաւք լինելն Պաւղոսի, ոչ ինչ երկուցեալք ի վշտաց եւ յահէ ուրուք, որ եւ այսոքիկ բաւական են առ ի հաւատարմացուցանել զհաւատալն նոցա, որք ընդ Պաւղոսի էին: Եւ տես, զի ոչ ուրեք ի քաղաքի պատահեալ եղեւ նոցա առ այսչափ ժամանակս նաւարկութեան, այլ ի կղզւոջ⁷ եւ ի ժամանակս ձմերայինս,

¹ Բ ի Պատիողոս

² Ա կարգեալքն] կապեալքն

³ Ա քարեղենք

⁴ ԱԲ սքանչելագործութեան

⁵ Ա ի կղզիոջն

⁶ ԱԲ սիկիլիա] ի սիկիլիա

⁷ Ա ի կղզիոջ

եւ ամբողջ ամենեքեան անդանաւր¹ լինէին եկեալ, որ եւ այս իսկ վերածէր² զնոսա առ հաւատս, զնաւակցացն ասեմ:

Բայց տե՛ս զՊաւղոս եւ մարդկային ինչ կրեալ. «Քաջալերեցաւ», ասէ, տեսանելով զեղբարսն, եւ մանաւանդ ոչ յերկիր զոլով, այլ բազում խնդութեամբ լի եւ անչափ նշանս գործելով, այլ սակայն ի նոցա տեսութենէն յաւելուած էառ: Աստ ուստի³ իմանամք, թէ եւ մարդկապէս մխիթարեալ եղեւ, յաւէտ եւս աստուածայնովն փափաքման լրմամբ, զի եհաս ի լրումն ըղձից իւրոց եւ ի կատարումն հրամանին Քրիստոսի առ նա, թէ «Պարս է քեզ կայսեր լինել յանդիման» (ԻԸ. 24):

Եւ իբրեւ մրաք ի Նոոմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն պահպանաւ⁴ իւրով (ԻԸ. 16):

Տեսանե՞ս, զիա՞րդ զա/149ա/տեցաւ յայլոցն, եւ նեղութիւն եղեւ նմա ըստ ինքեան ազանել: Եւ այս իսկ ոչ փոքր նշան էր յոյժ սքանչելի լինելոյ նորին: Սմին վասն առանձինն եղեւ հանդերձ զինուորաւն պահպանաւ իւրով: Որպէս զի մի՛ անդանաւր հնար լիցի դաւաճանութիւն յուճեքէ կրել նմա: Զի ոչ թէ զնա զգուշութեամբ պահել ջանային, այլ զի մի՛ առ նա ինչ լինիցի յուճեքէ յանպատշաճիցն եւ անիրաւաբար, եւ քանզի այնուհետեւ ոչ էր հնար ի քաղաքի գոլով եւ մերձ թագաւորի՝ լինել ինչ յուճեքէ անպատշաճ եւ թողութիւն գտանել:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Այսպէս միշտ թուեցելոցն մեզ հակառակ գոյ՝ լինել⁵ անտի մեզ իրք պատշաճաւորք, քանզի դաւաճանութիւնք նիւթեալք՝ զառաքինիսն պայծառագոյնս առնեն հանապազ, որպէս է տեսանել առ սրբովքն ամենեքումբք, զորս փորձութիւնքն ընտիրս երեւեցուցին: Եւ տես, հրամայեաց Փարաւոն ի գետն ձգել զտղայսն, եւ եթէ ոչ լինէին տղայքն գետամոյնք, թերեւս ոչ լինէր Մովսէս ապրեալ եւ ոչ յարքունիսն սնեալ: Եւ թէ ապրիւր եւս, ոչ ի պատուի լինէր մեծարեալ, այլ հակառակաւքն Աստուծոյ հնարքն ներգործիւր: Սպառ-

¹ Բ անտանօր

² Բ վերածեր

³ Բ աստուտ] աստ ուստի

⁴ Բ պահապանաւ

⁵ ԱԲ լիցիմ

նացաւ նմա հրեայն, «Միթէ սպանանել¹ զիս կամփցիս» (Լ. 28), եւ այն շահ եղեւ նմա, աստուածային տեսլեանն պատճառ տնաւրիներէլ, եւ այնպէս ի մեծամեծսն զնալոյ նմա ի փառս: Այսպէս Կային՝ նենգելով զԱբէլ², Աստուծոյ ընտիր³ արար զնա: Եւ Նաբուքոդոնոսոր՝ զերիս մանկուհնսն պայծառս արար ի հնոցն արկանելով, ըստ որում եւ զինուորն պահապանն Պաւղոսի տեսաւ զ եւ վկայս եղեւ նորայոցն ամենայնի:

[ԳԼՈՒԽ ԾԵ.]

Եւ յեպ երից ատուրց կոչեաց զհրէիցն զգլխաւորս (ԻԸ. 17):

Փռութիւնով «յեպ երից ատուրց», զի մի՛ յառաջագոյն այլ ազգ ըմբռնեացին լսելիք նոցա: Եւ զի՞նչ ունէր հասարակաց առ նոսա, զի հանդերձեալ էին թերեւս քննել զնմանէ, սակայն նա այսոցիկ փոյթ ոչ առնէր, այլ ուսուցանելոյն, զի մի՛ ընդդէմ կացեալ լիցին⁴ նմա առ⁵ ասացեալսն:

Եւ իբրեւ եկին, ասէ, ցնոսա. Ես, եղբարք ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն կամ կրանիցն հայրենեաց, կապեալ յերուսաղէմ՝ մաքնեցայ ի ձեռս հռոմայեցոց, որք իբրեւ դարեցան զիս, կամեցան արծակել՝ վասն եւ ոչ մի ինչ վնաս մահու գրանելոյ յիս, եւ ի հակառակելի հրէից՝ հարկ եղև բողոքել ի կայսր. իբր ոչ եթէ զազգէն⁶ իմմէ ունէի ինչ չարախաւսել, վասն այսր պարճառի աղաչեցի զձեզ փեսանել եւ խաւսել, զի վասն յուսոյն Իսրայէլի կամ ի շղթայս յայսոսիկ (ԻԸ. 17-20):

Կամեցեալ այնուհետեւ զանձն իւր ազատել ի պատճառէ եւ զայս, զանձն իւր՝ զի մի՛ չարախաւսեցեն զնմանէ, եւ այն իսկ զնոսա վնասէ, իսկ զնոսա՝ զի մի՛ թուրիցի ամենայն ինչ ի նոցանէ լինել, քանզի ի դէպ⁷ էր գալ համբաւու իրացն, թէ «ի ձեռն հրէից մաքնեցաւ», եւ այս իսկ բաւական էր խոցել զնոսա եւ ի մեծ ահի կացուցանել:

¹ Բ սպանել

² ԱԲ զԱբէլ

³ ԱԲ ընտանի] ընտիր

⁴ ԱԲ լիցի

⁵ Ա Գմա առ] առ Գմա

⁶ Ա զազգէն

⁷ ԱԲ ի դէպ

Արդ, վաղվազակի առ այս իրս կացեալ լինի, եւ իրացն, որ յաղագս ինքեան էր՝ տայ պատասխանի: Եւ տե՛ս զինչ ասէ. «Ոչ ունի իրս վնասու իրրն հակառակ գործեալ կրանիցն»: Վայրապար մատնեցին զիս, ասէ, վկայեն հռովմայեցւոց իշխանքն ասէ, որք եւ քննեալ՝ դատեցան արձակել զիս, վասն զի ք/149բ/ննելով զիս՝ ոչ ինչ գտին յիս: Եւ ընդէ՞ր ապա ոչ արձակեցին զքեզ: Յընդդիմաբանութենէ հրէից, ըստ որում պարտ էր նոցին իսկ ապրեցուցանել, նոքա մատնեցին ի ձեռս հռովմայեցւոց, եւ այնչափ առաւելութեամբ, զի թէպէտ եւ իշխանքն ոչ կարացին զիս դատապարտել, այլ եւ ոչ կարացին ազատել, որով հարկ եղեւ ինձ առ կայսր բողոքել:

Տե՛ս, թէ որպէս ի բաց բառնայ զամբաստանութիւնս զնոցանէ. քանզի թէ կամեցեալ էր ամեցուցանել եւ չարախաւսել զնոցանէ, ուժգնագոյնս պարտ էր ի կիր արկանել. այլ ոչ այնպիսի ինչ ածէ ի մէջ, այլ լոկ, թէ ի հրէից հակառակելն հարկ եղեւ բողոքել ի կայսր: Տեսանե՞ս, զի հեզութեամբ եւ անյիշաչարութեամբ եւ ըստ ներողութեան ասէ զամենայն: Եւ զիս՞ րդ, միթէ վասն ամբաստանելո՞յ զնոցանէ բողոքես ի կայսր: Ո՛չ ասէ: Զի ոչ եթէ զագգէն իմմէ ունէի ինչ չարախաւսել, այլ իբր ու ճողոպրել ի գուր դատելոյ եւ ի վշտէ նոցա զիս: Տե՛ս զընտանութիւն¹ բանին, զի ոչ աւտարանայ ի նոցանէ, այլ դարձեալ սերմանէ զաւանդն, այսինքն՝ այսու բանիւ զնոսս յինքն կամի ձգել եւ աշակերտել զնոսս քրիստոսաւանդ կրանիցն:

Եւ ոչ ասաց, թէ ոչ չարախաւսեմ, այլ թէ ի բնէ իսկ ոչ ունէի «ինչ չարախաւսել», եւ մանաւանդ այնպիսի տանջանս կրելով դժուարինս: Բայց ոչ զայն ինչ յիշէ, եւ տակաւին ի նոյն կիրսն գոլով, այլ ոչ առնէ զբանն դժուարալուր: Նա եւ ոչ շնորհս ինչ եւ երախտիս դնէ նոցա արարեալ յինքենէ, զի թէ յայս փութայր, պարտ էր զնոսս դատապարտել նախ եւ ամբաստանել եւ ի² յայտ ածել զնոցայն, որ առ նա վնաս: Այլ նա այնպէս պատասխանատրէ, որով ոչ ինչ ամբաստան լինի զնոցանէ: «Վասն այսորիկ, ասէ, աղաչեցի զձեզ փեսանկ» (ԻԸ, 20), զի մի՛ կարծիցէք, թէ եկի այսր չար ինչ հատուցանել ազգի³ իմոյ: Զի թէ եւ յաւտարէ ուրուք դէպ լինի չար ինչ կրելով ումեք՝ չէ պարտ չար ինչ առնել նմին, ո՞րչափ եւս առաւել⁴ յագգայինսն

¹ ԱԲ զընդանութիւն

² Բ > ի

³ Ա ազգիս

⁴ Ա առաւել եւս

խնամել պարտ է: Վասն որոյ այնչափ հեռի եմ ի չարախաւսելոյ զձէնջ եւ ի թշնամէբար դնելոյ զիս առ ձեզ, մանաւանդ այնչափ գլթամ ի ձեզ, զի վասն փրկութեան ձերոյ կամ յերկաթքս յայսոսիկ:

Արդ, թէպէտ եւ¹ ոչ ասաց, թէ զի՞նչ ունիք ամբաստանել կամ զինչ լուայք զինէն չար, այլ միայն երեւելովն իւրով անդ զամենեսեան զնոսա զարհուրեցոյց: Ուստի եւ նոքա այնպէս ըմբռնեալ եղեն բանիւն, մինչ զի տալ պատասխանի փութան յաղագս ազգականացն իւրեանց: «Մեր, ասեն, ոչ թուխթս² ինչ վասն քո ընկալար ի Նրնաստանէ, եւ ոչ եկեալ որ³ յերարց պատմեաց կամ խաւսեցաւ ինչ վասն քո չարութիւն» (ԻԸ. 21): Չայս ասեն՝ կամելով տալ պատասխանի, որպէս ասացի՝ յաղագս նոցա, որ յերուսաղէմն էին. քանզի յոյժ մեղադիր լինելոյ նշանակ իմացան գոլ զասելն, թէ ոչ ըստ իրաւանց տուեալ եղէ ի կապանս, զի յափշտակեցին զիս: Եւ այլազգ. զի եւ այսր գալ դանդաղեցան, եւ անդէն բազում անգամ ձեռս մխեցին եւ ոչ ինչ վնաս կարացին ցուցանել: Ուստի թէ սոքա վստահացեալ էին եւ անհոգ ի նմա/150ա/նէ, թերեւս ոչ առնէին զայս: Ոչ ի ձեռն հրէից⁴ թղթոյ⁵ եւ ոչ ի ձեռն մարդոյ ծանուցին մեզ յաղագս քո չար ինչ: Տե՛ս ապա զնոսա եւ ընտանեզոյնս խաւսեցեալ ընդ նմա:

Բայց աղաչեմք, ասեն, ի քէն լսել, գոր ինչ խորհիսդ (ԻԸ. 22):

Վասն առ ի Քրիստոս իրացն՝ յայտ է: Եւ զի ոչ յուղիղ կամաց հարցին, յառաջ բերեն փութով զիւրեաց կաման: «Չի վասն հերձուածոյդ այդորիկ յայտնի է մեզ, ասեն, զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ» (ԻԸ. 22): Տեսանե՞ս, թէ զիա՞րդ յայտնի ցուցին զատելութիւնն⁶, զի իբրեւ զյոյժ իմն դժնդակ⁷ իմիքէ տաղտկանալով⁸ ասեն՝ «վասն հերձուածոյդ այդորիկ»: Իսկ նա ոչ տայ վաղվաղակի պատասխանի, որում հարցինն, այլ աւր յայտ արար գալ նոցա առ նա ի միասին:

¹ Բ > եւ

² Բ թուղթս

³ ԱԲ եկեալք] եկեալ որք

⁴ ԱԲ > հրէից

⁵ ԱԲ թղթոյ ասեմ

⁶ ԱԲ զատելութիւն

⁷ ԱԲ դժնդակ

⁸ Բ տաղտկանելով

Ժամ եղեալ նմա, *ասէ*, ար մի եկին ի վանսն առ նա բազումք, որոց պարմըր վկայութեամբ զարքայութիւնն¹ Ասորուոյ, եւ հաւանեցուցանէր զնոսա վասն Յիսուսի յարինացն Մովսէսի եւ ի մարգարէիցն յայգուէ մինչեւ յերեկոյ (ԻԸ. 23):

*Տե՛ս դարձեալ. ոչ ի նշանաց, այլ յաւերինաց եւ ի մարգարէից հաւանեցուցանէր եւ լռեցուցանէր զնոսա*². եւ ամենայն իսկ ուրեք զնոյն առնէր: Եւ մանաւանդ պարտ էր, ասեն, նշանս առնել: Ասեմ, թէ այնուհետեւ իրքն ոչ լինէր հաւատարիմ, զի մեծ նշան քան զամենայն այն իսկ էր յաւերինաց եւ ի մարգարէից ցուցանել զՔրիստոսէ յայտնապէս:

Ոմանք հաւարացին³ բանին, եւ կէսքն չհաւարացին⁴, եւ անմիաբանք լինալ առ միմեանս արձակէին (ԻԸ. 24-25):

Ոչ ամենեքեան հակառակախաւսք լինէին, այլ ոմանք հաւանէին եւ ոմանք ոչ: Արդ, յորժամ գնացեալ լինէին հակառակելով ընդ միմեանս, յայնժամ անարգէ զնոսա՝ ոչ զնոսա յանդիմանել ինչ կամելով, այլ զիւրսն հաստատելով: «Բարութ, ասէ, խաւսեցաւ Նոզին Մուրր ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր եւ ասէ»⁵ (ԻԸ. 25): Զայս ասելով զմիւրմիւր հաստուածութեանն⁶ ցուցանէ, եւ յայտ առնէ, զի մարգարէքն Հոգևովն խաւսէին զամենայն: Արդ, ի վերայ հրեշտակի ոչ ասի այսպէս, քանզի հրեշտակի գործ է ասել, զոր ինչ տերն ասէ: Եւ ոչ յորժամ պատմեն զիրք յաղագս ի ձեռն հրեշտակաց ասացելոցն՝ ասեն թէ բարևոք ասաց հրեշտակն, այլ «Բարութ ասաց Նոզին Մուրր» (ԻԸ. 25). զմիապատիւ հրամանս առանձնաւորութեան Երրորդութեանն⁷ ցուցանէ, զի Հաւր՝ Որդւոյ ասի Հոգւոյն:

Բարութ ասաց, ասէ, Նոզին Մուրր (ԻԸ. 25)

Փոխանակ ասելոյ, թէ ոչ ինչ անհաւանք լինիք եւ հակառակաբանեալք, այլ նմա, որ ի վերուստ գիտէր զայս՝ Աստուծոյ, զի անդուստ ի վերուստ այս ինչ կանխաւ լինէր ասացեալ վասն ձեր: «Երթ առ ժողովուրդն եւ ասացես ցնոսա, լսելով լուիջիք եւ մի իմասջիք, եւ րն-

¹ Աբ զարքայութիւն

² Ա > եւ լռեցուցանէր զնոսա

³ Աբ հաւատային

⁴ Աբ չհաւատային

⁵ Աբ > առ հարսն մեր եւ ասէ

⁶ Աբ աստուածութիւն

⁷ Աբ Երրորդութեան

սանկրով փեսօիր և մի՛ փեսօիր, զի թանձրացաւ սիրք ժողովրդեանդ այդմիկ¹, և ականջաւ իրեանց ծանունս լուան, և գազս իրեանց կափուցին, զի մի՛ երբէք փեսցեն աշաւ և ականջաւ² լուիցեն և սրփիւք իմացին և դարձցին և բժշկեցից զնոսա» (ԻԸ. 26-27): Ածէ զմարգարէութիւնն³ ի մէջ, զի մի՛ նոր եւ հրաշափառագոյն գոլ զիրսն կարծիցեն. եւ յայտ առնէ, թէ ի դէպ այժմ քան յայնժամ ասացեալ եղեւ առ սոսա, որք ոչ հաւատացին: Քանզի զիա՞րդ⁴ նոքա առաջինքն առանց լրման մարգարէութեանս հաւատային. զի մարգարէն կանխ/150թ/աւ ասաց զլինելոցն՝ թանձրացաւ ասէ սիրտ ժողովրդեանդ այդորիկ. ոչ վասն անարգելոյ ասաց զայսոսիկ, այլ զնոսա ընդոստուցանելոյ եւ զգայթագղութիւնն⁵ ի բաց բառնալոյ:

Դարձեալ ի նախանձ զնոսա շարժէ այնոքիւք՝ որք ի հեթանոսաց էին: Եւ տես, նախ կշտամբեալ զանհաւատութիւն հրէիցն, յայնժամ առ հեթանոսս եկեալ լինի: «Յայտնի լիցի ձեզ, ասէ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւնն⁶ Ասրուծոյ, նորին և լուիցեն» (ԻԸ. 28): Բարևոք ասաց, թէ հեթանոսաց տուաւ գիտել զխորհուրդս զայս, եւ վայելչապէս բաշխեցաւ շնորհքն հեթանոսաց⁷ հրէիցն անհաւան⁸ գոլով: Եւ ապա ընդէ՞ր արդեւք ընդ մեզ խաւսիս եւ ուսուցանես, միթէ զայս ո՞չ գիտէիր: Այո, ասէ, գիտէի, այլ առնեմ զայս, զի կամ հաւանեսցին, կամ ինքեանք տացեն պատասխանի, զի ոչ ուրուք կամիմ տալ բնաւ պատճառս ինչ:

Ձայս ասելով նորա զնացին հրեայքն՝ բազում ունելով յինքեանս տրտունջ զնմանէ: Բայց տես, զի անարգեալ եւ յանդիմանեալ առ ի նմանէ, ոչ համարձակեցան ինչ ասել, եւ ոչ կարկատեն դաւաճանութիւնս ինչ ի վերայ նորա, որպէս յԵրուսաղէմ, քանզի անդ ի Հրեաստանի ի գոռոզութեան էին, իսկ աստ՝ ոչ ընդ իխշանութեամբ նոցա այնուհետեւ, որ ընդ նմա իրքն էին հրամայեալ լինի:

Իսկ⁹ ընդէ՞ր բնաւ տնաւրինեցաւ նմա զնալ ի Հրեաստան, եւ մանաւանդ զի նախ ինքն¹⁰ ասաց Քրիստոս, թէ «Փութա ել յԵրուսա-

¹ Բ այդորիկ] այդմիկ

² Բ ականջաւք

³ ԱԲ զմարգարտութիւն

⁴ Բ արդ] զիարդ

⁵ ԱԲ զգայթագղութիւն

⁶ ԱԲ փրկութիւն

⁷ Բ ի հեթանոսաց] հեթանոսս

⁸ ԱԲ անհաւանք

⁹ Բ եւ] իսկ

¹⁰ ԱԲ ինքն նախ] նախ ինքն

դեմ» (ԻՔ. 18): Վայելչապէս. զի ցուցեալ լիցի նոցա չարութիւնն¹, եւ մարգարէութիւնն² Քրիստոսի ճշմարիտ, թէ «Չնն ընդունելոց գրո վկայութիւնդ» (ԻՔ. 18), զի ոչ ընկալան եւ ոչ յանձն առին: Եւ դարձեալ. զի անպատասխանի եւ առանց ներելոյ գտանիցին նոքա: Եւ այլազգ. զի գիտասցեն ամենեքեանքն վասն Պաւղոսի, թէ պատրաստ էր զամենայն ինչ կրել ի նոցանէ: Ապա եւ մխիթարութիւն այնոցիկ, որ ի Հրեաստան էին հաւատացեալքն, թոյլ տուեալ լինէր, զոր ինչ եղեւն ի Պաւղոս, քանզի եւ նոքա անդ բազում դժուարութիւնս եւ հալածանս ի հրէիցն կրէին: Արդ, եթէ քարոզելով զհրեականսն զայն կրէր, եթէ յատուկ զփառացն Քրիստոսի քարոզեալ էր զիա՞րդ յանձն առնուին լսել, զի եւ սրբելով ըստ արիւնացն եւ պատարագ մատուցանելով, ոչ եղեւ նոցա հանդուրժելի:

Եւ եղև գերկեամ մի բովանդակ իւրով վարձու, եւ ընդունէր զամենեսեան, որ մտնուին առ նա (ԻԸ. 30-31):

Եփր. Արդ, իբրեւ խաւսեցաւ նա ընդ հրէից յառաւաւտէ մինչեւ ցերեկոյ³ վասն Քրիստոսի յաւրինաց եւ ի մարգարէից, եւ երկրորդեաց վասն անհաւատիցն, որք ոչ կալան յանձին զբանն Եսայեայ՝ դարձաւ յիշեաց Ղուկաս, եւ վասն գործոց եւ վաստակոց ձեռաց նորա, զոր ետ վարձ տանն գերկեամ մի, զոր ոչ դադարէր⁴ խաւսել վասն Քրիստոսի ընդ հրեայս եւ ընդ հեթանոսս, որք ելանէին եւ մտանէին առ նա, եւ ասէր, թէ «Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ» (Յովհ. Ի 31), զի վասն նորա աշխատիմք եւ հասահեմք պսակացն ի ձեռն Քրիստոսի:

Քարոզէր, ասէ, զարքայութիւնն⁵ Աստուծոյ, եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան ամենայն համարձակութեամբ (ԻԸ. 32):

Յոհ. Տե՛ս ոչ ինչ զգալի, եւ ոչ ինչ յաղագս հասելոց իրաց, այլ յուսովն Աստուծոյ միշտ սնուցանէր զնոսա, ոչ ինչ ունելով հնար բանիւ զըստ բնութեան |151ա| զիրսն անճառս ցուցանել, եւ ոչ զանմտածելին զգալեալք իւրիք բնախաւսել: «Ուսուցանէր անխափան,

¹ ԱԲ չարութիւն

² ԱԲ մարգարէութիւն

³ Բ ցերեկ

⁴ ԱԲ դադարէր

⁵ ԱԲ զարքայութիւն

ամենայն համարձակութեամբ» (ԻԸ. 32): Առանց խափանմանն¹ եւ ազատաբար եցոյց

զքարոզութիւնն² այնուհետեւ: Տե՛ս զսքանչելիսն, որ ի Հրեաստանի խափանեալ լինէր, նա ի Հռոմ առանց խափանելոյ քարոզէր, գերկուս ամս ի կապանս կացեալ անդանաւր, եւ զքարոզութիւնն³ ոչ պակասեցուցեալ:

Ամենայն համարձակութեամբ (ԻԸ. 32):

Զի գոյ «համարձակութեամբ» ասել ինչ, բայց խափանմամբ: Զի յայտ լիցի մեզ, թէ համարձակութեա՞նորին ոչ եւ մի ինչ կարաց տալ հատումն, կամ եղեւ արգել, այլ առանց խափանելոյ զտիւ եւ զգիշեր ակետարանէր: Վայելչապէս զայնքան ընդ երկար ճանապարհ առաքեցաւ, հանդերձեալ գոլով անդ հեթանոսացն քարոզել, զի եւ ներքին կողմանքն Սպանիոյ լցցի Ալետարանաւն Քրիստոսի: Տեսանե՞ս զտնաւրէնութիւնն⁴ Աստուծոյ, թողացոյց զոր անդ էին լսաւորքն⁵ յերկար ժամանակաւք ծարաւի լինել բանին, զի իբրեւ զպարարտ երկիր ոռոգեալ պտղաբեր լիցին: Զայս իսկ արտաքինքն առնեն, սակաւ սակաւ ներածելով զնորեկսն ի հմտութիւն. զի այն ինչ իսկոյն զամենայն ինչ գիտելն՝ տարտամ եւ լքեալ առնէ, ծոյլ եւ արհամարհոտ:

Այլ յաղագս այնորիկ, որ յետ երկամեայ ժամանակին էր, թէ զի՞նչ արդեւք արար կամ գործեաց, ո՛չ պատմեաց մեզ Ղուկաս. քանզի արձակեցաւ Պաւղոս յայնմ կապանաց բազում ժամանակս. զոր եւ ի թողութսն յայտ առնէ, թէ «Ապրեցայ ի րերանոյ առևմուսն⁶» (Բ. Տիմ. Դ. 17): Իսկ եթէ ոք տարակուսեսցի, թէ ընդէ՞ր⁷ Ղուկաս ոչ զամենայն⁸ գրեաց, ասեմք, թէ եւ զՔրիստոսին իսկ ոչ զբովանդակն գրեցին, այլ զսակաւն բաւական համարեցան: Նա եւ այլոցն իսկ առաքելոց, զոր ինչ արարին՝ ոչ գրեցաւ, այլ մասնաւոր սակաւ ինչ:

¹ Աբ խափանման

² Աբ զքարոզութիւն

³ Աբ զքարոզութիւն

⁴ Աբ համարձակութիւն

⁵ Աբ զտնաւրէնութիւն

⁶ Ա լսողքն

⁷ Աբ առիւծուն

⁸ Ա է՞ր] ընդէ՞ր

⁹ Բ զամենայն

ՅՈՐԴՈՐԱԿ

Արդ, եթէ կամէիր ուսանել զՊաւղոսի, որ ինչ յետ այնորիկ էր, ի սոցանէ զիտասջիր յորոց լուար: Զի այսպիսիք էին եւ այնք նորայնքն՝ կիրք, կապանք, տանջանք, բանտք, դաւաճանութիւնք, քարկոծանք, մահք հանապազորդք: Տեսե՞ր զնորա վարուցն մասն փոքր, որչափ եւ տեսցես, ամենայն այսպիսի է: Զերկնի մասն մի տեսեալ եւ զնշոյլս արեգականն ի մասնէ՝ ուր եւ զնայցես, այնպիսի զբոլորն տեսանիցես: Նոյնպէս եւ զգործսն Պաւղոսի տեսեալ ի մասնէ, ամենայն¹ այնպիսի լինի հանդիպեալ անչափ վշտաւք: Երկին էր նա քան զամենայն երկինս բարձրագոյն, եւ քան զդասս անմարմնոցն պայծառագոյն, որոց² գովեստն ի վեր անցանէ քան զհասումն եղանակաց: Արդ, նմա նմանեսցուք արիագունին այնմիկ եւ աղամանդեայ հոգւոյն, զի հետեւելով նմա զնալ կարասցուք ընդ շաւիղս կենցաղաւարութեան նորա, զի կարաւղ լիցուք ընդ հասեալ ծով կենցաղոյս նաւել, եւ յանկասկած նաւահանգիստն հասանել, եւ խոստացելոց բարութեանց սիրելեացն Աստուծոյ հանդիպել: Ծնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառք եւ իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն³:



¹ Բ ամենայն

² Բ որոյ

³ Բ + ամէն, .ռ. ամէն

/152բ/ ԱՂԵՐՍ ՆՈՐ՝ ՍՏԱՅՈՂԻ ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԲԱՐ ՆՈՐՈԳՈՂԻ ԲՈՒՆ ՄԵԿՆՆՈՒԹԵԱՆՆՆ², ՅՈՐՄԷ ԱՅՍ ՆԱՄԱՌՕՏԵՅԱԲ

Յամի վեցհազարերորդի հինգհարիւրորդի առաջներորդի (6501) արարածոց աշխարհի, եւ ի հազարերորդի երեք հարիւրորդի³ եւթներորդի (1307) կենարարին մերոյ գալստեանն, եւ ըստ խոսարովային թուոյ հայկազանցս հինգ հարիւրորդի քառասներորդի հինգերորդի⁴ (1096), ի թագաւորութեանն Միքայէլի որդւոյ Դուկծին⁵ եւ ի պատրիարքութեանն Կողմայի երկաբնակի, ես Գրիգորիս՝ որդի Գրիգորի Պահլաւունւոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ⁶ հաւուն իմոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ ի սաստկացեալ սրոյ սկիւթացւոցն հալածանաւք հասի ի պայծառաշէն կայանս⁷ սրբոյն Կոստանդիանոսի, եւ մեծաւ ըղձմամբ հայցեալ գտի գտենչալիս յոքունց՝ զգերահրաշ մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկեբերանի լուսաւոր եւ ոգէշահ վարդապետութեամբ: Եւ հանդիպեալ հմտագոյն հեռետորին Կիրակոսի՝ յունական եւ հայկական ուսմամբ պերճացեալ, եւ առատաձեռն պարգեւաւք ետու թարգմանել գտենչալիս որդւոյ⁸ իմոյ: Եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրեւ գտախտակսն նախամարգարէին, եւ մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն Լիբիայ եւ ասիական ծոցոյն, խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեմայ՝ ի ստորոտս Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն, եւ գտի անդ զհոգէշնորհ գիտնականն Կիրակոս՝ որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգեայ փոխանորդին մեր: Եւ սորա յաւժարական մտաւք աշխատութիւն⁹ զանձամբ առեալ՝ ըստ առատատուր Հոգւոյն պարգեւացն, վերստին արձարծեալ զխորթա-

¹ Բ նորոգ

² Բ մեկնութեան

³ Բ եւ հազարերորդի եւթանասուներորդի] եւ ի հազարերորդի երեք հարիւրորդի

⁴ Բ > քառասներորդի հինգերորդի

⁵ Բ դուքծին

⁶ Բ աթոռոյն

⁷ Բ կայեանս

⁸ ԱԳ որդւոյ] ոգւոյ

⁹ Բ աշխատութեամբ] աշխատութիւն

ցեալ բանս հռետորին՝ յեղանակելով ի դիւրալուրս եւ յարմարականս մերոյինս ազին¹ :

Արդ, մաղթեմ զամենեսեան՝ որք հանդիպիք այսմ հոգիաբուխ պատգամացս, յիշել զիմս աղկաղկութիւն² ի Տէր սրտի մտաւք, ընդ իս եւ զաշխատաւդսն ի սմա, եւ՝ գրել զփոքր յիշատակարանս³ ընդ սմին գրոց՝ յորժամ գրեսջիք, եւ մի՛ պակասեցուցանել. զի եւ զձեզ գրեսցէ Տէր ի գիրն կենաց՝ յաշխարհին կենդանեաց, որ է եւ եղիցի աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

¹ Բ ազգին] ազին

² Բ աղկաղկութիւնս

³ Բ յիշատակարանս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան	5
Դրութիւնք բարոյականաց համառաւտ մեկնութեանս Գործոց առաքելոց 13 Ի Գործոց Առաքելոցն բուն եւ ընդարձակ մեկնութեանց սրբոցն՝ տեառն Եփ- րեմի եւ երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի.	19
Գործք Առաքելոց, Ա.	19
Գործք Առաքելոց, Բ.	52
Գործք Առաքելոց, Գ.	80
Գործք Առաքելոց, Դ.	94
Գործք Առաքելոց, Ե.	108
Գործք Առաքելոց, Չ.	126
Գործք Առաքելոց, Է.	136
Գործք Առաքելոց, Ը.	161
Գործք Առաքելոց, Թ.	177
Գործք Առաքելոց, Ժ.	201
Գործք Առաքելոց, ԺԱ.	222
Գործք Առաքելոց, ԺԲ.	233
Գործք Առաքելոց, ԺԳ.	247
Գործք Առաքելոց, ԺԴ.	267
Գործք Առաքելոց, ԺԵ.	280
Գործք Առաքելոց, ԺԶ.	306
Գործք Առաքելոց, ԺԷ.	325
Գործք Առաքելոց, ԺԸ.-ԺԹ.	344
Գործք Առաքելոց, Ի.	375
Գործք Առաքելոց, ԻԱ.	393
Գործք Առաքելոց, ԻԲ.	407
Գործք Առաքելոց, ԻԳ.	419
Գործք Առաքելոց, ԻԴ.	431
Գործք Առաքելոց, ԻԵ.	442
Գործք Առաքելոց, ԻԶ.	452
Գործք Առաքելոց, ԻԷ.	462
Գործք Առաքելոց, ԻԸ.	471
Աղէոս Նոր ստացողի եւ աշխատասիրաբար Նորոգողի բուն մեկնութեանն, յորմէ այս համառօտեցաւ	485

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՈՐԳ ՄԿԵՒՌԱՅԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑԱշխատասիրութեամբ Յասմիկ Բաղալեանի
Խմբագրութեամբ Գեորգ Տէր-Վարդանեանի

Հրատարակչական բաժնի տնօրէն՝	Շահէ Վրդ. Անանեան
Հրատարակչական Խորհրդի անդամներ՝	Ա. Մադոյեան, Պ. Յովհաննիսեան, Գ. Տէր-Վարդանեան
Էջադրումը՝	Ղևոնդ քահանայ Մայիլեանի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2013Թուղթ՝ օֆսէթ 70x100, 1/16
Ծաւալ՝ 30,5 տպ. մամուլ, կազմը կոշտ,
Տպաքանակը՝ 300:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ